

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՕՐՊՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ՀՈՒՄՄԱՑՔԵԼԱՂԱՅԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎՈՅՆ ԳՐՔԵՐԻ ՄՇԵՂՈՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀՈՅՔԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՆ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՐՉԱԿԱԸ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՆ:  
ՑԱՆՎՈՒՆՈՒՄ ԵՒՔ ՉԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)



**ՈՒՍՈՒՑՈՒՄՆ  
ՈՒ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ  
ԻՍԼԱՄՈՒՄ**



**ՄՈՌԹԵՉԱ ՄՈՌԱՀԱՐԻ**





# تعلیم و تربیت در اسلام

منفکر شهید  
استاد مرتضی مطهری

مترجمین: آشنخا ماكاربان (بخش يك)  
سيلوا الله ورديان (بخش دو)  
ويراستار: آرمانوش كوزمويان  
طرح جلد و صفحه آرائی: رازميك اميرخانيان



**ՈՒՍՈՒՅՈՒՄՆ  
ՈՒ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ  
ԻՍԼԱՄՈՒՄ**

**Շահիդ Օսթադ  
Մորթեզա Մոթահարի**

**Պարսկերենից թարգմանեցին  
Աշխեն Մակարյան (Գլուխ Ա)  
Միլվա Ալլահվերդյան (Գլուխ Բ)**

**Խմբագիր՝  
Արմանուշ Կոզմոյան**

**Շապիկ և համակարգչային ձևավորում՝  
Ռազմիկ Ամիրխանյան**

این کتاب به همت

رایزنی فرهنگی سفارت ج.ا.ایران در ارمنستان

ترجمه و چاپ شده است

**Գիրքը թարգմանել և հրատարակել է  
Հայաստանում ԻԻՀ դեսպանության մշակույթի  
կենտրոնը**

ISBN: 978-964-439-275-7p



© Հայաստանում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոն, 2007 թ.





## بسمه تعالی

### مقدمه

استاد شهید مرتضی مطهری متفکر، اندیشمند، نویسنده و فیلسوف بزرگ اسلامی، بدون تردید یکی از مفاخر بزرگ ایران و اسلام محسوب می‌شود.

مهمترین خدمات استاد مطهری در طول حیات پر برکتش ارائه ایدئولوژی اصیل اسلامی و مبارزه منطقی و علمی با بینش‌ها و تفکرات غلط و التقاطی از طریق درس، سخنرانی و تألیف کتاب می‌باشد. این امر خصوصاً در سال‌های ۱۳۵۱ تا ۱۳۵۷ (پیش از انقلاب اسلامی) به جهت بروز تبلیغات و تفکرات انحرافی در ایران بسیار ملموس می‌باشد. در آن سال‌ها استاد شهید به توصیه حضرت امام خمینی (ره) علاوه بر تدریس در حوزه علمیه قم، در تهران نیز فعالیت گسترده‌ای را در تدریس و تدوین مطالب عمیق خود در دانشگاه‌ها و سایر مراکز علمی آن روز به انجام رساند.

رایزنی فرهنگی ج.ا. ایران در ارمنستان در راستای معرفی نظرات و اندیشه‌های این فیلسوف بزرگ چندی قبل جلد اول و دوم داستان راستان را ترجمه و به چاپ رسانید و این مجموعه با استقبال خوبی مواجه گردید. و پس از آن تعدادی از نویسندگان و متفکرین ارمنی با مراجعه به اینجانب خواستار ترجمه و انتشار کتاب‌های دیگر استاد مطهری شدند و بنده هم با کمال میل این مهم را عهده دار گردیدم و کتاب «تعلیم و تربیت در اسلام» اثر دیگری از متفکر شهید استاد مطهری را در دستور کار قرار دادم.

البته اهالی علم و معرفت تصدیق خواهند فرمود که ترجمه صحیح این اثر، بسیار متفاوت با داستان راستان می‌باشد و اصطلاحات و واژه‌های فراوانی در آن

وجود دارد که ترجمه آن را سخت می‌کند و نیاز به ممارست، حوصله و جدیت زیادی در این کار بود. لذا از دو مترجم جدید و جوان و البته با استعداد استفاده کردیم و در مراحل مختلف ترجمه نیز برای درک بهتر مطالب و سپس یافتن واژه‌های معادل و مناسب ارمنی جلسات مشورتی متعددی را پشت سر گذاشتیم و انصافاً خانم آسخن ماکاریان و خانم سیلوا اله وردیان تلاش فراوانی کردند و در نهایت از خانم دکتر کوزمویان خواستیم که ویرایش این اثر گرانقدر را برعهده بگیرند و من شاهد آن بودم که این محقق، مترجم و نویسنده توانمند در چند مرحله تلاش زیادی را انجام دادند و بحمد... کار موفقی ارائه گردید.

کتاب حاضر مجموعه‌ای است مشتمل بر کلیه سخنرانی‌های موجود از متفکر شهید استاد مرتضی مطهری پیرامون «تعلیم و تربیت در اسلام» که از دو بخش تشکیل شده است، بخش اول شامل سلسله سخنرانی‌های ایشان در جمع دبیران تعلیمات دینی مدارس و بخش دوم بحث‌هایی است که در انجمن اسلامی پزشکان ایراد شده است.

در پایان وظیفه خود می‌دانم از مترجمین خوب این اثر و ویراستار توانمند و با انگیزه آن و نیز تمامی کسانی که در انجام این امر مهم علمی اینجانب را یاری نمودند تشکر و قدر دانی نمایم.

رضا عطوفی

رئیس فرهنگي سفارت جمهوری اسلامی ایران در ارمنستان

آذرماه ۱۳۸۶ - ایروان

## Հանուն Աստծո

Երջանկահիշատակ Սոթթեզա Սոթահարին, անկասկած, համարվում է Իրանի մեծագույն մտավորականներից, իսլամագետ - փիլիսոփաներից և գրողներից մեկը:

Իր ողջ կյանքի ընթացքում Սոթահարիի մատուցած ամենակարևոր ծառայությունը բուն իսլամական գաղափարախոսության ներկայացումն ու դասախոսությունների, զեկույցների և գրքերի միջոցով սխալ և շեղված կարծիքների և հայացքների դեմ տրամաբանական և գիտական պայքարն էր: Այս գործողությունները անչափ զգալի դարձան հատկապես 1972-78 թվականներին, նախքան իսլամական հեղափոխությունն Իրանում իրականացվող կեղծ և շեղիչ քարոզչության տարիներին: Հիշյալ տարիներին Սոթահարին Իմամ Խոմեյնիի հանձնարարմամբ դասավանդում և խորը գիտական գործունեություն էր ծավալում ոչ միայն Դոմի հոգևոր ճեմարանում, այլ նաև՝ Թեհրանի տարբեր համալսարաններում և գիտական կենտրոններում:

Հայաստանում ԻԻՀ մշակույթի կենտրոնը, մեծ փիլիսոփայի գաղափարներն ու տեսակետները ներկայացնելու նպատակով, որոշ ժամանակ առաջ թարգմանեց և հրատարակեց Սոթահարիի «Ճշմարիտների պատմություն» գրքի առաջին և երկրորդ հատորները, որոնք ընթերցողի կողմից ջերմ ընդունելության արժանացան: Դրանից հետո հայ մտավորականների և գրողների մի խումբ դիմեց ինձ՝ Սոթահարիի մյուս գործերի թարգմանության և տպագրության խնդրանքով, և ես մեծագույն սիրով ստանձնեցի Սոթահարիի մեկ այլ ստեղծագործության՝ «Ուսուցումն ու դաստիարակությունն իսլամում» գրքի հրատարակման կարևոր պարտականությունը:

Իհարկե, գիտնականները կհաստատեն, որ այս գրքի ճշգրիտ թարգմանությունը խիստ տարբերվում է «Ճշմարիտների պատմության» թարգմանությունից, քանզի «Ուսուցումն ու դաստիարակությունն իսլամում» գրքում գոյություն ունեն բազմաթիվ մասնագիտական արտահայտություններ և բառեր, որոնց թարգմանությունն անչափ բարդ է և անրիաժեշտ էր ցուցաբերել անսահման համբերություն, լրջություն և որոնողականություն: Այս էր պատճառը, որ գործն իրականացվեց երկու նոր և երիտասարդ, սակայն տաղանդավոր թարգմանիչների կողմից: Թարգմանության տարբեր փուլերում որոշ արտահայտությունների և բառերի բուն իմաստն ընկալելու և դրանց ճշգրիտ հայերեն համարժեքը գտնելու համար մենք կազմակերպել ենք բազմաթիվ քննարկումներ: Իսկապես, Աշխեն Մակարյանն ու Սիլվա Այյափերոյանը մեծ ջանքեր ներդրեցին և ապա՝ խնդրեցին, որպեսզի այս արժեքավոր գրքի հայերեն թարգմանության խմբագրման աշխատանքները ստանձնի Արմանուշ Կոզմոյանը: Ես կարող եմ վկայել, թե այս մեծ գիտնականը, թարգմանիչն ու մտավորականը ինչպիսի մեծ հետևողական ջանքեր գործադրեց և Աստծո կամոք ներկայացվեց հաջողված մի աշխատանք:

Գրքում զետեղված են իսլամական կրթության և դաստիարակության թեմաներով Սոթթեզա Սոթահարիի ունեցած էլույթներն ու դասախոսությունները, որոնք բաժանված են երկու մասերի: Առաջին մասում հավաքված և ներկայացված են կրոնական ուսուցիչների և դասախոսների, իսկ երկրորդ մասում Բժիշկների իսլամական կազմակերպությունում ունեցած նրա էլույթները:

Վերջում իմ պարտքն էմ համարում շնորհակալություն հայտնել մեր լավ թարգմանիչներին, տաղանդավոր խմբագրին և բոլոր նրանց, ովքեր աջակցեցին ինձ այս կարևոր գիտական գործի իրականացման հարցում:

Հայաստանում ԻԻՀ դեսպանատան մշակույթի խորհրդական  
**Ռեզա ԱբուՖի**  
Երևան- 2007



## Հանուն Ողորմած և Բարեգութ Աստծո

Այս գրքում զետեղված են 1972-73 թթ. Շահիդ Օսթադ Մորթեզա Մոթահարիի կողմից «Կրթությունն ու դաստիարակությունն իսլամում» թեմայով կարգացած բոլոր ելույթները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ զեկույցներ հոգևոր ուսուցիչների և զեկույցներ Բժիշկների Իսլամական Ընկերության համար: Որոշ թեմաների Մոթահարին անդրադարձել է բազմիցս: Այդ է պատճառը, որ զեկույցումներն ու ելույթները հրատարակելիս ոմանք հակված են եղել կրճատել ու համադրել դրանք: Սակայն մենք, ի նկատի ունենալով հեղինակի բացակայության փաստը, գտնում ենք, որ դա ճիշտ չէ: Քանզի անչափ դժվար և անզամ անհնարին է իրականացնել ճշգրիտ համադրում՝ հաշվի առնելով հեղինակի բոլոր նկատառումները: Այս առումով գրքի որոշ մասերում դուք կհանդիպեք կրկնությունների, սակայն դրանք նպաստում են հեղինակի բուն մտքի ու խոսքի պահպանմանը, որի արդյունքում մա կարժանանա Աստծու օրհնությանը:

Նախկինում, հրատարակիչներից մեկը կարողացել էր ձեռք բերել համապատասխան թույլտվություն, և գիրքը հրատարակել էր: Սակայն հրատարակված օրինակում առկա էին բազմաթիվ անճշտություններ, հատկապես՝ կառուցվածքային առումով: Թերի էին մաս ենթավերնագրերը, նախաբանն ու ցանկը: Ուստի, հիշյալ անճշտությունների վերացման ու հեղինակի իրական խոսքի պահպանման նպատակով, անհրաժեշտ եղավ մեկ անգամ ևս վերարտադրել ձեռքի տակ եղած ձայնագրություններն ու ավելացնել բացակայող նյութերը:

Տիրոջ օրհնությամբ գործն իրականացվեց ու նախկին հրատարակության մեջ տեղ գտած անճշտությունները վերացվեցին: Այս ամենին ավելացվեց նաև մի քանի ելույթ և երկու «Հարց ու պատասխան», որոնք բացակայում էին վերոնշյալ հրատարակությունում: Այսուհետև, գիրքը կվերահրատարակվի միայն այս տեսքով:

*Օսթադ Շահիդ Մորթեզա Մոթահարիի ստեղծագործությունների  
հրատարակման վերահսկողության կոմիտե*

## Հանուն Ողորմած և Բարեգութ Աստծո

### Նախաբան

Մեր բեման վերաբերում է իսլամական կրթությանն ու դաստիարակությանը: Կրթությունն ու դաստիարակությունը անհատների ձևավորման և կայացման խնդիրն է: Երևույթ, որն ունի ճշգրիտ ու բազմաբովանդակ նպատակներ ու կանոններ: Այսինքն՝ ունի իրավական, տնտեսական և քաղաքական համակարգեր և, բնականաբար, չի կարող չունենալ նաև հատուկ կրթական համակարգ: Կրթությունն ու դաստիարակությունը միտված են մարդկանց մոտ ձևավորել բարոյական, տնտեսական ու քաղաքական կողմնորոշումներ, որոնք վերաբերում են և անհատին և հանրությանը: Հենց այս խնդիրն էլ հանդիսանում է մեր հետագա քննարկման նյութը:

Եթե մեր նպատակը հանրությունն է, ապա պետք է իմանալ, որ այն կազմված է անհատներից, և դաստիարակությանը վերաբերող գաղափարները պետք տարածվեն հենց այդ անհատների միջոցով: Այսինքն, անհատները պետք է կրթվեն և դաստիարակվեն այնպես, որպեսզի կարողանան հասարակության մեջ այդ ամենը տարածել: Իսկ եթե մեր նպատակն անհատն է, ապա նրա դաստիարակության ու կրթության խնդիրն առավել քան կարևոր է: Իսլամում պահպանվում է և անհատի և հասարակության ինքնությունը, այսինքն՝ անհատը ոչ մի դեպքում ինքնությունից զուրկ չէ: Այստեղից կարելի է հետևություն անել, անկախ այն բանից, թե անհատի մեջ ինչ նպատակներ կան գաղափարներ ենք սերմանում՝ հանձնելով հասարակությանը: Իրականում գոյություն ունի անհատի պատրաստման ճշմարիտ եղանակ և ծրագիր: Մենք կարող ենք այն համարել որպես ողջ հասարակության պատրաստման սկիզբ: Բոլոր դեպքերում անհատի պատրաստումը կարևոր է: Հատկապես այն նպատակով, որ նա պետք է հանդիսանա հասարակության կառուցման կարևորագույն բաղկացուցիչներից մեկն ու ծառայի համընդհանուր նպատակների:

Այս առումով մենք պետք է ծանոթանանք իսլամական դաստիարակության ու կրթության սկզբունքներին: Նախ՝ անդրադառնանք այն հարցին, թե արդյո՞ք իսլամը կարևորում է կրթության ու դաստիարակության խնդիրը, թե՞ ոչ: Այլ կերպ ասած, արդյո՞ք իսլամը հոգում է մարդու մտավոր դաստիարակության մասին, թե՞ հակառակը: Սա գիտության հնագույն խնդիրներից մեկն է, որին անդրադարձել են բազմաթիվ գիտնականներ: Նրանք դարեր շարունակ քննարկել են այն հարցը, թե արդյո՞ք իսլամը գիտության կոչ է անում և եթե իսլամը խրախուսում է գիտությունը, ապա՝ ո՞ր գիտության մասին է խոսքը: Այս խնդրի շուրջ աշխատություններով հանդես են եկել Ալ-Ղազալին, Ֆեյզն ու այլ գիտնականներ, որոնք քննարկում էին, թե արդյո՞ք իսլամի բոլոր բարոյական նորմերը մարդու դաստիարակության ու կրթման նորմեր են, թե՞ ոչ և ո՞րն է իսլամի տեսանկյունից կատարյալ և օրինակելի մարդու նմուշաձևը: Իհարկե, այստեղ գոյություն ունեն բազմաթիվ այլ խնդիրներ, որոնցից են իրականացման ձևերը: Այսինքն՝ կրթման ու դաստիարակման ճշգրիտ նպատակների հետ մեկտեղ ինչպիսի՞ մեթոդներ ու միջոցներ պետք է կիրառվեն: Որքանո՞վ են իսլամական կրթության ու դաստիարակության մեջ հաշվի

առնվել մարդու ներքին հոգեկան ձգտումներն ու նպատակները: Օրինակ՝ երեխայի կրթման ու դաստիարակման առումով ինչպիսի ցուցումներ կան, արդյո՞ք դրանք իրատեսակա՞ն են և որքանո՞վ են դրանցում հաշվի առնվել ներքին հոգեկան ձգտումները: Խնդիր է նաև այն, թե որքանով է նախկին կրթությունն ու դաստիարակությունը համապատասխանում ներկայիս իսլամական դաստիարակությանը:



# ՉԼՈՒԽ Ա

## ՄԱՍ 1

*Մտափոր զարգացում*

## Հանուն Ողորմած և Բարեգույշ Եսո՞՞ս

Առաջիկայում քննարկվելիք կարևոր խնդիրը մարդու մտավոր զարգացման խնդիրն է: Այստեղ մենք երկու հարցադրում ունենք, մեկը՝ մտավոր, իսկ մյուսը՝ գիտական զարգացման հարցերը:

Գիտական հարցը դա նույն կրթության և ուսուցման խնդիրն է: Ուսուցման առումով ուսանողը միայն սովորող է և նրա ուղեղը նման է մի պահեստի, որի մեջ լցվում է տեղեկությունների և գիտելիքի որոշակի քանակություն: Սակայն կրթության նպատակը չպետք միայն դա լինի: Այսօր մեծ արատ է, երբ ուսուցչի միակ նպատակը դառնում է աշակերտի ուղեղում որոշակի տեղեկատվության ու բանաձևերի տեղադրումն ու պահեստավորումը: Այս դեպքում աշակերտի ուղեղը նմանվում է փոքր քանակությամբ ջրով լցված մի ավազանի: Ուսուցչի նպատակը պետք է լինի ավելի վեհ, այսինքն՝ ուսուցիչը պետք է զարգացնի ու անկախացնի աշակերտի մտավոր կարողությունները՝ ամրացնելով կյանքում նրա հենման կետը: Իրականում ուսուցչի առաքելությունը աշակերտին խանդավառելն է: Շատ մեծ տարբերություն կա այն երկու թոնիրների միջև, որոնցից մեկի մեջ դուք դրսից եք կրակ բերում, իսկ մյուսում եղած ածուխի վրա դրսից փոքրիկ կայծ եք գցում և այնքան եք փչում, որ այն սկսում է բոցավառվել և թոնիրի մեջ կրակ է հայտնվում: Ուստի, գաղափարի և գիտելիքի մասին խոսելիս, թվում է, թե մտավոր անկախությունն ու խելքի զարգացումը կարող են ծառայել մարդուն՝ որպես հենարան:

### Գիտելիքի երկու տարատեսակները

Հոգևոր առաջնորդ Սուրբ Ալիի «Նահջ-օլ-բալադե» գրքում<sup>1</sup> ասվում է, որ գիտելիքը երկու տարատեսակ ունի, մեկը՝ դա ձեռք բերովի, դրսից ընկալված և սովորած գիտելիքն է, իսկ մյուսը՝ բնականը:

Բնածին գիտելիքը, մարդու մեջ կա ի ծնե, և մարդն այն չի վերցնում ինչ որ մեկից: Այս գիտելիքը հանդիսանում է տվյալ անձնավորության հենման կետը: Հիշյալ գրքում այս առումով ասվում է. «Եվ եթե չլինի բնածին գիտելիքը՝ ձեռք բերովի գիտելիքը ոչ մի օգուտ չի կարող տալ»: Իրականում հենց այսպես էլ կա: Փորձը ցույց է տալիս, որ կան մարդիկ, որոնք զուրկ են բնածին գիտելիքից, և դրա պատճառը կրկին կապվում է ոչ թե բնածին տաղանդ չունենալու, այլ՝ դաստիարակության ու կրթության սխալ մեթոդների հետ: Նման մարդկանց հանդեպ կիրառված կրթման ու դաստիարակման մեթոդը չի կարողացել շարժման մեջ դնել և զարգացնել նրանց բնածին տաղանդը:

### Կրթության հնագույն մեթոդ և մտավոր զարգացում

Կրթման ու դաստիարակման մեր հնագույն մեթոդները նմանատիպ էին: Մենք տեսնում ենք մարդկանց, որոնք իրենց օժտվածության պակասի կամ կրթական ու դաստիարակչական մեթոդների թերության պատճառով ձեռք բերված գիտելիքի առումով նմանվում են ձայնագրիչի: Օրինակ՝ մեկն ամենայն ուշադրությամբ ու հետևողականությամբ սովորել ու անգիր է արել այն, ինչ իրեն հանձնարարվել է գրքերից: Հետագայում դարձել է ուսուցիչ ու ցանկանում է դասավանդել իր սովորածն ու այն ամենը, ինչ անգիր է արել ուսուցչի խոսքերից: Տվյալ դասի ու իր գիտցածի վերաբերյալ տրված յուրաքանչյուր հարցի նա կպատասխանի, սակայն եթե թեմայից մի փոքր շեղվեք՝ նա կսկսի կաղալ: Նրա գիտելիքը միայն ձեռքբերովի է և նա երբեք չի կարող որևէ այլ նյութից օգտվել և ինքնուրույն եզրահանգումներ անել: Այսինքն՝ նա շատ բան է սովորել, բավականին տեղեկություններ ունի, սակայն երբ դուք արժարձում եք որևէ խնդիր, որը դուրս է նրա ստացածի և ձեռք բերածի սահմաններից, ապա տեսնում եք, որ գործ ունեք հարյուր տոկոսանոց ռամիկի հետ: Այստեղ մենք տեսնում ենք մերկացած, կատարյալ հասարակ մի անհատի:

### Գուշակը և թագավորը

Ճանաչված առակ է (իհարկե սա առասպել է), որում ասվում է, որ մի չարախոս գուշակ իր կանխագուշակելու շնորհը սովորեցրել էր իր երեխային: Ինքը թագավորական արքունիքում լավ գումար էր վաստակում և իր երեխային նույնպես սովորեցրել էր, որ իրենից հետո էլ նա զբաղվի այդ գործով: Մի օր նրան ներկայացնում է թագավորին և թագավորը ցանկանում է փորձել տղայի կարողությունները: Մի ծու թաքցնելով ձեռքի մեջ ասում է. «Կարո՞ղ ես գուշակել թե ինչ է ձեռքիս մեջ»: Տղան ոչ մի

1-Նահջ –օլ- բալադե, հեքմաթ 331:

կերպ չի կարողանում գուշակել և բազավորն ասում է. «Մեջը դեղին է, իսկ շուրջը՝ սպիտակ»: Տղան մտածում ու ասում է. «Դա ջրադացքար է, որի մեջ գազար են լցրել»: Թագավորը շատ է գայրանում, կանչում է տղայի հորն ու ասում. «Այս ի՞նչ գիտություն ես սովորեցրել տղայիդ»: Հայրը պատասխանում է. «Ես լավ եմ սովորեցրել, ուղղակի նա խելք չունի: Առաջին պատասխանը խելացի էր, իսկ երկրորդը՝ հիմար: Չհասկացավ, որ ջրադացքարը չի կարող մարդու ափի մեջ տեղավորվել: Մարդու ուղեղն ինքնուրույն պետք է գիտակցի այս ամենը»:

Սա ևս ճանաչված առակ է և ես բազմաթիվ մարդկանցից եմ լսել այն: Ասում են, մի օր, մի օտարական գալիս է Քյարաջ և հանդիպում մի գյուղացու: Այս գյուղացին փորձառու և տեղին պատասխաններ է տալիս օտարականին, և վերջինս հարցնում է, թե որտեղի՞ց է այդ ամենը սովորել: Գյուղացին պատասխանում է. «Քանի որ ես կրթություն չունեմ, ստիպված եմ մտածել»: Սա շատ խորիմաստ պատասխան է: «Նա, ով կրթված է, ցուցաբերում է իր գիտելիքը, իսկ մյուսը՝ ստիպված է խորիել: Խելքն ավելի լավ է, քան՝ կրթությունը:

Այո, անչափ կարևոր է, որպեսզի հասարակության ու նրա անհատների մեջ մտավոր ու գիտակցական կարողություններ զարգանան: Այսինքն՝ նրանց մեջ պետք է զարգանա վերլուծության կարողությունը<sup>2</sup>: Սա շատ կարևոր խնդիր է, քանզի հենց կրթության ու դաստիարակման առումներով ավելանում են դպրոցի ուսուցիչների պարտականությունները: Աշակերտների ուղեղը տարբեր տեղեկություններով լցնելու փոխարեն նրանք պետք է զարգացնեն երեխաների մտավոր ու վերլուծական հնարավորությունները: Իսկ չափից ավելի տեղեկությունները կարող են բթացնել երեխայի միտքը:

Գիտնականների մեջ կան մարդիկ, որոնք շատ մեծ ուսուցիչներ են ունեցել: Ես նրանց չեմ հավատում, և հիմնականում այն պատճառով, որ նրանք հպարտանում են իրենց մեծ ուսուցիչներով: Օրինակ՝ ասում են. «Այսինչը երեսուն տարի ուսանել է լուսահոգի Նայինի մոտ, կամ էլ քսանհինգ տարի եղել է պարոն Ջիայի աշակերտը»: Այն գիտնականը, որն իր կյանքի երեսուն կամ քսանհինգ տարիները վատնել է այս կամ այն գիտնականի մոտ սովորելու վրա, նա այլևս չունի ինքնուրույն մտածելու և վերլուծելու հնարավորություն: Նա անընդհատ ընդունել է և իր ամբողջ մտավոր հնարավորությունները վատնել տեղեկության ընդունման վրա: Նա այլևս ի զորու չէ ինքնուրույն մտածել:

## Ուղեղի և ստամոքսի նմանությունը

Մարդու ուղեղն իր բնույթով անչափ նման է ստամոքսին: Ստամոքսը պետք է դոսից համապատասխան քանակությամբ սնունդ ստանա և իր կողմից ավելացվող ստամոքսախյութերի միջոցով մարսի այն: Ստամոքսը պետք է նաև այնքան ազատ տեղ ունենա, որպեսզի կարողանա հեշտությամբ խառնել կերակուրը՝ ստանալով մարսմանն անհրաժեշտ թթու-

2-Մենք չենք խոսում այն մասին, թե իսլամը սրան անդրադարձնել է, թե՛ ոչ: Մեր հետևությունն այն է, որ խելքի մասին իսլամի ասվածը հենց սա է:



ներ և այլ նյութեր: Սակայն անընդհատ և ստիպողաբար կերակուրներով լցվող ստամոքսը հնարավորություն և տեղ չունի բավարար ձևով կերակուրը խառնելու և մարսելու համար: Այս դեպքում մենք ականատես ենք դառնում մարսողության հետ կապված խնդիրների, որոնց արդյունքում խանգարվում է նաև աղիների Ֆունկցիան:

Մարդու ուղեղը նույնպես այսպիսին է: Կրթելիս ու դաստիարակելիս անհրաժեշտ է աշակերտին ընծեռել նաև ինքնուրույն մտածելու հնարավորություն: Նրան պետք է քաջալերել, որպեսզի ինքնուրույն մտածի:

### Շատ սովորելը չափանիշ չէ

Մենք մեր ուսուցիչների ու դասախոսների մեջ տեսնում ենք այնպիսիներին, որոնք շատ չեն ուսանել: Շեյխ Անսարին, որն իսլամական իրավագիտության վերջին 150 տարիների ամենանախածեռնող գիտնականներից էր, ներկայիս բոլոր գիտնականներից ավելի քիչ էր ուսանել:

Հոգևոր ճեմարանի մի սան գնացել էր Նաջաֆ: Մի կարճ ժամանակահատված սովորեց այնտեղ, ապա սկսեց ուսանել տարբեր վայրերում և մեկնեց Մաշհադ: Մի որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո, եկավ Թեհրան: Թեհրանում ևս երկար չմնաց ու գնաց Սպահան: Սպահանում համեմատաբար ավելի երկար մնաց: Հոջաթ -օլ- էսլամ Աղա Սեյյեդ Մոհամադ Բադերն այս քաղաքում «ռեջալի»<sup>3</sup> ուսուցիչ էր: Այստեղ նա «ռեջալից» ինչ որ բաներ սովորեց, ապա՝ գնաց Քաշան: Երեք տարի մնաց Քաշանում: Այստեղ էին նաև Նարադի եղբայրները<sup>4</sup>: Ամենից երկար այնտեղ մնաց: Այսինքն, եթե փորձենք հաշվել նրա ուսումնառության ողջ շրջանը, ապա տաս տարուց ավել չի լինի: Այն դեպքում, երբ մյուսները սովորել են ավելի, քան քսան, քսանհինգ, երեսուն տարի:

Պարոն Բորուջերդիին հիմնականում մեղադրում էին այն բանի համար, որ քիչ է ուսանել: Սակայն մեր կարծիքով դա նրա առավելությունն է: Նա քիչ չէր սովորել, տաս-տասներկու տարի՝ այն էլ առաջնային մասնագետների ու ուսուցիչների մոտ, որից՝ յոթ-ութ տարի Նաջաֆում և չորս՝ Սպահանում: Բայց նաջաֆցիները նրան չէին ընդունում՝ ասելով, որ քիչ է ուսանել և պետք է ամենաքիչը երեսուն տարի սովորեր: Ու քանի որ քիչ էր ուսանել, ապա մյուս գիտնականներից ավելի նախածեռնող էր: Այսինքն՝ խորհում էր, առաջադրված խնդիրները ինքնուրույն վերլուծում և օժտված էր մտածելու և լուսաբանելու կարողությամբ:

Ամեն դեպքում, կարծում եմ, որ կասկածից վեր է այն փաստը, որ կրթության ու դաստիարակության գերնպատակը պետք է աշակերտի ու հասարակության մտավոր զարգացումը լինի: Ուսուցիչը, դասախոսը, մարզիչը կամ... կարևոր չէ թե ով, պետք է աշխատի (անհատին) տալ մտավոր զարգացում՝ ինքնուրույն վերլուծելու կարողություն և ոչ թե անդադար կրկնի. «Կարդացե՛ք, սովորե՛ք, անգիր արե՛ք...» խոսքերը: Այդ դեպքում ոչինչ տեղի չի ունենա: Իսկ գիտակցության մասին մեր նկատա-

3-Գիտություն, որն ուսումնասիրում է իսլամագիտության ջատագով ու մեծ գիտնականների կյանքն ու գործունեությունը (քարզմ.):

4-Մուլլա Ահմադ և Մուլլա Մեհդի Նարադի եղբայրները շիա հայտնի գիտնականներից էին (թ):

ռուսները հենց մտածելուն և խորհելուն են վերաբերում: Անհատի խորհելու կարողությունն է, որ հաստատում, մերժում կամ ջանադրություն է ցուցաբերում որևէ հարցում:

### Ջանք հասկացությունը

Երջանկահիշատակ պարոն Յոջջաթը մի անգամ հիանալի էր արտահայտվել ջանքերի ու ջանասիրության մասին: Նա ասել էր. «Իրական ջանքն այն է, երբ մարդը կարողանում է երբևէ չընթերցած ու չիմացած որևէ խնդիր անմիջապես վերլուծել ու ճշգրիտ ներկայացնել նրա հիմնական սկզբունքները: Իսկ երբ մարդ սովորել է ջավահերի<sup>5</sup> բոլոր սկզբունքները, ներածությունն ու եզրակացությունը, և ամեն տեղ հղումներ է անում այդ աղբյուրին ու ասում, որ ինքն է ընտրել այն և ամբողջությամբ սովորել, ( մի բան, որ սովորաբար շատերն են անում) նրա արածը չի կարող ջանք համարվել:

Ջանքը նախածեռնությունն է, երբ մարդն ինքնուրույն կարողանում է տարբերակել գլխավորը երկրորդականից: Ուստի, ամեն ջանացող յուրաքանչյուր գիտության մեջ հենց այդպիսին պետք է լինի: Ջանացողները միշտ էլ ընդօրինակողների մի խումբ են, առավել բարձր մակարդակի ընդօրինակողներ: Յուրաքանչյուր մի քանի դարը մեկ աշխարհ է գալիս մի անհատ, որը օրենքներ է փոփոխում, դրանց փոխարեն ուրիշներն առաջարկելով, ստեղծում է նոր կանոններ: Այդ ժամանակ բոլոր ջանացողները հետևում են նրան: Իրական ջանացողը հենց այն մեկն է, իսկ մյուսները՝ ջանացող նմանակողներ են, որոնք փոքր ինչ բարձր են կանգնած սովորական նմանակողներից: Իսկական ջանացողը յուրաքանչյուր գիտության մեջ այդպիսին է: Լինի դա գրականություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, իրավագիտություն, Ֆիզիկա կամ մաթեմատիկա: Դուք կտեսնեք, որ Ֆիզիկայի բնագավառում հայտնվում է մեկն ու հայտնաբերում մի նոր ուղղություն, որից հետո բոլոր գիտնականները ենթարկվում են նրան: Այն անհատը, ով նորարարություն է բերում, որի հայտնագործությունը ընդունվում է և իրեն է ենթարկում այլոց մտքերը, համարվում է իսկական ջանացող անձ:

Սակայն խորհումն առանց կրթության ու դաստիարակության անհնար է: Խորհման հիմնական նյութը կրթությունն ու դաստիարակումն է (այստեղ մենք խոսում ենք գիտակցաբար խորհման մասին և առայժմ զործ չունենք ներշնչանքի ու հայտնության հետ): Իսլամում ասվում է, որ և խորհումը, և կրթությունը բարեպաշտություն և աղոթք են համարվում: Այս երկու խնդիրներին անդրադառնալով՝ իսլամը պնդում է, որ երկուսն էլ աղոթք ու պաշտամունք են, սակայն խորհման մասին պնդումներն առավել շատ են: Խորհման ու գիտակցության ընթացքում, մարդն ինքնուրույն եզրահանգումներից բացի զարգացնում է նաև իր միտքը: Խորհման ու գիտակցության մասին Դուրանում նյութեր շատ կան և անհրաժեշտություն չկա դրանք առանձին հավաքելու, քանի որ խորհելու և կրթվելու կոչը հնչում է Դուրանի բազմաթիվ այաթներում:

5- Իսլամական իրավագիտության ուղղություններից, կանոնագիրք (ք):



**Ուսումնառության և կրթելու իսլամի կոչը**

Մեր հաջորդ խնդիրը վերաբերում է ուսումնառությանն ու կրթությանը, որը մարդիկ սովորում են միմյանցից: Չեմ կարծում, թե անհրաժեշտություն կա այստեղ ուսումնառության ու կրթելու իսլամի կոչերը քննարկել, քանզի ամեն ինչ պարզ է: Մենք պետք է քննարկենք իսլամական կրթության ու իսլամական գիտությունների խնդիրները: Այսինքն, ո՞րն է իսլամի կողմից խրախուսած գիտությունը: Ղուրանն ազդարարում է. «Ընթերցիր Ղուրանը հանուն Աստծո, որն աշխարհը արարեց: Նա՛ ով սաղմից արարեց մարդուն: Ընթերցիր, քանզի քո արարիչը բոլորից ողորմած է: Նա՛ ով փետրագրչով ուսուցանեց: Եվ սովորեցրեց մարդուն այն՝ ինչ գիտեր»<sup>1</sup>: Սա լավագույն ապացույցն է այն բանի, որ իսլամն անչափ կակորում է կրթությունն ու գիտելիքը: Սրբազան գրքի մեկ այլ այաթում ասվում է. «Ասա, արդյոք նրանք, ովքեր որ գիտեն՝ համահավասար են չիմացողների հետ: Միայն ողջախոհներն են խորհում»<sup>2</sup>: Սբ. Ղուրանի «Ղեսաս» այաթում ասվում է. «Սակայն նրանք, ում գիտելիք և իմացություն էր տվել՝ ասացին. «Վայ ձեզ, աստվածային վարձքը նրանց համար է, ովքեր հավատք են ընծայում և բարեպաշտ արարքներ են կատարում»<sup>3</sup>:

Մեծ մարգարեն նույնպես ասել է. «Ես սովորեցնելու համար եմ ուղարկվել»<sup>4</sup>: Իսկ այն հանրահայտ պատմության առիթով, որում ասվում էր, որ մարգարեն մտել է մզկիթ ու տեսել մարդկանց երկու խումբ, որոնցից մեկն աղոթում էր, իսկ մյուսը՝ զբաղված էր ուսումնառությամբ, Մարգարեն ասել է. «Երկուսն էլ բարի գործ են կատարում, սակայն ես սովորեցնելու համար եմ ուղարկված»<sup>5</sup>: Ապա Մարգարեն եկել և նստել է այն մարդկանց կողքին, ովքեր զբաղված են ուսումնառությամբ:

Մեկ այլ այաթում ասվում է. «Նա այն է, ով անգրագետ ամբոխի միջից ընտրեց մի մարգարե հենց իրենցից, որ նրանց համար ընթերցում է իր պատգամները և նրանց մաքրում է և նրանց Ղուրանի գիրքն ու գիտություն է սովորեցնում, և անշուշտ դրանից առաջ նրանք բացահայտ մոլորության մեջ էին»: Այս այաթն ավելի շատ վերաբերում է դաստիարակությանը: Ինչևէ, ինչպիսին էլ որ լինի գրքի նպատակը, այն գրքի կամ Ղուրանի բացարձակ ճշմարտությունն է, քանի որ այստեղ միաձուլված են գիրքն ու ուսմունքը: Ուսմունքն իրականության բացահայտումն է, և սա անվիճելի փաստ է: Կարևոր խնդիրն այն է, թե ի՞նչը կարելի է համարել ուսմունք, ինչը՝ ոչ: Յուրաքանչյուր իրական բացահայտում կոչվում է ուսմունք: Սբ. Ղուրանն ասում է. «Աստված գիտություն և իմաստություն կտա նրան՝ ում որ կամենա և ում որ արժանի համարի և ում որ գիտություն տրվի՝ առատ բարիք է տրվել և բացի խելամիտներից ոչ ոք այս ճշմարտությունը չի ըմբռնում և չի մտաբերում»<sup>6</sup>:

Ուրեմն, կասկածից վեր է, որ իսլամի հիմնական նպատակն ու ուսմունք-

1-Ղուրան, Երևան 2007, քարգմ. էղ. Գախվերդյան 96 : 1-5:

2-Ղուրան, 39 : 9:

3- Ղուրան, 28 : 80:

4- Բահար-օլ- անվար, 206/1:

5- Ղուրան, 2 : 269:

քը կրթությունն ու գիտությունն է, ինչպես նաև իսլամ ժողովրդի խոհեմ լինելը, որտեղ որևէ խտրականություն արական կամ իգական սեռի նկատմամբ գոյություն չունի :

Ղուրանում բոլոր քերականական ձևերը նշված են արական սեռով. «սակայն թարգմանության ժամանակ դուք դա ինչպե՞ս եք ներկայացնում: Մի՞թե գրում եք, որ բոլոր բարեպաշտ ու բարեգործ տղամարդիկ ավելի նախընտրելի են, քան անառակ տղամարդիկ: Կամ առանձնացնում եք կանանց՝ հիմնավորելով, որ գրքում բոլոր քերականական ձևերը արական սեռով են տրված»: Իհարկե, նկատի ունենք մարդ արարածին, առանց սեռերի խտրականության: Մինչ օրս ոչ ոք չի ենթադրել, որ գրքի նպատակն այն է, թե բարեպաշտ տղամարդիկ առավել նախընտրելի են քան մեղսագործ տղամարդիկ: Եվ եթե ձեզ հարցնեն, թե ո՞ր կանայք են նախընտրելի, բարեպաշտ, թե՞ մեղսագործ, պատասխանեք, որ Ղուրանն այդ մասին ոչինչ չի ասել: Իսկ սրբազան գրքի «Չոջրաթ» սուրայում ասվում է. «Ով մարդիկ, մենք ձեզ արարեցինք տղամարդուց և կնոջից և ձեզ բաժանեցինք ընտանիքների և ցեղերի, որպեսզի ճանաչե՞նք միմյանց: Սակայն սրանք արժանիքներ չեն հանդիսանում»<sup>7</sup>: Յիշյալ այաթը վկայում է, որ Ղուրանում գրված չէ, որ տղամարդիկ ավելի գերադասելի են, իսկ կանայք՝ ոչ: Գրքում նշված «դուք» կամ «ձեզ» դերանունները վերաբերում են մարդկությանը: Այսպիսին է նաև բարոյականության և բարքերի խնդիրը: Բարոյական չափանիշները ոչ տղամարդուն են առավելություններ տալիս և ոչ էլ վերաբերում են միայն կնոջը:

## Ո՞ր գիտելիքը

Գիտելիքի ու գիտության մասին խոսելիս կարևոր է նշել, թե որո՞նք են թեմայի սահմանները: Ես «ԳոՖթարե մահ» (Ամսվա ասելիք) գրքում հրատարակված «Գիտության վարկած» խորագրով իմ ելույթում ներկայացրել եմ այն խնդիրը, որ որոշ գիտություններ, որպես ուսմունք, պարտադիր ու կենսական են յուրաքանչյուր մահմեդականի համար: Այդ գիտություններից են օրինակ՝ աստվածաբանությունը, դավանաբանությունը, հրեշտակներին, մարգարեներին, երկնային գրքերին և հանդերձյալ կյանքին վերաբերող գիտությունները, որոնք հանդիսանում են հավատքի սկզբնաղբյուր և նախաբան: Ինչպես գիտեք, իսլամում հավատը հիմնվում է ոչ թե կրկնօրինակման, այլ՝ գիտության և գիտակցության վրա և այդիսկ պատճառով գիտության ձեռքբերումը բոլոր մահմեդականների համար պարտադիր է: Գիտությունների այս խումբը ուղղակիորեն օբյեկտիվ անհաժեշտություն է, որով պայմանավորվում է մարդու հավատը: Բոլոր գիտնականները համոզված են սրանում:

Սակայն այս ամենից բացի, գոյություն ունի նաև գիտությունների մեկ այլ խումբ ևս, որը ծագում է դավանաբանական խնդիրներից և մենք պետք է տեսնենք, թե որո՞նք են այդ գիտությունները: Իսլամական կրոնագետների մոտ տարածվել է սխալ կարծիք պարտադիր գիտությունների մասին: Իսլամական իրավագետներն ասում են, որ դա իրավագիտու-

7-Ղուրան, 49 : 13:

թյունն է, որը հանդիսանում է իրավունքի և գործունեության սկզբնաղբյուր: Բարոյագետները պնդում են, որ բարոյագիտությունն իրավագիտությունից ավելի կարևոր և անհրաժեշտ է: Քյալամի՝ մասնագետները պնդում էին, որ ամենաառաջնային գիտությունը աստվածաբանությունն է: Նրանց հավաստմամբ ամենակարևորը Սուրբ Գրքի մեկնության գիտությունն է: Այնուհանդերձ կասկածից վեր է, որ գիտությունը կամ նպատակ է, կամ՝ որևէ նպատակի հասնելու սկզբնաղբյուր և նախաբան: Երբ գիտությունն ինքնին նպատակ է՝ պարտադիր է, ինչպես օրինակ՝ դավանաբանական սկզբունքները արծարծելիս: Իսկ նպատակ չլինելու դեպքում պարտադիր է զուտ այն պատճառով, որ որևէ նպատակի նախասկիզբն է հանդիսանում:

Երկրորդ դեպքում, երբ այն պարտադիր է սկզբնաղբյուր լինելու պատճառով, պարտադիր է նաև մանրամասնությունների իմացությունը: Օրինակ՝ մենք պարտավոր ենք նամազ անել, սակայն եթե մարդը կամենում է, որ իր նամազը ճշգրիտ լինի՝ պետք է իմանա դրա նրբությունները: Ինչպես տեսնում ենք, այս պարագայում դրանք ևս ստանում են կարևոր և պարտադիր բնույթ, քանի որ գործողությունն առանց նրբությունների ճշգրիտ իմացության դառնում է ոչ ճիշտ: Սա վերաբերվում է ոչ միայն նամազին կամ ծոմին, այլ նաև մյուս պարագաներին: Բոլոր իսլամական պարտականությունները գիտականորեն հաստատվելու կարիք ունեն: Իսլամը մեզանից պահանջում է մաքրել մեր անձն ու հոգին, որն առանց բարոյահոգեբանական իմացությունների ընկալման անհնար է: Եթե մենք ցանկանում ենք Ղուրանի որոշ պատգամներ սովորել, բնականաբար, Ղուրանի ու նրա մեկնաբանությունների ընթերցումը դառնում է պարտադիր: Սակայն մեր գիտելիքներն ավելի են ընդլայնվում, քանի որ բացահայտ պարտադիր գործողությունների իրականացումից բացի մենք պարտավոր ենք սովորել ու սերտել նաև որոշ մանրամասնություններ: Ուրեմն՝ եթե բժշկի գոյությունը պարտադիր է, ապա՝ բժշկագիտությունը նույնպես վերածվում է անհրաժեշտության, քանզի հիվանդներին բուժելու համար բժիշկ է հարկավոր, որը, սակայն, չի կարող առանց գիտելիքի ու գիտության լինել: Իսլամը պնդում է, որ բժիշկն անհրաժեշտ է, սակայն նրա գոյությունն ապահովող նախապայմանները նույնպես անհրաժեշտ են: Իսկ բժիշկը ոչ երկնքից է իջնում և ոչ էլ ծառի վրա է աճում: Մարդիկ իրենք պետք է գիտելիք ձեռք բերեն, որպեսզի բժիշկ դառնան: Իհարկե, ամեն մի ժամանակ թելադրում է իր պայմաններն ու կանոնները: Կար ժամանակ, երբ բավական էր, որ բժիշկը տիրապետեր Ավիցեննայի բուժական միջոցներին, այսօր գոյություն ունի ավելի առաջավոր բժշկություն, իսկ վաղը՝ գիտությունն ավելի կզարգանա:

Չաջորդ խնդիրը «առևտրի» խնդիրն է: Արդյո՞ք իսլամական տնտեսական համակարգում ընդունվում և հաստատվում է ապրանքը արտադրողից սպառողին հասցնող միջնորդների ներկայությունը և արդյոք կարո՞ղ են ոմանք այն ընտրել որպես մասնագիտություն: Եթե ընդունված և հաստատված է, ուրեմն՝ մարկետոլոգիայի (շուկայագիտության) ուսուցումը

1- էլմ –օլ- քյալամ- իսլամական կրոնական փիլիսոփայական գիտություններից մեկն է՝ աստվածաբանություն, որը իսլամի դոգմաները մեկնաբանում է գիտակցության միջոցով, այլ ոչ թե կրոնական հեղինակություններին հետևելով (թարգմ.):

պարտադիր է:

Մեկ այլ պարագայում Դուրանն ասում է. «Որքան ուժ ունեք ձեր էության մեջ նրանց (թշնամիներին) դիմակայելու համար գործի դրեք և նույնպես մարզված ձիեր՝ պատերազմի դաշտի համար»<sup>8</sup>: Սակայն թշնամուն վախեցնելու նպատակով զենքերի և անհրաժեշտ ուժի ձեռքբերումը պարտադիր է, թե՞ ոչ: Այո, պարտադիր է: Սակայն դա հենց այնպես չի իրականացվում, այլ որոշակի պայմանների և պատրաստության դեպքում: Հզոր և ուժեղ լինելու համար անհրաժեշտ է նախապատրաստվածություն, որը ձեռք է բերվում տարբեր ժանապարհներով, միջոցներով և որոշակի գիտելիքների յուրացման արդյունքում:

Որոշ գիտելիքներ օբյեկտիվորեն պարտադիր են բոլորի համար, սակայն կան նաև գիտելիքներ, որոնք պարտադիր են դառնում միայն որոշակի պայմանների առկայությամբ: Ոմանք համարում են, որ մարդու համար պարտադիր են միայն կրոնական գիտելիքները: Սակայն այդպես չէ, քանզի պարտադիր կարող են լինել նաև կրոնական պարտականություններ ուսուցանող գիտելիքները: Մարդիկ չեն կարող սովորել այն՝ ինչ կոչվում է կրոն՝ խուսափելով կրոնական ծեսերը և պարտավորությունները լուսաբանող գիտելիքներից: Նրանք պարտավոր են սովորել նաև դրանք: Իհարկե, կրոնը նրանց համար օբյեկտիվ անհրաժեշտություն է, իսկ մնացյալը՝ երկրորդական: Իսկ ո՞վ է ասել, որ մենք պետք է սովորենք կրոնը: Իսլամը չի ասում. «Սովորեք կրոնը», այլ ասում է. «Իրագործեք կրոնը»: Սակայն կրոնի իրագործումն առանց այն սովորելու անհնար է: Օրինակ՝ գոյություն ունեն կրոնի կողմից պարտադրված գործողություններ, որոնցից են՝ իսլամական հասարակությանը նպատակահարմար բժիշկների ապահովումը: Սակայն առանց սովորելու մենք չենք կարող որևէ բժիշկ ունենալ: Մենք նախ պետք է սովորենք մեր պարտականությունները, իսկ հետո միայն կարողանանք դրանք իրագործել: Սա շատ պարզ խնդիր է:

Որպես ամփոփում նշենք, որ մենք խոսեցինք երկու խնդրի շուրջ, որոնցից մեկը վերաբերում էր այն բանին, որ իսլամական դաստիարակությունն ու կրթությունը անչափ կարևոր են մարդու մտավոր զարգացման համար, իսկ մյուսը՝ այն, որ կրթությունը չունի որոշակիորեն ուրվագծված սահմաններ, ըստ որի մենք կարող ենք ասել, թե բարոյագիտությունը, Ֆիզիկական կամ մյուսը՝ այսպիսին են: Իսլամի նպատակը գիտելիքների և գիտությունների բացահայտումը չէ: Այն չի ասում Ֆիզիկա, մաթեմատիկա կամ մեկ այլ գիտություն պետք է սովորել, թե՞ ոչ: Իսլամը նշում է որոշ խնդիրներ, որոնք պետք է իրականացվեն, իսկ դրանց իրագործման համար անհրաժեշտ են որոշակի գիտելիքներ:



## ՄԱՍ II

### *Մարդու գիտակցական դաստիարակումը*

## Հանուն Ողորմած և Բարեգույշ Աստուծո

Մեր նախկին քննարկումը վերաբերվում էր այն հարցին, որ իսլամը կոչ է անում գիտելիքի և գիտակցության՝ նշելով այս երկուսի տարբերությունը: Ըստ այդմ գիտելիքը ձեռքբերովի և ուսուցանելի է, սակայն միայն սովորելը բավական չէ և առավել կարևոր է սովորածի շուրջ խորհելն ու այն վերլուծելը: Սկզբում մտածում էի բավարարվել հենց այսքանով, սակայն հետո անդրադարձա գիտակցության ու խելքի մասին մի քանի տարի առաջ ունեցած իմ գրառումներին և տեսա, որ գոյություն ունեն հարցեր, որոնց մասին չի կարելի չխոսել: Այդ բոլոր գրառումները վկայակոչում են այն մեթոդները, թե ինչպես պետք է կրթվի ու մեծանա մահմեդականը: Ուզում եմ սկսել գիտակցության խնդրից:

### Գիտակցությունը պետք է մաքրող (զտող) լինի

Մի շատ տարածված ասույթ կա, որ գրված է «Քեթաբ -օլ- աղլե վալ ջահլ» գրքում: Այդ գրքում հայտնի հռետոր Յեշամ-էբն -օլ- Յաքյանը պատմում է Մովսես մարգարեի հետ կատարված մի դիպված: Դա երկար պատմություն է, և ես տարիներ առաջ գրառել էի դրա որոշ հատվածներ: Յիմա այն կընթերցեն ձեզ համար: Այնտեղ հռետորը մեջբերում էր Դուրանի «Զոմար» սուրայի 20 այաթը, որտեղ ասվում է. «Սակայն նրանք, ովքեր որդեգրել են աստվածային բարեպաշտությունը՝ դրախտում տաղա-



վարներ ունեն, որոնց վրա այլ տաղավարներ են կառուցվում, և նրանց ներքո աղբյուրներ են հոսում: Սա խոստացածն է Աստծո, իսկ Աստված խախտում չի կատարելու իր խոստման մեջ»:

Զարմանալի տողեր են. «Ավետիս տուր իմ ծառաներին, ովքեր ունկնդրում են իմ խոսքը...»: Իսկ նրանք ինչպե՞ս են վարվում: Արդյո՞ք խորությամբ ընկալում են ասվածն ու նույնությամբ կիրառում գործնականում, թե՞ լսելուց հետո ամբողջովին մի կողմ են դնում: Իսկ միգուցե ծանր ու թեթև են անում և ընտրում, թե ո՞րն է ավելի լավ և առաջնորդվում են այդ լավագույնով:

Նաև գրված է. «Կան մարդիկ, որոնց Աստված շնորհել է»: Զարմանալի միտք է, երբ ասվում է, որ նրանք իսկական խելքի տեր մարդիկ են:

Մարգարեն Յեշամին ասում է. «Աստված ավետիս է տվել խելացի և հասկացող մարդկանց»:

Այս այսօրից ու արտահայտությունից հասկանալի է, որ մարդու խելամտության ամենավառ հատկություններից մեկը ճշմարիտ խոսքը կեղծից, զորեղը՝ թուլից, տրամաբանականը անտրամաբանականից տարբերելու հատկությունն է: Մարդու խելքն այն ժամանակ է իրական խելք, երբ կարողանում է գտիչի դեր կատարել: Այսինքն՝ ծանր ու թեթև անել, գտել ողջ ընկալվածը: Մտապահել կարևորն ու մի կողմ նետել ոչ պետքականը:

Իսլամի մեծ մարգարեից եկած նմանատիպ մի խոսք կա, որում ասվում է, որ հիմար երևալու համար բավական է, որ մարդն ասի այն, ինչ լսում է:

Ոմանք օժտված են ձայնագրիչի և հաղորդիչի հատկությամբ: Այսինքն, ամբողջությամբ լցվում են ուրիշների մտքերով և մեկ այլ տեղ սպառում լսածը՝ առանց վերլուծելու, թե որքանո՞վ է ճիշտ այդ ամենը: Մարդը շատ բաներ է լսում, սակայն դրանցից միայն մի մասը պետք է ընդունի և փոխանցի: Արդեն նշեցինք, որ կան շատ գիտնականներ, որոնք խելամիտ չեն (այստեղ խելք ասելով, ի նկատի ունենք վերը նշված չափանիշները): Նրանք գիտնական են ընդամենը այն պարզ պատճառով, որ անչափ շատ գիտելիք և տեղեկություն ունեն, որ կուտակել են ամեն ինչ լսելու ու տեսնելու միջոցով: Եվ հաճախ, առանց մտածելու թե իրենց իմացությունը որքանով է համապատասխանում իրականությանը, սովորեցնում են այն, ինչ լսել են: Զարմանալին այն է, որ մենք տարածված սկզբունք ունենք, ըստ որի՝ պատմողը կամ հռետորը պետք է քննադատ լինի և ոչ թե պատմի ամեն լսած բան: Սակայն, ի հեճուկս այս սկզբունքի բազմաթիվ պատմաբաններ, հռետորներ ու բանախոսներ կան, որոնք շրջանցում են այս դրվածքը:

### Խալկեդոնի քննադատությունը

Խալկեդոնն իր «Պատմության» նախաբանում որոշ պատմաբանների քննադատելիս ասում է, որ նրանք պատմությունները ներկայացնելիս առաջնորդվում են միայն իրական փաստերով և մատնանշում, թե որ ճանաչված և հեղինակավոր մարդն ինչ է ասել: Նա ասում է, որ նախքան այս

ամենն անհրաժեշտ է առաջնային ուշադրություն դարձնել բովանդակության հավաստիությանը: Պետք է մտածել, արդյո՞ք նյութը համապատասխանում է տրամաբանության հետ, թե՞ ոչ: Նա օրինակ է բերում. «Սրանք գրում են, որ երբ Մովսեսի գերդաստանն անցավ ծովի միջով, իսկ փարավոնի մարդիկ նրանց հետապնդում էին, Մովսեսականների մեջ 250 հազար մարտիկ կար»: Պետք է հաշվի առնել, որ իսրայելցիները բոլորը Հակոբի որդիներն էին և նրանք բոլորը մեկ մարդուց էին սերում: Ընդամենը 5-6 սերունդ էր փոխվել և զինված մարտիկների թիվը 250 հազար լինել չէր կարող, քանզի 250 հազար մարտիկ ունենալու համար անհրաժեշտ էր, որ բնակչության թիվը լիներ գոնե 1 մլն: Իսկ այսպես լինել չէր կարող, քանի որ, ինչպես վկայում է Ղուրանը՝ փարավոնը սպանում էր նրանց արու զավակներին. «Նրանք, որ շարունակ ձեզ տանջում էին վատթարագույն ձևով, սպանում ձեր որդիներին ու ողջ թողնում կանանց՝ ծառայելու համար»»: Այս ամենով հանդերձ հնարավոր է այդքան բնակչություն ունենալ:

Խալկեդոնը գրում է, որ պատմիչները երբեք ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքին, թե որքանով է իրենց ներկայացրած իրադարձությունը տրամաբանական է:

Մի անգամ, մի շատ ճանաչված քարոզիչ ուզում էր պատմել, թե ինչպես են Բանի օմայիները տապալվել և Աստված Իմամ Հոսեյնի որդիներին օրհնել, և ասել է, որ Աշուրայի օրը Իմամ Հոսեյնի որդիներից միայն մեկն էր կենդանի մնալու, որը Հոսեյնի որդի Ալին էր, իսկ Բանի օմայիներից ոչ ոք: Մեկ այլ տեղ Բանի օմայիների մասին խոսելիս նշում, որ Հիջրայի 61 թվականին տեղի ունեցած Քյարբալայի ողբերգության ժամանակ Բանի օմայիների տներում 12 000 ոսկյա օրորոց կար: Եկեք հաշվենք, թե Բանի օմայիները թվով քանիսը պետք է լինեին և քանի օրորոց պետք է ունենային, որոնցից 12 000-ը ոսկյա լինեին:

Լուսահոգի պարոն Խանսարին մեկ անգամ նմանատիպ մի մեջբերում արեց և ծաղրելով ասաց. «Իհարկե, ինչ որ ժամանակ Հերաթն այնքան մեծ էր, որ 21 000 մեկ աչքանի Ահմադ այնտեղ խորտկարան ուներ: Այժմ հաշվեք, թե որքան խորտկարան կար Հերաթում, տներից քանիսի անունն էր Ահմադ և նրանցից քանիսն էր միաչքանի ...»: Իհարկե, Հերաթի օրինակը չափազանցված է աբսուրդի աստիճան, սակայն պատմության մեջ մենք հանդիպում ենք նմանօրինակ փաստերի: Մեկ անգամ մեր սովորական պատմության գրքերից մեկում, որ հայտնի մի գիտնական էր գրել, կարդացի, որ Հառեի իրադարձության ժամանակ, երբ եկել ու կոտորել են Սեդինայի բնակիչներին, մտել են մի աղքատ ընտանիք, որտեղ կինը նոր էր ծննդաբերել ու պառկած էր անկողնում, իսկ երեխան՝ օրորոցի մեջ: Հարձակվողներից մեկը ամբողջ տան մեջ որևէ պետքական իր էր փնտրում, բայց թալանելու ոչինչ չգտավ: Չայրացած, որ ստիպված է ձեռնունայն հեռանալ, ուզում էր երեխային սպանել: Երեխայի մայրն՝ աղաչելով ասում է, որ իրենք Մարգարեի ցեղակիցներից են և որ նա իր ամուսնու հետ Մարգարեի Բեյաթ-օլ- ռեզվանի դաշնակիցներից է եղել: Սակայն՝ ապարդյուն: Տղամարդը երեխային օրորոցից վերցնում է, ոտ-

քից բռնելով պատեցնում օդում և այնպես ուժգին հարվածում պատին, որ երեխայի ուղեղը տարածվում է ամբողջ պատի վրա: Այս մասին շատ են պատմում, սակայն արդյո՞ք դա ճիշտ է: Արդյոք հնարավոր է, որ մարգարեի դաշնակիցները, հատկապես կինը, որը մասնակցել է Բեյաթու ռեզվանին, հղիանար: Եթե ընդունենք, որ նա ընդամենը տաս տարեկան էր, երբ ամուսնու հետ զնաց մարգարեին դաշնակցելու, ապա այդ իրադարձության ժամանակ նա արդեն 68 տարեկան պետք է լիներ: Կարո՞ղ է արդյոք 68 տարեկան կինը ծննդաբերել:

Ուրեմն անհրաժեշտ է մի փոքր հաշվարկել: Եթե մարդ մի քիչ մտածի, կտեսնի, որ այդ ամենը սուտ է: Սա հենց այն զտումն է, որի մասին մենք խոսեցինք և որի առումով Մարգարեն ասել է. «Խավարամտությունը դեմ է ոչ թե գիտությանը, այլ տրամաբանելու ունակությանը», այսինքն խավարամտությունն անխելքությունն է, ոչ թե անգիտությունը: Անխելք երևալու համար բավական է, որ մարդն առանց ծանր ու թեթև անելու լսի և հավատա ամեն ինչի:

### Խոսքի քննադատում

Հաջորդ խնդիրը, որը նույնպես վերաբերվում է այս թեմային և որն ապացուցվում և հաստատվում է տարբեր սուրաների բազմաթիվ այաթներում, դա բառի վերլուծությունն ու լուսաբանումն է՝ այսինքն ճիշտն ու սխալն իրարից տարբերելը: Այլ բան է, երբ մարդ երկու խոսքից վերցնում է ճիշտը, իսկ սխալը մի կողմ է դնում: Ամենևին տարբեր բան է, երբ մարդ տարբերում է մեկ խոսքի ճիշտ ու սխալ տարրերը և դրանք տարբերակելով՝ ասում, թե որ մասն է ճիշտ և որը՝ սխալ: Այս առումով տարբեր ասույթներ ու պատումներ ունենք, որոնցից մեկում մեջբերվում են Հիսուս Քրիստոսի խոսքերը, թե անհրաժեշտ է ոչ միայն խոսողին լսել, այլ նաև բառաճանաչ լինել: Հիմք ընդունեք ոչ թե խոսողին, այլ նյութը, որը նա ներկայացնում է: Ընդունեք ճշմարիտ և իրավացի խոսքը նույնիսկ անհրավ մարդուց և մի ընդունեք ոչ հավաստի խոսքն անգամ ամենաիրավացի մեկից: Այս ամենն ամփոփվում է մեկ խոսքով. «Եղեք խոսքի զտիչ<sup>1</sup>»:

Ապա Մարգարեն ասել է. «Եվ հիշեք այն ժամանակ, երբ ձեզանից պայման վերցրինք և Թուր լեռը ձեր գլխավերևում հաստատեցինք/եվ ձեզ ասացինք/. «Այն, ինչ Աստծո այաթներից և պատվիրաններից ձեզ տվել ենք՝ ամուր պահեք և այն, ինչ նրանում կա՝ հիշեք և կատարեք, թեևս ողջախոհ լինեք: Երկինքների ու երկրի արարչության մեջ, և գիշերվա ու ցերեկվա երթ ու դարձում, և նավերը, որ ծովերում ի շահ մարդկանց ընթանում են, և ջուրը, որ Աստված երկնքից իջեցրել է և նրանով հողը մահից հետո կենդանացրել է, և նրանում զանազան գոյություններ է սփռել և նաև քամիների ուղիների փոփոխությունը և այն ամպերը, որոնք երկնքի ու երկրի մեջ սանձված են՝ նշաններ են Աստծո արդար էության և Նրա անզուգականության, այն մարդկանց համար են, որոնք խելք ունեն և տրամաբանում են»<sup>2</sup>:

1- Բահար-օլ- անվար 96/2:  
2-Ղուրան, 2 : 63 և 164:

## Հեռատեսություն

Մարդկանց մտավոր զարգացման հիմնական հատկություններից մեկը հեռատեսությունն ու շրջահայացությունն են: Իսլամական դաստիարակությունը մեծ ուշադրություն է դարձնում նաև ապագայի հանդեպ պատասխանատվությանը: Այն մարդուն կոչ է անում չսահմանափակվել ներկայով, այլ տեսնել նաև ապագան՝ հաշվարկելով յուրաքանչյուր գործի վերջնական արդյունքն ու հետևանքը:

Կա մի հայտնի պատմություն, որը ես հիշատակել եմ «Շշմարիտների պատմություն» գրքում: Ըստ այդ պատմության՝ մի մարդ գալիս է մեծ Մարգարեի մոտ և ասում, «Ով Աստօժ Մարգարե, ինձ հորդորիր»: Մարգարեն պատասխանում է. «Եթե ասեմ, կկատարե՞ս»: Մարդն ասում է. «Այո»: Եվ Մարգարեն երեք անգամ կրկնում է իր հարցը: Նրա նպատակն էր այդ մարդուն ասվելիք խոսքին նախապատրաստելը: Նրանից երեք անգամ համաածայնություն ստանալուց և նրան նախապատրաստելուց հետո միայն Մարգարեն ասում է. «Յուրաքանչյուր գործ սկսելուց առաջ, մտածիր հետևանքների մասին»<sup>11</sup>: Հենց սա էլ իսլամական գրականության մեջ նշվում է որպես հեռատեսություն: Այս խնդրին առավել մեծ ուշադրություն է դարձվում հատկապես «Մասնավի» ժանրում:

## Գիտելիքի և գիտակցության զուգակցման անհրաժեշտությունը

Հաջորդ խնդիրը կայանում է նրանում, որ գիտելիքն ու գիտակցությունը պետք է զուգորդվեն: Սա շատ հետաքրքիր թեմա է: Թերի գիտելիքներով ապրող մարդը նման է հումք չունեցող կամ քիչ հումքով աշխատող գործարանի, որի արտադրանքը կամ թերի է կամ էլ՝ չկա ընդհանրապես: Արտադրանքը կախված է հումքի բավարար լինելուց: Սակայն եթե գործարանը բավական քանակությամբ հումք ունենա ու չաշխատի, դարձյալ արտադրանք չի կարող ունենալ:

Մարգարեն ասում է, որ գիտելիքն ու բնածին խելքը պետք է զուգակցվեն: Արդեն նշեցինք, որ գիտելիքը ծառայում է որպես հումք, իսկ խելքը՝ դա գիտակցությունն է, տրամաբանումը, վերլուծումն ու քննարկումը: Այս առումով Դուրանում գրված է. «Սրանք օրինակներ են, որ մենք բերում ենք մարդկանց համար և այն միայն խելամիտներն են ըմբռնում»<sup>12</sup>: Ականատես եղեք, թե ինչպես են զուգակցվում գիտելիքն ու խելքը:

## Խելքի ազատումը հասարակական սովորույթներից

Հաջորդ խնդիրը գիտակցության ազատումն է միջավայրի կարծիքից, խելքի ազատագրումն է ներշնչանքներից և սովորույթներից: Կամ ինչպես այսօր արաբներն են ասում՝ «հասարակական սովորույթներից գիտակցության ազատումը»: Այս առումով Մարգարեն ասել է. «Անհավատների շրջանում ուղղակի քարոզ կարդացողը նման է այն մարդուն, որ ոչխարներին ու անասուններին վտանգի ճիրաններից փրկելու համար գո-

11-Բահար-օլ- անվար 130/77:

12- Դուրան, 29 : 43:



ռում է, սակայն նրանք բացի աղմուկ - աղաղակից, ուրիշ բան չեն լսում՝ և իրականությունը և նրա ասածների միտքը չեն ըմբռնում: Այս անհավատները իրականում խուլ ու համր և կույր են, այդ իսկ պատճառով ոչինչ չեն հասկանում»<sup>13</sup>:

Ղուրանը հիմնականում մեղադրում է այն մարդկանց, որոնք իրենց ապուպապերին ընդօրինակելու և կրկնօրինակելու գերին են դառնում և չեն խորհում ու չեն ջանում ազատվել այդ գերությունից: Իսկ ո՞րն է Ղուրանի կողմից մարդկանց մեղադրելու նպատակը: Ղուրանի նպատակը՝ դաստիարակումն է: Այն իրականում ցանկանում է արթնացնել ու սթափեցնել մարդկանց՝ քարոզելով, որ հիմնական չափանիշը պետք է տրամաբանելն ու կշռադատելը լինի և ոչ թե մեր հայրերի արարքների կրկնօրինակումը: Ինչ որ մի ժամանակ ես աչքերս փակ անգիր էի անում Ղուրանի այաթները՝ լսելով դրանք իմ հորից, սակայն հասկացա, որ կան բազմաթիվ այաթներ, որոնք վկայում են, որ ոչ մի Մարգարե, երբևէ, մարդկանց կրոնի կոչ չի արել՝ քանի դեռ չի բախվել այս խոսքերի հետ. «Եվ այսպես, քեզանից առաջ մենք ոչ մի ահազանգող մարգարե ոչ մի քաղաք ու երկիր չենք ուղարկել, բացի այն դեպքերից, երբ նրա հարուստ, հարբեցող ու գոռոզ մարդիկ ասել են. «Մենք մեր հայրերին այս կրոնի մեջ գտանք և առաջնորդվում ենք նրանց ազդեցությամբ»<sup>14</sup>:

Ավանդույթների առումով մարգարեներն ու առաքյալները շատ տարբեր էին և յուրաքանչյուր Մարգարե իր ցեղի մարդկանց առաջարկել է այնպիսի խնդիրներ, որոնք համապատասխանում էին այդ ցեղի կենսական պայմաններին: Բնականաբար, նրանք բախվել են այնպիսի խնդիրների հետ, որոնք յուրահատուկ են տվյալ հասարակական խմբավորմանը: Սակայն բոլոր խմբավորումների ու հանրույթների մոտ նկատվում է մեկ ընդհանուր երևույթ, որի հետ բախվել են բոլոր Մարգարեները: Դա նախնիների կրկնօրինակման ու ինչպես հիմա են ասում՝ ավանդապահության խնդիրն է: Մարգարեները սթափեցնում էին մարդկանց, ասելով՝ «Խորհեք և ընդունեք, որ ինչպիսին էլ որ լինեն ձեր նախնիները, նրանք ինչ որ բան չեն հասկացել և սխալներ են թույլ տվել: Մի՞թե դուք պետք է կրկնեք այդ սխալները»:

### Իմամ Սադեդն ու ավանդապաշտ մարդը

Սա մի հայտնի պատմություն է, ըստ որի, մի անգամ Իմամ Սադեդը գնում է իր շիա ընկերներից մեկի տուն, որը շատ փոքր ու անշուք էր: Իմամը գիտեր, որ նրա նյութական վիճակը ներում է, և նա ավելի լավ տուն կարող է ունենա, այդ պատճառով հարցնում է. «Դու ինչո՞ւ ես այսպիսի տան մեջ ապրում<sup>15</sup>»: Ընկերը պատասխանում է. «Ով սրբազան, սա իմ հայրական տունն է, որտեղ ապրել են իմ նախնիները և ես չեմ կարողանում այն լքել»: Այնժամ Իմամն ասում է. «Ասե՛նք, թե հայրդ անխելք էր, ինչ է, դո՞ւ էլ պետք է հորդ անխելքությունը ժառանգես: Գնա ու քեզ համար մի լավ տուն կառուցիր»:

13-Ղուրան, 2 : 171:

14-Ղուրան, 43 : 23:

15-Մահասեն Բարդի, էջ 60 և Ֆորուդե ԲաՖի 6/525:

Սրանք իսկապես զարմանալի տողեր են: Մարդիկ Ղուրանում գրվածին չեն նայում խրատական տեսանկյունից և չեն խորհում, թե Ղուրանն այս ամենն ինչի համար է ասում: Այսպիսով Ղուրանը ջանում է կերտել իր ժողովրդին:

### Մեծամասնությամբ չառաջնորդվելը

Մուսա Քազեմ Մարգարեն բարձրացնում է մեկ այլ խնդիր՝ մեջբերելով Սուրբ Ղուրանի «Էնամ» սուրայի 117-րդ այաթը, որում ասվում է. «Քո Տերն ավելի իրազեկ է նրանցից, ովքեր իրենց ճանապարհից մոլորվել են, և նույնպես նրանցից, ովքեր առաջնորդվել են»:

Այլ կերպ ասած՝ խնդիրը կայանում է նրանում, որ պետք չէ բազմությանը նայելով առաջնորդվել և որ մեծամասնությունը երբեք չպետք է չափանիշ հանդիսանա: Մարդը չպետք է գնա այն ճանապարհով, որով մեծամասնությունն է գնում՝ կարծելով, որ մեծամասնության ընտրած ուղին ճշմարիտ է: Սա ևս կրկնօրինակման ձևերից մեկն է: Մարդուն բնությունից տրված է կրկնօրինակելու և մեծամասնությանը ձգտելու հակումը: Եվ Ղուրանը քննադատում է այդ բնականոն ձգտումը՝ ասելով. «Եթե հետևես երկրագնդի մարդկանց մեծամասնությանը, ապա նրանք քեզ կշեղեն ճշմարիտ ուղուց»: Պատճառն այն է, որ մարդկանց մեծամասնությունն առաջնորդվում է ենթադրություններով և մոտավոր հաշվարկներով, և ոչ թե գիտակցությամբ, խելքով, համոզմունքներով: Այդ է պատճառը, որ մարդիկ խճճվում են իրենց ենթադրությունների սարդոստայնում:

Այս առումով սբ. Ալին ասել է. «Ճանապարհվելիս երբեք չսարսափեք այն բանից, որ այդ ճանապարհին մարդիկ քիչ են»<sup>16</sup>: Երբեմն մարդ կանգնում է ճանփաբաժանում: Մեկով շարժվում է մարդկանց հոծ բազմություն, իսկ մյուսով գնացողները շատ քիչ են: Մարդն ականաջից սարսափում է: Այս պահին մարդ սարսափում է և որոշում. «Կգնամ մեծամասնության ճանապարհով: Ինչ որ պետք է մեծամասնության հետ պատահի, թող որ ինձ հետ էլ պատահի»: Սակայն սբ. Ալին ասում է. «Ոչ, ճանապարհը ճանաչեք, մեծամասնությունը ոչ մի նշանակություն չունի»:

### Այլոց կարծիքների անտեսումը

Հաջորդ խնդիրը, որը կրկին վերաբերում է մարդկանց մտավոր դաստիարակությանը, այն է, որ մարդու մասին այլոց կարծիքները չպետք է չափանիշ հանդիսանան: Սա մի համընդհանուր հիվանդություն է, որի հետ քիչ թե շատ բախվում են բոլոր մարդիկ: Օրինակ, մարդն իր համար մի հագուստ է ընտրում և համոզված է, որ լավ գույն է ընտրել: Գալիս է մեկն ու ասում. «Այս ինչ տիպի գույն է, ինչո՞ւ ես սա ընտրել»: Քիչ անց մոտենում է մեկ ուրիշն ու կրկին նույն միտքն արտահայտում: Կամաց - կամաց մարդը սկսում է համոզվել, որ վատ հագուստ է ընտրել: Հաճախ արդախի կարծիք հայտնողներն այդ անում են մարդու համոզմունքը

16-Նաիթ-օլ- քալադե, 201:



փոխելու նպատակով և ոչ թե՛ իրենց ճաշակից ելնելով: Ճիշտ չէ, երբ մարդ իրեն վերաբերող հարցերով հայտնվում է այլոց ազդեցության ներքո: Այս կապակցությամբ ասվում է. «Ձեզ վերաբերող հարցերով երբեք մի հայտնվեք ուրիշների դատողությունների և կարծիքների ազդեցության ներքո»:

### Հոգևորական ուսուցիչն ու աշակերտները

Սա ևս հայտնի պատմությունն է մի հոգևորական ուսուցչի մասին, որը բազմաթիվ աշակերտներ ուներ: Անցյալում երեխաներին շատ էին տանջում և նրանց միակ երազանքը նմանօրինակ հոգևոր ուսուցչի ձեռքից ազատվելն էր: Հավաքվեցին մի խումբ ճարպիկ աշակերտներ և որոշեցին այնպես անել, որ ուսուցիչը նրանց ազատի: Ամեն ինչ ծրագրեցին: Հաջորդ օրը դասի եկած առաջին աշակերտներից մեկն ուսուցչին ասաց. «Ով ուսուցիչ, ի՞նչ է պատահել, կարծես հիվանդ լինեք»: Ուսուցիչը պատասխանեց. «Ոչինչ էլ չի պատահել, լավ եմ, գնա նստիր»: Եկավ հաջորդ աշակերտն ու դարձյալ ասաց. «Ով ուսուցիչ, այսօր շատ գունատ եք»: Ուսուցիչն ավելի կամաց ծայնով պատասխանեց. «Գնա, նստիր տեղդ»: Երբ երրորդ աշակերտն էլ եկավ ու նույնն ասաց, ուսուցչի ծայնը խեղճացավ, նա սկսեց կասկածել, որ հիվանդացել է: Դասարան մտնող բոլոր աշակերտները նույն բանն էին կրկնում, երբ ի վերջո ուսուցիչն ասաց. «Այո, լավ չեմ, շատ վատ եմ զգում»: Աշակերտները նրան համոզեցին, որ հիվանդ է և թույլտվություն խնդրեցին, որ նրա համար կերակուր պատրաստեն: Ուսուցիչը լավ չէր զգում, գնաց պառկեց և սկսեց քնկթնկալ: Հետո բոլորին տուն ուղարկեց՝ ասելով, որ հիվանդ է: Երեխաների ուզածն էլ հենց այդ էր:

Այս պատմությունից տեսնում ենք, որ երեխաները կարողացան ներշնչման միջոցով հիվանդացնել այդ խեղճ մարդուն:

Իսկ Մարգարեն ասել է. «Ով Հեշամ, երբեք ուշադրություն մի դարձրու մարդկանց կարծիքներին: Եթե դու մի ընկույզ ունենաս, սակայն բոլոր քեզ մոտեցողներն անընդհատ պնդեն, որ շատ լավ լուլիկ ունես և հարցնեն թե ինչ արժե՝ դու չպետք է ուշադրություն դարձնես նրանց ասածներին, քանի որ ինքդ լավ գիտես, որ ունեցածդ ընկույզ է: Կամ հակառակը: Դու լուլիկ ունես, իսկ բոլոր քեզ մոտեցողները պնդում են, որ հիասքանչ ընկույզ է և հարցնում են, թե որտեղից ես ճարել: Նրանց ասածները չպետք է ազդեցություն գործեն քեզ վրա: Դու չպետք է հիմնվես մարդկանց ասածների վրա: Ինքդ պետք է որոշես, թե ինչպիսի ունեցվածք, ինչպիսի հավատք և ինչպիսի համոզմունքներ են քեզ հարկավոր: Իսկ եթե տեսնում ես, որ ոչինչ էլ չունես, ապա որքան էլ որ մարդիկ քեզ մեծարեն, ուշադրություն մի դարձրու և մտածիր, թե ինչպես պետք է ինքդ քեզ փոխես: Կամ հակառակը: Դու ընտրել ես մի ճանապարհ և զգում ես, որ դա է ճիշտը: Որքան էլ որ մարդիկ քեզ քննադատեն ու շեղեն քո ճանապարհից, նրանց խոսքերին ուշադրություն մի դարձրու»:

## Գիտական հոգի

Գիտելիքի վերաբերյալ մի խնդիր ևս կա, որը կնշեն և որով կավարտեն այս թեման: Ասելիքս նմանապես հիմնավորվում է սրբազան այաթներով և մարգարեների խոսքերով: Մենք իսլամական դաստիարակության մեջ պետք է ուշադրության արժանացնենք նաև այս խնդիրը:

Իմ ստեղծագործություններից մեկում՝ եթե չեմ սխալվում «Երկնային օգնություններ» գրքում, ես նշել եմ, որ գիտնական լինելն ու գիտական հոգի ունենալը տարբեր բաներ են: Ոչ երանի նրանց, ովքեր գիտնական են, սակայն գիտական հոգի չունեն, և ոչ երանի նրանց, ովքեր գիտական հոգի ունեն, և գիտնական չեն: Իսկական գիտնականը նա է, ում գիտական հոգին շաղախված է գիտելիքներով: Իսկ ի՞նչ ենք հասկանում գիտական հոգի ասելով: Գիտելիքը հիմնովին պայմանավորված է իրականության բացահայտման բնագոյով: Աստված մարդուն արարել է ճշմարտատենչ: Այսինքն, մարդը ձգտում է հասկանալ և ճանաչել իրականությունն այնպիսին, ինչպիսին որ այն կա: Եվ իրականում մարդն ամեն ինչի հանդեպ պետք է լինի անկողմնակալ: Մարդը պետք է օբյեկտիվորեն ճանաչի իրականությունն այնպիսին, ինչպիսին որ այն կա, և ոչ թե այնպիսին՝ ինչպիսին ինքն է ցանկանում տեսնել: Այս դեպքում նա գիտական հոգի ունի: Լինում են դեպքեր, երբ մարդն, ինչ որ կոչերով առաջնորդվելով, ձգտում է իրականությունն ընդունել ու տեսնել այնպիսին՝ ինչպիսին ինքն է ցանկանում: Սա տանում է դեպի մոլորություն: Սուրբ Ղուրանի «Նաջամ» սուրայի այաթներում նշվում է, որ մոլորության ուղիներից մեկն այն է, երբ մարդիկ իրենց ցանկությունները շփոթում են շահադիտական գիտակցության հետ և դրանից ելնելով՝ վերլուծում են ինչ որ խնդիր:

Եթե մարդն անշահախնդրորեն է մոտենում իրականությանը, որն անչափ դժվար գործ է, Բարձրյալ Տերը նրան առաջնորդում է: Աստված հավաստել է, որ կառաջնորդի ճշմարտության անշահախնդիր որոնողներին: Այս մասին Սուրբ Գրքում գրված է. «Եվ նրանք, ովքեր մեր ճանապարհին /մաքուր մտքով/ սրբազան պատերազմ մղեն, անշուշտ, նրանց մեր ուղով կառաջնորդենք: Եվ Աստված բարերարների հետ է»<sup>17</sup>: Հենց սա է գիտական հոգին, որը նշանակում է անշահախնդիր, ճշմարտության ձգտող, անկողմնակալ, նյութեղենից և մեծամտությունից զուրկ հոգի: Եթե մարդն ուսումնասիրի գիտելիքի ու գիտության մասին հյուսված բոլոր ասույթներն ու պատմությունները, ապա կտեսնի, թե որքան է շեշտված այն փաստը, որ ճշմարիտ գիտնականը չպետք է ունենա նյութապաշտական, շահադիտական և մոլեռանդ զգացումներ: Նաև չպետք է կարծի, որ իր եզրահանգումներն ամենաճշգրիտն են: Գիտնականը երբեք չպետք է գոռոզանա՝ կարծելով, որ գիտությունը սահմանափակվում է իր գիտցածով: Նա պետք է առաջնորդվի Սուրբ Ղուրանում գրված «Հոգին իմ Տիրոջ հրամաններից է և ձեզ գիտելիքներից շատ քիչ է տրված»<sup>18</sup> տողերով՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն բանին, որ մենք ճշմարտություն հասկացությունից շատ քիչ բան գիտենք: Արդյունքում, նա, ով գիտական

17-Ղուրան, 29 : 69:

18-Ղուրան, 17 : 85:

հոգի ունի, պատճառից դեպի պահանջ է գնում: Թալաբեներն<sup>19</sup> ասում են. «Մենք պատճառի զավակներն ենք և այն ուր էլ գնա, նրան կհետևենք»: Այս դեպքում պատճառը նրանց տանում է դեպի պահանջ: Սակայն հակառակ դեպքում մարդ պահանջից դեպի պատճառն է գնում: Այսինքն՝ նախ պահանջն է առաջանում, ապա՝ մարդը սկսում է պատճառներ որոնել: Բնականաբար, նրա որոնած պատճառները շինծու և արհեստածին են, իսկ շինծու պատճառները չեն կարող ճշմարիտ լինել: Դրանք մարդուն դեպի մոլորություն են տանում: Մեծ գիտնականները, որոնք օժտված են գիտական հոգով, բոլորովին մեծամիտ չեն: Նրանց մոտ ինքնահավանությունը շատ ավելի քիչ է, քան գիտական հոգուց զուրկ մարդկանց մոտ, որոնք ընդամենը չորս նախադասություն գիտեն՝ կարծելով, որ ամբողջ գիտությունը սահմանափակվում է միայն դրանց մեջ: Գոյություն ունի մի ավանդություն, որում ասվում է, որ գիտությունը երեք թիզ, երեք մաս, կամ երեք փուլ է: Առաջին փուլում մարդուն պատում է մեծամտությունը և նա կարծում է, թե աշխարհի բոլոր ճշմարտությունները գիտի: Երկրորդ փուլում նա հասկանում է, որ իրականում այդպես չէ, կուչ է գալիս և խեղճանում: Իսկ երրորդ փուլում նա հասկանում է, որ իմանալու դեռ շատ բան կա և որ ինքը ոչինչ էլ չգիտի:

Ուստի, ելնելով այս ամենից, սովորողի մեջ պետք է գիտական հոգի սերմանել և չպետք է մտածել միայն այն մասին, որ նա գիտակ լինի: Պետք է ջանալ, որ նրա մեջ զարգանա ճշմարտության բացահայտման և գիտական հոգին, որը մերժում է մեծամտությունը, նյութապաշտությունը, շահադիտական նկրտումներն ու եսասիրությունը: Միայն այս զգացումների կանխման արդյունքում կարող է սովորողը գիտական հոգի ձեռք բերել:

19-Այսպես են կոչում իսլամական հոգևոր կրթարանի սաներին (թ):

### ՄԱՍ III

#### *Հնգունակութիւնների զարգացում*



## Նախաձեռն Ողորմա՞ք է՝ Բարեգութի Լսարան

Ընդհանուր առմամբ դաստիարակության և արդյունաբերության միջև գոյություն ունի մեկ տարբերություն, որից էլ մարդ կարող է ճանաչել դաստիարակությունը: Արդյունաբերել՝ նշանակում է պատրաստել, երբ որևէ պարագա տեղադրվում է որևէ հաստոցի կամ գործիքի մեջ և այլ պարագաների ավելացմամբ և որոշակի գործողությունների և միացումների արդյունքում մարդը պատրաստում է այն իրը, որը ցանկանում է: Օրինակ, պատկերացրեք, որ մենք ցանկանում ենք ոսկուց մի մատանի կամ որևէ այլ զարդ պատրաստել: Մենք նրան որոշակի ձև և վիճակ ենք տալիս և այն մեզ համար դառնում է արտադրանք:

Իսկ դաստիարակություն նշանակում է կրթություն, այսինքն՝ յուրաքանչյուր արարածի մեջ ականա գոյություն ունեցող ընդունակությունների ակտիվացում և դրանց զարգացում: Ուրեմն, դաստիարակությունը բնորոշ է միայն շնչավորներին, այսինքն՝ մարդկանց ու կենդանիներին: Եվ եթե այս եզրույթն օգտագործենք ոչ շնչավոր առարկաների վերաբերյալ՝ ապա այն կստանա երկրորդական իմաստ, կամ մեր ասածը սխալ կհնչի: Օրինակ, քարի կամ մետաղի կտորը հնարավոր չէ դաստիարակել և զարգացնել այնպես, ինչպես որևէ բույս, կենդանի կամ մարդ: Այստեղ դաստիարակել բառն արտահայտում է նրանց ներքին ընդունակությունների և կարողությունների զարգացման ու աճի իմաստ: Եվ սրան հասու են միայն կենդանի և շնչավոր էակները: Հենց այստեղից էլ բացահայտվում է, որ դաստիարակությունը պետք է լինի բնականոն և ենթարկվի ու

առաջնորդվի անհատի զարգացմամբ: Եթե ուզում ենք, որ որևէ արարած դառնա ավելի գեղեցիկ, ապա պետք է ջանանք, որպեսզի նրա մեջ առկա ընդունակություններն ի հայտ գան և զարգանան: Սակայն հնարավոր է, որ որևէ էակ այդ ընդունակություններից զուրկ լինի: Այս դեպքում հնարավոր չէ զարգացումը: Օրինակ, հավը զուրկ է ուսանելու ունակությունից: Ուստի, մենք չենք կարող կրթել հավին՝ ասելով, որ նա մաթեմատիկա սովորի և մաթեմատիկական ու երկրաչափական խնդիրներ լուծի: Եթե նրա մեջ այդ ունակությունը չկա, ապա հնարավոր չէ այն ի հայտ բերել: Սա մեկ անգամ ևս ապացուցում է, որ վախճանում ահաբեկումը չեն կարող հանդիսանալ մարդուն դաստիարակելու և կրթելու ազդեցիկ միջոցներ: Այսինքն ծեծով, հարվածելով, ահաբեկելով և սպառնալով հնարավոր չէ բացահայտել որևէ մարդու ընդունակությունները, ճիշտ այնպես, ինչպես հնարավոր չէ ուժով ծաղկի կոկոնին ստիպել, որ այն բացվի: Մենք ուժով ու քաշքշելով չենք կարող ստիպել, որ կոկոնը բացվի, կամ հողից դուրս եկած ծիլը մեծանա: Այն կարող է մեծանալ միայն բնական ճանապարհով, իրեն անհրաժեշտ հողի, ջերմության, ջրի և լույսի առկայության դեպքում: Մենք ամենայն քնքշությամբ, նրբությամբ և հոգատարությամբ պետք է նրան տանք բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի այն մեծանա: Իսկ եթե կամենանք ուժով և ստիպողաբար մեծացնել որևէ բույս, արդյունքի չենք հասնի: Այստեղ ուժի գործոնն անիմաստ է: Իսկ մարդկանց դաստիարակության հարցում անիմաստ է վախճանում ահաբեկումը:

### Չոգեվիճակի պահպանում

«Նահջ — օլ — բալադե» գրքի ասացվածքներին ու թևավոր խոսքերին վերաբերվող մասերում նշված են հետևյալ խոսքերը. «Սիրտն ունի մեկ ցանկություն, մեկ բախտ և մեկ դժբախտություն: Աշխատեք ցանկության միջոցով դաստիարակել սրտերը և ուժ մի գործադրեք»: Երբ սրտի վրա ուժ և ստիպողականություն են գործադրում, այն կուրանում է և ամեն ինչ ինքնաբերաբար՝ մերժում:

Նույն գրքի «հեքմաթ» բաժնում ասվում է. «Մարդու սիրտն էլ նրա մարմնի նման հոգնում է և երբեմն հանգստի կարիք ունի (այստեղ սիրտ ասելով ի նկատի ունի հոգին): Այս դեպքում պետք չէ նրան պարտադրել նորանոր ծանր մտքեր, այլ հարկավոր է զբաղեցնել գրականությամբ, թեթև և ուրախ գաղափարներով, որպեսզի տրամադրությունը վերականգնվի և սիրտն ուրախանա»:

«Չեքմաթ» բաժնի 304-րդ մասում, որը վերաբերվում է աղոթքին և պաշտամունքին, ասվում է, որ անգամ աղոթքը չի կարելի պարտադրել հոգուն: Այն պետք է քնքշությամբ սերմանել հոգու մեջ: Այսինքն՝ անհրաժեշտ է ստեղծել ցանկության հոգեվիճակ: Սրտին ստիպեք երգել միայն այն ժամանակ, երբ այն ուրախ և զվարթ է և ի վիճակի է դա անել: Իսկ երբ տեսնում եք, որ տրամադրություն չունի, թողեք, որ հանգստանա: Նրան մի ստիպեք անգամ աղոթել: Այս ամենը վկայում է այն մասին, որ նույնիսկ աղոթելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մարդու հոգեվի-



ճակին, քանի որ հարկադրված աղոթքը ոչ միայն բարի ազդեցություն չի գործում, այլև վնասում է:

### **Ռասելի մեկնաբանությունը**

Ռասելն իր հանրահայտ «Ամուսնություն և բարոյականություն» գրքում մի մեկնաբանություն ունի: Նախքան փիլիսոփա դառնալը նա գրականագետ և բանաստեղծ էր և իր ստեղծագործություններում գործածում էր բազմաթիվ բանաստեղծական, գրական արտահայտություններ և մեկնաբանություններ: Վախի և ահաբեկման վրա հիմնված դաստիարակությունը նա անվանում էր «արջի դաստիարակություն»՝ ասելով. «Երեխան իր կյանքի ընթացքում չպետք է ունենա մեղքի, զղջման և վախի զգացումներ (իհարկե մեր նպատակն այստեղ վախի զգացումն է և մեղքի զգացման մասին դեռ չենք խոսում): Երեխան պետք է ուրախ, ժպտաղեն և երջանիկ լինի և երես չթեքի բնական ամենօրյա գործերից: Նրա դաստիարակության և կրթման մեջ չպետք է գործեն արջի դաստիարակության մեթոդները, քանզի մենք գիտենք, թե ինչպես են արջին պարել սովորեցնում: Արջին կանգնեցնում են տաք մետաղի վրա և սրինգ են նվազում: Նա սկսում է պարել, որովհետև եթե տեղում կանգնի՝ ոտնաթաթերը կայրվեն: Նմանատիպ պատժամիջոցների կամ դաստիարակման մեթոդների կիրառումը երեխաների պարագայում կտրականապես բացառվում է, քանզի նրանց մոտ առաջանում են բարդություններ և դա ազդում է նրանց հետագա սեռական զարգացման վրա»:

### **Վախը, որպես ըմբոստության կանխարգելման գործոն**

Այս հատվածը մի փոքր բացատրության կարիք ունի: Վախի և ահաբեկման գործոն ասելով, երեխաների դաստիարակության, և մեծահասակների առումով մենք պետք է հստակեցնենք դրանց ազդեցության ոլորտները: Արդյո՞ք մենք վախին և ահաբեկմանը նայում ենք որպես մարդու դաստիարակման միջոց, թե՞ անհատի հոգեբանական զարգացման խթան: Իհարկե վախը չի կարող հանդիսանալ հոգեբանական զարգացման և դաստիարակության միջոց: Առաջանում է նաև մեկ այլ հարց, արդյո՞ք վախն այն գործոններից է, որն անհրաժեշտ է կիրառել երեխայի կամ հասարակության դաստիարակության ընթացքում: Պատասխանն այսպիսին է. «Այո, սակայն ոչ թե զարգացման ու ընդունակությունների բացահայտման, այլ՝ մանուկների կամ մեծահասակների հոգին հասարակական որոշ ըմբոստություններից հետ պահելու համար»:

Այս ամենից եզրակացնում ենք, որ վախի գործոնը միայն զսպող գործոն է, և ոչ թե լավագույն ընդունակությունների զարգացման ու դաստիարակության միջոց: Այսուհանդերձ, այն հանդիսանում է մարդու մեջ վատ և ցածր կրքերի, ինչպես նաև ըմբոստության կանխարգելման միջոց:

**Մանուկները պետք է իմանան, թե ինչի համար են խրախուսվում կամ պատժվում**

Համոզվեցինք, որ երբեմն անհրաժեշտ է գործածել վախի գործոնը: Վախի գործոնը զարգացնող և դաստիարակող երևույթ չհամարելով հանդերձ, մենք այն որոշ դեպքերում անհրաժեշտ ենք համարում, հատկապես երեխաների առումով, քանի որ մանուկը պետք է տեղյակ լինի, թե ինչի համար են նրան պատժում, կամ պարգևատրում: Եթե երեխան չիմանա, թե ինչի համար է պարգևատրվում կամ պատժվում՝ կկորցնի իր կողմնորոշումը: Այսօր բժշկությունն ապացուցել է, որ բազմաթիվ հիվանդություններ առաջանում են մանուկ հասակում անտեղի ծեծերի և վախի արդյունքում:

Մի օրինակ կբերեմ, որի նման մի ավանդապատում կա: Մի մայր, իր երեխայի հետ, նստած է բազմության մեջ: Երեխային գրկել է մոր ընկերուհին, իսկ երեխան չի հասկանում, որ միզելը վատ բան է և կարծում է, թե այն նման է ջուր խմելուն: Հանկարծ երեխան միզում է քանի որ նրա համար ոչ մի նշանակություն չունի մոր գրկում է դա անում, թե՛ մոր ընկերուհու: Մայրը բարկանում է և սկսում է նրան ծեծել, առանց բացատրելու, որ այդ արարքի համար հարկավոր է զգուշացնել: Երեխան չի հասկանում, թե իրեն ինչի համար են ծեծում և, բնականաբար, դրանից հետո միզելուց առաջ նրա մոտ առաջանում է սթրեսային վիճակ: Նրա մեջ վախ է առաջանում իր բնական պահանջի ժամանակ, որը կարող է հոգեկան և բարոյահոգեբանական լուրջ խնդիրներ առաջացնել երեխայի մոտ («Տաբու» կոչվածները հենց սրանք են): Երեխայի տեսանկյունից սա մի չզիտակցված վախ է, սակայն մոր տեսանկյունից այն շատ տրամաբանական է:

Բազմաթիվ ավանդազրույցներում մենք տեսնում ենք, որ որևէ երեխայի բերել են Մարգարեի մոտ, որ վերջինս նրա համար աղոթք կարդա: Երեխան Մարգարեի գրկում միզել է, իսկ նրա հայրն ու մայրն անսահման բարկացել են: Սակայն Մարգարեն ասել է. «Նրան հանգիստ թողեք, մի ընդհատեք»: Նա իր երեխաների կակաակցությամբ էլ է բազմիցս ասել, որ եթե երեխան միզում է, պետք չէ նրան ընդհատել և վախեցնել: Պետք է թողնել, որ նա հասնի այն բնականոն հասակին, երբ սկսի հասկանալ, որ գորգի կամ հագուստի վրա միզել չի կարելի: Դրան կարելի է հասնել առանց կոպտության, բացատրելով: Եթե նա հասկանալով հանդերձ սկսի միզել գորգի վրա, ապա դա արդեն ըմբոստություն է: Այս դեպքում կարելի է կոպտություն ցուցաբերել և այն կարող է արդյունավետ լինել: Սակայն քանի դեռ գիտակցությունը չի հասունացել՝ կոպտությունն արդյունավետ միջոց չէ:

Լայն առումով հասարակության մեջ երբեմն խստությունն անհրաժեշտ է: Երբ չափահաս մարդը գիտի, որ տվյալ գործողությունը չպետք է անի, սակայն ըմբոստանում է գործող օրենքների ու կարգերի հանդեպ, այս դեպքում ըմբոստության կանխման համար խստության կիրառումն արգելված չէ: Ինչպես արդեն նշեցինք, խստությունը, վախն ու ահաբեկումը չեն կարող հանդիսանալ զարգացման և բարգավաճման գործոններ, սա-

կայն որոշ դեպքերում անհրաժեշտ են՝ հանդիսանալով դաստիարակման ու վատի կանխարգելման միջոց:

### **Չոզու բարգավաճման շրջան**

Չաջորդ խնդիրն այն է, որ դաստիարակությունը պետք է նպաստի մարդու հոգու ծաղկմանը: Իսկ մարդկային կյանքի տարբեր շրջաններն այս առումով միմյանցից տարբերվում են, թե՛ ոչ: Անպայման տարբերվում են, քանզի որոշ տարիքային շրջաններ առավել նպաստավոր են մարդկային ընդունակությունների բացահայտման ու զարգացման առումով: Յոթ տարեկանից մինչև երեսուն տարեկան տարիքը կարևորվում է նաև ավանդազրույցներում: Այդ շրջանում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դրածնել մարդու դաստիարակությանը, քանզի այդ շրջանը մարդու կրթման, զարգացման, դաստիարակման և հատկապես բարոյական ընդունակությունների բացահայտման ամենաբարենպաստ շրջանն է: Այս ընթացքում մարդկային հոգին նույնպես գտնվում է շատ բարենպաստ և ծաղկուն վիճակում: Թալաբների համար, որոնք հենց այդ ժամանակահատվածում են ուսանում հոգևոր դպրոցներում, նշված տարիները համարվում են նրանց կյանքի ամենահիշարժան տարիներն ու ի հեճուկս նյութական դժվարությունների ու բազմաթիվ խնդիրների, նրանց ամենաքաղցր ու հաճելի հիշողությունները կապված են հենց այդ տարիների հետ: Կյանքի հաջորդ փուլերում նրանք առավել լավ հասարակական դիրք ու նյութական պայմաններ ունեն, սակայն միևնույնն է, անցյալը նրանց կյանքի ամենապանծալի շրջանն է:

Չաջորդ կարևոր խնդիրն այն է, թե իսլամի տեսանկյունից ո՞րն է մարդու մեջ զարգացման արժանի ամենակարևոր պարագան: Մարդն ունի մարմին՝ որոշակի մարմնական կարողություններով օժտված, և հոգի, նույնպես օժտված որոշակի հոգևոր կարողություններով: Չոզեբանական տերմինաբանության տեսանկյունից մարմնավոր և հոգևոր ընդունակությունները բոլորովին տարբեր և առանձին ֆենոմեններ են: Մարդկային հոգին, օրինակ, օժտված է բազմաթիվ և բազմապիսի ունակություններով, որոնց հետագայում առավել հանգամանորեն կանդրադառնանք):

### **Մարմնի զարգացումն ըստ իսլամի**

Այստեղ մեր խնդիրը կայանում է նրանում, թե արդյո՞ք իսլամն ուշադրություն է դարձնում մարմնավոր զարգացմանը: Չնարավոր է, որ ոմանք ասեն՝ ոչ, քանզի մենք գիտենք, որ մարմնի զարգացումն ու կրթումն իսլամի տեսանկյունից պարսավելի է: Ուստի մարմինը երբեք չպետք է կրթվի: Այստեղ մենք ի նկատի ունենք մարմնապաշտությունը (փափկասիրության իմաստով), որն իսլամի կողմից արգելվում է: Սակայն սա տերմինաբանական թյուրիմացություն է, քանզի ըստ իսլամի մարմնակրթություն նշանակում է մարմնի և մարմնական կարողությունների զարգացում, որն իսլամում ոչ թե արգելվում այլ՝ փառաբանվում է:

Օրինակ, արդյոք լա՞վ է իսլամի տեսանկյունից, երբ մարդն այնպիսի

գործողություններ է կատարում, որոնք նպաստում են աչքի տեսողության լավացմանը կամ վատացմանը: Իսլամական ավանդապատումներում մենք բազմաթիվ դեպքերի ենք հանդիպել, երբ մարդուն պատվիրում են չանել որևէ գործողություն, որը կվնասի տեսողությանը: Կամ խորհուրդ է տրվում կատարել համապատասխան գործողություն, որը վնասում է տեսողության լավացմանը: Մենք մի աղոթք ունենք, որը հնչում է. «Ով Տեր Աստված, նոր ենք ծնվել և մեզ ականջ, աչք, ուժ ու հավատ տուր, մեր աչքերին տեսողություն և լույս պարգևիր»: Արդյո՞ք սա փափկասիրություն է: Ոչ, որովհետև առավել նախընտրելի է, երբ մարդը կատարում է այնպիսի գործողություն, որի արդյունքում բարելավվում է տեսողությունն ու ատամների վիճակը: Չի կարելի թողնել, որ ատամները փտեն և թափվեն, միայն այն բանի համար, որ իսլամի տեսակետից սա կարող է մարմնապաշտություն թվալ: Մարգարեի կողմից պատգամված է ատամները խոզանակել, որպեսզի դրանք առողջ մնան և շարքից դուրս չգան: Ատամները հարկավոր է մաքրել այնպես, որ դրանց արանքում կանաչու կամ կերակրի կտորներ չմնան: Կամ ստամոքսն ու կերակրափողը առողջ պահելու և չվնասելու համար ասվում է, որ անհրաժեշտ է որոշ գործողություններ անել կամ՝ չանել:

Մարմնի զարգացումը դա մարմնի առողջ պահելն ու առավել ուժեղ դարձնելն է և իսլամը խրախուսում է այն: Հակառակ դեպքում, ինչո՞ւ է բազմիցս խոսվում շատակերության մասին և ասվում, որ մարդ չպետք է շատ ուտի և որ քչակերությունն ավելի լավ է: Դեռ հնուց ասվել է. «Ստամոքսը բազմաթիվ ցավերի բուն է, իսկ քչակերությունն ամենալավ դեղամիջոցն է»: Եթե այս ամենը փափկասիրություն է, ուրեմն թողեք, թող մարդը շատ ուտի, կործանվի, իսկ այս խոսքերն էլ թող վերանան: Ոչ, երբ ասում ենք մարմին՝ ի նկատի ունենք մարմնի զարգացում ու առողջ պահպանում, որն անկասկած խրախուսելի է և կարելի է ասել որ իսլամի տեսանկյունից անհրաժեշտ: Պատկերացրեք, որ իսլամով պատգամված շատ ու շատ անհրաժեշտ գործողությունների փիլիսոփայությունն ու նպատակը, որոնցից են մաքրությունը, անձնական հիգիենան, դուլը<sup>20</sup> և բազմաթիվ այլ բաներ հենց մարմնի զարգացմանն են ուղղված: Այն ինչը մենք առայժմ անվանում ենք փափկասիրություն՝ ցանկասիրությունն է: Երբ ասում ենք, որ իսլամը դեմ է փափկասիրությանը, ի նկատի ունենք հեշտասիրությունը, զգայապաշտությունն ու ցանկասիրությունը: Անկասկած իսլամը դեմ է այս բաներին: Ոչ երանի փափկասերներին, որոնք հեշտասերներ ու կրքամուլներ են և քայքայում ու թուլացնում են իրենց մամինը: Ի դեպ, ցանկասիրության ու զգայապաշտության մասին: Փափկասուն և անվերջ մարմնական հաճույքներով ու ցանկություններով տարված մարդու կրած առաջին վնասն այն է, որ նա քայքայում և տկար է դարձնում իր մարմինը: Իսկ մարմնի վարժումն ու ամրապնդումը հնարավոր է միայն մարմնական որոշ ցանկությունների զսպման և ժուժկալության դեպքում: Ուրեմն, մենք չպետք է սխալվենք և ցանկասիրության ու փափկասիրության դեմ մղած իսլամի պայքարը չպետք է շփոթենք իսլամի կողմից խրախուսվող մարմնի խնամքի ու զարգացման հետ: Չնայած, երկու դեպքում էլ մենք բառային առումով նկատի ունենք մարդու

20-Լոզանքի հատուկ ձև, որը պարտադիր է բոլոր մահմեդականների համար (թ.):



մարմինը:

Սակայն, եթե որևէ մեկը անվերջ զբաղված է իր մարմնի առողջ մնալու խնդրով, նրա խնամքով ու ասենք չի թողնում, որ ատամները շարքից դուրս գան, ապա նրա թերությունը ոչ թե այդ ամենն է, այլ այն, որ նա անտեսում է մյուս բաները: Նմանատիպ մարդկանց վատ հատկությունը իրենց գործողությունների սահմանափակումն է: Բերենք մի օրինակ. եթե դուք անվերջ խաղացող մի երեխա տեսնեք, որն ամբողջ ժամանակ զբաղված է միայն խաղալով՝ համոզված եմ, որ շատ կբարկանաք: Սակայն ձեր բարկությունը չի նշանակում, որ դուք դեմ եք խաղալուն և եթե նույն երեխան մեկ օր դադարի խաղալ՝ դուք նրան բժշկի կտանեք: Ուրեմն, եթե մարդն իր ողջ ժամանակը վատնի մարմնի զարգացման ու կոփման վրա՝ վատ գործ է կատարել, սակայն ոչ այն իմաստով, որ մարմինն է կոփել, այլ այն իմաստով, որ անտեսել է մյուս գործերը: Այնպես որ, երբ ասում են չպետք է փափկասիրությամբ զբաղվել՝ բոլորովին այլ բան ի նկատի ունեն:

Մարմնի թուլացումն ընդունված է ոչ իսլամական, այլ օրինակ, հնդկական աշխարհում: Նրանք բոլոր տեսանկյուններից դեմ են մարմնի զարգացմանն ու կոփմանը: Նրանք դեմ են և փափկասիրությանը, և ցանկասիրությանը և մարմնի կոփմանը՝ պատճառաբանելով, որ մարմինն ու մարմնավոր ցանկությունները պետք է թույլ վիճակում պահվեն: Իսլամում նման բան գոյություն չունի, սակայն անկասկած իսլամում մարմնի կոփումն ու զարգացումն ինքնանպատակ չեն: Դրանք թուլատրելի են ոչ իբրև նպատակ, այլ որպես միջոց: Քանի որ տկար ու հիվանդ մարմնում առողջ հոգի լինել չի կարող:

Այժմ կխոսենք հոգու մասին:

### Մարդու հոգևոր ընդունակությունները

Ինչպես նշեցինք՝ դաստիարակումը դա ընդունակությունների բացահայտումն է: Գիտական տեսանկյունից նախ պետք է տեսնենք, թե որո՞նք են մարդկային ընդունակությունները և որոնք պետք է մարդը զարգացնի: Ապա պետք է լուսաբանենք, թե իսլամն ինչպիսի աջակցություն է ցուցաբերում այդ ընդունակություններին և ո՞րն է դրանց տրամաբանությունը: Այս խնդրի վերաբերյալ տարբեր ուղղություններ տարբեր կարծիքներ ունեն, սակայն հնարավոր է, որ ներկայիս հոգեբանները, որոնք մանրամասնորեն հետազոտել են մարդկային հոգին, կներկայացնեն ավելի ընդհանրական մի ձևակերպում: «Շիա ուղղություն» տարեգրքի առաջին թողարկման վերջին հոդվածը, որը հրատարակվել է մոտ 12 տարի առաջ, Մոհանդես Բայանիի (որին իհարկե չեմ ճանաչում) կողմից կատարված մի թարգմանություն կա, «Կրոնը՝ մարդկային հոգու չորրորդ կողմ» խորագրով, որի նախաբանը պատկանում է Մոհանդես Բազարգանին: Այս հոդվածում ներկայացված է հոգեբանական վերջին եզրակացություններից մեկը, որն առավելապես հենվում էր Յունգի տեսության վրա, որն ասում էր, որ մարդու հոգին չորս կողմ ունի, այսինքն՝ չորս ունակություն:

Առաջինը դա մտավոր ունակությունն է (գիտելիքի և ճշմարտության

որոնում):

Երկրորդը՝ բարոյական ունակությունն է (բարոյական խիղճը), որը համարվում է մարդկային էության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը, երբ մարդ իր աշխարհի գալու օրից ստեղծվել է բարոյական: Այսինքն, արարվել է այնպիսին, որ սիրի ուրիշներին, ծառայի նրանց ու բարի գործեր կատարի և ուրիշներին վնաս հասցնելու և վատ գործ անելու դեպքում տանջվի: Կարճ ասած, յուրաքանչյուրի մեջ գոյություն ունի խիղճ: Սա հնուց արծարծված թեմա է, որի արմատներն անդրադառնում են այն զգացումներին, որոնք արթնանում են մարդու մեջ և մարդն ուզում է մյուսներին ծառայել: Իսկ ինչպիսի՞ զգացումներ են դրանք: Արդյո՞ք սրանք կապ ունեն մեր ստեղծման հետ, թե՞ ուղղակի հասարակական ներշնչանք են: Եվ եթե դրանք կապված են մեր ստեղծման հետ, ապա՞ արարման կոնկրետ ո՞ր մասին են վերաբերվում: Իսկ գուցե դրանք կապված են մեր ինքնասիրության հետ: Այսինքն՝ երբ մենք խղճում ենք ուրիշներին, իրականում մեզ ենք խղճում, մտածելով, որ չլինի թե մի օր էլ մեզ հետ կատարվի նման մի բան: Եվ երբ մեզանից անկախ ծառայում ենք ուրիշներին, դա անում ենք մտածելով, որ մի օր էլ մենք օգնության կարիք կունենանք: Մենք առանց այլ մտադրության ուղղակի անշահախնդիր մարդ ենք ստեղծվել, որ ուրիշների համար բարիքներ գործենք:

Երրորդը՝ դա հավատքի ունակությունն է: Հիշյալ հոդվածում նշվում է, որ հավատքի ունակությունը մարդու հիմնական ունակություններից է, որն անվանվում է սրբազան կամ երկրպագության զգացում: Սա ոչ այլ ինչ է, քան իրեն հավասարների հանդեպ օբյեկտիվ լինելու և բարոյական չափանիշներով ապրելու զգացում: Երկրպագության զգացումն ավելի մաքուր և գերբնական զգացում է, երբ մարդն ուզում է ծնրադրել ու խոնարհվել Նրա առջև, աղոթել և սրբացնել Նրան:

Չորրորդ ունակությունը դա տաղանդի, արվեստի և գեղեցիկի ընկալման ունակությունն է: Մարդը սիրում է գեղեցկությունը՝ ելնելով իր գեղագիտական զգացումից:

Իհարկե կարելի է մատնանշել նաև մարդու հինգերորդ ունակությունը, ըստ որի մարդն արարվել է ստեղծագործ, նախածեռնող և հնարամիտ: Յուրաքանչյուր մարդ օժտված է ստեղծելու, նախածեռնելու և նորարարության ունակությամբ և դրանից հաճույք է ստանում:

Այժմ պետք է դիտարկել, թե ինչ է պատվիրում իսլամը մեր մեջ ճշմարիտը բացահայտելու զգացողության զարգացման, այսինքն խորհելու և գիտակցելու կարողության առումով: Ինչպես արդեն նշեցինք, իսլամը հոգացել է գիտության և խելքի մասին: Որևէ կասկած չկա, որ կրոնի և հավատքի վերաբերյալ ևս բազմաթիվ պատգամներ կան: Բոլոր երկրպագությունները, աղոթքները, բողոքները, ճգնակեցությունը, սովորությունները, ապաշխարանքներն ու թողությունները հավատի նպատակին են ծառայում:

### Իսլամն ու արվեստը

Ամենի ինչից առավել հետազոտության կարիք ունի այն խնդիրը, թե

որքանով է իսլամը նպաստել ու աջակցել մարդկային հոգու չորրորդ, այն է՝ արվեստի ընկալման ունակությանը: Արդյո՞ք իսլամը խրախուսում է գեղեցկությունն ու վայելչությունը: Ոմանք կարծում են, որ այս առումով իսլամը չոր, կոշտ ու կոպիտ է: Այլ կերպ ասած՝ իսլամը սպանում է տաղանդներին: Իհարկե, այսպես մտածողները հիմնավորվում են այն փաստարկով, որ իսլամը չի խրախուսում երաժշտությունն ու արգելում է կնոջ մարմնի վերարտադրումն արվեստի որոշ ոլորտներում, որոնցից են քանդակագործությունը, նկարչությունը, երգն ու պարը: Սակայն, իրականում, նմանօրինակ դատողությունը ճիշտ չէ: Մենք պետք է մտորենք այն խնդիրների շուրջ, որոնց դեմ պայքարում է իսլամը և հասկանանք արդյո՞ք իսլամը դրանց դեմ պայքարում է, որովհետև դեմ է գեղեցիկին, թե՞ այն բանի համար, որ դրանց արծարծումը հակասում է անհատի և հասարակության շահերին: Այս ամենից գատ, մենք պետք է լուսաբանենք այն խնդիրը, թե արդյո՞ք նշված արգելքներից բացի, արվեստի դեմ այլ պայքար իսլամում գոյություն ունի, թե՞ ոչ:

### Երաժշտություն

Երգի ու երաժշտության խնդիրը նույնպես կարևոր խնդիր է: Իհարկե երգի սահմաններն անորոշ են: Երգ (պարսկ. դանա) հասկացության մասին գոյություն ունի մի ասացվածք, ըստ որի իսլամական իրավագետներն ու ռադիկալները հակիրճ և համառոտ տեքստերի համար գործածում էին «դանա» բառը: Օրինակ երբ ցանկանում էին մատնանշել կոնկրետ տեքստի բացակայությունը, հակիրճությունը կամ երկարությունը՝ օգտագործում էին հենց այդ բառը: Իսկ երգն ունի իր իրական կոչումը և այն երգերը, որոնք կոչված են ուղեղի թմրեցմանը, այսինքն, այնպես են զրգռում մարդու ցանկասիրությունը, որ միտքը ժամանակավորապես դադարում է սթափ գործել, (գինու կամ թղթախաղի նման հատկություն է) համարվում են «դանա»: «Ուղեղի թմրեցում» հասկացությունը պատկանում է իսլամական իրավագետ Շեյխ Օնսարիին: Այստեղ կարևորն այն է, որ իսլամը կամենում է պաշտպանել մարդու գիտակցությունն ու խելքը: Փորձը նույնպես ցույց է տվել, որ այդպես է:

Վերջերս թերթում մի հոդված կարդացի ամուսինների մասին, որոնք երկար վիճաբանություններից հետո որոշել էին ամուսնալուծվել: Ամուսնալուծության հայտը ներկայացրել էր ամուսինը, որը պատճառաբանել էր, որ իր կինը ժամանակին խոսք էր տվել օտար տղամարդկանց ներկայությամբ չպարել: Սակայն ինչ որ հարսանիքի ժամանակ տարվել է երաժշտությամբ ու՝ պարել: Կինը հաստատել է նրա ասածն ու ավելացրել, որ ինքն անմեղ է: Ուղղակի, երբ երաժշտությունը հնչել է, ինքը հայտնվել է դրա ազդեցության տակ և չկարողանալով իրեն տիրապետել՝ պարել է:

### Առաջնորդն ու երգիչ ծառան

Ինչ որ մեկը «Մորավեջ – օլ- գահաբ» - ում գրել է, որ Արդյունալաքի կամ

Բանի օմայիդ կառավարչի օրոք (երբ երգն ու երաժշտությունը բավական տարածված էին) վերջինիս տեղեկացրել են, որ ինչ որ մի երգիչ կա, մի գեղեցիկ սպասուհի ունի, որը նույնպես երգում է և Մեդինայի բոլոր երիտասարդների մեջ անառակություն է սերմանում: Եթե այդ հարցը չլուծվի, այդ կինն ամբողջ քաղաքը անառակ կդարձնի: Կառավարիչը հրամայել է, որ նրանց շղթայեն և բերեն իր մոտ ընթրիքի: Երբ կառավարչի հետ նստած էին, այդ մարդն ասաց. «Կարծես նրա երգածը «ղանա» չէ: Կցանկանա՞ք ինքներդ լսել»: Կառավարիչը հրամայում է, որ սպասուհին երգի և նա սկսում է երգել: Մի փոքր անց կառավարիչը սկսում է գլուխը շարժել ու տարված՝ կամաց-կամաց սկսում է չորեքթաթ քայլել ու երգել. «Արի, սիրելիս ու հեծնիր քո ձին»:

Իսկապես, երաժշտությունը հզոր ու գերբնական ուժ ունի, հատկապես ժուժկալությունն ու ողջամտությունը խաթարելու հարցում:

Քանդակագործության առումով իսլամի արգելքները կռապաշտությունից խուսափելու հետևանք են: Այս ասպարեզում իսլամը հաջողված է, որովհետև եթե Մարգարեի կամ որևէ այլ արձաններ քանդակվեին, ապա՝ այսօր կռապաշտությունն անչափ տարածված կլիներ: Կնոջ, պարի կամ արվեստի վերաբերող այլ առումներով պարզ է, որ իսլամի ջանքերը ողջամտության ու բարոյականության նպատակին են ծառայում: Ուստի, ելնելով այս ամենից, իսլամի պայքարը չի կարելի տաղանդների դեմ պայքար համարել: Իսլամը գեղեցկության ու վայելչության դեմ ոչինչ չունի և դրա դեմ ոչ միայն չի պայքարում, այլ որոշ դեպքերում խրախուսում է այն: «ՔաՖի» գրքում «Օլգա վալ թաջամոլ» խորագրով մի գլուխ կա, իսկ «թաջամոլ» բառն օգտագործվում է ինքն իրեն գեղեցկացնելու իմաստով: Ըստ ավանդապատման Աստված գեղեցիկ է և սիրում է գեղեցիկներին Ֆորուե քաՖի 6/43: Իսկ ամենավեհ գեղեցկությունը խոսքի գեղեցկությունն է, որին իսլամում մեծ տեղ է տրվում: Իսլամի հրաշքը, կամ գուցե հրաշքներից մեկը՝ Դուրանի խոսքի գեղեցկությունն է:

Անկասկած, իսլամը մեծ ուշադրություն է դարձնում նաև այլ խնդիրների: Միակ կասկածահարույց խնդիրը գեղեցիկի ու արվեստի ընկալման ու խրախուսման խնդիրն էր, որին առավել հանգամանորեն կանդրադառնանք մեր հետագա ելույթներում:





**ՄԱՍ IV**  
*Սովորության խնդիրը*

## Հանուն Ողորմած և Բարեգուշ Եպրծո

Մեր նախորդ խնդիրն այն մասին էր, որ դաստիարակությունը դա մարդու ընդունակությունների բացահայտումն ու զարգացումն է, որն իր մեջ ընդգրկում է նաև մարմնի զարգացում: Եվ ինչպես նշեցինք, դաստիարակելը դա կառուցել չէ, երբ օրինակ՝ մենք ինչ որ քանակությամբ շինանյութ և պարագաներ ենք հայթայթում, ապա՝ ինչ որ նյութեր իրար խառնելով ու այդ պարագաներին որոշակի դասավորվածություն տալով, տուն կառուցում: Դաստիարակել՝ նշանակում է կենդանի օրգանիզմում առկա ընդունակությունների զարգացման համար որոշակի նախապայմաններ ստեղծել այնպես, ինչպես օրինակ, աճեցնում են ծառերն ու ծաղիկները: Իհարկե, մարդու զարգացման խնդիրն առավել բարդ ու խորն է: Օրինակ, ծառերի կամ ծաղիկների աճեցման ու զարգացման ընթացքում գուցե հնարավոր չլինի ինչ որ ունակություն չեզոքացնել կամ մեկ ուրիշն՝ առավել զարգացնել: Սակայն մարդու պարագայում հնարավոր է, որ նրա ունակություններից մեկն առավել զարգանա և խախտի մարդու ինտելեկտուալ հնարավորությունների հավասարակշռությունը: Ուստի անհրաժեշտ է, որ մարդու զարգացման ընթացքում նրա բոլոր բնական ընդունակությունների մեջ հավասարակշռություն պահպանվի: Առայժմ այս հարցը չենք քննում:

Ինչպես նշեցինք, դաստիարակությունն արդյունաբերում և կառուցում չէ: Գուցե ինչ որ մեկն ասի, որ զարգացումը դաստիարակության մի մասն է, իսկ նրա մյուս մասը՝ կառուցումն է: Կամ պնդի, որ գոյություն ունի եր-

կու տեսություն՝ ավանդական կրոնագետների և նոր՝ արևմտյան գիտնականների տեսությունները:

### Դաստիարակությունն ավանդական կրոնագետների տեսանկյունից

Դաստիարակության առումով ավանդական կրոնագետներն ու նախկին գիտնականները համոզված էին, որ այդ պրոցեսի ժամանակ մարդու մեջ պետք է սերմանել նաև բարոյականության տարրեր: Նրանց կարծիքով բարոյագիտության ուսուցիչները մարդու մեջ որպես սովորույթ պետք է ձևավորեն որոշ առաքինություններ: Ավանդական կրոնագետների տեսանկյունից դաստիարակված կարող էր համարվել այն մարդը, որն իր մեջ որպես սովորույթ ներառում է բոլոր առաքինությունները: Սակայն, քանի դեռ որևէ առաքինություն չի վերածվել սովորության, դա միայն վիճակ է, այլ ոչ թե առաքինություն և ենթակա է ոչնչացման: Դա պետք է վերածվի սովորության, որպեսզի այն վերացները դժվար լինի: Արդարության վերաբերյալ նրանք ասում էին, որ արդարությունը ժուժկալության և բարեպաշտության սովորությունն է, այսինքն՝ ժուժկալությունն ու բարեպաշտությունը մարդու համար պետք է սովորություն դառնան: Մարդն այդ ժամանակ օժտվում է առաքինություններով, որից հետո աշխարհում ոչինչ չի կարող խաթարել նրա բարոյականությունը<sup>22</sup>: Այսինքն, նա պետք է այնքան ճշմարտախոս լինի, որ երազում անգամ չկարողանա ստել: Դեռ այս պատճառով էլ բազմիցս կրկնվում է, որ մարդու դաստիարակությունը պետք է իրականացվի մանուկ հասակում: Այս կապակցությամբ ասվում է. «Դաստիարակությունը սովորության շքեղ արվեստն է»: Մարդու բնավորությունը սկզբնական շրջանում նման է փափուկ կավային զանգվածի, որը սկզբում ջրով հունցելիս թույլ է, սակայն հետագայում ամրանում է: Քանի դեռ այն փափուկ է, ինչպիսի կաղապարի մեջ էլ լցնենք՝ նույն ձևը կստանա: Այս զանգվածին մենք կարող ենք նույնիսկ մարդու, խոզի կամ արջի կերպարանք տալ: Ասում են, որ մանուկ հասակում երեխայի հոգին ճկուն է և նման է վերը բերված օրինակին: Որքան մարդ մեծանում է՝ այնքան նվազում է նրա փոխվելու հավանականությունը:

Իհարկե այսօրվա գիտնականներն ու ուսուցիչները նույնպես կարևորում են մանուկ հասակում դաստիարակվելու խնդիրը: Դաստիարակվելու և հղկվելու առումով մանկապարտեզի երեխան տարբերվում է դպրոցականից, դպրոցականը՝ պատանուց, պատանին՝ երիտասարդից: Դիտում տարեկան հասակում մարդու անհատականությունը հաստատվում է: Իհարկե չպետք է չափազանցությունների մեջ ընկնել: Մարդ արարածը փոփոխության, զղջման և ապաշխարության ենթակա էակ է և հնարավոր է, որ հարյուր տարեկան հասակում էլ փոխվի: Սակայն կասկածից վեր է, որ հոգեվիճակը կամաց- կամաց վերածվում է սովորության, որի վերափոխումն անչափ դժվար է:

22-Այս առումով լուսահոգի Շեյխ Աբդ -օլ- քյարիմ Գասերին ասում էր. «Եթե անգամ երազում մերկ կին տեսնեմ՝ աչքերս կփակեմ»:

## Մուլավիի ավանդապատումը

Մուլավին մի օրինակ է բերել այն մասին, որ մարդու հասակ առնելու հետ մեկտեղ ավելի արմատական ու կայուն են դառնում նրա բնորոշ հատկանիշները: Ասում են, թե մի մարդ ճանապարհի վրա մի փուշ տնկեց: Քանի որ փշի թուփը բոլորին խանգարում էր մարդը խոստացավ, որ հաջորդ տարի փուշն արմատախիլ կանի: Հաջորդ տարի այն արմատախիլ անելու գործը կրկին հետաձգեց մյուս տարվան և այսպես շարունակ, քանի տարի: Փուշը տարեց - տարի ավելի խորը արմատակալում ու հզորանում էր, իսկ մարդը՝ ծերանում և թուլանում: Այսինքն փշի հզորացմանը հակառակ՝ մարդը տկարանում էր: Մարդու հոգեվիճակը փշարմատի ու այն արմատախիլ անողի նման է: Մարդու հատկանիշները օրեցօր ավելի խորանում են՝ թուլացնելով մարդու կամքը: Յուրաքանչյուր երիտասարդ իրեն բարեփոխելու հարցում ավելի հզոր է, քան որևէ ծեր մարդ:

Սաադին, թաց ու չոր փայտի օրինակը բերելով՝ նշում է, որ թաց փայտը հեշտությամբ կարելի է ճկել ցանկացած ձևով, սակայն չոր փայտին միայն կրակը կօգնի: Այսինքն՝ Սաադին համոզված էր, որ թաց փայտը ենթական է փոփոխման, և որքան այն չորանում է՝ այնքան ավելի դժվար է ճկվում: Եվ երբ այն ամբողջապես չորանում և վերջնական տեսքի է գալիս՝ այլևս չի փոխվում:

Մուլավին ասել է. «... եվ նա շատ է հիմնվում առաջին սիրո վրա, քանզի երբ առաջին սերը մտնում է մարդու սիրտը, ապա մինչև վերջ մնում է՝ առաջին զայրույթի նման<sup>23</sup>»: Ասում են Մուլավիեն ասել է. «Ես աշխատում եմ երեխաների մեջ ի սկզբանե երևե Աբիթալեթի որդի Ալիի զայրույթը զարգացնել»: Մենք ինքներս էլ մեր ասույթներում ասում ենք, որ կաթի հետ մտածող հոգու հետ դուրս կգա: Այն ինչ մարդու մեջ սերմանվում է կաթի հետ ի սկզբանե, միայն հոգու հետ է դուրս գալիս:

Ավանդապահ գիտնականները համոզված էին, որ բարեպաշտությունն ու հնազանդությունը մարդու մեջ պետք է սերմանվեն ծննդյան առաջին իսկ օրվանից՝ որպես սովորույթ: Սկզբնական շրջանում մարդը նման է մի ամորՖ նյութի կամ զանգվածի, որը կարող է ամեն կերպ ձևափոխվել ու փոփոխվել: Մարդը պետք է կրթվի և դաստիարակվի դեռևս վաղ մանկությունից և անչափ կարևոր է, որ ի սկզբանե նրա մեջ ձևավորվեն մարդկային վեհ հատկանիշներ՝ հաճախ սովորության տեսքով: Մարդը ձևավորվում և դաստիարակվում է տվյալ հասարակությունում ընդունված սովորույթների և չափանիշների հիման վրա: Յուրաքանչյուր քաղաքակրթություն իր ժողովրդին պատրաստում է այնպիսին, ինչպիսին որ ցանկանում է նրան տեսնել: Ժողովուրդը ձևավորվում և դաստիարակվում է իշխող համակարգի ցանկության և սովորույթների համաձայն:

## Արևմտյան գիտնականների տեսանկյունը

Արևմտյան գիտնականների շրջանում դաստիարակության վերաբեր-

23-Ցավոք տեքստի սկզբնական մասը ծայնագրության մեջ չի պահպանվել:



յալ նոր տեսակետ է ի հայտ եկել: Նրանց կարծիքով դաստիարակությունը զուտ զարգացում է և քանի որ նրանց շեշտադրումը բարոյական դաստիարակության վրա է և նրանք աշխատում են գիտակցության ու ցանկության վրա, այլ ոչ թե՝ կրոնական զգացմունքների ու գեղեցիկի ընկալման, ամեն կերպ պնդում են, որ դաստիարակությունը միայն և միայն բարոյական ցանկությունների և գիտական կարողությունների զարգացում է: Նրանք համոզված են, որ մարդը երբեք չպետք է սովորի և ընտելանա որևէ բանի, թե լավ, թե վատ, քանի որ սովորությունը վատ բան է: Երբ մարդու մոտ որևէ բան սովորություն է դառնում, այն սկսում է իշխել մարդու վրա, մարդը սկսում է ենթարկվել դրան ու չի կարողանում դրանից հրաժարվել: Այս դեպքում մարդը սկսում է գործել գիտակցությունից ու ցանկությունից դուրս, առանց մտածելու արված գործողությունը լավ է, թե՛ վատ: Նա այդ գործողությունը կատարում է սովորությունից դրդված և եթե չանի՝ ապա կնյարդայնանա: Այս մասին գրված են տարբեր մարգարեություններում, ավանդապատումներում և վկայություններում, իսկ Մեծ Մարգարեն այս մասին ասել է. «Մարդու ծնրադրմանն ու խոնարհմանն ուշադրություն մի դարձրեք, քանզի նրա մոտ արդեն սովորություն է դարձել և նա սարսափահար է լինում այդ սովորությանը վերջ տալու մտքից»<sup>24</sup>:

Այս ավանդապատումն ինքնին վկայում է այն մասին, որ սովորությոնը վերացնում է յուրաքանչյուր գործի բարոյական արժեքն ու երբեք չի կարող մարդկության ու հավատքի խորհրդանիշ հանդիսանալ: Նրանց կարծիքով ամեն բան, անգամ ամենամարդկայինն ու ամենաառաքինին՝ վերածվելով սովորության, անմիջապես կորցնում է իր իրական արժեքը, քանի որ սկսում է իշխել մարդուն: Մարդը սկսում է գործել սովորության համաձայն, ինքնաբերաբար և առանց գիտակցության մասնակցության: Այս ուղղության հիմնական կրողները Կանտոն ու Ռուսոն են: Վերջինս իր «Էմիլ» գրքում գրում է. «Էմիլին պետք է սովորեցնեն, որ ոչ մի բանի չընտելանա»: Այս տեսությունը հակասում է ավանդական գիտնականների տեսությանը, որոնք դաստիարակության հիմք էին համարում սովորությոնը: Իսկ երբ հոգին կրթված չէ, դաստիարակությունը ոչինչ է: Դաստիարակությունը հոգու և կամքի զարգացում է, հնարավորություն, որպեսզի յուրաքանչյուր հարցում խելքի գործոնը լինի առաջնային և գործի ազատ, իսկ բարոյական կամքը կարողանա ազատ որոշումներ կայացնել՝ պայքարելով, հատկապես, սովորությոնների ու կախվածության դեմ: Այսպիսի մարդիկ են, որ հաճախ խրախուսում են գործեր, որոնք մեր կողմից վատ է գնահատվում, իսկ որոշ բաներ նրանց մոտ համարվում է սովորություն, որի դեմ պետք է պայքարել:

Այստեղ առաջ է քաշվում դաստիարակության մեջ բարոյական ազատության խնդիրը: Հիշյալ գիտնականները բարոյականության մեջ ազատության կողմնակիցներ են և ազատությունը համարում են մարդկային հոգու գոհար: Նրանք հավատացած են, որ մարդը ոչ մի դեպքում չպետք է զրկվի իր ազատությունից, նա պետք է լինի ազատ՝ գործելով իր բարոյական կամքի ու խելքի թելադրանքով: Ոչ մի ուժ, անգամ սովորության

24- Բահար-օլ անվար 9/71:

ուժը, չպետք է իշխի նրան: Սոտավորապես կարելի է ասել, որ «եմիլ» ստեղծագործությունում Ռուսոյի մտքերը պատվում են սովորույթի դեմ պայքարի շուրջ: Դաստիարակության ավանդական ու հին մեթոդների կապակցությամբ նա ասել է. «Երեխան ծնվում և աշխարհից հեռանում է՝ գերի»: Նա ի նկատի ունի այն, որ երեխային ծնվելուց անմիջապես հետո փաթաթում են բարուրաշորով, իսկ մեռնելուց՝ պատանքով: Փաստորեն մարդուն ծննդից մինչև մահ՝ դարձնում են սովորույթների գերի:

### Այս տեսության քննադատությունը

Սակայն, արդյո՞ք այս տեսությունը ճիշտ է: Մի՞թե անգամ լավ գործերը չպետք է սովորություն դառնան: Իմ կարծիքով այս տեսությունը հարյուր տոկոսով ճիշտ չէ: Նրանք համոզված են, որ սովորությունը մարդուն վերածում է մեքենայի, սպանում մարդու մեջ նախածեռնող ոգին և իշխում նրա կամքին ու ցանկություններին: Կանտն ասել է. «Որքան մարդկության մոտ շատանում են սովորույթները, այնքան նվազում են նրա ազատությունն ու անկախությունը»:

Իհարկե, այստեղ ի նկատի ունենք գիտակցության ազատությունը: Ըստ նրանց, քանի որ սովորությունը թուլացնում է մարդու կամքն այն աստիճան, որ մարդն ի վիճակի չի լինում պայքարել իր հոգեկան ու մարմնավոր երևույթների դեմ, ուրեմն սովորությունը վատ բան է: Հակառակ այն տեսության, որ դաստիարակությունը սովորույթների ձևավորման տեխնիկան է, նրանք ասում են. «Դաստիարակությունը սովորույթների վերացման տեխնիկա է»: Իհարկե, այն տեսությունը, որ մարդը չպետք է դառնա իր սովորույթների գերին, պետք է կարողանա ծերբազատվել դրանցից ու անկախ գիտակցության թելադրանքից ընդամենը կատարի մարմնի կամքը, ընդհանուր առմամբ ճիշտ է: Սակայն սա չի կարող հիմք հանդիսանալ այն բանի համար, որ սովորույթը ընդհանրապես համարվի նեգատիվ երևույթ: Սովորույթը լինում է երկու տեսակ՝ գործնական և ռեակցիոն: Գործնական սովորույթն այն է, երբ մարդը չի հայտնվում որևէ արտաքին գործոնի ազդեցության ներքո, այլ աշխատանքը կատարում է լավ՝ այն պարբերաբար կրկնելու և կատարելագործելու միջոցով: Արվեստներն ու արհեստները սովորույթ են: Մեր գրելու կարողությունն էլ է սովորույթ, և ոչ թե՛ գիտելիք: Եթե տողերով չգրեինք՝ ապա չէինք կարողանա գրել: Այլ կերպ ասած՝ մենք չենք կարողանում միանգամից գրել և սովորում ենք պարբերաբար, շարունակական վարժանքների ու տևական կրկնության շնորհիվ: Արդյունքում՝ մենք սովորում ենք գրել: Մեր հոգեկան չափանիշներից շատերը գործնական սովորույթներ են: Օրինակ՝ համարձակությունը, որը սրտի տոկունություն է: Իհարկե հնարավոր է, որ մարդ դրանց մի մասն ունենա ի ծնե, բնականից: Սակայն երբ մարդը լցվում է գերբնական ուժով ու համարձակությամբ, ապա՝ դա իրականանում է սովորության արդյունքում: Այսպիսի հատկանիշներից են մեծահոգությունը, առատածեռնությունն ու բարեպաշտությունը:

Սակայն ինչո՞ւ են վերահիշյալ սովորույթներում բացակայում Կանտի նշած թերությունները:

Նախ այն պատճառով, որ սրանք այն սովորույթները չեն, որոնց հետ մարդը կապվում է ուղղակիորեն: Սրանք այնպիսի սովորույթներ են, որոնց բացակայության ժամանակ կորչում է մարդու իր իսկ կամքին ու ցանկություններին դիմակայելու կարողությունն ու մարդը դառնում է տկար: Սակայն դրանց յուրացումից հետո մարդն օժտվում է պայքարելու կարողությամբ: Սա շատ նման է կրոնական իրավագետների կողմից հաստատված արդարության ու բարեպաշտության չափանիշներին, որոնք այնպիսին են, որ մարդը երբեք դրանց գերին չի դառնում: Ռուսոյի և Կանտի տեսանկյունից բարոյական կամքն այն կամքն է, որը ենթարկվում է միայն գիտակցության թելադրանքին և նշված հատկություններից հրաժարումը նրան բոլորովին չի անհանգստացնում: Այն ոչ այլ ինչ է, քան՝ ուժ:

Իսկ բարոյագետները, որոնք անչափ կարևորում էին սովորույթը ասում էին. «Սովորույթը բնականոն կերպով հեշտացնում է մարդու համար դժվար գործողություն իրականացնելը»: Երբեմն մարդ ցանկանում է մի այնպիսի բան անել, որը հակասում է իր բնույթին: Այս դեպքում, բնականաբար, «դժվարը» մարդու համար վերածվում է սովորույթի և դառնում չափանիշ: Դժվարությունը վերանում է՝ ինքնին վերածվելով ընտելացման: Պատկերացրեք մեկին, որը սովորությունունի առավոտյան վաղ արթնանալ: Բնական է, որ սկզբնական շրջանում նրա համար վաղ առավոտյան անկողինը լքելը դժվար է, սակայն նա ջանում է այդ գործողությունն ամեն կերպ հեշտացնել: Մի որոշ ժամանակ անց նա ամբողջապես հաշտվում է առավոտյան վաղ արթնանալու մտքի հետ և դա նրա համար դառնում է սովորույթ: Այսինքն, նախկինում նա իր բնական ցանկության գերին էր, սակայն սովորության արդյունքում ձեռք բերեց բնության թելադրանքին դիմակայող ուժ: Այդ երկու ներազդեցություններից ընտրություն կատարեց սեփական ցանկությամբ, իր ազատ կամքով՝ նախապատվություն տալով օրինակ, արթնանալուն: Սա չի կարելի վատ երևույթ համարել: Չի կարելի ասել, որ երբ մարդը՝ գտնվելով բնական պահանջի ճնշման տակ, այսուհանդերձ գիտակցաբար սկսում է վաղ արթնանալ և դա դարձնում է սովորություն, ապա՝ դա վատ է և նա իրր հակադրվում է բնական պահանջին:

Կանտն ու Ռուսոն կրոնական առումով չեն շոշափում այն խնդիրը, ըստ որի մարդուն պետք է իշխի բարոյական կամքը, սակայն մենք, որ կրոնական առումով այն շոշափում ենք, պետք է ասենք, որ մարդու բարոյական կամքը պետք է ենթարկվի նրա գիտակցությանն ու հավատքին: Սակայն, ինքներս մեր մեջ պետք է ձևավորենք նաև գիտակցության և հավատքի առաջնայնություն: Իսկ արդյո՞ք դա անելու համար մենք պետք է ետին շարք մղենք մեր մեջ առկա մյուս բնական և ոչ բնական ուժերը, հատկապես սովորությունը:

Մարդն ունի գիտակցության ու կամքի ուժի զարգացման երկու ճանապարհ: Ըստ որոշ կարծիքների մենք պետք է դյուրաթեք ու տկար դարձնենք մեր մարմինն ու բնույթը, որպեսզի մեր մեջ գիտակցությունն ավելի հզորանա: Սա նման է այն բանին, երբ որևէ տղամարդ ցանկանում է չեմպիոն դառնալ և ստիպում է մրցակցին թույլ ու տկար մնալ, որպեսզի կա-

րողանա հաղթել նրան: Տկարին հաղթելը մեծ գործ է: Առավել կարևոր և պատվաբեր է ուժեղին հաղթելը:

Իսլամի տարածման ժամանակահատվածում Մարգարեի մոտ էին գալիս բազմաթիվ հարուստներ և խնդրում, որ իրենց ամուլ դարձնեն: Սակայն Մարգարեն նրանց ասում էր հետևյալը. «Մեր կրոնը չի խրախուսում այդ գործը»: Երբ որևէ մեկն իր հավատի հզորացման համար իրեն անդամահատել կամ ամուլ է դարձրել, որպեսզի զերծ մնա մարմնական գայթակղություններից, մեծ բան չի արել: Առավել գնահատելի է երբ մարդն ունի ընդգծված սեռական հակումներ, սակայն նրա մեջ գիտակցության ու հավատի ուժն այնքան հզոր է, որ կարողանում է չափավորել մարմնի ցանկությունները: Սա իհարկե խառնվածքի ու բնավորության հարց է:

Նույն խնդիրն առկա է նաև գիտակցության և բնության հարաբերակցության մեջ: Իսկ ի՞նչ են ասում այս մասին Կանտն ու Ռուսոն: Արդյո՞ք նրանք ասում են, որ գիտակցության և կամքի ուժի զարգացման համար մենք պետք է տկարացնենք մեր բնույթը: Ոչ, նրանք նման բան չեն ասում: Ուղղակի նշում են, որ պետք է հզորացնել կամքի ուժի նժարը, որպեսզի այն գերակշռի բնավորության ու մարմնային ուժերի նժարին: Մենք պնդում ենք, որ այս խնդիրը վերաբերում է սովորույթին, քանզի սովորույթը երկրորդ բնավորություն է: Պետք է տեսնել, թե սովորության ուժը մեզ համար ինչ որ տեղ օգտակար է, թե՞ ոչ: Պարզվում է, որ բավական օգտակար է, քանզի մեր գործերից շատերը հեշտացնում է: Սակայն, ամեն դեպքում, մենք պետք է այնքան հզորացնենք մեր գիտակցությունն ու կամքը, կամ գիտակցությունն ու հավատը, որպեսզի այն բնույթի ու խառնվածքի գերին չդառնալով հանդերձ, հանկարծ չհայտնվի սովորության գերիշխանության ներքո: Իսկապես, երբ ինչ որ բան մարդու մոտ սովորություն է դառնում, կամաց- կամաց վերածվում է բնավորության և մարդն ակամայից ու մեքենայաբար սկսում է այն կրկնել, հաճախ ընդհանրապես հեռանալով գիտակցությունից և հավատից: Այսինքն, եթե գիտակցությունն ու հավատը թելադրում են հակառակն անել՝ նա չի ենթարկվում:

Ասում են, որ երջանկահիշատակ Շեյխ Աբդ -օլ- քյարիմ Չայերին խոր ծերության պատճառով իրավունք ուներ Ռամազանի ընթացքում պաս չպահել: Սակայն նա շարունակում էր դա անել: Մեկ անգամ նրան ասացին, «Դուք ինքներդ շեյխ եք, իսկ շեյխերը կարող են պաս չպահել և փոխարենը՝ ապաշխարել»: Նա պատասխանեց. «Ժողովրդական երակս թույլ չի տալիս»:

Բազմաթիվ մարդիկ նույն վիճակում են: Օրինակ, շատերն ասում են, որ եթե անգամ մեռնեն, միևնույնն է պաս կպահեն (կարծելով, որ դա հավատի նշան է): Այսինքն, եթե Աստված ու Մարգարեն էլ պատվիրեն, միևնույնն է, նրանք պասից չեն հրաժարվի: Սա արդեն սովորություն է: Մարդ պետք է պաս պահելուն ընտելանա այնքան, որքան թույլ է տալիս իր հավատը: Բայց եթե հավատը ասում է, որ պասը պետք է դադարեցնել, ապա՝ պետք է ենթարկվել: Հաճախ է պատահում, երբ որևէ երևույթ մարդու մոտ սովորություն է դառնում այնպես, որ նա այլևս չի ընդունում հավատի հրամանը: Սակայն, այնուամենայնիվ, դա չի կարող առիթ հանդի-



սանալ, որպեսզի մենք չընդունենք սովորույթը՝ միայն ու միայն այն մերժելու սկզբունքից ելնելով, կամ համարելով, որ արդարության կամ առավոտյան վաղ արթնանալու սովորություններն այլևս անհրաժեշտ չեն հենց միայն այն պատճառով, որ սովորույթ են և կարող են չենթարկվել գիտակցության և հավատի հրամաններին: Այդպես մտածելը սխալ է:

Մի մարդ Իմամ Սադեդի հետ այգում էր: Նա մի խնձոր ցույց տվեց Իմամին և ասաց. «Եթե դուք հիմա ասեք, որ այս խնձորի մի կեսը հալալ է, իսկ մյուսը՝ հարամ, ես կհավատամ»: Սա հենց այն օրինակն է, որը ցույց է տալիս, որ մարդը չպետք է որևէ բանի այնքան սովորի, որ գիտակցությունից ու հավատքից զերծ մնա:

Ուրեմն պարզ դարձավ, որ արևմտյան գիտնականների խոսքը ճիշտ է այսքանով: Իսկ ավանդապատումն ասում է. «Ուշադրություն մի դարձրեք մարդու ծնրադրման կամ խոնարհվելու եղանակներին, քանզի դա սովորություն է և նա սարսափում է դրանից հրաժարվելու գաղափարից»: Այստեղ կարևորն այն է, որ երբեմն սովորույթը լինում է այնպիսին, որ արժեզրկում է անչափ կարևոր մի այլ բան:

### **Կախվածությունն առաջանում է հակազդեցության սովորությունից**

Ինչպես նշեցինք կապվածության և կախվածության առաջացման պատճառ է հանդիսանում հակազդեցության սովորությունը և մարդը դառնում է դրա գերին: Հակազդելու սովորությունն այնպիսի մի սովորություն է, որի արդյունքում մարդը որևէ գործողություն կատարում է արտաքին գործոնների ճնշման ներքո: Մարմնական (գործողության) բնազդների կամ սովորությունների առումով կախվածություն չի առաջանում: Այսպիսի սովորություններից են գրելը կամ քայլելը, որն ինքնին մի արվեստ է, սակայն այնպիսի արվեստ, որ մանկուց, շատ վաղ սովորելու պատճառով չի արտահայտվում:

Մեկին, արծակի և չափածոյի մասին պատմելիս, սկզբում ներկայացրեցել են չափածոն, իսկ հետո նշել, որ խոսակցականը դա՛ արծակն է: Այդ մեկը խանդավառվել է. «Տես է, այսքան ժամանակ արծակ եմ ստեղծագործել ու չեմ իմացել»:

Այս ամենից պարզ է դառնում, որ գործողության սովորությունն արտաքին գործոնների հետ որևէ կապ չունի, իսկ հակազդելու սովորության ընթացքում մարդը հայտնվում է արտաքին գործոնների ազդեցության տակ: Օրինակ, մարդու մոտ սովորություն է դառնում ծխելը և մարդն անընդհատ ուզում է ծխախոտի ծուխ ընդունել: Ընդհանրապես, հակազդելու սովորությունը մարդու մոտ կախվածություն է առաջացնում՝ նրան գերի դարձնելով: Հակազդելու սովորություններ են նախկինում նշված փափկասիրություններն ու մարմնապաշտության երևույթները: Օրինակ, երբ մարդը սովորում է քնել կարապի բմբուլից պատրաստված ներքնակի վրա, կամ միայն յուրահատուկ կերակուրներ է ուտում: Այս ամենը վերածվում է կախվածության, և հակառակ դեպքում նա չի կարողանում ուտել այլ կերակուր՝ չնայած, որ վերջինս նույնպես համեղ է: Յուրաքանչյուր նմանատիպ հակազդեցիկ սովորություն վատ է, սակայն գործողու-

թյան սովորությունը չի կարելի համարել վատ միայն այն պատճառով, որ դա սովորություն է: Հնարավոր է, որ այն այլ պատճառով վատ լինի, սակայն ոչ սովորություն լինելու:

Հաջորդ խնդիրը, որի մասին պետք է խոսենք հետագայում, եվրոպացիների կողմից կատարված հարցադրման խնդիրն է՝ բարոյական չափանիշների մասին: Այսինքն՝ մարդու մեջ ի՞նչը պետք է համարվի բնական, ինչը՝ բարոյական: Հիմնական հարցն այն է, թե արդյո՞ք հնարավոր է միանշանակ ասել, թե ինչ որ բան լավ է, իսկ ինչ որ բան՝ վատ: Արդյո՞ք կարելի է ասել, որ մարդու յուրաքանչյուր կամավոր գործողություն բարոյական է: Արդյո՞ք կարելի է բարոյական վարքի չափանիշ համարել կամքը, իսկ բնական գործողությանը՝ նրա ակամա լինելը: Օրինակ՝ սրտի աշխատանքը կամ շնչառությունը, որոնք բնական գործողություններ են՝ անպայման բարոյական են: Իսկ խոսելը կամ քայլելը, որ ըստ ցանկության և կամովի են՝ անբարոյական: Ոչ, սխալ է: Ըստ ցանկության կամ կամովի լինելը բարոյականության չափանիշ չէ և մենք չենք կարող որևէ գործ այս չափանիշի համաձայն լավ կամ վատ համարել:

Հնարավոր է, ինչ որ մեկը այլոց նկատմամբ վերաբերմունքը համարի բարոյականության չափանիշ: Այսինքն՝ ուրիշներին օգնելը կամ վնասելը, ոկամ ուրիշների հանդեպ դրական կամ բացասական վերաբերմունքը բարոյական չափանիշներ են: Սա նույնպես ճիշտ չէ: Նախ՝ մարդու գործողություններից շատերը բարոյական են առանց որևէ մեկի հետ կապ ունենալու: Երկրորդը՝ հնարավոր է, որ որևէ գործողություն ուրիշների հետ կապված լինելով հանդերձ բարոյական չլինի՝ ունենալով սուբյեկտիվ ծագում: Ինչպես, օրինակ՝ մայրական զգացմունքները. մայրը ծառայում է զավակին իր իսկ մայրական բնազդներից ելնելով: Սոր գործողությունները չի կարելի բարոյական համարել, քանզի «որդու հանդեպ հոգածությունը» յուրաքանչյուր մոր բնական պարտավորությունն է: Մայրն իր զգացմունքների գերին է և չի կարող չհոգալ կամ չծառայել: Այդ չանելու դեպքում նա կտանջվի: Հենց այդ մայրը նույն զգացմունքները չի տածում մեկ այլ երեխայի, ասենք՝ իր ամուսնու մյուս կնոջ երեխայի հանդեպ: Սովորաբար այդ զգացմունքները լիովին հակառակ են: Ուրեմն սա բարոյականություն չէ՞: Այդ ո՞ր բարոյականությունն է կարգադրում սեփական երեխայի մասին հոգ տանել, իսկ մեկ ուրիշին՝ ուշադրություն չդարձնել: Ուրեմն կապվածության հանգամանքը չի կարող բարոյականության չափանիշ հանդիսանալ:

Նրանք, որվքեր սովորության առումով ասում էին, որ մարդու գործողությունները պետք է ենթարկվեն նրա գիտակցությանն ու կամքին, այս դեպքում ևս, ստիպված նույն բանն են ասում: Նրանք ասում են, որ բարոյական են այն գործողությունները, որոնք թելադրվում են գիտակցությամբ, զերծ են սուբյեկտիվ զգացմունքներից և կարևոր չէ դրանք ում հետ են կապված՝ հարազատի, թե՞ այլոց:


Բարոյական գործողությունները չունեն բոլորի կողմից ընդունված ունիվերսալ չափանիշ և յուրաքանչյուր ուղղություն կամ գաղափարախոսություն, ելնելով իր աշխարհայացքից ու սկզբունքներից ստեղծում է նաև բարոյականության իր չափանիշները: Ի դեպ, դրանք հաճախ կարող

են հակասել միմյանց: Ռմանք համոզված են, որ մարդ լինելու առաջին գրավականը խիղճն է, և որ յուրաքանչյուր մարդ խիղճ ունի: Ինչ որ տեղ սա ճիշտ է. «Իսկ հետո նրան ներշնչեց նրա չարն ու բարին»<sup>25</sup>: Կանտը խորապես հավատացած է, որ մարդու մեջ գոյություն ունի բարոյական խիղճ: Նրա գործնական փիլիսոփայությունն ավելի կարևոր է, քան տեսական փիլիսոփայությունը:

Նրա շիրմաքարին գրված են իր իսկ խոսքերը. «Երկու բան կարող է մարդուն զարմացնել և մարդը երբեք չի կարող դադարել զարմանալուց: Դրանցից մեկը՝ մեր գլխավերևում գտնվող աստղազարդ երկինքն է, իսկ մյուսը՝ մեր մեջ գոյություն ունեցող խիղճը»: Այս կենսափիլիսոփայությունը հաստատում է, որ բարոյական է այն գործը, որը բխում է մարդու խղճից և բնույթից: Հետևաբար բարոյական է այն, ինչը թելադրված է մարդու խղճի կողմից՝ անկախ դաստիարակությունից և սովորությունից:

Սակայն կան մարդիկ, որոնք չեն հավատում խղճի գոյությանը: Հետաքրքիր է իմանալ, թե որո՞նք են նրանց արժեքները: Նրանց բարոյական չափանիշները կարելի է որոշել, ելնելով նրանց իսկ արժեհամակարգից:

Նյութապաշտների մասին կարելի է ասել, որ նրանք շատ ցածր բարոյական արժեքներ ունեն: Մեր ժամանակները համարվում են «արժեքների վերարժեվորման» ժամանակներ, երբ նախկին բարոյական արժեքներն իմաստազրկվել են, իսկ չափանիշները՝ վերացել: Նիհիլիզմը մի ուղղություն է, որը չի ճանաչում ոչ մի արժեք և սկզբունք: Բոլոր նյութապաշտական ուղղություններն էլ այսպիսին են՝ բարոյականության անկայուն կոչեր են անում, սակայն նրանց աշխարհայացքը հիմնովին խախտում է բարոյական արժեքների համակարգը:



## **ՄԱՍ V**

*Բարոյական գործողություններ Ա*



## Հանուն Ողորմաճ և Բարեգութ Լսարձո

Քարոյագիտության կարևորագույն խնդիրներից մեկն այն է՝ թե որոնք են քարոյական գործողությունների չափանիշները: Այսինքն, ինչ չափանիշների համաձայն մենք կարող ենք որևէ գործողություն համարել քարոյական կամ սովորական: Այլ կերպ ասած՝ ո՞րն է քարոյական և սովորական գործողությունների տարբերությունը: Անկասկած, մեր կատարած գործողությունների մի մասը սովորական է և ոչ ոք դրանք քարոյական չի համարում: Այդպիսի գործողություններից է սեղանի շուրջ նստելն ու ճաշելը: Այս գործողությունը երբեք չի կոչվում քարոյական գործողություն, քանզի սա բնական է: Սակայն գոյություն ունեն որոշ գործողություններ, որոնք ոչ բնական գործողություններ են և համարվում են քարոյական: Օրինակ, երբ որևէ մեկը անձնագոհություն է կատարում, անձամբ ինչ որ բանի կարիքն ունենալով հանդերձ՝ հանուն ուրիշների գոհաբերում է իր ունեցածը: Այս դեպքում ասվում է, որ նա քարոյական գործողություն է կատարել: Նախքան քարոյական գործողությունների չափանիշների մասին խոսելը իմաստային առումով պետք է ստուգաբանել երկու բառ:

### **Դաստիարակության եվ քարոյականության տարբերությունը**

Դաստիարակությունն ու քարոյականությունը տարբեր բաներ են: Իհարկե քարոյականությունը ինքնին դաստիարակության մի նիստն է,

սակայն, այնուամենայնիվ, տարբերություն կա դաստիարակության և բարոյականության միջև: Ինչպես արդեն նշվեց, դաստիարակություն նշանակում է կրթում, պատրաստում և ուսուցում: Ըստ որում բոլորովին կարևոր չէ, թե ո՞րն է դաստիարակության նպատակն ու մեթոդը: «Դաստիարակություն» արտահայտությունը զուրկ է որևէ սրբությունից և հնարավոր չէ ասել, որ դաստիարակել նշանակում է մարդու մեջ սերմանել գերմարդկային արժանիքներ ու հատկություններ, քանզի դաստիարակություն բառը գործածվում է նաև կենդանիների առումով: Մենք շանը նույնպես կարող ենք դաստիարակել այնպես, որ նա իր տիրոջ հանդեպ բարի լինի և պահպանի տունը, շրջապատը, ոչխարների հոտը: Սա նույնպես կոչվում է դաստիարակություն: Կան լեգեոններ, որոնք զավթիչ իշխանությունների կողմից կազմավորում են մարմնեղ մարդկանցից և այնպես դաստիարակվում ու կոփվում, որ ոչ մի բանից չեն վախենում և կատարում են իրենց տրված բոլոր հրամանները: Սակայն «բարոյականություն» բառի հիմքում դրված է սրբության հետ կապված նրբերանգ, և այն երբեք որևէ կենդանու առումով չի գործածվում: Օրինակ՝ ձիուն դաստիարակելիս կամ վարժեցնելիս երբեք չեն ասում, որ նրան բարոյապես են վարժեցնում: Բարոյականության հիմքում ընկած է վեհություն, որը բնորոշ է միայն մարդ արարածին: Ուստի՝ բարոյականություն և դաստիարակություն եզրույթները կիրառելիս պետք է համոզված լինել, որ դրանք տարբեր բաներ են: Ցանկացած տիպի դաստիարակության և վարժեցման դեպքում ամեն ինչ կախված է նրանից, թե մենք մարդուն կամ կենդանուն ի՞նչ նպատակներով և ինչի՞ համար ենք պատրաստում: Սակայն բարոյագիտությունն ու նրա հիմքում ընկած սկզբունքները կախված չեն մեզանից և ունեն որոշակիորեն ուրվագծված չափանիշներ: Սրանից ելնելով՝ մենք պնդում ենք, որ հաճախ բարոյական գործողությունները հակադրվում են բնական գործողություններին: Սակայն այս արտահայտությունը կարելի է հասկանալ երկու կերպ, ըստ որի բարոյական գործողությունները բնական գործողության հակառակն են և այն բոլոր գործողությունները, որոնք բնական չեն՝ բարոյական են: Ոչ, մեր նպատակն այն չէ, որ բարոյական գործողության չափանիշը դարձնենք գործողությունների անբնական լինելը: Օրինակ՝ երբ մի ճգնավոր իր բնական պահանջների դեմ պայքարելով տանջում է իրեն, մենք չենք կարող նրա գործողությունները բարոյական համարել զուտ այն պատճառով, որ նա պայքարում է բնական գործողությունների դեմ: Սա չի կարող բարոյականության չափանիշ հանդիսանալ և ոչ ոք նման բան չի ասում: Իսկ երբ մենք ասում ենք անբնական, բոլորովին էլ ի նկատի չունենք հակաբնականը: Անբնական են համարվում այն գործողությունները, որոնք կատարվում են մարդու բնական պահանջներից դուրս, միայն նրա բնույթի ու հոգեկերտվածքի թելադրանքով: Յուրաքանչյուր գործողություն, որ մարդը կատարում է իր հոգեկան կերտվածքի թելադրանքով՝ բնական է, իսկ բարոյական են ոչ սովորական (արտասովոր) գործողությունները:

**Տեսակետներ բարոյական գործողությունների վերաբերյալ**

**ա) Այլասիրություն կամ՝ ուրիշներին սիրել**

Այժմ տեսնենք, թե որոնք են բարոյական գործողության չափանիշները: Ոմանք ասել են, որ բարոյական գործողության չափանիշ է հանդիսանում այն, որ գործողությունը կատարվում է ոչ թե եսասիրության, այլ՝ այլասիրության կամ ուրիշներին սիրելու արդյունքում: Մարդը չի կարող իր կամավոր գործողությունների (որոնցից են խոսելն ու քայլելը) ցանկություն չունենալ: Սակայն նմանատիպ գործողությունները, որոնք մարդը կատարում է իր շահերից ելնելով, կամ իր վատ վիճակը մեղմելու նպատակով, չեն կարող բարոյական գործողություններ կոչվել: Յուրաքանչյուր կենդանի էակ բնականոն կերպով մտածում է իր շահերի պաշտպանության և իրենից վտանգն ու վնասը հեռացնելու մասին: Սակայն հենց, որ այդ գործողությունները դուրս են գալիս անհատական ու անձնական շրջանակից և ստանում են ուրիշներին սիրելու, նրանց շահերը պաշտպանելու կամ նրանց հոգսերը նվազեցնելու նպատակ՝ վերածվում են բարոյական գործողությունների:

Սակայն այսքանը դեռ բավարար չէ, քանզի հնարավոր է, որ ուրիշներին սիրելն ու ձգտելը նույնպես կատարվի բնականոն ձևով և բնության թելադրանքով: Այս դեպքում այն բարոյական չի կոչվի: Ամենավառ օրինակը մայրական սերն է որդու հանդեպ, որը բնորոշ է և մարդուն և կենդանիներին: Յուրաքանչյուր կենդանի էակ բնագոյաբար սիրում է իր գավակին: Սակայն արդյո՞ք մենք կարող ենք բարոյական համարել այն գործողությունները, որոնք մայրն իրականացնում է բնագոյաբար և բնությունից տրված շնորհով: Մայրը բնագոյաբար, անչափ սիրելով իր երեխային, անտեսում է իր շահերն ու դիմում անձնագոհության՝ իրեն քիչը վերցնելով և ավելին իր երեխային տալով: Ռուտի, մայրական սերը բնորոշ չէ միայն մարդուն, այն հատկանշական է նաև կենդանիներին:

**Անձնագոհություն**

Երևույթը հնարավոր է մեկնաբանել այս կերպ. «Բարոյական գործողության չափանիշն է անձնագոհությունը»: Սակայն անհրաժեշտ է տեսնել, թե անձնագոհությունն ի՞նչ նպատակով է կատարվում: Երբեմն մարդ ինքնագոհություն է կատարում ուրիշներին թերագնահատելով, հանրաճանաչություն և լավ անուն վաստակելու նպատակով: Երբեմն՝ ազգային ու ցեղային մոլեռանդությունից ելնելով և այլն: Հաճախ մարդիկ յուրահատուկ հայրենասիրական, ոչ հայրենասիրական կամ եսասիրական զգացումների ազդեցության ներքո՝ ցանկանալով իրենց անունը ամրագրել պատմության մեջ, զոհաբերում են իրենց անձը: Վերջիններս համարվում են մեծ եսասերներ, և նրանց անձնագոհությունը չի կարող բարոյական գործողությունների չափանիշ հանդիսանալ, քանզի անձնագոհությունը կատարվում է եսասիրությունից դրդված: Իմ նախկին կարծիքն այն մասին է, որ բարոյական է այն գործողությունը, որը կատարվում է ոչ թե եսասիրությունից դրդված, այլ ուրիշներին սիրելու ձգտումից ելնելով:

լով, առավել կատարյալ էր, սակայն դա նույնպես բավարար չէ:

**բ) Գործողությունների բնական գեղեցկությունն ու անվայելչությունը**

Հնում գիտնականներն ասում էին, որ բարոյական գործողություններն օժտված են բնական վայելչությամբ, իսկ ոչ բարոյականները՝ բնական տգեղությամբ: Նրանք համոզված էին, որ մարդու գիտակցությունը ճանաչում է բարոյականը և անբարոյականը: Օրինակ՝ յուրաքանչյուր ոք գիտակցում է, որ ճշմատությունը գեղեցիկ, փառահեղ և լավ Ֆենոմեն է, իսկ կեղծիքը՝ վատ<sup>26</sup>: Նրանց համոզմամբ մարդկային էությունը կարող է ենթարկվել կենդանական կրքի ազդեցության: Այդպիսի մարդիկ, օրինակ՝ շատակերները, ենթարկվում են իրենց կրքերին ու ցանկություններին: Ոմանց էությունը ենթարկվում է չարությանը, կախարդանքին, գուշակություններին ու սատանայություններին: Մարդկանց մի մասն էլ առաջնորդվում է գիտակցությամբ: Հիշյալ գիտնականների կարծիքով բարոյական են այն մարդիկ, որոնք առաջնորդվում են գիտակցությամբ և չեն ենթարկվում իրենց կրքերին ու ցանկասիրությանը: Նման մարդկանց կրքերն անգամ հաշվարկված և թելադրված են գիտակցությամբ և վերահսկվում են նրա կողմից: Եթե գիտակցությունն ասի, որ այստեղ այս կիրքն անհրաժեշտ է, ապա՝ կիրանգործվի, իսկ հակառակ դեպքում՝ ոչ: Նրանք անընդհատ պնդում էին, որ կրքերով ու ցանկասիրությամբ առաջնորդվող մարդկանց գործողություններն անբարոյական են և կենդանական: Վերջիններս գործողությունները բաժանում էին ոչ թե բնականի ու բարոյականի, այլ՝ մարդկայինի ու կենդանականի:

Հարկ է նշել, որ ասվածը հնարավոր չէ հարյուր տոկոսով ապացուցել, չնայած որ սուկրատյան բարոյականությունը նույնպես սրանով է պայմանավորված, հատկապես գործողությունների բնական վայելչության ու անվայելչության խնդիրը, որը գիտնականներն իրենք էլ չեն կարողանում ամբողջովին հիմնավորել: Ամեն դեպքում, տեսակետ է նաև այն, որ բարոյական գործողության չափանիշը նրա գիտակցված լինելն է: Այսինքն այն պետք է թելադրվի գիտակցության կողմից և ոչ թե՝ կրքերի ու ցանկասիրության:

**գ) Խղճի ներշնչանք (խայթ)**

Հաջորդ տեսակետը պատկանում է Կանտին, որը համոզված էր, որ բարոյական է այն գործողությունը, որն ազատ է: Այսինքն, այն գործողությունը, որը մարդը կատարում է ոչ թե ուրիշների այլ իր համար և որը թելադրված է խղճի կողմից: Մարդու խիղճը նրան պարտադրում է մի շարք գործողություններ, որոնք նա կատարում է ոչ թե որևէ նպատակի կամ արդյունքի հասնելու՝ այլ ուղղակի իր առջև դրված խնդիրը լուծելու համար: Սրանք բարոյական գործողություններ են: Այս դեպքում, երբ մարդը կատարում է իրեն թելադրված պարտականություն, նրա անձնական գործողությունները հակադրվում են մեկ այլ անձի գործողություններին:

26-Իհարկե այս խնդրին առավել հանգամանորեն կանդորադառնանք խելքին ու գիտակցությանը վերաբերվող բաժնում:



Նա չի վերլուծում այն հարցը, թե՛ իրեն ինչ է թելադրվում և դառնում է միայն դրանց կատարողը: Կանտը համոզված է, որ յուրաքանչյուր գործողություն, որն իրականացվում է խղճի ներշնչանքով՝ բարոյական է և յուրաքանչյուր գործողություն, որը արդյունք է որևէ պայմանի կամ խնդրառության՝ չի կարող բարոյական համարվել: Սա ևս մի վարկած է:

#### դ) **Ձեռքբերովի այլասիրություն**

Հաջորդ տեսակետը, որն ավելի մոտ է առաջինին հավաստում է, որ բարոյական գործողության չափանիշն այլասիրությունն է, սակայն այն դեպքում, երբ դա ձեռքբերովի է և ոչ թե՛ բնական: Ռուտի մենք այլասիրության երկու տարատեսակ ունենք.

Բնական այլասիրություն, որի վառ օրինակներից են մայրական սերնու ազգային և բարեկամական զգացմունքները:

Ձեռքբերովի այլասիրություն, երբ մարդը բնականից չունի այն, սակայն ձեռք է բերում: Երբ մեկը մարդկանց սիրում է այնպես, ինչպես մայրն է իր զավակներին սիրում, դա նրա ձեռքբերովի զգացումն ու մեկ այլ արժանիքն է: Սա էլ տեսակետ է:

#### ե) **Հանուն Աստծո**

Այստեղ խնդրում գոյություն ունի այն տեսակետը, ըստ որի բարոյականությունը պետք է լինի կրոնական, իսկ մնացած ամեն ինչ՝ գիտական ու փիլիսոփայական: Այսինքն՝ սրանցից դուրս այլ տեսակետ փնտրողները ցանկացել են հաստատել բարոյականության այնպիսի չափանիշներ, որոնք հեռու են դավանանքից ու հավատքից: Բարոյական է այն գործողությունը, որն ի կատար է ածվում ի սեր Աստծո: Իհարկե, այս գաղափարախոսության մեջ ևս նսեմանում է «ես»-ի գործոնը, երբ գործողության նպատակը դառնում է ոչ թե ինքն իրեն կամ ուրիշներին օգուտ տալը կամ էլ վնասի կանխումը, այլ «Հանուն Աստծո» գաղափարը: Այստեղ ուրիշներին օգտակար լինելու նպատակը ևս դառնում է Աստծուն գոհացնելու և հանուն Բարձրալի ջանալու միջոց: Այս մասին Ղուրանում նշված է. «Մենք ձեզ սնուցում ենք հանուն Աստծո և ձեզանից ոչ մի պարգև և երախտիք չենք պահանջում»<sup>27</sup>: Կարելի է ասել, որ այս բոլոր տեսություններում գոյություն ունի մեկ ընդհանուր խնդիր և դա այն է, որ ի վերջո բարոյականությունը դուրս է ամեն տեսակի շահախնդիր նկրտումներից:

Նման մոտիվներով իրականացված յուրաքանչյուր գործողություն, վստահաբար, բարոյական չէ: Մենք քննում ենք այն խնդիրը, որ հաճախ ուրիշի համար օգտաշատ գործողությունները համարվում են ոչ բարոյական՝ երբ նրանք հետապնդում են շահադիտական նպատակներ:

#### Կանտի տեսության վերլուծությունը

Այժմ ընդհանրական կերպով վերլուծենք Կանտի տեսությունը: Ինչպես

նշվեց, Կանտը համոզված էր, որ բարոյական է այն գործողությունը, որը զուրկ է պայմանականություններից ու սահմանումներից, իսկ նրա իրականացումը, զուտ խնդիր հանդիսանալուց բացի որևէ այլ նպատակ չի հետապնդում: Այսինքն՝ մարդն այն պետք է կատարի ընդհամենը որպես պարտականություն: Սակայն այս պարագայում առաջանում է մի հարց, արդյո՞ք հնարավոր է, որ մարդը առանց որևէ նպատակի ինչ որ գործողություն կատարի: Ոմանք ասում են, որ նման բան հնարավոր չէ և անհնար է, որ մարդը կատարի որևէ գործ՝ առանց ինչ որ բան ակնկալելու: Անհնար է, որ մարդն իր կամքին հակառակ մի բան անի, թեկուզ՝ պայմանական: Անգամ այն մարդը, որը գործում է իր կամքին հակառակ, միևնույնն է նրա գործողություններում գոյություն ունի սեփական ցանկության որոշակի դրսևորում: Եվ երբ ասում ենք կամքին հակառակ, ի նկատի ունենք, որ ինչ որ մի առումով այն նրա կամքին հակառակ է: Անհնար է, որ մարդը լիովին հակառակ իր կամքին ինչ որ բան անի: Ուրեմն, երբ ասում են, որ բարոյական է միայն այն գործողությունը, որը անձնական նպատակից և շահից զուրկ է, ճիշտ չէ: Այս հարցի պատասխանը հետևյալն է. այստեղ գոյություն ունի մի թյուրիմացություն, որը պետք է հարթել: Երբեմն ասում ենք, որ մարդու նպատակը յուրաքանչյուր գործից անձնական շահ ստանալն է: Այս դեպքում կարելի է պատասխանել՝ ոչ, այստեղ նրա նպատակը անձնական շահը չէ, այլ՝ ուրիշներին օգուտ տալը:

Հնարավոր է, որ ինչ որ մեկն ասի, որ որևէ գործ կատարելիս ինքը դրանից բավականություն է ստանում, կամ չի ստանում: Կամ էլ այդ գործը չանելու դեպքում տանջվում է, կամ չի տանջվում: Եթե մարդ որևէ բան անելիս դրանից բավականություն չստանա, կամ այն չանելու դեպքում չվշտանա, անհնար է, որ այդ գործը ձեռնարկի: Եթե Իմամ Ալին ուրիշներին օգնելուց բավականություն չստանար, կամ այդ չանելուց չվշտանար, ապա՝ անհնար է, որ նա նմանատիպ գործեր կատարեր:

Թյուրիմացությունը կայանում է հենց նրանում, որ բավականությունն ու վիշտը միշտ չէ, որ կապված են ինչ որ մեկին օգուտ պարգևելու կամ նրան վնասազերծելու հետ: Մարդը մի այնպիսի էակ է, որն ուրիշներին անշահախնդիր օգուտ պարգևելուց նույնպես կարող է բավականություն ստանալ: Եվ նույնիսկ ավելի մեծ բավականություն՝ քան սեփական անձի համար ջանալուց: Այս դեպքում նա ավելի գոհ կլինի ուրիշներին սպառնացող վտանգները կանխելու համար: Ուրեմն այս երկուսը պետք է իրարից առանձնացնել: Նյութապաշտները սովորաբար ասում են, թե յուրաքանչյուր մարդ որևէ բան անելիս՝ մտածում է անձնական շահի մասին: Ոչ, այդպես չէ, մարդը կարող է հասնել այնպիսի մի աստիճանի, երբ մտածում է միայն ուրիշներին օգտակար լինելու մասին: Իսկ եթե ասեք, որ մարդն ի վերջո բավականություն է ստանում իր կատարած յուրաքանչյուր գործից, կասեմ՝ ճիշտ է. ավելին, որևէ գործից մարդու բավականություն ստանալու փաստը հնարավոր չէ սահմանափակել միայն անձնական շահով: Սա շատ նման է մարդու կամքին, երբ մարդն ուրախանում և բավարարվում է ուրիշներին ծառայություն մատուցելուց:

Իսկ Կանտի «բարոյական կոչվելու համար մարդու գործողությունները

պետք է սահմանափակումներից դուրս լինեն» գաղափարի վերաբերյալ պետք է նշել, որ եթե նրա նպատակն այն է, որ մարդը օգուտ չստանա, ապա՝ ընդունելի է: Սակայն եթե նա ի նկատի ունի այն տարբերակը, որ մարդը պետք է գուրկ լինի նաև ուրիշներին օգտակար լինելուց (այսինքն գործի միայն պարտականություն կատարելու նպատակով, առանց բավականություն ստանալու) ապա՝ անհնար է:

Ուրեմն, սա այն տեսակետների բացատրությունն էր, որոնց համաձայն «բարոյականության չափանիշն ուրիշներին օգտակար լինելն է», իսկ մի այլ խումբ ժխտում է դա:

Մեկ այլ տեսություն հավաստում էր, որ մարդու գործողությունները պետք է ամբողջովին անկախ ու ազատ լինեն: Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ մարդու գործողություններն ինչ որ տեղ կարող են ազատ ու անկախ լինել, ինչ որ տեղ՝ ոչ: Դրանք կարող են ազատ և անկախ լինել այն ժամանակ, երբ մարդն իր անձնական շահերի համար է գործում և դրանով հանդերձ չի կարող իրեն գրկել ազատորեն ուրիշներին օգտակար լինելու հաճույքից և բավականությունից:

Այստեղ մենք կարող ենք հասկանալ նաև մարդկային խղճի գործոնն ու նրա իմաստը: Ոմանք համոզված են, որ մարդն օժտված է բնական բարոյական խղճի զգացումով, իսկ ոմանք՝ ոչ: Վերջիններս պնդում են, որ մարդն ստեղծվել է, որպեսզի օգուտ քաղի (կյանքից):

Բարոյական խղճի առումով Կանտի տեսակետը ճիշտ չէ, սակայն ինչպես նշվեց, ամբողջապես չի էլ բացառվում մեր կողմից: Դրա լավագույն դրսևորումներից են ուրիշներին օգուտ տալու նպատակով բարոյական գործողությունները, որոնք իրականացնելիս մարդիկ բավականություն են ստանում և ուրախ են այդ նպատակին ծառայելու համար:

## **ՄԱՍ VI**

*Բարոյական գործողություններ Բ*



## Հանուն Ողորմած և Բարեգույշ Աստուծո

Ինչպես ասացինք՝ մեր քննարկման թեման բարոյական գործողության չափանիշներն էին ու դրանց տարբերությունը բնական գործողությունից: Ընդհանուր առմամբ բոլորս էլ համաձայն ենք այն կարծիքի հետ, որ մարդու գործողությունների մի մասը բնորոշ է միայն մարդուն և դրանց կատարումն իրականացվում է ոչ թե կենդանիների նման բնազդով կամ բնականոն կերպով, այլ հետապնդում է ավելի վեհ նպատակներ: Այդ գործողությունները կոչվում են մարդկային կամ բարոյական գործողություններ՝ քանզի դրանք բնորոշ են միայն մարդկանց, իսկ կենդանիների պարագայում բացառվում են: Այսօր մեզանից շատերը բազամթիվ գործողություններ անվանում են մարդկային, կամ ոչ մարդկային: Նրանք շեշտը դնում են «մարդկային» բառի վրա՝ ցանկանալով ասել, որ այդ գործողությունները կարող են իրականացվել միայն մարդու կողմից: Այժմ տեսնենք թե որո՞նք են բարոյական կամ մարդկային գործողությունների չափանիշները, որ բնորոշ են միայն մարդկանց և տարբերվում են կենդանական բնազդով կամ բնականոն կերպով կատարվող գործողություններից:

Այստեղ մենք պետք է միաժամանակ քննարկենք երկու խնդիր: Նախ՝ որո՞նք են չափանիշներն, ապա՝ ո՞րն է մարդկային գործողությունների իրականացման երաշխիքը: Բավականաչափ պարզ է, որ մարդկանց բնական գործողությունները, ինչպես նաև կենդանիներինը, ունեն ընդհանուր բնազդ և մարդու կողմից իրականացվում են բնազդաբար:

Դրանց իրականացման կարևորագույն գործոնը բնությունն է: Իսկ որո՞նք են բարոյական գործողությունների չափանիշներն ու դրանց իրականացման երաշխիքները:

Ինչպես նշեցինք՝ ոմանք ասել են, որ բարոյական են այն գործողությունները, որոնք կատարվում են ուրիշներին սիրելու զգացումից դրդված: Մեր տեսակետում ինչ որ չափով ներկայացվում է բարոյական գործողությունն ու նրա կատարման մոտիվները: Ըստ այս տեսակետի այն գործողությունը, որը մարդն իրականացնում է իր համար, բարոյական չէ, քանզի մարդն ինքն իրեն շատ է սիրում և որևէ գործ կատարելիս ջանում է դրանից ինչ որ օգուտ քաղել: Սակայն հենց որ այդ գործողությունը դուրս է գալիս անհատական շահերի սահմաններից և իրագործվում է ուրիշներին օգուտ հասցնելու նպատակով՝ դառնում է բարոյական: Իհարկե այս բացատրությունը մերժվում է այն պատճառաբանությամբ, որ այս դեպքում բնական գործողությունների մի մասը վերածվում է բարոյականի: Օրինակ՝ մայրությունն ու մայրական զգացումները մարդկանց և կենդանիների մոտ: Ըստ էության մայրն օժտված է ուրիշին սիրելու զգացումներով, սակայն այդ «ուրիշ»-ը միայն նրա երեխան է: Երեխայի սիրուց դրդված նա կատարում է որոշակի գործողություններ և գնում է գոհողության: Իհարկե, սրանք վեհ, գեղեցիկ և պանծալի զգացումներ են, սակայն չեն կարող բարոյական կոչվել, քանզի իրականացվում են բնագործարար, բնության թելադրանքով: Նույն մայրը այլ երեխաների հանդեպ չի տածում նույն զգացումները՝ ինչ իր սեփական երեխայի հանդեպ: Իրականում նրա գործողությունները հնարավոր չէ ուրիշների հանդեպ սեր համարել: Դա որդու հանդեպ տածած սեր է և չի կարող բարոյական համարվել, քանզի բարոյականությունն ավելի լայն հասկացություն է:

### **Մարդասիրություն (հումանիզմ)**

Բարոյական գործողությունները մեկնաբանող մեկ այլ խումբ մարդասիրությունը մեկնաբանում է բառի ուղղակի իմաստով: Նրանք համոզված են, որ բարոյական են այն գործողությունները, որոնք բխում են մարդասիրական զգացումներից: Այսօր նմանօրինակ պնդումները բավականին շատ են: Այստեղ առկա է նաև դրանց իրագործման մոտիվի խնդիրը: Իսկ արդյոք մարդու մեջ մարդասիրական զգացումներ գոյություն ունե՞ն, թե՞ ոչ: Անտիկ փիլիսոփա Արիստոտելը մարդուն իր համայնքային բնույթի շնորհիվ համարում էր «բնականից քաղաքացիական» և համոզված էր, որ գոյություն ունի բնազդի երկու տեսակ. դրանք են անհատականն ու մարդկայինը: Նա ասում էր, որ մարդն իր մարդկային բնազդների թելադրանքով ցանկանում է հարմարվել համայնքի հետ և, ինքն իրեն շատ սիրելով հանդերձ, սիրում է նաև իր համայնքը: Նոր ժամանակների իմաստուններից մեկը՝ Ֆրենսիս Բեկոնը հայտնի է իր մի տեսությամբ, որը համընկնում է Արիստոտելի տեսության հետ և ապացուցում էր, որ մարդու մեջ գոյություն ունեն նման բնազդներ: Իհարկե գիտականորեն բավականաչափ լավ չի փաստարկված այն խնդիրը, որ մարդու մեջ գործում են նմանատիպ բնազդներ, սակայն սա ևս մեկ տե-

սակետ է:

Ուրեմն, հիշյալ տեսության համաձայն, բարոյականության չափանիշը կայանում է նրա մարդասիրական լինելու մեջ: Մարդու մեջ գոյություն ունեն դրա իրագործման երաշխիքները, սակայն այս տեսությունը գիտականորեն դեռ հաստատված չէ:

### **Դարվիճիզմ**

Դարվիճիզմը, որի փիլիսոփայությունը հիմնված է գոյության պայքարի վրա, վկայում է, որ յուրաքանչյուր կենդանի էակ արարված է որպես եսասեր և աշխատում է ամեն կերպ պահպանել իր գոյությունը: Հենց այդ պատճառով էլ ներդրված ջանքերն ի վերջո վերածվում են գոյության պայքարի, որն էլ իր հերթին վերածվում է միջոցների ընտրության: Սակատարելության հիմքն է: Այս փիլիսոփայության համաձայն մարդու բնական և մարդկային բնագոյների համար ոչինչ չի մնում: Շատերն են քննադատել Դարվիճին՝ ասելով, որ հիշյալ փիլիսոփայության հասցրած վնասներից մեկն այն է, որ այն խաթարում է բարոյականության ու փոխօգնության հիմքերը: Դարվիճի փիլիսոփայության համաձայն փոխօգնության զգացում, որպես այդպիսին, գոյություն չունի: Նրա տեսությունում փոխօգնությունը դիտվում է որպես գոյատևման միջոց: Այսինքն, հիմնականը գոյությունն է, իսկ փոխօգնությունը ենթարկվում է նրան և դիտվում որպես երկրորդական խնդիր: Օրինակ՝ երբ մարդը ցանկանում է ամրապնդել իր դիրքերը (յուրաքանչյուր անհատ իրեն համարում է այլոց հակառակորդը), գոյության պայքարի օրենքից ելնելով, այլ անհատների հետ ստեղծում է որոշակի ուժ՝ դիմակայելով ուրիշներին: Սակայն այս համերաշխությունը բխում է գոյության պայքարին դիմակայելու անհրաժեշտությունից: Այսպիսով, մարդկանց փոխօգնության ձգտումը փոխադարձ սիրո և բարեկամության արդյունք չէ, այլ ուղղված է ուրիշների դեմ: Այս ամենն իրականացվում է վերջիններիս ուտելու կամ էլ նրանց դիմակայելու նպատակով: Ուրեմն, փոխօգնությունը մարդկանց մեջ արմատական չէ և պայմանավորված է գոյության պայքարով: Ինքը՝ Դարվիճը, շատ ջանաց, որպեսզի բարոյականության համար հիմքեր ստեղծի: Նրա համախոհ ընկերները մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի վերացնեն նրա փիլիսոփայության այդ սխալը, սակայն՝ ապարդյուն:

### **Բարոյական խիղճ**

Հաջորդ գաղափարախոսությունը հանձնարարության խնդիրն է: Ասում են, որ եթե մարդը զգացմունքներից դրդված որևէ բան անի, անգամ մարդասիրական զգացմունքներից՝ նրա գործողությունը կվերածվի բնական գործողության: Բնական է այն գործողությունը, որը մարդը կատարում է բնագոյաբար, թե անհատական և թե հասարակական բնագոյից ելնելով: Սակայն բարոյական գործողությունը ոչ այլ ինչ է, քան՝ պարտականություն, որը բխում է միայն խղճի թելադրանքից: Իսկ եթե հարցնենք, թե որտե՞ղ է պարտականությունը, կպատասխանի՝ մարդու խղճի մեջ:

Աստված մարդուն արարել է այնպիսի խղճով, որը տարբերվում է մարդասիրական զգացումներից: Խիղճը մարդու մեջ մի սրբազան զգացումնք է, որը թելադրում է մարդուն: Իսկ բարոյական գործողությունը պետք է թելադրվի խղճով: Կանտի գաղափարախոսության մեջ խիղճը ներկայացվում է որպես գերագույն արժեք: Վերջինս համոզված էր, որ մարդն օժտված է անաղարտ բարոյական խղճով: Հնագանդության առումով նա ասում է այն խոսքերը, որոնք հավատացյալներն ասում են Աստծոն անկեղծության ու մաքրության առումով: Ըստ նրա՝ անկեղծ ծառան նա է, ով հնազանդվում է Աստծո խոսքին այլ ոչ թե Տիրոջ բարիքներից օգտվելու պատճառով կամ նրա պատժից վախենալով, այլ՝ ելնելով նրանից, որ Աստված պատվիրել է հնազանդվել: Նույնիսկ այն դեպքում, երբ հասկանում էին, որ հնազանդվելու դեպքում ոչ մի դրախտ և չհնազանդվելու դեպքում ոչ մի դժոխք գոյություն չունի: Սա էլ մեկ ուրիշ տեսություն է:

Մենք չենք մերժում խղճի գոյությունը, սակայն ասում ենք, որ գիտականորեն այդ խիղճը հարյուր տոկոսով հաստատված չէ: Հարկ է նշել, որ իսլամական սկզբունքների համաձայն մարդու մեջ գոյություն ունի բարոյական խիղճ, սակայն ոչ որպես այնպիսի մի հիմք, որը փոփոխության ենթակա չէ և ոչ էլ այնքան մեծ ու հզոր, ինչպիսին Կանտն է նկարագրում: Ըստ նրա՝ յուրաքանչյուր մարդու՝ հոգուն և ներաշխարհում գոյություն ունի նման մի հզոր և հստակ ուժ:

Այս տեսությունը լավ տեսություն է, և իզուր չէ, որ Ղուրանը նույնպես անդրադառնում է «Ներքին ուժին» և ասում. «Իսկ հետո նրան ներշնչեց նրա չարն ու բարին»<sup>28</sup>: Սա ցույց է տալիս, որ Ղուրանի տեսակետից մարդու մեջ գոյություն ունի չարի և բարու հանդեպ արմատական ինչ որ բան: Այսինքն՝ երբ մարդն ինչ որ վատ արարք է անում, ապա՝ ներքին մի զգացում տանջում է նրան և այստեղ բացահայտվում է, որ գոյություն ունի ինչ որ բան, որը հրամայում է թողնել վատ գործերն ու մղում է մարդուն դեպի լավը: Իսկ վատ գործողության դեպքում այն տանջում է մարդուն ներքուստ և հակառակը՝ ուրախացնում լավի ու բարու ժամանակ:

### «Կամա և ակամայի» վեճը

Այս խնդրի հաստատման համար արդի հոգեբաններն ասում են. «Մարդ երբեմն որոշում է կատարել իր կամքին ու էությանը հակառակ գործողություններ, որոնք համարում է լավ»: Օրինակ՝ որոշում է սահմանափակել կերակուրը, կամ՝ երկար քնել: Որոշում կայացնելիս մարդը հայտնվում է երկընտրանքի առջև: Մի դեպքում ինչ որ մի ծայն նրան պարտադրում է քիչ ուտել և վաղ արթնանալ, իսկ մյուս դեպքում, որը նրա էությունն է, ցանկանում է հակառակն անել: Երբեմն մարդն առաջնորդվում է այն կամքով, որով որոշում է կայացրել, իսկ երբեմն էլ՝ հակառակ: Երբ հաղթանակում է նրա բարոյական կամքը, բավարարվածության և անգամ հաղթանակի զգացում է ապրում, կարծես մի հերոս լինի: Եվ ճիշտ հակառակը, երբ հաղթանակում է նրա էությունը՝ ինքն իրենից

28-Ղուրան, 91 : 8:



հիասթափվում է և ապրում պարտության զգացում: Այս դեպքում մարդը պարտություն է կրում ինքն իր կողմից, եվ ոչ թե՛ մեկ ուրիշի: Սա նման է այն բանին, որ մարդ զավակ ունենա և գոտեմարտի բռնվի իր որդու հետ՝ մտածելով, որ տարբերություն չկա թե ով կհաղթի: Ի՞նչ տարբերություն ես կհաղթեմ իմ էությանը, թե էությունս կհաղթի ինձ. երկու դեպքում էլ ես եմ հաղթելու: Սակայն ինչի՞ց է, որ երբ հաղթանակում է մարդու բարոյական կամքը, կարծես՝ ինքն է հաղթել և կարծես մեկ ուրիշին պարտության ենթարկած լինի: Իսկ իր էության հաղթանակի դեպքում, պարտության զգացում է ապրում: Այստեղից պարզ է դառնում, որ մարդու մի ես-ն ավելի հոգեհարազատ է, քան՝ մյուսը: Այսինքն՝ «կաման» ավելի հարազատ է, քան՝ «ակաման», որ մարդու էությունն է: Այս դեպքում կարելի է ասել, որ «կաման» հաղթում է «ակամային» և այն ամենը ինչ բնական է և կամա՝ պարտադիր չէ, որ լինի արմատական ու հիմնավոր:

Իսկ ի՞նչպիսին են հաղթանակի հաճույքն ու պարտության տխրությունը: Պարզ է դառնում, որ մարդու հոգու խորքում կա ինչ որ մի բան, որը հաղթանակի ժամանակ նրան ուրախություն պատճառում, իսկ պարտության՝ ցավ: Ուրեմն, մարդու ներաշխարհում գոյություն ունի մի դատապարտող ուժ: Ինչևէ, սա էլ Կանտի տեսանկյունն ու ևս մեկ վարկած է:

**Հեռատես մտքի տեսությունը**

Հաջորդ տեսությունը, որը պաշտպանում են նյութապաշտների մեծ մասն ու մասնավորապես Ռասելը՝ անհատական մտքի կամ հեռատես մտքի տեսությունն է: Վիլ Դորանտն իր «Փիլիսոփայության քաղցրություն» գրքում մեկնաբանում է ողջամտության և զգոնության բնագրը: Ռասելի կողմնակիցներն ասում են, որ բարոյական խիղճը, մարդասիրական զգացմունքներն ու նմանատիպ բաները պետքական չեն: Բարոյականությունը բխում է մարդու հեռատես մտքից: Եթե մարդը հեռատես լինի, կհաշվարկի, որ իր նմանին սիրելը նպատակահարմար և ձեռնտու է: Ռասելն ասում է. «Օրինակ՝ ես երբեք չեմ գողանա հարևանիս կովը, քանզի գիտեմ, որ այդ դեպքում նա, կամ մեկ այլ հարևան կգողանան՝ ինձ: Կամ չստելն ինձ ձեռնտու է, քանզի հնարավոր է, որ ես սուտ ասելուց որևէ օգուտ քաղեմ, սակայն որևէ սուտ լսելուց իմ վնասները մի քանի անգամ կավելանան: Ուրեմն, ես սուտ չեմ խոսի և որևէ վատ բան չեմ անի, քանզի գիտեմ, որ որևէ վատ բան անելու դեպքում՝ կրկնակին կստանամ: Եկեք պայմանավորվենք միայն ճիշտն ասել, որպեսզի մեզանից ոչ մեկը չտուժի: Երբ մենք ուզում ենք համատեղ մի ձեռնարկություն բացել և համատեղ շահույթ ստանալ, պետք է ազնիվ լինենք: Համատեղ շահերն ու եկամուտը բարոյականություն են ծնում: Ուրեմն, բարոյականությունը բխում է ողջամտությունից»:

Պարոն Մազինին ասում է. «Ինչ որ ժամանակ մենք աշխատում էինք մի կազմակերպությունում: Ռամազան ամիսն էր և երբ առավոտյան հիմնարկ մտա աշխատողներից մեկն ասաց. «Ես շատ վատ բնավորություն ունեմ, երբ ծոմ եմ պահում շատ նյարդային եմ դառնում և չեմ հասկանում, թե ինձ հետ ինչ է կատարվում: Հնարավոր է, որ ձեզ մի այնպիսի

բան ասեմ, որ վիրավորվեք: Ի նկատի ունեցեք, որ ծոմի մեջ եմ և այս վիճակում՝ ինձ ներեք»:

Ես տեսա, որ նա իր վիճակը չարաշահում է և ասացի. «Ինձ հետ էլ է այդպես, պատահում, երբեմն գուցե ավելի վատ: Ես այնքան եմ բարկանում, որ կարող եմ վեր կենալ տեղիցս ու հարվածել ինչ որ մեկին»: Նա մտածեց ու ասաց. «Ուրեմն երկուսս էլ պետք է զգույշ լինենք ու նման բան չանենք»:

Ռասելը նույնպես համակարծիք է ասվածին և գտնում է, որ մարդը խորհում և հասկանում է, որ եթե ցանկանա մեկ ուրիշին վատություն անել, ապա՝ դիմացինը նույնությամբ կվարվի: Արդյունքում տեսնում է, որ վատություն անել պետք չէ: Այս տեսությունում բարոյականությունը կորցնում է իր սրբությունը: Այն սրբության ներքին զգացումը, երբ մարդ որևէ բան կատարում է ոչ թե եսասիրությունից, այլ մարդասիրությունից դրդված: Իսկ Ռասելը պնդում է հակառակը՝ կարևորելով եսասիրությունը: Սա հանդիսանում է վերոհիշյալ տեսության առաջին թերությունը, սակայն հնարավոր է, որ ոմանք պնդեն, որ պետք է իրականությունն ասել և մարդը չպետք է խոսի միայն պատկերացումներով:

### Վերոհիշյալ տեսության քննադատությունը

Հիշյալ տեսության հիմնական թերությունն այն է, որ այն խաթարում է բարոյականության հիմքերը, որոնհետև այս բարոյականությունը գոյություն ունի այնտեղ, որտեղ ուժերը հավասար են: Երբ որևէ հասարակության անհատներն ունենում են հավասարազոր ուժ և ես դիմացիներից վախենում եմ այնքան, որքան նա է ինձանից վախենում, կամ էլ իր հանդեպ այնքան վստահություն ունեմ, որքան ինքն ունի իմ հանդեպ, այս պարագայում բարոյականությունն արդեն ողջախոհություն, զգոնություն, հաշվարկված ու անհատական շահերից բխող բարոյականություն է: Սակայն, երբ մի կողմն ուժեղ է, իսկ մյուսը՝ թույլ և ուժեղը հարյուր տոկոսով համոզված է, որ թույլ կողմը որևէ բան անել չի կարող, որևէ ուժ կամ գործոն չի կարող ուժեղին բարոյականության կոչ անել: Երբ Նիքսոնը հայտնվում էր Բրեժնևի առջև, իսկ մենք գիտենք, որ նրանք հավասար ուժեր էին, դառնում էր բարոյական մարդ և սկսում էր մտածել, թե ինչու նրա երկիրը ռմբակոծի: Չէ՞ որ նա էլ իրենը կռմբակոծի: Սակայն երբ հանդիպում էր խեղճ Վիթ Քենգին, որն իրենից ավելի թույլ էր և համոզված էր, որ Վիթ Քենգը չի կարող իր դեմ պայքարել, ապա արդեն որևէ ուժ կամ խղճի գործոն գոյություն չունեք, որը արգելեր նրան այդ բանն անել: Աստված մի արասցե, բայց Վիթ Քենգը մի օր պետք է նրան իր ուժը ցույց տված լինեք, քանզի մինչև որևէ գործի մեջ ուժ չլինի, խիղճ ևս չիմել չի կարող:

Այս պատճառով էլ Ռասելն իր խաղաղասիրության ու մարդասիրության բոլոր կոչերով հանդերձ հակաբարոյական փիլիսոփայական տեսության ջատագով է: Նրա փիլիսոփայության մեջ ուժեղը թույլին չճնշելու և նրա հանդեպ բռնություն չգործելու որևէ պատճառ չունի: Դա պայմանավորվում է նրանով, որ այն հիմնված է անհատական խելքի և զգո-

նության վրա և բռնությունը չի իրականացվում միայն այն դեպքում, երբ ուժերը հավասար են: Իսկ այնտեղ, որտեղ ուժերը հավասար չեն, մարդկային խելքը երբեք նման բան չի թելադրում:

### Մտավոր գեղեցկություն

Գոյություն ունի ևս մեկ տեսություն, որը տրամաբանական տեսության ձևերից է և անհատական խելքի խնդիր չի պարունակում: Այս տեսությունը նշում է, որ գեղեցկությունը չի սահմանափակվում միայն զգայական ու շոշափելի գեղեցկությամբ: Գոյություն ունի նաև հոգևոր գեղեցկություն: Հոգևոր և բանական գեղեցկությունը շոշափելի և արտաքին գեղեցկության նման պայմանավորվում է ներդաշնակությամբ: Մարդն ականաջից սիրահարվում է գեղեցկության և վայելչագեղության վրա: Ասում են, որ բարոյական գործերը գեղեցիկ են, իսկ խելքի գեղեցկությունը բխում է ներդաշնակությունից:

Բարոյագետներն ասում են, որ բոլոր բարոյականությունների արմատը «արդարությունն» է: Նրանք արդարությունը բացատրում են ներդաշնակությամբ, բարոյագիտությունը դնելով մեջտեղում: Այսինքն՝ ներդաշնակ և համաչափ բարոյականություն: Եթե մարդու աչքի մեկը մեծ է, իսկ մյուսը՝ փոքր, այդ մարդն անկասկած տոգել է: Սակայն, երբ երկուսն էլ համաչափ են ու միանման, նա առավել գեղեցիկ է: Ընդհանուր առմամբ մարդու մարմնի գեղեցկության տեսանկյունից յուրաքանչյուր անդամի համար տարբեր ձևակերպումներ և չափանիշներ են օգտագործվում, որոնք հնարավոր չէ մանրամասը բացատրել: Սակայն, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ այս ձևակերպումներն ու ներդաշնակությունը կիրառված է նաև մարդու հոգևոր և ներքին հատկությունների առումով, որոնց առկայության դեպքում մենք գործ ունենք մի առավել գեղեցիկ էակի հետ: Օրինակ ո՞րն է ավելի լավ, մեղմ, թե՞ կոպիտ բնավորությամբ օժտված մարդը: Այդ մեղմի և կոպտության միջև գոյություն ունի միջանկյալ վիճակ, որի դեպքում մարդն այնքան կոպիտ չէ, որ ուրիշներին նեղություն տա, սակայն այնքան էլ մեղմ չէ, որ ուրիշները նրան նեղացնեն:

Երբ մարդը գտնվում է նմանտիպ «միջին» իրավիճակում, բոլորը նրան սիրում են: Մենք սիրում և հարգում ենք լավ, բարոյական, արդար, իրենց մարմնային հաճույքներին ու ցանկություններին տիրապետող մարդկանց և երբեմն սիրահարվում ենք: Այս խմբի համոզմամբ լավ մարդկանց հանդեպ հարգանքի այդ զգացումն ինչ որ տեղ վայելչապաշտություն է: Նրանց կարծիքով բարու արարման կամ բարոյական գործողությունների արմատը գեղեցկությունն է, իսկ գեղեցկության արմատը՝ համաչափությունը: Այս պատճառով էլ լավ ու բարոյական վարքագիծ ունենալու կապակցությամբ ասում են, որ գերազանց ու բարոյական վարքը կայանում է այն ժամանակ, երբ բնագոյներն ու ուժերը չեն հասնում ծայրահեղ դրական կամ բացասական աստիճանի: Ուրեմն, վերջիններիս կարծիքով, չափանիշը գեղեցկությունն է, իսկ գեղեցկության հիմքը՝ համաչափությունը: Սա պայմանավորվում է այն փիլիսոփայական ու հոգեբանական հիմքով, ըստ որի գեղեցկությունը չի սահմանափակվում միայն

մարմնական ու շոշափելի գեղեցկությամբ: Գոյություն ունի նաև հոգեկան ու ներքին գեղեցկություն, որն իր հերթին պայմանավորվում է նրանով, որ գեղեցիկ ու բարոյական վարքով օժտված մեկին տեսնելիս մարդիկ տարվում են նրանցով և սիրահարվում: Ինչո՞ւ են մարդիկ սիրում Մարգարեներին: Սերն առանց գեղեցկության հնարավոր չէ: Անպայման նրանց մեջ ինչ որ գեղեցկություն գոյություն ունի:

Վիլ Դորանտն իր «Փիլիսոփայության քաղցրություն» գրքում մեջբերում է Պլատոնի այս նախադասությունը. «Ողջախոհությունը զգոն գործողությունների մեջ չէ, այլ՝ անհատի գործունեության մեջ առկա գեղեցկության և համաչափության մեջ»: Այլ կերպ ասած՝ ողջախոհությունը մարդկային գործողությունների և վարք ու բարքի համաչափությունն ու ներդաշնակությունն է: Որևէ անհատի կամ հասարակական գործի բարիքը ոչ թե բարոյական կարողությունների ու զգոնության մեջ է, այլ՝ գործողությունների ներդաշնակության: Սա շատ հիանալի արտահայտություն է: Սա բարոյական գործողությունների մեկնաբանության ևս մի տեսակետ է, որի գործողության գործակիցը մարդու մեջ վայելչասիրության զգացումն է: Այս դեպքում, իհարկե, հաշվի պետք է առնել այն հանգամանքը, որ մարդու կողմից գեղեցիկի ընկալումը չի սահմանափակվում միայն մարմնական ու արտաքին գեղեցկությամբ:

### Կրոնը՝ որպես բարոյականության իրագործման միակ երաշխիք

Այստեղ առաջանում է մի հարց, արդյո՞ք բարոյականությունը առանց կրոնի կարող է գոյություն ունենալ, թե՛ ոչ: Եթե անգամ գոյություն էլ ունենա, միևնույնն է բարոյականության ուժն ու սատարողը կրոնն է: Ոմանք, անգամ իրենք՝ եվրոպացիները, այն կարծիքին են, որ բարոյականությունն առանց կրոնի հիմք չունի: Ռուս մեծ գրող Դոստոևսկին ասել է. «Եթե Աստված չլիճի, ամեն ինչ թույլատրելի կդառնա»: Այստեղ նա ի նկատի ուներ այն, որ ուրիշ որևէ միջոց, որը կկարողանա կանխել ու սաստել մարդու ոչ բարոյական գործողությունները, գոյություն չունի: Այս առումով Դոստոևսկին չի ընդունում Կանտի և ուրիշների տեսակետը և երբ գրում է. «Եթե Աստված չլիճի», նա ի նկատի ունի «Եթե կրոնը չլիճի» գաղափարը:


Փորձը ցույց է տվել, որ կրոնը բարոյականությունից առանձնացնելու դեպքում, վերջինս շատ հետ է մնում: Ոչ կրոնական բարոյագիտական ուղղություններից որևէ մեկի գործունեությունը հաջողությամբ չի պսակվել: Անվիճելի է, որ կրոնն անհրաժեշտ է որպես մարդկության բարոյականությունը սատարող միջոց: Այս առումով տեսաբանները բարձրաձայն աղաղակում են, տարբեր մեկնաբանություններ տալիս՝ ասելով, որ մարդկությունը քաղաքակրթության ու արդյունաբերության ասպարեզում ունեցած առաջընթացի հետ մեկտեղ բարոյականության առումով անչափ հետ է մնացել: Իսկ ինչո՞ւ: Քանի որ գոյություն չի ունեցել բարոյագիտական ուղղություն: Վաղուց գոյություն ունեցող բարոյագիտական գաղափարախոսությունն ու ուղղությունը զուտ կրոնական էր: Եվ գործնականում նկատվում է, որ կրոնի ու հավատքի թուլացման հետ մեկտեղ

նահանջել է նաև մարդկության բարոյականությունը: Այս իսկ պատճառով էլ մենք հավատքը պետք է համարենք գերագույն արժեք այն պատճառով, որ այն հանդիսանում է եթե չասենք միակ երաշխիք, ապա՝ որպես բարոյականությունը սատարող կարևոր միջոց:

Հաջորդ խնդիրը բարոյականության հարաբերականությունն է: Այսինքն՝ բարոյականությունն անկախ է, թե՛ հարաբերական: Արդյո՞ք հնարավոր է, որ ինչ որ բան ոմանց համար բարոյական լինի, իսկ այլոց՝ ոչ: Կամ ինչ որ ժամանակ այն համարվի բարոյական, իսկ որոշ ժամանակ անց՝ հակաբարոյական: Եթե այսպես շարունակենք, ապա կստացվի բարոյականության հերքման նման մի բան, այսինքն՝ բարոյականությունը կվերածվի փոփոխական ու ամորֆ մի երևույթի, որը ոչ մի տեղ կայուն վիճակ չունի: Ոմանք համոզված են, որ բարոյականությունը հարաբերական է, այն միշտ շարժման մեջ է և հատկապես կախված է տնտեսական փոփոխություններից: Որսորդական շրջանի բարոյականությունը միշտ էլ տարբերվել է գյուղատնտեսական շրջանի բարոյականությունից, որն իր հերթին տարբերվում է արդյունաբերական և ավտոմատացման շրջանից: Նրանք համոզված են, որ կնոջ և տղամարդու հարաբերության, պատվի և նամուսի, ինչպես նաև բազմաթիվ նմանատիպ հարցեր պատկանում են գյուղատնտեսական շրջանի բարոյականությանը, իսկ արդյունաբերական շրջանը ձևավորում է մեկ այլ բարոյականություն: Այս փաստի մասին է վկայում նաև Մեծ Մարգարեի ասածը, որում նշվում էր. «Ձեր երեխաներին մի դաստիարակեք ձեր բարոյականության համաձայն, քանզի նրանք պատկանում են մեկ ուրիշ ժամանակաշրջանի»: Եթե մենք ընդունենք այս նախադասությունը նույն իմաստով, ուրեմն քարը քարին դնել հնարավոր չի լինի:

Հաջորդ խնդիրը, որը կապված է բարոյականության հարաբերականության հետ՝ դաստիարակությունն է, քանզի եթե բարոյականությունը հարաբերական լինի, ապա՝ մենք չենք կարող դաստիարակության համար ճշգրիտ ու հաստատուն սկզբունքներ առաջարկել:





## **ՄԱՍ VII**

*Բարոյական գործողություններ Գ*

## Հանուն Ողորմա՞ծ Է՝ Բարեգու՞ր Ընտրա՞ծ»

Չնայած այն բանին, որ մենք պետք է ավարտեինք «բարոյական»-ի ու «բնական»-ի տարբերությանը վերաբերվող քննարկումներն ու անդրադառնայինք բարոյականության հարաբերականության խնդրին, սակայն բախվեցինք այնպիսի հարցերի հետ, որոնց բացատրությունն անհրաժեշտ էր: Ուստի ստիպված ենք շարունակել վերոհիշյալ խնդիրը: Ընդհանուր առմամբ ներկայացվեցին այնպիսի տեսակետներ, որոնք առավել մանրամասնորեն լուսաբանելու կարիք ունեն: Նշվածներից բացի կներկայացվեն նաև նոր տեսակետներ:

Դաստիարակության խնդիրը քննարկող յուրաքանչյուր ոք պետք է ուսումնասիրի այն, որպեսզի կարողանա բացահայտել մարդու բարոյական գործողությունների հիմքերն ու արմատները: Ներկայացված տեսակետները կրողների մի մասը բարոյական գործողությունների չափանիշ է համարում ուրիշներին օգտակար լինելը, իսկ ոմանց կարծիքով բարոյական են այն գործողությունները, որոնք բխում են մարդասիրական զգացմունքներից: Կա նաև կարծիք, որ բարոյական են բնական զգացումներից չզրդված գործողությունները: Իրականում այս երեք խմբերն էլ բարոյական գործողությունները դիտարկում են սիրո և հոգածության տեսանկյունից: Իմ կարծիքով այս հարցի վրա է առավելապես կենտրոնանում է հնդկական բարոյագիտությունը:

Հիշյալ ուղղություններից շատերը հենվում են գեղեցկության վրա և

բարոյականության խնդիրը քննարկում գեղեցկության դիտանկյունից: Սակայն այստեղ ևս մենք տեսնում ենք երկու մոտեցում, որոնք էլ փաստում են, որ գեղեցկությունը չի սահմանափակվում միայն շոշափելի, տեսողական և արտաքին տարրերով, որոնք կոչվում են վիզուալ գեղեցկություն և գրավում են մարդուն: Այդ խնդիրը քննարկողները համոզված են, որ յուրաքանչյուր ոք օժտված է նաև հոգևոր և ինտելեկտուալ գեղեցկությամբ, որոնք նույնպես վայելչության ու հմայքի բաղկացուցիչներ են, սակայն ոչ ակնառու: Հիշյալ երկու խումբն էլ համամիտ է, որ գեղեցկությունը չի սահմանափակվում արտաքին հմայքով և բարեկրթությունը նույնպես գեղեցկություն է: Նրանցից մեկը գեղեցկությունը համարում է վարքագծի հատկացուցիչ և նշում, որ որոշ գործողություններ իրենց էությամբ արդեն իսկ գեղեցիկ են: Օրինակ՝ ճշմարտախոսությունն անչափ գեղեցիկ երևույթ է և ունի ձգողական ուժ, որը ձգում է և ճշմարիտը խոսողին, և այն լսողին: Սրանցից են նաև համբերությունը, ինքնատիրապետումը, կայունությունը, արդարությունը, գոհությունն ու փառաբանությունը: Այս բոլոր որակներն օժտված են յուրահատուկ հոգևոր գեղեցկությամբ և գրավում են մարդկանց: Հիշյալ հատկություններով օժտված մարդը դեպի իրեն է ձգում այլոց, որոնք դառնում են նրա հետևորդը, սկսում են նրան սիրել: Նրանց մեջ ինչ որ բան մեզ գրավում է և նրանք, ովքեր օժտված են նման հատկություններով, ինքնին գեղեցկանում են: Երբ մարդ գեղեցիկ հագուստ է հագնում՝ գեղեցկանում է: Գեղեցիկ արարքները նույնպես նման են գեղեցիկ հանդերձանքի և մարդուն ավելի են գեղեցկացնում՝ քան զարդերը և հրաշալի հագուստները: Այսպիսով, նրանց կարծիքով բարոյական արարքները գեղեցիկ են և մարդը հոգևոր գեղեցկության ընկալմամբ զգում է դրանք: Գեղեցիկի չափանիշը դրված է մարդու մեջ և հանդիսանում է նրա գեղագիտական ընկալման ոգին:

### Գեղեցիկ հոգի

Մեկ այլ խումբ ևս բարոյականությունը որպես երևույթ դիտում է գեղեցկության տեսանկյունից, սակայն գեղեցկությունը կապում է մարդու հոգու հետ՝ ասելով. «Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր տեղ, որտեղ գոյություն ունի համաչափություն, գոյություն ունի նաև գեղեցկություն և միասնություն: Այսինքն՝ առանձին մասերը ներդաշնակ կերպով կապված են ընդհանուրի հետ»: Ի նկատի ունեն օրինակ այն, որ մարդու մարմնի մասերը համաչափորեն դասավորվելով՝ առաջացնում են գեղեցիկ և վայելչագեղ իրան, որը գրավում է մարդուն: Մարդու արտաքին գեղեցկությունը ոչ այլ ինչ է, քան՝ մարմնի համաչափություն: Այսպես է նաև մարդու ներաշխարհի ու հոգևոր ունակությունների առումով: Մարդը գեղեցիկ ու ներդաշնակ հոգու տեր է այն ժամանակ, երբ նրա ներքին զգացումներն ու հոգևոր ունակությունները հարաբերականորեն համամասնական են: Ասում են, որ մարդու մեջ ամենայն ինչ սահմանված չափ ունի, որից ավելի չափազանցություն է, իսկ պակասը՝ թերություն: Օրինակ՝ մարդու աչքն ունի որոշակի չափ և ավելի մեծ կամ փոքր լինելու դեպքում տգեղ է: Կամ էլ մարդն օժտված է որոշակի էմոցիոնալ վիճակով, որի

ավել կամ պակաս լինելն անդրադառնում է նրա հոգեկան հավասարակշռության վրա: Սակայն այստեղ հարցը նրանում է, թե մենք ինչպե՞ս պետք է գտնենք այդ չափորոշիչներն ու ինչպե՞ս գտնենք ոսկե միջինը: Օրինակ, ինչպիսի՞ն է մարդու աչքի միջին չափը:

Այստեղ երկու պատասխան կա: Մեկն այն է, որ գեղեցկությունն ընդհանրապես ոչ մի կերպ չի մեկնաբանվում, հատկապես արտաքին գեղեցկությունը: Երբ ինչ որ մեկը տեսնում ու սիրահարվում է մյուսին, ապա վստահ ենք, որ ոչ ոք նրան նախապես չի բացատրել, թե ինչպիսի աչքերն են գեղեցիկ և ինչպիսի հոնքերը և այլն: Սա այնպիսի մի բան է, որն ընկալում է նրա ներքին տեսողությունը և գերվում է նրանով՝ նախքան այն մեկնաբանելը: Սա նրա համար գիտակցության խնդիր է: Այսպիսին է նաև գիտակցության գեղեցկությունը:

### **Բարձրագույն նպատակի սկզբունքը՝ որպես բարոյական միջին նորմերի սահմանման հիմք**

Վերոհիշյալ մոտեցումից բացի գոյություն ունի նաև մեկ այլ մեկնաբանություն, որի համաձայն բարձրագույն և վեհ նպատակի խնդիրը գեղեցկության զգացումից մեկ աստիճանով վեր է, քանզի յուրաքանչյուր ունակություն և ուժ ստեղծված է որոշակի նպատակով, իսկ դրանց ընդհանրությունը ծառայում է ամենաբարձր ու վերջնական նպատակին: Եթե մենք ցանկանում ենք հասկանալ, թե մարդկային որևէ հնարավորություն կամ կամք ինչպիսի չափերի մեջ է, միջին, չափազանցված, թե թերազնահատված, ապա՝ պետք է նախ և առաջ բացահայտենք, թե ինչ նպատակով են ստեղծված դրանք: Միջին նորմերը հենց դրանք են, ինչի համար, որ ստեղծված են այդ ուժերը կամ ունակությունները: Դրանից ավելին չափազանցություն է, իսկ պակասը՝ թերություն: Օրինակ՝ բարկության զգացումը մարդու մեջ հենց այնպես չի դրված: Եթե մարդու մեջ այդ զգացումը չլիներ, մարդն ինքն իրեն երբեք չէր պաշտպանի, իսկ եթե մարդկանցից, կենդանիներից ու բնությունից չպաշտպանվեր՝ ոչնչացման կդատապարտվեր: Ուստի, անհրաժեշտ էր, որ մարդն օժտվի այդ զգացումով: Ոմանք համոզված են, որ ջրի մեջ մարդը դեպի հատակն է սուզվում իր մարմնական հաճելի ցանկությունների ուժի օգնությամբ, իսկ ջրի երես է բարձրանում բարկության ուժի շնորհիվ: Նա ջրի հատակն է սուզվում իր ցանկությունից ելնելով և ջրից հաճույք ստանալու նպատակով: Սակայն որոշ ժամանակ այստեղ մնալուց հետո շնչահեղձ է լինում և պաշտպանվելու անհրաժեշտություն զգում: Բարկության ուժը ստիպում է նրան ջրից դուրս գալ: Եթե այդ ուժը չլիներ, մարդը կսուզվեր ջրի հատակն ու կխեղդվեր, չկարողանալով իրեն պաշտպանել: Այսինքն, նա զրկված կլիներ իրեն պաշտպանելու բնազդից: Այսպիսին են նաև մարդու մյուս պաշտպանական բնազդները, իսկ ինչ վերաբերվում է բարկությանը, ապա բարկության միջին նորմեր են համարվում մարդու ինքնապաշտպանության ձգտումը, որի պակասի դեպքում մարդը դառնում է առավել տկար և խոցելի, իսկ չափազանցության դեպքում՝ հարձակողական ու կռվարար: Այդ ուժը նրա համար չէ, որ մարդը հարձակվի ուրիշ-

ների վրա, կամ չկարողանա ինքն իրեն պաշտպանել:

Չետաքրքիր է սեռական բնազդը: Իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ դրա նպատակը միայն սերնդի շարունակությունը չէ: Իհարկե կենդանիների մոտ այդպես է, սակայն մարդկանց մոտ, համատեղ ապրող զույգի միջև Ղուրանի համաձայն պետք է գոյություն ունենա փոխադարձ մտերմություն, սեր և օրհնություն, որոնք էլ պետք է հանդիսանան ընտանիքի հիմքն ու նորմերը: Ընտանիք, որում պետք է ծնվեն և դաստիարակվեն նոր սերունդներ: Սա արարման աստիճաններից մեկն է: Սեռական բնազդի միջին նորմը այն է, որ պետք է այն ծառայի հենց այդ նպատակին: Եվ խրախուսելի չեն նրա ոչ չափից ավելի չարաչափումը և ոչ էլ չափից ավելի ժուժկալությունը, որը կարող է համարվել թերություն: Մարդու մյուս բնազդների ու ցանկությունների խնդիրը նման է ասվածին:

Այս տեսությունը պնդում է, որ եթե մարդուն տրված ուժերը լինեն որոշակի չափերի սահմաններում, ապա՝ մարդը հոգեպես անչափ գեղեցիկ, իսկ հակառակ դեպքում՝ անչափ տգեղ կլինի: Այս և գեղեցկությունը վարքի հատկանիշ համարող տեսությունների տարբերությունը կայանում է նրանում, որ վերջինս հավաստում է, որ մարդը գեղեցկանում է իր արարքների արդյունքում և որ գեղեցիկ ձգտումներն ու ցանկությունները նույնպես գեղեցիկ են: Սակայն մյուս տեսությունը պնդում է, որ գեղեցիկը մարդու հոգին է և գեղեցիկ վարքը թելադրվում է գեղեցիկ հոգու կողմից: Ուրեմն մի տեսանկյունից մարդը գեղեցկանում է իր գործունեությամբ, իսկ մյուս կողմից՝ մարդն է գեղեցկացնում իր վարքագիծը: Այնուամենայնիվ այս երկու տեսություններում էլ շեշտը դրված է գեղեցկության վրա, իսկ բարոյականը դիտարկվում է գեղեցիկի տեսանկյունից: Բարոյական արարմունքները լավն են այն առումով, որ գեղեցիկ են, իսկ մարդն օժտված է գեղեցիկի ընկալման բնազդով և գեղեցիկը չի սահմանափակվում միայն արտաքին ու մարմնական հմայքով: Այն իր մեջ ներգրավում է նաև մարդու մտավոր գեղեցկությունը:

### **Չոգու և գիտակցության գերիշխում**

Կա ևս մի տեսություն, որը վերաբերում է մարմնի հանդեպ ունեցած հոգու անկախությանը: Այն հիմնված է հոգու և մարմնի երկվության (դուալիզմի) վրա, որի համաձայն մարդը երկու նյութի միաձուլումից բաղկացած մի էություն է, որոնցից մեկը հոգին է, իսկ մյուսը՝ մարմինը: Կարծես այս երկու սկիզբը ինչ որ կերպ կապված են, սակայն գոյություն ունի երկվության խնդիրը: Չոգու կատարելության դեպքում այն կամ բոլորովին չպետք է հայտնվի մարմնի ազդեցության ներքո, կամ այդ ազդեցությունը պետք է լինի նվազագույն: Այս տեսության հետևորդների կարծիքով հոգին կառավարվում է վերևից և ոչ թե մարմնից, որ ցածր ոլորտում է: Նրանք համոզված են, որ այն դեպքում, երբ մարդու մեջ բոլոր զգացումներն ու ունակությունները հավասարապես են բաշխված, հոգին պահպանում է իր անկախությունը մարմնի հանդեպ և կարող է անգամ գերիշխել: Սակայն այս դեպքում ոչ մարմինը, և ոչ էլ հոգին չեն հաղթանակում



և հոգին կարող է ազատ, անկախ և թելադրող լինել: Եթե կողմերից մեկն ավելի հզոր է լինում, ապա՝ անպայման ազդում է մյուսի վրա: Քննարկողները համոզված են, որ հոգու լավագույն վիճակն այն է, երբ վերջինս հնարավորինս քիչ հայտնվի մարմնի ազդեցության ներքո: Որքան շատ լինի անկախության աստիճանը, այդքան՝ լավ: Իսկ հոգին մարմնի հանդեպ իր անկախությունը կարող է պահպանել միայն այն դեպքում, երբ մարդու ուժերն ու կարողությունները հավասարազոր լինեն: Մարդու զգացմունքները պետք է կառավարվեն հոգու և գիտակցության կողմից, հակառակ դեպքում մարդը կդառնա մոլեռանդ, ցանկասեր, զավթիչ, որովայնամուլ կամ ...: Այս դեպքում արդեն հոգու և գիտակցության գործոններն անզոր են, քանզի հոգին ենթարկվում է մարմնային ցանկասիրությունների ու դառնում դրանց գերին:

Այս տեսությունը ուժերի ու զգացումների հավասարակշռության կողմնակիցն է, սակայն ոչ այն պատճառով, որ այդ հավասարակշռությունը գեղեցիկ է, այլ այն՝ որ հիշյալ հավասարակշռությունը նպաստում է հոգու և խելքի անկախությանն ու թելադրանքին, ինչպես նաև՝ հավասարակշռված բարոյականությանը: Հավասարակշռված բարոյականությունը բխում է մարմնի հանդեպ գիտակցության անմիջական գերիշխումից: Հնում մարդու հոգու նյութ էր համարվում միայն խելքի ուժը: Նրանք մյուս բոլոր ուժերն ու զգացմունքները համարում էին նյութեղեն և մարմնակա՛ն, անգամ երևակայելու կարողությունը: Նրանց համոզմամբ մարդու մահանալուց հետո պահպանվում է միայն նրա հոգեղեն նյութը, որը հենց գիտակցությունն է, իսկ մյուս զգացմունքներն ու կարողությունները, որոնք ենթարկվում են մարմնին՝ ոչնչանում են: Սակայն Մուլա Սադրան համոզված է, որ այդպես չէ: Նրա տեսության համաձայն բարոյականությունը դիտարկվում է ոչ թե սիրո և գեղեցկության, այլ՝ խելքի ազատության ու անկախ կառավարվելու տեսանկյունից, որի դեպքում վերակունգնվում է բարոյականության հոգին և մարմինը կառավարվում է խելքի ու գիտակցության կողմից: Այս դեպքում գիտակցությունն ազատվում է մարմնական ուժերից:

Հաջորդ տեսությունը, որը Կանտին է պատկանում հավաստում է, որ բարոյականությունը կապ չունի սիրո, գեղեցկության ու խելքի հետ: Նրա համոզմամբ մարդու մեջ դրված է բարոյական խիղճ, որով էլ պայմանավորվում է նրա բարոյականությունը: Բարոյական խիղճը մի ներքին հզոր և ազդեցիկ ուժ է, որը կառավարում է մարդուն: Ասում են, որ բարոյականության զգացումը մի առանձին զգացում է, որը կապ չունի բարեկամության, սիրո, գեղեցկության ու խելքի հետ: Դա խղճի խայթն է, որով օժտված է յուրաքանչյուր մարդ: Այս զգացումն ամբողջովին անկախ է մյուսներից և առանձին խնդիր է, խղճի խնդիր, որը բխում է մարդու խղճմտանքից:

Եւրկայացված հաջորդ տեսակետը, որը հիմնովին հերքում է վերոհիշյալ բոլոր կարծիքները բառերը, չի ընդունում մարդու մեջ մարդասիրական զգացմունքները, հոգևոր և ներքին գեղեցկությունը, մարմնից անկախ գիտակցությունն ու բարոյական խիղճը: Այն ընդունում է միայն ամբողջական անհատականությունը և պնդում, որ մարդն իր բնույթով շա-

համոլ է և առանց անձնական շահի որևէ բան չի անում: Նա օժտված է խելքով, որը նրան առաջնորդում է դեպի անձնական եկամտի առավել հեշտ ու կարճ ճանապարհները: Իսկ երբ մարդու խելքն ավելի է կատարելագործվում, ապա նա սկսում է զբաղվել հանրօգուտ գործերով, որոնց իրագործման բուն նպատակն ու դրդողը դարձյալ անձնական շահն է: Այս ամենը պայմանավորված է նրանով, որ մարդն ի սկզբանե ստեղծված է շահամոլ և աշխատում է հնարավորինս շատ օգուտ ստանալ, իսկ վնասների դեպքում ընտրել նվազագույնը: Նա միշտ տատանվում է եկամուտների ու վնասների միջև և աշխատում է ընտրել համեմատաբար ավելի օգտակարը: Մարդը խելքի միջոցով հասկանում է, որ առանց հասարակության անդամների հասարակական կյանք լինել չի կարող և եթե ուզում է ապրել հասարակական կյանքով և օգուտ ստանալ՝ ապա լավագույն միջոցը այլոց իրավունքները հարգելն է: Այս պարագայում մարդն ամեն կերպ աշխատում է ուրիշներին օգուտ տալ, կամ գոնե չվնասել, քանզի գիտակցում է, որ ուրիշներն էլ նմանապես կվարվեն և կաշխատեն իրեն օգտակար լինել և կանխել վնասները: Ուրեմն, բարոյական գործողություններն այն գործողություններն են, որոնք թելադրվում են ավելի շատ խելքի կողմից, երբ մարդուն առաջնորդում է խելքն ու թելադրում, որ եթե մարդ ցանկանում է շատ եկամուտ ունենալ, ապա դա պետք է անի հասարակական շահերին զուգընթաց: Այս դեպքում մարդը պետք է իր եկամուտները համաձայնեցնի հասարակական շահերի հետ, որի արդյունքում մարդու եկամուտներն ավելի մեծ կլինեն: Այս տեսության համաձայն բարոյականությունը դիտարկվում է խելքի տեսանկյունից. խելք, որը նպաստում է մարդու շահերին: Այսինքն, անհատական խելքը գալիս է այն եզրահանգման, որ անհատի շահերը բխում են հասարակության շահերից: Շատերն են այսպես կարծում և դրանցից մեկն էլ Ռասելն է իր «Իմ ճանաչած աշխարհը» գրքով:

Վերոհիշյալ գաղափարի ամենամեծ թերությունն այն է, որ մարդն իր բնույթով կազմված չէ չափազանց փոքր ու մեծ ծայրահեղություններից: Վերոհիշյալ գաղափարի հավաստմամբ մարդն առաջնորդվում է միայն անձնական շահերով և եթե նրա խելքը նրան հուշի, որ որևէ մեկի իրավունքները ոտնահարելով ու նրան կեղեքելով ավելի մեծ օգուտ կարող է ստանալ, ապա նա անպայման կընտրի այդ ճանապարհը: Այստեղից հետևություն, որ այս գաղափարը չի կարող ճիշտ լինեն: Ոմանք կարող են մտածել, որ բարոյականությունը սկզբունքորեն սխալ է մարդկության համար, սակայն եթե որևէ մեկը Ռասելի նման հայտարարի, որ բարոյականության համար մի նոր սահմանում է գտել՝ որտեղ հասարակական բարոյականությունը տեղ չունի, ապա անկասկած սխալվում է:

### **Տարբեր ուղղությունների դաստիարակության մեթոդները**

Հիմա եթե հաշվի առնելով նշված բոլոր ուղղությունները, ցանկանանք բարոյապես ճիշտ դաստիարակել անհատներին և հասարակությանը, ըստ որոշ գաղափարախոսությունների պետք է աշխատենք զարգացնել նրա մեջ մարդասիրական զգացումները: Որոշ ուղղություններ ասում են,

«Քանի որ բարոյականության հիմքը մարդասիրական զգացումներն են, պետք է զարգացնել այդ զգացումներն ու վերացնել բարկությունն ու թշնամանքը»: Այն ուղղությունը, որը համոզված է, որ բարոյականությունը պայմանավորվում է գեղեցկությամբ, պնդում է, որ մարդու մեջ պետք է զարգացնել գեղեցիկի ընկալման ունակությունը, իսկ բարոյական գեղեցկությունները ներդաշնակ են հոգուն: Այն ուղղությունը, որը համոզված է, որ բարոյականության հիմքը անկախ խիղճն է, պնդում է, որ պետք է զարգացնել հենց խիղճը: Վերջիններս համոզված են նաև, որ յուրաքանչյուր բնագոյ և արարմունք հաճախ կրկնելու դեպքում զարգացնում է խիղճը, որի զարգացնելու համար անհրաժեշտ է առավելագույնս բարի գործեր կատարել:

Նրանք, ովքեր հավատում են վերացական հոգուն, պնդում են, որ եթե մարդը ցանկանում է բարոյականության նոր և ճշգրիտ նորմեր ստեղծել, պետք է մարդկությանը սովորեցնի, որ մարդն ունի հոգի և մարմին և որ նրա հոգու կամքը մարմնի կամքից անկախ է: Մարդու մահը մարմնի մահն է, սակայն հոգին մնայուն է: Ուստի դաստիարակության հիմքերը պետք է սկսվեն անկախ հոգուց: Նա, ով հավատացած է, որ բարոյականությունը հենց ինքը խելամտությունն է, նա համոզված է, որ մարդկանց պետք է կրթել և սովորեցնել այնպես, որ իրենց անձնական շահերը պայմանավորեն հասարակական շահերով և որ դրանք հարգեն:

Այս ամենից գալիս ենք այն եզրահանգման, որ տարբեր ուղղություններ ու գաղափարախոսություններ առաջարկում են դաստիարակության տարբեր մեթոդներ:

### **Կրոնական բարոյականություն**

Հաջորդ խնդիրը կայանում է նրանում, որ ո՞մանք հայտարարում են, որ բարոյական գործողությունները հավասարազոր են կրոնական գործողություններին: Սա ևս մեկ ուղղություն է, որի ընդունման դեպքում վերոհիշյալ բոլոր տեսակետներն ու համոզմունքները սխալ են դուրս գալիս: Այսպես՝ յուրաքանչյուր կրոնական գործողություն բարոյական է, իսկ հակառակը՝ ոչ բարոյական: Այս պարագայում մենք առնվազն ի նկատի ունենք որոշ կրոնական գործողություններ: Այնպիսի կրոնական գործողություններ, որոնց օգուտն անճանաչ է: Սակայն գործողության բարոյական լինելու արմատն, այնուամենայնիվ, նրա կրոնական լինելն է: Ուրեմն, ստացվում է, որ մենք չենք կարող գիտական, փիլիսոփայական ու գիտակից բարոյականություն ունենալ: Մենք պետք է ունենանք միայն կրոնական բարոյականություն:

Սա կարելի է մեկնաբանել երկու ձևով: Մեկնաբանության առաջին վարկածի կողմնակիցներից էր Վիլ Դորանտը: Ըստ նրա հին բարոյագիտությունը կրոնական էր և հիմնված էր մեկ այլ աշխարհի հանդեպ ունեցած վախի ու սպասելիքների վրա: Օրինակ՝ նա ասում էր. «Մի ստիր և ճիշտն ասա, որովհետև եթե ստես, հանդերձյալ աշխարհում տանջանքների կենթարկվես: Ճշտապահ եղիր, որպեսզի այն կյանքում պարգևներ ստանաս»: Այս տեսությունն անչափ նման է Ռասելի տեսությանը: Ռա-

սելն ու նրա համախոհները համոզված էին, որ մարդու հոգու մեջ բարոյականության որևէ սաղմ գոյություն չունի: Նա ստեղծված է շահամոլ և անձնական եկամուտ հետամտող գործողություններից բացի որևէ այլ գործողություն չի կատարում: Իսկ եթե անչափ խելացի գտնվելով կատարում է որևէ այլ բան, ապա՝ նա գիտակցում է, որ իր անձնական շահերը բխում են այլոց շահերից: Վիլ Դորամտի տեսությունը նույնպես պնդում է, որ մարդը ստեղծված է շահամոլ և նրա բարոյական գործողությունները ևս հետապնդում են օգուտ ստանալու նպատակներ: Սակայն, այս դեպքում մարդն առաջնորդվում է ոչ թե գիտակցությամբ և խելամտությամբ, այլ՝ հավատքով: Նրան պետք է ասել. «Ով մարդ, դու, որ միայն շահ ես փնտրում, եթե այս բանն անես, կվնասվես, իսկ եթե այն բանը՝ հանդերձյալ աշխարհում մեծ եկամուտ կստանաս»: Ուրեմն, այստեղ կրկին օգտագործվում է նրա շահախնդրության խթանը, որտեղ որևէ գործի իրականացման գրավական են հանդիսանում հանդերձյալ աշխարհի նկատմամբ ունեցած մարդու վախն ու ակնկալիքները:

Հաջորդ մեկնաբանության համաձայն կրոնը ցանկանում է կիրառել մարդու ոչ թե շահադիտական, այլ՝ աստվածապաշտական զգացումները, որոնցով յուրաքանչյուր մարդ օժտված է ի սկզբանե և բնականոն կերպով:

### **Կրոնը՝ որպես բարոյականության երաշխիք**

Իրականում բոլոր արտահայտված կարծիքները կարող ենք բաժանել երկու՝ ճիշտ և սխալ խմբերի: Ճիշտ կարող են համարվել այն տեսակետները, որոնց հիմքում ընկած է որևէ կրոնական դավանանքի գոյություն: Աստված բարոյականության և օրհնությունների աղբյուր է և բարի գործերի համար հատուցում է: Մարդասիրական զգացումներն անշուշտ բարոյական են և հայտնվելով մարդու ներաշխարհում նրան տանում են դեպի բարոյականը: Այսինքն՝ երբ մարդը հավատում է Աստծուն, սկսում է սիրել մարդկանց և նրա մեջ ի հայտ են գալիս մարդասիրական զգացմունքներ: Կրոնական համոզմունքները բարոյական հիմքերի երաշխիքն են: Նա՝ ով ասում է, որ բարոյականությունը պայմանավորված է գեղեցկությամբ, ի նկատի ունենալով հոգեկան ու ներքին գեղեցկությունը, պետք է ուշադրություն դարձնի այն բանի վրա, որ մինչև մարդը չընդունի «Աստված» կոչվող անկախ ու բանական իրականության գոյությունն ու նրա գեղեցկությունը, չի կարող ընդունել որևէ այլ բարոյական ու բանական գեղեցկություն: Այլ կերպ ասած՝ հոգու կամ արարքի բանական գեղեցկությունն իմաստավորվում է միայն այն դեպքում, երբ մենք հավատում ենք Աստծուն: Եթե Աստված գոյություն չունենա, ապա մարդկային գործունեությունը միայն լավի ու բարու աշխարհում իրականացնելը որևէ իմաստ չի ունենա: Եվ առհասարակ, երբ ասում ենք գեղեցիկ արարք, ի նկատի ունենք Աստվածահաճո՝ որը լուսավորված է Աստվածային լույսով: Այսպես է նաև բարոյական խղճի առումով, որն անգամ Կանտի հավաստմամբ, առանց մարդու կողմից Աստծու հանդեպ հավատքի իմաստ չունի: Այս բոլորը մարդուն ապացուցում են, որ սա է իրականությունը և ճշմարիտը:

Եթե բարին նյութական լինի, ապա ճշմարիտն ու իրականը որևէ իմաստ ունենալ չեն կարող: Հանդերձյալ աշխարհի հանդեպ հավատքի գոյության դեպքում անչափ գործածական է զգոնության տեսությունը: Ըստ այդ տեսության մարդն ի սկզբանե արարված է շահամուլ և իր օգուտից բացի որևէ այլ բանի չի ձգտում: Նա հաշվարկում է, թե իր կատարած գործերի համար այն աշխարհում ինչ պետք է ստանա և եթե հավատում է վերջնական արդարության գաղափարին, ապա՝ այս զգացումը լավ գործողության երաշխիք է հանդիսանում: Սակայն եթե այս համոզումները գոյություն չունենա և ամեն ինչ սահմանափակվի այս աշխարհով՝ ապա մարդը կհայտնվի հատուկ պայմանների ազդեցության տակ և կմտածի, որ իր օգուտը միայն նրանում է, որ ուրիշներին էլ ներգրավի: Ուրեմն, այս տեսությունը վերջնական արդյունք կտա միայն այն դեպքում, երբ մարդը հավատա Աստծուն ու դատաստանի վերջին օրվան:

### **Բարոյական գործողության նկարագիրը**

Առանց Աստծո և կրոնի հանդեպ հավատքի վերոհիշյալ բոլոր տեսություններն անհիմն են: Սակայն, եթե դրանք հիմնավորվեն Աստծո հանդեպ հավատքով, ապա բոլորն էլ կարելի է ընդունել և համարել ճիշտ: Այս դեպքում որևէ անհրաժեշտություն չկա, որպեսզի մենք բարոյական գործողությունները դրանցից որևէ մեկով սահմանափակենք: Մեր կարծիքով, այս դեպքում կարևոր է, որ գործողության նպատակը անձնական ու նյութական չլինի և բոլորովին կարևոր չէ, որ մարդն այն կատարել է մարդասիրական արարքի գեղեցկության, իր հոգու ազնվության, մտքի անկախության կամ խելամտության զգացումներից դրդված: Բավական է միայն, որ գործողության հիմքում չլինի անձի և անձնական եկամտի խնդիրը, այն վերածվում է բարոյական գործողության: Բոլորովին կարիք չկա, որ մենք կառչենք հիշյալ տեսություններից որևէ մեկից, որը պայմանավորված է միայն գեղեցկության, սիրո կամ խելքի անկախ գործոնով, ըստ որի իբրև բարոյական են միայն այն գործողությունները, որոնք գերծ են նյութական ու աշխարհիկ ձգտումներից ու նպատակներից:

Ուստի, դաստիարակչական աշխատանքում ամենակարևոր սկզբունքը, որ պետք է զարգացվի՝ Աստծո հանդեպ հավատն է: Աստծո հանդեպ հավատքի ներքո պետք է զարգացնել նաև մարդասիրական, գեղեցիկի ընկալման, անկախ կամքի և գիտակցության զգացումները: Այս դեպքում պետք է օգտվել նաև մարդու շահադիտական զգացումներից, ինչպես վարվել են տարբեր կրոնները: Տարբեր կրոններում մենք տեսնում ենք, թե ինչպես են մարդու շահադիտական և զգուշավորության ձգտումներն օգտագործվում ի նպաստ մարդկության մեջ սկզբունքների հաստատման:

Այսքանով սահմանափակվում է մեր անցած երկու քննարկումների թեման:



## ՄԱՍ ԻԽ

*Բարոյականության Հարաբերականության խնդրի  
քննարկում*



## Հանուն Ողորմած և Բարեգույշ Աստուծո

Մեր այս թեման վերաբերում է բարոյականության հարաբերականության խնդրին, որում հարցը ձևակերպվում է հետևյալ կերպ: «Արդյո՞ք բարոյականությունն անկախ է, թե՛ հարաբերական»: Այսինքն, եթե որևէ սովորություն, բարք կամ գործողություն խորհուրդ է տրվում որպես բարոյական, արդյո՞ք այն բացարձակ (ճշգրիտ) է: Կամ որևէ բարոյական վարքագիծ կարող է բոլոր ժամանակների, բոլոր պայմանների և բոլորի համար բարոյական ու « $2 \times 2 = 4$ » հավասարման նման ճշգրիտ լինել: Իսկ գուցե հակառակն է, այն հարաբերական է: Երբ ասում ենք, որ հարաբերական է, ապա՝ ոչ մի բարոյական գործողություն, բարք և հատկանիշ հնարավոր չէ առանձին դիտել և այն համարել բոլոր ժամանակների, բոլոր պայմանների ու բոլորի համար առաքինի: Այս խնդիրը, հատկապես մեզ համար, որ այսքան կապված ենք իսլամին, շատ կարևոր է և պետք է ներկայացվի ըստ արժանվույն, քանզի իսլամ կոչվող սրբազան կրոնը մեր հին կրոնագետների հավաստմամբ բաղկացած է պատգամների երեք խմբից: Մեկը «աղալիաթ» կամ «Ֆեքրիաթն» է, որը ներկայացնում է հավատալիքների սկզբունքները, երկրորդը՝ «նաֆասիաթն» է, որը ներկայացնում է բարոյագիտությունը, իսկ երրորդ խումբը «բադանիաթ» կամ «Ֆեելիաթ»-ն է, որ ներկայացնում է պատգամները:

Բարոյագիտություն ներկայացնող խումբն անչափ կարևոր է, քանզի սրբազան Ղուրանում ներկայացվող պատգամների ու հրամանների մի մասը բարոյական պատգամներ են: Մյուս կողմից մենք գիտենք իսլամի

առանձնահատկությունները, որոնք կատարելության ու հավիտենակա-  
նության գաղափարներն են և անհարժեշտ է, որ մենք բարոյականության  
խնդիրն առանձնակի ներկայացնելով՝ քննարկենք, թե որքանո՞վ են իս-  
լամի պատգամները պաշտպանված հավիտենականության գաղափար-  
ով և արդյո՞ք այս գաղափարը համատեղելի է բարոյականության հա-  
րաբերականության հետ:

Նախ՝ մենք պետք է հասկանանք բարոյականությունն անկախ է, թե՞  
հարաբերական և ապա նոր անդրադառնանք իսլամին ու տեսնենք, թե  
ինչպիսին են իսլամի պատգամները բարոյականության առումով: Ան-  
կախ, թե՞ հարաբերական: Այս խնդիրը մեծապես կապված է «բարոյա-  
կան գործողությունների նորմեր» խորագրով նախկին խնդրին: Ըստ ներ-  
կայացված որոշ տեսությունների բարոյականությունը ոչ թե հարաբերա-  
կան, այլ անկախ է: Սակայն որոշ տեսաբաններ հավատացած են, որ բա-  
րոյականությունը հարաբերական է: Մենք անցած անգամ չնշեցինք մի  
քանի տեսությունների մասին, որոնք պետք է նշեինք: Այժմ կնշենք  
դրանք, ապա նոր կանդրադառնանք հիշյալ խնդրին:

### Հավանություն

Ոմանք իսկապես համոզված են, որ որևէ արարքի բարոյական լինելու  
որևէ չափանիշ մարդուց դուրս գոյություն չունի: Այսինքն՝ մարդու հավա-  
նությունից ու ընտրությունից բացի որևէ բարոյական նորմ գոյություն  
չունի: Հարկավ լսել եք, որ դեռևս հին Հունաստանում, գոյություն են ու-  
նեցել գիտնականներ, որոնք պնդում էին, որ ամեն ինչի չափանիշը  
մարդն է: Նրանք գիտության, փիլիսոփայության և ճշմարտության առու-  
մով նույնպես պնդում էին, որ իրականության ու ճշմարտության բացա-  
հայտման չափանիշը մարդն ու նրա գնահատականն է: Այսինքն՝ բացար-  
ձակ ճշմարտություն գոյություն չունի և ճշմարտուն այն է, ինչը մարդն է  
սահմանում: Եթե մարդը որոշում է, որ որևէ բան ճշմարիտ է, ապա՝ ճշմա-  
րիտ է: Եթե նա որոշում է, որ արևն բան սխալ է, ուրեմն՝ սխալ է: Սա նման  
է որոշ իսլամագետների «մոթագելե»<sup>29</sup> կոչվող և «էջթեհադ»<sup>30</sup> մասում  
ներկայացված այն կարծիքին, որի համաձայն ճշմարտությունն այն է,  
ինչը որոշվում է մոջթահեդի<sup>31</sup> կողմից, իսկ մոջթահեդը երբեք չի սխալ-  
վում: Եվ եթե տաս մոջթահեդ որոշեն տարբեր բաներ, ապա տասն էլ  
իրական են և կատարելի, որ գոյություն ունի տասը ճշմարտություն:  
Նրանց հակառակորդները «մոխթաեներն» էին, որոնք համոզված էին, որ  
մեկ ճշմարտությունից բացի որևէ այլ ճշմարտություն գոյություն չունի:  
Կարծիքը կարող է իրականությանը համապատասխանել և օգտակար լի-  
նել, սակայն հնարավոր է, որ այն իրականությանը հակառակ լինի:

Ճշմարտության և իրականության առումով հույները նույնպես ասում  
են, որ ճշմարտության չափանիշն այն է, ինչը սահմանվում և որոշվում է  
մարդու կողմից: Վերջիններս այս կարծիքին են ճշմարտության, իրակա-  
նության, տեսական գիտությունների և ամեն ինչի առումով: Ուրեմն, եթե

29-Անջատված, զատված, հեռացած(թարգմ.):

30-Ձանք, ջանացողություն(թարգմ.):

31-Բարձրաստիճան իսլամագետ, կրոնավոր(թարգմ.):

մենք ասեինք, որ Աստված գոյություն ունի, իսկ այլոք համոզված լինեին, որ Աստված գոյություն չունի, նրանք կասեին, որ գոյություն չունի, քանզի ոմանք այդպես են կարծում:

Սա տեսական խնդիր է, սակայն վերջերս բացահայտվել է բարոյականության մասին մի տեսություն, որը ճշմարտության մասին չի ասում այն, ինչն ասում է բարոյականության վերաբերյալ: Բարոյականության և իրականության միջև գոյություն ունի մի տարբերություն, որի համաձայն իրականությունն այնպիսին է՝ ինչպիսին որ կա, իսկ բարոյականությունն այնպիսին՝ ինչպիսին, որ պետք է լինի: Այլ կերպ ասած՝ բարոյական բարիքի ու չարիքի միջև մարդու գնահատականից բացի որևէ այլ չափանիշ գոյություն չունի: Նրանք ասել են՝ չափանիշն այն է, որ բարոյականը հավանության արժանի լինի:

Հավանության արժանացած յուրաքանչյուր բարք ու գործողություն լավ ու բարի է: Սակայն հավանությունը փոփոխական է և ժամանակի ընթացքում գնահատականները փոփոխվում են: Իսկ երբ այն փոխվում է, բնականաբար, փոխվում է նաև բարոյականը: Եթե որևէ բարք ինչ որ ժամանակ հաճելի է հասարակությանը, ուրեմն՝ լավ ու բարոյական է: Սակայն գալիս է ժամանակ, երբ նույն բարքը կամ գործողությունը դառնում է անհաճո, իսկ մեկ ուրիշ բարք, որը անհաճո էր, հանկարծ դառնում է հաճելի: Այս տատանումներն ու վերարժեվորումները պայմանավորված են զարգացմամբ, կատարելագործմամբ և բխում են ժամանակի ոգուց: Այլ կերպ ասած՝ հասարակության ոգուց:

### Ժամանակի ոգին

Հեզելը մի արտահայտություն ունի, որն անվանվում է ժամանակի ոգի: Նա համոզված է, որ կատարելագործումն այս աշխարհի պատիվն է: Ժամանակի ոգին միշտ դեպի առաջ է մղում հասարակությանը: Հանդիսանալով հասարակության ոգին ու հասարակության մղիչ ուժն այն ազդում է մտքերի ու հավանությունների վրա: Այսինքն՝ ժամանակի ոգին ոգեշնչում ու ստեղծում է այնպիսի բարքեր ու առանձնահատկություններ, որոնք հասարակությանը մղում են դեպի կատարելություն ու զարգացում: Այն միաժամանակ ոչնչացնում ու կանխում է այն բարքերն ու սովորույթները, որոնք պատկանում են անցած ժամանակներին ու խաթարում են կատարելագործմանը: Հեզելը ժամանակի կամ հասարակության ոգուն վերաբերվում է այնպես, ինչպես ուրիշներն Աստծուն՝ ասելով, որ Աստված մարդուն ներշնչում է լավ ու բարոյական բարքեր: Իհարկե, Հեզելն ընդունում է Աստծուն, սակայն համոզված է, որ լավ բարքերը պայմանավորված են ժամանակի և հասարակության ոգով: Նրա ու ներշնչանքի մյուս կողմնակիցների միջև գոյություն ունի երկու տարբերություն.

Նա ոգեշնչող է համարում ժամանակի ու հասարակության ոգին, իսկ մյուսները՝ Աստծուն և գերբնական ուժերին:

Նրանք ոգեշնչողին համարում են մի անկախ, կայուն և միասնական երևույթ, իսկ Հեզելը համոզված էր, որ այն փոփոխական ու հարաբերա-

կան է և ենթարկվում է ժամանակի պայմաններին, որոնք հաճախ են փոխվում: Վերջինիս կարծիքով ոգեշնչողը փոփոխվում է ժամանակի փոփոխությունների հետ և ժխտում նախկին ներշնչանքները:

Սա այն մտքերից է, որը շատ է ազդել եվրոպացիների և ամբողջ աշխարհի վրա՝ սասանելով կայուն չափանիշների հիմքերը: Գիտնականներից մեկն ասում էր. «Արտասահմանյան կոնֆերանսներից մեկի ժամանակ հարձակվեցի նրանց վրա և ասացի. « Դուք, եվրոպացիներդ, ինչ որ ժամանակ հավատում էիք սուրբ ոգուն և ներշնչվում դրանով: Իսկ հիմա ժամանակի ոգուց եք խոսում և դրանով ոգեշնչվում: Ձեր դժբախտությունը սկսվեց այն օրվանից, երբ սկսեցիք հավատալ ժամանակի ոգուն և սկսեցիք կարևորել ու արժևորել այն այնպես, ինչպես՝ սուրբ ոգին: Արդյունքում դուք կորցրեցիք ձեր բոլոր կայուն սկզբունքներն ու չափանիշները և սկսեցիք առաջնորդվել ժամանակի թելադրանքով: Իսկ ի՞նչ է այդ ժամանակի ոգի կոչվածը: Ո՞վ է հնարել այդ ոգին, որը հասարակությամբ դեպի զարգացում է տանում և որ անհատների ու պատկերների փոփոխությունները պայմանավորվում են հենց ժամանակի ոգով»: Սակայն այնուամենայնիվ եվրոպացիների մեջ գոյություն ունեն այնպիսի մի տեսակետ ու գաղափար, որ այս խոսքերը ասելիս մենք անպայման պետք է բարոյականությունը հարաբերական համարենք:

Գոյություն ունի նաև մեկ այլ խնդիր (իհարկե նրանց գրվածքներում ես այն չեմ տեսել, սակայն կարծում եմ, որ նպատակը հենց դա էր), որը վերաբերում է այն բանին, թե ինչպես է գործում ժամանակի ոգին: Արդյո՞ք գաղափարները փոփոխվում են միանգամից, դարավերջին, թե՛ աստիճանաբար և որոշակի ժամանակահատվածում: Իսկ աստիճանական փոփոխության դեպքում արդյո՞ք գոյություն ունեն ընտրյալներ, որոնք ներշնչվում են նախապես՝ հետագայում աստիճանաբար փոփոխության ենթարկելով այլոց: Արդյո՞ք միշտ է, որ հասարակության մեջ գոյություն ունի մտավորական ու զարգացած մի վերնախավ, որն օժտված է մարգարեների շնորհով, սակայն ոչ թե աստվածային ոգով, այլ՝ ժամանակի ոգով: Կամ ինչպես իրենք են ասում՝ ինտելեկտուալ վերնախավ: Նախ ոգեշնչվում է այս վերնախավը, ապա՝ նրանց հետևում են մյուսները: Նրանք այս վերնախավին են վերագրում առաքելության ու մարգարեության որոշակի հատկանիշներ:

Եթե մենք պնդենք վերոհիշյալը, ապա՝ բարոյական որևէ կայուն հիմք գոյություն չի ունենա, քանզի չափանիշ կդառնա հավանությունը: Իհարկե, մենք նույնպես ընդունում ենք, որ հավանությունը չափանիշ է, իսկ հավանությունները փոփոխական են: Սակայն մենք համոզված ենք, որ հավանությունների փոփոխությունը ինքնազգացողության փոփոխության տարատեսակներից է:

Ինքնազգացողությունն ունի հավասարակշռված և շեղված վիճակներ: Հասարակությունը նույնպես ունի վերընթաց և անկում: Հնարավոր չէ հասարակության բոլոր փոփոխությունները զարգացում համարել: Սրանով են պայմանավորված նաև Ղուրանի ուսմունքները: Ղուրանում գրված է, որ ինչ որ ազգ կարող է որևէ ընթացք ապրել և անառականալ, իսկ այդ անառակությունը, որն ըստ Ղուրանի բարոյական անառակություն է,

կհանդիսանա տվյալ ազգի քայքայման պատճառ: Պատմությունը նույնպես վկայում է, որ հասարակությունները տատանվում են և այս տատանումները կարող են լինել և վերընթաց և անկումային: Իսկ անկումային տատանումները հանգեցնում են տապալման ու կործանման: Այո, գուցե հնարավոր լինի ընդունել, որ յուրաքանչյուր հասարակություն կարող է զարգացող լինել: Հավանությունները վերաբերում են առանձին հասարակություններին: Եթե յուրաքանչյուր հազար տարվա կտրվածքով հաշվենք ( իհարկե ոչ հարյուր տոկոսով), գուցե հնարավոր լինի ասել, որ մարդկությունը հազար տարի հետո առաջընթաց է ապրել: Իսկ եթե մարդը ցանկանա այդ առաջընթացը վերագրել բոլոր բնագավառներին անչափ դժվար կլինի պատկերացնել:

### Սարտրի կարծիքը

Ասում են, որ յուրաքանչյուր հասարակություն բույսի նման ինքնաբուխ կերպով աճում է և այդ աճը գործնական փուլի հասցնելու համար փոփոխում է իր գնահատականները, քանի որ դրանք միշտ էլ համաձայնեցված են կատարելագործման հետ:

Երբ որևէ մեկն այս տեսությունը ընդունի, ապա բարոյականությունը հարյուր տոկոսով հարաբերական կդառնա: Եիշտ այսպես է նաև Սարտրի մոտ, որն ամեն ինչ ծանր ու թեթև է անում անձնական ընտրությամբ՝ ասելով, որ որևէ գործողության բարոյական լինելու չափանիշը պայմանավորված է միայն մարդու էությամբ: Սակայն ասում են, որ յուրաքանչյուր ոք որևէ գործողություն կատարելիս հանդաված է, որ իր ընտրածը լավ գործողություն է: Դժվար թե գտնվի որևէ մեկը, որը կարծի հակառակը: Նա ավելացնում է նաև, որ յուրաքանչյուր մարդ որևէ լավ գործ ընտրելիս այն արժևորում է և նույն գործողությունը ընտրում է նաև ուրիշների համար:

Այս առումով մենք ևս ասում ենք, որ մարդն իր գործողություններով տարածում է որոշակի վարքագիծ: Օրինակ՝ լավ գործ կատարելիս տարածում է լավը, վատ գործերի դեպքում՝ վատը: Մարդու ընտրած գործը, մասնակի լինելով հանդերձ, հանդիսանում է ընդհանրական: Օրինակ՝ դուք առաջնորդման համար ընտրում եք մի սկզբունք: Չեր կատարածը մասնակի, այսինքն՝ անձնական գործողություն է, որը պատկանում է տվյալ ժամանակին ու վայրին: Սակայն այստեղ գոյություն ունի նաև մի հակասություն, քանզի որևէ գործողություն ընտրելիս դուք մտածում եք, որ այն լավ է բոլորի համար: Ստացվում է, որ որևէ գործողության բարոյական լինելու չափանիշը կատարողի բարոյական չափանիշն է: Ուրեմն, գործողության բարոյականությունը դառնում է հարաբերական, քանզի կախված է մարդու ընտրությունից: Սակայն հնարավոր է, որ ես մի բան ընտրեմ, իսկ դուք՝ մեկ ուրիշ: Այս դեպքում կստացվի այնպես, որ իմ կարծիքով բարոյական է իմ ընտրածը, իսկ ձեր կարծիքով՝ ձերը:

Սակայն եթե թողնենք այս տեսությունն ու ի նկատի ունենանք նախկինում քննարկված տեսակետները, կարող ենք ասել, որ բարոյականությունը հարաբերական չէ: Մեր բացատրած ու ներկայացված բարոյակա-

նությունը հաստատուն է, իսկ բարոյական գործողությունը կարող է լինել նաև հարաբերական:

### Մարդասիրության գաղափար

Մեր ներկայացրած տեսակետներում նշեցինք, որ ոմանք համարում են, որ գործողության բարոյական լինելը կապված է սիրո և գորովի զգացման հետ և որ նպատակը պետք է մեկ ուրիշ անձ լինի: Այստեղ երկու խնդիր ունենք: Մեկը՝ հենց ինքը՝ բարոյականությունը, այսինքն, մարդկային ոգու առանձնահատկությունը, բարքն ու սովորությունը, որը պայմանավորված է մարդասիրության ու ուրիշներին օգնելու և մարդկանց ճակատագրով հետաքրքրված լինելու զգացումներով: Այս դեպքում պետք է ասենք, որ սա հաստատուն է և հարաբերական չի լինում: Այն չի կարող որևէ մեկի համար հարաբերական լինել, իսկ մյուսի համար՝ հաստատուն: Մարդկանց սիրելն ու նրանց ծառայելու ցանկությունը հաստատուն արժեքներ են և բոլոր ժամանակների, մարդկանց ու պայմանների համար՝ առաքինի: Հնարավոր է ասել, որ սա նույնպես չափանիշ չէ, քանզի որևէ մեկը կարող է նյութապաշտ, մարդասպան կամ անառակ լինել, իսկ յուրաքանչյուր գաղափարախոսություն ասում է, որ պետք է պայքարել նման մարդկանց դեմ ու վերացնել նրանց: Ուրեմն, այս ձևակերպումը նմանապես համընդհանուր չէ:

Սակայն պատասխանն այդ դեպքում հետևյալն է. « ոչ, ընդհանրական է: Մարդասիրությունը չի հակասում անառակ մարդու դեմ պայքարին և մարդկանց հանդեպ սերը չի պայմանավորվում անառակ մարդու դեմ չպայքարելով: Նախ՝ մենք ասում ենք մարդիկ և ոչ թե՛ անհատ մարդ: Եթե որևէ մեկը մարդկության կամ մարդկային հանրության համար վնասակար է, ապա՝ մարդկային հանրության հանդեպ սերը թելադրում է հեռացնել ու ոչնչացնել նրան: Իսկ հետո, երբ ասում ենք սիրել մարդուն, ի նկատի չունենք նրան սիրել զուտ որպես մի կենսաբանական արարած, որը ունի մեկ գլուխ, երկու ականջ, երկու ձեռք և այլն: Մարդ ասելով՝ մենք ի նկատի ունենք մարդկությունն ու մարդկային արժանիքները, և ոչ թե միսն ու ոսկորները: Եթե մարդը միայն միս ու ոսկոր լիներ, ապա նրա և կենդանու միջև որևէ տարբերություն գոյություն չէր ունենա: Մարդը կվերածվեր մի կենդանու, որն ուտում է, քնում, քայլում և այլն: Այս դեպքում նա չի կարող որևէ արժեք ունենալ: Ուրեմն, երբ ասում ենք մարդ, ի նկատի ունենք մարդկային հատկություններով ու արժանիքներով օժտված անհատին: Եթե որևէ մեկը դեմ է մարդուն, այսինքն՝ մարդկությանը, ապա նա չի կարող մարդ համարվել:

Եթե մենք բարոյականության հիմք համարենք մարդկանց բարեկամությունը, ապա այն որպես մի հատկություն ու բարք կդառնա հաստատուն և անփոփոխ: Եթե մենք բարոյականությունը համարենք հոգեկան մի խումբ ներշնչանքների արդյունք, որին իր փիլիսոփայական տեսությունում անդրադարձել է Կանտը և ներկայացրել այդ սկզբունքները՝ ասելով, որ սրանք այն սկզբունքներն են, որոնք թելադրվում և ներշնչվում են խղճի կողմից, անկասկած այդ ներշնչանքներն ընդհանրական ու հա-



րատև են: Դրանք առաքինի են բոլոր ժամանակների համար, քանզի նա խնդիրները համարում է ընդհանրական և բոլոր ժամանակների համար կայուն:

Ասացինք, որ Ռասուլն ու ոմանք բարոյականությունը մեկնաբանում են այլ կերպ և ասում, որ բարոյականության չափանիշը անհատի ու հասարակության շահերի համատեղումն է, քանզի մարդը հարյուր տոկոսով շահամուլ էակ է և անհնար է նրան առանց անձնական շահի որևէ բանի մեջ ներգրավել: Լավագույն դեպքում նրանից որևէ բարոյական գործողության ակնկալիք ունենալու դեպքում, որը շահավետ կլինի նաև ուրիշների, մենք պետք է ազդենք նրա գիտակցության վրա՝ հասկացնելով, որ իր շահերը համաձայնեցնի հասարակության շահերի հետ: Այս տեսությունում բարոյականությունը հանդիսանում է որպես առանձնահատկություն, խելամտության դրսևորում՝ երբ մարդն ամեն տեղ իր անձնական շահերը համաձայնեցնում է հասարակության շահերի հետ: Այս ուղղության համաձայն նույնպես բարոյականությունը որպես առանձնահատկություն ոչ թե հարաբերական է, այլ՝ հաստատուն:

Ասացինք, որ բարոյականության վերաբերյալ գոյություն ունի նաև մեկ այլ ուղղություն, որը ավանդապաշտների տեսությունն է: Բարոյականության առումով ավանդապաշտների տեսակետը պայմանավորված է անկախ ոգու վրա հիմնված արդարության սկզբունքով: Նրանց կարծիքով լավ բարքերը բաղկացած են հավասարաչափ և համաչափ ուժերից, որոնք ենթարկվում են անկախ գիտակցության թելադրանքին: Այս թելադրանքին պետք է ենթարկվեն մարդու բոլոր ուժերն ու բնազդները: Սա ևս հաստատում է, որ բարոյականությունն անկախ գործոն է: Իսկ մարդու բոլոր ուժերը ու բնազդները գիտակցությանը ենթարկելու խնդիրն այնպիսի մի խնդիր չէ, որ կապված լինի ժամանակի գործոնից: Ենթարկումը ենթարկում է: Իսկ պլատոնական այն գաղափարախոսությունը, որը պայմանավորված էր գեղեցիկի գործոնով և ասում էր, որ բարոյականության արմատը հոգու գեղեցկությունն է, այն նույնպես հաստատուն և կայուն է: Ի հարկե Պլատոնը գեղեցկության հիմք էր համարում ներդաշնակությունը:

#### **Վարվելակերպը հարաբերական է**

Գոյություն ունի մի խնդիր, որի համաձայն բարոյականության անկախ լինելը չպետք է շփոթել բարոյական գործողության անկախության հետ: Այսինքն՝ հնարավոր չէ հիմնվել որևէ գործողության վրա և ասել, որ այն միշտ ոչ բարոյական է: Իսկ մարդկանց շփոթության պատճառ է դարձել այն, որ նրանք կարծել են, թե անկախ ու կայուն բարոյականության համար անհրաժեշտ է, որ գործողությունները հենց սկզբից բաժանվեն խմբերի: Այս դեպքում մենք պետք է գործողությունների մի խումբ դնենք մի կողմ՝ ասելով, որ դրանք բարոյական գործողություններ են, իսկ մյուս խումբը՝ մեկ այլ կողմ՝ համարելով դրանք ոչ բարոյական: Մինչդեռ պետք է ասել «ոչ», և ինչպես ավանդապաշտներն են ասում. «Տարբեր են միայն գործողությունների եղանակներն ու էությունը»: Յուրաքանչյուր գործո-

դուք յուն կարող է հանդիսանալ բարոյական կամ ոչ բարոյական կատարման եղանակի կամ հավաստիության միջոցով: Եվ վարվելակերպի հարաբերական կամ անկախ լինելը տարբերվում է բարոյականության անկախ կամ հարաբերական լինելուց: Օրինակ՝ որք երեխային ապտակելը բարոյակա՞ն գործողություն է, թե ոչ բարոյական և վատ: Բնականաբար, այս հարցին դժվար է պատասխանել, և պատասխանը կախված է նրանից, թե մենք ո՞ր տեսանկյունից ենք նայում խնդրին: Քանզի, մի դեպքում մենք որք երեխային ապտակում ենք ձեռքից ինչ որ բան վերցնելու նպատակով, իսկ մյուս՝ նրան դաստիարակելու համար երբ դաստիարակությունն ինքնին պահանջում է դա: Ուրեմն որքուկին ապտակելը զուրկ է լավ կամ վատ լինելու հանդամանքից: Մի դեպքում, երբ հարցը վերաբերում է նրա դաստիարակությանը՝ լավ է, իսկ մեկ այլ դեպքում երբ մենք ուզում ենք նրանից ինչ որ բան խլել, նրան մեզանից հեռացնել կամ ուղղակի նեղացնել՝ վատ է: Սուրբ Դուրանն այս առումով պատվիրում է. «Այժմ, եթե այդպես է՝ մի նեղացրու որբին»:

Օրինակ՝ մարդու խոնարհվելը և կռանալը մեկ ուրիշի առջև՝ դիմացինին մեծարելու համար է, սակայն այս գործողության բարոյական համարվելը կախված է դիմացինի ով լինելուց: Երբ դու խոնարհվում ես մի պատկառելի և արժանավոր մարդու առջև, ապա՝ դա բարոյական գործողություն է: Իսկ երբ խոնարհվում ես դիմացինին քծնելու կամ նվաստացնելու նպատակով, այդ նույն գործողությունը ստանում է մեկ այլ երանգ և անվանում: Ուրեմն ինքը՝ գործողությունը, որն իր բնույթով մեկ ուրիշի առջև խոնարհում է, տարբեր տեղեր տարբեր իմաստներ և անվանումներ է ստանում: Այսինքն՝ մի դեպքում կարող է համարվել բարոյական, իսկ մյուս դեպքում՝ հակաբարոյական: Մենք իսլամում չունենք այնպիսի մի գործողություն, որի երկրորդական անվանումները չբացահայտեն նրա իրական նկարագիրը:

### **Առաջնային եվ երկրորդական անվանումներ**

Մեր կրոնագետներն ունեն մի լավ արտահայտություն և ասում են, որ գոյություն ունեն առաջնային և երկրորդական անվանումներ: Այս ասելով, նրանք համոզված են, որ ամեն ինչ ունի առաջնային մի անվանում, սակայն երբեմն նրա իրական բնութագիրը ներկայացնում է նրա երկրորդական կամ երրորդական որոշիչ անվանումը: Օրինակ՝ Ձեյդը առաջնային ձևակերպմամբ մի մարդ է, սակայն կարող են գոյություն ունենալ երկրորդական կամ երրորդական որոշիչներ, որոնք կփոփոխեն նրա էությունը՝ գիտնական Ձեյդ, հոգևորական Ձեյդ, բռնակալ Ձեյդ և այլն: Այս որոշիչը, որ կցվում է նրա առաջնային անվանը, հանդիսանում է նրա երկրորդական անվանումը: Նա կարող է ունենալ նաև երրորդական, չորրորդական և հինգերորդական անվանումներ: Ասվածի լավագույն նմուշներից է մի քանի մասնագիտությամբ մարդը: Ձեյնն ամեն ինչից առաջ էմրոյի որդին է, միաժամանակ՝ համալսարանի դասախոս, ազգային ժողովի նախագահ, ևս մեկ կազմակերպության տնօրեն և այլն: Այս դեպքում կրոնա-

գետներն ասում են, որ յուրաքանչյուր շիա մահմեդական իրեն տրված յուրաքանչյուր անվանման դիմաց որոշակի իմաստ է ստանում: Օրինակ, եթե մեզ հարցնեն ոչխարի միսը հալա՞լ է, թե՞ հարամ, մենք կասենք, որ հալալ է: Սակայն խոզի մսի առումով նույն հարցին կպատասխանենք հակառակը: Ոչխարի մսի առաջնային անվանումը հալալն է, իսկ խոզինը՝ հարամը: Սակայն հալալ կոչված նույն ոչխարի միսը երկրորդական ու երրորդական անվանումներում դառնում է հարամ, օրինակ՝ երբ միսը գողացված է: Ուրեմն ոչխարի միսը սկզբունքորեն հալալ է, սակայն գողացված լինելու պատճառով դառնում է հարամ: Խոզի միսը, որ սկզբունքորեն հարամ է՝ որոշակի պարագաներում դառնում է հալալ: Օրինակ՝ երբ մարդը հայտնվում է անելանելի իրավիճակում և նրա կյանքը կախված է խոզի մսից, ապա՝ այն ուտելը ոչ միայն թույլատրելի և հալալ է, այլ՝ անհրաժեշտ: Այս դեպքում, եթե չուտի՝ անթույլատրելի է գործել: Իհարկե նման օրինակները շատ շատ են:

Երբեմն մենք ցանկանում ենք հիմնվել գործողության, երբեմն էլ՝ նրա առանձնահատկությունների վրա: Եթե մենք կամենանք հիմնվել գործողության առանձնահատկությունների վրա, Հեզելի, Սարտերի և մյուսների համոզմունքի համաձայն, որոնք համոզված են, որ բարոյական չափանիշները և նորմերը պայմանավորված են մարդու ընտրությամբ և ցանկությամբ, ապա՝ կհաստատենք, որ բարոյականությունն ու հրամայական բարքերը հարաբերական են: Սակայն, եթե այս ամենը մի կողմ թողնենք՝ բարոյականությունը որպես մի առանձնահատկություն և բարք կարող ենք համարել կայուն և հաստատուն, իսկ բարոյական գործողությունը՝ ոչ:

### **Պարկեշտության և բարեպաշտության օրինակ**

Նրանք, ովքեր համոզված են, որ բարոյականությունը հարաբերական է, պնդում են, որ պարկեշտությունը ինչ որ ժամանակ որոշ համայնքներում, համայնքի պահանջների և վիճակի համաձայն, դրական էր, քանզի կյանքը հողագործական կյանք էր: Հողագործական կյանքն արդարացնում է այն գաղափարը, որ ընտանիքը պետք է հանդիսանա առաքինի ու անկախ մի օղակ, իսկ կինը պետք է ենթարկվի ամուսնուն և չի կարող անկախ հանդես գալ: Սա անհրաժեշտություն էր և հարկավոր էր, որ այդ սկզբունքը ավելի ու ավելի շատ շեշտվի: Սակայն հետո եկավ ավտոմատացված կյանքի շրջանն ու կինը նույնպես ներգրավվեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ու սկսեց աշխատել գործարաններում: Ստացվեց, որ պարկեշտությունն ինչ որ ժամանակ լավ հատկանիշ էր, իսկ այս պարագայում՝ հակառակն է:

Սակայն այս համոզմունքը վերոհիշյալ հիմնավորմամբ սխալ է: Պարկեշտությունն ու առաքինությունը պետք է ընկալվեն որպես մի ներքին հոգեկերտվածք, երբ ցանկասիրական զգացումները ենթարկվում են գիտակցությանն ու հավատքին և ոչ թե մարմնական բնագղների: Այսինքն՝ մարդը, բախվելով բազմաթիվ գայթակղությունների հետ չի դառնում դրանց գերին և չի տրվում իր ականա բնագղներին: Ուրեմն, պարկեշտու-

թյունն ընդունելի է բոլոր ժամանակներում: Այո, այն բարոյական գործողությունները, որոնք մենք անվանում ենք պարկեշտություն, ոչինչով չեն փոփոխվում: Օրինակ՝ իսլամական իրավագետների մոտ բավականին տարածված մի պատմություն կա: Սի կին հիվանդ է և բժշկի կարիք ունի: Կին բժիշկ չկա, իսկ տղամարդ բժիշկը պետք է շոշափի հիվանդին, իսկ տենդի ժամանակ նա ստիպված է շոշափել կնոջ մերկ մարմինը: Եվ պատկերացնենք, որ կնոջ կյանքը վտանգի տակ է: Այս դեպքում թույլատրվում է դիմել տղամարդ բժշկի: Սովորաբար ոչ հարազատ տղամարդկանց կողմից կնոջ մարմնին նայելն ու այն շոշափելը ոչ պարկեշտ գործողություն է, սակայն նույն գործողությունը որոշակի պայմաններում դեպքում կորցնում է իր ոչ բարոյական լինելու պարագան: Իսկ պարկեշտության ու առաքինության խնդիրը բոլորովին էլ այսպիսին չէ և չի կարող ենթարկվել ժամանակի ու պայմանների ազդեցությանը: Այս գործողությունը միշտ էլ պահպանում է իր արժեքն ու երբեք չի փոփոխվում:

Ի հարկե հենց այստեղ կարելի է հասկանալ, որ տնտեսական, արտադրական ու տեխնիկական պայմաններից կախված գործողություններն ու գործերն առավել հաճախ են փոփոխվում, քան այն գործողությունները, որոնցից են պարկեշտությունը, առաքինությունն ու բարեպաշտությունը: Փոփոխությունները կապված են բնակչության տնտեսակ կամ տեխնիկական պայմանների հետ, որոնք սակայն չեն կարող փոփոխել վերոհիշյալ սկզբունքները: Այս խնդիրը վերաբերում է նշված երկու տեսակների հարաբերությանն ու միմյանց հանդեպ ունեցած կապին: Քանզի սկզբունքները կայուն են, իսկ բարոյական գործողությունները՝ հավերժ միատեսակ:

Ուստի, անհրաժեշտ է բարոյական գործողություններն ու բարոյականության խնդիրները միմյանցից անջատել: Բարոյականություն քարոզողները երկու բան պետք է անեն. նախ՝ բնավորություններ ու առանձնահատկություններ առաջարկելիս դրանք պետք է ներկայացնեն որպես բացարձակ գործողություններ, ապա՝ մարդկանց որոշակի տեղեկություններ տան, որպեսզի կատարման ժամանակ մարդիկ բարոյական գործողությունները ոչ բարոյականի հետ չշփոթեն:

Հիշում եմ, մի ժամանակ, երբ դեռ Ղոնում էինք, մարդկանց մի խումբ ասում էր, որ ճապոնիայում կրոնն անկում է ապրում և պահանջում էին այնտեղ ուղարկել իսլամի քարոզիչներ: Ճապոնիա մեկնելու համար աշխարհի տարբեր ծայրերից քարոզիչների անուններ ներկայացվեցին: Երջանկահիշատակ Աղաշեյխ Աբդուլթյարիմը կարգադրեց, որպեսզի մեկնի հոգևորականներից ամենաբանիմացը: Այդ հոգևորականն չհամաձայնվեց՝ ասելով հետևյալը. «Մտածեցի, որ կարող է անաստվածության բթությունից մահանամ»: Եզիպտոսից մի քանի հոգի գնացին, որի արդյունքում քսան հազար հոգի սունի մահմեդական դարձան: Սա գործի չմտածված լինելն է:

### **Ճշտապահության օրինակ**

Նմանատիպ չմտածված գործեր շատ կան, երբ մենք որոշ բարոյական

գործողություններ համարում ենք ոչ բարոյական կամ հակառակը: Օրինակ՝ ճշտապահությունը լավ բան է և պետք է ճշտախոս լինել կամ ստախոսությունը վատ և պետք է սուտ խոսել: Սակայն արդյո՞ք ամեն տեղ կարելի է ճիշտն ասել կամ արդյո՞ք ամեն տեղ է, որ սուտն արգելված է: Որոշ դեպքերում ստելն ուղղակի անհրաժեշտություն է և չնայած այն բանին, որ ոմանք մեղադրում են Սաադիին այն բանի համար, որ նա իր ստեղծագործություններում ասել է, որ բարեմիտ սուտն ավելի ցանկալի է, քան՝ սադրիչ ճշմարտությունը, այնուամենայնիվ, շատ ճիշտ է ասված: Երբեմն, որոշակի բարի նկատառումներով և ի նպաստ լավի ասված սուտը թույլատրելի է, քանզի ճշմարտությունը ևս ասվում է ի նպաստ հասարակության բարօրության: Սուտ պետք է չխոսել այն դեպքում, երբ վերջինս վնասում է մարդուն և չի նպաստում նրա բարեկեցությանը: Շատերը, այդ թվում նաև Ամերիկյան քոլեջի տնօրեն մայր Ջորդանը, քննադատել են Սաադուն «Բարեմիտ սուտը սադրիչ ճշմարտությունից ավելի գերադասելի է» արտահայտության համար: Սաադիին քննադատում են նաև զրադաշտականները:

Մոհիթ Թաբաթաբային մի հոդված էր գրել այն մասին, որ երբ անգլիացիները եկան Յնդկաստան, որտեղ ժամանակին բավական տարածված էր պարսկերենը, դպրոցներում որոշ գրքերի դասավանդումն արգելվեց, այդ թվում նաև՝ Սաադիի «Գոլեստանը»: Այս մտքի հետ համամիտ էին նաև զրադաշտականները, քանզի համոզված էին, որ այն պղծում է երեխաների բարոյականությունը: Նրանք միայն հետո էին հասկացել, որ գրքի արգելման նպատակը բոլորովին այլ էր: Գրքի սկզբում գրված էր մի քանի տող, որտեղ ասվում էր, որ քրիստոնյաներն ու զրադաշտականներն Աստծո հանդեպ թշնամանք են տածում: Անգլիացիներն ու զրադաշտականներն ուզում էին, որ այդ նախադասությունը չարտասանվի և ստիպված էին այլ պատճառներ փնտրել: Աշխարհի բոլոր խելամիտ մարդիկ էլ գիտեն ճշմարիտի ու ստի տարբերությունը, սակայն գիտակցում են, որ որոշ դեպքերում ստելն ամենդաժան ոճրագործությունից էլ վատ է: Իհարկե հենց այս դեպքերում էլ պետք է հնարավորինս խուսափել սուտ խոսելուց և ճշմարիտը ներկայացնել թաքնված, ինչպես Աբուզարն է դա արել: Ավանդության համաձայն, Աբուզարը կտորով ծածկել և շալակել էր մարգարեին, որպեսզի անցկացնի Ղորեյշի ցեղի անհավատների միջից: Նրան հարցրել են. – Ի՞նչ կա շալակիդ: Աբուզարը պատասխանել է. – Մոհամեդն է: Սա այն ճշմարտությունն էր, որ Աբուզարը ներկայացրել է երկիմաստ, սակայն եթե իմանար, որ անհավատներն իրեն կհավատալին և ճշմարիտն ասեր՝ ապա դա կլիներ ամենաանազնիվ վարմունքը: Մենք իսլամական իրավագիտության մեջ երբեմն թույլատրում ենք ստել, ևրբ, օրինակ, հարկավոր է թշնամիներին հաշտեցնել, ինչ որ մեկի ամենդությունը հաստատել և այլն: Նմանատիպ իրավիճակներում ստելն ավելի լավ է:

Այստեղ կարևորն այն է, որ անհրաժեշտ է բարոյականությունն ու բարոյական գործողությունները միմյանցից տարբերել: Իսլամին համահունչ է այն միտքը, որ բարոյական գործողությունները փոփոխական են, քանզի երբ մեզ հարցնում են գողությունը հալալ է թե՛ հարամ, մենք պա-

տասխանում ենք, որ հարամ է, սակայն լինում են այնպիսի իրավիճակներ, երբ նույն գողությունը դառնում է թույլատրելի և անգամ պարտադիր:



## **ՄԱՍ IX**

*Սուրբ Ալիի ավանդապատումն ու  
բարոյականության  
հարաբերականության տեսությունը*

## Հանուն Ողորմած և Բարեգույն Աստուծո

Մեր թեման վերաբերվում է բարոյականության հարաբերականությանն ու բնականաբար՝ նաև դաստիարակության հարաբերականությանը: Ըստ բարոյականության հարաբերականությունը հաստատող տեսության, ըստ որի բարոյականությունը տարբեր ժամանակների, մարդկանց ու վայրերի համար տարբեր է, մենք չենք կարող տարբեր ժամանակներում ապրող բոլոր մարդկանց համար բարոյականության մի չափանիշ և նմուշաձև ներկայացնել: Բարոյականության առումով տարբեր ուղղությունների կողմից ներկայացված յուրաքանչյուր նմուշաձև, անգամ իսլամի կողմից, սահմանափակվում է որոշակի տարածքի, ժամանակի ու պայմանների մեջ և բնականաբար, տարբեր վայրերում գործում են տարբեր օրենքներ:

Ինչպես ասացինք, բարոյականության ու վարքի միջև գոյություն ունի տարբերություն: Բարոյականությունը բաղկացած է որոշակի քանակությամբ ձեռքբերովի բարքերից ու հատկություններից, որոնք մարդկությունն ընդունում է որպես բարոյական նորմեր: Այլ կերպ ասած՝ դրանք մարդկային հոգու կաղապարն են, որոնց համաձայն և որոնց շրջանակներում էլ ձևավորվում է մարդկային հոգին: Մարդու հոգին կայուն և հաստատուն լինելով հանդերձ տարբեր խնդիրների պետք է տարբեր ձևով արձագանքի: Երբ ասում ենք, որ մարդը կարող է այնպիսի կատարյալ անձնավորություն լինել, որ ամեն տեղ սիրված և ընդունված լինի՝ ի նկա-

տի ունենք հենց այս փաստը, որ կատարյալ մարդը պետք է տարբեր ժամանակների և վայրերի թելադրանքի համաձայն վարվի, որի արյունքում նա կդառնա ընդունելի:

### Մեկ սխալի քննարկում

Ինչ որ մեկը կարող է ասել, որ իսլամում տղամարդու և կնոջ առանձնահատկություններին վերաբերվող պատգամներ կան, որոնց համաձայն տղամարդուն հատուկ որոշակի երևույթներ ցանկալի չեն կանանց առումով, կամ՝ հակառակը, կանացի որոշ յուրահատկություններ սազական չեն տղամարդուն: Սակայն արդյո՞ք իսլամի տեսանկյունից տղամարդու և կնոջ բարոյական և մարդկային մոդելները տարբեր են: Արդյո՞ք նրանք երկուսն էլ նույնն են մարդկային տեսակի առումով և ճի՞շտ է, որ իսլամը նրանց նկատմամբ տարբեր մոտեցումներ ունի: Այսինքն՝ այն ինչ մենք անվանում ենք խառնվածք կամ բնավորություն, պետք է ձևավորվի մեկ կաղապարում, իսկ ինքը՝ մարդը, մեկ ուրիշ: Եթե այսպես է, ուրեմն այս խոսքերից երևում է, որ խառնվածքը մի անկախ և կայուն իրականություն է: Սակայն այս արտահայտությունը ոչ մի հիմնավորում չունի և դրա առաջին պատճառն այն է, որ կնոջ և տղամարդու պարագայում այն բոլորովին տարբեր է:

Նահջ -օլ- բալադեում այս մասին մի արտահայտություն կա և հնարավոր է, որ ոմանք մեջբերեն հենց այս նախադասությունը. «Կանանց ամենալավ յուրահատկությունները տղամարդկանց համար ամենավատ յուրահատկություններն են»: Այսինքն՝ այն ինչը համարվում է կնոջ ամենալավ նկարագիրը, կարող է տղամարդու համար հակառակ նշանակություն ունենալ: Հիշյալ գրքում նշված է երեք առանձնահատկություն, որոնք են՝ սնափառությունը, վախկոտությունն ու խնայողությունը (ժլատությունը):

Սենք գիտենք, որ սնափառությունը ներկայացված է որպես վատ հատկանիշ, իսկ հոգեբանության տեսանկյունից այն համարվում է լուրջ հոգեկան հիվանդություն: Վախկոտությունը նույնպես, թուլության և տկարության նշան է: Իսկ ժլատությունն ու խնայողությունը նյութապաշտության և փողասիրության նշաններ են: Սակայն, այնուամենայնիվ, այս ամենը, որ տղամարդկանց համար ամենավատ և անցանկալի հատկություններ են՝ պարզվում է, որ կանանց ամենալավ ու գնահատելի առանձնահատկություններից են: Յուրաքանչյուր կին պետք է օժտված լինի այդ հատկություններով: Ինչպե՞ս հասկանալ այս ամենը: Գրքի հաջորդ մասում բացատրվում է, որ եթե կինը սնափառ է, ապա երբեք իրեն մոտ չի թողնի որևէ օտար տղամարդու: Եթե կինը ժլատ և խնայող է, ապա՝ կտնտեսի իր և իր ամուսնու ունեցվածքը: Իսկ վախկոտ լինելու դեպքում՝ կվախենա պատահարներից ու զգուշավոր կլինի:

### Պատասխան

Ուզում եմ նաև մի բան նշել: Իհարկե, այն ասելուց հետո շատերը

կկարծեն, որ ես ցանկանում եմ ապացուցել, որ այդ ավանդապատումն այնքան էլ հիմնավոր չէ: Սակայն այդպես չէ: Նախ՝ մենք պետք է տեսնենք թե որն է վերոհիշյալ նախադասության իսկական իմաստը և գրողն ինչ էր ուզում դրանով ասել: Ապա՝ պետք է տեսնել թե գրքում նշված արտահայտությունն ու իսլամական մյուս ուսմունքները որքանով են համապատասխանում: Որպես նախաբան ուզում եմ նշել հետևյալը.

Գրականագետների մոտ տարածված մի կարծիք կա, ըստ որի արաբերենն նյութերը մեկնաբանելիս (հավանաբար սա վերաբերվում է նաև պարսկերենին կամ յուրաքանչյուր այլ լեզվի, քանզի համամարդկային երևույթ է և ոչ թե միայն լեզվական), մարդու ներքին հոգեկան վիճակին վերաբերվող բառերը երբեմն օգտագործվում են ոչ թե իրենց կոնկրետ հոգեբանական վիճակին համարժեք իմաստով այլ՝ մարդու հոգեվիճակի վրա թողած ազդեցության իմաստով: Օրինակ՝ բարություն բառը, արաբերենում արտահայտում է մարդկային որոշակի հոգեվիճակի և զգացողության իմաստ: Այս բառը երբեմն գործածվում է ուղղակի որևէ հոգեվիճակ, իսկ երբեմն էլ՝ նրա ազդեցությունը ներկայացնելու նպատակով՝ անկախ նրանից թե բուն զգացմունքը գոյություն ունի, թե՛ ոչ: Ասում ենք, որ ինչ որ մեկը մյուսի հանդեպ բարություն կատարեց, այսինքն՝ գործողություն, որը բարիք է բերում: Կակայն այստեղ արդյո՞ք գոյություն ունի բարության էությունը: Կամ օրինակ՝ երբ Բարձրյալ Տիրոջ վերաբերյալ նույնպես կիրառվում է մարդկային այդ արժեքը: Գուցե այն, ինչ որ իմաստով սխալ է, սակայն մեկ այլ առումով այն դառնում է ընդունելի և ճիշտ: Սա նման է այն բանին, երբ մենք ասում ենք թե՛ Աստված նրանց հեզնում էր<sup>32</sup>: Կամ մեկ այլ դեպքում՝ երբ ասում ենք, որ Աստված նման բաներից ամաչում է: Ամոթն այն բառն է, որը ստեղծված է մարդու համար և պատկերում է մարդկային հոգեկան իրավիճակ: Ամոթը մարդու մոտ պատկառանքի, ամոթխածության և հուզմունքի զգացողությունն է, որը յուրահատուկ հոգեվիճակ է: Ուստի մարդուն վերագրված ամոթխածության և հուզմունքի զգացողություններն Աստծո համար կիրառելը ճիշտ չէ: Սակայն, երբեմն մարդու հանդեպ Աստծո վարմունքը նմանվում է այնպիսի մի վերաբերմունքի, կարծես դրված է ամոթխածությունից և հուզմունքից: Եվ այս դեպքում ասում են. «Աստված ամաչեց»: Սաադին իր «Գոլեստանի» սկզբում ասում է. «Աստված չի ընդունում մեկ անգամ ընթերցված աղոթքը: Պետք է աղոթել երկրորդ և երրորդ անգամ»: Ապա՝ հեղինակը նշում է հետևյալը. «Եվ Աստված ամաչեց իր ասածից»: Մարդու առումով ամոթխածությունն ուրույն հոգեվիճակ է, որն ունի հատուկ արտահայտչամիջոցներ: Սակայն երբ Աստված մարդու հետ վարվում է այնպես, որ ինչ որ մեկը սկսում է ծաղրել Բարձրյալին՝ այս դեպքում ասում են . «Աստված ամաչեց» (անհարմար զգաց):

Այս բառը միայն Բարձրյալին չի վերաբերվում և կիրառվում է բազմաթիվ այլ պարագաներում, սակայն միայն այն դեպքում, երբ վարվելակերպը կախված է իրավիճակից: Իսկ ինչպե՞ս: Այստեղ օրինակ բերվեցին երեք բառեր, որոնք են՝ վախը, սնափառությունն ու ժլատությունը: Նախաբան ավանդույթի մասին խոսելը ուզում եմ նշել, որ մեզ ասել են. «Գոռո-

զի կամ սնափառի հանդեպ գոռոզություն անելը երկրպագություն է»։ Ասվածի իմաստն այն է, որ գոռոզ մարդու հետ պետք է նույնությամբ վարվել և չոգևորել նրա մեծամիտ և սնափառ վարմունքը՝ որպեսզի քիթը գետնին քսվի և այլևս գոռոզություն չանի։ Վերոհիշյալ նախադասությունը վկայում է, որ որպես հոգեվիճակ գոռոզությունն ու պարծենկոտությունը ցանկալի չեն, սակայն երբ հայտնվում են նման մարդու միջավայրում՝ ինքդ էլ այդպիսին պետք է լինես։ Խորհորդն ուղղված է նրան, որ մարդու վարքը միշտ պետք է հավասարակշռված լինի, սակայն գոռոզ մարդու հանդեպ պետք է գոռոզություն արվի։ Ուրեմն, այստեղ գոռոզությունը չի ներկայացվում որպես մարդկային հատկություն, այլ՝ որպես գործողություն, որը կարող է կանխել մեկ ուրիշի մեծամտությունը։

### Մարգարեի պատգամը հատուկ պատվիրված Օմրեի<sup>33</sup>վերաբերյալ

Սա հավանաբար այն Օմրեն էր, որը Մեծ մարգարեն իրականացրեց արեգակնային օրացույցի ութերորդ տարում՝ գնալով Մեքքա, Հադիբիեում կնքած պայմանագրից հետո, երբ անհավատները թույլ չտվեցին Մարգարեին մտնել Մեքքա և նա վերադարձավ, նորից հետ գնալու պայմանավորվածությամբ։ Այն ժամանակ Մեքքան դեռ մահմեդական չէր և մարդիկ անհավատ էին։ Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն մահմեդականներին թույլ էր տրվում գնալ Մեքքա։ Մահմեդականների և ոչ մահմեդականների բախումներից խուսափելու համար ոչ մահմեդականներին հրաման տրվեց այդ օրերին լքել իրենց տներն ու Մեքքայից հեռանալ։ Մահմեդականները պետք է երեք օր մնային Մեքքայում և ապա՝ այնտեղից հեռանային։ Մարգարեի կողմից կնքված պայմանագիրն այդպիսին էր։

Երբ մահմեդականները մտան քաղաք, ղորեյշ ցեղի բոլոր կանայք, տղամարդիկ և երեխաները դուրս էին եկել, սակայն դեռ չէին հասցրել գնալ սարերից այն կողմ։ Մարգարեն գիտեր, որ նրանք սարերի ետևում թաքնված՝ մահմեդականներին են սպասում և որ դա անչափ վտանգավոր է։ Ուստի, նա հրամայեց, որպեսզի երկրպագության, աղոթքի և պտույտ կատարելու ժամանակ մահմեդականները զգուշավոր և զգոն լինեն։ Սա այն եզակի աղոթքի և շրջապտույտի արարողություններից էր, երբ բոլորը կարծես մարտի դաշտում լինեին։ Իհարկե դա աղոթքի և հաղորդության արարողություն էր, սակայն այս ամենն արվեց նրա համար, որպեսզի հակառակորդները մահմեդականներին հզոր և ուժեղ տեսնելով՝ չհամարձակվեն հարձակվել։ Տեսեք, այս դեպքում Մարգարեն պատվիրեց, որպեսզի մահմեդականները ցուցաբերեն գոռոզ վարքագիծ։ Սակայն, նա չէր ցանկանում, որ մահմեդականներն իրականում մեծամիտ լինեն։

Հաջորդ օրինակն այսպիսին է. հրամայված էր, որ մարտի դաշտում մարդն ինքնավստահ ու գոռոզ լինի, ինքնահավանի և պարծենկոտի պես հաստատուն և խրոխտ քայլի։ Ասում են, որ առաջնորդ Ալին Խոնդադի

33-Հաջ ուխտագնացության բաղկացուցիչ մասերից, երկրպագության հատուկ արարողությունների մի շարք (թ.):

պատերազմում Օմարին սպանելուց հետո հրապարակը լքեց և մահմեդականների կողմը գնաց խրոխտ, հպարտ և գոռոզ քայլքով: Այս մասին Մարգարեն ասել է. «Նմանատիպ քայլվածքն Աստված ընդունում է միայն այս դեպքում, իսկ մյուս դեպքերում այն ատելի է»:

Սա գոռոզ վարմունք է, սակայն իսլամը նույնիսկ մարտի դաշտում ատում է գոռոզությունը: Մեծաց վարքերն ու իսլամական իրավագիտությունն ուսումնասիրող ոչ մի գիտնական չի ասել, որ գոռոզությունը, որպես հատկություն և բնավորության գիծ, ունի բացառություններ: Օրինակ՝ մարտի դաշտում լավ է, իսկ դրանից դուրս՝ վատ: Կամ որտե՞ղ է լավ, իսկ որտե՞ղ՝ վատ:

Ուրեմն, այսպիսի դեպքերում գոռոզությունը նշանակում է գոռոզ վարվելակերպ: Կնոջ առումով ևս բացառություն գոյություն չունի և երբեք չի ասվում, որ կինը պետք է անպայման գոռոզ լինի իր յուրայինների կամ այլոց հանդեպ: Հիշյալ ավանդապատումներն ու գրքերը վկայում են, որ կինը օտար տղամարդկանց հանդեպ պետք է գոռոզ լինի: Իհարկե, արարքերն բնագրում գրված է «զահով», որի իմաստը փոքր ինչ տարբերվում է «գոռոզ» բառի իմաստից: Նշված բառի իմաստն այն է, որ բոլորովին սազական չէ, երբ կինը կամ տղամարդը ոչ յուրայինների հանդեպ շատ ջերմ է լինում և անսահման ուրախություն ցուցաբերելով՝ անընդհատ հաճոյախոսում, անընդհատ այլոց դիմաց ինքն նվաստացնում է: Երբ որևէ կին հանդիպում է օտար տղամարդու, պետք է զսպի իրեն: Այս առումով ասվում է, որ կինը պետք է միշտ պահպանի իր գոռոզությունն ու հեռու մնա ոչ յուրային տղամարդուց: Ուրեմն՝ գոռոզությունն այստեղ խրախուսվում է ոչ թե որպես բնավորություն, այլ՝ որպես վարվելակերպ: Ավանդապատումն ինքնին ցույց է տալիս, որ եթե կինն այդպիսին լինի, ապա որևէ օտար նրան մոտենալ չի կարող: Մենք միշտ որպես հիմք ընդունում ենք այն, որ իսլամն աշխատում է ամեն ինչում չափ ու սահման պահպանել, ինչպես գործնականում (որի լավագույն օրինակը հագուստի բազմազանության սահմանափակումն է), այնպես էլ՝ տեսականում: Եվ այդ չափն ու սահմանը միշտ էլ կանխում են հնարավոր բոլոր վտանգները:

Ուրեմն՝ իսլամը խրախուսում է ոչ թե գոռոզությունն ընդհանրապես, այլ՝ գոռոզ վարվելակերպը կոնկրետ դեպքում:

### **Վախկոտության խնդիրն այս ավանդապատման մեջ**

Այժմ կանդրադառնանք վախկոտության խնդրին: Այս առումով ևս մենք ի նկատի ունենք կնոջ զգուշավորությունը և ոչ թե՝ տղամարդու վախկոտությունն ու համարձակությունը: Համարձակությունը, որպես մի հոգեկան հատկություն, բացատրվում է ամուր սիրտ ունենալու և չվախենալու գաղափարով: Այն գովելի է և տղամարդու և կնոջ համար: Իսլամը երբեք չի ասում, որ լավ է, երբ տղամարդը համարձակ և անվախ է, իսկ կինը՝ վախկոտ: Իսկ ինչո՞ւ: Որովհետև այն, ինչը մենք համարում ենք քաջության, համարձակության կամ վախկոտության նշան, նախատեսված չէ հատուկ տղամարդու կամ կնոջ համար: Դա վերաբերվում է և կնոջը, և



տղամարդուն: Եվ հետո, մահմեդական կանայք միշտ էլ համարձակ են եղել և իսլամը միշտ էլ խրախուսել է համարձակ և անվախ կանանց, քանզի համարձակ կանայք վտանգի դեպքում երբեք չեն վարանել և չեն ընկրկել իրենց մարմնական կամ նյութական կորուստների վախից: Իսլամը միշտ էլ խրախուսում է, որպեսզի կինը լինի համարձակ և անձնագրի, թշնամու դեմ պայքարելիս՝ չվախենա կորցնել իր կյանքը, ունեցվածքն ու կարողությունը:

### **Արդ-օլ-Մութալեբի դուստր Սաֆիեի պատմությունը**

Իսլամի պատմության մեջ մենք հանդիպում ենք Արդ-օլ-Մութալեբի դուստր Սաֆիեի պատմությանը, որը մի քաջ կնոջ պատմություն է և խրախուսվում է ու միշտ ներկայացվում: Հաշեմի տոհմի ներկայացուցիչ կանաք պետք է լինեն հենց այդպիսին: Խոնդաղի պատերազմում, երբ մահմեդականները գտնվում էին անհավատների կողմից շրջափակման մեջ, Մարգարեն բոլոր կանանց առանձնացրել էր առավել ապահով տեղում: Հասանքենսաբեթ անունով մի մարդ կար, որը շատ ճարպիկ մի պոետ էր և իր ստեղծագործություններով ծառայել էր իսլամի կայացմանը: Իհարկե, նա ստեղծագործում էր նաև մինչև իսլամի ստեղծումը: Նա համարվում էր ամենաբարձրակարգ արաբ պոետներից և մյուս բանաստեղծների և խոսքի վարպետների նման իր հիմնական էներգիան վատնում էր խոսքի վրա: Բնականաբար, գործունեության ոլորտին ավելի քիչ էներգիա էր մնում: Գործնականում նա անկարող էր և մի անգամ, պատերազմի ժամանակ նույնիսկ լքեց մարտի դաշտն ու թաքնվեց կանանց մեջ: Այդ ժամանակ պատահաբար, թշնամիներից մեկը եկավ և հայտնաբերելով կանանց, հարձակվեց նրանց վրա: Կանայք նրան հրամայեցին վեր կենալ և սուրը վերցնել, քանզի թշնամին գալիս է: Սակայն նա չլսեց նրանց և չադրա գցելով՝ թաքնվեց հետևում: Վրա էր հասել այն պահը երբ կանայք այլևս չէին կարող համարձակ չլինել: Արդ-օլ-Մութալեբի դուստր Սաֆիեն արիաբար առաջացավ, թրով հարվածեց և գետնին տապալեց թշնամուն:

Իսկ սուրբ Ջահրայի կամ սուրբ Ջեյնաբի քաջությունը... Մենք տեսնում ենք, որ քաջության, սրտի կորովի, առասպելական հոգու և սպանվելուց չվախենալու տեսանկյունից սուրբ Ջեյնաբը մի անզուգական և վեհ իսլամական օրինակ է: Իսլամի պատմության մեջ բոլոր ժամանակներում նա ներկայացվում է որպես քաջության և հերոսության տիպար: Այն ինչ վերագրվում է կնոջը, դա նրա առավել զգուշավոր լինելու խնդիրն է: Իսկ զգուշավորությունը ոչ մի կապ չունի կյանքը կամ ունեցվածքը կորցնելու վախի հետ: Իսլամն ի նկատի ունի զգուշավորության վախը: Համարձակ մարդը չի վախենում և ասում է. «Կզնամ և կզոհաբերեմ կյանքս, քանզի դա կլինի պատվաբեր»: Ջոհվելու առումով կինը նույնպես պետք է այդ կերպ մտածի: Սակայն, երբ պիտի վտանգի իր պատիվը, համարձակության մասին խոսք լինել չի կարող: Այսինքն՝ երբ հարցը վերաբերվում է պատվին՝ կինն իրավունք չունի մտածել, որ կզնա և կզոհաբերի իր պատիվը: Պատիվն ու պարկեշտությունն անձնական խնդիրներ չեն, որպես-

զի դու կարողանաս դրանք զոհաբերելով՝ զոհաբերես ինքդ քեզ: Պատիվը բոլորովին այլ բան է և դու ընդամենը նրա կրողն ես: Պատիվը զոհաբերելու օրինակը նման կլինի այն բանին, որ քեզ մի թանկագին իր հանձնած լինեն և դու պարտավորվես այն հասցնել տիրոջը: Սակայն ճանապարհի կեսին համարձակությունդ բռնի և դու այն նպատակին հասցնելու փոխարեն՝ վտանգի ենթարկես:

Մի օր, Հոմայուն անուճով մեկը, մի տեղին և ուսուցանող օրինակ բերեց՝ ասելով հետևյալը. « 40-50 տարի առաջ մի բեռնակրի տեսա, որն իր գլխին դրած տանում էր միայն թագավորական և արքայական ընտանիքներին վայել շատ բացառիկ և հազվագյուտ իրերով լեցուն մի սկուտեղ: Նա այդ սկուտեղը մի տնից մյուսն էր տեղափոխում: Որոշ խարդախ անառակներ տեսան, որ դա նրան նեղացնելու համար լավ առիթ է և մոտենալով՝ անարգեցին նրան: Սիրոս լցվեց և ես կարծեցի, որ հիմա նա պաշտպանվելու համար կգցի և կկոտրի այդ սկուտեղի եղած-չեղածը: Բայց նա համբերատար լռեց, քանզի հասկանում էր, որ այդ պահին համարձակության, քաջության և պաշտպանվելու ժամանակը չէ: 2<sup>օ</sup> է որ իր ձեռքին սկուտեղն էր: Հարկավոր էր իրեն վստահված առարկաները տեղ հասցնել: Նա գիտակցում էր դրանց արժեքը:

### Կինը որպես մարդկային ավանդի կրող

Կինը, որպես պարկեշտության կերպար, հանդիսանում է մարդկային այն հզոր ավանդի կրողը, որն անձնական չէ և այն կորցնելու դեպքում դավաճանում է մարդկային հասարակությանը: Տղամարդը նույնպես պարտավոր է պարկեշտ լինել: Սակայն մենք գիտենք, որ աշխարհը կնոջ և տղամարդու իրավունքների հավասարության կոչերով ողողելու դեպքում անգամ, չենք կարող նրանց նմանեցնել կամ նույնացնել: Ոչ ոք չի կարող չեզոքացնել տղամարդու և կնոջ սեռերի տարբերությունը և, բնականաբար, որոշ վարքագծերի դրսևորման հարցում նրանք նմանօրինակ են: Սակայն որոշ հարցերում գոյություն ունեն որակական լուրջ տարբերություններ: Տղամարդը միշտ էլ կարող է վտանգել կնոջ պարկեշտությունը, իսկ կինը՝ ոչ: Ոչ եվրոպայում և ոչ էլ անգամ Ամերիկայում մենք չենք լսել, որ որևէ կին բռնաբարի որևէ տղամարդու: Իրականում կնոջ և տղամարդու բնույթները տարբեր են և ոչ մի կին չի կարող հանդես գալ որպես տղամարդու դեմ բռնացող: Մենք հաճախ ենք տեսնում, երբ երկու պատանի գնում և կանգնում են օրիորդաց դպրոցի առջև՝ անհանգստացնելով հարյուրավոր աղջիկների: Սակայն երբեք չենք լսել, որ աղջիկները գնան տղաների դպրոց և նրանց անհանգստացնեն: Բարոյականության կամ պարկեշտության տեսանկյունից անհանգստացնելը բնորոշ է միայն տղամարդուն և կինն է, որ պետք է պահպանի և պաշտպանի մարդկային այդ վեհ հատկությունն ու հասարակական դիրքը:

Այս ավանդագրույցը, որը խորհուրդ է տալիս, որ միայն կնոջ վարքագիծը զգուշավոր և վախկոտ լինի, ի նկատի չունի երկու կնոջ, այլ՝ կնոջն ու տղամարդուն, բարեկամին կամ օտարականին: Բոլորովին վայել չէ, երբ որևէ կին ասում է. «Ես մենակ կգնամ և կկանգնեմ բազմաթիվ տղա-

մարդկանց մեջ: Ինձ ոչինչ էլ չի պատահի, ես քաջ եմ և ոչ մի բանից չեմ վախենում»: Քաջը նա է, ով անձնագոհությունից չի վախենում: Այսինքն, եթե ցանկանում են նրան զրկել իրեն պահ տրվածից կամ պատվից՝ գոհում է իր անձը: Սակայն նա, ով արդեն կորցրել է պատիվը, այլևս քաջ չէ:

Ուրեմն, Ալիի կողմից խրախուսված զգուշավորությունն ու վախկոտությունը վերաբերվում է կնոջ վարքագծին, արարմունքին, ոչ թե ունեցվածքի կամ կյանքի կորստին: Պատիվը չկորցնելու համար է, որ կնոջը խորհուրդ է տրվում զգուշավոր լինել:

### ժլատության խնդիրն այս ավանդապատման մեջ

ժլատության խնդիրը նույնատիպ է և սուրբ Ղուրանն այս առումով ասում է. «Նրանք, ովքեր կանխում են ժլատությունն ու սեփական հոգու ազահությունը՝ փրկված են»<sup>34</sup>: Ղուրանն այս այսպիսի մշուկ է «հոգու ազահություն» բառը, երբ մարդը տարված է փողասիրությամբ, նյութապաշտությամբ և մեկ ռիալ կորցնելիս՝ կարծես մարմնի մի մասն է կորցնում: Հանդիսանալով աստվածային կրոն՝ իսլամը ցանկանում է զրկել մարդուն նյութական կախվածությունից և կապվածությունից: Իսլամը չի ցանկանում, որպեսզի կինը կամ տղամարդն Աստծուց բացի որևէ այլ բանի հետ կապվեն: Իսկ այս դեպքում արդյոք հնարավո՞ր է, որ Աստված սուրբ Ձահրային պատվիրեր փողասեր և նյութապաշտ լինել՝ փողից և ունեցվածքից կախված լինելը համարելով գերադասելի: Չէ՞ որ մենք տեսնում ենք, թե ինչպես է սուրբ Ձահրան Աստծո համար գոհաբերում իր վերջին հարսանեկան շապիկը: Այս քայլն իսլամում համարվում է մարդկային մեծ առավելություն և իսկապես դա մեծահոգություն է:

Հիշյալ ավանդապատման մեջ ժլատություն ասելիս ի նկատի չի առնվում անձնական ու սեփական նյութական ունեցվածքը: Կինն իր ամուսնու ունեցվածքի պահապանն է և այս առումով հատուկ շեշտվում է, որ այն երկուսի համատեղ ունեցվածքն է: Այլ կերպ ասած, կամ մեր համոզմամբ, կինը չպետք է տնտեսություն վարելիս շռայլ լինի: Տնտեսություն վարելիս շռայլությունն ավելորդություն և անմտություն է, քանզի իսլամն ասում է, որ տղամարդը եկամուտ վաստակողն է, իսկ կինն՝ ընտանիքի ներքին կառավարիչը: Բնականաբար, ով անձամբ չի տանջվել գումար վաստակելու համար, դրա ձեռքբերման դժվարությունն ու արժեքը լավ չի գիտակցում: Կինը հանդիսանում է ընտանիքի տնտեսվարն ու կառավարիչը, ուստի գնահատելի և խրախուսելի է, որ նրա կողմից յուրաքանչյուր ռիալ տնտեսվի և չշռայլվի:

Ուրեմն, այստեղ ժլատությունը ևս չի ներկայացվում որպես մարդկային հատկանիշ՝ հանդիսանալով լոկ «հաշվենկատ գործողություն», քանզի կինը տնտեսում է ոչ թե իր անձնական ունեցվածքը, այլ՝ ամուսնու: Առաջնորդների առաջնորդ Ալին և առատաձեռն էր, և տնտեսող: Պատմությունը ցույց է տալիս, որ նա իր անձնական ունեցվածքի առումով առատաձեռն էր, իսկ ընդհանուր և պետական ունեցվածքի հանդեպ՝ անչափ ժլատ և տնտեսող: Իր հարազատ եղբորն անգամ պատրաստ չէր մի

<sup>34</sup>Ղուրան, 59 : 9:

միալ տալու: Իսկ արդյո՞ք Ալին օժտված էր միաժամանակ երկու հակադարձ հատկություններով: Իհարկե ոչ, քանզի հատկության և բնավորության առումով այս երկուսն իրար հակադարձ չեն: Նա պատերազմների, զրկանքների և անզամ բեռնակրության միջոցով գումար էր վաստակում և այն բաժանում մարդկանց: Սա իսկապես առատաձեռնություն է: Իսկ մահմեդականների ընդհանուր ունեցվածքի հանդեպ սրտցավությունն ու անզամ անձնական գործի ժամանակ մեկ հատիկ մոմի խնայողությունը ժլատություն չէ, այլ՝ տնտեսվարություն: Մահմեդականների ունեցվածքի պարագայում նա թույլ չէր տալիս, որ անձնական հաշիվներ կատարելիս մեկ հատիկ մոմ անզամ վառվի, քանզի այդ մոմը պետական էր, իսկ սեփական գործերի համար պետության գանձանակից չպետք է օգտվել: Ուրեմն պե՞տք է ասենք, որ նա անչափ ժլատ էր և մոմն անզամ խնայում էր: Իհարկե չէ: Յուրաքանչյուր մարդ պետք է խնայող և սրտցավ լինի իրեն հանձնված իրերի կամ ավանդի առումով: Իհարկե սա չի նշանակում, որ մարդը պետք է իր բնույթով ժլատ և գծուծ լինի: Վարմունքը որևէ կապ չունի բնավորության կամ հատկության հետ:

Ուրեմն, վերոհիշյալ ավանդությունը չի հակադրվում բարոյականության հարաբերականության սկզբունքին: Վախկոտությունը, որպես բնավորություն ու հատկանիշ սազական չէ ոչ տղամարդուն և ոչ էլ՝ կնոջը: Իսկ համարձակությունն ու քաջությունը ընդունելի է թե կնոջ և թե տղամարդու համար:

### **Համարձակություն և ճշմարտության պաշտպանում**

Իսլամում մենք երկու տեսակի պաշտպանություն ունենք. մեկն իրավունքի պաշտպանումն է, որպես ճշմարտություն, իսկ մյուսը՝ իրավունքի պաշտպանությունը, հասարակական իրավունքների առումով: Հասարակության մեջ որոշ երևույթների ոտնահարման դեպքում առաջանում է իսլամի կողմից ժխտված և խրախուսված արժեքների պայքար: Ուստի, քաջությունը որպես մարդկային բնավորություն հատկանշական չէ միայն մարդուն, քանզի բարու և ճշմարտի պաշտպանությունն ու չարի և անիրականի ժխտումը միայն տղամարդու համար չէ պատգամված: Բարու կատարման և չարի մերժման պայմաններից մեկը քաջությունն ու համարձակությունն է: Վախկոտ մարդը չի կարող այդ հասարակական պայքարի մասնակիցը լինել: Սուրբ Ղուրանը նույնպես պատգամում է, որ չարի դեմ պայքարը և բարությունը միայն տղամարդկանց չէ հատկացված՝ ասելով. «Հավատացյալ տղամարդիկ և կանայք աջակից և խնամակալն են մեկմեկու, նրանք կատարում են բարեգործություն և հրաժարվում չարից և ուրացումից»<sup>35</sup>: Սակայն նրանց աջակցությունը պետք է պայմանավորված լինի ոչ թե անձնական ցանկություններով, այլ՝ իսլամական սկզբունքներով: Ըստ Ղուրանի որևէ տարբերություն չկա, թե նրանցից ով ում պետք է աջակցի և պաշտպանի, քանզի նրանցից յուրաքանչյուրը կարող է լինել աջակցող կամ աջակցվող: Կնոջ և Տղամարդու այս ընդհանրությունների մասին բավականին շատ է գրված սուրբ Ղուրանում, որտեղ

35-Ղուրան, 9 : 71:

մասնավորապես ասվում է. «Տղամարդիկ կանանց խնամակալն ու պահպանն են, իսկ բարեպաշտ կանայք հնազանդորեն պահպանում և պաշտպանում են իրենց ամուսնու ունեցածն ու իրավունքը»<sup>36</sup>:

Սուսավիե Ջանջանին իր հողվածներից մեկում մատնանշել է մի հիանալի միտք՝ ասելով, որ Ղուրանում նշված է, որ տղամարդն ու կինը միմյանց հանդեպ առավելություններ ունեն և, հաշվի առնելով տղամարդու որոշ առանձնահատկություններ, ընտանիքի համար գումար վաստակելն ու այն պահպանելը տղամարդու պարտականությունն է: Շատ գեղեցիկ և դիպուկ խոսք է: Հոգևորականներից ու գիտնականներից ոմանք իրենց գործընկերներին ուղղորդողն ու նրանց պահպանն են: Իսկ նրանք ի՞նչ են անում: Նրանք մերժում են չարն ու խրախուսում բարին:

Ուրեմն, մենք տեսնում ենք, որ ճշմարտության պաշտպանության գործում կնոջ և տղամարդու միջև որևէ տարբերություն գոյություն չունի և յուրաքանչյուր պայքարի հիմքը համարձակությունն ու քաջությունն է:

### Համարձակություն հասարակական իրավունքների պաշտպանության գործում

Իրավունքների կամ հասարակական իրավունքի պաշտպանության գործում, որն իսլամի հիմնական սկզբունքներից է, իսլամական իրավագետների համոզմամբ ևս կնոջ և տղամարդու միջև որևէ տարբերություն գոյություն չունի: Այս առումով Ղուրանում գրված է. «Աստծուն հաճելի չէ, երբ ինչ - որ մեկն իր խոսքերով ուրիշների վատություններն արտահայտի, բացառությամբ՝ եթե այդ անձը ենթարկվել է անիրավության»<sup>37</sup>: «Որևէ մեկը» բառը չի վերաբերում հատուկ կնոջը կամ տղամարդուն: Կամ՝ մեկ այլ այսպիսի, որը վերաբերվում է բանաստեղծությանն ու գրողներին. «Իսլամի Մարգարեն բանաստեղծ չէ, բանաստեղծները նրանք են, որոնց հետևում են մոլորյալները: Արդյոք չե՞ս տեսնում, որ նրանք ամենուրեք մոլորված են: Եվ խոսքեր են ասում առանց այն կատարելու: Բացի նրանցից, ովքեր հավատք են ընծայել և արժանավայել արարքներ են կատարում և շատ են հիշում Աստծուն և երբ ենթարկվում են անիրավության՝ ոտքի են ելնում իրենց և բարեպաշտներին պաշտպանելու: Եվ այս ճանապարհին աջակցություն են ստանում բանաստեղծություններից: Նրանք, ովքեր անիրավություն են արել, շուտով կիմանան՝ թե որտեղ է իրենց վերադարձը»<sup>38</sup>:

Ղուրանը համաձայն չէ այն մտքի հետ, որ միայն բանաստեղծությունն է հանդիսանում մարդկության զգացմունքների արտահայտումն ու հաճույքի առարկան: Այլ կերպ ասած՝ իսլամը չի ընդունում այն բանաստեղծությունները, որոնք միայն հաճույք պարգևելու և մարդուն փչացնելու համար են ստեղծվում: Սակայն մարգարեն ասել է. «Իսլամը դեմ չէ չափածո խոսքին»: Հնարավոր է, որ բանաստեղծությունն օժտված լինի իմաստությամբ և խրատով: Այս դեպքում բանաստեղծության Ֆունկցիան փոխվում է: Ղուրանը պարսավում է բանաստեղծներին, հենց այն բա-

36- Ղուրան, 4 : 34:

37-Ղուրան, 4 : 148:

38-Ղուրան, 26 : 224-227:

Նաստեղծներին, որոնք ստեղծագործում էին այն ժամանակներում: Եվ առհասարակ պոետներն ու բանաստեղծները բոլոր ժամանակներում նույնպիսին են և նրանց մեջ հազվագյուտ բանաստեղծներ կան, որ գաղափարակիրներ են, որոնցից էր օրինակ՝ Էդրալե Լահուրին: Լահուրիի բանաստեղծությունները ծառայում էին հատուկ նպատակի և չէին ուղղակիորեն արվեստ չէին դառնում, որը կարելի է ներկայացնել որտեղ կամենաս: Այս առումով Ղուրանն ասում է, որ դրանք տարբեր տերերի ծառաներ են, այսօր ծառայում են այսինչին, վաղը՝ կարող են գովերգել մեկ ուրիշին: Մի օր այս թեման են գովերգում, մյուս օրը՝ բոլորովին ուրիշ մի բան: Նրանք հենց հաջորդ օրը կարող են հերքել և մերժել նախորդ օրվա իրենց գովերգածը: Այս ամենն անսկզբունքայնության և անուսմունք լինելու նշան է: Իհարկե, բացի այն բանաստեղծներից և պոետներից, որոնց ստեղծագործությունները հոգևոր են և մեր համոզմամբ գաղափարապես ուղղված են հատուկ նպատակի: Այսօր էկզիստանցիալիստները գաղափարական և սկզբունքային ստեղծագործություններն անվանում են պարտավորված գրականություն կամ պարտավորված պոեզիա: Ղուրանը, պարտավորված ստեղծագործություններից բացի, պարսավում է մյուս բոլոր բանաստեղծությունները, բացառությամբ այն ստեղծագործությունների, որոնք ոգևորում են մարդկանց դժբախտներին օգնություն ցուցաբերելու գործում և մղում են հաղթանակի թշնամու դեմ: Դրանք կեղեքիչների դեմ պայքարի կոչերով ողողված բանաստեղծություններ են:

Այստեղ ևս Ղուրանի մեկնաբանությունն անկախ է և չի վերաբերվում կոնկրետ տղամարդուն կամ կնոջը: Առաջնորդների առաջնորդ Ալին իր «Նահե -օլ- բալադե» ստեղծագործության մեջ նշում է, որ թշվառ և արհամարիված մարդը երբեք չի կարող պայքարելու կամ դիմակայելու նախածեռնություն ցուցաբերելով՝ պաշտպանել անօգնականների իրավունքները: Այդ ամենն արվում է ամենայն լրջությամբ և վճռականությամբ:

Հիշյալ բոլոր մեկնաբանությունները ընդհանրական են: Սկզբունքայինները մի շատ գեղեցիկ և տեղին խոսք ունեն. «Ընդհանրությունների մեծ մասը բացառություններ ունեն»: Մենք սահմանում ենք մի օրենք կամ կանոն՝ անմիջապես թվարկելով դրա բացառությունները: Սակայն գոյություն ունեն որոշ ընդհանրություններ, որոնք չեն ենթարկվում ոչ մի բացառության և որոնց խոսքը, կառուցվածքն ու տրամաբանությունն ասում է. «Ես բացառություն չեմ ընդունում և ինձ համար բացառությունը ոչ մի իմաստ չունի»:

### **Սուրբ Ջահրայի համարձակությունը**

Մեր կողմից նշված ընդհանրությունները բացառություններից զուրկ ընդհանրություններ են, որոնց լավագույն և ամենավառ հաստատումը սբ. Ջահրայի և սբ. Ջեյնաբի պատմական օրինակն է: Դա իրականում մի զարմանահրաշ պատմություն է: Սբ. Ալի և սբ. Ջահրա գույգը մարդկությանը ցույց տվեց, թե ինչպես կարելի է չտրվել նյութապաշտության ու հարստության ձգտմանը:

Մի կողմից նրանք իսկապես ապացուցեցին, որ հարստության, փողի և

ապրուստի առումով բոլորովին ուշադրություն չէին դարձնում Ֆադաքի պարտեզին: Մյուս կողմից՝ ըստ իսլամի պատմական իրականության (իհարկե այս պատմությունն առավել ընդունված է սունի մահմեդականների մոտ), սբ. Ջահրան մեծ Մարգարեի վաճխանվելու պահերին շատ էր լալիս: Մարգարեն ինչ որ բան ասաց սբ. Ջահրային և վերջինս սկսեց ավելի ուժգին լաց լինել: Մի փոքր անց Մարգարեն դարձյալ ինչ որ բան շշնջաց և սբ. Ջահրան իսկույն լռեց և ուրախացավ: Հետագայում, երբ նրան հարցրեցին, թե Մարգարեն ինչ էր ասում, նա պատասխանեց. «Առաջին անգամ հայրս ինձ ասաց, որ ընդմիշտ հեռանում է կյանքից: Իսկ երկրորդ անգամ՝ որ շուտով իրեն եմ միանալու: Իմ ուրախությունը հենց դրանով էր պայմանավորված»:

Այս ամենից բացի, մենք գիտենք, որ նա հիվանդ էր և գամված էր անկողնուն: Նա շատ լավ գիտեր, որ այլևս երկար կյանք չունի և հենց այդ միջոցին էլ «Ֆադաքը» նվեր ստացավ: Այն որպես կալվածք սբ. Ջահրայի համար որևէ արժեք չուներ, սակայն Ջահրայի կողմից անչափ արժևորվում էր, որպես ոտնահարված իրավունքի վերականգնում: Վերականգնված իրականության և իրավունքի առումով Ջահրան այնքան կարևորեց այդ պարտեզը, որ գնալով Մեդինայի մզկիթ, հաշեմի ցեղի և իր կողմնակից մի քանիսի հետ խալիֆի ներկայությամբ ելույթ ունենալով՝ գետնին տապալեց հակառակորդին և պաշտպանեց իր իրավունքները: Իսկ ինչո՞ւ նա չվախեցավ, արդյոք դա չէ՞ր հակասում իսլամական դաստիարակությանը կամ արդյո՞ք դա սազական էր կնոջը: Արդյո՞ք տգեղ չէ, երբ մահմեդական կինը գալիս է Մեդինայի մզկիթ և հազարավոր մարդկանց ներկայությամբ վիճաբանում և պաշտպանում է իր իրավունքները: Ոչ, բոլորովին էլ տգեղ չէ, այլ՝ սեփական իրավունքների պաշտպանություն: Ջահրան իր արարքով ապացուցեց, որ երբ մարդը գիտի, որ մի քանի օր հետո իրաժեշտ է տալու կյանքին, ամբողջապես հրաժարվում է աշխարհիկ և նյութեղեն բաներից: Սա մարդու իրավունքների պաշտպանության և ճշմարտության հաստատման լավագույն օրինակներից է:

### **Սուրբ Ջեյնաբի համարձակությունը**


Այսպիսին է նաև սբ. Ջեյնաբի պատմությունը: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ վախճ ու զգուշավորությունը կնոջ համար բարոյական և գերադասելի հատկանիշներ են, ապա՝ սբ. Ջեյնաբը պետք է աշխարհի կանանց մեջ ամենավախկոտն ու անհնքնասերը լինելով, գլուխը պատյանից դուրս չհաներ: Նրան ոչ ոք չէր ստիպել գալ և ելույթ ունենալ ՔուՖեի դարպասների մոտ: Ելույթը երբեք պարտադրված չի լինում: Կամ էրնե Ջիադի հյուրասիրության ժամանակ ո՞վ էր նրան ստիպել հակառակել և անգամ վիրավորել էրնե Ջիադին: Չէ՞ որ դա կարող էր վտանգել նրա կյանքը: Իսկ ամենակարևորն ու վտանգավորը Յագիդի հյուրասիրությունն էր, քանզի էրնե Ջիադն ընդամենը իշխան էր, իսկ Յագիդը՝ խալիֆ: Էրնե Ջիադը ՔուՖեում էր, իսկ Յագիդը՝ Շամում, որը գտնվում էր Բյուզանդիայի հարևանությամբ: Սուլավիան էլ իսլամական միասնության ար-



տաքին քողը պահելու համար Շամուն հաստատել էր թագավորական կարգեր: Ինչպես պատմաբաններն են նշում, այնտեղ կառուցվել էին բազմաթիվ կամարներով և պատշգամբներով զարդարված շքեղ դղյակներ: Այդ դղյակներում կային ոսկեգօծ դռներ և կահույք, որոնց վրա նստում էին դեսպաններն ու եմիրները: Յագիդի հյուրասիրությունը բոլորովին այլ և առավել շքեղ հյուրասիրություն էր: Սակայն մենք տեսնում ենք, որ սբ. Ջեյնաբը չի կարևորում այդ ամենն ու դիմում է Յագիդին՝ ասելով. «Դու շատ նվաստ և փոքր մարդ ես և արժանի չես այն բանին, որ ես քեզ հետ խոսեմ»:

Արդյոք վախկոտ կինը կարո՞ղ է այսպիսի բաներ ասել: Իհարկե՝ ոչ: Սակայն Ջեյնաբը վտանգում էր ոչ թե իր արժանապատվությունն ու պատիվը, այլ՝ կյանքը, որը կորցնելուց նա չէր վախենում: Այս բոլոր հանգամանքները կրկնապատկում էին նրա համարձակությունը:

Ուրեմն, այս տարբերությունը կապված է հատուկ իրավիճակներից, որոնց մեջ կարող է հայտնվել մահմեդական կինը: Կնոջ և տղամարդու տարբերությունը վարվելակերպի մեջ է և ոչ թե՝ բարոյականության կամ անհատականության: Բարոյական վարվելակերպի առումով կնոջ և տղամարդու միջև որևէ տարբերություն գոյություն չունի: Մենք շատ լավ գիտենք, որ տղամարդը նույնպես կարող է հայտնվել այնպիսի իրավիճակներում, երբ հասարակական ավանդի պահպանման համար նրա կողմից ցուցաբերված համարձակությունը, առատաձեռնությունն ու մեծահոգությունը անտեղի լինեն: Իրավիճակներ, երբ լուրջ կեցվածքն ու հպարտ քայլքը կարող են խաթարել հասարակության անվտանգությունը և այս դեպքում տղամարդը ստիպված է գործել ինքնավստահ, խնայողաբար և զգուշավոր:



## **ՄԱՍ X**

*Երկրագոյծիան եւ դաստիարակչական  
ծրագրերի կապը*

## Հանուն Ողորմած Եւ Բարեգուլ Աստուծո



Այս հատվածում մենք կանդրադառնանք իսլամի տեսանկյունից առավել նպատակահարմար և ճիշտ՝ դաստիարակության թեմային, կրթմանն ու լավ բարքերի ձեռքբերմանը, այլ կերպ ասած՝ գործոններ, որոնք կարևորում է իսլամը: Սրանցից ամենակարևորը գիտակցությունն ու խորհումն է, որն անցած թեմաներում նշեցինք որպես նպատակ: Վերլուծումն ու գիտակցությունը լուսավորության հիմքն են, մարդու համար խիստ կարևոր: Այս գործոնի մասին արդեն խոսվեց: Երկրորդ գործոնը, որը նույնպես կարևորվում է իսլամում՝ անձի բարեպաշտությունն ու անարատությունն է, որն առավելապես կարևորվում է հատկապես Ղուրանում: Անձի բարեպաշտությունն ու անկեղծությունը հանդիսանում են մարդու կամքի ուժի ձևավորման հիմք: Այսինքն՝ միայն լուսավորվելը (կրթվելը) բավական չէ: Կրթվելուց բացի անհրաժեշտ է նաև կամքի ուժ՝ գործին նվիրվելու համար: Բարեպաշտությունն ու անարատությունը հզորացնում են մարդու բարոյական կամքն ու աշխատունակությունը: Այս խնդիրն ինչ որ չափով կարևորվում է նաև ոչ կրոնական ուղղություններում և գաղափարախոսություններում: Երրորդ գործոնը, որն էլ հանդիսանում է մեր քննարկման հիմնական խնդիրը՝ երկրպագությունն է, որը հանդիսանում է դաստիարակության և պատշաճ բարքերի ձեռք բերման աղբյուր և միջոց: Խորհումն ու գիտակցությունը հանդիսանում են կրթվելու և մտավոր զարգացման, բարեպաշտությունն ու անարատությունը՝ հոգևոր կամքի ձևավորման, իսկ երկրպագությունը՝ մարդկային խղճի և

հավատքի կայացման լավագույն գրավականներ: Երկրպագության ընթացքում ամրանում է մարդու հավատքը, որն իր հերթին հանդիսանում է գործողության մղիչ:

### Երկրպագության ոգին (էությունը)

Բազմիցս ասել ենք, որ երկրպագության ոգին կամ էությունը Աստծուն անընդհատ հիշելն ու նրանից հեռանալուց խուսափելն է: Այս մասին Սուրբ Դուրանում գրված է. «Ես «Ալլահն» եմ, ինձանից բացի չկա այլ երկրպագելի: Ինձ պաշտիր և ինձ հիշելու համար աղոթիր»<sup>39</sup>: Մեկ այլ սուրայում նշվում է. «Այն, ինչ երկնային գրքից քեզ հայտնությամբ ներշնչվել է՝ ընթերցիր և կատարիր աղոթքդ, քանզի աղոթքը մարդուն հեռու է պահում տգեղ արարքներից ու մեղքից, և Աստծո հիշատակումը վեհ է և Աստված գիտի այն՝ ինչ կատարում եք»<sup>40</sup>:

Իսլամն անչափ կարևորում և խրախուսում է աղոթքը՝ որպես հիշատակման միջոց, կրոնական ծես և ողորմություն: Իսլամը պայքարում է նաև այն բոլոր հանգամանքների դեմ, որոնք ոչնչացնում են աղոթքի ոգին և նպաստում՝ մոլորությանը: Այն ամենն, ինչը մարդուն հեռացնում է Աստծուց և զցում մոլորության մեջ՝ հարամ կամ արգելված է: Օրինակ՝ շատակերությունը, շատախոսությունը, մարդկանց հետ շփվելու ծայրահեղությունն ու երկար քնելը: Իհարկե, նշված սովորություններից խուսափելը խորհուրդ է տրվում նաև մարմնական պատճառներով, այսինքն՝ հիգիենիկ և առողջ կենսակերպից ելնելով: Սակայն, վստահաբար, միայն դրանով չի բացատրվում: Այսինքն, իսլամական խնդիրներում «դոլլեյե էլթեամ» ասելով ի նկատի ունենք այն հարցերը, որոնք չեն վերաբերվում միայն մարմնական խնամքին, այլ՝ նպատակաուղղված են նաև մարդկային հոգու թեթևությանն ու նրա ճիշտ ուղուց նվազագույն շեղման կասեցմանը:

### Աղոթքի ձևերն ու դաստիարակչական ծրագրերը

Իսլամն ունի մի առանձնահատկություն, որի համաձայն աղոթքը հանդիսանում է մարդու և Աստծո միջև կապի, ինչպես նաև մոլորության վերացման լավագույն միջոց: Սակայն, իսլամը կոնկրետ ձև է տվել աղոթքին՝ առավելագույնս կարևորելով այդ ձևը, որն էլ իր հերթին աղոթքի մեջ մտցրել է որոշակի դաստիարակչական ծրագրեր: Օրինակ՝ մարդու կողմից Աստծո սրտանց ընդունման տեսանկյունից ի՞նչ ազդեցություն ունի մարդկային մարմնի մաքուր լինելը կամ չլինելը: Այս առումով ոմանք կարող են մտածել. «Մենք ոչ թե մաքուր մարմնով, այլ մաքուր սրտով պետք է Աստծո մոտ ներկայանանք, ուստի պետք է սրտներս մաքրենք»: Սակայն, երբ իսլամը ներկայացնում է աղոթքը, հատկապես ցանկանալով, որպեսզի աղոթքն ունենա նաև որոշակի դաստիարակիչ ազդեցություն,

<sup>39</sup>-Դուրան, 20 : 14:

<sup>40</sup>-Դուրան, 29 : 45:

առաջադրում է այնպիսի բաներ, որոնք որևէ կապ չունեն բուն աղոթքի հետ, սակայն ազդում են դաստիարակության և կրթման վրա: Իսլամն ուղղակիորեն պարտադրում է այնպիսի բաներ ինչպիսիք են դուալը<sup>1</sup>, վոզուն<sup>2</sup>: Միշտ մաքուր և լվացված լինելը համարվում է իսլամական սովորույթ: Իսլամն ասում է, որ նամազի ժամանակ մարդու մարմինը պետք է մաքուր լինի, և սա ինքնին, արդեն մարքություն է:

### Աղոթքը և հասարակական իրավունքները

Հաջորդ խնդիրն իրավունքների խնդիրն է: Աղոթքի իմաստի տեսանկյունից որևէ տարբերություն գոյություն չունի մենք գողացված գորգի վրա ենք աղոթում, թե՛ հալալ: Դրանք հասարակական պայմանականություններ են և կոչված են ծառայելու այն խնդրին, որպեսզի մեկը մյուսի ապրանքը չգողանա: Սրանք այնպիսի պատգամներ են, որոնք օգտակար են հասարակական կյանքին: Աղոթքի առումով գորգի պատկանելիությունը ոչ մի նշանակություն չունի և աղոթքի բուն էության մեջ որևէ փոփոխություն չի մտցնում: Աղոթքը մի իրական գործողություն է, այսինքն՝ հոգեվիճակի: Աստծո և մարդու միջև հոգեկան կապի առումով հիշյալ գործողությունները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ: Գոյություն ունեն որոշ գործոններ, որոնք ազդեցիկ են, օրինակ՝ երբ մարդը հանդիպում է որոշակի հոգեկան ու մարմնական խոչընդոտների, ապա՝ աղոթքն ընդհանրապես խախտվում է: Այս խոչընդոտները շեղում են մարդու ուշադրությունն ու կենտրոնացումը: Իսկ մեր թվարկած գործողությունները նման ազդեցություն չունեն: Այսուհանդերձ իսլամն ասում է. «Գորգը, որի վրա նամազ ես անում, ջուրը, որով լվացվում ես աղոթքից առաջ, այն ամանը, որի մեջ լցնում ես լվացվելու համար նախատեսված ջուրը, հանդերձանքդ ու ամենայն ինչ որ կապված է նամազի հետ, պետք է մաքուր և հալալ լինի: Եթե անգամ հանդերձանքիդ մեջ մեկ գողացված թել լինի, ապա՝ աղոթքդ ընդունելի չէ: Սա աղոթքի միջոցով ևս մեկ դաստիարակչական ծրագրի իրագործում է, որը վերաբերում է հասարակական իրավունքներին, որովհետև հիշյալ պայմանականությունների բացակայությունից աղոթքի կամ երկրպագության էությունը չի փոփոխվում:

### Նամազն ու դեմքով դեպի դերլեհ<sup>3</sup> կանգնելը

Հաջորդ խնդիրը, որը նույնպես վերաբերվում է նամազին, այն է, որ իսլամն ասում է, որ նամազի ժամանակ պետք է բոլորը դեպի մի կողմ նայեն: Իհարկե, իսլամը բացատրում է, որ ոչ մի նշանակություն չունի, թե որ կողմ է ուղղված նամազ անողի հայացքը, ասելով. «Արևելքն ու արևմուտքն Աստծուն է պատկանում և ուր էլ որ երեսը դարձնեք՝ Աստված այնտեղ է: Աստված ամենակարող է և գիտուն»<sup>42</sup>: Աղոթքի էության առումով ոչ մի նշանակություն չունի, թե մենք որ կողմ ենք կանգնում, արևելք,

1-Հատուկ լոզանք նամազից առաջ (թարգմ.):

2- Չեքքերի և ոտքերի հատուկ լվացում նամազից առաջ (թարգմ.):

41-Մեքքայի տաճարի կողմը, ուր նայում են մահմեդականներն աղոթքի ժամանակ(թարգմ.):

42-Դուրան, 2 ; 115:

արևմուտք, հյուսիս, թե՛ հարավ: Եթե մենք դեմքով դեպի Քաաբա կամ Աստծո տաճարն ենք կանգնում, դա չի նշանակում, որ հակառակ կողմ կանգնած մարդիկ Աստծուն չեն տեսնում: Սա Ղուրանի պատգամն է և մենք այն կատարում են, որպես դաստիարակչական ու հասարակական մի պարտադիր գործողություն, որը ոչ մի կապ չունի աղոթքի բուն էության հետ: Դեմքով դեպի Քաաբա կանգնելու խորհուրդն այն է, որ մարդիկ հասկանան, որ պետք է միահամուռ և միասնական լինել և որ նրանց նպատակն ու շահերը նույնպես միևնույնն են: Իսկ ո՞ր կողմն ընտրել, ո՞րն է ավելի նպատակահարմար, քանզի արդեն ասվեց, որ Աստծո համար բոլոր կողմերն էլ հավասար են: Այս առումով Ղուրանն ասում է. «Առաջին տունը, որ մարդկանց և Աստծո օրհնության համար կարգվեց հենց այն է, որ Մեքքայի երկրամասում է»<sup>43</sup>: Այսինքն՝ առաջին տաճարն ու մզկիթը, որը կառուցվեց միակ Աստծուն երկրպագելու համար: Ղուրանը մեզ պատգամում է. «հիշեցեք բոլորի ավանդույթները, Աբրահամի և նրանից առաջ եկածների»: Քանզի ճիշտ է, որ Քաաբան Աբրահամի կողմից է կառուցվել, սակայն որոշ աղբյուրներ և ավանդապատումներ վկայում են, որ այն գոյություն է ունեցել նաև Նոյի ժամանակներում և անգամ նրանից էլ առաջ և Աբրահամն ուղղակի վերականգնել է եղածը: Քաաբան երբեք քանդված չի եղել և ամեն անգամ վնասվելիս՝ վերանորոգվել է:

Այս ընտրությունն ինքնին աղոթքի հանդեպ հարգանքի տուրք է, այսինքն՝ աղոթքն այնքան է կարևորվում, որ նրա համար նախատեսում են աշխարհի ամենաառաջին սրբավայրն ու առաջին տաճարը:

«Իրանի և իսլամի փոխադարձ ծառայությունները» գրքում ես առաջ են բաշել զրադաշտականների կողմից կրակի սրբացման խնդիրը, որն ավելի քան հազար տարի է քննարկվում է տարբեր շրջանակներում՝ հատկապես Մամունի իշխանության օրոք և նրանից հետո: Երբ մահմեդականները կրակը պաշտելու համար մեղադրում էին զրադաշտականների՝ վերջիններս արդարանում էին՝ ասելով, որ եթե իրենք կրակ են պաշտում, մահմեդականները հողն ու գետինն են պաշտում, քանի որ դեմքով դեպի Քաաբա են կանգնում: Երբեմն նրանք ասում էին. «Մենք ոչ թե պաշտում ենք կրակը, այլ՝ դեմքով դեպի կրակն ենք կանգնում»: Այս խոսքերը ոչ մի տեսանկյունից ճիշտ չեն, քանզի Քաաբայի հանդեպ ունեցած յուրաքանչյուր մահմեդականի և կրակի հանդեպ ունեցած յուրաքանչյուր զրադաշտի զգացմունքներն անչափ տարբեր են: Իհարկե, նրանց բոլորի զգացմունքներն էլ բխում են որոշակի կրոնական ուսմունքներից: Երբ որևէ մահմեդական դեմքով դեպի Քաաբա է կանգնում երբեք չի պատկերացնում, որ կարող է այն սրբացնել: Երեխան անգամ չի կարող պատկերացնել, որ ծնրադրելիս կամ երկրպագելիս մեծարում է Քաաբան: Սակայն յուրաքանչյուր զրադաշտական պաշտում է կրակը, և կարևոր չէ թե որպես ինչ (անգամ որպես Աստծո խորհրդանիշ): Նրանք չեն ասում, որ կրակն արարիչ է և, առհասարակ, ոչ մի կռապաշտ իր կուռքին արարիչ չի համարում, այլ ուղղակի սրբացնում է նրան: Կրակապաշտը նույնպես սրբացնում է կրակը:

Ամեն դեպքում, նամազի ժամանակ բոլորի հայացքների մի կետի վրա սևեռված լինելը աղոթքին յուրահատուկ ձև տալ է: Աղոթքի ոգին բոլորովին անկախ և այլ գործոն է և յուրաքանչյուր անձ, որևէ անկյունում առանձնանալով, կարող է Աստծո հետ հաղորդակցվել: Մարդն օժտված է այդ ոգով, սակայն իսլամը չի ընդունում նման աղոթքը: Մի կողմ դնելով այն խնդիրը, որ ծնրադրումն ու երկրպագությունն ունեն որոշակի ազդեցություններ, իսլամը ոգու առկայությունից բացի ցանկացել է աղոթքի մեջ մտցնել նաև մի շարք կարևոր գործողություններ, որոնք անհրաժեշտ են նաև կենցաղում և առօրյա կյանքում:

### Կրքերի զսպման վարժանք

Աղոթքի ձևին և ոճին տված իսլամի ամենակարևոր առանձնահատկությունը աղոթքի և երկրպագության ընթացքում կրքերի զսպման վարժանքն է: Իսկապես, նամազը մի զարմանահրաշ երևույթ է... Իհարկե այս առանձնահատկությունը գոյություն ունի նաև մահմեդականների ուխտագնացության ժամանակ, սակայն փոքր ինչ այլ ձևով: Ուխտագնացության ժամանակ գոյություն ունի «մեղդիս» կոչվող մի վայր, որտեղ ուխտավորներն Աստծուն խոստում են տալիս և դառնում «մոհրեմ<sup>1</sup>»: Մոհրեմ դառնալուց հետո մարդը պետք է զսպի իր բոլոր կրքերն ու զերծ մնա որոշ գործողություններից: Այսպիսի մի բան է նաև «ռուզեմ<sup>2</sup>», սակայն քիչ այլ կերպ:

Ողջ նամազի ընթացքում մարդը չպետք է ուտի ոչինչ՝ անգամ մի կտոր շաքար: Նամազն իր մեջ պարունակում է իսլամական դաստիարակչական բազմաթիվ սկզբունքներ: Այդ ընթացքում արգելվում է որևէ բան ուտել կամ խմել, ծիծաղել, Աստծուց բացի որևէ այլ բանի մասին մտածել, քանզի աղոթքի ընթացքում մարդը պետք է զսպի իր անձնական ցանկություններն ու կարիքները, կարողանա տիրապետել իր զգացմունքներին, որքան էլ որ ծիծաղելու կամ լաց լինելու ցանկությունը մեծ լինի: Նամազի ընթացքում արգելվում է նաև աջ, ձախ կամ հետ նայել: Այս բոլորը նպաստում են մարդու հոգևոր և մարմնային կարգապահությանը: Նամազի ընթացքում արգելվում է նաև արտասանել սովորական խոսակցական որևէ բառ:

### Ճշտապահության վարժանք

Նամազի ընթացքում կարևորություն ստացած հաջորդ խնդիրը ճշտապահության խնդիրն է ժամանակի առումով: Նամազի համար սահմանված է կոնկրետ ժամ, րոպե և անգամ վայրկյան: Անկասկած այս խնդիրը մարդու և Աստծո կապի, ինչպես նաև աղոթքի ոգու վրա ոչ մի ազդեցություն ունենալ չի կարող: Այսինքն՝ եթե մենք նամազը կեսօրից մի քանի րոպե շուտ կամ ուշ սկսենք, աղոթքի բուն էությունը չի փոխվի, սակայն հենց այն փաստը, որ շուտ կամ ուշ ենք սկսել, արդեն ինքնին փոփոխու-

1-Նա, ով ուխտագնացության երդում է տվել և հատուկ հանդերձանք հագել(թարգմ.):  
2-Մահմեդականների մեծ պառը, որն իրականացվում է ռամազան ամսվա ընթացքում(թարգմ.):



թյուն է: Իսլամը չի ցանկացել, որպեսզի ժամանակի առումով խառնաշփոթ լինի և սահմանել է կոնկրետ ժամանակ, որպեսզի մարդիկ պահպանեն այն: Օրինակ՝ երբ մենք նամազ անելու ընթացքում հասկանում ենք, որ ժամանակը ճիշտ չէր, կամ նամազի կեսը ժամանակին ենք կատարել, իսկ մյուս կեսը՝ ոչ, այս դեպքում մեր նամազն ընդունելի չէ: Սակայն, եթե գործի մեջ դիտավորություն չլինի և մենք նամազի մի մասը կատարենք, իսկ մյուսը՝ ոչ, ապա այս դեպքում նամազն ընդունելի է:

### Խաղաղասիրության ձգտում

Հաջորդ խնդիրը, որը կարևորվում և հիշատակվում է նամազին վերաբերվող աստվածաբանական նյութերում խաղաղասիրության ձգտումն ու այլոց հետ հաշտակեցությունն է: Սուրբ Ղուրանի «Համդ» սուրայում, որի ընթերցումը նամազի ընթացքում պարտադիր է, ասվում է. «Ով Արարիչ, մենք (ոչ թե՛ ես) միայն Քեզ ենք պաշտում, ով Արարիչ, մենք միայն քեզանից ենք աջակցություն հայցում»: Ուշագրավ է, որ ասվում է ոչ թե «ես», այլ՝ «մենք»: Իսլամը պնդելով հանդերձ, որ աղոթքի ընթացքում բացի Աստծուց ուրիշ ոչ մեկի մասին չպետք է մտածել, հասարակության խաղաղ գոյակցության նպատակով աղոթքի մեջ անգամ մեկ «եսը» դարձնում է հանրային «մենք», որպեսզի աղոթքի միջոցով մահմեդականների հոգու մեջ սերմանվի խաղաղության և հաշտակեցության ձգտում: Այս առումով Ղուրանը պատվիրում է ասել հետևյալը. «Մենք բոլորս միայն Քեզ ենք պաշտում և միայն Քեզանից ենք աջակցություն հայցում: Ով Տեր Աստված, մեզ բոլորիս դեպի ճշմարիտ ուղի առաջնորդիր»: Այստեղ ամբողջովին հաստատվում է համագործակցությունը, համախմբվածությունն ու համակեցությունը:

Եվ ի վերջո, ամենակարևորը խաղաղության ձգտման խնդիրն է, որը շեշտվում է իսլամական նամազում: Նամազում գոյություն ունեն խաղաղ գոյակցության բազմաթիվ կոչեր, որոնք վերաբերվում են ոչ թե այն մարդկանց, որոնց արմատապես պետք է ջնջել, այլ՝ Աստծո արժանի ու հնազանդ ծառաներին: Դրանցից մեկն է. «Ով Արարիչ, ես քո ոչ մի հնազանդ և ճշմարիտ ծառայի հետ չեմ պատերազմի և չեմ հակառակվի»:

### Նպատակ (ցանկություն)

Նպատակի կամ ցանկության խնդիրն այն խնդիրներից է, որին նույնպես մեծ ուշադրություն է հատկացվում: Այն համարվում է իսլամական իրավագիտության արքսիոմաներից և ընդունված է, որ աղոթքի և երկրպագության ոգին ցանկությունն ու նպատակն են: Մեծ Մարգարեն ասել է. «Յուրաքանչյուր մարդու կտրվի այն ինչ ինքն է ցանկանում»<sup>44</sup>: Հենց այնպես արված գործն արժեք չունի: Արժեքավոր է այն գործը, որն իրականացվում է հատուկ ցանկությամբ, ուշադրությամբ և ընտրվում է ըստ նպատակի կարևորության: Մարդու կատարած գործերը բաժանվում են երկու խմբի. գործեր, որոնք մարդը կատարում է մեքենայաբար կամ ինք-

44- Օսուլե քաֆի, հատոր 1, էջ 70:

նաբերաբար (այդ թվում նաև մեր կողմից կատարված նամագների հիմնական մասը), և գործեր, որոնք կատարվում են ուշադրությամբ և գիտակցաբար: Երբ մարդը գիտակցաբար որևէ գործողություն է կատարում, ապա՝ այդ գործողությունն ունի որոշակի նպատակ: Այս դեպքում նա կարևորում է իր գործը: Անգամ պարոն Բորուջերդին բավականաչափ տեղեկացված չէր նպատակի խնդրին և չգիտեր, որ աղոթարարի սրտում պետք է նպատակ ու ցանկություն գոյություն ունենա: Մենք սկզբում շատ էինք զարմանում, քանզի բոլոր կրոնագետները համոզված են, որ բավական է, որ մարդու մեջ ինչ որ չափով ցանկություն և հոգևոր ծգտում գոյություն ունենա, ապա մեր հարցին թե ինչ է անում՝ նա կպատասխանի, որ Աստծո համար նամագ է անում: Իսկ հակառակ դեպքում, ոչ մի կրոնագետ չի կարող արդարացնել այն: Երբ աղոթելիս որևէ մեկին հարցնում են թե ինչ է անում, իսկ վերջինս մի փոքր մտածելուց հետո է պատասխանում, ապա՝ նրա նամագն անվավեր է: Սակայն լուսահոգի պարոն Բորուջերդին մեկ ուրիշ բան էր ասում, որի համաձայն բավական չէր աղոթարարի ընդամենը մի փոքր ուշադրությունը ու շեղված չլինելը բուն թեմայից: Նրա կարծիքով մարդը պետք է ողջ էությամբ նվիրվի աղոթքին և ինչ որ բան պատասխանելիս թվա, թե ինքն իր հետ է խոսում: Աղոթարարը կեսօրի նամագի ժամանակ չորն ռաքաթ՝ արտասանելուց հետո պետք է ասի «Ալլահ աքբար», որը նշանակում է Աստված մեծ է: Իհարկե ծգտման առումով սա որևէ ազդեցություն չունի, սակայն այս դեպքում գործն անգիտակից վիճակից առավել գիտակից փուլ է տեղափոխվում: Այսինքն՝ մարդու կատարած գործողությունը դառնում է առավել գիտակցված:

### **Ցանկության կամ նպատակի հիմնասյուները**

Իսլամն առանց ցանկության և նպատակի որևէ աղոթք չի ընդունում: Ցանկությունն իսլամի տեսանկյունից ունի երկու հիմնասյուն: Մեկն այն է, որ գործողությունը պետք է կատարվի կարևորվելով, այլ ոչ թե որպես սովորություն, որը մարդու օրգանիզմը կատարում է մեքենայաբար և առանց ուշադրության: Մարդն առանց որևէ ուշադրություն դարձնելու և բնազդաբար շատ գործողություններ է կատարում, որոնցից է օրինակ՝ քայլելը: Քայլելիս մարդն ուշադրություն չի դարձնում այն բանի վրա, որ քայլում է: Ուրեմն ցանկության առաջին հիմնասյունն այն է, որ մարդու ուշադրությունը պետք է կենտրոնացած և ուշադիր լինի: Այն ուշադրությունը, որ գոյություն ունի ուղղակի նամագի սկզբում, բավարար չէ և եթե մարդ նամագի ընթացքում մտովի շեղվի, ապա նամագն անվավեր է:

Ցանկության երկրորդ հիմնասյունը մարդու անկեղծությունն ու պարզությունն է: Ուրեմն կարող ենք ասել, որ ցանկությունը բաղկացած է «Ի՞նչ եմ անում» և «Ի՞նչի՞ համար եմ անում» հիմնասյուներից: Սրանք ամենակարևոր հարցերն են և յուրաքանչյուր ոք Աստծուն մոտենալու և գոհացնելու համար պարտավոր է առաջնորդվել հիշյալ սկզբունքներով:

1-Աղոթքի հատուկ չափաբաժին: Յուրաքանչյուր ռաքաթն արտասանելուց հետո պետք է ծնրադրել (թարգմ.):

## Ցանկության կարևորությունը

Ցանկությունն այնքան կարևոր է, որ եթե բուն գործողությունն ու ցանկությունը չափենք, ապա ցանկության նժարը կգերակշռի բուն գործողությանը: Ասածիս բացատրությունը մեծ Մարգարեի հայտնի խոսքն է, որում ասվում է. «Բարեպաշտի ցանկությունը նրա գործողությունից ավելի վեր է»: Իսկ ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը: Արդյո՞ք առանց գործողության ցանկությունն ավելի լավ է, քան՝ առանց ցանկության՝ գործողությունը: Առանց նպատակի և ցանկության գործողությունն արժեք չունի: Անարժեք է նաև առանց գործողության ցանկությունը: Ուրեմն, այս ամենն ապացուցում են, որ ցանկությունն ու գործողությունը պետք է միասին հանդես գան: Այս խնդիրը մնան է հոգու և մարմնի խնդրին, երբ մենք պնդում ենք, որ հոգին ավելի կարևոր է, քան մարմինը՝ քաջ գիտակցելով, որ հոգին որքան էլ որ կարևոր լինի չի կարող առանց մարմնի հանդես գալ: Այս ասելով, մենք ի նկատի չունենք, որ հոգուց և մարմնից կազմված արարածի մի բաղկացուցիչը մյուսի հանդեպ առավելություն ունի:

Իսլամը նպատակն ու ցանկությունը համարում է ամբողջի մի մասը և ասում, որ գործողությունն ու ցանկությունը պետք է միասին հանդես գան, և որ մարդը պետք է գիտակցի, թե ինչ է անում և ոչ մի գործողություն անգիտակցաբար չկատարի:

## Սովորություն

Հոգեբաններն ասում են, որ երբ ինչ որ բան մարդու մոտ սովորություն է դառնում անմիջապես առաջանում է երկու հակադարձ հատկություն: Յուրաքանչյուր գործողություն, դառնալով սովորություն, մարդու համար դառնում է ավելի դյուրին և պարզ: Օրինակ՝ երբ մեքենագրուհին սովորում է մեքենագրել, ապա՝ որքան շատ մեքենագրի, նրա գործն այնքան արագ առաջ կգնա: Սակայն, ժամանակի ընթացքում նա ավելի ու ավելի քիչ ուշադրություն է դարձնում իր գործին և այդ գործողությունը վերածվում է ուղղակի սովորության՝ կատարվելով արդեն ակամա (մեխանիկորեն): Սովորության առանձնահատկությունը կայանում է հենց սրանում: Իսլամում ցանկությունը կամ նպատակը կարևորվում են նշված երևույթի կանխման նպատակով, որ սովորությունները չդառնան այնպիսի սովորություններ, որոնք կատարվում են ակամա, առանց որևէ ցանկության և աննպատակ:

Սրանք այնպիսի հանգամանքներ են, որոնք մենք ձեռք ենք բերում միայն նամազի միջոցով՝ հասկանալով, որ այդ աղոթքի միջոցով իրականացնում ենք բազմաթիվ դաստիարակչական ծրագրեր: Իսկ որ ամենակարևորն է, նամազի արարողությունը մարդու մեջ Աստծո հանդեպ սեր, բանականություն և բարություն է սերմանում, որն էլ հանդիսանում է երկրպագության ոգին:

Գոյություն ունի երկու խնդիր, որոնց մասին կուզեի խոսել: Առաջինն

այն խնդիրն է, թե իսլամական դաստիարակության և բարոյականության մեջ ո՞ր սկզբունքներն ու հիմքերն են կարևորվում: Բարոյականության և դաստիարակության առումով ճիշտ չէ «լավ բարք կամ լավ դաստիարակություն» արտահայտությունը: Քանզի լավ դաստիարակությունը կամ լավ բարքը պետք է ձեռք բերել: Ոչ ոք չի հերքում ասվածը, սակայն կարևորն այն է, թե որ ուղղությունն ինչ արժեհամակարգ կամ բարոյական նորմ ունի: Աշխարհի բարոյական ուղղությունների միջև, որոնք բոլորն էլ լավ բարքերի ու բարոյականության հիմք են համարում իրենց կողմից ներկայացվածը, գոյություն ունի մինչև անգամ հակասություն: Այսինքն՝ նույն գործողությունը մի ուղղության կողմից կարող է համարվել բարոյական, իսկ մեկ ուրիշի կողմից՝ անբարոյական: Բարոյականությունը հրամայական գիտություն է, այսինքն՝ գիտություն այն մասին, թե ինչպիսին պետք է լինել: Այն կարգադրում է. « Եղիր այսպիսին»: Խնդիրը կայանում է նրանում, թե ինչպիսի՞ն պետք է լինել, որպեսզի տվյալ ուղղությունը մեզ լավ համարի: Ուրեմն, միայն լավ բարք ունենալու կոչն ինքնին չի կարող կոնկրետ որևէ ուղղության ապացույց լինել: Գուցե արդեն բազմիցս ասել ենք, որ ամենափուչ և ամենադատարկ խոսքերը զրադաշտականների այս ասույթում է, որը հնչում է. «Բարի գործ, բարի խոսք և բարի միտք»: Ախր, բարին ո՞րն է: Սա նման է այն քանին, որ ինչ որ ճարտարապետի պատվիրեն մզկիթ կառուցել և հարցնեն, թե ինչ նախագծով է կառուցելու: Իսկ նա պատասխանի՝ շատ լավ նախագծով: Կամ, երբ դերձակին հարցնես թե ի՞նչ մողելով է կարելու, նա պատասխանի՝ մի լավ մողելով: Բոլորովին պարզ չէ, թե նրա լավը որն է: Ո՛րեմն, երբ ասում ենք իսլամական բարոյական նորմեր և սկզբունքներ, ի նկատի ունենք այն ամենը ինչն իսլամի տեսանկյունից լավ է կամ՝ վատ: Միայն այս դեպքում կարող ենք ըմբռնել իսլամական բարոյականության և դաստիարակության մեթոդները:

### Նիցշեի տեսությունը

Աշխարհի բոլոր բարոյագիտական ուղղություններում բարոյականության հիմնական առանցքը եսապաշտության և եսասիրության դեմ պայքարն է: Այսինքն՝ բարոյական են համարվում այն գործողությունները, որոնց իրագործման նպատակը հենց ինքը՝ մարդը չէ: Այս դեպքում մարդու «ես»-ի պարհսպը փլուզվում է: Այն պարհսպը, որը նա կառուցել էր իր անձի և այլոց միջև՝ եսասիրությունից դրդված: Միայն մի քանի ուղղություններ կան, որոնք պնդում են, որ մարդը պարտավոր է իր «ես»-ը զարգացնել և լավը հենց դա է: Այս կարծիքին էր նաև Նիցշեն, որի տեսանկյունը ոչ մի կերպ չէր համընկնում մարդասիրության, անձնագրության և ուրիշներին սիրելու գաղափարների հետ:

Նա պնդում էր, որ հիշյալ բոլոր գաղափարները անհիմաստ են և երջանիկ է այն մարդը, որը ձգտում է իշխանության և ուժի, իսկ ժուժկալությունը բոլորովին անօգուտ է: Սարմնական ցանկությունները պետք է զարգացնել և ոչ թե՛ զսպել: Թույլը պետք է վերանա և եթե որևէ մեկը փոսն է ընկնում, ապա՝ նրա վրա պետք է քար գցել: Նրա ամենամեծ մեղքը տկա-

րությունն է: Նիցշեն համոզված էր, որ մյան բարոյականության տարածման դեպքում մարդկությունը կզարգանա, քանզի որոշ ժամանակ հետո սերունդների գտում կկատարվի, կմնան միայն ուժեղները, որոնք էլ կզարգացնեն մարդկությունը: Նրանք, ովքեր տկարներին օգնելու կոչեր են անում, մարդկության ամենամեծ թշնամիներն են:

Այս գաղափարն աշխարհում թոհուրթո առաջացրեց, քանզի Նիցշեն քննադատում և դատապարտում էր հենց Հիսուս Քրիստոսին, որը բոլորից ավելի շատ էր քարոզում օգնել տկարներին և սիրել միմյանց: Նա քրիստոնեությունը համարում էր հասարակության համար ամենավտանգավոր ուսմունքը:

Հաջորդ խնդիրն այն է, որ մենք երկու տեսակի «ես» ունենք: Առաջին «ես»-ը, որի հզորացումը մենք համարում ենք վավաշտություն, եսասիրություն, եսապաշտություն և մարմնապաշտություն, պետք է տապալել, վերացնել: Սակայն գոյություն ունի նաև մեկ ուրիշ «ես», որը պետք է զարգացնել, դաստիարակել և չպետք է թույլ տալ, որպեսզի այն պարտվի կամ կործանվի, քանզի նրա կործանման դեպքում արմատախիլ է արվում բուն իսլամական բարոյականությունը:

### **Իսլամական հասարակության բարոյականության երեք տեսակները**

Իսլամական հասարակությունում գոյություն ունի բարոյականության երեք տեսակ, դրանք են՝

Փիլիսոփայական կամ Մոկրատեսյան բարոյականություն, որն անչափ խիստ և գիտական լինելու պատճառով սահմանափակվել է միայն կրոնագետների և փիլիսոփաների կողմից ճանաչվելով՝ մուտք չգործելով և չտարածվելով լայն հասարակական շրջանակներ: Սակայն, ի տարբերություն այս մի տեսակին, բարոյականության մյուս երկու տեսակները սովորական մարդկանց մեջ առավել տարածում են գտել:

Միստիկական (արեՖանե) բարոյականությունը, դա այն բարոյականությունն է, որի կրողները միստիկներն ու սուֆիներն էին: Բարոյականության այս տեսակը հիմնականում հիմնված է Երկնային Գրքի ու ավանդույթի վրա:

Ավանդապատումային բարոյականությունը ստեղծվել և մարդկանց մեջ սերմանվել է մահմեդական ավանդապատումների ասացողների կողմից, տեղեկությունների հավաքագրմամբ և տարածմամբ:

Բարոյականության այս երկու տեսակները, ի հեճուկս որոշ հակասական դրույթների, բազմաթիվ ընդհանուր կողմեր ունեն: Միստիկական բարոյականության հիմնական առանցքը մարմնապաշտության և ցանկությունների դեմ պայքարն էր: Դա իրականում ճշգրիտ ուսմունք է և հանրակնում է Սուրբ գրքի և ավանդույթի սկզբունքներին: Սակայն, այն փոքր ինչ չափազանցված է, որի արդյունքում ձևավորվում է մեկ ուրիշ ուսմունք, որն այլևս չի համապատասխանում սուրբ գրքին ու ավանդույթին: Այն ինչ որ չափով մեռյալ է դարձնում կենդանի իսլամական բարոյականությունը: Այս էթիկետը տարածողները եսասիրության, ցանկությունների և մարմնականի դեմ պայքարի անվան տակ անտեսում են այն՝

մի թույլ կետ: Սուֆիները բանաստեղծության, պոեզիայի և արձակի լեզվով սկսել են քարոզել ծառայելով իսլամական բարոյականությանը, սակայն, նրանք երբեմն սխալվել են:

Այս առումով էբն էբի ալ Չադիդն ասում էր հետևյալը. «Էբրահիմ Ադհամն<sup>2</sup> ասաց, որ բացի երեք դեպքից, որևէ այլ առիթով այդքան չի ուրախացել (հիարկե բարոյական տեսանկյունից): Առաջին անգամ անչափ ծիծաղեցի, երբ նավի վրա էի և մի դերասան ծիծաղեցնում էր նավի մարդկանց, որոնք հավաքվել էին նրա շուրջ: Նա պատմում էր, թե ինչպես է զինվորական ծառայության ժամանակ կռվել և ձերբակալել մարդկանց: Չետո նրանց քարշ տալու և բերելու տեսարանը նկարագրելիս նայեց շուրջն ու տեսավ, որ ինձանից բացի ավելի հարմար մեկը չկա, մազերս բռնեց ու քարշ տալով բերեց մեջտեղ՝ ասելով. «Այ, այսպես էինք նրանց քարշ տալիս» քաշեց: Շատ ուրախացա՝ տեսնելով, որ նավի վրա ինձանից ավելի թշվառ մեկը չկա (պատկերացրեք, որ նա այս ամենը ներկայացնում է դրական տեսանկյունից: Սա կատարելապես հակասում է Իմամ Ալիի և Իմամ Սադեդի ասածներին): Երկրորդ անգամ ուրախացա, երբ հիվանդ պառկած էի մի մզկիթում: Դա այն ժամանակ էր, երբ աղքատներին մզկիթից վռնդում էին: Սոեզինը, որը նաև հավաքարար էր, եկավ և հրամայեց վեր կենալ դու դուրս գալ: Ես հիվանդ էի և չէի կարող կանգնել: Տեսնելով, որ չեմ կարող ինքս գնալ ոտքիցս բռնեց և ինձ քարշ տալով մզկիթից դուրս գցեց: Շատ էի ուրախացել, որ նրա տեսանկյունից այդքան նվաստացած ու տկար էի (հիարկե նա այս բոլոր նվաստացումներն ու անարգանքները տանում է եսասիրության և եսապաշտության դեմ պայքարելու նպատակով՝ դրանք համարելով լավ բնավորության և վարքի ձևավորման քաղցր հուշեր): Մի մուշտակ ունեի, որին նայելիս դժվարանում էիր ասել մորթին է շատ, թե՛ ոջիլը»:

Իհարկե, ասվածը չի համընկնում իսլամական բարոյականության հետ, քանզի իսլամն ասում է, որ պետք է հարվածել այն ծաղրածուի բերանին: Իսլամը մաքրությունը համարում է հավատքի հիմնական բաղադրիչներից: Չիշյալ դեպքերը եսապաշտության դեմ պայքար հանդիսանալով հանդերձ՝ սխալ են:

Էբն էբի ալ Չադիդը պատմում է նաև, որ մի մարդ հայտնի սուֆիներից մեկին իր տուն հյուրասիրության էր հրավիրել: Սուֆին գնացել էր, սակայն հրավիրողը ներողություն էր խնդրել ու չէր ընդունել հյուրին: Այս դեպքը կրկնվել էր մի քանի անգամ, սակայն սուֆին բոլորովին չէր վիրավորվել այդ նվաստացումից (սուֆիները նվաստացումից չէին վիրավորվում): Չետագայում հրավիրող մարդը մեծարում էր այդ սուֆիին և ասում. «Դու շատ մեծ մարդ ես: Ես երեք անգամ քեզ մեր տուն հրավիրեցի, բայց՝ չընդունեցի և վիրավորեցի քեզ, իսկ դու՝ չնեղացար»: Սուֆին նրան ասել էր. «Ոչ, սա առանձնահատկություն է, այլ՝ բնավորություն, որով օժտված են նաև շները: Եթե շանը հաց տաս կմոտենա դռանդ, եթե ոչ՝ կհեռանա»: Այս դերվիշը նվաստացումից չէր վիրավորվում անգամ այն դեպքում, երբ ինչ որ մեկը վիրավորում էր նրա սեփական անձն ու մարդկային պատիվը: Իսկ պատասխանելիս օրինակ էր բերել շանը:

2-Էբրահիմ Ադհամը էմիր էր, սակայն դարձի գալով դարձավ սուֆի (թարգմ.):

Ջոնեյդ Բադդադին՝ այս առումով մի հետաքրքիր բան է ասել, որից մի նախադասությունը բացասական է, իսկ հաջորդ երկուսը՝ դրական: Նա ասել է. «Եթե միստիկը գետնին չի հավասարվել և բոլորը նրան չեն տրորել, ուրեմն՝ միստիկ չէ (իհարկե ասվածը ճիշտ է): Արե՞Ֆը պետք է ամպի նման լինի, որպեսզի նրա ստվերի տակ ծածկվեն բոլորը: Նա պետք է անծրեի նման տեղա հողի և մարդկանց վրա (սա նույնպես ճիշտ է ասված): Հիմա առաջին նախադասությունը համեմատենք երկրորդի հետ. «Վասայել» գրքում մի հատված կա՝ «Բռնության նողկանք» անվամբ, որտեղ ասվում է, որ մարդու կամքը, ցանկությունը, մասնագիտությունն իր ձեռքերում են և կարող է ապահարզան տալ անգամ կնոջը, սակայն չի կարող ասել, որ տնօրինում է իր պատիվը: Սա իսլամական բարոյականության սկզբունքներից մեկն է: Իսլամական բարոյականությունը պատվիրում է պահպանել սեփական հարգանքն ու պատիվը, որին ավելի հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ քննարկման ժամանակ:



## **ՄԱՍ XI**

*Մեզատի վեհանճարության խնդիրը  
Ղուրանում և ավանդապատումներում*

## Հանուն Ողորմած և Բարեգույն Աստուծո

Անցած քննարկման ընթացքում մենք լուսաբանեցինք անձի վեհանձնության, արժանապատվության և այլ խնդիրներ, որոնց անդրադարձել են իսլամական աղբյուրները: Ինչպես արդեն նշվեց սա այնպիսի մի հարց է, որն ավելի քիչ է ուշադրության արժանացել, կամ ընդհանրապես չի արժանացել:

Սակայն իսլամական բարոյականության սկզբունքներն ու արմատները մենք կարող ենք բացահայտել ու ապացուցել հենց այս խնդրի միջոցով, այսինքն՝ մարդու բուն արմատների, սեփական վեհանձնության ու արժանապատվության վերականգնմամբ: Հետաքրքիր է, թե արդյոք իսլամական աղբյուրներում գոյություն ունի՞ այնպիսի մի ուսմունք, որը ստիպում էր մարդ արարածին իր սեփական անձի կարևորությունն ու ուժը գնահատել, խորը հասկանալ և այդ ամենին ուշադիր լինել: Իսկ գոյություն ունենալու դեպքում արդյո՞ք այն չի հակադրվում իսլամի՝ եսապաշտությունն ու անձնապաշտությունը մերժելու ուսմունքին:

### Անձի արժանապատվություն

Իսլամական բազմաթիվ մեկնություններում եսասիրության և պատվախնդրության զգացումը ներկայացվում է «անձի արժանապատվություն» անվամբ: Դրանցից ամենաաիմնավորը սբ. Դուրանի մեկնությունն է, որը առասպելական է և որտեղ ասվում է. «Վեհանձնությունը միայն հավատացյալների ու բարեպաշտների արժանիքն է»: Այսինքն՝ վեհանձ-

նության արժանի են միայն բարեպաշտները: Սա անձի հանդեպ ուշադրության դրսևորումներից է:

Սարգարեական մի ասույթ կա, որտեղ ասվում է. «Եթե որևէ մեկից ինչ որ բան ես խնդրում, արա դա արժանապատվորեն»: Այսինքն՝ անգամ խնդրելու դեպքում վեհանձնորեն պետք է խնդրել և չնվաստանալ մեկ ուրիշի առջև: Ոչինչ ձեռք մի բերեք ձեր արժանապատվությունը կորցնելու հաշվին:

Հանրահայտ մի նախադասություն ևս կա Նահե -օլ- բալադեում, որտեղ ասվում է. «Սեռնել, նշանակում է ապրել առանց արժանապատվության և նվաստացած, իսկ հաղթական մահը նշանակում է կյանք»: Այստեղ անձի արժանապատվությունը, հարգանքը, պատիվն ու վեհությունն այնքան բարձր են գնահատվում, որ կյանքն առանց դրանց դառնում է անիմաստ: Դրանց առկայության դեպքում բոլորովին կարևոր չէ, թե մարդկային մարմինը երկրի վրա գոյատևում է, թե ոչ: Իսկ հիշյալ արժեքների բացակայության դեպքում մարդու ապրելը կյանք չի համարվում:

Այս մեկնությամբ հատկանշական է Իմամ Հոսեյինի ապստամբության օրը արված հայտնի արտահայտությունը. «Մահն ավելի գերադասելի է, քան կամքիդ հակառակ նենգ մարդուն ենթարկվելը<sup>49</sup>»: Այս ասելով Իմամ Հոսեյինը միայն արժանապատվություն է նշել: Այդպիսին էին նաև նրա մյուս արտահայտություններն ու կոչերը, որոնցով ոգեշնչվում և առաջնորդվում էին ապստամբության բոլոր մասնակիցները: Աշուրայի կամ Հոսեյինի շարժման ամբողջ իմաստը իսլամի պատմության մեջ միայն արժանապատվության ու վեհանձնության խնդիրն էր: Իմամ Հոսեյինն ասում էր. «Պատվով մեռնելն ավելի լավ է, քան՝ անպատիվ ապրելը<sup>50</sup>»:

Հաջորդ մեկնությունը, որը մոտ է մեր խնդրին, դարձյալ Իմամ Հոսեյինից է. «Սարդը պետք է ճշտախոս լինի, քանզի ճշտախոսությունը մարդու պատիվն է<sup>51</sup>» (այստեղ ճշմարտախոսությունը հանդիսանում է մարդկային վեհության չափանիշ):

Իսկ սուտը նվաստություն և տկարություն է: Անկարող և տկար մարդը միայն կարող է ստել: Ուժեղ մարդը երբեք չի ստում:

Նահե -օլ- բալադեում կա նաև մեկ ուրիշ արտահայտություն, որտեղ ասվում է. «Նա ով առաջնորդվում է ընչասիրության կոչերով՝ նվաստացնում է իր անձը»: Այստեղ ընչաքաղցությունը դատապարտվում է այն առումով, որ այն ստորացնում է մարդուն: Կրոնական առումով արգելված է, որ մարդը բոլորին պատմի իր դժվարություններն ու խնդիրները՝ քանզի այդ գործողությունը նվաստացնում է նրան:

Իմամ Սադեդից մի ավանդապատում կա, որին անդրադարձել են իմ «Ճշմարիտների պատմություն» գրքում:

Մեկը գալիս է Իմամ Սադեդի մոտ և բողոքում ճակատագրից՝ պատմելով իր դժվարությունների, պարտքերի ու դժբախտությունների մասին: Իմամ Սադեդը նրան մի քիչ զումար է տալիս: Մարդն ասում է. «Ես ինչ որ բան ստանալու ակնկալիք չունեի, այլ ուզում էի կենսագրությունս պատմել, որ աղոթեք ինձ համար»: Իմամն ասում է. «Ես չասացի, որ դու ակն-

49-Բահար -օլ- անվար 128/ 78:

50-Բահար -օլ- անվար 192/44, նոր հրատ.:

51- Յադուբյան պատմություն, 246/2:

կալիքներ ունես, բայց սա վերցրու, ծախսիր և միշտ հիշիր, որ դժվարություններդ մարդկանց չպատմես, քանզի նրանց մոտ կնվաստանաս<sup>52</sup>»:

Ասում են նաև, որ այն մարդը, որն ուրիշներին պատմում է իր բոլոր գաղտնիքներն ու դժվարությունները՝ նվաստացնում է իրեն: Ով ենթարկվում է իր մարմնի ցանկասիրությանը՝ իր անձի դեմ նվաստանում է: Սա շատ իմաստուն միտք է:

Նաև «–օլ– բալադեում կա նաև մեկ ուրիշ ասույթ, որը հնչում է. «Մահ, և ոչ թե՛ ստորացում»: Ինչո՞ւ պետք է մարդն ուրիշներից օգնություն խնդրի: Քչով կբավարարվեմ և ուրիշներից ոչինչ չեմ ուպահանջի<sup>53</sup>»: Սաադին իր «Բուսթան»-ում մի պատմվածք ունի, որը մի արեՖի մասին է, սակայն այս պատմվածքն ավանդապատում է.

Մի օր Իմամ Ալին անցնում է մսավաճառի խանութի մոտով: Մսավաճառն ասում է, որ լավ միս է բերել: Իմամը պատասխանում է, որ հիմա փող չունի: Մսավաճառն ասում է. «Ոչինչ, կսպասեմ»: Իմամն ասում է. «Ոչինչ, ես իմ ստամոքսին կասեմ, նա կսպասի»: Հաջորդ ավանդապատումն Իմամ Սադեդի խոսքն է, որը նույնպես վերաբերվում է վարվելակերպին: Իմամ Սադեդն ասում էր. «Այնպես կոպիտ ու բիրտ մի եղիր, որ մարդիկ չուզենան քեզ հետ շփվել: Չլինես նաև շատ թույլ, որպեսզի ուրիշները քեզ չծաղրեն ու չնվաստացնեն»: Սա անցած նյութում նշված էրն էրի օլ Հադիդի կողմից ասածի ճիշտ հակառակն է: Մեծ սուՖին պատմում էր, որ անչափ ուրախացել է, երբ իրեն ծաղրել ու նվաստացրել են, սակայն իսլամը հորդորում է ճիշտ հակառակը: Մարդու հոգու ներքին համեստությունն ու ուրիշների կողմից ծաղրված և նվաստացած լինելը տարբեր բաներ են: «Վասայել» գրքի երկրորդ հատորի 203 էջում Իմամ Սադեդից մի ավանդապատում կա, որի համաձայն Իմամ Ալին միշտ ասում էր. «Քո սրտում միշտ պահպանիր երկու հակասական զգացմունք. միշտ մտածիր, որ մարդկանց կարիքն ունես, այսինքն՝ մարդկանց հետ վարվիր նրանց կարիքն ունեցողի պես և միշտ զգա, որ նրանց կարիքը չունես և նրանց հետ վարվիր այնպես, կարծես՝ ոչ մեկի պետքը չես զգում»: Սակայն, այս երկու զգացումը միաժամանակ մի բանի նկատմամբ չէր կարող դրսևորվել և ամենայն հավանականությամբ Իմամն ի նկատի ուներ երկու տարբեր բաներ: Հետևաբար, նա խորհուրդ է տալիս. «Մարդկանց կարիքը զգացողի նման վարքը կլինի քո խոսքի մեղմությունը, բարեկրթությունն ու խոսքը ողջույնով սկսելը: Իսկ մարդկանց կարիքը չունեցողի վարքը պետք է դրսևորվի այն հարցերում, որոնք վերաբերվում են քո պատվին և արժանապատվությանը: Երբ տեսնես, որ հիշյալ հարցերում մի փոքր փափկություն ցույց տալով կարող ես վտանգել պատիվդ ու առաքինությունդ, ոչ ոքի կարիքը չունեցողի նման պահիր քեզ»:

Սրանք այն որակումներն էին, որոնք կոչվում էին պատիվ:

Գոյություն ունեն նաև որակումներ, որոնք կոչվում են վեհություն: Դարձյալ մեջբերում ենք սբ. Ղուրանից. «Եվ մի թուլացեք և մի տրտմեք, և դուք առավել եք, եթե հավատք ունենք»<sup>54</sup>: Վեհության խնդիրը նրա կոչի խնդիրն է:

52-Բահար –օլ– անվար, 34/47:

53-Հեքմաթ, 396:

54-Ղուրան, 3 : 139:

Հաջորդ մեկնությունը ուժեղության և հզորության հանգամանքն է, որը դարձյալ վերաբերվում է անձին (սեփական հզորության զգացում), սակայն այլ դրսևորմամբ: Իմամ Հոսեֆինից մի ավանդապատում կա, որտեղ ասվում է, որ ստեղծ թուլության նշան է, ուժեղ մարդը երբեք չի ստի: Սա հուշում է այն մասին, որ մարդը պետք է իր մեջ հզորության և ուժի զգացում ունենա, իսկ ստեղծ, բամբասելն ու բանասարկությունը թուլությունից և տկարությունից են գալիս: Բամբասանքի և բանասարկության վերաբերյալ նույնպես մի ավանդություն գոյություն ունի, որի համաձայն բամբասանքն ու բանասարկությունը թույլ ու անկարող մարդու վերջին ջանքերն են: Ուժեղ մարդը երբեք իրեն թույլ չի տա որևէ մեկի հետևից չարախոսել:

Մեկ ուրիշ ավանդապատման մեջ ասվում է. «Վաստակիր քո հանապազօրյա հացը, սակայն վեհանձնորեն և արժանապատիվ ճանապարհով: Քո սեփական անձն ամեն ինչից վեր դասիր և թույլ մի տուր, որ ուրիշների մոտ թույլ և նվաստացած լինես»<sup>55</sup>: Ավանդույթն ասում է, որ մարդը պետք է անձամբ վաստակի իր ապրուստը: Իսլամում բարոյական ճանապարհով ապրուստի միջոց վաստակելը համարվում է ուժի և հզորության նշան, իսկ հակառակ դեպքում՝ մարդը տկար ու անկարող է և արժանանում է քննադատության ու դատապարտվում:

### Անձի վեհությունը

Գոյություն ունի նաև «անձի վեհություն» կոչվող մեկ այլ խնդիր, որը համարվում է մարդկային հոգու բացառիկ առանձնահատկություններից մեկը: Լավ բարքը այս բացառիկ երևույթի հետ համահունչ է, իսկ վատը՝ անհամատեղելի: Մարդն օժտված է մի շատ թանկարժեք հարստությամբ, որը հենց իր անձն է: Մարդուն ասվում է. «Զգույշ եղիր, որ չկորցնես կամ չպղծես սեփական անձդ, քանզի սեփական «ես»-ը շատ թանկ և բացառիկ է»:

Օրինակ՝ Իմամ Ալիին Լահեջ –օլ- բալադեում բերված մի նամակում դիմում է Իմամ Հասանին և ասում. «Քո սեփական արժանապատվությունն ամեն ինչից վեր ու առավել համարիր, քանզի այն կորցնելու դեպքում չես կարող վերականգնել: Մի կորցրու այն, որովհետև դա մի անզին գոհար է, որն ամեն ինչից ավելի թանկ է»: Խորհուրդը վերաբերվում է վեհությանն ու վսեմությանը, որոնք ամեն ինչից ավելի թանկ ու գերադասելի են և երբեք և ոչ մի գնով չպետք է դրանք կորցնել: Օրինակ՝ եթե աշխարհում կան բաներ, որոնցից կախված է որևէ երկրի պատիվը, ապա այդ երկրի բնակչության համար դրանք ամենավեհ ու ամենաթանկ արժեքներն են: Ոչ մի ազգ պատրաստ չէ դրանք շահարկել, եթե իհարկե կանգնած չէ ծայրադքատության և սովամահի լինելու վտանգի առջև: Դրանք կարող են լինել որոշ գիտական, գրական և հոգևոր արժեքներ: Օրինակ՝ Շեյխ Լոթֆուլլայի մզկիթն Իրանի համար վեր է որևէ նյութական արժեքից:

Հաջորդ մեկնությունը նույնպես վերաբերում է Իմամ Ալիին, որն ասել է. «Լա, ով տղամարդկություն չունի, չի կարող հավատք ունենալ: Եթե որևէ

մեկը զուրկ է գիտակցությունից և տրամաբանությունից, ապա չի կարող տղամարդ կոչվել»<sup>1</sup>(այստեղ հարկն է նշել, որ Իմամը տղամարդկություն ասելով ի նկատի ունի մարդկային վեհ հատկանիշները՝ քաջությունը, ազնվությունը և այլն): Բոլոր մարդկանցից ավելի վեր ու գերադասելի է այն մարդը, որն իր «ես»-ն ամբողջ աշխարհից ավելի թանկ է գնահատում: Իսկ ո՞րն է այդ «ես»-ը, որն ամբողջ աշխարհից ավելի թանկ է և գերադասելի:

Իմամ Սադեդին վերաբերող մի ասույթ կա, որը որպես քառյակ (ռոբա-յի) գրված է «Բահար» գրքի տասներկուերորդ հատորում: Հիշյալ քառյակում ասվում է. «Սեփական արժանապատվությունս, որ այսքան թանկ է, արժանի է միայն այն արարող Աստծուն»: Աստծո բոլոր արարածների մեջ չկա որևէ մեկը, որի արժեքը հավասար լինի մարդկային արժանապատվությանը:

### Նախանձախնդրություն

Հաջորդ մեկնությունը նախանձախնդրության խնդիրն է: Որոշ բարոյա-կան չափանիշների համաձայն նպատակահարմար է, որ մարդը լինի այսպիսին կամ՝ այնպիսին: Օրինակ՝ Իմամ Ալին ասել է. «Յուրաքանչյուր մարդու չափն ու աստիճանը կախված է նրա մեծաձողության աստիճանից, իսկ քաջությունը՝ տղամարդկության զգացումից<sup>56</sup>: Յուրաքանչյուր մարդու պարկեշտությունը հավասարազոր է նրա նախանձախնդրությա-նը<sup>57</sup>»: Այս ասելով՝ նա ի նկատի ունի այն, որ յուրաքանչյուր մարդու պատիվն իր իսկ նախանձախնդրության չափ է: Եթե որևէ մեկը նախանձախնդիր է իր պատվի հանդեպ, ապա՝ ուրիշների պատվի հանդեպ նույնպես հարգանք կտածի: Մեկ այլ տեղ ասվում է. «Նախանձախնդիր մարդը երբեք անբարոյականություն չի անի և չի շնանա<sup>58</sup>»: Այսինքն՝ անբարոյականություն անողն ամենից առաջ անարգում է իր պատիվը:

Նմանատիպ հաջորդ մեկնությունը անձի ազատության մեկնությունն է, որի մասին Իմամ Ալին ասել է. «Մեկ ուրիշի հպատակը մի եղիր, քանզի Աստված քեզ ազատ է արարել»: Գոյություն ունեն նաև այլ մեկնություններ, որոնցից է. օրինակ՝ վեհանձնությանը վերաբերողը, որի կապակցությամբ Իմամն ասել է. «Նա՛ ով իր անձը բարձր ու մեծ է համարում, երբեք չի իսնձնվի ցանկասիրությանը<sup>59</sup>»: Սուրբ Հադիսն ասել է. «Վախեցիր այն մարդուց, որն ինքն իր աչքին նվաստ է և վեհության զգացումից՝ զուրկ <sup>60</sup>»:

### Արդյոք հակադրություն գոյություն ունի՞

Հիշյալ բոլոր մեկնությունները սեփական անձի հանդեպ ուշադրու-թյան սևեռման արդյունք են: Մյուս կողմից, հենց իսլամական ուսմուն-

1- Թահաֆ –օլ- օղուլ, էջ 410:

56-Բահար –օլ- անվար 25/45:

57-Նահջ –օլ- բալադե, հեքմաթ 44:

58-Նույնը, հեքմաթ 297:

59-Նույնը, հեքմաթ 441:

60-Թահաֆ –օլ- օղուլ, էջ 512:

քում, տեսնում ենք մեկ ուրիշ երևույթ, որն ավելի լավ ենք ճանաչում և որը հակասում է հիշյալ մեկնություններին: Օրինակ՝ ասում ենք վեհանձնություն, սակայն խոնարհության մասին մոռանում ենք: Իսկ մի՞թե խոնարհությունը նվաստացում չէ: Ուրեմն՝ վեհանձնությունը պահելիս չպետք է խոնարհ լինենք: Արդյո՞ք անձի վեհանձնությունը հակասո՞ւմ է խոնարհությանը, թե՞ ոչ: Մենք տեսնում ենք, որ մի կողմից Ղուրանը պատվիրում է լինել վեհանձն ու բարձր, իսկ մեկ այլ տեղ ասվում է. «Այո, հանդերձյալ այս աշխարհը միայն նրանց ենք վերապահում, ովքեր երկրի վրագոռոզամտության կամք և ապականություն չեն դրսևորել, և բարի վախճանը երկյուղածներինն է՞»:

Կամ հզորության և թուլության մասին մենք մինչ օրս լսել ենք միայն թույլ լինելու խորհուրդը: Օրինակ Սաադին ասել է.

*Ես մրջյուն եմ, որին պետք է ոտքով տրորեն,*

*Ոչ թե մեղու, որ իմ խայթից տանջվեն,*

*Ինչպես շնորհակալ լինեմ ի վերուստ տրված այն ողորմության համար,*

*Որ ուժ չունենմ մարդկանց տանջելու:*

Այս տողերից հասկանում ենք, որ մարդկանց տանջելու հնարավորությունից զուրկ լինելը Սաադին համարում էր Աստծո ամենամեծ ողորմությունը:

Կամ անձի վեհության, գեղեցկության, բարձրության, նախանձախնդրության և շատ ու շատ նմանատիպ խնդիրներ, որոնք կարծես հակադրվում են իսլամական սկզբունքներին, քանզի իսլամը կոչ է անում պայքարել անձի ցանկությունների դեմ: Այս առումով իսլամի մեծ Սարգարեն ասել է. «Քո անձն ու ցանկությունները քո ամենամեծ թշնամին են<sup>61</sup>»: Իսկ ինպե՞ս կարող է « քո ամենամեծ թշնամին» մեկ ուրիշ տեղ այդքան պատվելի ու կարևոր լինել: Կամ մեծամտությունը, որը պարսավելի է: Մեծամտությունը ոչ այլ ինչ է, քան ինքնագոհություն, գոռոզամտություն և եսասիրություն: Պարծենկոտությունը, նույնպես մեծամտություն է: Ինչպե՞ս է այս ամենը համադրվում հիշյալ մեկնությունների հետ և արդյո՞ք հակասություններ չկան: Ոչ, հակասություններ չկան, որովհետև մարդը երկու «ես» ունի: Առաջին «ես»-ի մեծարումն ու դրական համարելը մեծամտություն, գոռոզություն և եսասիրություն է և պետք է նրա ու նրա ցանկությունների դեմ պայքարել՝ համարելով սեփական անձի ամենամեծ թշնամին: Իսկ երկրորդ «ես»-ը պետք է վեհ, սիրելի և հարգելի լինի: Կարևոր է, որպեսզի պահպանվի նրա ազատությունը, անկախությունը, հզորությունն ու գեղեցկությունը: Սակայն ինպե՞ս կարելի է այդ երկու «ես»-երն իրարից տարբերել: Արդյո՞ք երկու «ես» ունենալու դեպքում մարդը չի կանգնում անհատականության երկվության խնդրի առջև: Հոգեբանական տեսանկյունից գոյություն ունի «անհատականության երկվություն» կոչվող մի հիվանդություն, սակայն այդ հիվանդությամբ տառապող մարդն ունի ընդամենը մեկ «ես», իսկ եթե դրանք երկուսը լինեն՝ ամեն մեկն իր ճանապարհով կգնա: Որոշ անհավասարակշիռ մարկանց երբեմն համարվում են անհատականության երկվությամբ տառապողներ: Այս խնդիրը բոլորովին այլ է: Երբ մենք ասում ենք, որ մարդը երկու

61-Ղուրան, 26 : 83:

62-Մոհաջջաթ –օլ- բիգա 6/5:



«ես» ունի՝ ի նկատի ունենք բոլորովին այլ բան: Այսինքն՝ մարդն ունի մեկ իսկական ու իրական «ես» և մեկ՝ փոխաբերական կամ այլաբանական: Երբ ասում ենք, որ պետք է պայքարել երկու «ես»-երից մեկի դեմ՝ ի նկատի ունենք այդ երկրորդ՝ այլաբանական «ես»-ը: Մենք ունենք մեկ իսկական ու իրական «ես» և երբ ասում ենք «ես»՝ մեր այլաբանական «ես» - ը դնում ենք մյուս «ես»-երի դիմաց և մերժում մյուսներին՝ ասելով, «ես, և ոչ թե՛ դուք»: Մյուս «ես»- երից և ուրիշներից առանձնանալու և անհատական ու առանձնակի բնույթ ձեռք բերելու հատկությունը հատկանշական է մարդու ոչ դրական «ես»-ին, այսինքն՝ մարմնայինին: Սակայն, մարդն իր ներսում ունի մի իրականություն, որը հանդիսանում է նրա ծննդյան հիմնական իրականությունը: Այս հատկության շնորհիվ մարդը ոչ յուրայիններին նույնպես յուրային է համարում: Դա հենց այն է, ինչի մասին Դուրանում գրված է. «Երբ ավարտեմ այդ գործը և նրա մեջ իմ հոգուց /արժանի ու վեհ մի հոգի/ փչեմ, բոլորդ նրա համար գետնամած կադոթեք»<sup>63</sup>: Ըստ Դուրանի մեկնության դա ոչ թե նյութեղեն մի իրականություն է, այլ՝ Աստվածային հզոր մի երևույթ: Այս «ես»-ին ուշադրություն դարձնելը նշանակում է մարդկային ինքնության բացահայտում և ներքմբռնում: Երբ մարդը դրան ուշադրություն է դարձնում, բացահայտում է այն որպես ճշմարտության հիմք, որն անհամատեղելի է չարի, անիրականի և սին բաների հետ: Իսկ ճշմարտության հետ այն համատեղվում է այն պատճառով, որ ճշմարիտն էական է, իսկ սուտը, դատարկությունն ու կեղծիքը՝ անէական: Նրա արմատը հզորությունն ու Աստվածայինն է, որի արդյունքում բոլոր կեղծ ու սին երևույթներն անհամատեղելի են: Այն սերում է գիտությունից և լույսից և անհամատեղելի է սնափառության և բռնության հետ: Նրա արմատները ազատությունն ու անկախությունն են, իսկ իսկական «ես»-ն ազատ մարդն է: Հենց այս պատճառով էլ այն չի կարող հաշտվել ստրկության, կախվածության և անբարոյականության հետ: Այն երբեք չի հանդուրժում, որ մարդը դառնա ուրիշների կամ իր իսկ ցանկասիրության ծառան, որի արդյունքում մարդը մնում է մաքուր և չի պղծվում բնության կամ իր ձեռքով:


Այսպիսով, «ես»-ին ուշադրություն դարձնելը որպես մեկ մարմնի, որն օժտված է զուտ նյութական բնագոյներով, որոնցից են քնելը, ուտելը, խմելն ու սեռական ցանկությունները, պարսավելի է: Այս անվամբ հաղես եկած «ես»-ը պայքարում է մյուսների դեմ և բոլոր պատերազմների հիմնական պատճառ հանդիսանում: Սակայն այդ նույն «ես»-ը կարող է ընկալվել նաև մեկ այլ տեսանկյունից, որոնք են վեհանձնությունը, անձի նախանձախնդրությունը, պատիվն ու ինքնասիրությունը: Այս դեպքում «ես»-ի և ուրիշների պայքարի խնդիր գոյություն չունի, քանզի նա հենց ինքը Աստվածային սուրբ գոհարն է, որով օժտված է յուրաքանչյուրը և կարիք չկա որպեսզի ինչ որ մեկը մյուսին սովորեցնի այն: Յուրաքանչյուր ոք, եթե ուշադիր զննի իր ներքինը, կտեսնի, որ իր մեջ գոյություն ունեն մի շարք հատկանիշներ, որոնք համահունչ են իր հոգուն և որոշակի հատկանիշներ, որոնք նա համարում է ոչ սազական, ստորացուցիչ և բացասական: Եթե մի արժեքավոր կտավ գցենք աղբակույտի մեջ, ապա

անմիջապես կզգացվի, որ նրա տեղն այնտեղ չէ և սազական չէ, որ այն գտնվի աղբի մեջ:

Այն «ես»-ը մի հասկացություն է, որը հակադրվում է մյուս հասկացություններին, իսկ այս «ես»-ը՝ մարդ անհատ, որը հակադրվում է անհատներին: Այս «ես»-ը որոշ բաներ արգելում է, իսկ որոշ գործողություններ, որոնք նպաստում են իրեն՝ խրախուսում: Այսպիսով նա առանձնացնում է իրեն մյուս մարդկանցից:

Ուրեմն, մեր «ես»-ի դեմ պայքարելու և «ես»-ը հարգելու կամ ճանաչելու երկու մոտեցումների միջև որևէ հակասություն կամ հակադրություն գոյություն չունի: Մի կողմից իսլամը մեզ պատգամում է պայքարել սեփական «ես»-ի դեմ և վերաբերվել դրան որպես ամենամեծ թշնամուն, իսկ մյուս կողմից՝ պարտադրում է ճանաչել, հարգել, մեծարել ու սիրել մեր «ես»-ը, քանզի այն հանդիսանում է մարդկային էության ամենավեհ գոհարը և սերում է այս աշխարհից առավել գերադասելի մի աշխարհից:

Այսպիսով, այս երկուսի միջև որևէ հակադրություն գոյություն ունենալ չի կարող:



## **ՄԱՍ XII**

*Բարոյական ներշնչման աղբյուրներ*

## Հանուն Ողորմած Էս Բարեգույն Լույծ»

Նախքան բուն թեմային անցնելը կուզենայի մեկնաբանել մի քանի ավանդապատում, որոնք կբացահայտեն իսլամի բարոյական պատգամներում առկա ոգին: Դրանք վերաբերում են հատկապես անցած թեմայում շոշափված վեհանձնության և արժանապատվության զգացումներին և այն հարցին, թե որքանով է իսլամը դրանք կարևորում: «Թահաֆ օլ օղուլում» Իմամ Սաջջադից մի ավանդապատում կա, որտեղ ասվում է. «Մարդկանցից օգնություն հայցելը նվաստացնում և ստորացնում է մարդու կյանքը, ոչնչացնում ամոթխածությունը, պատիվը, հարգանքը, արժանապատվությունը, և դա է բուն աղքատությունը»: Այսինքն՝ աղքատությունը պայմանավորված չէ միայն փողի կամ կարողության բացակայությամբ: Աղքատությունը դա կարիքն է: Իսկ կարիքների բարձրաձայնումը նաև հոգեվիճակի աղքատություն է: Որքան որ մարդը քիչ օգնություն հայցի ուրիշներից՝ այդքան ավելի անկախ և հարուստ կլինի:

Այս միտքը հավաստում է, որ աղքատությունն ու հարստությունը միայն նյութականով չեն պայմանավորված: Գոյություն ունեն նաև աղքատության և հարստության տարբեր տարատեսակներ: Պետք է զգույշ լինենք և նյութական աղքատությունն ու կարիքները վերացնելու համար չբախվենք հոգու աղքատության հետ: Մարդը պետք է հոգևոր հարստության արժեքը նյութական հարստության արժեքից ավելի վեր դասի:

«Նահջ –օլ– բալադե» գրքում ասվում է. «Կարիքավորների հանդեպ հարուստների խոնարհությունն ու համեստությունն աստվածահաճո է:

Եվ դրանից ավելի հաճելի է հարուստների հանդեպ աղքատների հպարտությունը դեպի Աստված առաջնորդվելու ճանապարհին»։ Այստեղ հպարտություն բառը փոխում է իր իմաստն ու չի նշանակում գոռոզություն կամ մեծամտություն։ Հիշյալ նախադասության մեջ հեղինակն ի նկատի ունի անհատականության պահպանումը, հարստության և նյութական արժեքների դեմ չխոնարհվել, այլ՝ գլուխը բարձր պահել։ Նույն գրքի մեկ ուրիշ հատվածում ասվում է. «Հարուստների համեստությունից ավելի գեղեցիկ և գերադասելի է հարուստների կարողության հանդեպ ցուցաբերած աղքատների անտարբերությունը»։

Ասվածի նպատակը նույնպես մարդու մեջ անձնական վեհանձնության և արժանապատվության խթանումն է։

«Նահե՞ –օլ- բալաղե»-ի երկրորդ խորհուրդը որոշակի պատճառաբանությամբ մերժում է ժլատությունը, աղքատությունը, անկարողությունն ու վախը, իսկ որոշ բացահայտումների հիման վրա, խրախուսում՝ համբերությունը, ճգնավորությունն ու ժուժկալությունը։ Եվ մերժող և խրախուսող բոլոր պատճառաբանությունները պայմանավորված են մարդկային արժանապատվության և վեհանձնության զգացումով։ Ժլատությունը նենգություն է, այսինքն՝ նենգությունից խուսափող մարդը չպետք է ժլատ լինի։

Վախկոտությունը թերություն է, և մարդը չպետք է հանդուրժի այն և հաշտվի նրա գոյության հետ։ Աղքատությունն ու կարիքը բթացնում և կաշկանդում են խելամիտ մարդուն։ Խելացի և գեղեցիկ խոսող, սակայն աղքատ և կարիքավոր մարդը հարուստ և անկախ մարդու մոտ լալկվում է, իսկ նրա խոսքերը՝ իմաստազրկվում։ Ուրեմն, տեսնում ենք, որ աղքատությունը մարդուն նվաստացնելու պատճառով բացասական է։ Չբավոր մարդը (չբավորն ու կարիքավորը տարբեր բաներ են) անգամ իր հարազատ քաղաքում օտար է։ Անկարողությունն ու թուլությունը մարդու համար ոչ թե առավելություն, այլ՝ թերություն են։ Ծգնավորությունը կամ խստակեցությունը հարստության մի տեսակ է, քանզի այն անհրաժեշտ է նրա համար, որ մարդն ուրիշներից կախվածության մեջ չընկնի։ Մարդու ինչի՞ն է պետք հարստությունը։ Կարիքի զգացում չունենալու համար։ Խստակեցությունը մարդու մեջ կարիքի զգացումը վերացնում է։

Այս խորհուրդն այն ավանդություններից է, որոնք մենք ներկայացրեցինք արժանապատվությանը վերաբերվող բաժնում։

Մեկ այլ ավանդության համաձայն, երբ Իմամ Սաջջադին հարցրել են թե ո՞վ է ամենահարգարժան ու ամենապատվելի մարդը, նա պատասխանել է՝ նա, ով իր անհատականությունը չի փոխի ամբողջ աշխարհի հարստության հետ<sup>64</sup>։ Այսինքն՝ նա, ով հարգում և սիրում է իր անձը և պատրաստ չէ շահարկել իր անձնական պատիվը, հարգանքն ու վեհությունը աշխարհի ոչ մի հարստության հետ։

«Նահե՞ –օլ- բալաղեի» 85 խորհրդի համաձայն մարդկանց համար ճշտախոսությունն ու ճշտապահությունը պատվաբեր են, իսկ ստախոսությունը՝ նվաստացուցիչ և նողկալի։ Գրքում նշված է. «Շշմարտախոսն օժտված է հարգանքով, պատվով և կփրկվի, իսկ ստախոսը դատա-

64-Ֆիռահարամնե ահլ –օլ- բեյթ, հ 4, էջ 72:

պարտված է նվաստության և ստորացման»: Ղուրանում այս վերաբերյալ երկու այաթ կա, որտեղ ասվում է. «Եվ մի հնազանդվիր նրան, ով շարունակ երդվում է և ստոր է: Եվ ով բժախնդրորեն թերություն է փնտրում և բանսարկու է<sup>65</sup>»: Գուցե այս խոսքերի իմաստն այն է, որ շատ երդվելը ստորություն է, քանզի վեհանձնության զգացում ունեցող մարդը համոզված է իր խոսքերի վրա և շատ չի երդվում: Ուստի ճշմարիտ երդվելն ատելի է, իսկ սուտ երդվելը՝ հարամ:

Ղուրանում կա նաև մեկ այլ այաթ, որում ասվում է. «Մենք մարդկային ցեղը հարգեցինք»:

Հարգանքը լինում է երկու տեսակ: Մի դեպքում մարդկային հարգանքն է, երբ մեկը մյուսին հարգում է: Սա փոխադարձ և պայմանական երևույթ է: Օրինակ՝ եթե դուք իմ տուն գաք ես երկու վերաբերմունք կարող եմ ցույց տալ: Կամ ձեր գալուն և գնալուն շատ կարևորություն չեմ տա, կամ էլ կխոնարհվեմ ձեր առջև և կհարգեմ ձեզ: Սակայն, երբ Աստված ասում է. «Մենք հարգեցինք մարդուն»՝ բոլորովին էլ ի նկատի չունի այն, որ մարդու հետ շփվեցինք, հարգեցինք և նրան ավելի վեր դասեցինք: Այստեղ իմաստն այն է, որ Աստված մարդուն մեծարեց և հարգեց հենց արարման ընթացքում՝ նրա բնույթի մեջ սերմանելով վեհություն, պատիվ և մեծություն: Վեհությունը, պատիվն ու հարգանքը հանդիսանում են մարդու արարման նյութի բաղադրիչները: Գենց սրանով էլ պայմանավորված է այն փաստը, որ մարդն ինքն իրեն գտնելու դեպքում միայն կգտնի վեհանձնություն և հարգանք:

Այս ամենը նշվեց ի հաստատումն նախկին թեմայի:

### Հոգևոր և նյութական հաճույթ

Ի լրումն, հարկ է նշել մի բան, որը հնուց ի վեր մարդկանց մեջ տարածված էր «առարկա» և «իմաստ» անվամբ: Շատերը գործողությունները բաժանում էին երկու՝ նյութեղեն (առարկայական) և բանական (հոգևոր) խմբերի: Հոգևոր կամ բանական գործողություններ ասելով ի նկատի չունեին գերբնական (Աստծուն, հրեշտակներին և այլոց վերաբերվող) գործողությունները: Քանզի մարդու երկրային կյանքը նույնպես բաղկացած է խնդիրների երկու խմբից. 1. նյութական, 2. հոգևոր: Մարդու և կենդանիների տարբերությունը կայանում է հենց նրանում, որ մարդու կյանքում գոյություն ունեն այնպիսի երևույթներ, որոնք տեսանելի կամ շոշափելի չեն, սակայն հստակորեն գոյություն ունեն: Մարդուն միշտ էլ հետաքրքրել է այն հարցը, թե ազատությունն ինչ է:

Մարդ արարածը չի արժևորում միայն այն գործողությունները, որոնք նյութական, շոշափելի և ծավալային են: Հացն ու ջուրը մարդու համար անչափ կարևոր են, սակայն գոյություն ունեն նաև այլ արժեքավոր բաներ, որոնցից են օրինակ՝ անձնական և հասարակական ազատությունը, ինչպես նաև մտքի ազատությունը: Մտքի ազատությունը մարդու համար հատուկ նշանակություն ունի: Մարդու համար անչափ կարևոր է այն գաղափարը, որ նա կարող է մտածել և ցանկանալ այն՝ ինչ ուզում է, և ոչ ոք

նրան չի խոչընդոտի:

Հին գիտնականները դրանք մեկնաբանում էին որպես «հոգևոր կամ բանական գործողություններ»: Մարդն իր նպատակների իրագործումից հոգևոր և նյութական հաճույք է ստանում և կարող ենք ասել, որ մարդու հաճույքները բաժանվում են երկու խմբի՝ հոգևոր և նյութական: Փոխադարձաբար երկու խմբի են բաժանվում նաև նրա տառապանքները, քանզի նպատակին չհասնելու դեպքում մարդու տառապանքներն ու վնասները լինում են և նյութական և հոգեկան:

Հոգեբանները խիստ տարանջատում են մարդու նյութական և հոգեկան հաճույքներն ու տանջանքները՝ բացատրելով, որ նյութական տանջանքներն ու հաճույքները խիստ անհատական են և կախված են արտաքին գործոններից: Այսինքն՝ դրանք առաջանում են որևէ արտաքին գործոնի հետ շփվելու կամ հարաբերվելու արդյունքում: Օրինակ՝ ուտելու հաճույքը, որը նախ և առաջ խիստ անձնական հաճույք է և մարդն այն զգում է զուտ անձնապես, որի ընթացքում ուտելիքը անպայման պետք է հարաբերվի մարդու լեզվի զգայարանների հետ, որպեսզի մարդու մոտ այդ զգացումը առաջանա և մարդը հաճույք զգա: Հակառակ դեպքում, օրինակ՝ ուտելիքը ձեռքում պահելուց ոչ ոք հաճույք չի կարող զգալ: Իսկ հոգևոր հաճույքները կախված չեն զուտ մարմնի մասերից և չունեն հատուկ տեղ, որը ցույց տալով կասենք՝ ահա, սա է այդ հաճույքի օրգանը: Իսկ երկրորդ հերթին պարտադիր չէ նաև արտաքին գործոնների հետ շփումն ու հարաբերությունը: Հաճախ մարդը հաճույք է ստանում ուղղակի ինչ որ մտքից կամ զգացումից, օրինակ՝ հպարտության զգացումից, որը պարուրում է մրցություն հաղթողին: Պատկերացրեք, որ ինչ որ մեկը ճանաչվում է լավագույն գրող կամ արվեստագետ և տեղեկանում է, որ ինչ որ տեղ իրեն մեծարել են: Այս դեպքում ինքն իր մեջ հաճույք է զգում (այստեղ արդեն չի կարելի ասել, որ նա լսել է և դա նույնպես հանդիսանում է արտաքին գործոն, քանզի լսելը նրա տեղեկության միջոցն է, և նրա հաճույքն ուղղակի Ֆիզիկապես ականջի հաճույք չէ, ինչպիսին է օրինակ՝ երաժշտություն լսելու հաճույքը): Իսկ որտե՞ղ է այդ հաճույքը գտնվում . տեսողության մե՞ջ, լսողության մե՞ջ, համի զգացողության մե՞ջ: Ոչ, նա այդ հաճույքը զգում է իր ողջ էությանը և առանց որևէ առանձնակի օրգան ցույց տալու:

Այնուամենայնիվ, մարդու համար միշտ էլ գոյություն են ունեցել նյութական և հոգևոր գործողություններ: Փիլիսոփաները համոզված են, որ հաճույքը լինում է երեք տեսակ. մարմնային, գիտակցական և միջանկյալ կամ երևակայական: Հաճույքների վերջին տեսակը գիտակցական հաճույքների մոտ նվաստ է և մարդը պետք է ձգտի ոչ թե երևակայական, այլ՝ գիտակցական հաճույքների: Այս պատճառով էլ բարոյական նորմերը համարյա դատապարտում են մարմնային հաճույքները, այսինքն՝ չեն խրախուսում: Սակայն այնտեղ հստակորեն նշվում է, որ երևակայական հաճույքները չեն հանդիսանում մարմնային կամ զգայական հաճույքներ:



## Արժեքի աղբյուրը

Այստեղ ծագում է մեկ ուրիշ խնդիր. եթե մարդը ցանկանում և սիրում է որևէ բան, ուրեմն՝ ստիպված է դրանք արժևորել: Արժեք ասելով ի նկատի ունենք դրանց գինը, արժանիքը:

Իսկ որտեղի՞ց է հայտնվում արժեքը և ինչու պետք է ինչ որ բան արժեք ունենա: Եթե որևէ բան ինչ որ առումով օգտակար է, ծառայում է ինչ որ նպատակի, անվճար կամ հեշտությամբ չի տրվում, քանակության առումով սահմանափակ կամ սեփականացված է՝ ձեռք է բերում արժեք: Օղն արժեք չունի: Իսկ ինչո՞ւ: Որովհետև նախ՝ անվճար է և գոյություն ունի այնքան քանակությամբ, որքան անհրաժեշտ է, ապա՝ անսահմանափակ է և հնարավոր չէ այն սեփականացնել: Սակայն հողի առումով այդպես չէ: Ոմանք վերցնում են հողերը և գրկում մյուսներին: Այստեղ առաջանում է արժեք ասվածը:

Նույն պատճառով արժեք են ձեռք բերում նաև հոգևոր գործողությունները, քանզի դրանք մարդուն ձգում են ճիշտ այնպես, ինչպես նյութական գործողությունները: Այսպիսով՝ մենք գնահատում ենք հոգևոր գործողությունները՝ դրանց տալով հոգևոր արժեքի իմաստ: Մարդկություն հասկացությունը կարևորվում է հենց այն պատճառով, որ հոգևոր արժեքներն առանձնահատուկ են միայն մարդուն, իսկ նյութականները՝ ոչ միայն: Մարդը մարդկային է իր մեջ առկա հոգևոր արժեքների հզորության չափով: Մարդը մարդկային է այնքանով, որքանով որ նրա մեջ պահպանված են հոգևոր արժեքները և որքան ավելի շատ լինեն դրանք՝ մարդն այնքան ավելի կատարյալ է մարդկային առումով:

Մեր նախնիները, որոնք հենց այսպես էին ներկայացնում հիշյալ խնդիրը, ներկայացնում էին նաև հիմնավորումների այնպիսի մի շղթա, որը երբեք չէր հայտնվում փակուղու առջև: Սակայն այսօր եվրոպացիներն այս խնդիրը ներկայացնում են այլ կերպ և այդ պատճառով էլ և իրենք և մարդկությունը հայտնվել են փակուղու առջև: Նյութական և հոգևոր գործողությունները, ինչպես նաև արժեքներն ու շահերն իրարից տարանջատելու նպատակով նրանք ասում են, որ որոշ բաներ մարդուն օգտակար են, սակայն գոյություն ունեն նաև այնպիսի բաներ, որոնք օգտակար չեն, սակայն մարդը դրանք գնահատում է: Մարդուն օգտակար գործողությունները նյութական են:

Երկրորդ խմբին պատկանող գործողությունները մարդուն օգուտ չեն բերում, սակայն մարդը դրանք նույնպես գնահատում է: Իսկ ինչո՞ւ, ինչպես կարող է մարդու կյանքի հետ որևէ կապ չունեցող ինչ որ բան, որը նրան որևէ օգուտ չի բերում, արժեքավոր լինել: Ինչպե՞ս են ներկայացվում արժեքների աղբյուրները: Եթե որևէ բան ինձ օգտակար է՝ ես գնում եմ դրա հետևից, սակայն ես ինչո՞ւ պետք է արժևորեմ և գնահատեմ այն, ինչն ինձ համար օգտակար չէ և չի նպաստում իմ բարօրությանը: Դրանք պայմանական, վարկածային և երևակայական լուծումներ են:

Այս ամենի պատճառն այն է, որ եվրոպացիները չէին ցանկանում նյութեղենն ու հոգևորը միմյանցից առանձնացնել, այսինքն՝ չէին ցանկանում նյութեղենի մեջ որևէ հոգևոր արժեք, իսկ մարդու մեջ՝ բանականություն

գտնել՝ ասելով, որ մարդն ունի ստամոքս, սակայն գոյություն ունի նաև ստամոքսից ավելի վեր մի Ֆենոմեն: Նրանք չէին ցանկանում, որ մարդը ստամոքսն ու դրա ցանկությունները գնահատելու հետ մեկտեղ գնահատի նաև դրանից ավելի վեր կանգնածը՝ այն ընդհամենը նյութեղեն ուժ համարելով: Նրանք, ամենայն հավանականությամբ տեսել են, որ մարդու համար նյութական կազմությունից բացի այլ բան գոյություն չունի՝ հաշվի առնելով միայն նյութեղեն բաղադրությանը նպաստող երևույթները: Նրանք անգամ հայտարարեցին, որ նյութեղեն բաղադրությանը չնպաստող յուրաքանչյուր բան անտրամաբանական է, սակայն մարդը գնահատում է դրանք: Իսկ թե ո՞րն է այդ գնահատման աղբյուրը կամ արմատը նրանց կողմից մնում է անպատասխան:

Ոմանք ասում էին, թե գնահատում են իրենց աշխատանքը և ինքներն են ստեղծում այդ արժեքը: Իսկ մի՞թե արժեք ասվածը ստեղծովի կամ պայմանական է: Մենք կարող ենք ստեղծել պայմանագրեր և համաձայնագրեր, սակայն արդյո՞ք պայմանական է այն երևույթը, որ մենք առանց որևէ ակնկալիքի գնահատում ենք որևէ բան: Եվ արժեքը և շահը նույն խնդիրն են, այսինքն՝ ինչ որ տեսանկյունից նույնն են և երկուսն էլ կապված են մարդու եության հետ: Այս ասելով ի նկատի ունենք այն, որ մարդը հետևում է իր բարօրությանն ու ցանկություններին և ուրիշ որևէ ելք չունի: Սակայն մարդը միայն նյութեղեն կազմությունից չէ բաղկացած և նրա համար արժեքավոր է և նյութեղեն և հոգևոր- բարոյական բարիքը: Մենք օգուտ, շահ կամ արժեք բառերի փոխարեն կիրառում ենք նյութեղեն և հոգեղեն բառերը, կամ նյութական արժեքներ և հոգևոր արժեքներ բառակապակցությունները: Տրամաբանականը հենց սա է և ներկայիս աշխարհը արժեքների խաթարման աշխարհ անվանելը պայմանավորված է հենց նրանով, որ անվանողները ցանկանում են միաժամանակ և արմատախիլ անել այդ արժեքները և դրանք մարդկանց վերադարձնել: Սա հակասություն է: Նրանք իրենց պատկերացրած մարդաբանության արդյունքում արմատախիլ արեցին այդ արժեքները: Երբ մարդուն նայում ես մատերիալիստական գաղափարախոսության տեսանկյունից՝ նրան ընդամենը նյութեղեն կազմությունից բաղկացած համարելով, բարոյականություն, հոգևոր արժեքներ, ինքնություն և մարդկություն արտահայտություններն արժեզրկվում են: Եթե մարդը կազմված է ընդամենը տարբեր նյութերի խառնուրդից, ապա՝ պատիվ բառն անիմաստ է: Ապոլոն հրթիռը, որն ինչպես ասում են բաղկացած է հինգ միլիոն մասնիկների միացությունից, հնարավոր չէ համեմատել ընդամենը չորս կտորից բաղկացած մի քուրսիի հետ: Սակայն արդյո՞ք Ապոլոնն օժտված էր մարդուն հատուկ պատվի և արժանապատվության զգացումով: Այն մյուս նյութերից ոչնչով չի տարբերվում, ուղղակի մի փոքր ավելի բարդ է: Եթե մենք մարդուն մի հզոր մեքենա համարենք, այդ մեքենան ամբողջ աշխարհի չափ մեծ ու հզոր լինելով հանդերձ որևէ արժեք չունի: Այսպիսով, նրանք արմատախիլ են արել այն, ինչն իրենք անվանում են արժեք և այն, ինչը մենք անվանում ենք բանականություն: Մենք նյութեղենն ու հոգեղենն իրարից չենք անջատում և չենք ասում, որ նրանցից մեկն անտրամաբանորեն է ինչ որ բան պահանջում: Մենք ասում ենք, որ դրանցից

յուրաքանչյուրն ունի իր տրամաբանությունը և անհնար է, որ մարդն անտրամաբանորեն որևէ բան անի:

### **Բարոյական ներշնչման աղբյուրների ինքնաճանաչում**

Այժմ, վերոհիշյալ քննությունից հետո, առավել հանգամանորեն կանդորադառնանք նույնին՝ իսլամի տեսանկյունից: Տեսանք, որ մարդուն դեպի լավ վարքի, կամ ինչպես հիմա են ասում, գերարժեքների մղելու դեպքում նրան ստիպում են, որ նայի ինքն իր խորքը: Այսինքն՝ ստիպում ենք, որ մարդը ճանաչի և բացահայտի իր ներքին արժեքն ու բուն էությունը: Միայն այս դեպքում նա կզգա, որ գտել է իր արժանապատվությունը: Մարդու մոտ վեհամծնության ու արժանապատվության զգացում կառաջանա միայն այն դեպքում, եթե նրան մղեն դեպի իր ներաշխարհ: Սա սովորելու բան չէ, այլ ներշնչանք:

Այսինքն մարդ, զգում է, որ իր ներքին խառնվածքին վայել չեն ստորությունը, նվաստությունը, կեղծիքը, անառակությունն ու կեղծավորությունը: Մենք համոզված ենք, որ մարդը բարոյական ներշնչանք ձեռք է բերում հենց ինքնաճանաչման միջոցով: Եվ այս ներշնչանքը պայմանավորված չէ այն բանով, որ ինչ որ մեկը մարդուն դասեր է տվել ու ինչ որ բան սովորեցրել: Սեփական «ես»-ի ճանաչումը բավական է, որպեսզի հայտնի դառնա, որ մարդն այս գործողությունը պետք է անի, իսկ այն՝ ոչ: Այս առումով սբ. Դուրանն ասում է. «Եվ երդվում եմ շնչով /հոգով/ մարդկային և նրանով, ով այն արարեց և կարգավորեց: Իսկ հետո նրան ներշնչեց նրա չարն ու բարին: Եվ նա, ով իր շունչն ու հոգին մաքրագործեց՝ փրկվեց: Եվ նա, ով իր շունչն ու հոգին մեղքով է ապականել՝ հուսալքված ու զրկված է դարձել»<sup>1</sup>:

### **Խղճի խայթ և գոհունակություն**

Այս քննարկման մեջ բացահայտվում է զգացողության աղբյուրը: Այսինքն՝ ճանաչվում է այն, ինչը վայել է մարդկային վեհ ու թանկ բնույթին և այն, ինչը հակասում է այդ ամենին՝ առաջացնելով խղճի խայթ կամ տվայտանք, որը քիչ թե շատ գոյություն ունի յուրաքանչյուր մարդու մեջ: Իսկ ի՞նչ են իրենցից ներկայացնում «խղճի խայթ» կամ «գոհունակություն» հասկացությունները: Իրականում, երբ մարդ որևէ լավ արարք է կատարում իր հոգու խորքում գոհունակության զգացում է ապրում և այն համարում է հաջողություն: Սակայն, գոյություն ունեն նաև մի շարք արարքներ, երբ մարդն իր հոգու խորքում դժգոհ է իր արածից և կարծես ինչ որ ուժ նրան ներքուստ տանջում և անհանգստացնում է: Այս տանջանքը ազատագրկման տանջանքից էլ վատ է: Բազմաթիվ հանցագործներ, իրենց ոտքով են եկել կախադանի մոտ և խնդրել, որպեսզի իրենց սպանեն՝ ասելով. «Սպանեք ինձ, ես մահվան եմ արժանի»:

Սակայն, այդ ի՞նչ զգացողություն է արթնանում մարդու մեջ, որ վերջինս չի կարողանում իրեն զսպել: Բոլոր մարդասպաններն ու հանցա-

1-Դուրան, 91 : 7-10:

գործներն էլ ունեն այդ զգացողությունը: Քյարբալայի պատմություններում տեսնում ենք, որ նրանք բոլորն էլ տառապում են մղձավանջային երազներից: Նրանցից մեկն էլ իրեն կախել էր Քաաբայի տաճարի վարագույրից՝ ասելով. «Տեր Աստված, ողորմա ինձ, իհարկե գիտեմ, որ չես ների»: Սա բացի խղճից ի՞նչ կարող է լինել: Հիդոսիմայի օղաչուն վերջում հոգեբուժարան ընկավ: Դա պայմանավորված էր նրա ներքին ապրումներով, որը բացատրվում է գերբնական փիլիսոփայությամբ, ըստ որի մարդը բաղկացած չէ միայն մարմնից և նա միայն անատոմիական երևույթ չէ: Մարդկություն հասկացությունը նույնպես միայն և միայն այս գաղափարով կարող է իմաստավորվել ու հիմնավորվել: «Ձանե ռուզ» պարբերականում մի ծավալուն հոդված էի տպագրել, որտեղ նշված էր, որ եվրոպական աշխարհը մարդուն մի կողմից ամբողջապես զրկում է արժեքներից՝ նրան համարելով ընդամենը մեխանիզմ, իսկ մյուս՝ հանդես է գալիս մարդու իրավունքների և մարդու ներքին արժանապատվության կոչելով: Շատ ծիծաղելի է, սակայն մարդու իրավունքների բանաձևի նախաբանում գրված է. «Ի նկատի ունենալով այն, որ յուրաքանչյուր մարդ օժտված է ներքին արժանապատվությամբ և դա հանդիսանում է պատվի դրսևորման տեսակներից մեկը...»: Ի՞նչ է այդ ներքին արժանապատվությունը: Ձեր ներկայացրած մարդը ոչնչով չի տարբերվում իմ վարած ավտոմեքենայից: Ուղղակի՝ այն ավելի բարդ մի մեքենա է: Ուրեմն և իմ, և ձեզ համար ներքին արժանապատվությունն անիմաստ է: Ես մեկ ուրիշ մեքենա եմ, իսկ դուք՝ մեկ այլ: Եվ ընդհանրապես՝ մարդկությունը չի տարբերվում այլ Ֆենոմեններից, բոլորը մեքենայի կարգավիճակում են: Գանդին իր «Սա է իմ կրոնը» գրքում այս առումով շատ հետաքրքիր բաներ է գրել:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, փիլիսոփայությունն է, որ մեզ իսլամական բարքերի հիմքերը ներկայացնելուց բացի, ցույց է տալիս, որ այդ բարքերը կամ բարոյականությունը (ի նկատի ունի իսլամական բարոյականությունը) հենված են տրամաբանական հիմքերի վրա և կարող են պարզաբանել այն ամենն, ինչ այսօր կոչվում է բարոյական արժեք:


### Արժեքների տատանում արևմտյան աշխարհում

Հիշում եմ, երբ դասախոսություններից մեկի ժամանակ ես մեջբերեցի Մոհանդես Բազարզանի «Անհրաժեշտ բարիք» գրքից մի պարբերություն: Վերջինս էլ իր հերթին մեջբերում էր «Ջհանե ճո» պարբերականում տպագրված Դարյուշե Աշուրիի հոդվածներից մեկը: Հիանալի ասված խոսքն այն մասին էր, որ արևմտյան աշխարհը ցնցեց մարդկային ամբողջ արժեհամակարգն ու թուլացրեց նրա հիմքերը: Հիմա, երբ Արևմուտքը վայելում է իր ցանած սերմերի պտուղները, ցանկանում է մեկ ուրիշ կերպ վերակենդանացնել այդ արժեքները: Սակայն արդեն շատ ուշ է: Այդ հոդվածում մեջբերվում և քննադատվում են նաև մարդկային ինքնության վերաբերյալ Մարտրի խոսքերը. «Մարտրն ու Հայդեգերը ստեղծել են մի ցնորք, որն իրականում նրանց Աստվածն է»: Նրանք ենթադրել են, որ մարդկությունն ընդհանուր առմամբ անձից բացի մեկ ու-

րիշ էություն էլ ունի եվ բացի անհատներից մարդկություն ասվածն իր մեջ ընդգրկում է նաև այլ բաներ, որոնք հավերժ ընթացքի մեջ են և գոյություն ունեն: Եվ այն, ինչն աստվածաբանները մեկնաբանում են Աստծո անվամբ և ասում, որ պետք է Աստծո համար գործել, վերջիններս վերագրում են մարդկությանը կամ իրենց վերացական Աստծուն: Նրանք ասում են, որ պետք է գործել մարդկության համար և հանդգլած են, որ այդ վերացական Աստվածն իրականում գոյություն ունի:

Նրանք այս փակուղիների արդյունքում հոգևոր, կամ ինչպես իրենք են ասում «մարդկային արժեքների համար» ի սկզբանե հերքում են կրոնն ու մերժում են կրոնական սկզբունքներով ձևավորված դաստիարակությունն ու բարքերը: Եվ այս ամենը անում են շատ միամիտ ենթադրության հիմքի վրա՝ ասելով, որ կրոնը պայմանավորված է դժոխքի վախի և դրախտի ակնկալման զգացումներով, հետևաբար մենք պետք է թողնենք այն ամենն, ինչին չենք հավատում: Նրանք չէին գնահատում կրոնն ու դավանանքը: Սակայն, կրոնը մարդու մեջ վերակենդանացնում է արժեքների ձևավորման սկզբունքներն ու չափորոշիչները:

Այն ոչ միայն դժոխքի և դրախտի գաղափարի միջոցով է պարտադրում բարոյականություն, այլ՝ մարդու հանդմունքներում վերակենդանացնում է մարդկայնության տարրեր: Կազմավորելով անհատի մարդկայնությունը, դրա վերականգնման հովանու ներքո իմաստավորվում և տրամաբանական են դառնում ներկայիս աշխարհի բոլոր այն արժեքները, որոնք իրականում և գործնականորեն իմաստազրկված են:



## **ԾԱՍ XIII**

*Սեփական «ես»-ի զարգացումը*

## Հանուն Ողորմաճ Է- Բարեգույն Եստ

Այժմ կներկայացնենք սեփական «ես»-ին ուշադրություն դարձնելու կամ այն բացահայտելու և ճանաչելու խնդիրը, որն էլ իր հերթին հանդիսանում է բարոյական ներշնչման առաջնային աղբյուր: Այս հատվածում մենք կմեկնաբանենք ևս երկու սկզբունք, որոնք նույնպես համարվում են իսլամական դաստիարակության և բարոյագիտության հիմնադրույթները: Սրանով կեզրափակենք իսլամական դաստիարակության և բարոյագիտության թեման: Մեկը՝ հասարակական խղճի խնդիրն է: Նախորդ դասախոսություններում արդեն ասացինք և անհերքելի է այն փաստը, որ իսլամը պայքարում է «ես»-ի դեմ՝ որպես անձնական, մարմնային և անհատական, ինչպես նաև մյուսներից առանձնանալու գործոն: Եսասիրությունը, որպես սեփական «ես»-ը մյուսներից ավելի վեր դասող և մարմնային գործոն, իսլամական տրամաբանության, ինչպես նաև բոլոր բարոյական տրամաբանությունների տեսանկյուններից պարսավելի է և պետք է մերժվի: Եսասիրություն կամ եսապաշտություն արտահայտությունները գոյություն ունեն նաև մեր արդի խոսակցական բառապաշարում: Օրինակ՝ մենք հաճախ ենք ասում, որ ինչ որ մեկը շատ եսապաշտ կամ եսասեր անձնավորություն է: Նշեցինք նաև, որ այդ «ես»-ը տարբերվում է յուրաքանչյուր անձի մարդկային ու երկնային «ես» -ից: Այլ կերպ ասած՝ մարդն օժտված է բնական և աստվածային «ես» -երով:

**Մարդը հոգեբանական վիճակներով օժտված էակ է**

Մարդն օժտված է երկու տեսակի «ես»-ով: Մեկը նրա աստվածային կամ երկնային «ես»-ն է, որը Ղուրանում մեկնվում է որպես «Աստվածային՝ արժանի և վեհ մի հոգի» Ղուրան, 15 : 29: Նա իր բնույթով և էությանը բնության կարիքը չի զգում: Սակայն, մարդը վիճակներով օժտված արարած է: Նրա կյանքի մի մասը կազմում է բնությունը: Մարդու առանձնահատկությունը կայանում է հենց նրանում, որ նա հանդիսանում է տարբեր վիճակների և աստիճանակարգի տեր: «Մարդը բուսական, կենդանական և նյութեղեն մի հրեշտակ է» արտահայտությունը շատ ճիշտ է: Իհարկե, ոչ այն իմաստով, որ մարդը հրեշտակ է, կենդանի, բույս և ուրիշ ոչինչ: Այլ այն իմաստով, որ նա օժտված է զարգացման տարբեր փուլերով և վիճակներով: Մարդուն կարելի է համեմատել բազմափուլ շինության հետ, որի յուրաքանչյուր փուլը մի իրականություն է: Այսպիսով, մարդը փուլերով և վիճակներով օժտված մի արարած է, որն իր գերագույն աստիճանին հասնելիս նմանվում է հրեշտակի, անգամ հրեշտակից էլ ավելի լավն է: Մեկ ուրիշ փուլում նա նման է բույսի, իսկ մեկ այլ փուլում՝ ուղղակի նյութ կամ զանգված է: Գերադրական աստիճանին հասնելու դեպքում մարդն իր «ես»-երի միջև տարբերություն չի տեսնում: Այսպես է նաև հրեշտակների մոտ, որոնք երբեք միմյանց հետ չեն վիճում, չեն պատերազմում և չեն հակադրվում իրար: Մարդը նույնպես իր գոյության այդ փուլում իր «ես»-ի և այլ «ես»-երի միջև որևէ տարբերություն չի տեսնում: Սա անչափ նման է հրեշտակների վարքին, քանզի հրեշտակների միջև երբևէ անհամաձայնություն, վեճ կամ պատերազմ տեղի չի ունենում: Այս փուլին կամ աստիճանին հասած մարդը իրեն և մյուսներին համարում է «միևնույն սանրի կտավն» ու բնականաբար որևէ տարբերության կամ անհամաձայնության խնդիր չի դնում: Սակայն, երբ մարդը հասնում է իր «ես»-ի գիտակից և բնական աստիճանին, բնության թելադրանքով, յուրաքանչյուր «ես» աշխատում է պահպանել ու պաշտպանել նախ և առաջ իրեն և բնականաբար մերժում է մյուսներին: Այսպիսով, առաջանում է անհամաձայնության և հակադրության խնդիր: Յուրաքանչյուր անձի «ես»-ը հակադրվում է մյուս «ես»-երին, այսինքն՝ մարդը դառնում է եսասեր՝ անտեսելով ու թերագնահատելով մյուսների «ես»-ը: Սա մարդու մեջ դրված է բնությունից: Նմանատիպ երևույթների դեմ պետք է պայքարել: Պետք է ոչնչացնել սեփական «ես»-ի և մյուս «ես»-երի միջև առկա պատմեշք:

Ինչպես պարոն Թաբաթաբային էր ասում՝ մարդն իր բնույթով ենթարկեցնող է և ձգտում է մյուս բոլոր արարածներին՝ հատկապես մարդկանց, իր սեփական «ես»-ին ենթարկել: Մարդը բոլոր արարածներին ընդունում է որպես գործիք, միջոց և ցանկանում է, որ ամեն ինչ ծառայի միայն իրեն:

Այս առումով Մուլավին ասել է.

*Շների և գայլերի հոգիներն առանձին են և անջատ,*

*Միայն առյուծների հոգիներն է միավորում Աստված:*

Երբ մարդու մարմինն ու հոգին շնաբարո կամ գայլային են, մարդը կորցնում է իր իրական «ես»-ն ու առավել ազդեցիկ է դառնում նրա բնա-



կան «ես»-ը՝ առաջացնելով բազմաբնույթ վեճեր, հակամարտություններ և պատերազմներ: Սակայն երբ մարդը գերծ է մնում շնությունից և գայլային հատկություններից, նրա հոգին լցվում է Աստծով և այս դեպքում որևէ վիճաբանություն կամ պայքար գոյություն ունենալ չի կարող:

**Ամուսնությունը որպես եսասիրությունից խուսափելու առաջին աստիճան**

Սեփական «ես»-ի առունով մենք պնդում ենք, որ մարդը պետք է պայքարի բնական «ես»-ի դեմ և խուսափի եսասիրությունից կամ եսամոլությունից: Այս ամենն իրականացվում է աստիճաններով և փուլերով: Առաջին աստիճանն ուրիշներին սիրելն է: Իրականում սա նման է «Նոր հույսեր» գրքում ասված Ռասելի խոսքերին՝ մարդու «ես»-ը ընդլայնելու մասին: Քանի որ Ռասելն ու ոմանք «ես»-ը համարում են զուտ բնական երևույթ, վստահաբար պնդում են, որ երբ երեխան օժտված է միայն սեփական «ես»-ի գաղափարով և տեսնում է միայն իրեն՝ ամեն ինչ ցանկանում է միայն իր համար: Երեխան անգամ իր ծնողներին ընդունում է որպես սեփական «ես»-ին ծառայող գործիքներ և միջոց: Երիտասարդ տարիքում նա սիրահարվում է և ընտրում կողակից: Ահա այս ժամանակ առաջին անգամ նրա մեջ առնջանում է մի զգացողություն, երբ նա սկսում է սիրել մեկ ուրիշին (իհարկե կան դեպքեր երբ այսպես չէ): Այսինքն՝ նա դուրս է գալիս իր սեփական «ես»-ից, միավորվում է մեկ ուրիշ «ես»-ի հետ և ամեն ինչ ցանկանում արդեն միավորված «ես»-ի համար: Այստեղ մենք ականատես ենք լինում երկու «ես»-երի միաձուլմանը: Իհարկե, այս ամենը տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ մարդը դիմացինի հանդեպ ունենում է իրական մի զգացմունք և ինչպես սբ. Դուրանն է ասում. «Նրա նշաններից այն է, որ ձեր էության նման ամուսիններ ձեզ համար արարեց, որոնց կողքին հանգիստ կառնեք և ձեր միջև համերաշխություն և սեր կարգեց. սրանում նշաններ կան նրանց համար, ովքեր խորհում են»: Երբ զույգերի միջև հարաբերություններն ու կապը մարմնական կամ սեռական են, ապա նրանք միմյանց նայում են որպես միջոց: Սեռական հարաբերությունները բնական և կենդանական են: Սեռական ցանկությունները կամ բնազդները բավարարելու համար կինը տղամարդու կամ տղամարդը կնոջ համար ոչ այլ ինչ է, քան՝ միջոց, ընդամենը՝ գործիք: Սակայն զույգերի, ընտանիքի և ընտանեկան ջերմության խնդիրը սեռական բնազդներից ու բնական ցանկություններից առավել վեր է: Այս դեպքում նրանք սիրում են միմյանց ոչ թե մարմինը, այլ՝ անհատականությունը և ընտանեկան սեր և ջերմություն հասկացությունները գոյատևում են մինչև խոր ծերություն, երբ զույգերի միջև սեռական կապը թույլ է, կամ բոլորովին գոյություն չունի: Ջերմության և սիրո այս զգացումն օրեցօր ավելանում է և ինչպես Վիլ Դորանտն է իր «Փիլիսոփայության քաղցրությունը» գրքում նշում՝ տարիներ շարունակ միմյանց կողքին ապրելով և պարբերաբար շփվելով զույգերը սկսում են ամեն ինչում, անգամ արտաքինապես, նմանվել միմյանց: Մարմնային այս մերձեցումն ու նմանությունը բխում է նրանց հոգեկան ներդաշնակությունից ու կապ-

վածվությունից: Սա առաջին փուլն է, երբ մարդը դուրս է գալիս իր եսասիրության կաղապարից: Հենց այս պատճառով էլ իսլամում ամուսնությունը ստանում է բարոյական բնույթ: Մարդու ոչ մի բնագոյ կամ ցանկություն, սեռական բնազդից բացի, բարոյական բնույթ չի կրում: Այդ պատճառով էլ ամուսնությունն իսլամում համարվում է ավանդական ու խրախուսելի: Փոքր «ես»-ը, ընդլայնվելով և մեծանալով, ավելի նոսր ու հոսուն է դառնում: Այն նման է թանձր լուծույթի, որի մեջ ջուր ավելացնելու դեպքում դառնում է ավելի նոսր ու ջրիկ: Փորձը ցույց է տվել, որ ամբողջ կյանքում անուրի ապրած մարդիկ, ովքեր նվիրվել են հոգևոր գաղափարներին ու չեն ամուսնացել և զավակներ չեն ունեցել (որոնք կարող էին խանգարել իրենց հոգևոր նպատակների իրագործմանը), օժտված են ինչ որ առանձնահատուկ թերությամբ կամ արատով: Թվում է, թե մարդն ունի հոգևոր ծարավի մի տեսակ, որը բացի ընտանիքից որևէ այլ տեղ չի հագեցնում: Ոչ բոլոր հոգևոր ցանկությունները կարող են լրացվել ու բացատրվել որևէ գաղափարախոսությամբ կամ ուսմունքով: Այսպիսին է նաև թշնամու հանդեպ համարձակության խնդիրը: Եզնակյաց և հանգիստ նստած մարդն արդյոք կարո՞ղ է համարձակ ու քաջ լինել: Համարձակություն կարելի է ձեռք բերել միայն գործնական պայքարի գաղափարի ներշնչմամբ:

### Մի ավանդապատում մեծ Մարգարեից

Մի մարգարեական ավանդապատում կա, որը նշվում է սունի մահմեդականների գրքերում. «Նա, ով չի պատերազմում, կամ գոնե իր մեջ պայքարելու և մարտնչելու ցանկություն չունի, իր հոգու խորքում կռվի մի մասնիկ ունենալով հանդերձ, կմահանա»<sup>1</sup>: Պատկերացրեք, որ մեկն ուզում է լողալ սովորել: Լողալու մասին բոլոր տեսական գրքերը կարդալով հանդերձ, նա գործնականորեն երբեք չի կարող լողալ: Նա պետք է մտնի ջուրը, մի քանի անգամ սուզվի, ջուր կուլ տա, որպեսզի ի վերջո լողալ սովորի: Քաջությունն ու համարձակությունը հնարավոր չէ ձեռք բերել առանց թշնամու հետ բախվելու և վտանգների ու փորձությունների մեջ ընկնելու: Մարդը պետք է հայտնվի այնպիսի իրավիճակում, որ ինքնաբերաբար սկսի պաշտպանվել՝ զիտակցելով, որ իրեն պաշտպանելու և կյանքը փրկելու համար նա պետք է սպանի դիմացինին: Սրանք հնարավոր չէ կարդալ ու սովորել գրքերից:

### Բարեպաշտ մարդն ու ջիհադն<sup>2</sup> Աստծո ճանապարհին

Մոլավին մի պատմվածք ունի, որտեղ ասվում է. «Մի բարեպաշտ մարդ կար, որն ամեն տեսակ բարի գործերն արել էր ու անմասն էր մնացել միայն ջիհադից: Մի անգամ զինվորներին խնդրեց, որ անհավատների դեմ պատերազմի ժամանակ իրեն նույնպես կանչեն: Մի օր, երբ բոլորը վրանի մեջ նստած էին, լուր հասավ, որ թշնամին հարձակվել է և գալիս է իրենց կողմը: Նրանք, ովքեր զինվորական պատրաստվածություն ունե-

1-Սունանն էբի Դավուդ, մաս «Ջիհադ»:

2- Աստծո կամ հավատքի համար մղվող սրբազան պատերազմ (թարգմ.):

ին, անմիջապես թանքեցին իրենց ձեռքն ու սլացան առաջ: Իսկ այս բարեպաշտը կամաց կամաց տեղից վեր կացավ, աղոթեց ու մինչև սուրն ու ձին կզտներ, զինվորները պատերազմեցին և վերադարձան: Ապա՝ բարեպաշտը հարցրեց. «Ի՞նչ եղավ»: Ձինվորները պատասխանեցին. «Ոչինչ, գնացինք, սպանեցինք, սպանվեցինք ու վերադարձանք»: Բարեպաշտը զարմացավ իսկ ե՞ս: Նրանք պատասխանեցին, որ ամեն ինչ ավարտված է: Վերջապես զինվորներից մեկը խղճաց բարեպաշտին և ասաց. «Տեսնո՞ւմ ես այս գերի ընկածին, նա մեր ընկերներից շատերին է սպանել և հիմա մեր ամենաոխտերիմ թշնամին է: Տար ու զլխատիր նրան»: Գերի ընկածի ձեռքերը կապեցին և հանձնեցին բարեպաշտին: Բարեպաշտը գերիին տարավ մի կողմ և երկար ժամանակ չվերադարձավ: Ձինվորներն անհանգստացած գնացին և տեսան, որ ձեռքերը կապած գերին նրան զցել է գետնին և ամբողջ ուժով կրծում է կոկորդը: Ձինվորներն անմիջապես սպանեցին նրան և փրկեցին բարեպաշտին: Երբ վերջինիս վրան տարան և երեսին սառը ջուր ցանելով ուշքի բերեցին, հարցրեցին, թե ինչպե՞ս պատահեց: Բարեպաշտը պատասխանեց. «Երբ կանգնեցինք դեմ առ դեմ, նա ուղիղ աչքերիս մեջ նայեց և անմիջապես հարձակվեց, ես այլևս ոչինչ չեմ հիշում»:

Քաջությունն ու համարձակությունը հնարավոր չէ հանգիստ պայմաններում ձեռք բերել, կամ հակառակը՝ հանգիստ պայմաններում կատարած արարմունքը երբեք հնարավոր չէ ստեղծել պատերազմական պայմաններում:

Գոյություն ունեն այնպիսի բարոյական հատկանիշներ, որոնք մարդը կարող է ձեռք բերել միայն ընտանիք կազմելիս: Ընտանիք կազմելը հանդիսանում է ուրիշների ճակատագրով հետաքրքրվելու և անհանգստանալու որոշակի դրսևորում: Մինչև մարդը չամուսնանա, զավակներ չունենա և չապրի այնպիսի հոգեբանական և զգացմունքային պահեր, որոնցից են երեխայի հիվանդության դեպքում տխրելն ու նրա ժպիտի դեպքում՝ ուրախանալը, այլոց ճակատագի հանդեպ սեր և հետաքրքրություն ունենալ չի կարող: Գիրք կարդալով նրա մեջ երբեք նմանատիպ զգացմունքներ չեն արթնանա: Փորձը ցույց է տվել, որ ճգնավորներն ու կուսակրոնները, որոնք այս ամենը չեն ճաշակել, մինչև կյանքի վերջ օժտված են եղել որոշակի մանկական հատկություններով: Իսլամում ամուսնությունը սրբազան գործողություն և երկրպագություն համարելու հիմնական պատճառներից մեկը հենց սա է:

Սակայն քրիստոնեական ուսմունքի համաձայն ամուրիությունը սրբություն է, իսկ ամուսնությունը՝ պղծություն: Ամուսնանալ ցանկանում են նրանք, ովքեր ամուրիության ժուժկալությունից զուրկ են և անառակությունից խուսափելու համար պետք է ամուսնանան: Անգամ Զոռմի Պապը պետք է կուսակրոն լինի և ամբողջ կյանքի ընթացքում այդ պղծությանը չենթարկվի: Իսլամում ճիշտ հակառակն է:

Ուրեմն, ինչպես տեսանք, ամուսնությունը եսասիրությունից խուսափելու և սեփական «ես»-ի սահմանների ընդլայնման առաջին փուլն է: Ամուսնությունից հետո, երբ ցանկանում ենք աշխատել, արդեն միայն սեփական «ես»-ի համար չենք աշխատում և սեփական «ես»-ը փոխարին-

վում է «մենք»-ով, և ի վերջո մարդն իր սեփականից ավելի շատ սիրում և տարվում է իր ընտանիքի ճակատագրով և կրում է զրկանքներ, տանջանքներ, որպեսզի ընտանիքի անդամները հանգիստ և ապահով ապրեն: Սա եսասիրությունից խուսափելու և սեփական «ես»-ն ընդհանրացնելու մի աստիճան է, սակայն այն բավարար չէ: Պետք չէ, որ մարդը սահմանափակվի միայն ամուսնությամբ և որդեծնությամբ:

### **Տոհմային «ես»**

Հնարավոր է, որ ինչ որ մեկի սեփական «ես»-ը տարածվի նաև ընտանիքից դուրս և ընդհանրաճանաչ բարեկամների և տոհմակիցների շրջանակներում: Այս երևույթը բնորոշ էր նախախլամական շրջանի արաբ բեդվիններին, որոնք իրենց ընտանիքի անդամների և տոհմակիցների միջև որևէ տարբերություն չէին դնում և ամբողջ տոհմին իշխում էր կարծես նույն ոգին: Նման «ես»-ը համարվում է տոհմային «ես»: Տոհմի ներսում գոյություն ունեն և գործում են անձնագոհության և ինքնագոհաբերման ոգին, սակայն տոհմից դուրս՝ ոչ: Ուրեմն՝ մարդկային «ես»-ի այսչափ ընդհանրացումն ու տարածումը նույնպես բավարար չէ:

### **Ազգային «ես»**

Եթե օրինակ որևէ իրանցի իր «ես»-ն այնքան ընդհանրացնի և լայնացնի նրա սահմանները, որ կարողանա սեփական անձի նման սիրել բոլոր իրանցիներին, դարձյալ բավական չէ: Քանզի չափն անցնելով՝ նա ամեն ինչ թույլատրելի կհամարի: Նա չի խաբի, չի կողոպտի և չի սպանի իրանցիներին, սակայն ոչ իրանցիներին խաբելը, կողոպտելը, կեղեքումն ու այլոց իրավունքների ոտնահարումը կհամարի թույլատրելի: Սա հենց այն ազգային «ես»-ն է, որով օժտված են եվրոպացիները: Նրանց սեփական «ես»-ը ընդարձակվելով վերածվել է ազգային «ես»-ի: Եվրոպացիները հիմնականում չեն խաբում, չեն դավաճանում և չեն կեղեքում իրենց հայրենակիցներին, սակայն հայրենակից հասկացության սահմանը հատելուն պես դառնում են կեղեքիչ և դաժան: Ի շահ իրենց երկրի ասված կեղծիքն ու կատարված դավաճանությունը համարում են թույլատրելի: Այսինքն՝ իրենց երկրի ներսում նրանք երբեք ոճրագործություն և դավաճանություն չեն անում, սակայն այլ երկրների մարդկանց հանդեպ իրականացնում են ամենամեծ ոճրագործությունները: Այլ երկրների և պետությունների ունեցվածքն ու հարստությունը վերագրում են իրենց երկրին և հպարտանում նման արարքներով՝ իրենց համարելով հայրենասեր:

Անկասկած այն մարդը, որն իր երկրում խուսափում է եսասիրությունից, ավելի կատարյալ է եսասիրության և անձապաշտության զգացումներով տարված և իրեն ամբողջ աշխարհից ավելի վեր դասող մարդուց: Սակայն սա չի կարող բարոյականություն համարվել: Տրամաբանորեն հնարավոր չէ ընդունել հետևյալ արտահայտությունը. « Ես ինչ գործ ունեմ մյուս ազգերի հետ »:

## Մարդասիրություն

Եթե այս ամենից մեկ քայլ ավելի վեր բարձրանանք, ապա՝ կհասնենք մարդասիրության և հումանիզմի գաղափարին: Եթե որևէ մեկն իսկապես մարդասեր է, ապա՝ կծառայի բոլոր մարդկանց և չի դավաճանի և չի ոտնահարի որևէ մեկի իրավունքներն միայն այն պատճառով, որ դիմացինը նույնպես մարդ է: Թվում է, թե սեփական «ես»-ի տարածման ամենագերադասելի աստիճանը հենց սա է, երբ մարդը սկսում է սիրել բոլոր մարդկանց: Սակայն այս տեսությունը նույնպես սխալ է: Ինչո՞ւ պետք է մենք մարդկանց սիրենք, իսկ կենդանիներին՝ ոչ: Ինչի՞ համար է այս սահմանը: Արդյո՞ք տրամաբանական է այն, որ մարդն այստեղ հասնելով պետք է իր «ես»-ի առջև պատնեշ դնի: Թե՞ կարելի է ավելի առաջ գնալ և հասնել այն աստիճանին, որը կոչվում է Աստվածապաշտություն, քանի որ Աստված այնպիսի մի երևույթ է, որը բացակայում է մյուս երևույթներում: Աստվածապաշտության դեպքում աշխարհում ամեն ինչ գոյություն ունի և կա:

Այժմ վերադառնանք մարդասիրության խնդրին և տեսնենք արդյո՞ք սեփական «ես»-ի սահմանը հենց սա է: Հենց այստեղ էլ ամեն ինչ ընդհատվում է: Մարդասիրության փարցում գոյություն ունի մի հարց, երբ ասում ենք մարդասիրություն, ի՞նչ ենք հասկանում մարդ ասելով: Յուրաքանչյուր կենդանի և նյութ այնպիսին է՝ ինչպիսին կա: Օրինակ՝ երբ ասում ենք «մարդասիրություն», մարդն այնպիսին է ինչպիսին կա և որևէ հիմք չունի: Կենդանին՝ նույնպես: Սակայն մարդն աշխարհում միակ արարածն է, որը առեղծվածային (թաքնված) է և պետք է բացահայտվի: Մարդուն չի կարելի համարել մեկ գլխից և երկու ականջից բաղկացած մի արարած և մտածել, որ մարդասիրության իմաստն է, որ որտեղ էլ որ լինի այս արարածը նրան պետք է սիրել: Ոչ, այսպես չէ, քանզի մարդն օժտված է նաև մարդկայնությամբ: Մարդու մարդկայնությունը պայմանավորված է որոշակի հասկացություններով, իրականություններով և նրբություններով, և եթե որևէ մեկը դրանցից զուրկ կամ դուրս է, ապա՝ չի կարող մարդ համարվել: Սակայն հարց է ծագում, եթե ինչ որ մեկը դեմ է մարդկությանը կամ մարդկանց (որի օրինակները բազմաթիվ են), նրան նույնպե՞ս պետք է սիրել մյուս մարդկանց նման՝ ասելով, թե. «վերջապես մարդ է»: Թե՞ պետք է նրան ոչնչացնել: Սակայն ինչպե՞ս է երկրորդ տարբերակը համադրվում մարդասիրության գաղափարի հետ:

Պատասխանն այս է. եթե մարդասիրության իմաստն ընդամենը երկուտանի արարածին սիրելն է, ապա այս տեսանկյունից իսկական մարդու և տմարդիի միջև որևէ տարբերություն գոյություն չունի: Սակայն, երբ ասում ենք, որ մարդկություն ասելով հասկանում ենք որոշակի գաղափար և մարդն իմաստավոր մի արարած է, որը կարող է մարդասիրությամբ լեցուն լինել կամ դրանից զուրկ լինել, այս դեպքում «մարդասիրություն» հասկացությունը մեզ համար բոլորովին այլ իմաստ է ստանում: Այս դեպքում մենք տեսնում ենք, որ մարդկանց պետք է սիրել մարդկության ճանապարհին և ոչ թե դրան հակառակ և միայն այն պատճառով, որ մարդ են: Ուրեմն՝ մենք պետք է խստագույնս պայքարենք

մարդկությանը դեմ եղողների դեմ և նրանց համարենք մարդկության ճանապարհին բուսած փշեր: Սա ինքնին մարդու հանդեպ սիրո մի դրսևորում է, որը կարելի է անվանել մարդկության համար՝ տմարդիի դեմ պայքար:

### Կրոնական «ես»

Այստեղ հնարավոր է, որ ինչ որ մեկն ասի. «Դու եկար ու աստիճանավորեցիր «ես»-երը՝ դրանք բաժանելով սեփական, ընտանեկան, ազգային, տոհմային և մարդկային «ես»-երի: Իսկ կրոնակա՞ն «ես»-ը, չէ՞ որ այն նույնպես «ես» է»:

Արդյոք սա կարո՞ղ է մեզ համար պատնեշ հանդիսանալ: Մենք ինքներս ենք ասում, որ մահմեդականը պետք է սիրի մյուս մահմեդականներին, մահմեդականը չպետք է մտերիմ հարաբերություններ հաստատի ոչ մահմեդականի հետ և ինչպես Դուրանն է ասում. «Նրանք անհավատների հանդեպ անզիջում և խիստ են, իսկ միմյանց հանդեպ՝ սիրալիր»<sup>66</sup>: Եթե խտրականություն դնելը վատ է, ուրեմն վերոհիշյալ նախադասությունը նույնպես վատ է, իսկ զործողությունը՝ հակաբարոյական:

Եթե մարդը լինի մուլեռանդ և նախանձախնդրություն ցուցաբերի բոլոր մադմեդականների հանդեպ կամ հակակրանք՝ ոչ մահմեդականների, մահմեդականներին բարի ցանկանա, իսկ ոչ մահմեդականներին՝ ոչ, սա դրական երևույթ չէ և իսլամը նման բան չի խրախուսի: Իսլամը պատվիրում է, որ մենք բոլորի, անգամ անհավատների հանդեպ բարյացակամ լինենք: Անհավատների դեմ անբարյացակամությունից բխող թշնամանքը հակաբարոյական է: Մենք չպետք է անհավատին որևէ վատ բան կամենանք և պետք է Մեծ մարգարեի նման վարվենք: Մեծ մարգարեն ասել է. «Ես խղճում եմ նրանց, քանզի նրանք չեն կարողանում հասնել այն բանին, ինչը կնպաստի իրենց բարօրությանն ու բարեկեցությանը»:

Սակայն, երբ նրանք չեն ցանկանում ուղղվել և այլոց ճանապարհին փուշ են դառնում, նրանց պետք է վերաբերվել որպես խոչընդոտի, այսուհանդերձ, որևէ վատ բան չցանկանալով: Մարդն անգամ Աբուջահլիհն<sup>67</sup> էլ չպետք է որևէ վատ բան կամենա: Ոչ ոք չպետք է մտածի, թե՞ թող Աբուջահլիը մահմեդական չդառնա և ընդհանրապես, երբեք մի կամեցեք, որպեսզի Աբուջահլիը, կամ նրա նմանները չգտնեն Աստծո ճշմարիտ ճանապարհը:

Երբ Մուավիայի որդի Յազիդը Ջեյն –օլ– արեդինից հարցրեց թե՞ եթե ինքը ապաշխարհի և թողություն խնդրի նրա մեղքերը կներվե՞ն, թե՞ ոչ, Ջեյն –օլ– արեդինը պատասխանեց. «Այո, կներվեն»: Այս ամենը վկայում է, որ անգամ նա ոչ մի վատ բան չէր կամենում իր հորը սպանող Յազիդին: Ջեյն –օլ– արեդինը չէր կամենում, որ վերջինիս մեղքերը չներվեն և նա դժոխք գնա: Նա իր թշնամուն անգամ բարի էր կամենում: Մենք չարիք ենք անվանում այն ամենն, ինչն ուղղված չէ մարդու բարօրությանն ու երջանկությանը և կարող է վնասակար լինել նաև ուրիշների համար: Այսպիսով մենք պետք է հեռու մնանք չարիքից:

66-Դուրան, 48 : 29:

67-Մուհամադ մարգարեի ազգականներից էր, որը նրան վատ էր վերաբերվում (թարգմ.):

**Բարեգործություն անհավատի հանդեպ**

Ուրեմն, անհավատի հանդեպ թշնամանքը բխում է այլոց հանդեպ մարդասիրական կամ սիրո զգացմունքից, և ոչ թե՛ չարիք կամենալուց: Անհավատի հանդեպ ինչ որ չափով կարելի է բարյացակամ լինել, սակայն այն պայմանով, որ դա ուրիշների, մարդկության հանդեպ վատություն չլինի և մարդկության համար վնասակար չդառնա: Այս առումով Ղուրանն ասում է. «Աստված ձեզ չի արգելում բարեգործություն և արդարություն պահպանել այն մարդկանց հանդեպ, ովքեր հավատքի գործում չեն մարտնչել ձեզ հետ և ձեր տուն ու տեղից չեն վտարել, քանզի Աստված սիրում է արդարության ջատագովներին: Աստված ձեզ արգելում է հարաբերվել ու ընկերանալ միայն այն մարդկանց հետ, ովքեր կրոնի հարցում պատերազմում են ձեզ հետ և զրկել են ձեզ տուն ու տեղից և նրանք, ովքեր դաշնակցել են վերջիններին հետ՝ կեղեքիչ և բռնակալ են»: Օրինակ՝ եթե որևէ մեկը զենք վաճառի իր հետ պատերազմողին, ապա՝ բնական է, որ կպարտվի: Յուրաքանչյուր գործողություն, որը կարող է վնասել իսլամին կամ իսլամական միասնությանը՝ հարամ է: Հարամ է օգնել այն անհավատին, որն աշխատում է ստորացնել իսլամն ու մահմեդականներին: Եթե իսլամը ճշմարիտ է և եթե իսլամը մարդկության բարօրությունն է, բնական է, որ հիշյալ գործողություններն արգելված և հարամ են: Սակայն այն բարյացակամությունը, որը ցուցաբերվում է իսլամի հանդեպ թշնամանք չտածող անհավատին, ոչ միայն հարամ չէ, այլ՝ խրախուսելի:

Այստեղ գալիս ենք այն եզրահանգման, որ եսասիրությունից խուսափելը չի սահմանափակվում ոչնչով, անգամ՝ մարդու գործոնով: Այն իր մեջ ներառում է ամբողջ աշխարհն ու արարածներին, սակայն այն աշխարհը, որը կանգնած է Աստվածապաշտության ճշմարիտ ուղու վրա և ձգտում է դեպի այն՝ ինչ Աստված ցանկանում է մարդուն, այսինքն՝ բարօրություն: Եսասիրության շրջանակի իրական ճեղքումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ այն չի սահմանափակվում ոչ մի պատմեշով, անգամ մարդկանց միջև: Հետևաբար, մենք իսլամում չունենք մարդասիրություն անվամբ այնպիսի մի հասկացություն, որը մեզ սահմանափակի միայն մարդկանց շրջանակում: Իսլամում կան «ճշմարտություն» և «Աստված» հասկացությունները, որոնք շատ ավելի լայն ու ընդգրկուն հասկացություններ են և երբեմն իհարկե սահմանափակվում են: Սակայն ոչ թե որևէ մեկի հանդեպ վատ ցանկություններ ունենալու, այլ՝ այն պարզ պատճառով, որ գործնականում հնարավոր չէ բոլոր մարդկանց հետ նույն կերպ վարվել: Աստծո և ճշմարտության դեմ կանգնող մարդկանց հանդեպ պետք է վարվել թշնամաբար՝ փտած ատամի նման, որը պետք է հնարավորինս շուտ հեռացնել: Սակայն այս հեռացումը չի նշանակում, որ մարդն իր ատամին թշնամաբար է վերաբերվում: Ուղղակի ստեղծվում է մի այնպիսի իրավիճակ, երբ փտած ատամը մարմնից չհեռացնելու դեպքում այն կարող է անհանգստություն պատճառել ողջ մարմնին և վնասել նաև մյուս ատամներն ու բերանի խոռոչը:

## Հասարակական խիղճ

Հասարակական խիղճը, որի մասին խոսվեց սկզբում, պայմանավորված չէ միայն բոլոր մարդկանց սիրելու գործոնով, այլ՝ ավելի լայն մի հասկացություն է: Այն իր մեջ պարփակում է ամեն ինչի հանդեպ սեր և ուշադրություն, նաև ձգտում դեպի կատարելություն: Հասարակական խիղճը դա խոչընդոտների վերացում է ճանապարհից, որպեսզի մարդիկ չընկնեն: Այս առումով իսլամը կարևորում է ոչ թե մարդ անհատին, այլ՝ մարդկության սկզբունքները: Ղուրանը մահմեդականներին պատվիրում է հետևյալը. «Ով հավատացյալներ, հիշեք այն բարիքը, որ Աստված պարգևել է ձեզ այն ժամանակ երբ մի խումբ թշնամիներ մտադիր էին ձեռք բարձրացնել ձեզ վրա և ձեզ վերացնել, սակայն Աստված նրանց ձեռքը ձեր վրայից հեռացրեց: Ձգուշացեք Աստծուց: Եվ բարեպաշտները միայն Աստծուն պիտի ապավինեն»<sup>68</sup>: Այս կոչն ուղղված է մահմեդականներին, որոնց թշնամիները նախախլամական շրջանից մնացած ցեղերի ներկայացուցիչներ են, որոնք բացի կռապաշտ լինելուց օժտված էին ամենավատ հատկություններով:

Այնուամենայնիվ, Ղուրանն ասում է, որ անգամ նրանց հանդեպ պետք չէ անարդար լինել, քանզի արդարությունը հույժ կարևոր մարդկային սկզբունք է: Այս ամենը վկայում է այն մասին, որ Աստվածապաշտ մարդը չի կարող բռնակալ լինել: Բռնությունը չարիք է, անգամ ամենաանհավատ թշնամու հանդեպ: Այս առումով Իմամ Ալին ասել է. «Նրանց հանդեպ (ի նկատի ունի Եգիպտոսի բնակիչներին) բռնություն մի գործիր, քանզի նրանք երկու խմբից են բաղկացած. առաջինը՝ քեզ հետ կրոնական եղբայրներ և երկրորդը՝ ծագումով մարդ են: Ուրեմն արդարությունը համամարդկային և համաշխարհային հիմքեր ունի»<sup>69</sup>:

Իմամ Ալին Ձոռմեից եկած մի ծեր և կույր մուրացկանի տեսավ և ասաց. «Ինչո՞ւ է այս մարդը մուրում»: Պատասխանեցին, որ հրեա է, կարող ժամանակ աշխատել է, իսկ հիմա՝ մուրացկանություն է անում: Իմամ Ալին ասաց. «Ձարմանալի է, երբ ունակ էր աշխատում էր, իսկ հիմա, որ չի կարող՝ պետք է մուրացկանություն անի»: Նա կարգադրեց, որպեսզի ընդհանուր գանձարանից պարբերաբար որոշակի գումար վճարվի նրան: Սա իրականում կենսաթոշակի նման մի բան էր:

Խոսքիս իմաստն այն է, որ անհավատի նկատմամբ ցուցաբերված բարյացակամությունն ու օգնությունը երբեք արգելված չեն, եթե չեն նպաստում Աստծո և Ճշմարտության խաթարմանը: Ավանդություններում բազմաթիվ դեպքեր կան պահպանված, երբ մահմեդականացած հրեաներն ու քրիստոնյաները եկել են իմամի մոտ և հարցրել, թե ինչպես պետք է վարվեն իրենց ծնողների հետ: Իմամը նրանց պատվիրել է վարվել ինչպես միշտ անգամ՝ ավելի լավ:

68-Ղուրան, 5 : 11:

69- Նաիջ —օլ- րալադե, նամակ 53:





# ՉԼՈՒՄ Բ

Բժիշկների Իսլամական Միության  
Քննարկումները

## ՄԱՍ I

Մարմնի Խնամք

ԵՎ

Մտավոր Ունակությունների Չարգացում

## Հանուն Ողորմած Էս Բարեգութ Ըստձո

Քննարկման թեման դաստիարակությունն էր, իսլամական կրթություն-  
ցողական տեսանկյունից: Նախորդ գլխում լուսաբանեցինք, որ դաստի-  
արակությունը հիմնականում երկու տեսակ կարող է լինել, առաջինն այն  
է, որի հիմքում առավելապես «կառուցողականությունն» ու «արհեստն»  
են ընկած: Սա այն դաստիարակությունն է, որտեղ մարդն առհասարակ  
պատկերացվում է որպես մի առարկա, որը մի կամ մի քանի նպատակնե-  
րի համար է վերակառուցվում: Սակայն, այս կառուցման մեջ մեր նպա-  
տակը նյութը չի հանդիսանում, այլ հենց ինքը՝ նպատակադրված առար-  
կան, այս դեպքում՝ տվյալ մարդը: Ասել է, թե կառուցողը՝ այս դեպքում  
արհեստավոր վարպետը, ունի իր ուրույն նպատակը և այն նյութը, որից  
ցանկանում է ստեղծել իր արվեստը, կիրառում է որպես մի առարկա, և  
ցանկացած նպատակահարմար գործողություն կատարում է նրա հետ,  
անկախ այն հանգամանքից, որ տվյալ գործընթացը կամ գործողությու-  
նը ենթակային կարող է ավերիչ և միջև-իսկ սպանիչ թվալ: Ամեն դեպ-  
քում վարպետի նպատակը հիշյալ առարկայի կիրառումն ու օգտագոր-  
ծումն է, որն այսպես կոչված՝ արհեստ է համարվում նրա համար:

Օրինակ, երբ մարդ ցանկանում է ոչխարին օգտագործել, ապա ոչխա-  
րի գինը կայանում է նրանում, թե ինչ նպատակների է ծառայում այն: Եթե  
մարդը ցանկանում է այն վաճառել, կամ պատրաստվում է ինքը մորթել և  
օգտագործել, ապա անհրաժեշտ է նրան գիրացնել: Քանի որ բնական  
պայմաններում ապրող ոչխարը գլուխը չի կախում և միայն արածում,

մինչև հարկ եղածի չափ գիրանա, այլ բնականաբար և բնազդաբար ցանկանում է նաև զուգավորվել և բազմանալ, ուստի մարդն անհրաժեշտաբար ամորձատում է նրան, որպեսզի նրա ուշադրությունն այլևս չշեղվի այլ հարցերի վրա, և նա միայն ու միայն վայելի դաշտի կանաչ խոտը: Նման պայմաններում պարզ է, որ նա լավ ուտում, և հարկ եղածի չափ գիրանում է, մարդն էլ կարողանում է օգտվել նրա մսից:

Ոչխարին ամորձատելը նրա տիրոջ կարծիքով համարվում է կենդանու կատարելագործում, իսկ իր՝ ոչխարի կարծիքով, ինչպես է: Արդյո՞ք նրա կարծիքով իրեն կատարելագործել են, թե՛ արատավորել:

Պարզ է, որ ըստ ոչխարի՝ մարդն արատավորել է իրեն:

Նմանատիպ երևույթ տեղի է ունեցել նաև անցյալում՝ մանկլավիկների նկատմամբ: Այն ժամանակ, երբ ամորձատում էին մանկլավիկներին, բնականաբար իրենց՝ մանկլավիկների խորին համոզմամբ, արատավորում և անկարող էին դարձնում իրենց, սակայն նրանց տերերի՝ այսինքն նրանց շահագործողների կարծիքով, կատարելագործում էին իրենց ծառաներին, քանի որ ամորձատումից հետո նրանք դառնում էին առավել վստահելի ու հավատարիմ ծառաներ և՛ հարեմներում և՛ դրանցից դուրս:

Վերը նշվածը առկա է նաև մարդկային հոգու դաստիարակության դեպքում: Երբ որևէ դպրոց նպատակադրվում է ստեղծել իր ուղղությունը, ապա մարդկանց դաստիարակում է իր կողմնորոշումներին համապատասխան, անկախ այն բանից, որ իր քարոզած ու գործադրած դաստիարակության արդյունքում մարդը կարող է զրկվել իր մի շարք ընդունակություններից, բնական զգացմունքներից և նույնիսկ՝ հնարավոր է ձեռք բերի ֆիզիկա-հոգեբանական արատներ և ոչ լիարժեքության բարդույթներ:

### Մարդկային դաստիարակության դպրոցը

Կա ժամանակ, երբ որոշակի մի դպրոց կամ ուղղություն, միանշանակ կյանքի է կոչվում ծառայելու մարդուն: Այսինքն, երբ մարդուց, և նրան վերաբերող հարցերից դուրս գոյություն չունի որևէ այլ նպատակ: Այստեղ, խնդիրը պարզապես մարդուն երջանկության ու գերագույն կատարելագործման հասցնելն է, որտեղ չկան կողմնակի նպատակներ: Այլ կերպ ասած՝ դպրոցը կամ ուղղությունը հումանիստական են:

Մարդու դաստիարակության դպրոցը, այն դպրոցն է, որի բուն նպատակը ոչ այլ ինչ է, քան հենց ինքը՝ մարդը, և որը միայն հիմնվում է մարդու կատարելագործման գերագույն հիմքի վրա: Տվյալ դեպքում, դպրոցի գործունեությունը անպայման պետք է ծավալվի մարդկային տաղանդի, օժտվածության, զարգացման ու կատարելագործման շրջանակում:

Յիշյալ դպրոցի գերագույն ջանքերը պետք է ուղղված լինեն երկու երկատակի՝ մարդկային թաքնված ձիրքերի բացահայտմանն ու դրանց զարգացմանը, այլ ոչ թե տկարեցմանն ու ոչնչացմանը, և երկրորդ՝ մարդկային տաղանդի և ընդունակությունների մեջ այնպիսի կարգ ու օրինաչափություն ստեղծել, որպեսզի բնության մեջ ապրող ազատ մարդը չափազանցությունների գիրկը չընկնի, և դաստիարակությունը նրան հնա-

րավորություն տա ստանալ իրեն հասանելիք իրավունքն ու չխախտել այլոց իրավունքների սահմանները:

Ընդհանուր առմամբ, մարդկային ընդունակությունները երկու տեսակի են. Նրանք, որոնք կապված են այլ կենդանի արարածների հետ, և նրանք, որոնք ինքնատիպ են ու ինքնուրույն, այսինքն բոլոր այն ընդունակությունները, որոնց մեջ առկա է նաև այլ կենդանի արարածների ֆիզիկական ներգործությունը:

### Մարմնի խնամքը ըստ իսլամի

Նախ պետք է պարզել այն հարցը, թե արդյո՞ք իսլամը կողմ է մարդկային մարմնի խնամքին ու նրա զարգացմանը, թե՞ դեմ է դրան: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք խրախուսվում է մարմնապաշտությունը, թե՞ պախարակվում է այն: (Մարմնապաշտությունը, մարմնի կրթման և զարգացման մի այլ՝ ծայրահեղացված մեկնաբանությունն է): Այստեղ հիմնականում երկու էական խնդիր կա, և սխալ մեկնաբանությունները պարզապես խեղաթուրում են խնդրի էությունը: Հիմնականում, իսլամը պախարակելով մարմնապաշտությունը նրա բառացի իմաստով, խիստ կողմ է մարմնի պաշտպանությանն ու կրթմանը:

Արդյո՞ք համաձայն իսլամական օրենքի, մարդու կենցաղը պիտի լինի այնպիսին, որ նա ունենա առողջ մարմին, հասնի առավելագույն զարգացմանը, զերծ մնա տարբեր տեսակի հիվանդություններից, մարմնական զանազան խոցերից ու մակարոյծներից, թե՞ մարդկային մարմինը պետք է լքված տան պես անուշադրության մատնվի, մինչև այն վերջնականապես փտի ու կործանվի: Անկասկած, մարդ ցանկացած կառույցի նկատմամբ կամ ուշադիր է, պահպանում է այն քամուց, անձրևից ու ծյունից, հոգում է նրա անխափան աշխատանքը, կամ այն մատնում է անուշադրության, լքում անտարբերությամբ, և անգամ հոգ չէ եթե այն կործանվի և ավերվի:

Իսլամական դաստիարակությունը խրախուսում է մարդկային մարմնի բնական աճը, նրա խնամքն ու առողջապահությունը, սույն հանգամանքից է բխում նաև կրոնական տեսակետից արգելված մի շարք ուտելիքների ու ըմպելիքների հարցը. քանի որ ապացուցված է մարդու մարմնի համար դրանց միանշանակ վնասակար լինելը: Ավելին՝ իսլամական հոգևոր ատյանի օրինաչափության համաձայն, այն բոլոր երևույթները, որոնց մարմնի համար վնասակար լինելը ապացուցվում է իսլամական հոգևոր ատյանի կողմից, անկախ այն հանգամանքից, թե այդ մասին Դուրանը կամ սուննան որևէ պատճառաբանություն կամ արգելք ունեն թե չէ միանշանակ պիղծ է համարվում և դրա օգտագործումը՝ արգելված: Չնայած, ասում են նաև, որ մի շարք վնասներ էական են, իսկ մի շարք՝ ոչ, այսինքն նրանց վնասը այնքան սակավ է, որ հնարավոր է դրանք աչքաթող անել:

Իսլամն իր ուսմունքի պարտավորությունների մեջ արգելք չի ստեղծում, ասել է, թե այս սակավ ու չնչին վնասների համար որևէ բան (ուտելիքը, խմելիքը և այլն) պիղծ կամ արգելված չի համարվում, այլ դա կոչ-

վում է «մաքրուի»<sup>1</sup> : Այսինքն օրենքը խրախուսում է դրանց չօգտագործելը, իսկ առհասարակ հրաժարվելը՝ առավել ևս: Սակայն այն, ինչի վնասակար լինելը միանշանակ է, կրոնի ուսմունքի համաձայն դրա օգտագործումը նույնպես արգելվում է: Իսկ եթե իսլամական հոգևոր ատյանը ձեռնպահ է մնում ինչ-որ բանի նկատմամբ և չի հայտարարում դրա արգելված լինելու կամ չլինելու մասին, դա միայն այն պատճառով է, որ լիովին իրազեկ չեն երևույթի էությունը: Դա նշանակում է, որ տվյալ երևույթի վնասակար, կամ անվնաս լինելու փաստը դեռևս նրանց կողմից վերջնականապես լուսաբանված չէ: Օրինակ, ափիոնի օգտագործման դեպքում, լուսահոգի պարոն Սեյեդ Աբդուլ Ջասանն իր «Փրկության միջոցներ» («Վասիլաթ-օլ-նեջաթ») գրքում նշում է. «Երբ խոսում ենք փոքր քանակությամբ ափիոն օգտագործման մասին (իհարկե ոչ այն ժամանակ, երբ դա մոլուցքի է վերածվում և մեծ քանակով օգտագործելու դեպքում վնասակար է դառնում), դա վնասակար և պիղծ չի համարվում: Օրենքը չի բացառում նրա քիչ քանակությամբ օգտագործելը: Իսկ երբ ափիոնի, կամ որևէ այլ բանի օգտագործումը մոլուցք է դառնում, ապա այն խստիվ արգելվում է և օրենքի կողմից պիղծ է համարվում»: Այս բոլոր երևույթների մասին ակնարկված են կրոնը լուսաբանող մտավորականների մոտ, անկախ այն բանից, որ մենք ափիոնի կիրառման մասին ոչ Ղուրանում, ոչ էլ մի այլ տեղ՝ Սեր Օրենքում որևէ նշված արգելք չունենք:

Հարկավոր է մի անգամ ևս նշել, որ ափիոնն արգելվում է միայն այն պարզ պատճառով, որ մոլության դեպքում այն կարող է վնասակար լինել մարդու առողջության համար: Կամ, օրինակ, հերոյինը, որն առավել արդի երևույթ է, և որն անցյալում գոյություն իսկ չի ունեցել: Սակայն, քանի որ դրա վնասակար լինելը նույնպես միանշանակ ապացուցված է, ուստի դա ևս անկասկած պիղծ է, որի պատճառով էլ դրա օգտագործումն արգելվում է: Այսպես, ընդհուպ մինչև ծխախոտն ու նարգիլեն, որոնց կիրառման վրա տարածված է նույն տրամաբանությունը: Առհասարակ այն, ինչը վնասակար է մարմնին, նրա օգտագործումը բացառվում և արգելվում է իսլամական ուսմունքի համաձայն:

Հնարավոր է, որ որևէ իսլամական գործիչ ծխում է և նարգիլե քաշում: Ցավոք, նա չի էլ գիտակցում դրանց պատճառած վնասները: Իսկ մեկ այլ իսլամական հոգևորական՝ հասկանալով մարդուն հասցրած վնասները և այն հանգամանքը, որ ծխելը կարճացնում է մարդու կյանքը, խաթարում կյանքի բնականոն ընթացքը և՛ քայքայում առողջությունը, կոչ է անում ծխելն իսլամում խստիվ արգելված երևույթ համարել:

Երբ երդվյալ մուլի պարոններին հիվանդության պահին բժիշկը հիշեցնում է ծխելու վնասների մասին, միայն այդ ժամանակ են նրանք համոզվում ընդունել ծխելու արգելքը և այլևս չծխել:

Սա ընդհանուր մեծ թեմա է, ուստի խնդրի մանրակրկիտ հարցադրումներին չենք անդրադառնում:

Իսլամում առկա է մի ընդհանուր օրինաչափություն՝ այն ամենն ինչ վնասակար է մարդու առողջությանը ըստ օրենքի արգելված է: Հայտնի է

1- Այն, ինչ շարիաթում չի խրախուսվում (թարգմանիչ):

նաև հակառակը, երբ իսլամական օրենքի համաձայն խրախուսված է այս կամ այն մրգի, կամ բույսի օգտագործումը, քանի որ այն օգտակար է ատամների ամրացման, կամ որևէ հիվանդության դեմն առնելու համար:

Ինչպես նկատեցինք, իսլամական օրենքի մեջ բազմաթիվ են այն չափորոշիչ հանգամանքները, որոնց հիման վրա պարզ է դառնում որևէ արգելված, չխրախուսված կամ խրախուսված ուտելիքի վնասակար, անվնաս կամ նույնիսկ օգտակար լինելը կամ չլինելը: Այս կամ այն ուտեստը խրախուսվում է, քանի որ այն օգտակար է մարդու ստամոքսին:

Արդեն ակնհայտ է, որ մարմնի խնամքն իր գիտական, առողջապահական և հիգիենայի սահմաններում ոչ միայն չի պախարակվում, այլև մարդկային կատարելություն է համարվում: Գիտենք, որ քաջառողջ մարմնի տեր մարդիկ մշտապես համարվել են «առաքելությանը» օժտված մարդիկ, որոնց մարմնի զորությունը նրանց կատարելությունն է համարվել: Այդպիսին էր նաև իսլամի առաջին Իմամ Ալին, որի զորեղ և հաղթանդամ կազմվածքը նրա կատարելություններից մեկն էր:

### Մարմնի խնամք և մարմնապաշտություն

Այժմ կարող է ծագել հետևյալ հարցը. արդյո՞ք իսլամը լինելով մարդու մարմնի առողջությանն ու նրա խնամքին կողմնակից մի կրոն, հնարավորինս բացառում և պախարակում է մարմնապաշտությունը: Պետք է նշել, որ ըստ իսլամական օրենքի բացառվում է միայն մարմնի այն խնամքն ու վարժումը, որը չի համապատասխանում առողջապահության և հիգիենայի օրենքներին: Այլ կերպ ասած՝ այդ մարմնապաշտությունը, իրականության մեջ, առավելապես մարդկային մարմնական ցանկությունների կարևորումն ու նրանց հագուրդ տալն է, որն ըստ էության, մարմնի առողջության և նրա խնամքի օրինաչափության հետ խիստ հակասության մեջ է: Իսլամն հիմնականում բացառում է այն մարմնապաշտությունը, որի հիմքում ընկած է մարմնական բոլոր տեսակի ցանկություններին բացարձակ ազատություն տալու հոռի երևույթը, երբ մարդու միակ միտքն ու նպատակը սևեռվում է մարմնական ցանկություններին հագուրդ տալու վրա, այլ ոչ նրա բնականոն զարգացմանը հետևելուն: Այս դեպքում տեղի է ունենում ուղղակի հակառակ երևույթը, երբ մարդու միտքն ու ուշադրությունը միայն կենտրոնացվում են մարմնական պահանջներին ու ցանկություններին, որի դեպքում մարդը վնասում է ինքն իրեն: Ինչպես, օրինակ՝ շատակեր մարդը միայն մտածում է իր որովայնի մասին, այն մասին, թե ինչպես կարելի է առավելագույն հաճույք պարգևել ստամոքսին: Անկասկած, իր առողջությանը հետևող մարդը չի կարող նման կենցաղով ապրել, ընդհակառակը, նա պայքարում է շատակերության դեմ: Կամ, օրինակ, մի ծուլ և նյութապաշտ մարդ, որն իր կյանքը վատնում է այլևայլ հաճույքների ու խրախճանքի վայրերում, գիշեր-ցերեկ մասնակցում է տարբեր տեսակի խնջույքների: Բնականաբար, նա քայքայում է իր մարմինն ու նյարդային համակարգը: Այս տեսակի մարմնապաշտությունը, պարզապես նյութապաշտություն է, որն առհասարակ հակասում է բո-

լոր այն օրենքներին, որոնք կոչվում են մարմնի առողջ պահպանում կամ մարմնի խնամք:

Բոլոր դեպքերում, այն մարմնապաշտությունը, որի մասին բանաստեղծները, միստիկներն ու գրականության ջատագույնները բազմիցս խոսել են և որը նաև պարսից մտածողության արգասիք է, կարող է առկա լինել նաև արաբ բանաստեղծների խոսքում: -Դա նյութապաշտություն է, և մարմնական կարողությունների և ընդունակությունների իրական զարգացումից բավական հեռու մի երևույթ: Ավելին, վերոհիշյալ երկու երևույթները մասամբ հակասում են միմյանց, քանի որ, երբ մարդ ցանկանում է ապահովել սեփական մարմնի բնական աճն ու զարգացումը, պահպանել առողջությունը, այն գերծ պահել վնասներից ու հիվանդություններից, և հնարավորինս երկարաձգել կյանքը, անհրաժեշտաբար պայքարում է նաև մարմնապաշտության, կամ նյութապաշտորեն մարմինը քայքայելու դեմ: Ըստ իս, կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ իսլամական դաստիարակության մեջ մարմնի խելացի և ճիշտ խնամքը ոչ միայն չի արգելվում կամ բացառվում, այլև կազմում է կրոնի էական և հիմունքային խնդիրներից մեկը: Ուստի, հարկավոր է արժանին մատուցել այն դպրոցին, որը խթանում է մարդու մարմնի նկատմամբ խնամքի և մարդու ընդունակությունների բացահայտման գործը:

### **Մտավոր ունակությունների զարգացում**

Մարդուն յուրահատուկ ընդունակություններից առավել կարևորը նրա մտավոր օժտվածությունն է: Գիտակցության առաջնայնությունը այն երևույթն է, որը միշտ չէ, որ նկատում ենք այլ կրոնների ուսմունքների մեջ: Անկախ այն բանից, այդ կրոնների հիմնական ջատագույնները համաձայն են եղել այդ մտքի հետ, թե՛ ոչ, այնուամենայնիվ նրանց հետևորդներն ու հոգևոր գործիչները մշտապես կրոնը համարել են իռացիոնալ երևույթ, այսինքն՝ մարդկային բանականությանն ու մտքին հակամետ: Նրանք համոզված են եղել, որ խելքն ու մարդկային բանականությունը կրոնի ընկալմանը խանգարող, և ինչ-որ տեղ նույնիսկ խեղաթյուրող միավորներ են: Այնպես որ, քաղաքակիրթ ու զարգացած մարդը պարտավոր է մի կողմ թողած խելքն ու բանականությունը, հետևել իր հոգու և զգայական աշխարհի՝ կանչին, այլապես, նա չի կարող ուղղափառ հավատացյալ համարվել: Սույն իրականությանը մենք հաճախ ենք հանդիպում հատկապես քրիստոնեական ուսմունքի, ինչպես նաև այլ կրոնների ներկայացուցիչներից շատերի մոտ:

Այժմ, տեսնենք թե ո՞րն է իսլամի կողմնորոշումը մարդկային մտավոր ունակությունների գնահատման հարցում:

Սա այն հարցադրումներից է, որում գերազանցապես ի հայտ է գալիս իսլամի հիմնական արժեքը: Իսլամը մարդկային խելքին ու բանականությանը կողմնակից կրոն է, որը մեծապես կարևորում է մարդու մտային զարգացումը և նրա ինտելեկտուալ հնարավորությունների խթանման խնդիրը: Սկզբունք, որից ելնելով, իսլամական մտածելակերպը ոչ միայն չի պայքարել նրա առկայության դեմ, այլ ավելին՝ ապավինելով նրան,



փորձել է նրանից օժանդակություն, հաստատում ու վավերացում ստանալ: Հաստատում, որ միակ և վերջնական հանգրվանը մարդկային առողջ խելքն ու բանականությունն է: Այս կապակցությամբ բազմաթիվ են նաև Ղուրանում առկա այաթները, որոնք մարդուն հակում են հետևելու այդ սկզբունքին և զարգացնելու բանականությունն ու մտային կարողությունները: Կան նույնիսկ այաթներ, որոնք իրենց հարցադրումներով ընթերցողին ստիպում են խորհել և աշխատեցնել սեփական առողջ միտքը:

Քանի որ սույն թեման տրամաբանական է և համոզիչ, ուստի չցանկանալով ալելի ձգել ու երկարացնել մեր քննարկումը, կբավարարվենք մի կարճ մեկնաբանությամբ:

### Բանականության թեման Ղուրանում

Այսպիսով, իսլամը բանականության խստագույն կողմնակիցն է: Թեման սկսենք Ղուրանի մի այաթից, ու մի հադիսից: 39-րդ սուրայում կարդում ենք հետևյալ տողերը. «Ուրեմն ավետիս տուր իմ ծառաներին՝ **Նրանք, ովքեր լսում են խոսքերն ու առաջնորդվում են ամենայն բարերարությամբ՝ նրանք հենց այն մարդիկ են, որոնց Աստված է առաջնորդել, և նրանք խոհեմներ են**»<sup>2</sup>: Ինչպես նկատում ենք, թեման սկսվել է «իմ ծառաներով», որը հուշում է այն մասին, որ նրանք են Աստծու ծառաները, և որ դա, Աստծու զավակը լինելու գլխավոր գրավականն է: «**Նրանք, ովքեր լսում են խոսքերը**», այսինքն նրանք, ովքեր «ականջալուր են», այլ ոչ թե նրանք, ովքեր պարզապես «լսում են»: Տարբերություն կա ականջալուր լինելու, և միայն լսելու միջև: «Սամա», որը նշանակում է լսել, գործողություն է, որ կատարվում է անկախ մարդու կամքից կամ նրա ցանկությունից, մինչդեռ «էսթեմա» նշանակում է ուշադրությամբ ականջ դնել ու կլանված լսել: Դա լինում է այն ժամանակ, երբ մարդ նախապատրաստված՝ աչալրջորեն լսում է ինչ-որ բան: Երաժշտություն լսելու դեպքում ասում են. «Լսելը մեղք չէ, սակայն նրան կլանված ականջ դնելը՝ մեղք»: Երբ Ղուրանն ասում է. «**Նրանք, ովքեր լսում են խոսքերը**», ապա նա նկատի ունի այն հանգամանքը, որ հարկավոր չէ անմիջապես մերժել առաջին իսկ լսածը, այլ հարկավոր է այն առավել ուշադրությամբ լսել: Իսկ երբ նշում է՝ «**առաջնորդվում են ամենայն բարերարությամբ**», նշանակում է նրանք ընկալում են լսածը, վերլուծում, այնուհետև ըստ արժանվույն գնահատում, և հետո հետևում են նրանցից լավագույնին: Ասվածի իմաստը մարդկային մտքի և նրա տրամաբանության ինքնուրույնացումն է: Ասել է, թե մարդու խելքը զգոն ու մանրակրիտ մաղի է նմանվում, որն ընկալում է իրեն հասած ցանկացած խոսք, այնուհետև այն կշռադատում, և դրանք անվերջ մաղելուց հետո միայն, ընտրում է ամենակատարյալն ու ամենագեղեցիկը: «**Նրանք հենց այն մարդիկ են, որոնց Աստված է առաջնորդել**», Ղուրանն այս տրամաբանական ուղղորդումը՝ աստվածային ուղղություն է համարում, ապա շարունակում՝ «և նրանք խոհեմներ են», որ նշանակում է, թե Ղուրանի համաձայն, սրանք

2- Ղուրան, բարգմ. էդ. Հախվերդյանի, Երևան, 2007, 39: 17, 18:

են ամենախելացի ու ամենախոհեմ մարդիկ:

Սուրայում նշված «Ալբաբ» բառը «լոբ-ի» հոգնակի ծնն է: «Լոբ» նշանակում է՝ ուղեղ, միջուկ (իհարկե ոչ խելքի իմաստով, այլ առհասարակ կորիզ: Երբ ասում ենք ծիրանի միջուկ՝ նուշ, կամ ընկույզի միջուկ և այլն), սակայն այս եզրույթները Ղուրանում կիրառված բնորոշ եզրույթներից են, որոնք մենք Ղուրանից դուրս փնտրել ենք, և չենք գտել: «Լոբ» լեքսեմը Ղուրանում բազմիցս կրկնվում է. կարծես մարդուն նմանեցրել է մի նշի կամ ընկույզի, որտեղ պտուղը նրա արտաքին տեսքն է, իսկ հիմնական մասը՝ կորիզը, որը թաքնված է հենց այնպես, ինչպես մարդու ամբողջ արտաքինի ու կազմվածքի մեջ թաքնված է նրա ուղեղը, խելքն ու բանականությունը. Սրանք ամենաեական են մարդու կյանքում: Երբ կոտորում ենք նշի կամ ընկույզի կեղևը և այն գտնում ենք դատարկ, ապա ասում ենք. «միրգը փուչ է ու դատարկ»: Այսպես էլ մարդն է, երբ նա զուրկ է խելքից, երբ նրա մոտ բացակայում է մարդ կոչվելու գլխավոր ու հիմնական տարրը՝ բանականությունը: Այս դեպքում, կարելի է ասել, որ նա արտաքնապես մարդ է, սակայն զուրկ է մարդկային իմաստությունից: Այս խոսքերի հիման վրա դժվար չէ եզրակացնել նաև այն, որ մարդ կոչվելու հիմնական չափանիշը՝ նրա խելքն է, և մարդկային ինքնուրույն բանականությունը՝ «Նրանք, ովքեր չսում են խոսքերն ու առաջնորդվում են ամենայն բարերարությամբ»:

Դժվար է Ղուրանի խոսքերից դուրս առավել լիարժեք ու կատարյալ մտքեր գտնել և՛ մարդկային գիտակցության ինքնուրույնության, և՛ երևույթների ճիշտ գնահատման ու մեկնաբանման մասին, որոնք անկասկած այն մեծագույն արժանիքներից են, որից զուրկ մարդը փուչ է, և ունայն:

Այս փոքրիկ նմուշը մեկն է Ղուրանի այն բազմաթիվ այաթներից, որոնք խոսում են վերը նշված խնդրի մասին: Մենք բավարարվում ենք այս մի օրինակի մեկնաբանությամբ, քանի որ եթե խոսենք Ղուրանի բոլոր այաթների մասին, ապա անհրաժեշտ կլինեն բազմաթիվ լսարաններ ու քննարկումներ:

### **Բանականության թեման՝ Սուննայում<sup>3</sup>**

Իսլամական ավանդության և հատկապես կրոնական մանրապատումների մեջ ևս կարևոր տեղ են զբաղեցրել մարդկային մտքին ու բանականությանը նվիրված խնդիրները: Այս առումով կրոնական մանրապատումները գերազանցում են աշխարհիկներին: Եվ բոլորովին պատահական չէ, որ այսօր սոցիոլոգների կողմից հրատարակված հետազոտությունները խոսում են այն մասին, որ իսլամի ժողովման ժամանակաշրջանում, շիաների միտքն ու բանականությունը առավել զարգացած ու առաջադեմ է եղել, քան սունիներինը:

Ահմադ Ամինն իր հայտնի աշխատանքների շարքում հավաստում է, որ շիաների միտքը՝ տրամաբանող ու վերլուծող միտք է, և դա միշտ է այդ-

3- Սուննան իսլամի սուրբ ավանդապատումներն են Սոհամադ մարգարեի քարոզների և գործունեության մասին: Սուննան հենվում է հադիսների վրա (թ):

պես եղել: Ըստ Ամինի, այս առանձնահատկությունը բխում է այն հանգամանքից, որ շիաների ուշադրությունը մեծ մասամբ սևեռված է եղել խնդիրների մանրակրկիտ վերլուծության վրա: Մի տեղ նա նույնիսկ նշում է. «Իսլամական ժամանակաշրջանի փիլիսոփայությունը ծաղկել է շիաների՝ այլ ոչ թե սունիների միջավայրում: Եգիպտոսում, մինչև նրանց շիա դառնալը, փիլիսոփայության և ոչ մի նշույլ չի նկատվել, իսկ հենց Եգիպտոսը շիա դարձավ, այնուհետև միանգամից այնտեղ մուտք գործեց նաև փիլիսոփայությունը: Սակայն շիաների դիրքերի տկարացման հետ զուգընթաց, տկարացավ և հետդարձ ապրեց նաև փիլիսոփայությունը: Այն տևեց մինչև նախորդ դարաշրջանը, երբ շիա՝ Սեյեդ Ջամալի շնորհիվ կրկին անգամ միտքն ու մտավոր զարգացումը վերադարձան Եգիպտոս»:

Այստեղ նպատակահարմար կլիներ հիշել Ղուրանի հետևյալ հրաշալի խոսքերը՝ «Եվ իրոք, շիաների փիլիսոփայությունն առավել գիտակցական է քան սունիներինը»: Եվ առհասարակ, շիաների միտքը մեկնաբանող և վերլուծող միտք է: Եթե այս խնդիրը մանրակրկիտ ուսումնասիրենք և քննենք այս երևույթի արմատները, կնկատենք, որ շիաները պարզապես չափազանց կարևորել են մարդկային բանականության և մտքի զարգացման հարցը:

Սունիները հենց սկզբից ևեթ պառակտվեցին երկու հակամետ և իրարանրոժ խմբերի՝ էշաերեներ և մոթազելիներ: Մոթազելիները առավելապես հակված էին մտքին ու տրամաբանությանը, իսկ էշաերենները՝ լուր հնազանդությանը: Չնայած առկա տարածայնություններին, շիաները հիմնականում մոթազելիների հետ համընթաց էին: Նրանց շփման եզրերը կայանում էին նրանում, որ մարդկային խելքին ու բանականությանը հույժ կարևոր դեր էին հատկացնում: Շիաների ավանդապատումներում հանդիպում ենք մարդու խելքի ու տրամաբանության մասին այնպիսի մեկնաբանությունների, որոնց նմանը դժվար թե մեզ հանդիպի սունիների հեղինակած գրքերում: Շիաների կողմից ստեղծված «Բա-Ֆի» «Բահար-օլ-Անվար» և այլ աշխատություններում ակնհայտ է, որ թեմաներն սկսում են «մտքի ու տգիտության խնդիրներից»: Սկզբում գրառվում են «Բեթաթ-օլ-Աղլ վա ալ-Ջահլը»<sup>4</sup>, ապա նոր բերվում են «Բեթաթ -օլ- Թոհիդը»<sup>5</sup>, «Բեթաթ-օլ-Նաբովվաթը»<sup>6</sup>, «Բեթաթ-օլ-Յոջջաթը»<sup>7</sup> և այլ գրքերը:

Ինչպես նկատում ենք, խելքի ու գիտության հարցերը զուգահեռաբար տեղադրվել են տգիտության կողքին, որին մեր այս աշխատության մեջ առավել մանրամասն կանդորադառնանք: Ակնհայտ է նաև այն, որ շիական մանրապատումները մասնավոր տեղ ու ուշադրություն են հատկացնում մարդու բանականությանն ու նրա մտավոր արժանիքների գնահատմանը:

4- Գիրք բանականության և տգիտության (թ):

5- Գիրք միաստվածության (թ):

6- Գիրք մարգարեության (թ):

7-Գիրք Սարգարեների և Իմամների (թ):

**Բանականությունն ու տգիտությունը իսլամական ավանդապատումներում**

Կատակ չէ, երբ մի հաղիսի մեջ ժողովրդի հոգևոր առաջնորդն ընդգծում է Աստծո առաջնորդների երկու խումբ (առաջնորդներ են համարվում Աստծու մարգարեն և Իմամը): Դրանք են. Արտաքին տեսքի և հոգու, ներաշխարհի առաջնորդները: Արտաքինի առաջնորդները Աստծու կողմից ուղարկված մարգարեներն են, իսկ հոգու առաջնորդը՝ դա մարդկային միտքն է: Սա մի հաղիս է, որը բացարձակ փաստ է շիաների հաղիսների շարքում, և որն առկա է նաև «Օսուլե Բաֆիի» մեջ: Հարց է ծագում, թե ինչո՞ւ ոմանք դա չգործադրեցին: Հատկանշական է այն, որ վերը նշված տգիտությունն էլ, խելքի՝ մարդկային բանականությանը հակառակ կողմում գտնվող երևույթն է, և մարդու խելքը, իսլամական ավանդապատումներում նրա մտային կարողություններն ու իրերը զանազանելու և վերլուծելու միակ ճշմարիտ ունակությունն է:

Հաճախ, իսլամը պախարակում է տգիտությունը, խոսքը ոչ թե անգրագետ, այլ՝ անխելք ու ունայնամիտ անձանց մասին է: Ըստ այդմ էլ, խելացի մարդը նա է, ով ունի ինքնուրույն մտածելու և վերլուծելու ունակություն, իսկ տգետը, նա՝ ով զուրկ է այդ հատկությունից: Դժվար չէ գտնել բազմաթիվ իմաստասեր, սակայն՝ տգետ անձնավորություններ, որոնք գիտուններ են, քանի որ շատ բան են սերտել արտաքին աշխարհից: Նրանք ծեռք են բերել բազմաթիվ ու բազմապիսի գիտելիքներ, սակայն նրանց միտքը մի շտեմարանի պես է, որի մեջ կուտակվել են նրանց սերտած ու դիզած բոլոր առարկաներն ու գիտությունները: Սակայն նրանց խելքն առհասարակ զուրկ է տրամաբանելու և իրերն ինքնուրույն վերլուծելու շնորհից: Նման մարդկանց միտքը, համաձայն իսլամի, լծացած է և նրանց պետք է տգետներ համարել: Հնարավոր է, որ նրանք գիտուններ են, սակայն նրանց միտքը ճահճացած է:

Բազմիցս լսել ենք սույն հաղիսը՝ «**Իմաստասիրությունը հավատացյալի կորցրածն է**»: Այն անկասկած գիտություն է, որի պարունակությունը՝ իրականությունն է, գիտություն, որը կայուն է, ոչ թե մտացածին պատրանք:

Ցավոք մենք չենք կարող այս մարդկանց պատկերը գծագրել, և կատարել այն ամենը՝ ինչ կատարում են բոլոր տհաս քարոզիչները: Կատարված աշխատանքներից յուրաքանչյուրն արժեքավոր է իսլամի համար այն տեսակետից, որ ապացուցում է, թե հավատը որքան է կարևորում և սրբացնում իմաստասիրությունը: Ավելին, նշում է, թե այն հավատացյալի կորցրած իրն է: Կնշանակի, հավատացյալը նման է այն մարդուն, որը կորցրել է թանկարժեք մի իր և անդադար փնտրտուքի մեջ է:

Հիշյալ հաղիսը շարունակվում է բազմաթիվ այլ հաղիսների մեջ: Ես անձամբ որոնել և նվազագույնը քսան հաղիսի մեջ հանդիպել եմ այդ մտքերին: «**Իմաստությունը սերտի՞ր անզամ քշնամուց, անզամ անօրենից, անզամ հեթանոսից**»: Ասել է, թե անզամ երբ համոզված ես, որ դիմացինիդ ունեցած գիտելիքը իրականությունն է, գիտությունն ու իմաստասի-

րությունը, մի տատանվիր ու տարակուսիր այն մտքից, որ նա անօրեն է, հեթանոս, պիղծ՝ ոչ մուսուլման, այլ անվարան մոտեցիր նրան և ստացիր նրա ունեցած գիտելիքն ու իմաստությունը, քանի որ դա քոնն է, և դա ժամանակավոր է գտնվում նրա ձեռքերում:

**«Ուր որ այն գտնի, իրեն ամենից արժանավորը կհամարի»:**

### **Գիտություններ սերտելու մահմեդականների ձգտումը**

Արեգակնային տարու երկրորդ դարասկզբին, այսինքն այն ժամանակահատվածում, երբ դեռ թե՛ծ ու աշխույժ էր իսլամի ու նրա հավատացյալների ասպարեզը, ակնառու քանակությամբ գրքեր թարգմանվեցին և՛ իրանական, և՛ հռոմեական, և՛ հնդկական, և՛ հունական գիտություններից, որոնք և արագությամբ ներմուծվեցին իսլամի մեջ: Ո՞րն էր դրա պատճառը, և ի՞նչպես էր, որ իսլամական աշխարհը չհակադրվեց այդ ամենին: Պատճառը մեկն էր: Այն, որ առկա էր ուսուցումը, և դա թույլատրում էր թարգմանել ցանկացած ժողովրդի պատկանող ցանկացած գիրք: **«Գիտություն սերտիր, նույնիսկ եթե դրա համար Զինաստան հասնես»<sup>8</sup>:** Ինչպես, օրինակ, Աբդուլլահ Սողաֆան Իմամ Սադեդի օրոք թարգմանեց Արիստոտելի «Տրամաբանությունը»: Ավելին՝ այս թարգմանչական շարժումն սկիզբ էր առել ավելի վաղ՝ նույնիսկ Բանի Օմայեի օրերից, որը փաստորեն ծաղկում ապրեց Իմամ Սադեդի ժամանակ: Ուշագրավ է այն փաստը, որ Զարունի, Սամունի, և առհասարակ Իմամների կենդանության օրոք արագ թափով թարգմանվում էին հիմնական գիտությունները: Օրինակ, «Բեյթ -օլ- Զեքմաթը»<sup>9</sup>, իր ժամանակի դպրոցների մեջ միակ եզակի երևույթն էր, որին հետագայում՝ ապարդյուն փորձեցին նմանվել այլ դպրոցներ:

Երբ ուշադրությամբ քննում ենք մեր հաղիսներն ու Իմամների վարքը, տեսնում ենք բազմիցս կրկնված քննադատական հայացքները՝ խալիֆների, հատկապես նրանց թույլ տված սայթաքումների, շեղումների ու սխալ վարք ու բարքի մասին: -Ի զուր չէ, որ խալիֆներն այսքան օտարվել ու լքվել են ժողովրդի կողմից: Պարզապես հիշյալ գրքերում ու աշխատություններում մեր Իմամները վեր են հանել նրանց վարքագիծն ու իրական դեմքը: Սակայն որևէ հաղիսի մեջ չենք գտնի թեկուզ մի տող, որում նրանց գործունեությունը կրոնական հիմունքների խեղաթյուրում համարված լինի, կամ նշված լինի, թե նրանց գործած սխալներից էր նաև այն, որ նրանք թարգմանեցին և իսլամական աշխարհ ներմուծեցին անօրենների՝ հույների, հռոմեների, հնդիկների և պարսիկների գիտությունները: Մինչդեռ հասարակությունը նրանց պախարակելու ամենահարմար վայրն էր: Սենք նույնիսկ մի հաղիսի մեջ էլ չենք գտնի զոնե մի արտահայտություն, որտեղ խալիֆների իմաստասիրությունն ու գիտություններին յուրահատուկ տեղ հատկացնելու ցանկությունը պախարակված, մերժված, կամ նույնիսկ հակաիսլամական արարք համարված լինի:

**Զինականում, նպատակս այն է, որ հետևյալ խոսքը՝ «Իմաստությունը**

8- Չամե -օլ- սադիր, Գատոր I, էջ 44

9- Իմաստության տուն (թ):

սերտի՛ր անգամ քշամուց, անգամ անօրենից ու հեթանոսից», իսլամի հիմնական օրենքներից են: Չնայած նրա հաղիսներն այստեղ չկան, սակայն նրանք ունեն հրաշալի բովանդակություն: Մեր մանրապատումների մեջ կա մի հաղիս ևս, որտեղ մեջ են բերված Հիսուս Քրիստոսի հետևյալ տողերը՝ «Ղուք եղեք խսքերի քննադատը»<sup>10</sup>: Այսինքն, հենց այնպես, որ դրամ փոխանակողները նախ զգուշությամբ ուսումնասիրում են դրամը, հասկանում նրա լավն ու վատը, ապա վերցնում նրացից լավագույնը, դուք էլ առանձին թեմաների ու խնդիրների մասին այդպիսին եղեք:

Վերցնում ենք այն, ինչ նրանք ունեն, ապա մեր ինքնուրույն տրամաբանությամբ ուսումնասիրում ու վերլուծում ենք, այնուհետև ընտրում ենք լավերն ու թողնում՝ վատերը:

Պարզ է դառնում, թե վերոհիշյալ՝ «Իմաստությունը սերտի՛ր անգամ քշամուց, անգամ անօրենից», (կամ նույնիսկ հեթանոսից) տողերը նույնպես արտացոլում ու հաղորդում են միևնույն պատգամն ու իմաստը, ինչին ակնարկում է նաև հետևյալ այսքը.

«Նրանք, ովքեր լսում են խոսքերն ու առաջնորդվում են ամենայն քարարությամբ՝ նրանք հենց այն մարդիկ են, որոնց Աստված է առաջնորդել, և նրանք խոհեմներ են»:

### Մի ավանդապատում Իմամ Սուսա Քազեմից

«Օսուլե Քաֆի» գրքում առկա է Սուսա էբնե Ջաֆարի հաղիսը, ուղղված հանրահայտ Հոշամ էբն-օլ-Հաքամին: Հոշամը մեր անվանի պատմիչներից է, որի գրչին պատկանող մանրապատումների մեծ մասը պատկանում են կրոնի հիմնահարցերին: Այլ կերպ ասած՝ «մոթեքալեն»<sup>11</sup>: Չնայած ըստ այդ պատմողներին, երբևէ հաճելի չի եղել իրենց «պատմող» անվանելը, սակայն նրանք հիմնականում շփվել են հոգևորականների ու խոսքի արվեստի վարպետների հետ, կնշանակի, թե նրանք հաճախ են բանավիճել իսլամական կրոնի հիմնահարցերի՝ միաստվածության, մարգարեության, հանդերձյալ կյանքի եռախորհուրդ խնդրի շուրջ: Հետաքրքրական է նաև այն, որ և շիաները և՛ սունիները միաձայն Հոշամին համարել են իր ժամանակների կատարելագույն պատմողը:

Վերջերս, երբ «Իսլամի ու Իրանի փոխադարձ ծառայություններ» գիրքը շարադրելիս ընթերցում էի Շաբալի Նաամանի (հնդիկ գիտնական,) «խոսքի արվեստի պատմությունը» և ուսումնասիրում Աբու -օլ- Հազիլի (պարսիկ հանճարեղ ճարտասան) վարքը, կարդացի հետևյալ տողերը.

«Բոլորը խուսափում էին Աբու -օլ- Հազիլի հետ բանավիճելուց, սակայն ինքը՝ միայն խուսափում էր Հոշամ էբն -օլ- Հաքամից»:

Կնշանակի, որ Հոշամը խիստ խելացի ու բանիմաց էր:

Իմամ Սուսա էբնե Ջաֆարն էլ իր խոսքն ուղղում էր Հոշամ էբն -օլ- Հաքամին, որի մտավոր կարողություններն ու բանականությունը արդեն իսկ ակնհայտ է: Նրան համարում են հավատցյալ՝ իմաստասիրության ու

10- Բահար-օլ-Անվար, 96/2:

11- Պատմող (թ):

բանականության մեջ: Ասում է՝ «**Հոշանձ, բարեգութ և ամենագոր Աստվածն իր գրքում ավետիս է տալիս իմաստասերներին ու խելացիներին**»: Այսինքն Աստված աչքալուսանք է տալիս իմաստուններին ու խելացիներին՝ «**Նրանք, ովքեր լսում են խոսքերն ու առաջնորդվում են ամենայն բարերարությամբ՝...**»: Հիշյալ այսօր մեջ խելքի ու տրամաբանության, իրերի վերլուծության, լավը վատից առանձնացնելու մասին է խոսվում, ինչն առհասարակ խելքի ու բանականության կարևորագույն հատկանիշն է: Հարկ է նշել այն կարևոր հանգամանքը, որ գիտություններ սերտելու ունակությունը մարդկային խելքի յուրահատկություններից միայն մեկն է, որն այնքան էլ կարևոր չէ: Հիմնականում, երբ նա սկսում է ինքնուրույն վերլուծել, լուսաբանել բարդ խնդիրներն ու հասկանալ նրանց լավն ու վատը, կարևորն ու անկարևորը, դա արդեն այն պահն է, երբ նրա բանականությունը կարելի է կայացած համարել:

### Ավիցեննայի խոսքերը

Այս կապակցությամբ տեղին կլինի հիշել նաև Ավիցեննայի երկու գեղեցիկ միտքը, գրված «Էշարաթ»<sup>12</sup> գրքում.

**«Այն մարդը, ով սովորել է միանշանակ ընդունել ցանկացած լսած խոսք, առանց հիմնավորման, նա անկասկած դուրս է եկել մարդկային հագուստից»:** Այսինքն մարդ չպետք է ամեն մի խոսք ընդունի: Այստեղ առկա է նաև խնդրի հակառակ կողմը. նրանք, ովքեր հերքում են ցանկացած բան առանց հիմնավորման, նրանք ևս անհեթեթ քայլի են դիմում: Այս մասին նա գրում է.

**«Երբ մի հետաքրքիր բան ես լսում, և չկան փաստեր, որոնք կհավաստեն կամ կհերքեն ասվածը, այն ոչ ընդունիր, և ոչ էլ մերժիր»:**

Իմաստունը նա է, ով ստույգ պատճառաբանությամբ է ընդունում կամ մերժում ցանկացած նոր բան, և խնդրի մասին գաղափար չունենալու, կամ հիմնական պատճառաբանում չգտնելու դեպքում, պարզապես ասում է՝ «չգիտեմ»:

### Գիտության և բանականության զուգակցման անհրաժեշտությունը

Այս կապակցությամբ հաղիսը բավական ընդարձակ է, ուստի կսահմանափակվենք նրա մի բանի ակնարկներով միայն.

**«Չպետք է բավականանալ միայն բանականությամբ, այլ այն պետք է զուգակցել նաև գիտության հետ, քանի որ բանականությունն ինչ որ տեղ բնատուր երևույթ է, և յուրաքանչյուր մարդ ինչ որ չափով օժտված է դրանով: Գիտությունը դաստիարակում և ուղղորդում է բանականությանը, ուստի այն պետք է զուգակցել գիտությամբ»:**

Եվ՝ Նահջ -օլ-Բալադեի և՛ հաղիսների մեջ գիտությունն ու բանականությունն այսպես են մեկնաբանվել. Նրանք գիտությունը երբեմն համարել են ձեռք բերովի խելք, իսկ բանականությունը՝ «բնատուր»: Փաստորեն, գիտություն և բանականություն եզրերը փոխարինել են մեկմեկու, այն

12- Ակնարկներ (թ):

տարբերությամբ, որ նրանցից մեկը համարվել է բնատուր, իսկ մյուսը՝ ձեռքբերովի: Հատկապես կարևորվել է այն, որ բնատուր խելքն ու ձեռքբերովի գիտությունը, համակցելու և մեկտեղման դեպքում կարող են օգտակար հանդիսանալ:

Բնականաբար, նրանք, ովքեր միայն սովորում են ու գիտելիքներ դիզում, փաստորեն ոչ այլ ինչ են, քան՝ գիտելիքներ կուտակող շտեմարաններ: Նման մարդիկ մեծապես պախարակվել են թե՛ մեր հաղիսների, թե՛ ավանդապատումների մեջ:

## Բեկոնի խոսքը

Մի շատ հետաքրքիր ու գեղեցիկ խոսք կա Բեկոնից: Ըստ նրա՝ գիտնականները երեքն են՝ առաջինը նրանք, ովքեր նման են մրջյունների: Սրանք անընդհատ դրսից հատիկներ են հավաքում հետո անդադար՝ դիզում: Այս գիտնականների ուղեղներն ասես շտեմարաններ են, որոնք իրականում նմանում են երաժշտական կենտրոնների, որոնք անվերջ ձայնագրում են բոլոր լսած խոսքերն ու ձայները, այնուհետև ցանկացած պահին, վերարտադրում են իրենց մտապահածը: Երկրորդ խումբը՝ շերամների պես են: Նրանք անվերջ իրենց ներսից հանում են ինքնաստեղծ հյութն ու ստեղծում իրենց աշխարհը: Դրանք դեռևս գիտնականներ չեն, քանի որ դրսից ոչ մի բան չեն ստանում, այլ անվերջ դեգերում են իրենց մտքերի ու պատրանքների աշխարհում, և ցավոք, մի օր էլ խեղդվում են իրենց իսկ կերտած բոժոժի մեջ: Իսկ երրորդ խումբը, իրական գիտնականներն են: Սրանք մեղուների պես են՝ դրսից քաղում են ծաղիկների հյութը, այն մշակում, ապա մեղր են ստեղծում:

Հարկ է նշել, որ այս բնատուր և ձեռքբերովի բանականության թեման, ուղղակի հենց այն է, ինչը նշված է նաև մեր մանրապատումի մեջ: Եթե մարդն ունակ չէ բնատուր ունակություններին կցել դրսից ձեռք բերածը, ապա նա բնավ չի կարող գիրտության ջատագով համարվել, քանի որ նա պիտի կարողանա դրսի աշխարհից ստացած տեղեկությունն ու գիտելիքը շաղախել իրար, միահյուսել իր վերլուծող մտքի շերտերում և արդյունքում ստանալ այն, ինչը «իրական գիտություն» է կոչվում:

Այնուհետև, վերոհիշյալ մանրապատումի մեջ Իմամն ավելացնում է՝ «Հոշամ բանականությունն անհրաժեշտ է շաղկապել գիտությանը», Դուրանն էլ իր հետևյալ այաթի մեջ է նշում. «Սրանք օրինակներ են, որ մենք բերում ենք մարդկանց համար և այն չեն ըմբռնում բացի խելամիտներից»<sup>13</sup>: Պարզ է նաև այն, որ ներկա պահին նույնպես, երբ մենք առաջադրում ենք սույն պատմական օրինակները, մեզ կարող են հասկանալ միայն իմաստուն մարդիկ:

Այս ամենը մի անգամ ևս հավաստում է այն, որ մարդն իր հոգու խորքում պետք է լինի գիտակից, և ընկալի հումքը՝ գիտելիքների տեսքով, այնուհետև ըստ իր տրամաբանության ու խելքի այդ բոլորը ուսումնասիրի, վերլուծի և ի վերջո հասնի որևէ եզրահանգման: Եթե մենք ունենանք մինչև-իսկ Ավիցեննայի հզոր ու եզակի իմաստությունը, և

13- Դուրան, 29: 43:



հետևելով Ղուրանի խոսքերին, իմանանք նաև այն, որ պատմությունը կյանքի լավագույն դասն է, ապա մինչև տեղյակ չլինենք պատմությանը, ոչ մեր խելքը, ոչ էլ բանականությունը չեն կարող մեզ օգնել:

Կամ, եթե մեզ ասեն, որ ամբողջ արարչական համակարգը Աստծու խոսքն ու նրա նշաններն են: Եթե նույնիսկ մեր խելքը լինի ամենագիտակն ու ամենակարողը, քանի որ մենք նշված կառույցի ու այն ստեղծող տարրերին ընդհանրապես անտեղյակ ենք, ապա պարզ է, որ անկարող կլինենք հասկանալ ու ընկալել Աստծու խոսքն ու նրա բառերը: Հարկավոր է գիտությամբ այն յուրացնել, ապա բանականությամբ՝ հասկանալ:

### Ընդօրինակման խնդիրը

Ղուրանում ասվում է. «Հետևեք նրան, ինչը Աստված է իջեցրել»: Կասեն. «Ոչ, մենք հետևում են նրան, ինչը որ մեր հայրերն են ընդունել: Արդյոք, եթե նրանց հայրերը ոչինչ չէին գիտակցում և չառաջնորդվեցին, դարձյալ նրանց կհետևեն»<sup>14</sup>:

Բազմիցս լսել եք ընդօրինակման խնդրի մասին: Ղուրանը խիստ պայքար է մղել ընդօրինակման, հատկապես, այսպես կոչված՝ ավանդապաշտության դեմ, որից ելնելով, մարդիկ անհապաղ ընդունում և հետևում են այն բոլորին, ինչը զօլիս է անցյալից: Կոպիտ ասած՝ ոչխարի պես, կուրորեն հետևում են նախնիներին, միայն այն պարզ պատճառով, որ դրանք պատկանում են նրանց և ունեն երևելի հին անցյալ:

Այս խնդիրը բավականաչափ ուսումնասիրվել է: Ես հանգել եմ այն համոզմանը, որ Աստծո յուրաքանչյուր մարգարե ունեցել և մշակել է ուրույն ուղի, ինչպես նաև վարվելակերպ, որի վրա հիմնվելով էլ առաջնորդել է իր ցեղին: Սակայն գոյություն ունեն երկու-երեք թեմաներ, որոնք արժարժվել են համարյա բոլորի կողմից, ընդորում դրանցից մի քանիսը եղել են դրական երևույթներ, իսկ մի քանիսը՝ բացասական: Օրինակ՝ միաստվածության թեման: Այն դրական հարցերից է, որ շոշափվել է համարյա բոլոր մարգարեների կողմից: Սակայն կան նաև հարցեր, որոնց հետ առնչվել են բոլոր ազգերն ու ժողովուրդները: Օրինակ այն, որ ժողովուրդը, կուրորեն հիմնվելով նախնիներից ժառանգած համոզմունքներին և նախապաշարմունքներին, միանշանակ մերժել է տվյալ մարգարեին՝ ասելով, թե. «մենք չենք ընդունում քո խոսքը, քանի որ դա նոր է մեզ համար: Մեր հայրերն ու պապերը ընթացել են կյանքի այլ ուղիով, որն անցնում ենք այժմ՝ նաև մենք»:

Այս նորի անհապաղ մերժման խնդիրը նույնպես բանականությանը հակառակ երևույթներից մեկն է: Ղուրանը ցանկանում է, որ մարդն իր բանականությամբ և իր առողջ տրամաբանությամբ ընտրի կյանքի ուղին: Այստեղից ակնհայտ է դառնում նաև Ղուրանի խիստ դիմակայումն ու պայքարը ավանդապաշտության, ինչպես նաև նախապաշարմունքներից կառչած լինելու դեմ, որը պարզապես բխում է այն պարզ հանգամանքից, որ Ղուրանը, ոչ միայն կողմ է, այլև խիստ պաշտպանում է մարդկային առողջ բանականությունը:

14- Ղուրան, 2: 170:

**Մեծամասնությանը հետևելու հարցը**

Մյուս հարցը զանգվածի թեման է: Ինչնպես որ մարդը կուրորեն հետևում է իր նախնիներին, այնպես էլ նմանակում կամ հարմարվում է իր հասարակությանը: Համաձայն պարսկական թևավոր խոսքի՝ «Եթե չես ցանկանում խայտառակ լինել, ապա նմանվիր հասարակությանը»: Սակայն, եթե հասարակությունն արդեն իսկ խայտառակ է, ապա այս դեպքում, նրան նմանվելն առավել մեծ խայտառակություն է, չնայած, որ մարդ արարածը բնագոյաբար հակված է նմանվել ու ընդօրինակել բազմությանը:

Հետաքրքիրն այն է, որ սույն խնդրին հանդիպում ենք ոչ միայն հասարակ մարդկանց, այլև մտավորական խավի ներկայացուցիչների մոտ: Կան մտավորականներ, որոնք ընկալում են խնդրի էությունը, սակայն չեն համարձակվում այն բարձրաձայն արտահայտել, այլ փնտրում են իրենց ժամանակակից և համակարծիք այլ մտավորականների, որոնք նույնպես արծարծել կամ գոնե հակված են եղել նույն կարծիքին: Սակավաթիվ են այն մտավորականները, որոնք իրենց առաջադրած կարծիքի մեջ միայնակ մնալով, դարձյալ համարձակվում են իրենց նախընտրած ուղիում մնալ հաստատուն ու անվարան: Ավելին, բարձրաձայն արտահայտել իրենց կարծիքն ու տեսակետը, չնայած, նրանք երբեմն միայնակ մնալու մտքից սարսափելով՝ լռում են:

Այլ բնագավառներում ևս տիրում է նույնանման իրավիճակ: Չնայած այժմ մոդա է դարձել այսպես կոչված՝ «միահեծանությունը», որը գալիս է արևմուտքի ժողովրդից: Այս նոր երևույթը ևս ծայրահեղության է հասնում այնքանով, որ ցանկացած մարդ փորձում է ներկայացնել ինքնատիպ մի կարծիք, որպեսզի համարվի՝ նորարար:

Ինչպես նկատում ենք, այս երևույթը նախորդ խնդրի ուղղակի հակառակ բևեռն է: Անցյալում, մտավորականները մի նոր խոսք կամ միտք արտահայտելուց կաշկանդվելով, փորձում էին գտնել համակիրների մի խումբ, և կարծես թե նրանց շղարշի ներքո թաքնվելով՝ ներկայացնում իրենց խոսքը: Անգամ Ավիցեննան է խոստովանում, որ երբ ցանկացել է նոր բան ասել, վախենալով այն մտքից, որ կարող է իրեն չլսեն կամ միանշանակ մերժեն, դրանք շարադրել է Արիստոտելի անունից: Կամ, նույնիսկ Մուլա Սադրան, որ կարծես միշտ փորձում է հիմնվելով նախնիների խոսքերի վրա, մեկնաբանել ու արդարացնել իր մտքերը: (Այն ժամանակ մոդա էր խմբին՝ հասարակությանը հետևելը, իսկ այժմ՝ ոչ): Այն, ինչն արդեն ասվել է այլոց կողմից, դա կհամարվի ընդօրինակում և կարծեգրկվի:

Ամեն դեպքում, համաձայն Ղուրանի, բազմությունն ու մեծամասնությունը չեն կարող չափանիշ հանդիսանալ:

Այս կապակցությամբ Իմամ Սադեդը նշում է. «Ղուրանը պարսավում է բազմությանը հետևելը»: Երբ այնտեղ ասվում է՝ **«Եվ եթե երկրի վրա գտնվողներից շատերին հնազանդվես՝ քեզ կշեղեն Աստծու ճանապարհից, քանզի նրանք միայն կարծեցյալին են հետևում և մոտավորին, և սին գուշակություններ են անում»**<sup>15</sup>: Կնշանակի, թե բազմությանը հետևելը

15-Ղուրան, 6: 116:

կարող է քեզ շեղել, քանի որ բնականաբար, ոչ բոլոր մարդիկ են առաջնորդվում առողջ բանականությամբ, այլ նրանց ուղղորդում են իրենց մտավոր կարծիքներն ու սին գուշակությունները: Նրանք հետևում են իրենց մտացածին մտքերին ու պատրանքներին: Մարդկանց մեծամասնությունն այսպիսին է: Այսպիսով՝ չարժե հավատալ ու վստահել նրանց: Սա ևս մտքի ինքնուրույնության մի այլ օրինակ էր, որից ելնելով, կարելի է մի անգամ ևս համոզվել, որ մարդու կյանքի միակ չափանիշը՝ միանշանակ նրա խելքն է:

### Անտարբերություն մարդկանց դատողության նկատմամբ

Անցյալ զրույցի ավարտին, Իմամ Սադեդն ասաց. «Չոչան, մարդկանց խոսքին ու արտահայտած կարծիքներին ուշադրություն մի դարձրու, այլ հետևիր քո ուրույն խելքին ու տրամաբանությանը: Չոչան, եթե անգամ մի օր քո ձեռքում ընկույզ ունենաս, և մի անցորդ ասի. «Ի՞նչ գեղեցիկ գոհար ունես, սրա նմանը ոչ մի տեղ չես գտնի», դու մի հավատա, քանի որ ինքդ գիտես, որ դա ընդամենը ընկույզ է: Իսկ երբ ձեռքումդ գոհար ունենաս ու ճամփին ինչ-որ մեկն ասի. «Ո՞րտեղից քեզ այս ընկույզը», դարձյալ մի լսիր նրան, ավելին՝ եթե անգամ բոլոր մարդիկ ձեռքիդ գոհարը ընկույզ համարեն, դարձյալ մի հավատա ու ապավինիր քո խելքին ու տրամաբանությանը:

Այսպիսով՝ ավարտում ենք խելքի ու բանականության թեման: Հաջորդ քննարկման ընթացքում կանդրադառնանք մարդկային կամքին, որը մեր վարած զրույցի տրամաբանական շարունակությունն է լինելու:

Մարդու խելքի ու իմաստության թեման և՛ Ղուրանում, և՛ Ավանդություններում բավական ծավալուն արտահայտված թեմա է, սակայն կարծում ենք այսքանն էլ բավական էր հասկանալու համար, որ իսլամը ոչ թե ճնշում և այպանում է մարդկային իմացությունը, այլև սատարում է խելքի զարգացումն ու վարժանքը:



**ՄԱՍ II**  
*Բանականության Պատմությունը՝  
ՄաՀմեդականների Դիտանկյունից*

## Հանուն Ողորմած Է-Բարեգու-թե Աստուծո

Նախորդ քննարկման ընթացքում խոսեցինք մարդու մտավոր կարողությունների ու ունակությունների դաստիարակման ու նրանց բարգավաճման մասին: Պարզեցինք այն, որ բանականությունն ու միտքը մարդկային առողջ խելքի ծնունդ են, և իսլամը հակված է մարդկային խելքին ապավինելուն ու նրանից օժանդակություն ստանալուն: Նա իր հավատացյալներին չի հորդորում կուրորեն ու անմտորեն հետևել կրոնի ուսմունքներին, նրանց չի ստիպում դադարել մտածելուց ու տրամաբանելուց և չի ասում, թե բանականությունն ու մարդկային վերլուծող միտքը նրան ոչ մի տեղ չեն հասցնի: Սակայն, ըստ քրիստոնեական գաղափարների, հավատը մարդկային խելքից ու բանականությունից դուրս մի ֆենոմեն է, և կատարյալ հավատացյալ լինելու համար, անհրաժեշտաբար պետք է ապավինել հոգուն, և բացարձակ նվիրվել ու հանձնվել կրոնի գաղափարախոսությանը:

Անցյալ դասերի ընթացքում, ինժեներ Բազարգանը մեզ զգուշացրեց, որ հիշյալ թեմայի շուրջ հարկավոր չէ սրանից ավելի ծավալվել: Սակայն, այս խնդրի հետ կապված գոյություն ունի մի այլ հարց ևս, որին նույնպես արժե անդրադառնալ: Դա այն է, որ մենք որոշ մուսուլմաններից լսում ենք մեր արծարծած խնդրի հակառակը: Իբր Ղուրանում մեծարվում, անգամ սրբացվում է մարդու միտքը, սակայն խնդիրների տրամաբանական վերլուծության ժամանակ արհամարվում են նրա բանականությունն ու

գիտելիքները:

Մեր թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր գրականության մեջ հաճախ են անդրադարձել մարդու մտքի արհամարհման խնդրին, բացի դրանից իսլամի պատմության ընթացքում պատահել են մարդու միտքն ու բանականությունը հերքող հարցադրումներ: Դրանցից մեկը էշաերենների և մոթազելիների ճարտասանական արվեստի խնդիրն էր, հաջորդը՝ իսլամական աստվածաբանական տեսության (Աբուհանիֆայի տեսության և նրան հակառակողների), իսկ երրորդը՝ միստիցիզմի և սուֆիզմի խնդիրը: Այս երեք նշված հարցերն էլ հատուկ ուշադրության են արժանի և հարկ ենք համարում առավել մանրամասն քննարկել դրանք: Այստեղ մենք իրոք հանդիպում ենք երեք ուղղությունների, որոնցից յուրաքանչյուրի նկատմամբ էլ մարդկային բանականության դեմ յուրովի դիրքորոշում ենք նկատում՝ անկախ այն բանից, թե՛ դրանք զանազան ուղղություններ են, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր դրսևտրման և հակադրման յուրահատուկ ուղիները: Կան նաև այլ օրինակներ, երբ որևէ մտավորականի կողմից ասված խոսքն ու արտահայտությունը թևավոր խոսքի նշանակություն է ձեռք բերում: Նման արտահայտությունները մեծ ազդեցություն են թողնում ժողովրդի դաստիարակության և նրանց տրամադրությունների ձևավորման վրա: Ուստի, նախ խոսենք այլոց միջոցով ստեղծված թևավոր խոսքերի մասին, այնուհետև կանդրադառնանք վերը նշված երեք ուղղություններին:

### **Մարդու բանականության նսեմացումը ժողովրդական ասույթներում և գրականության մեջ**

Ժողովրդական ասույթների մեջ՝ մարդու խելքն ու գիտակցությունը երբեմն ներկայացվում են որպես խիստ քննադատման արժանի երևույթներ, որոնք ի վերջո դառնում են մարդու թշնամին, քանի որ խլում են նրանից խաղաղ ու հանգիստ կյանքը: Ինչո՞ւ: Մի շատ պարզ պատճառով: Եթե մարդ զուրկ լինի մտածելու ունակությունից, բնականաբար, ոչինչ չի զգա և վշտացնող և տհաճ երևույթներն էլ չի ընկալի: Պարզ է, որ երբ նա չզգա և չընկալի իրեն ցավ պատճառող երևույթները, նրան անհասկանալի և խորթ կլինեն նաև վիշտն ու ցավը: Մեզ քաջ հայտնի բանաստեղծության տողերն ասում են.

**Իմ կյանքի մեծ թշնամիներն են իմ խելքն ու միտքը,  
Երևեկ թե՛ բաց չլինեին իմ աչքն ու ականջը:**

Մենք՝ ինքներս էլ հաճախ ենք արտասանում հետևյալ խոսքերը. «Երանի սրան կամ նրան, որ շատ բան չեն հասկանումե, կամ «Երանի քեզ, ինչքան հանգիստ ես, որ չես հասկանում: Դժբախտ եմ ես, որ հասկանում եմ ու տառապումե: Ֆառուխի Յազդին՝ վերջին տասնամյակների հեղափոխական բանաստեղծն ասում է,

**Իմ աչքերը տեսան այն, ինչ չպետք է տեսնեին,**

**Աստված է վկա, որ իմ աչքն է իմ դահիճը:**

Աեր գրականության մեջ բազմաթիվ են նման օրինակները, բայց արդյո՞ք տրամաբանական է հիշյալ արտահայտությունը, թե՞ ոչ:

Եթե լրջորեն մեկնաբանենք այս հարցը, կտեսնենք, որ դա անտրամաբանական և խիստ սխալ մտածելակերպ է: Շատ հաճախ նրանք, ովքեր արտահայտել են նման կարծիքներ, եղել են մտավորականներ, որոնք արտահայտելով սույն մտքերն ու կարծիքները, ենթատեքստում արտացոլել են այլ հիմնական խորհուրդներ ու մտքեր: Օրինակ՝ վերը նշված բեյթը:

**Իմ կյանքի մեծ թշնամիներն են իմ խելքն ու միտքը,  
Երևել թե բաց չլինեին իմ աչքն ու ականջը:**

Դա բնավ էլ չի նշանակում, թե իրոք լավ կլիներ, որ մարդը ոչ մի բան չհասկանար: Սա ուղղակի այլաբանություն է, որի միջոցով հեղինակն իր դժգոհությունն է հայտնում ժամանակի հոռի երևույթների կապակցությամբ և արտահայտնում իր զգացած ու ապրած ցավը: Այսինքն, սա ոչ թե մարդու խելքի ու բանականության պախարակում է, այլ ,դարդերիե, անախորժ դրության առկայության փաստ՝ գրական մեկնաբանությամբ և արտահայտչաձևով: Նույնն է երբ Ֆառուխին գրում է.

**Իմ աչքերը տեսան այն, ինչ չպետք է տեսնեին,  
Աստված է վկա, որ իմ աչքն է իմ դահիճը:**

Սա, ակնարկելով սոցիալական հարցերը, արտահայտում է նաև այն էական խնդիրը, որ հասարակության մեջ գոյություն ունեն արատներ ու թերություններ, որոնք ի վերջո հենց իր «դահիճն» են դառնալու: Այդպես էլ պատահեց: Ի վերջո նրան սպանեցին: Չնայած, եթե Ֆառուխին հարցնեին, թե կուզե՞ր լինել անզգա և անտարբեր, անկասկած նա կպատասխաներ. «ոչ»:

Ցանկության դեպքում կարելի է հակաճառել խելքի գոյության տրամաբանությանը: Մարդու խելքի առկայությունը՝ ցավի գոյության հիմնական պատճառն է: Իսկ արդյո՞ք ցավը լավ է, թե՞ վատ: Բնական է, որ ցավը լավ բան չէ, հետևաբար, այն ինչ ծնում է ցավ մեզ անհանգստություն է պատճառում:

Երբ ասում ենք, թե ցավը վատ երևույթ է, սրա շուրջը նույնպես կարելի է փիլիսոփայել: Ցավը, դա իրազեկման լավագույն միջոցն է: Ցավը վատ է, քանի որ այն ծնող երևույթը չպետք է գոյություն ունենա: Այսինքն, երբ ասում ենք թե լավ է, որ ցավ չկա, կնշանակի, որ լավ կլիներ, որ նրա ակունքները գոյություն չունենային: Կրկնենք, որ ցավը՝ մարդու տեղեկատվության և իրազեկման լավագույն միջոցներից է: Երբ ցավում է մարմնի այս կամ այն մասը, դա արդեն խոսում է մարմնի մեջ առկա ինչ-որ հիվանդության կամ թերության մասին, ինչի մասին բնությունը ցավի միջոցով իրազեկում է տվյալ անձին: Դա նման է ավտոմեքենաների մեջ

վարորդների դիմաց տեղադրված սարքին, որի կարմիր լույսի վառվելը ազդարարում է մեքենայի յուղի սպառման մասին, և իրազեկում վարորդին, որ շուտով մեքենայի շարժիչը կայրվի: Փաստորեն, կարմիր լույսի վառվելը չենք կարող բացասական երևույթ համարել, քանի որ դա մեզ հուշում է մեքենայի տվյալ մասում առաջացած թերության մասին:

Եթե չլիներ ցավի զգացումը, մարդ չէր զգա արատի կամ հիվանդության գոյացման կամ առկայության մասին և չէր էլ բուժի այն: Ուրեմն, «ցավն» ինքնին վատ չէ, վատ է այն, որ կան վատ երևույթներ, որոնք ծնել են այդ ցավը: Ցավն ասես մտրակահարում է մարդուն, որպեսզի նա գնա բուժման: Ամենադաժան հիվանդությունները նրանք են, որոնք ոչ մի ցավ չունեն: Դրանք գալիս են առանց նախազգուշացման, այն ուռուցքների պես, որոնք ի հայտ են գալիս, երբ արդեն՝ շատ ուշ է: Մակայն, եթե հնարավոր լինի դրանք բացահայտել դեռևս սկզբնական շրջանում, կամ նրա գոյացման առաջին իսկ պահերից, հնարավոր կլինի դրանց դեմն առնել, անգամ՝ ոչնչացնել:

Մենք չենք կարող պախարակել մարդկային խելքն ու զգացողական համակարգը միայն այն պարզ պատճառով, որ դրանք մարդու մոտ ցավն զգացնելու հիմնական տարրերն են, քանի որ դրանք մարդուն տեղեկացնում և նախազգուշացնում են մոտալուտ վտանգի կամ բարդության մասին: Այս կապակցությամբ մեր գրականության մեջ կա մի գեղեցիկ թևավոր խոսք, որն ըստ էության մեծարում ու գնահատում է մարդու վիշտն ու ցավը.

«Տեր, ինձ վիշտը ճանաչող մի կուրծք պարզեիր»: Արդեն պարզ է, թե նրանք ինչու են մեծարել և գնահատականի արժանացրել ցավն ու դարդը: Նրանք պարզապես հասկացել են, որ ցավը՝ դա արթնացում և նախազգուշացում է, այն խթանը, որը ստիպում է գտնել ցավի պատճառները և չեզոքացնել դրանք: Իսկ ցավի զգացողություն չունենալը բացարձակ անտարբերություն ու անզգայություն է: Այս կապակցությամբ գեղեցիկ են հնչում Մուլավիի հիանալի տողերը.

**Այն ողբն ու տառապանքը, որ հիվանդինն է,  
Հիվանդության պահին (նա) իր ողջ էությանը արթնության մեջ է:**

Հիվանդին տանջող ցավերը, նրան տառապանք պատճառող բոլոր անախորժ զգացողությունները, տեղեկացնում են իր հիվանդության գոյության մասին, ուստի հեղինակը շարունակում է.

**Ուրեմն իմացի՛ր այս խոսքերը իմաստասեր տղա,  
Ով տանջվում է ցավից, նա տեղյակ է իր հիվանդությանը:**

Ցավով տառապողները զգացել են նաև իրականությունը: Նա, ով չի զգում ոչ մի ցավ, նա պարզապես անզգա առարկա է միայն:

**Ամենաարթունը ամենաշատ ցավ ունեցողն է,  
Ամենատեղյակ մարդու դեմքն ավելի գունատ է:**



Ասվածի էությունն առավել դյուրին ընկալելու համար բավական է նայել հենց հասարակության մեջ առկա սոցիալական խնդիրներին: Հասարակության մեջ կան այնպիսի անտարբեր մարդիկ, որոնք ապրում և հետաքրքրվում են միայն իրենցով և բնավ չեն էլ մտահոգվում իրենց քթի տակ կատարվող դեպքերով: Փաստորեն, նրանք ապրում են հանուն իրենց և հանուն իրենց բարեկեցիկ ու խաղաղ կյանքի: Պարսկական թևավոր խոսքի համաձայն, «Նրանց միակ նպատակն այն է, որ իրենց ավանակն անցնի կամրջից, իսկ երբ նա անցավ, նրանց համար այլևս հոգ չէ, թե իրենցից հետո կամուրջը կքանդվի: Կարևորը՝ նրանց ավանակն է, որն արդեն կամրջի մյուս կողմում է»: Նմանօրինակ մարդկանց հակա-ռակ բևեռում են նրանք, որոնց համար անկարևոր է իրենց սեփական ավանակը:

Ցավի, այն զգալու, կամ այսպես ասած՝ կարեկցանքի մեկնաբանումն արծարծվել է նույնիսկ Իմամ Ալիի՝ Օսման էբնե Հանիֆին հղած մի նամակում: «Այս ցավն իսկ բավական է մի զգայուն մարդու համար, երբ նա գիշերը քնում է կուշտ որովայնով՝ գիտակցելով, որ իր շրջապատում կան բազմաթիվ անոթի ստամոքսներ»: Իրավամբ՝

**Ամենաարթունը ամենաշատ ցավ ունեցողն է,  
Ամենատեղյակ մարդու դեմքն՝ ամենագունատն է:**

Պարզապես, սա հուշում է այն մասին, որ կան կուշտ մարդիկ, որոնք սակայն գիտակցում են բազմաթիվ այլ անոթի մարդկանց գոյության մասին և՛ տառապում: Իմամ Ալիի բառերով ասած. «Ամենաարթունը ամենաշատ ցավ ունեցողն է»<sup>16</sup>: Ասել է, թե. «Նա Քուֆեում կուշտ է, սակայն գիտի, որ Հեջազում՝ նրանից 400 մղոն հեռավորության վրա, կա մի անոթի մարդ, որի համար նա ևս խիստ կցավի ու կտառապի»:

**Կարեկցանքը փառաբանելի՞ է, թե՞ պարսավելի**

Այժմ հարցս ձեզ են ուղղում. «Լավ է արդյո՞ք ուրիշների ցավով տառապելն ու բոլորին կարեկցելը, թե՞ լավն անտարբերությունն ու անզգամությունն է, երբ նույնիսկ դրացուդ էլ քթիդ տակ մորթեն, անտարբերությամբ նայես, ու սառնասրտորեն անցնես կողքից»:

Մենք առաջին խմբին կարող ենք լիարժեք մարդիկ համարել և ոչ երբեք՝ երկրորդին, քանի որ այդ զգոնությունն ու այլոց կարեկցելը ոչ ցավ է, ոչ հիվանդություն, և ոչ էլ՝ արատ: Ավելին, դա առավելություն է, լավագույն ապացույցը նրանց միջև առկա կապակցվածության ու միասնության, և այն խորն ու անհերքելի զգացմունքի, որ նրանք իրենց մի հսկայական մարմնի՝ փոքրիկ անդամներն են համարում, որոնցից յուրաքանչյուրին պատահած ամենաչնչին վիշտն ու անխորժ երևույթը իրենց նույնպես ցավ ու տառապանք է պատճառում:

Մեզ հայտնի են Մոհամադ մարգարեի հրաշալի խոսքերը, որոնք մեծ բանաստեղծ Սաադիի գրչի տակ բանաստեղծության են վերածվել. «Բո-

16- Նահջ-օլ-Քալադե, 45-րդ նամակ:

լոր հավատացյալներն ասես մի մարմնի անդամներ լինեն, եթե նրանցից մեկին ինչ-որ բան պատահի, ապա՝ ոչ մեկն իրեն հանգիստ ու լավ չի զգա»<sup>17</sup> : Օրինակ, երբ ցավում է ձեր ատամը, մարմնի այլ մասերը էլ չեն կարող անհոգ մնալ, հանգիստ են ջել ու հանգստանալ: Նրանք չեն կարող ասել. «ոչինչ, թող նա այնքան ցավի, մինչև հանգստանա, իսկ ես ինչո՞ւ խափանեմ հանգիստ քունս ու անդորրս»: Կամ, օրինակ, ձեռքն ասի. «ես ի՞նչ անեմ, թող նա տառապի», աչքն ասի. «ես ինչո՞ւ տառապեմ»: Եվ այսպես շարունակ: Մակայն, իրականում, երբ ցավում է մարմնի ամենափոքր մասն անգամ, մնացած բոլոր անդամների հանգիստն ու անդորրը նույնպես խանգարվում է: Բոլորը բնազդաբար ծայնակցում են նրան և՛ ջերմությամբ և՛ հիվանդությամբ: Մարմնի ամենափոքրիկ մասնիկի ցավից երբեմն ամբողջ մարմինն է հիվանդանում, կամ՝ ջերմում:

Հավատացյալներն էլ են այդպես: Ցավակցելը՝ դա զգայնություն է, կարեկցանք, ու բնականաբար չի կարող արատ համարվել: Դա փաստորեն կատարյալ մարդկանց բնական հատկություններից է:

Ուրեմն, այն տրամաբանությունը, ըստ որի, եթե մեկն իրոք հակված է անզգայության ու անտարբերության և պախարակում է մարդկային խելքն ու զգացմունքները միայն այն պարզ պատճառով, որ դրանք մարդուն պարզևում են զգալու և զգացվելու ունակություն, որոնք էլ իրականում ցավազգացողության ու կարեկցանքի աղբյուրն են հանդիսանում, չարաչար սխալվում է: Ավելին՝ նման մեկնաբանությունը հակասում է հումանիստական դրույթներին, և բնականաբար, իսլամը նույնպես դեմ է դրան: Ընդհակառակը. իսլամը մեծարում ու փառաբանում է խղճմտանքն ու կարեկցությունը:

Մակայն, եթե մարդը ցանկանում է կողմնակի խոսքերով ու ակնարկներով ընթերցողին իրազեկել դրսում տիրող այս կամ այն արատավոր ու անհաճո իրողության մասին, ապա դա ընդունելի տարբերակ է: Մենք ևս ասում ենք. «Երնեկ կուրանայի ու չտեսնեի», իսկ իրականում, եթե մի արկածի հետևանքով նույնիսկ կուրանանք, ոչ միայն դրսի աշխարհում ոչ մի բան չենք փոխի, այլև մեր կուրանալու ցավն էլ պիտի ավելանա դրանց վրա ու կրկնակիորեն բարդացնի ու անտանելի դարձնի, առանց այդ էլ դրամատիկ իրավիճակը: Բոլորիս քաջ հայտնի է, որ մեր նպատակը մեկն է. չտեսնել անցանկալին:

Սա մի հետադարձ ակնարկ էր մեր գրականությանը, հատկապես պոեզիային, որը քննարկեցինք և ամփոփեցինք:

### **Բանականության և գիտության նսեմացումը և հացի խնդիրը**

Հիշյալ խնդիրների վերաբերյալ կա նաև այլ մոտեցում: Երբ լրջորեն քննում ենք այն, դա թվում է առավել անազնիվ մի վարվելակերպ, երբ ոմանք մարդկային բանականությունն ու գիտությունը օգտագործում են որպես վաստակելու և հարստանալու միջոց և այն ծառայեցնում են միայն իրենց շահադիտական նպատակներին: Կան դեպքեր, երբ նույնիսկ շատ իմաստուն ու կիրթ մարդիկ, տեսնելով անգրագետ և իրենցից ավե-

17- Ձամե-օլ-սադիր, 3 և, էջ 155:

լի ցածր մարդկանց բարեկեցիկ կյանքն ու ապրուստը, սկսում են հայրո-  
յել ու արհամարհել գիտությունն ու իմացությունը, ասելով՝ «ինչո՞ւ ձեռք  
բերեցի գիտությունը, եթե չպիտի կարողանայի ապրել այս անգրագետ-  
ների պես հանգիստ և նյութապես ապահով»: Այս կապակցությամբ ևս  
բազմաթիվ են մեր գրականության մեջ առկա մեկնաբանությունները: Տե-  
ղին է հիշել Օրբելոե Ջաքանիի արտահայտած հայտնի խոսքերը, որոնք  
իրականում համընկնում են նաև իր ապրած կյանքին ու ժամանակին.

**Ով տղա, հնարավորինս մի ձգտիր գիտության,  
Քանզի մի օրվա օրավարձդ էլ չես վաստակի:  
Գնա ծաղրածու դարձիր և սազանդարություն արա,  
Որ օգնության կանչդ թաքցնես մեծից ու փոքրից:**

Այս խոսքերն անկասկած հեղինակի քննադատական հայացքների ար-  
տացույցումն են իր ժամանակաշրջանի ու իր ապրած օրերի նկատմամբ:  
Նաև նրա դժգոհության վառ ապացույցը՝ իր կյանքից ու սոցիալ-քաղա-  
քական դրությունից: Դժվար չէ կռահել նրա մտքերի խորքն ու ենթա-  
տեքստը՝ դժգոհությունն սոցիալական դաժան ու անբարենպաստ իրավի-  
ճակից, երբ մի հասարակ սազանդար առավել ճոխ էր վաստակում իր  
կատարած ծառայության համախ, քան գիտուն մարդը: Փաստորեն հա-  
սարակ ծառայողն իր կատարած մի ժամ աշխատանքի դիմաց վաստա-  
կում էր այնքան, ինչքան՝ այս դեպքում մեր գիտուն հեղինակը մի ամ-  
բողջ ամսվա ընթացքում: Եվ ի վերջո, իմաստասեր գիտնականը կյանքի  
վերջին տարիներին սկսեց հումորով ու ծաղրանքով խոսել կյանքի ու  
դաժան իրավիճակի մասին՝ ծաղր ու ծանակի ենթարկելով ժամանա-  
կաշրջանն ու իրավիճակը:

Մենք չենք կարծում, թե ճիշտ մոտեցում է, երբ գիտությունը փորձում  
են գնահատել ու արժևորել՝ նրանից ստացված նյութական շահերի հի-  
ման վրա: Այլապես չարաչար վարկաբեկած կլինենք խելքն ու գիտակ-  
ցությունը, ուսումն ու կրթությունը:

Արաբական մի բանաստեղծություն կա, որն ըստ երևույթին պատկա-  
նում է Աբու Ալա Մաարիին կամ էլ էբն-օլ-Ռավանդիին, որոնք խլամի  
պատմության սկզբնական շրջաններից «հավատուրացներ» հռչակվե-  
ցին, այնտեղ ասվում է. «Որքան խելացի ու կիրթ մարդկանց ենք հանդի-  
պում, որոնք մոլորված են ու դժբախտ ու չգիտեն կյանքի ո՞ր ճամփով  
գնան: Տեսնում ենք նաև անխելք ու հիմար մարդկանց, որոնք ապրում են  
առատության ու բացարձակ փառքի մեջ: Սա այն դեպքն է, որ կարող է  
ուղղափառ հավատացյալին կամ խոհեն մտավորականին ուրացության  
հասցնել»:

Այնուհանդերձ, այլ կերպ պետք է մեկնաբանել սույն հարցը, խորհելով  
այն մասին, որ ապրուստի միջոցներ վաստակելը չպետք է մարդուն  
նման ծայրահեղության տանի, ուստի պետք է գիտակցել, որ հարցի լու-  
ծումը ուրիշի ձեռքում է:

Մենք հաճախ ենք նման սխալ ու անստույգ տրամաբանության հանդի-  
պում, սակայն էականն այն է, որ համոզվենք, որ պետք չէ գիտու-թյունն

ու իմացությունը փորձել չափել նույն չափանիշներով:  
 Բննարկման այս թեման ևս սպառված է:

### **Բանականությունը՝ մոթագելիների և էշաերենների դիտանկյունից**

Այժմ խոսենք այն ուղղությունների մասին, որոնք ի վերջո ձևավորվեցին որպես որոշակի դպրոցներ: Նրանցից մեկը «աշարի», իսկ մյուսը՝ «մոթագելի» դպրոցներն էին, որոնք գիտակցության վերաբերյալ մահմեդական մոտեցմանը ամենից ուժգին հարվածներն ու վնասները հասցրին:

Լուսնային երկրորդ դարակեսից իսլամական աշխարհում կրոնական ուսմունքի ու քարոզչության ասպարեզում երկու հակամետ հոսանքներ առաջացան: Նրանցից առաջինները, համոզված էին, որ իսլամական ուսմունքն ու կրոնա-աստվածաբանական խնդիրներին կապված հանդերձյալ կյանքի, հրեշտակների և այլ հարցերի հետ, հնարավոր է ուսումնասիրել ու մեկնաբանել մարդկային առողջ խելքով ու բանականությամբ, քանի որ տրամաբանելու և երևույթները տարբերակելու վերջնական չափանիշը՝ մարդու խելքն է: Սրանք գալիս են իսլամի պատմության ընդերքից, որոնք հետագայում կոչվեցին՝ մոթագելիներ:

Իսկ նրանց հակառակ քննում կանգնած խումբը, որոնք նույնպես պատմությանը հայտնի մի դրվագի պատճառով կոչվեցին էշաերե, քարոզում էին հանձնվել Աստծուն ու խոնարհաբար հնազանդվել, հորդորելով, թե մարդկային խելքն առհասարակ իրավասու չէ միջամտելու և ճանաչելու կրոնական հիմնահարցերը:

### **Գիտակցված փառաբանումն ու պարսավանքը**

Վերոհիշյալ հակամետ ուղղությունների օրինաչափական հակասություններն էլ «Տրամաբանված փառաբանման կամ պարսավման» խնդրից ծնունդ առան: Մոթագելիները համոզված էին, որ իրերն իրենց էությամբ կամ ենթակա են փառաբանման, կամ՝ պարսավանքի, իսկ մարդկային խելքն ընդունակ է դա ընկալել, և դրա օգնությամբ վերծանել իսլամի ուսմունքն ու դաստիարակչական հիմնահարցերը, քանզի իսլամական ուսմունքը մարդկային բանականությունից դուրս գոյություն ունենալ չի կարող:

Նրանց հիմնական թևավոր խոսքն էլ արդարության ու բռնության մասին էր: Նրանք ասում էին. «Մարդկային խելքն ընկալում է արդարության փառաբանումը, հետևաբար՝ այն մեծարման է արժանի, որն ի վերուստ տրված հատկանիշ է, ոչ թե՝ պայմանական: Ոչ ոք արդարության փառաբանումը չի սահմանել այնպես, ինչպես որ ոչ ոք չի որոշել «չորս» թվի զույգ լինելը: Երբևէ չի եղել «չորս» թիվ, որը միևնույն ժամանակ և՛ զույգ լինի և՛ կենտ: Կամ հետագայում նրան վերագրեն զույգ լինելու հատկանիշ ու նա միանգամից դառնա՝ զույգ թիվ: Փաստ է, որ «չորս» թվի գոյության անհրաժեշտ տարրը նրա զույգ լինելն է կամ այն առհասարակ գոյություն չունի, կամ միանշանակ՝ զույգ է»:

Նրանք հակված էին այն տրամաբանությանը, որ արդարության փառաբանված ու չարի ատելի ու պարսավելի լինելն էլ այսպես է եղել ի սկզբանէ և ապացուցման կարիք չունի: Իսկ ինչ վերաբերում է մարդկային գործունեությանը, ապա. «այս գործն արդար է, ուստի միանշանակ՝ փառաբանվում է, և իսլամական ուսմունքն էլ խրախուսում ու սատարում է այն: Իսկ այն գործը չարիք է ու քանի որ չարը պարսավված է, հետևաբար՝ պախարակելի է: Ու քանի որ Աստված ևս պարսավում ու պախարակում է չարը, ուստի երևույթն ինքնին՝ մերժելի է ու ատելի»:

Սակայն էշաբրենները հակված էին այն համոզմանը, որ աշխարհում առկա գոյերը զուրկ են ի վերուստ տրված չարի ու բարու հատկությունից: Այդ է պատճառը, որ մարդկային խելքի միջամտությունը դրանք ընկալելու հարցում միանշանակ բացառեցին: Ըստ նրանց, չարն ու բարին, փառաբանվածն ու պարսավվածը, դրանք կրոնական հայեցողությամբ մեկնաբանված հարցեր են: Նշանակում է թե այն, ինչը Աստծու հրամանն է ու նրա առաջադրածը, դա լավն է ու փառաբանված, քանի որ նրա ուղղակի հրամանն է: Իսկ այն բոլորն, ինչ Աստված բացառել է ու արգելել, դարձյալ այն պարզ պատճառով, որ դա Նրա՝ Բարձրյալի հրամանն է՝ արգելված է ու պարսավելի:

Նրանք ասում էին. «Աստված հրամայել ու առաջադրել է այն, ինչը բարին է, ուստի դա միանշանակ լավ է մեծարված, ու այդ բարիքի միակ ապացույցն էլ հենց իր՝ Աստծո հրամանն է»: Իսկ սրանք ասում են. «Այն, ինչ Աստված է հրամայել, լավ է, նրա հրամանն էլ երևույթի բարության ապացույցն է: Երբ նշում ենք արարքների գեղեցկության մասին, նշանակում է թե դա ինքնին Աստծո կամքն ու հրամանն է»: Նույն դրույթն է կրկնվում նաև արարքների մերժման և արգելման դեպքում:

### Բանականության և կույր հնազանդության պայքարը

Այսպիսով, բանականությանը հարող և կույր հնազանդությանը հետևող խմբերը հայտնվեցին երկու հակառակ բևեռներում:

Այս երկու հակամետ ու իրարամերժ հոսանքների բախումն իսլամի աշխարհում իր գագաթնակետին հասավ: Բանի Օմայեի ժամանակաշրջանի վերջին տարիներից սկիզբ առած այս իրավիճակը Բանի Աբբասի խալիֆայության շրջանում, երբ ավելի ազատ էր մտքի ազատությունը, ծնեցին մի շարք ազատամիտ ու լուսավոր այրեր՝ հանձինս խալիֆ Նարունի, և հատկապես Մամունի, որոնք կազմակերպում էին վերլուծական ու քննական լսումներ: Մամունը հատկապես, (և նրա հաջորդ՝ Մոթասամը) իրեն համարելով իմաստուն ու գիտակից, տրամաբանությանն ու փիլիսոփայությանը քաջածանոթ մարդ, սկսեց պաշտպանել մոթազելիներին, չարաչար քննադատելով էշաբրենների դրույթները: Նա իր այս կողմնորոշման ու ցեղամետության պատճառով, հաղիսի մեծ վարպետ Ահմադե Գանբալի կողմից մտրակի հարվածների արժանացավ: Այստեղ էր, ահա, որ այսպես կոչված բանականության կողմնակիցները վերջնականապես հաղթեցին կուրորեն հնազանդվողներին: Սրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ այդ օրերի հաղիսասացների ու իսլամական աստվածա-

բանական իմաստասեր մտավորականների մեջ բացակայում էին խստապահանջ անձինք:

Եկան Մոթեվաքելի ժամանակները: Եւ բացարձակ ցեղամետ խալիֆներից էր, այլ կերպ ասած՝ երդվյալ ավանդապաշտ: «Սունի» անվանումով էլ, որ նշանակում էր «սուննաթի» (ավանդական), կոչում են նրանց, ովքեր կուրորեն հետևում էին ավանդություններին, այլ ոչ թե խելացի ու տրամաբանական խոհեմությանը: Սակայն, քանի որ նշված ավանդություններն առհասարակ արմատներով կապվում էին Մոհա-մադ մարգարեի անվան հետ, ուստի, նրա հետ կապված ավանդություններն էլ սրբանում էին: Այսպիսիվ, Մոթեվաքելը խիստ ավանդապաշտ դարձավ և սկսեց չարաչար ընդդիմանալ մոթազելիների բանականությանն ու տրամաբանությանը, մինչև-իսկ հրամայեց անխնա կոտորել նրանց: Սակայն, մեծարեց ու փառաբանեց Սիմադե Զանբալին, չնայած, նա անցյալում խիստ հարվածներ էր կրել ու բանտերում քայքայվել, սակայն այժմ, նրան ամենաբարձր պաշտոններին արժանացրեց: Պատմում են նույնիսկ նրա հուղարկավորության մասին, որին մասնակցում էր ավելի քան 800 հազար մարդ:

Մոթեվաքելին հաջորդող համարյա բոլոր խալիֆները պաշտպանեցին նրա բռնած դիրքորոշումն ու ուղին, և Մամունի հեղինակությունն իսլամական աշխարհում ընդմիշտ դատապարտվեց:

### «Սունի» բառը

«Սունիները», որոնց մասին այսօր այսքան խոսվում է, դրանք շիաների հակառակորդները չեն: Մեզանում տարածված է այն տեսակետը, թե սունիները նրանք են, ովքեր անմիջապես ընդունեցին Աբու Բաքրի խալիֆությունը, իսկ շիաները նրանք՝ ովքեր չընդունեցին ու մերժեցին նրան: Սակայն դա այդպես չէ: «Սունի» բառը, սկզբնական շրջանում ոչ թե շիաների դեմ ինչ-որ խումբ ստեղծելու համար ձևակերպվեց, այլ՝ մոթազելիներին հակառակելու: Այսինքն, երբ ասում էին այս կամ այն մուսուլմանը սունի է, դա նշանակում էր, որ նա մոթազելի չէ: Սակայն այսօր, նրանք երկուսն էլ՝ և՛ մոթազելիները, և՛ էջաերենները կոչվում են «սունիներ»:

Մեր Իմամների կենդանության և խալիֆայության ժամանակաշրջանում, շիաները առավել հակված էին դեպի մոթազելիները, և չնայած, որ «սունի» բառն ստեղծվեց «մոթազելի» բառի դեմ կիրառվելու համար, այնուամենայնիվ, մոթազելիների անկումից հետո՝ միայն շիաները մնացին որպես մարդկային բանականության կողմնակիցներ: Այնուհետև «շիա» բառը սկսեց կիրառվել «սունի» բառի հակառակ, ինչը առիթ հանդիսացավ ենթադրելու, թե «սունի» բառը ստեղծվել է Աբու Բաքրի խալիֆայության հետ տարածայնությունների հետևանքով: Մինչդեռ խնդրի հիմքում պարզապես այլ հարց էր ընկած:

Մի անգամ, Մաշհադում, Պարոն Զաջի Միրզա Խալիլ Քոմրեին, Շեյխ Թուսիի հազարամյակին նվիրված նիստներից մեկի ընթացքում «սունի» բառը շատ գեղեցիկ մեկնաբանեց, ասելով, թե սունիներն իրենք իրենց

շատ համապատասխան անվամբ են կոչվել: Նրանք, ասես գիշերով մեր գլխին գլխարկ դնելով, իրենց կոչեցին սունի՝ ավանդապահ, այսինքն՝ Սոհամադ մարգարեի ավանդները շարունակող: Ասել է, թե՛ մնացյալ մուսուլմանները դրանց հետևորդները չեն: Սակայն խնդրի էությունը կայանում է նրանում, որ այստեղ խոսքն ընդհանրապես մարգարեի ավանդների պահպանման կամ դրանցից հրաժարման մեջ չէ, այլ պարզից էլ պարզ է, որ մոթագելիները նույնիսկ չէին հերքում դրա առկայությունն ու կարևորությունը, այլ շեշտում էին Սուրբ Դուրանի և Սուրբ ավանդների պահպանման հարցը: Խնդիրն այն է. հնարավոր կլինի՞ այդ բոլորն ընկալել, ուսումնասիրել ու մատուցել՝ տրամաբանորեն, առողջ բանակամությամբ, թե՞ ոչ: Ասվածի բացակայության դեպքում հնարավոր է խեղաթյուրել թեման ու սխալ ուղիներում մղվորվել:

### **Ջոնուդ էրն Թայմին և վահաբիստական կուսակցությունը**

Մարդկային մտքի ու բանականության խոշորագույն հակառակորդները Ահմադե Չանբալի հետևորդներն են, որոնց կարկառուն դեմքերից մեկը՝ էրն Թայմին է: Թայմին ըստ մեզ հասած աղբյուրների ապրել է Դամասկոսում ութերորդ դարում<sup>18</sup>: Նա մի աշխատասեր ու հանճարեղ մարդ է եղել, որն ունեցել է սակայն մի շատ մակերեսային ու կարծրացած տեսակետ: Մեզ քաջ հայտնի է, որ կան մարդիկ, որոնց խելքը զարգանում է մակերեսային մակարդակներում ու ցավոք այն ունակ չէ խորապես ներթափանցելու և ընկալելու իրերի բուն էությունը: Նման մարդկանցից էր Թայմին, որի գրչին պատկանող բազմաթիվ գրքերն առաջին հայացքից հիացմունք են առաջացնում, սակայն, դրանց խորքում դատարկություն է տիրում:

Թայմին Ահմադե Չանբալի ավանդությանը նոր շունչ պարգևեց, ավելին՝ դարձավ նրա ուղղության վերակենդանացնողն ու վերաստեղծողը, քանի որ Ահմադե Չանբալի հետևորդներից և ոչ մեկը այս աստիճան չվերաքարոզեց նրա ավանդներն ու գաղափարները: Նա նույնիսկ հրատարակեց մի գիրք, որտեղ բացառեց ու արգելեց «Տրամաբանություն» առարկայի ընթերցումն ու ուսուցումը: Այլևս ինչ խոսք կարող էր լինել փիլիսոփայության մասին:

Սա «վահաբիստական» կուսակցությունն էր, որն ստեղծվել էր մեկ ու կես դար առաջ: Դրանք հենց նույն այս Թայմինների ավանդների շարունակողներն ու հետևորդներն էին, որոնք աշակերտում էին առաջիններին: Հարկ է նշել նաև այն, որ սրանց ուսմունքների արմատներն էլ ձգվում են դեպի բանականության ու խելքի ոլորտը, սակայն խստորեն հակադրված են տրամաբանությանն ու փիլիսոփայությանը: Ըստ էության «ավանդապաշտ» են, ասել է, թե արտաքնապաշտ, մակերեսային ու շատ հասարակ:

Առաջին անգամ, երբ ես արժանացա Չաջ գնալու բախտին, և մեկնեցի Մադինե, ճանապարհին ծանոթացա մի պակիստանցի խելացի ուսանողի հետ, որի անունը Հաֆեզ էհսան էր: Երբ նա ինձ մոտիկից ճանաչեց և

18- 728 -ին վահաբանվել է Մարոկոյում:

իմացավ, որ ես թեհրանում «Տրամաբություն» և «Փիլիսոփայություն» եմ դասավանդում, շատ հետաքրքրվեց և անընդհատ մեր քարավանն էր գալիս ինձ հարցեր տալու: Ես նրան ուսման ծարավ գտա, իսկ նա, այդ փաստը բացատրեց այն բանով, որ այստեղ արգելված է տրամաբանության ուսուցումը: Ահա և մեր հիշատակած էրն թայմիեի ավանդներին հետևելու արդյունքը:

Պարզ դարձավ, որ այս խնդիրներն սկիզբ առան մոթազելիների ու աշարիների վեճերից, և Ահմադե Չանբալի ժամանակաշրջանում իրենց կիզակետին հասան: Մոթեվաքելը ժամանակի քաղաքականության պարագլուխն էր, իսկ Ահմադե Չանբալը՝ կրոնական: Բնական է, որ այս երկու՝ քաղաքական ու կրոնական պարագլուխները ցեղամետությունն իր գագաթնակետին հասցրեցին:

Չետազայում Ահմադե Չանբալը գտավ մի քանի աշակերտներ, որոնցից ամենավտանգավորը թայմիեն էր, քանի որ Ահմադե Չանբալի ուսմունքը նրա մահվանից հետո մի առ ժամանակ հեռացավ իսլամական տիրապետության սահմաններից և հանգրվան գտավ արևմտյան Աֆրիկայում: Սակայն թայմիեն այն կրկին վերակենդանացրեց ու իսլամական աշխարհի վերադարձրեց, չնայած այն բանին, որ նրա դրույթները խելքին ու բանականությանը հակադրվող երևույթներ էին: Իսկապես դա ցավալի դեպք էր իսլամի պատմության էջերում:

## Էխսարիզյարի

Շիաների աշխարհն առհասարակ գերծ էր մնացել այսպես կոչված «ցեղամետությունից», քանի որ ինչպես արդեն նշեցինք, սույն շարժումն սկիզբ էր առնում հենց մեր Իմամների խալիֆությանը զուգընթաց: Նրանց ուղին շատ մոտ էր մոթազելիների գաղափարներին, այդ պատճառով պատմության մեջ շիաներին ու մոթազելիներին հաճախ միասին էին հիշում և «ադլիե»<sup>19</sup> էին անվանում: Նույնիսկ ոմանք շիաներին կոչում էին մոթազելի և մոթազելիական շիաներ:

Նշենք նաև այն, որ մինչև Սեֆյանների հարստության սկզբնական շրջանները, ցեղամետության գաղափարախոսությունը դեռևս շիաների աշխարհի մուտք չէր գործել, երբ Միդգա Մոհամադե Էսթար Աբադին և հատկապես նրա աշակերտ՝ Մուլա Ամինե Էսթար Աբադին կրկին սկսեցին հետևել հադիսի ավանդույթներին: Չետաքրքիրն այն է, որ ցանկացած կուսակցության հիմնադիր եթե ոչ տաղանդ, ապա, գոնե որոշակի մտային ունակությունների տեր մարդ պետք է լինի, իսկ եթե ցեղամետ լինի, ապա՝ չպիտի կարողանա որևէ կուսակցություն հիմնադրել: Չենց այս Ահմադե Չանբալն էլ փոքր մարդ չէր:

Մուլա Ամին Էսթար Աբադին տարիներ շարունակ ապրել է Մեքքայում, նաև՝ Մադինայում: Իր «Ֆեվայեդ -օլ- Մադնիյե» գրքում խիստ քննադատում է շիա մտավորականներին ու թունդ հայիոյում Ալլամե Չելլիին ու մեղադրում նրանց՝ բանականությունն ու խելքը իսլամ ներմուծելու մեղքի մեջ:

19- Արդարադատության ներկայացուցիչներ (թ):



Նրանց կողմից ընդունված «Ղուրան, Սուննա<sup>20</sup>, էջմա<sup>21</sup> և խելք» քառյակից երեքը՝ միանգամայն անվավեր են, որ նշանակում է, թե դրանցից ոչ մեկը մեզ համար ընդունելի չեն, ոչ՝ Ղուրանը, ոչ՝ խելքն ու բանականությունը, և ոչ էլ համախմբումը: Ավելին՝ նա էջմայի մասին այն կարծիքն է հայտնում, թե իբր դա ընդհանրապես չունի ոչ մի հիմք ու խորք, և որն ուղղակի վերցվել է ավանդապահներից, որը և հիմնովին հարվածել է իսլամին: Սունիները սա հիմք դարձրին Աբու Բաքրին խալիֆության հասցնելու համար, սակայն այն հետագայում ներքաշվեց իսլամական աստվածաբանության ուսմունքների ուղորտներ, և ի վերջո շիաներն էլ այն իսլամական ուսմունք դարձրին: Փաստորեն էջման (համախմբումը) դա մերը չէ, այլ՝ սունիներիինը:

Նա Ղուրանն էլ կեղծ ակնածանքով մի կողմ նետեց, չնայած այն չմերժեց, սակայն նշեց, որ Ղուրանը մեզ չի պատկանում, այլ Իմամներին: Միայն նրանք են ունակ այն կարդալ, և ընկալել նրա իմաստն ու խորքը, քանի որ մենք իրավասու չենք մեկնաբանելու, վերլուծելու և հասկանալու այն: Առհասարակ Ղուրանը հայտնվել է ընտրյալների համար, որոնք ընկալում են նրա հոգին ու շունչը: Փաստորեն, ամեն ոք ընդունակ չէ կռահելու նրա լեզուն ու խոսքը: Այսպիսով նա պարզապես հերքեց Ղուրանի գոյության փաստը:

Նա ևս ունի խելքի ու բանականության մասին բավական հետաքրքիր ու ազատամիտ մեկնաբանություններ ու կարևոր տեսակետներ: Ինչպես Ղեկարտն ու այլոք փիլիսոփայությանը հակադրվող մտքեր էին արտահայտում, նա նույնպես ուսումնասիրում ու վերլուծում էր նրանց խոսքերն ու հայտնած մտքերը. վեր էր հանում արծարծած սխալ ու թերի կարծիքները, այնուհետև արտահայտում վերջին ժամանակներում մտավորականների մոտ ծագած խնդիրներն ու փորձում գտնել նրանց վրիպումները, որոնք կամ ուղղակի խնդրի հարցադրման մեջ էին, կամ նրա էության խորքերում: Ի վերջո նա հանգում է այն եզրակացության, որ Արիստոտելի տրամաբանությունը արտաքին տեսքի տրամաբանությունն է, որն առավելագույնս ընդունակ է արտացոլել միայն մտքի վրիպումները՝ մտածողության համակարգի մեջ: Այլ կերպ ասած՝ տվյալ համակարգի վրիպումները նմանվում են այն ճարտարապետի աշխատանքին, որի կարողությունն ու հիմնական պարտականությունը կառուցվող առարկայի նախագծի գծագիրն է, իսկ կառույցի հումքի որակը՝ օրինակ աղյուսը, ցեմենտը, կամ երկաթը նրան չեն հետաքրքրում և նա նրանց համար պատասխանատու չէ: Սա նաև Արիստոտելի տրամաբանությունն է, որը միայն խնդիրը պատճառաբանում է արտաքնապես, ստուգում ու բացահայտում այն<sup>22</sup>: Մինչդեռ, մարդու թույլ տված վրիպումները հաճախ նրա մտքի էությանն են կապված, քան՝ մտքի արտաքին տեսքին: Ու քանի որ չկա ուրիշ ոչ մի ելք, ուստի և հնարավոր չէ կրոնական բոլոր հարցերում ապավինել մարդկային խելքին ու բանականությանը:

20- Ավանդություն (թ):

21- Համախմբում (թ):

22- Ղա ճիշտ է: Այսօր էլ Արիստոտելի տրամաբանությունն անվանում են Արտաքին տեսքի տրամաբանություն, որը շատ ստույգ բնութագրում է այն: Ինքն? Արիստոտելն էլ, հենց Ավիցեննաի պես, սրանից առավելին չէր հավակնում:

Այսպիսով, նա բանականության հարցն էլ մերժեց, ասելով, որ միայն մենք ենք ու մեր հաղիսը, մենք ենք ու մեր ավանդույթը: Անգամ ջանքը պախարակեց, որը կրոնական ուսմունք էր ներմուծվել շիա մտավորականների միջոցով, այն նույնպես համարելով բանականություն, ուստի և՛ անթույլատրելի երևույթ: Անթույլատրելի համարեց նաև ընդօրինակման հարցը, նշելով, որ միայն պետք է ընդօրինակել Իմամներին, նրանց ուղին ու գաղափարախոսությունը: Մինչև-իսկ արգելեց իսլամական կրոնական հողվածներ գրելն ու ջանքը: Ավելին՝ դրանք համարեց սրբապղծություն:

Այնքան թունդ ու աներկբա են նրա արտահայտած կարծիքները, որ նա իրականության մեջ ստեղծել է մի հսկա գաղափարական հոսանք, որը հետագայում կոչվեց էխբարիզյարի, և նրա հետևորդներին անվանեցին՝ էխբարիներ: Իր ժամանակաշրջանում այնպիսի թափ ու զարգացում ապրեց, այնպես թնդացրեց շիա աշխարհը, որ մինչև անգամ պատերազմների ու սպանությունների լուրջ խթան հանդիսացավ: Այս խնդիրն հատկապես Պարսից ծոցի շեյխերի բնակելի տարածքներում մեծ տարածում ու դրսևորում գտավ: Սեֆյանների տիրապետության սկզբնական շրջաններում, Նաջաֆն ու Քյարբալան համարվում էին էխբարիների օրրանը, այնպես որ այնտեղ ոչ ոք չէր համարձակվում զբաղվել Սուրբ Դուրանի մեկնությամբ, կամ նրա տրամաբանական բացատրությամբ: Խիստ արգելվում էր անգամ «էջման»<sup>23</sup>: Նրանք միաբերան կոչում էին, «Միայն մենք ենք ու մեր ավանդույթները, մենք ենք ու մեր հաղիսները»: Ավելին՝ նրանք մինչև-իսկ հարձակողական դիրքերից էին պատասխանում բոլոր նրանց, ովքեր հավակնում էին այն մտքին թե՛ հաղիսը կարող է լինել ճիշտ կամ սխալ, ստույգ կամ՝ ոչ հավաստի: Անգամ Զեյլիի մտավորականներն ու այլոք ըստ այդմ էլ խմբավորեցին հաղիսները, ասելով, թե «Հաղիսներից ոմանք ստույգ են, ոմանք՝ ոչ ճշմարիտ, շատերը անգամ՝ սխալ: Ուստի, սույն հանգամանքներից ելնելով, նույնիսկ որոշեցին, թե ճիշտ հաղիսն այսպես պետք է կիրառել, սխալ հաղիսն՝ այնպես, իսկ ոչ հավաստի հաղիսն՝ առհասարակ անվավեր համարել:

Սուլա Ամինն ասում էր.«Այս ինչ հիմարություններ են: Հաղիսը ճիշտ ու սխալ չի ճանաչում, այն ինչ հաղիս է, ստույգ է, հետևաբար՝ վավերական»:

### **Ջանքի հաղթանակը՝ Ախբարիզյարիների նկատմամբ**

Սուլա Ամին էսթար Աբադիի շնորհիվ մեզանում էլ պատահեց նույնը, ինչ ավանդապաշտների մոտ Ահմադե Հանբալի և էբն Թայմիի միջոցով էր կատարվել: Հարկ է նշել նաև այն, որ հետագայում սույն շարժումը ջախջախվեց ու չարաչար պարտություն կրեց մի շարք նշանավոր մտավորականների, այդ թվում՝ լուսահոգի Վահիդե Բեհբահանիի ձեռքով: Վահիդե Բեհբահանին ապրում էր Սեֆյաններից հետո, և ի դեպ հանրագիտակ էր համարվում: Նա ախբարիների գաղափարներին հակադրվելով՝ հիմնարկեց բանականության և ջանքի հոսանքը, որ նշանակում էր քարացած ու անմիտ ցեղամետությամբ դեմ գնալով, կրկին զարկ տալ ուսումնառու-

23- Համախոսում (թ):

թյանն ու մտավոր զարգացմանը: Իսկ նրանից հետո, Շեյխ Անսարին, որին ի դեպ «վերջին ժամանակների ամենագետ» էին անվանում, վերջնական հարված հասրեց էխբարիզյարներին՝ հիմնովին ու արմատապես կործանելով նրանց<sup>24</sup>: Սակայն վերջիններս վերջնականապես չոչնչացան ու արմատախիլ չեղան, և անգամ մի շարք մոջթահեդների արտահայտած մտքերում դեռևս նկատվում է նրանց թողած ազդեցությունը:

Սա մի համառոտ ակնարկ էր իսլամում բանականության ու մտքի գնահատման վերաբերյալ, որը վառ ապացույցն է այն բանի, որ իսլամում բանականության ու մտքի նկատմամբ ունեցած ակնածանքից անկախ, հասարակական հոսանքները երբեմն խանգարել ու խառնաշփոթի են վերածել այն: Հոսանքներ, որոնք իսլամական աշխարհում ի հայտ եկան և՛ շիաների և՛ սունիների տեսություններում:

Չենք ցանկանում ավելի ծավալվել, քանի որ հուրախություն մեզ այսօրվա դրությամբ, շիաներիս մեջ արդարամետությունը հաղթանակել է: Եվ եթե դուք իսլամական հոգևոր դպրոցներում դասավանդվող առարկաներից ցանկացածն աչքի տակով անց կացնեք, խորապես կհամոզվեք դրանում: Ավելին՝ փորձեք դպրոցի ցանկացած ուսանողի հարց տալ այն մասին, թե իսլամը արդարադատության կողմնակի՞ց է, թե՞ հակառակորդ: Նա միանշանակ կպատասխանի՝ կողմնակից: Կամ, օրինակ, հարցրեք, թե արդյո՞ք մենք կողմ ենք տրամաբանորեն ընդունած չարին ու բարուն (փառաբանմանն ու պարսավանքին), թե դեմ ենք դրանց: Նա հաստատ կպատասխանի, որ մենք կողմ ենք: Սրա բուն պատճառն այն է, որ Շեյխ Անսարիի նման անծինք հաստատեցին այս գաղափարի աներկբա հիմքերը, և Մուլա Ամին Էսթար Աբադիի դրվագն էլ մեր պատմության մեջ հայտնի անցքերից ու հոսանքներից մեկն էր միայն:

### **Ախբարիզյարիի արմատները Այաթոլլա Բորուջերդիի դիտանկյունից**

Այաթոլլա Բորուջերդին մի հիանալի միտք էր արծարծում, որը սակայն, չգիտեմ ի՞նչ ապացույցների վրա էր հիմնված: Ամեն դեպքում շատ հետաքրքիր է անդրադառնալ դրան: 22 թվականի ամռանը, երբ նա դեռևս անծամբ Ղոմ չէր ժամանել, մենք Բորուջերդ մեկնեցինք, և այնտեղ լսեցինք նրա խոսքը, որից հետո նա այլևս այդ թեմային չանդրադարձավ: Մենք անփութորեն մոռացանք իր արտահայտած տեսակետների կապակցությամբ կռվաններ պահանջել:

Երբ նա խոսում էր մուլա Ամին Էսթար Աբադիի և նրա հետ կապված անցքերի մասին և անդրադառնում էր նրա «հակաբանականության» ու «հակամտածողության» մասին ասված մտքերին, նշում էր, որ նրա ստեղծած հոսանքն ու գաղափարախոսությունը համընկնում էր Եվրոպայում սկիզբ առած բանականությանն ու փիլիսոփայությանը հակադրվող հոսանքներին, որոնք սկիզբ էին առնում Ղեկարտի, Բեկոնի ու այլոց արտահայտած զգացողության ու փորձի տեսություններից:

Նրանք ևս այլ տեսակետներով հակադրվեցին տրամաբանությանն ու բանականությանը, սակայն նրանց արծարծած մտքերը հիմնված էին

24- Չնայած նրանց այժմ էլ ամեն տեղ կարելի է հանդիպել:

զգացողության առաջնայնության վրա: Բորուջերդին հավակնում էր նաև այն բանին, որ մուլա Ամինը գտնվել է Եվրոպական աշխարհներից կրած ազդեցությունների ներքո:

Սակայն այն, ինչ դեռևս ինձ կասկածի տեղիք է տալիս, այն է, թե նա ինչպե՞ս կարող էր ազդվել Եվրոպայում սկիզբ առած վերոհիշյալ մտքերից այն ժամանակահատվածում, երբ դրանք դեռ Իրան չէին թափանցել: Նա հաճախ էր լինում Իրանից դուրս, հատկապես Մեքքայում և Մադինեյում, և հնարավոր է այդ ճանապարհորդությունների ընթացքում հանդիպած լիներ որոշ անձանց, որոնք տեղյակ են եղել և որոնցից նա ազդվել է: Սակայն Բորուջերդիի քննադատությունը կայանում է նրանում, որ եթե Եվրոպացիները զգացողությանը կողմնակից են, ապա միանշանակ բացառում են զգացմունքից անկախ գոյություն ունեցող մտքի ու բանականության առկայությունը: Նրանք նշում են, թե բանականության նշանակությունն ու հեղինակությունը միայն այնքանով է կարևոր, որքանով որ այն ազդում է զգացումների վրա, ուսումնասիրում ու վերլուծում իրերը: Սակայն, քանի որ այն մեկնաբանում է բնության հետ կապված խնդիրները, ուստի բանականության կարիք չի զգացվում: Ցանկանո՞ւմ եք վիճաբանել կրոնների մասին:

Կրոնի հիմնախնդիրն Աստվածն է, որը բոլոր բանականություններից ամենաբանականն է, ուստի ի՞նչպես հնարավոր կլինի բանականության մերժումը կրոն ներքաշել: Եվրոպացիները անկախ բանականության մերժման հիմքը դնում են զգացմունքի իսկության խնդրի վրա, որը և նրանց ոչ մի վնաս չի բերում: Սակայն դուք ցանկանում եք բանականության մերժման հիմնահարցը կառուցել հադիսի իսկության հիմքերի վրա: Մի՞թե հնարավոր կլինի Աստծուն ու նրա միասնության խորհուրդը ճանաչել հադիսներով: Եթե Աստծու գոյի կամ չգոյի մասին հարց ծագի, անկասկած դրական կպատասխանեք, պատճառաբանելով, որ Իմամ Ջաֆար Սադեդն այդպես է հաղորդում իր հադիսի մեջ: Անկախ մտքի մերժումը՝ զգացմունքի իսկության հիմքերի վրա, դա միայն մի ճանապարհ է: Սակայն բանականության իսկության մերժումը՝ հիմնավորված հադիսի վրա չի կարող ընդունելի լինել, քանի որ իսլամի համարյա բոլոր հիմնական հարցերը՝ ամենամանտեսանելիներն են: Ինչպես որ հենց Ղուրանի մեջ է ասվում. «Նրանք, ովքեր անհայտ են, այն, ինչ զգայարանից քողարկված ու ծածկված է հավատք են ընծայում»<sup>25</sup>: Ինչպես հնարավոր կլինի անտեսանելին տրամաբանել ու հաստատել հադիսների միջոցով: Բնականաբար, մենք Իմամ Ջաֆար Սադեդին ընդունում ենք այն պարզ պատճառով, որ նա մեր Իմամն է: Որովհետև, նա Մոհամադ մարգարեի տեղակալն է և հենց ինքը՝ մարգարեն է նշանակել բոլոր Իմամներին: Ինչո՞ւ ենք հավատում մարգարեին: Հավատում են նրան, քանի որ Աստված է ուղարկել, որին սակայն պետք է հաստատել հավատքի տրամաբանությամբ: Իսկ արդյո՞ք Աստծուն էլ պետք է ապացուցել բանականությամբ: Նախ պետք է ապացուցել Աստծու, ապա մարգարեության, այնուհետև՝ Իմամ Ջաֆար Սադեդի գոյության փաստերը, որոնցից հետո հնարավոր կլինի փաստացի ապացուցել նաև այն մանրապատումների հավաստի-

25- Ղուրան, 2: 3:

ուրյունը, որոնք եկել են նրանցից: Իսկ եթե նրա հաղիսը ստույգ է, ապա նոր, տրամաբանական կլինի ընդունել նաև այն:

Այլապես, եթե ցանկանանք սկզբից հավատալ ու հիմնվել միայն հաղիսների գոյության փաստին, այդ դեպքում ոչ մի տրամաբանական եզրահանգման չենք հասնի:

### Մոթազեղիների ծայրահեղական փոխազդեցությունը

Նախ մշենք, որ ծայրահեղությունները շատ հաճախ չարիքի ակունք են հանդիսանում: Երբ մոթազեղիները խելքի ու բանականության կողմնակիցը դարձան, իրենց բռնած ուղու մեջ չափազանցության ու մասամբ ծայրահեղության գնացին: Մեջ բերեցին բոլոր այն երևույթները, որոնք գերծ էին մարդկային խելքով ընկալելու ուղորտներից, այսինքն երևույթներ, որոնք ոչ մերժվում, ոչ էլ փաստացի ապացուցվում էին նրանց կողմից: Այդ ամենը մարդկային խելքի ու բանականության համար նույնպես մերժելի համարեցին: Ըստ երևույթին, այս գաղափարախոսությունը հանգեց այն բանին, որ մոթազեղիները իրենց շուրջ հավաքեցին բազմաթիվ կողմակիցներ, միայն այն պարզ պատճառով, որ նրանք հերքում կամ մերժում էին բազմազան հարցեր: Նրանց կողմից մերժված երևույթներից էր հոգու գոյության փաստը, քանի որ հոգին հնարավոր չէ ճանաչել ու ընկալել խելքով ու տրամաբանությամբ: Չնայած պարզ է, որ մարդկային առողջ բանականությունը չի կարող հերքել հոգու գոյության փաստը միայն այն պատճառով, որ այն անտեսանելի է: Ավելին՝ հնարավոր է, որ մեր կյանքում ու երկրի տիրույթում գոյություն ունեն միլիոնավոր անտեսանելի երևույթներ, որոնց գոյության մասին մենք դեռևս անտեղյակ ենք:

Սակայն հոգու, կամ նման երևույթների միանշանակ մեծումը, այն էլ միայն բանականության կողմից անընկալելի ու անընդունելի լինելու պատճառով, ոմանց հիասթափեցրեց մարդկային խելքից ու տրամաբանությունից, ուստի նրանք ավելի շուտ գերադասեցին կուրորեն հնազանդվել իրենց դերին, քան թե հետևել ու առաջնորդվել ժամանակակից լուսավոր մտքերով, որոնք այսօր մերժում էին հոգու գոյության փաստը: Նրանք գուցե մի օր էլ կմերժեին հրեշտակներին, իսկ մի այլ անգամ էլ՝ Աստծուն: Սա, իհարկե նմանվում է մեր ժամանակներում ապրող ծայրահեղական մտավորականների մտքերին: Մենք չենք թերագնահատում լուսավորությունն ու մտավոր զարգացումները, սակայն, եթե այն անտեղի չափազանցությունների մեջ ընկնի, ի վերջո, ինքն իրեն կոչնչացնի:

### Բանականությունն՝ իսլամական իրավազետների դիտանկյունից

Այս հարցադրումը վերաբերում էր խոսքի<sup>26</sup> արվեստին: Իսլամական մտավորականների շրջանում ևս, ավելի կոնկրետ՝ սունիների միջավայրում, սկիզբ առավ նմանօրինակ մի հոսանք: Ոմանք, հանձինս՝ Մալեք

26- Այստեղ խոսքը քալամիե մասին է, որը նշանակում է նաև դոգմատիկ աստվածաբանական փիլիսոփայություն (թ):

Էբնե Օնսի, որն իր ժամանակաշրջանի երևելի դեմքերից էր, նաև Իմամ Ջաֆար Սադեդի ժամանակակիցներից ու նրա աշակերտներից մեկը, որոշեցին իսլամական աստվածաբանական ուսմունքների հետ կապված հարցերում հնազանդ մնալ: Ոմանք էլ, համեմատության կողմակիցը դարձան, հանձնես Աբու Չանիֆեի, որը նույնպես Իմամ Ջաֆար Սադեդի ժամանակակիցն էր ու աշակերտել էր նրան: Նրանից հաղորդում են հետևյալ տողերը՝ **«Եթե այդ երկու տարին նրան աշակերտած չլինեի, կոչնչանայի»:** Աբու Չանիֆեն մի պարսիկ էր, որն ապրում էր Քուֆեում: Նա մասամբ անտարբեր էր հադիսի նկատմամբ, որ չի նշանակում, թե նա անտարբեր էր Մոհամադ մարգարեի խոսքերի նկատմամբ: Ուղղակի բազմաթիվ հադիսներ համարում էր անվավեր և համոզված էր, որ դրանցից շատերը կեղծ են ու անընդունելի: Ըստ նրա մարգարեից հաղորդված բազմաթիվ հադիսներից միայն մի քանիսն են (շուրջ 20-ը), որոնք ինքն անձամբ կարող էր հավաստել: Մնացածին չէր հավատում: Իհարկե, մենք նրա տեղեկություններն այս կապակցությամբ լիարժեք չենք համարում:

Իսլամական աստվածաբանության ուսմունքները մեկնաբանելու և պատճառաբանելու համար միայն սուրբ Ղուրանն ու մարգարեի քսան հադիսները, բնական է, որ սակավ կլինեն: Ղուրանն ընթերցելով ու մարգարեի քսան հադիսներն իմանալով անկարելի կլինի ընկալել ու հասկանալ իսլամի հրամանները, հետևաբար և խորապես հասկանալ աստվածաբանական ուսմունքները: Այդ էր հիմնական պատճառը, որ Աբու Չանիֆեն գերադասեց համեմատության ձևը: Համեմատություն կնշանակի բաղդատել տարբեր խնդիրներ ու երևույթներ և փորձել նրանց միջև գտնել շփման եզրեր: Օրինակ, Աբու Չանիֆեն ասում էր. «Այս կամ այն թեմայի մասին մարգարեն այսպես կամ այնպես է ասել: Եվ քանի որ այս թեման էլ նմանվում է այնինչ թեմային, ուստի այդ օրենքը կարելի է այստեղ կիրառել»: Իսկ սա այն է, ինչ արգելել է Ղուրանը: Այս տեսակ անհիմն տրամաբանությունն ընդհանրապես չի համընկնում խելացի առաջնորդվելու խնդրին, սա ոչ ավել և ոչ պակաս՝ գուշակությամբ ու նախազգացումներով կողմնորոշվելու հնարք է:

Այստեղից էր ահա, որ իսլամական աստվածաբանական ուսմունք ներթափանցեց կասկածի ու գուշակության թեման, որի հետևանքով ստեղծվեց համեմատության ու կրոնական օրենքների ընկալման մտացածին ու անտրամաբանական մի համակարգ: Դրանք նույնպես դարձան բանականությամբ ու խելքով առաջնորդվելու թերություններից, այնքանով, որ մի շարք թերահավատներ հնարավորություն ստացան արտահայտվելու այսպես. «Եկեք ու տեսեք, թե բանականության միջամտությունը տարբեր հարցերում ինչպիսի խեղաթյուրման ու ավերածության է տանելու մեզ»:

Ամեն դեպքում, Աբու Չանիֆեն հիմնադրեց համեմատական ուղղությունը, սակայն նույնիսկ ավանդապաշտ Իմամներն էլ այն չընդունեցին: Մալեք Էբնե Օնսն իր ողջ կյանքի ընթացքում միայն երկու խնդրի շուրջ համեմատության կոչ արեց, որով մահվան շեմին, խոստովանեց, որ սարսափում է Աստծու դատաստանից, քանի որ կյանքում երկու անգամ համեմատության կողմ է քվեարկել: Ահմադե Չանբալն էլ խիստ դեմ էր այս

խնդրին, իսկ Շաֆին պահպանում էր չափավորությունը: Ոչ Աբու Չանիֆեի պես յուրաքանչյուր հարց լուծում էր համեմատությամբ, և ոչ էլ Սալեբ երևե Օնսի պես միայն հաղխաներով էր ուղղորդվում:

Պարզ է, որ Աբու հանիֆեն իր մտադրության ու արարքի մեջ ծայրահեղության էր գնացել: Նրա կիրառած համեմատության չափազանցության մասին ավանդապաշտները հաղորդում են, որ նա այնքան էր խորացել այդ հարցում, որ ոչ միայն իսլամական-կրոնական, այլև կյանքի բնական երևույթներն էլ առանձնացնելիս փորձում է առաջնորդվել համեմատությամբ, որոնց արդյունքում, շատ հաճախ ծիծաղելի, անգամ զավեշտական արդյունքների է հանգում:

Պատմում են, որ մի անգամ նա գնում է վարսավիրանոց մազերն ու մորուքը հարդարելու այն ժամանակ, երբ ընդամենը մի քանի ճերմակ մազ էր հայտնվել նրա մորուքի մեջ: Վարսավիրին պատվիրում է՝ ճերմակած մազերն այնպես արմատախիլ անել մորուքի միջից, որ նրանք այլևս չաճեն ու մնան միայն սևերը: Վարսավիրը փորձում է նրան համոզել, որ նա սխալվում է՝ կարծելով, թե պետք է հանել ճերմակ մազերը, քանի որ այդ դեպքում նրանք ավելի արագությամբ ու մեծ քանակությամբ կսկսեն աճել: Այդ ժամանակ նա պատվիրում է հանել սև մազերը:

Պարզապես նա դիմում է համեմատության, մտածելով, որ եթե ճերմակները հանելուց նրանք բազմանում են, ուրեմն պետք է հանել սևերը, որպեսզի սրանք բազմանան: Այլ կերպ ասած՝ եթե ճերմակ մազերի հետ կապված վարսավիրի կարծիքը ճիշտ է, ապա ճիշտ կլինի նաև սև մազերի դեպքում:

Նա իսլամական կրոնական հարցերը նույնպես համեմատում էր:

Ի տարբերություն այն ժամանակների, երբ Իմամների ու մարգարեի տան հետևորդները բանականության ու տրամաբանության կողմնակիցը դարձան, այս անգամ նրանք չընդունեցին համեմատության մեթոդը, քանի որ այն գտան առհասարակ մտքի և բանականությանը դեմ մի երևույթ: Դեռ ավելին՝ այն համարեցին մտացածին պատրանքների ու երևակայության ծնունդ: Նրանք ոչ միայն չընդունեցին, այլև պախարակեցին ու պարսավեցին համեմատության գաղափարը, ասելով. «**Եթե մեր ավանդությունները կանգնեն համեմատության հիմքերի վրա, նրանք կոչնչանան**»<sup>27</sup>: Սակայն տեսնում ենք, որ նրանք չսաստեցին միտքն ու բանականությունը:

Այս էր առահասարակ շիաների ու սունիների տարածայնությունների ելակետային հարցերից մեկը: Սունիներն ասում էին. «իսլամական աստվածաբանական ուսմունքի սկզբունքային պատճառները չորսն են՝ «Ղուրանը, Սունաթը (ավանդությունը), էջման (համախմբումը) և խելքը: Իմամները, նույնպես հաստատում էին խելքի ու բանականության հարցը, սակայն ոչ երբեք՝ համեմատությունը: Սա ևս ապացուցում է, որ Իմամներն ու իսլամական մտավորականները երբևէ հակաբանականությանն ու անխելքությանը կողմ չեն եղել: Պարզապես նրանք հակադրվել են համեմատությանը, որը նրանց կողմից ստույգ պատճառաբանված և տրամաբանված համակարգ չի համարվել:

27- Օսուլե Բաֆի, 3 1, էջ 57:

Հարկ է նշել, որ Երբեմն մի շարք մտավորականներ համեմատությանը հակադրվել են ծայրահեղաբար: Հենց մեկը մի բան է ասել, նրան լռեցրել են, ասելով, որ նա համեմատություն է կատարում: Երբեմն նույնիսկ այն դեպքերում, երբ բացարձակապես ոչ մի համեմատություն էլ չի արվել: **«Առաջինն, ով համեմատեց, դա սատանան էր»:** Այսպիսի և նմանօրինակ այլ արտահայտություններ են արել:

Սա ևս մի հոսանք էր իսլամական աշխարհում:

Կա մի այլ հոսանք ևս. բանականության և բանականության դեմ արված հրահանգները, որոնք միստիցիզմի երևույթն են արտահայտում: Միստիցիզմն էլ այլ տեսակետից հակադրվեց բանականությանն ու փիլիսոփայությանն ու նրանցով առաջնորդվողներին:

Այդ մասին հաջորդ քննարկման ընթացքում<sup>28</sup>:

28- Հաջորդ քննարկումը կամ չի կայացել, կամ գոյություն չունի համապատասխան ծայրերի-  
զը:





**ՄԱՍ III**  
**Դաստիարակության**  
**Գործոններ**  
**1**  
**Կանխի կոփում՝ Պաշտամունք**

## Հանուն Ողորմաջ և Բարեգույն Աստուծո

Նախորդ քննարկման երկրորդ գլխում խոսեցինք «կամքի» մասին: Ասացինք, որ կամքը մարդկային այն ունակություններից ու հատկանիշներից է, որն անկասկած կարոտ է զարգացման ու խիստ դաստիարակման: Լուսաբանեցինք կամքի և ցանկությունների տարբերությունները և նշեցինք այն կարևոր հանգամանքը, որ ոմանք սխալմամբ կամքը համարել են ցանկություններից բխող մի երևույթ, ենթադրելով, թե «կամքը» խիստ ցանկություն է մարդու ներաշխարհում, նրա խելքի ու բանականության հետ սերտորեն առնչվող ու նրանից կառչած մի ուժ: Մինչդեռ ցանկությունները մարդկային բնազդի ծնունդ են: Ցանկությունն այն հզոր ուժն է, որ ձգում ու կլանում է մարդուն անհրաժեշտ երևույթները, և կախված նրա ուժգնության չափից, նվազում կամ ավելանում է նաև մարդու ինքնատիրապետումը: Կնշանակի, թե մարդն իրենից անկախ հայտնվում է ինչ-որ ծոցողական ուժի սահմաններում: Սակայն, ի հակադրություն այս մեկնաբանման, մենք հակված ենք այն մտքին, որ կամքը մարդու ներաշխարհի հետ սերտորեն կապված մի երևույթ է: Մարդն իր կամքի շնորհիվ ձերբազատվում է արտաքին ուժերի ազդեցությունից: Որքան առավել լինի նրա կամքը, այնքան կբազմանան նաև նրա ինքնատիրապետման դրսևորումները: Հետևաբար, նա առավել դյուրին ու հստակ կկարողանա տնօրինել իր կյանքն ու ճակատագիրը:

## Ինքնատիրապետում

Կամքի, այլ կերպ ասած՝ մարդկային ներաշխարհին ու հոգուն տիրապետելու թեմայի մասին մեզ հասած բարեպաշտության, երկյուղածության ու հոգու մաքրման հետ կապված խոսքերն ու պատգամներն այնքան բազմաթիվ են իսլամում, որ հարկ չենք համարում այն հաստատել, ասելով. «Այո, իսլամը կարևորում է մարդկային կամքի զորացման հարցը»: Այս կապակցությամբ բավական է մեջ բերել Նահեօլ-բալադե գրքից մի գեղեցիկ ու բովանդակալից նախադասություն միայն:

**Իմամ Ալին ունի մի շատ գեղեցիկ մեկնաբանություն մարդու գործած մեղքերի համար. «Մարդու մեղքերը նմանում են անսանձ ձիերի, որոնք խլում են հեծյալից կամքն ու իրավունքը»<sup>29</sup> :**

Բնականաբար գիտենք, որ մեղքերը ծնվում են այն ժամանակ, երբ մարդուն ձգող ու գերող կրքերն ու ներքին ցանկությունները ստիպում են նրան անել այն, ինչը միանշանակ մեթոմ ու արգելում է բնականությունն ու հավատքը: Իմամն այս նույն հարցին անդրադառնալով, նշում է, թե մեղքը մարդու ինքնությունը կորցնելու պես մի բան է: Իսկ բարեպաշտության մասին, որն ի դեպ նրա հակառակ բևեռում է կանգնած, ասում է. «Սակայն բարեպաշտությունը, սանձահարված կենդանու պես է, որտեղ հեծնելու իրավունքը ոչ թե կենդանու, այլ հենց իր՝ հեծյալի ձեռքերում է»<sup>30</sup>: Ասել է, թե նա ինքն է կողմնորոշում, թե ո՞ր և ինչպե՞ս պետք է գնան: Պարզապես սանձերը քաշելով, կենդանու ուղին շեղում է իր ցանկացած ուղղությամբ, իսկ կենդանին հլու հնազանդությամբ հետևում ու ենթարկվում է նրան:

Աշխարհում չեք գտնի դաստիարակչական որևէ ուղղություն կամ դպրոց, անկախ նրանց աշխարհիկ կամ հոգևոր բնույթից, որ չընդունի կամ մերժի կամքի զարգացման հարցը, հիմք ընդունելով այն գաղափարը, թե մարդը պետք է լինի ոչ միայն բացարձակ ազատ, այլև սանձարձակ և գլուխ խոնարհի ներքին բոլոր ցանկությունների առջև: Հնարավոր է, որ աշխարհում գոյություն ունեն բազմաթիվ սանձարձակ մարդիկ, սակայն երբ խոսքը վերաբերում է մարդու դաստիարակությանը, անմիջապես հաջորդում է նաև նրա կամքի զորացման թեման: Սարտրն ու նրա նմանները (էզգիստենցիալիստները), որոնք հակված էին մարդու բացարձակ ազատությանը, արժարժեցին այս թեման՝ շեշտը դնելով բնազդային կրքերին ու ցանկություններին ազատություն շնորհելու փաստի վրա: Նրանք խիստ քննադատությունների արժանացան: Սակայն, այսօր ևս դժվար չէ տեսնել, թե հենց նույն էզգիստենցիալիզմը ինչպիսի կործանիչ ու ավերիչ սանձարձակության մղեց Արևմուտքն ու Եվրոպան: Ճիշտ է, հետագայում կռահելով իրենց դպրոցի ծնած կործանիչ արդյունքները, արդարացան, ասելով՝ թե մարդիկ չընկալելով իրենց ուղղության դրույթները, չարաշահեցին այն, իսկ իրենց դպրոցը երբևէ նման բան չի քառոզել:

29- Նահեօլ-բալադե, 16-րդ ճառ:

30- Նահեօլ-բալադե, 16-րդ ճառ:

**Հավատքը, որպես կամքի դրսևորման երաշխիք**

Այս բոլորը խոսում է այն մասին, որ աշխարհում չկա ոչ մի դպրոց կամ ուղղություն, որը դույզն-ինչ կասկած դրսևորի մարդկային ցանկու-թյունների ու կրքերի դեմ պայքարող կամքի կարևորության վերաբերյալ: Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչպե՞ս պետք է զարգացնել կամքն ու գործնականում ճշգրտորեն ուղղորդվել դրանով: Արդյո՞ք կամքն ու մարդկային բանականությունը անհրաժեշտաբար պետք է տիրապետեն մարդու ցանկություններին: Ընդամենը մի հրաման՝ պետք է, որ դա լինի այդպեսե ու բնական է, որ անմիջապես մարդու կամքն ու խելքը թելադրեն նրա արարքները ու հսկեն նրա կրքերն ու ցանկությունները: Բայց ի՞նչն է երաշխավորում նրա խելքի ու կամքի ենթարկումն իր ցանկու-թյուններին: Սա այն հիմնահարցերից է, որն անչափ կարևորում, և որից կառչում են հոգևոր այրերն ու մտավորականները: Նրանք համոզված են, որ մարդու կամքը բանականության կողմից արված հրահանգները իրա-գործող համակարգն է: Սակայն խելքն՝ ինքնին ի՞նչ է, ու ինչե՞րի է ընդու-նակ: Խելքը՝ մարդու լուսավորության կենտրոնն է, սակայն դա դեռ բա-վական չէ, արդյո՞ք նրանից եկող լուսավորությունն օգնում է մարդուն նաև կողմնորոշվել: Մարդն անվերջ իր փնտրտուքների մեջ ու իր նպա-տակակետին հասնելու ճանապարհին առաջնովում է իր բանականու-թյան ու խելքի լույսով: Սակայն խնդիրն այն է, թե ո՞րն է արդյոք նրա նպատակակետը:

Գիտենք, որ եթե մարդն իր ճամփան բռնի մթության ու խավարի մեջ, միանշանակ կմոլորվի ու կկորցնի այն, կշեղվի նպատակակետից: Ընդո-րում անհերքելի կդառնա խելքի ու բանականության դերն ու անհրաժեշ-տությունը: Հարցն այստեղ բանականության ու գիտության մասին է, որոնք ինչպես դժվար չէ կռահել, լրացնում են միմյանց, որոնք ձեռքբերո-վի հատկություններ են, այլ ոչ՝ ի վերուստ տրված: Լուսավորություն, որն անխափան լույս է տալիս ու որն անշուշտ լուսավորում է մարդու կյանքն ու նրա շրջապատը, նրան տալով կողմնորոշվելու հնարավորություն, և շիտակ ճամփան գտնելու ու նպատակակետին հասնելու միջոցներ:

Բայց մի՞թե մարդու գիտակցությունը, կամքն ու խելքը բավական են, հաղթահարելու և մասամբ տիրապետելու մարդկային բոլոր ցանկու-թյուններին ու կրքերին: Բնականաբար՝ ոչ: Այն պարզ պատճառով, որ մարդն ի ծնե ու բնազդաբար հետևում է իր ցանկություններին ու անձնա-կան շահերին, հետևաբար նա այնքանով է հետևում կամքի ու խելքի թե-լադրանքին, որքանով որ նրանք չեն հակասում և նպաստում են ի-րենց ցանկությունների իրականացմանը:

Այստեղ է, որ եթե չլինեն մարդու ցանկություններից առավել շահավետ ու խթանիչ երևույթներ, նրա կամքն ու բանականությունն անկարող կլի-նի որևէ փոքրիկ քայլ կատարել: Սա այն է, ինչը կոչվում է՝ «հավատք», այն միակ երևույթը, որն ընդունակ է և՛ մարդուց մասամբ հեռացնել շա-համոլությունը, և՛ նրան պարզել իր սեփական ,եսեից դուրս այլ նպա-տակներ ու ցանկություններ տեսնելու, և՛ նպատակներ ունենալու ու նրանց ծառայելու ունակություն: Միայն այդ ժամանակ է, որ նրա խելքը

կարողանում է նրա ողջ տւթյանը առաջնորդել դեպի այն փայլուն ուղ-  
ղությունը, որն էլ խելքի ու առողջ բանականության լույսն է: Երբ մարդ  
լույսը ձեռքին է քայլում խավար ճանապարհով, բնական է, որ լույսը  
նրան չի հուշում այս կամ այն կողմ գնալու մասին, այն պարզապէս լու-  
սավորում է իր ընտրած ուղին:

Չենք ցանկանում շեղվել մեր այսօրվա քննարկման բուն թեմայինց՝  
կամքի դաստիարակման ու զարգացման խնդրից, չնայած սրանք ևս  
անհրաժեշտ լուսաբանումներ էին: Չենք այսքանն էլ բավական էր հա-  
մոզվելու համար, որ աշխարհում գոյություն չունեն այնպիսի դպրոցներ,  
որոնք հերքեն մարդու կամքի զարգացման ու դաստիարակման անհրա-  
ժեշտության փաստը: Եիշտ այնպէս, ինչպէս մանկանը դաստիարակելիս  
անհրաժեշտ է սկզբնական շրջանում զարգացնել նրա կամքի ուժը:

### Աղոթք և պաշտամունք

Աղոթքն ու պաշտամունքը նմանապէս այն հիմնական հարցերից են,  
որոնք մարդու յուրահատուկ առանձնահատկութիւններն են համար-  
վում (մի շարք հոգեբանների կարծիքով): Այս կապակցությամբ ծագած  
առաջին հարցն այն է, թե արդյո՞ք աղոթելու և պաշտամունքի ցանկու-  
թյունը մարդու մոտ առկա է բնագոյարար՝ ի ծնե, թե՞ դրանք մարդկային  
այլ ցանկութիւնների ու պահանջների ծնունդ են: Գիտենք այն մասին, որ  
բազմաթիվ հետազոտողներ ու հոգեբաններ, այն համարել են մարդուն ի  
վերուստ տրված զգացում: Սրանից տասներկու տարի առաջ ինժեներ  
Բայանին, որին մենք միայն անվամբ ենք ճանաչում, ինժեներ Բազար-  
զանիի հանձնարարությամբ թարգմանեց և «Սաքթարե Թաշայո»<sup>31</sup> տա-  
րեգրքի առաջին համարում հրատարակեց մի հոդված՝ «Կրոնական  
զգացում, թե՞ չորրորդ զգայարան»: Սրա բուն թեման նույնն էր, ինչը  
մենք քննարկում ենք այժմ: Հոդվածի հեղինակն այնտեղ բացատրում է,  
որ մարդկային հոգին լինելով զուտ մարդկային (չհաշված նրա անասնա-  
կան կրքերն ու ցանկութիւնները), իր տւթյամբ ունի մի քանի առանձին  
տարրեր ևս: Այլ կերպ ասած՝ նա ունի մի քանի հատկանշական բնագո-  
ներ, որոնք առկա չեն մնացած այլ կենդանիների մոտ: Նա այս բնագոնե-  
րը ներկայացրել էր որպէս մարդու տւթյանը յուրահատուկ զանազան  
«առանձնահատկութիւններ», որոնցից են օրինակ՝ գիտության կամ  
իմաստասիրության ձգտումը: Անկախ այն բանից, որ գիտելիքներ կու-  
տակելն անհրաժեշտ ու շահավետ է մարդու համար, նրա միջոցով մարդ  
բացահայտում է նաև կյանքի ու բնության բազմաթիվ գաղտնիքները:  
Հետևաբար, այն հաճելի ինքնագոհացման զգացում է պարզևում նրան:  
Ավելին՝ նա անկասկած իրականության բացահայտումն ու նրա գաղտ-  
նիքների վեր հանելը ցանկանում է ոչ միայն իր, այլ հենց իրականության  
բացահայտման համար: Երբ մի գիտնական նոր բացահայտում կամ մի  
գյուտ է անում, նույնիսկ այն դեպքում, երբ այն կապ չունի միայն մարդ-  
կային կյանքի կամ առհասարակ երկիր մոլորակի ու տիեզերքի հետ,  
միևնույն է, դարձյալ մարդ ցանկանում է այն ճանաչել ու սովորել, քանի

31- Եիա ուղղութիւն (թ):

որ նրա համար սովորելն ու տեղեկացված լինելը լուսավորություն է, իսկ տգիտությունը՝ խավար: Մարդն ի ծնե ծգտում է լուսավորությանն ու փախչում է խավարից:

### Աբու Ռեյհանն ու իսլամական իրավագետը

Աբու Ռեյհան Բիրունիից մի պատմություն է մեզ հայտնի: Սի իսլամական աստվածաբանության ջատագով պատմում է. «Լսելով, որ Աբու Ռեյհանը սաստիկ հիվանդ է, որոշեցի գնալ նրան տեսության: Մահամերձ էր, սակայն գիտակցությունը տեղն էր: Մահճի մեջ պառկած՝ աչքերը բացեց ու Արասի աստվածաբանական ուսմունքի մասին սկսեց ինձ ինչ-որ հարցեր ուղղել: Մաստիկ զարմացա, թե նման պահին, պատե՞հ է արդյոք նման հարցը»: Ասացի. «Այս պահին ի՞նչ ես հարցնում»: Հիվանդը պատասխանեց. «Ավելի լավ չէ՞ հարցիս պատասխանը իմանամ, հետո՞ մեռնեմ, քան թե այն չիմացած, շունչս փչեմ: Ես գիտեմ, միևնույն է մեռնելու եմ, սակայն նախընտրում եմ հարցիս պատասխանն ստանալուց հետո հեռանամ այս աշխարհից»: «Ես իսկույն նրա հարցին պատասխանեցի ու հեռացա: Ոտքս տան շեմից հագիվ էի դուրս դրել, երբ ականջիս լաց ու կոճի ձայներ հասան: Աբու Ռեյհանն արդեն վախճանվել էր»:

Նրա նշած մարդկային առանձնահատկություններից է բարոյականությունը: Խոսքը մարդկային վեհ զգացմունքների ու այլոց բարություն անելու հատկության մասին է: Այս հատկանիշն էլ նրա համար մի կարևոր երևույթ է: Մյուս կարևորագույն առանձնահատկությունը գեղեցկությունն է, որը նույնպես մարդու համար կարևոր նշանակություն ունի: Նրա նշած մարդկային առանձնահատկություններից է նաև աղոթքի ու պաշտամունքի ծգտման հատկությունը: Այս ուղղությամբ բազմաթիվ մտավորականներ են արտահայտվել, հանձինս Ուիլիամ Ջեյմսի, որն անչափ կարևորում է հիշյալ թեման, և որի «Կրոն և հոգի» գիրքը մեր ընկեր Մահդի Ղայնին թարգմանել է: Ես՝ անձամբ այդ գիրքը հրատարակվելուց հետո չեմ տեսել, սակայն նախքան հրատարակելը հեղինակը բերեց, և ես այն կարդացի: Իրոք շատ հիանալի գիրք էր, և այս հոգեբանը շուրջ երեսուր տարի շարունակ ուսումնասիրել է կրոնի արգասիք հանդիսացող հոգեկան իրավիճակներն ու ի վերջո հանգել այն համոզման, որ կրոնական զգացմունքները օժտված են իսկությամբ ու անաղարտությամբ:

Սա անկասկած մարդկային զգացում է, և եթե մենք ծգտում ենք մարդու կատարյալ դաստիարակությանը, անհրաժեշտ է նրա մեջ զարգացնել տվյալ առանձնահատկությունը և: Հնարավոր չէ որ կատարյալ, կամ նույնիսկ կիսով չափ կատարյալ մարդկանց մոտ լիովին բացակայեն այդ զգացումները: Մարդկային էության բաղկացուցիչ երկու մասերի՝ և՛ նրա և անասունների համանման բնազդների ու հատկությունների, և՛ զուտ մարդկային՝ հոգևոր արժեքների բացակայության դեպքում, մարդն այլևս կդադարի կատարյալ լինելուց, և այլևս կդառնա անկատար ու արատավոր մի էակ: Այս կապակցությամբ էլ, ակնհայտ է Ղուրանի կողմնորոշումն ու նրանում աղոթքի ու պաշտամունքի չափազանց կարևորումը: Գաղտնիք չէ, որ ցանկացած կրոնական ուսմունքի գերակշիռ մասը

հիմնվում է աղոթքի վրա, որը ոչ միայն երբևէ չի բացակայում, այլ հոգևորականների ու կրոնի քարոզիչների կողմից անգամ չափազանցությամբ է հասցվում:

### Ի պատասխան մի նկատողության

Պաշտամունքի խնդրի հետ կապված կա մի այլ հարց ևս, որին նույնպես անհրաժեշտ է անդրադառնալ: Հնարավոր է, որ մեկն ասի, թե կրոնական ուսմունքների մեջ (նմանապես իսլամում, որն այժմ մեր քննարկման թեման է, ու որի մեջ պետք է մշակված ու զարգացած լինեն աղոթքի ու պաշտամունքի զգացումը) դարձյալ բացակայում է անհրաժեշտ հոգածությունը: Այն պաշտամունքը, որի մասին խոսվում է կրոնների մեջ, դա աղոթելու հոգեբանության հետ չի առնչվում, այլ ազահության, որի դեմ պետք է պայքարել: Կամ էլ սարսափի ու վախի զգացողության, որոնց դեմ նույնպես հարկավոր է պայքար մղել: Սակայն պաշտամունքը կրոնի մեջ առհասարակ առևտրի կերպարանք է ստացել: Նրանք ստիպում են մարդկանց աղոթել, միայն ետմահու կյանքում Աստծու արքայությանը արժանանալու և դժոխքից խուսափելու նպատակով: Իսկ եթե մեկն աղոթում է միայն դրախտին արժանանալու ակնկալիքով, ապա ո՞րն է այդ «դրախտ» կոչվածը: Դրախտն այն վայրն է, ուր առկա են բոլոր հրաշալիքները՝ փերիներ, դոյակներ, արքայական մրգեր ու ուտեստներ, չարբեցնող ու չարաշահվող զինիներ ու բազմաթիվ այլ աննկարագրելի հաճույքներ: Սակայն, եթե մեկը հանուն դրախտի ու արքայական վայելքներով լի կյանքի հրաժարվում ու աչքաթող է անում աշխարհիկ կյանքն ու նրա բոլոր վայելքներն ու հրաշալիքները, նա ոչ միայն բարեպաշտ չէ ու նրա մոտ առհասարակ զարգացած չէ պաշտամունքի զգացումը, այլև խիստ նյությապաշտ է ու հաշվենկատ: Նա պարզապես հաշվարկում է, որ եթե ցանկանա երկրային իր երեսուն-քառասուն տարիների կյանքն անց կացնել նյութեղեն հաճույքները վայելելով, միևնույն է, դրանք մի օր ի վերջո սպառվելու են: Ուստի մտածում է հնարավորինս դիմանալ ու այս անցողիկ կյանքն ապրել՝ զերծ մնալով աշխարհիկ հաճույքներից: Իսկ այնուհետև, այս կյանքում բաց թողածն ու կորցրածը բազմապատկորեն ստանալ հանդերձյալ կյանքում:

Դժվար չէ կռահել, սակայն, որ այստեղ, նրան խթանում ու առաջնորդում են ազահությունն ու որկրամոլությունը: Նույնը կարելի է ասել այն անձանց մասին, ովքեր դժոխքից փրկվելու հույսով, խուսափում են մեղքեր գործելուց: Նրանք բարեպաշտորեն աղոթում են, հրաժարվում աշխարհիկ կյանքի հրաշալիքներից, միայն ետմահու՝ Աստծու վերջին դատաստանում դրանց համար փոխհատույց լինելու համար, որը նույնպես շահամոլության սահմաններից դուրս չէ:

Ինչպես նկատեցինք, կրոնական ուսմունքները աղոթքի ու պաշտամունքի հոգեբանական արժեքը երբեմն իրոք անուշադրության են մատնել: Այս կապակցությամբ, հատկապես քրիստոնյաներն են մեղադրել իսլամին, ասելով, թե իբր Դուրանում մեծ տեղ ու ուշադրություն է հատկացվել նյութական վայելքներին ու բարիքներին: Նրանք իրենց մեկնաբա-

նություններում նկատում են, թե իբր իսլամի ուշադրությունն ամբողջությամբ սևեռված է հանդերձյալ կյանքի հրաշալիքների վրա, և աչքաթող են արվել պաշտամունքն ու աղոթքը, որոնք «հոգեբանորեն» բարձրագույն զգացողություններից են համարվում: Իբր իսլամում առավել ուշադրության են արժանացել մարդուն ազահության մղող թեմաները:

Մական սա անշուշտ անընդունելի մի դիտողություն է: Նախ այն պարզ պատճառով, որ իսլամի տեսակետից պաշտամունքն ունի տարբեր կտրվածքներ, որոնցից միայն մեկն է ճշմարիտ պաշտամունք՝ Աստծո արքայությանը արժանանալու տենչը և դժոխքից խուսափելը: Մական այս բոլորից վեր են դասվում պաշտամունքի այն տեսակները, երբ մարդուն պատակը ոչ դրախտն է, ոչ էլ՝ դժոխքը: Այս կապակցությամբ բազմաթիվ են սուրբ Ղուրանի խոսքերը, որոնք բազմաթիվ անգամներ կրկնվել են Մոհամադ մարգարեի, ինչպես նաև Իմամների արտահայտած մտքերի մեջ: Դրանցից ամենանշանավորը Նահջ -օլ-Բալադեի մեջ արտահայտված մի նախադասությունն է, որը նշվել է նաև մարգարեի և Իմամ Մադեդի խոսքերի մեջ: Ամեն դեպքում դա այսօրվա խոսք չէ: Սեյեդ Ռեզիի կազմած Նահջ -օլ-Բալադեից արդեն անցել է հազար տարի, էլ չենք խոսում Իմամ Ալիի ժամանակաշրջանի մասին: Նա ասում էր. «Մի խումբ մարդիկ պաշտում են Աստծուն՝ դրախտի ակնկալիքով: Այս պաշտամունքն ասես առք ու վաճառք է Աստծու հետ: Նրանք այս աշխարհում աշխատում են, հանդերձյալ կյանքում դրա արդյունքն ստանալու համար:

Մի այլ խումբ պաշտում ու աղոթում է Տիրոջը՝ դժոխքի սարսափից ելնելով: Սրանց պաշտամունքը նմանվում է այն գերիներին, որոնք իրենց տերերի մտրակի հարվածների սարսափից են աշխատում: Իսկ մի այլ խումբ պաշտում ու երկրպագում է Աստծուն ոչ դրախտի ակնկալիքով, ոչ էլ՝ դժոխքի սարսափից, այլ երախտապարտության զգացումից ելնելով: Նրանք պարզապես ճանաչում են իրենց Տիրոջը և համոզված են, որ կյանքում ամեն ինչ Աստծուց են ստանում, ուստի միշտ երախտագիտությամբ շնորհակալ են նրանից: Ուրեմն նրանց աղոթքն ու պաշտամունքը զուտ Աստծու նկատմամբ երախտագիտության զգացումից է բխում, և անկախ դրախտի ու դժոխքի գոյությունից նրանք դարձյալ երախտապարտորեն կաղոթեն ու կերգրպագեն իրենց Տիրոջը: Մա իրոք հավատացյալների ազատ պաշտամունքն է»<sup>32</sup>:

Առաջին խմբին պատկանող մարդիկ իրենց շահախնդրության գերին են, երկրորդ խմբի մարդիկ՝ իրենց սարսափի գերին, իսկ երրորդ խումբը՝ զերծ է շահի, սարսափի ու ցանկացած այլ տեսակի դրդապատճառներից: Նրանք պարզապես Աստծու հավատացյալներն ու նրա հնազանդ զավակներնը:

### Մոհամադ մարգարեն ու պաշտամունքը

Այս թեմային առնչվող մի հայտնի հադիս կա, որն անկասկած ծանոթ է բոլորիդ: Աստծու մարգարեն՝ Մոհամադը, գիշերները հաճախ անց էր կացնում աղոթելով ու սուրբ Ղուրանի ստուգաբանմամբ: Գիշերվա եր-

32- Նահջ-օլ - Բալադե, 229-րդ Յեքմաթ, չնչին տարբերությամբ:



բեմն երկու երրորդը, երբեմն կեսը և երբեմն էլ մեկ երրորդն անվերջ աղոթում էր: Այիշեն նկատում է, որ նա ողջ գիշեր հոտնկայս անց է կացնում աղոթքով ու հարթմնի՝ այնպես, որ նրա ոտքերն ամբողջությամբ այտուցվել են: Ուստի ասում է. «Դու ինչո՞ւ ես այսքան աղոթում, չէ որ Աստված քո մասին ասել է. «Որպեսզի Աստված ների քեզ վերագրող անցած և ապագա մեղքերը- և քո ճշմարտացիությունը ապացուցել է»<sup>33</sup>, չէ որ նա երաշխավորել ու ապահովել է քեզ: Մարգարեն պատասխանում է. «Արդյո՞ք աղոթքներն ու պաշտամունքը կատարվում են միայն դժոխքի սարսափից ու դրախտի ակնկալիքով: Մի՞թե ես Աստծու երախտապարտ զավակը չպիտի լինեմ»:

Պաշտամունքի հոգևոր արժեքի մասին ասված մարգարեի արտահայտություններից են նաև. «Մարդկանցից լավագույնները նրանք են, ովքեր սիրում են աղոթելն ու Աստծո պաշտամունքը»<sup>34</sup>:

Նա նաև ասում է. «Երնեկ նրան, ով սիրում է աղոթելն ու աղոթքը», նրա սիրելանը՝ սիրած էակն է: «Ամբողջ սրտով սիրի», և ամբողջ մարմնով փարվի ու հավի նրան»:

Նշանակում է, որ պաշտամունքը, դա միայն աղոթքի բառերն արտասանելը չէ, այլ գործողությունն ամբողջությամբ վերցրած՝ ծնրադիր աղոթելը, երկրպագելը, պաշտելը: Այս ինքնին մի տեսակ սիրո նվիրում է, ինքնամաքրում՝ աղոթքին լիովին տրվելու համար, ինքն իրեն մաքրելու և ամեն բանից ձերբազատվելու հնարք: Ուրեմն, երբ հավատացյալը կանգնում է աղոթելու, այլևս ոչ մի միտք, ոչ մի հուշ, ոչ մի այլ թեմա չպիտք է առաջանա նրա հոգում: Նա պիտի լինի միայնակ, ինքն իր Աստծո հետ, սիրտը դատարկի միայն իր Աստծու համար: Սա է աղոթքի իրական ոգին: Պաշտամունքի ոգին Աստծու անվան հիշատակումն է (զեքրը), այսինքն Աստծուն հիշել, աշխարհից ու կյանքից կտրվել, աղոթքի պահին հեռանալ Աստծուց զատ գոյություն ունեցող ցանկացած այլ առարկաներից ու մտքերից և միայն լինել Աստծու հետ: Ասես Աստծուց բացի այս աշխարհում ոչ մի այլ բան գոյություն չունի: Սա հենց այն զգացմունքն է, որը միստիկ բանաստեղծները «ներկայություն» են անվանել: Հաճեզն ասում է.

**Ոչ Հաճեզին Աստծո հետ մենության ուսուցման ներկայություն,  
Ոչ գիտնականին՝ հավաստի գիտություն:**

33- Դուրան, 48, 2:

34-Իսլամական մեկնությունների մեջ շատ սակավ ենք հանդիպում ,սերե արտահայտությանը, որի հետևանքով, ոմանք կարծում են, որ ընդհանրապես հարկավոր չէ կիրառել ,սերե բառը, և նույնիսկ բանաստեղծությունների մեջ կարելի է այն փոխարինել ,բարությունե, ընկերությունե, կամ նման այլ տերմիններով: Սակայն, ոմանք այն կարծիքի են, որ ,սերե բառը չնայած սակավ, այնուամենայնիվ կիրառվել է բոլոր կրոնական բնագրերում, ինչպես նաև հենց այստեղ, որտեղ ես մատնանշեցի: Մյուս օրինակը, այն հայտնի արտահայտությունն է, համաձայան որի, երբ Իմամ Ալին վերադառնում էր Սեֆեդյեի ճակատամարտից, կամ մեկնում էր այնտեղ (կասկածում եմ), հասնելով Քյարբալա, վերցնում է մի բուռ հող, այն շնչում, ապա ասում է, ,երնեկ քեզ, ով հող: Սա այն տեղն է, որտեղ բեռներ են թոթափվում: Բոլոր հեծյալները, որոնք հասնում են այստեղ, վայր են դնում իրենց բեռները: Սա սիրո օրօրոցն է: Ապա, Իմամն իր խոսքը շարունակում է այնպիսի նախադասություններով, որոնցից դժվար չէ կռահել, թե խոսքը Քյարբալայի անցքերին է վերաբերվում:

Հաֆեզն այսպես կոչված «ներկայությանն» ու Աստծու հետ սրտանց առանձնանալուն մեծ ուշադրություն է դարձրել: Երբ բարեպաշտ մարդիկ կարևորում են առանձնանալն ու մենության մեջ աղոթելու հանգամանքը, դա միայն սկիզբն է Աստծո հետ հոգով առանձնանալու համար: Եվ երբ հասնում է այդ պահը, նրանք պարտավոր են վերադառնալ հասարակության մեջ և ստանձնել իրենց հասարակական պարտավորությունները, սրտի խորքում միշտ միացած մնալով իրենց Աստծուն: Կարծեմ Նապոլեոնն է ասել, «Իմ ուղեղը դեղագործի արկղիկներին է նման, որն ուզեմ դուրս կբերեմ, իսկ որն ուզեմ կփակեմ»: Մարդ պետք է կարողանա այդպես լինել: Այսինքն, աղոթքի ժամանակ մտովին առանձնանալիս Աստծո հետ:

**Այն եմ խորհում, որ եթե կարողանամ,  
Այնպիսի գործ անել, որ տրտմությունն անցնի:  
Հոգու հետ մենության պահին ավելորդ խոսքի տեղ չկա,  
Հենց որ սատանան դուրս գնա, հրեշտակը ներս կմտնի:**

Այնուհետև բանաստեղծը զանգատվում է -և գուցե անգամ զանգատվում ինքն իրենից-, ժամանակ առ ժամանակ իր օրերի հեքիմներին այցելելու համար, ապա ավելացնում է.

**Տիրակալների խոսքը ամենաներկար գիշերվա խավարին է նման,  
Արեգակից լույս պահանջիր, այն ե՞րբ է բույր տարածում:  
Աշխարհի անգութ տերերի դռանը,  
Ո՞րքան նստես, որ վերջապես տերը դուրս գա:**

Սրանք «մուրացկանություն» բառը հաճախ են կիրառում, որի նպատակն անշուշտ աղքատի մուրացկանությունն է կատարյալ մորշեղի մոտ, նրա, ով իրական աղքատ է՝ կատարյալի մոտ: «Աղքատ» Աստծո նկատմամբ: Սակայն, քանի որ նրանք հավատացած են, որ մարդն առանց ուսուցչի ոչ մի տեղ չի կարող հասնել, ուստի և «մուրացկան» ասելով, նկատի ունեն կատարյալ մարդու մուրալը: Բանաստեղծը դարձյալ դժգոհում է.

**Կատարյալին ձգտիր, որպեսի գանձ գտնես,  
Ձգտիր այն ուսուցչին, որը կանգնած է ճամփիդ վրա:  
Արդարն ու ազնիվն իրենց ունեցվածքը թողեցին,  
Որպեսզի Տիրոջ հաճությանն արժանանան:  
Սիրահար սոխակ, դու կյանք ցանկացիր, քանզի ի վերջո  
Այգին կանաչով կպատվի ու ծաղիկները երևան կգան:**

Ամեն դեպքում, «Երնեկ նրանց, ովքեր աղոթելիս աշխարհից կտրվում են ու առանձնանում իրենց Աստծու հետ», վայելում իրական մեկուսացման պահը: Հայտնի է. «Եթե մարդը հասնի այդ պահի զգացողությանը, կյանքում ցանկացած դժվարություն կհեշտանա ու ցանկացած թուլու-

**թյուն կվերանա»<sup>35</sup>**: Այսինքն, ով հասնի այդ աստիճանին ու հոգեկան այդ գերագույն հաճույքին, կյանքում առկա բոլոր ցավերն ու տանջանքները նրա համար անկարևոր կդառնան: Եթե անգամ նրան խոշտանգեն ու չարչարեն, եթե անգամ ցանկանան ճգմել, բացարձակ կարևորություն չի տա այդ ամենին: Աշխարհի ցավն ու տրտմու-թյունը նրանց համար է հույժ կարևոր, ովքեր երբևէ չեն արժանացել աղոթքի գերագույն հաճույքին: Այս հարցում զարմանալի է Ալի եբն Աբի Թալեբը, որն անդրդվելի էր իր կյանքում, չնայած մենք հստակ չգիտենք, թե նա իր աղոթքների ու պաշտամունքի մեջ ինչ մակարդակի ու աստիճանի էր հասել: Սակայն նրա կյանքում առկա բոլոր դժվարություններն ու ցավերը նրա համար բացարձակ անկարևոր էին:

### Իմամ Ալին և աղոթքի ոգին

Այս մտքերն արժարժեցուց մենք հետապնդում էինք այն նպատակը, որ ապացուցենք թե իսլամական բնագրերի մեջ ինչպիսի հույժ կարևորություն է տրվել Աստծու պաշտամունքին և աղոթքի միջոցով Բարձրյալի հետ հաղորդակցվելուն: Այսինքն այն ամենը, որոնք միասին վերցրած կազմում են մարդու և Աստծու կապը, Արարիչի նկատմամբ տածած սերը, աշխարհիկ մտքերից ու ցանկություններից կտրվելը, դրանցից ձերբազատվելը և Նրան միանալու ցանկությունը, որն անկասկած կատարյալ պաշտամունք է համարվում: Եվ մեր արտաբերած երկու-երեք հարյուրներն էլ սույն միտքը պարզաբանող լույ մի քանի ապացույցներ էին, չնայած նրանց քանակը շատ ավելին է: Բազմիցս լսել ենք Իմամ Ալիի, մեզ քաջ հայտնի հետևյալ խոսքերը. «Աստված իմ, քեզ չպաշտեցի դրախտիդ հավակնությունից, կամ դժոխքիդ սարսափից, քեզ պաշտեցի քանզի քեզ պաշտամունքի ու երկրպագության արժանի գտա»<sup>36</sup>:

«Քոմեյլի» աղոթքն սկզբից մինչև վերջ, հենց մեր նշած պաշտամունքն է՝ բառիս բուն իմաստով: Այս աղոթքի ողջ ընթացքում ոչ դրախտ ենք տեսնում, և ոչ էլ՝ դժոխք: Եթե անգամ նկատվում են դրանք, ապա կողմնակի՝ այլ խնդիրներ արժարժեցուց նպատակով միայն: Իսլամական աղոթքներն առհասարակ, նույն մակարդակում չեն գտնվում, քանի որ բոլոր մարդիկ միանման չեն աղոթում, ունեն հրաշալի բովանդակություն: Այդ հիանալի ու բովանդակալից աղոթքներից է, օրինակ «Մոնաջաթե շաբանիեն»<sup>37</sup>, որի մասին խոսվել է անգամ «Սաֆաթիի» գրքում: Սանրապատումը, պատմում է, որ հիշյալ աղոթքը կարդում էր ինքը՝ Իմամ Ալին և այլ Իմամներ: Սա Իմամների դիրքին պատկանող մի աղոթք է, կնշանակի թե այն շատ բարձր մակարդակի աղոթք է: Երբ դա կարդում ես, նոր ես կռահում, թե իսլամի մեջ ի՞նչ է նշանակում աղոթքի ոգի: Այնտեղ միստիցիզմից ու Աստծու նկատմամբ սիրուց, Բարձրյալից զատ ամեն բանից կտրվելուց ու ձերբազատվելուց, մի խոսքով՝ հոգևոր արժեքներից զատ ուրիշ բան չեք գտնի: Աժեքներ ու մեկնաբանություններ, որոնց պատկերացումն անգամ մեզ համար շատ խրթին է:

35- Օսուլե Բաֆի, 3 լլ, էջ 83:

36- Բահար-օլ-Անվար, 3 լլ, Սաս 101, էջ 14: Չնչին տարբերությամբ:

37- Շաբանիեյի աղոթքը (թ):

«Արու Չամգեի» աղոթքն էլ այդպիսին է: Կա նաև տասնհինգական մի աղոթք՝ Իմամ Ջեյն-օլ- Աբեդինից, որը հայտնի է որպես «Խամսաթ Աշառա»: Իսկ «Մաֆաթի» գրքում են գտնվում «Մոնաջաթե Խաեֆինում»<sup>38</sup>, «Մոնաջաթե զաքերին»<sup>39</sup>, «Մոնաջաթե թալեբին»<sup>40</sup> և այլն... որոնց զգացմունքայնությունն ու խոր բովանդակությունը ապշեցնում են ընթերցողին:

Այս մասին չափազանց շատ է հիշատակվել նույնիսկ Նահե Ալ Բալադե գրքի մեջ: Դրանցից մեկն այժմ հիշեցի, որը կցանկանայի ընթերցել ձեզ համար, որի մեջ առկա է Իմամ Ալիից Քոմեյլին ուղղված մի շատ հայտնի նախադասություն: Աշխարհում մարդիկ երեք հիմնական խմբերի են պատկանում. ոմանք չափազանց խելացի են, շատ լավ են ըմբռնում ու կռահում իրենց լսածը, սակայն նրանք վստահելի անձինք չեն, ուստի սրանց կարգում են «մաթամեների», այսինքն աշխարհը կառավարող մարդկանց շարքին: Մյուս խմբին պատկանող մարդիկ, բարի են, լավն են ու վստահելի, սակայն նրանք անխելք են ու հիմար, ինչքան էլ խորհուրդ տաս նրանց, միևնույն է՝ ի վերջո գիտելիքդ ու իմացածդ հետդ հողին ես հանձնելու: Ահա թե ինչո՞ւ է Իմամն ասում, որ իր խոսքերն հայտնելու համար համապատասխան մարդկանց չի գտնում: Այնուհետև բոլորին չիուսահատեցնելու համար ավելացնում է. «աշխարհում կան մի խումբ ընտրյալ մարդիկ, որոնց միջոցով Աստված իր շունչն ու բարոյական արժեքները ցանում, ապա հնձում է արժանի մարդկանց սրտերում»<sup>41</sup>: Այնուհետև հիշյալ խմբին պատկանող մարդկանց մասին այսպես էր արտահայտվում. «Գիտությունն իր տեսանելի իրականության կերպարանքով է ի հայտ եկել նրանց մեջ»: (Բնականաբար խոսքը նրանց բնատուր խելքի մասին է, այլ ոչ շրջապատից սերտած գիտելիքների):

### Մահմեդական, կա՞մ՝ բազմակողմանի մարդ

Չարկ ենք համարում անդրադառնալ հույժ կարևոր մի խնդրի ևս, այն, որ այս հրաշալի իմաստաբանական ուսմունքը, այսպես կոչված միստիկական տերմինները, այսօր՝ մեր օրերում թերի ու սխալ են դասավանդվում, և համաձայն մեր ժամանակների մեկնաբանությունների դրանք համարվում են «արտաքին աշխարհից փախուստ», որոնց արմատներն անզամ խորանում են նույն խնդրի խորքերում: Այս կապակցությամբ առկա են նաև մի շարք անհեթեթ մեկնաբանություններ, համաձայն որոնց, երբ մարդիկ հիասթափվում կամ հուսախաբ են լինում արտաքին աշխարհից, կամ այսպես կոչված՝ դոսից, նրանք մեկուսանում, ընկղմվում ու սուզվում են իրենց ներաշխարհի, սեփական մտքերի մեջ՝ ապավինելով իրենց «ես»-ին: Դա ճիշտ չէ: Ընդունում ենք այն, որ հնարավոր է, ոմանք շեղվել են իրենց շիտակ ուղուց, և գուցե հենց նման դեպքերն էլ առիթ են հանդիսացել, որպեսզի նրանք խուսափեն նաև իրենց հասարակական պարտավորություններից: Սակայն իսլամ դավանող մարդը՝ դա

38- Աստվածավախ մարդկանց աղոթքը (թ):

39- Աստծու անունն արտասանողների աղոթքը (թ):

40- Աստծուն որոնողների աղոթքը (թ):

41- Նահե-օլ-Բալադե, Չեքմաթ 147:

բազմակողմանի մարդն է:

Մենք միշտ պետք է ընդօրինակենք Իմամ Ալիին, նրան, ով իր միստիկ մենության մեջ ինքնամփոփ էր, իսկ իր հասարակական ու քաղաքացիական պարտականությունների ու պատասխանատվությունների նկատմամբ չափազանց բժախնդիր ու ուղղափառ: Իսլամի համար, սա է ցանկալի մարդը:

Այս բոլորն ասում են լուկ այն նպատակով, որ երբևէ չմտածեք թե հնարավոր է հերքել նշված առանձնահատկություններից մեկը, կամ ասել, թե որևէ պարագայում պարտադիր չեն հասարակական պարտավորությունները: Ոչ: Կրկին ենք շեշտում՝ իսլամի ցանկալի մարդը՝ դա բազմակողմանի մարդն է: Սա մեր նշած մարդային բազմակողմանի հատկանիշներից ընդամենը՝ մեկն է, քանի որ ինչպես արդեն նշել ենք, մենք մարդուն միակողմանի, միատարր էակ չենք համարում, ուստի այս հատկանիշը համարում ենք նրա բազմաբովանդակ էության շերտերից միայն մեկը: Դենց իրենց՝ միստիկների բառերով ասած՝ անկատար մարդը նա է, ով դեռևս լիովին չի ճանաչում Աստծուն և միստիցիզմը, նա շեղվում է դեպի ոչ աստվածային այլ ուղիներ, սակայն երբ հասնում է իր հիմնական նպատակին ու հոգին լցնում աստվածայնով, ապա վերադառնում է իր սկզբնակետին: Նա վերադառնում, լիովին նվիրվում ու սրտանց ծառայում է նաև իր քաղաքացիական ու հասարակական պարտավորություններին, այլապես, եթե մեկը հեռանում, մոլորվում, ու այլևս չի վերադառնում, նշանակում է, որ նա դեռևս կատարյալ մարդ չի դարձել:

Երբ ոմանք համարում են, թե իսլամի մեջ աղոթքի ու պաշտամունքի ոգին անուշադրության են մատնվել, որը նշանակում է թե աղոթքի խորքում դրախտից ու դժոխքից բացի այլ բաներ չկան, մենք դա համարում ենք իսլամի հասցեին արված անհիմն ու անհեթեթ դիտողություն միայն: Ընդհակառակը, այս թեմայի հետ կապված չափազանց շատ են զուգահեռ թեմաները, որոնց մեկ առ մեկ անդրադառնալու դեպքում, ստիպված կլինենք երկու-երեք քննարկում հատկացնել այդ խնդրին:

### **Պաշտամունքի սուրբորդինացված շերտերը**

Այժմ անդրադառնանք այն պաշտամունքին, որը կատարվում է միայն դժոխքի սարսափից կամ դրախտի ակնկալիքով: Տեսնենք թե դա իրո՞ք անարժեք է, արդյո՞ք դա միայն հավակնություն է, փորապաշտություն, և հարյուր անգամ առավել ստոր ու պախարակելի քան նյութապաշտությունը: Ոչ, նման կերպ դատելը ճիշտ չէ: Անկասկած շահադիտական ակնկալիքներով կատարված պաշտամունքը չի կարելի, և հնարավոր էլ չէ նույնացնել իրական ու սրտանց կատարվող բարեպաշտի աղոթքի ու նրա հավատի հետ: Սակայն այն լիովին արժեզրկելն ու թերագնահատելը նույնպես արդարացի չէ, քանի որ մի շարք մարդկանց համար դա ինքնին գերագույն աղոթք կարող է համարվել:

Ակնառու տարբերություն կա այն գործողության միջև, որն ուղղակի կատարվում է որևէ հասութաբեր գործի ակնկալիքով, հատկապես, եթե այնտեղ նպատակակետն ուղղակի Աստված է: Երբ մի մարդ, ընկնում է

փողի ետևից, դա միանշանակ «փողապաշտություն» կարելի է անվանել, սակայն, կան պահեր, երբ նույն կարոտյալ մարդն այդ փողի մասին Աստծուց է խնդրում, դիմում է Աստծուն ու նրանից օգնություն հայցում: Սա լիովին այլ տարբերակ է: Այստեղ մարդն իր կապը Աստծու հետ չի խզում՝ միայն փողի ետևից վազելով, այլ ասում է. «Իմ Տեր Աստվածն ինձ համար մի շարք հրամաններ է արձակել, որոնց համաձայն ես այժմ աշխատում եմ: Ուստի և հենց իրենից էլ փող եմ խնդրում»: Սա ինքնին Աստծուն պաշտելու և աղոթելու աստիճաններից կամ այսպես կոչված՝ շերտերից մեկն է: Սա Աստծո հետ հաղորդակց-վելու միջոց է նույնիսկ այն դեպքում երբ դա փողի ակնկալիքով է արվում, դարձյալ առավել դրական է քան լիովին Աստծու մոտ չգնալը: Ան-կասկած Աստծու մոտ գնալն Աստծու համար չափազանց գնահատելի մի երևույթ է, անգամ եթե դա որևէ սպասելիքով է կատարվում, սակայն ամեն դեպքում, Բարձրյալին դիմելով ինչ-որ չափով լուսավորվում է մարդու հոգին: Նա մոտենում է իր Աստծուն, հեռանում ու կտրվում առօրյայից: Սա անկասկած պաշտամունքի ձևերից է, ինչքան էլ այն լինի թույլ ու տկար:

Պարզապես նման պաշտամունքները ևս չի կարելի միանշանակ պախարակել ու հերքել ու քանի որ աշխարհում ոչ բոլոր մարդիկ են պատկանում հոգևոր բաժր խավերին, ուստի և նման մարդկանց հոգևոր դաստիարակության համար անհրաժեշտ է նրանց մոտեցնել Աստծուն՝ նկատի առնելով նաև նրանց վարած աշխարհիկ կյանքը: Ուրեմն, հնարավոր է նրանց այս ճանապարհով Աստծուն մոտեցնել, կամ գոնե սկզբնական քայլերը այդ կերպ սկսել: Այնուհետև, հարկավոր է նրանց բարձրացնել ու մղել ավելի բարձր աստիճանների: Սա է նաև պատճառը, որ սուրբ Ղուրանում մեծ տեղ է հատկացվել նյութական աշխարհի հետ կապված հարցերին: Չնայած, Ղուրանում առկա է նաև հետևյալ արտահայտությունը. «Աստծո գոհացումն ու բավարարվածությունը, առավել է այս ամենից»<sup>42</sup>: Եվ երբ արտասանում են. «դրախտային այգիներ, որոնց ծառերի տակից առվակներ են հոսում»<sup>43</sup>, ապա անմիջապես շարունակում են. «Աստծո գոհացումն ու բավարարվածությունը, առավել է այս ամենից»: Ուրեմն, նա, ով ցանկանում է Աստծու գոհունակության համար Նրան երկրպագել, ապա նա կատարյալ հավատացյալ ու եզակի աղոթող է:

Բնական է, որ Ղուրանի «Աստծո գոհացումն ու բավարարվածությունը, առավել է այս ամենից» արտահայտությունը ոչ բոլոր մարդկանց է վերաբերում: Նրանք, ովքեր լիովին համապատասխանում են այս խոսքերի ողջ բովանդակությանը, ամբողջ մարդկության թվում՝ սակավաթիվ փոքրամասնություն են կազմում, իսկ մեծամասնության համար, հաճելի է այն պահը, երբ խոսվում է դրախտների ու նյութեղեն հաճույքների ու վայելքների մասին: Իհարկե, եթե նույնիսկ Ղուրանի մեջ նշվել են նման խոսքեր, դրանք պարզապես մարդկանց դաստիարակության համար են միայն: Ղուրանն ինքը նշում է, թե իր խոսքերի մեջ երբեք չկան սուտ ու անհիմն բառեր, անգամ բարի մտադրությամբ ասված ստեր, որ մտածեք թե

42- Ղուրան, 9: 72:

43- Նույն տեղում:

այս ամենն ասում է լոկ այն պատճառով, որ մարդկանց մղի բարիքներ գործելու: «Ոչ մի կեղծիք ոչ մի կողմից՝ ոչ առջևից և ոչ էլ ետևից»<sup>44</sup>, կնշանակի, թե անկարելի է, որ Աստծու խոսքի մեջ, անգամ եթե այն բարի նպատակով է ասված, լինեն անհեթեթ ու սուտ խոստումներ: Ոչ, Ղուրանի պատգամը դրախտի նյութական հրաշալիքների մասին զուտ իրականություն է: Առհասարակ ոմանք ընդունակ չեն այս նյութական հաճույքների ու մարմնական վայելքների մակարդակից վեր հառնել ու հենց այդ պատճառով էլ մնում են սահմանափակ հաճույքների ոլորտում: Իսկ նրանք, ովքեր կարողանում են այդ սահմաններից վեր բարձրանալ, նրանք ապրում են ֆիզիկական դրախտից ու նյութեղեն վայելքներից առավել վեհ ու վեր՝ լիարժեք մի արբեցողությամբ:

### Պաշտամունքի դերը դաստիարակության մեջ

Կարելի է եզրակացնել, որ եթե մարդ ցանկանում է իրեն ու իր զավակներին դաստիարակել իսլամական դաստիարակության չափանիշների համապատասխան, ապա պետք է կարևոր տեղ հատկացնի նաև պաշտամունքի՝ այսինքն Աստծուն աղոթելու և նրան երկրպագելու խնդրին: Ըստ էության, պաշտամունքը մարդու ողջ էությունը համակող մի երևույթ է, անկախ այն բանից, թե դա ինչպիսի դեր կարող է ունենալ դաստիարակության մեծն նուրբ, պատասխանատու և հիմունքային հարցում: Այդ պատճառով են թերևս մեծերը պատվիրել. «Ինչքան էլ որ զբաղված լինես, միևնույն է, օրվա ընթացքում գոնե մի ժամ ինքդ քեզ տրամադրիր»: Չնարավոր է ասեք, որ ոչ մի ժամ չունեք, և ձեր ամբողջ օրը ընթանում է մարդկանց ծառայելով: Ոչ, ինչքան էլ զբաղված լինեք, անգամ մարդկանց ծառայելով, միևնույն է դուք պետք է գոնե մի ժամ ինքներդ ձեզ հատկացնեք: Այս մի ժամը միայն ձեզ համար է և խիստ անհրաժեշտ է, սակայն այն բոլոր ժամերը, որոնք բացի ձեզանից՝ այլոց համար են, չնայած անհրաժեշտ են ու շատ օգտակար, սակայն չեն կարող այդ մի ժամվա տեղը լրացնել: Իհարկե ավելացնենք նաև, որ այդ նշված մի ժամը նվազագույնն է միայն, և անհրաժեշտ է օրվա մեջ մի կամ մի քանի ժամ հատկացնել սեփական անձին: Խորիել, ինքն իրեն դրսից ուսումնասիրել, սեփական հոգու խորքերը և ներաշխարհ թափանցել: Ընկղմվել մենության մեջ, մնալ իր «եսի» ու Աստծու հետ, ապա աղոթել, ապաշխարել ու մեղքերի թողություն հայցել: Այդ ապաշխարելն ինքնին նշանակում է ինքնաքննադատում: Այսինքն, մարդ քննում է, թե քսան և չորս ժամերի ընթացքում ի՞նչ գործեր է կատարել և նրա համար պարզ է դառնում թե որն է դրական և որը՝ բացասական: Դրականի համար փառք է տալիս Աստծուն, իսկ բացասականի՝ ապաշխարում:

Ղուրանը շատ է կարևորում ապաշխարության հարցը: Սոհամադ մարգարեի աշակերտները մի սքանչելի միտք են հայտնում նրա մասին, «Գիշերվա ճգնափորներն ու ցերկվա առյուծները»:

Ղուրանն ասում է. «Չենց նրանք, որ դժվարությունների առաջ և հնազանդության և մեղքից հրաժարվելու ճանապարհին դիմադրություն են

44- Ղուրան, 41: 42.

ցուցաբերում, ճշմարտախոս են, Աստծո առաջ խոնարհ են և հանուն Նրա ողորմություն են տալիս և ցայգալույսին ապաշխարում են»<sup>45</sup>: Տեսեք թե Ղուրանն ինչ բազմակողմանիորեն է քննում բոլոր հարցերն ու առկա բոլոր խնդիրները, և ոչ ծայրահեղության գնացող դերվիշների պես միայն ու միայն խոսում պաշտամունքի ու ապաշխարիության մասին: Երբ Ղուրանի մեջ հանդիպում ենք «Ալ-Սաբերին» արտահայտությանը, դա մեզ պատերազմների մասին է հուշում: Դրանք «համբերատարներն» են, որոնք դժվարությունների դեմ հնազանդություն և մեղքից հրաժարվելու ճանապարհին դիմադրություն են ցուցաբերում, կամ իրենց զսպող ու համբերատար մարտիկներին՝ պատերազմի դաշտում: Իսկ Ալ-Սադեդին են ճշմարիտներն են, որոնք, դույզն-ինչ չեն զլանում ճշմատության ու ուղղամտության մեջ: «Ալ-Ղանեթին» «խոնարհներն» են, ովքեր խոնարհաբար երկրպագում են իրենց Տիրոջը: Նրանք խոնարհ են ու հնազանդ, **«Յնազանդորեն ու համեստորեն հանուն Աստծո՝ ոտքի կանգնեք»**<sup>46</sup>, հնարավոր է ենթադրել, թե այն կիրառվել է նաև բառի այլ իմաստով՝ այդ պահին Աստծու հետ հաղորդակցվելու և այդ միջոցին Նրանից զատ ամեն ինչից և առհասարակ կյանքից լիովին կտրվելու իմաստով: «Ալ-Մոնֆեդին» «նվիրատվողներն» են, ովքեր իրենց ունեցվածքից բաշխում են նաև այլոց: Իսկ «Ալ-Մոսթաֆրեդին բե Ալ- Սահար» են կոչում նրանց, որոնք յուրաքանչյուր արևածագին աղոթում ու երկրպագում են իրենց Տիրոջը: Մի հատկանիշ, որն ընդմիշտ պետք է ուղեկցի նրանց:

## Զափավորության ուղին

Մենք չափազանցության մեջ ընկնող, կամ այլ կերպ ասած՝ ծայրահեղության գնացող մարդիկ ենք: Այսինքն, հենց հմայվում ենք մի երևույթով, կամ սկսում ենք հետևել մի ուղղության, ապա ծայրահեղությունների գիրկն ենք ընկնում: Ղուրանի սուրբ տողերն ասում են. **«Մուհամադը Աստծո առաքյալն է, և նրանք, ովքեր նրա հետ են՝ անհավատների նկատմամբ անզիջում և խիստ են, իսկ իրար հանդեպ՝ սիրալիր: Նրանց շարունակ կստեսնես ծնրադիր և երկրպագության մեջ ու շարունակ Աստծո գոհումակությունն ու շնորհն են աղերսում Նրանց նշանը երկրպագության հետևանքով առկա է դեմքներին: Սա նրանց նկարագիրն է Մովսեսի գրքում և նրանց նկարագիրն է Ավետարանում: Նրանք նման են ցանքսի, որ դուրս է արձակել իր ծիլերը, իսկ հետո այն սնուցել է, մինչև ամրացել և կանգնել է իր ոտքին և այնքան է բարգավաճել, որ ապշեցրել է մշակողներին: Սա նրա համար է, որ անհավատներին զայրույթ պատճառի»**<sup>47</sup>:

Սա մի չափազանց զարմանալի ու հետաքրքրի այսօր է: Այստեղ խոսքը Մուհամադի՝ Աստծո Մարգարեի և նրա հետ եղած և նրա կողմից դաստիարակած մարդկանց մասին է: Նրանց հասցեին շեշտած առաջին ածականը թշնամիների դեմ քաջությունն ու պայքարելու ուժն է: Նրանք **«անհավատների նկատմամբ անզիջում և խիստ են»**, սակայն «իրար հան-

45- Ղուրան, 3: 17:

46- Ղուրան, 2: 238:

47- Ղուրան, 48: 29:



**դեպ՝ սիրալիր են»:** Այս երկու հակամետ արտահայտությունները վերաբերում են հասարակության մեջ դրական և բացասական, այլ կերպ ասած՝ թշնամիների ու ընկերների նկատմամբ ունենցած նրանց վարքագծին: Այստեղ նաև, անհրաժեշտ է առանձնացնել թշնամի և բարեկամ հասկացությունները, որոնք ոչ թե անձնական չափանիշներով են արտահայտված, այլ՝ համամարդկային: Այս բառերին ամնիջապես հաջորդում են պաշտամունքի հետ կապված տողերը: Եթե դա այդպես չլիներ, Ղուրանն էլ կնմանվեր մեր օրերում հրատարակվող բազմաթիվ հասարակական դպրոցների և ուղղությունների քարոզչական գաղափարախոսությանը: Սակայն տեսնում ենք, որ վերոհիշյալ տողերից հետո, Ղուրանն անհապաղ խոսում է պաշտամունքի և աղոթքի մասին, անդրադառնալով նրանց, ովքեր **«ցայգալույսին ապաշխարում են»**, ավելացնելով՝ **«նրանց շարունակ կատեսնես ծնրադիր և երկրպագության մեջ»:** Վերը նշված՝ **«անհավատների նկատմամբ անզիջում և խիստ»** հավատացյալները, հենց նրանք են, ովքեր պատերազմի դաշտում առյուծ են դառնում: Հենց սրանք են առօրյա կյանքում և իրենց հասարակական հարաբերությունների մեջ բարի ու ողորմած, իրենց մենության մեջ ծնրադիր աղոթող: Նրանք Տիրոջ դեմ խոնարհվում են, Նրան երկրպագում և Նրանից զուր և ողորմածություն հայցում: **«Նրանց նշանը երկրպագության հետևանքով առկա է դեմքերին»**, նրանք անվեիջ Աստծու գոհունակությունն են փնտրում ու աղերսում՝ ասելով՝ **«Աստծո գոհացումն ու բավարարվածությունն առավել է այս ամենից»:** Այս գոհունակությունը ապացույցն է այն բանի, որ դրա մի կաթիլն անգամ վեհ է ամենաբարձր դրախտից: Այնուհետև, դարձյալ անդրադառնալով հիշյալ մարդկանց հասարակական ու կենցաղային դերին ու պարտավորությանը, օրինակ է բերում Աստվածաշնչյան առակը, համաձայն որի, ցանած հատիկը, սկզբում հողի տակից մի փոքրիկ ծիլ է տալիս, ապա՝ տերև, այնուհետև կամացկամաց աճում է ու մեծանում այնքան, որ բոլոր մշակներն ու սերմնացանները մնում են զարմացած: (Սա մատնանշում է իսլամական հասարակության աճն ու զարգացումը):

Ղուրանը դրսևորում է չափազանց բազմաբովանդակ ու բազմակողմանի շոշափված խնդիրներ: Կար ժամանակ, երբ մեր երկիրը գտնվում էր կաթվածահար իրավիճակում, երբ այնտեղ փորձում էին իսլամը տեսնել միայն որպես պաշտամունքի: Այն էլ ի՞նչպիսի պաշտամունք: Իրական մուսուլման դառնալու միակ չափանիշը մզկիթ գնալու և աղոթելու քանակությամբ էր հաշվարկվում, որն ասես մի հիվանդության էր վերածվել: Դրան հաջորդեց մի այլ հիվանդության ախտանիշ ևս: Ոմանք սկսեցին կարևորություն դարձնել նաև իսլամի հասարակական կողմին, որի հետևանքով էլ փորձում էին անտեսել իսլամի բարոյահոգեբանական դերը, որը նույնպես հիվանդագին երևույթ էր: Եթե մեր հասարակությունն իր համակ ուշադրությունը բևեռի իսլամի նշված կողմերից միայն մեկին, և մոռացության մատնի, կամ աչքաթող անի մնացած այլ հանգամանքները, ապա դա նույնպես երկիրն ու հասարակությունը կտանի բարոյական կործանման ու ոչնչացման, այնպես, ինչպես դա տեղի էր ունենում նախորդ կառավարության օրոք: Մարգարեի հիմնադրած հասարակություն-

նը, դա՛ համաչափության ու չափավորության հասարակությունն է: Եթե թերթենք պատմության էջերը, ապա դժվար չի լինի նկատել, որ նրանք մասնակցում էին Իրանի ու Բյուզանդիայի պատերազմներին՝ «գիշերվա ճգնավորներն ու ցերկվա առյուծները»: Գիշեր ու զօր հոտնկայս աղոթում էին ու Աստծուն երկրպագում, ցերեկն անց էին կացնում ծոմապահությամբ, մինչ լույս հարթմնի աղոթում ու ցերեկն անդադար ծոմ էին պահում: Սակայն պատերազմի դաշտում այնպես էին կռվում, որ ոչ ոք ի զորու չէր նրանց դեմ դուրս գալ և հաղթել: Իսկ եթե գիշերներն անվերջ պաշտամունքով անց կացնեին, ցերեկն էլ ծոմապահությամբ և մարտի ժամանակ մզկիթից դուրս չգային, պարզապես նրանց մուսուլման չէին համարի: Ինչպես նաև, եթե միայն լավ մարտիկ լինեին, սակայն երբևէ չկատարեին իրենց բարոյական պարտավորությունները, այդ դեպքում նույնպես կհամարվեին ազահ կռվազաններ, որոնք բոլոր այլ աշխարհակալերի նման, հետևելով բնազդներին, մասնակցում ու հաղթում են կռվի դաշտում:

Փաստորեն նրա արժեքն ու զինը իր համապարփակ՝ բազմաբովանդակ լիարժեքության մեջ է: Ուստի երբեք չպետք է մոռանանք, կամ աչքաթող անենք փոխկապակցված հասարակության խնդիրը: Այն կարևոր հանգամանքը, որ իսլամական հասարակության մեջ նշված բոլոր հատկանիշներն էլ անհրաժեշտ են, այդ թվում՝ բոլոր անդամների միասնականությունը: Թվարկված հատկանիշներից յուրաքանչյուրի բացակայության դեպքում կխափանվի հասարակության շիտակ ու նպատակասլաց երթը՝ այնպես, ինչպես տեղի է ունենում մարդկային առողջ մարմնի մեջ, երբ մի վիտամինի կամ հիմնական տարրի պակասն ու բացակայությունը խանգարում է տվյալ անդամի և հետևաբար ողջ մարմնի առողջությանը:

Ուրեմն, դաստիարակության հիմնահարցերից մեկը, որին անհրաժեշտաբար պետք է հատուկ ուշադրություն դարձնել՝ և՛ մեր և՛ մեր երեխաների դաստիարակության հարցում, դա իրական պաշտամունքի ու աղոթքի խնդիրն է: Բնականաբար, կռանալն ու ծնրադիր աղոթելը, երկրպագելն ու նամազի պահին զուտ ձևականություններից ելնելով ֆիզիկական մի շարք գործողություններ կատարելը, դեռևս իրական պաշտամունք չէ: Հատկապես այն դեպքում, երբ չենք զգում աղոթելու, Աստծու հետ հաղորդակցվելու, աշխարհից մեկուսանալու և մտովին Բարձրյալին միանալու իմաստն ու խորհուրդը: Պաշտամունք չի կարող համարվել նաև Ռամազան ամսին առավոտից երեկո միայն ծոմապահությամբ զբաղվելը: Անկասկած, անհրաժեշտ է ստեղծել ու զարգացնել պաշտամունքի զգացումն իսլամական հասարակությանը պատկանող յուրաքանչյուր անձի հոգում ու սրտում, որպեսզի մեզանում ևս ստեղծվի իսլամական դաստիարակության սյուներից մեկը:

### **Հարց ու պատասխան**

**Ներկաներից մեկի խոսքը հետևյալն է.**

«Այնպես, ինչպես Պարոն Սոթահարին նկատեց, Ոմանք դիտողություն

են անում, թե պաշտամունքը կատարվում է կամ դրախտի ակնկալիքով, կամ էլ՝ դժոխքի սարսափից: Սակայն մենք գիտենք, որ պաշտամունքն ունի վեհ, խոր իմաստ ու խորհուրդ, և հավատացյալների կողմից կատարված նամազը, ծոմապահությունն ու ապաշխարությունը միայն միջոցներ են, որոնք հավատացյալներին մերձեցնում են այդ վեհ նպատակին: Այլ կերպ ասած՝ պաշտամունք, նշանակում է հետևել նախախնամության ու նախասկզբի ձեռքով տնօրինված զարգացման ու կատարելագործման այն ուղուն, որը ստեղծվել է ոչ միայն մարդկանց, այլև ողջ տիեզերքի համար, որոնց միջոցով էլ նրանք պիտի կարողանան ցանկալի կատարելության հասնել»:

### Պարոն Մոթահարի.

Փորձենք ամփոփել ինժեներ Թաջի արտահայտած մտքերը, որոնք ի դեպ մի փոքրիկ լրացման կարոտ են: Այստեղ առկա են երեք խնդիր. առաջինը *աշխարհի արարման և Աստծո պաշտամունքի* թեման է, որին հանդիպում ենք նաև սուրբ Ղուրանում, համաձայն որի, Ղուրանը ցանկացած էակից բխած ցանկացած արարքն անվանում է պաշտամունք և աղոթք: Սա փաստորեն ելնում է այն հանգամանքից, որ բոլոր երևույթներն ընթանում ու ուղղորդվում են դեպի կատարելագործում, իսկ տիեզերքի ու արարման բացարձակ կատարելագործությունն ինքը՝ Աստվածն է: Ուստի, հնարավոր է ենթադրել, որ արարված աշխարհն ինքնին դեպի Կատարյալն է ձգտում: Նշենք սակայն, որ սույն խնդիրը մեր քննարկումների սահմաններից դուրս մի թեմա է:

Հետո անդրադառնում ենք *մարդու պաշտամունքի* թեմային, այսինքն, նրա մտացածին ու կանոփին կատարված արարքներին: Մեր ընկերն իրավացի է, և այս մասին հավաստել են նաև իսլամական հոգևորականները: Երբ մարդ որևէ բան կատարում է լոկ Աստծուն հաճոյանալու նպատակով, դա հաստատ պաշտամունք է: Իհարկե խոսքն արդար ու լուսավոր արարքների մասին է, այսինքն այն բոլոր գործերի, որոնք էությանը ազնիվ են, արդար ու բարի, և ապահովում են անձի և մարդկանց բարօրությունը: Եթե անկեղծ ու սրտանց կատարվեն, ապա անկասկած պաշտամունք կհամարվեն: Ուստի, հնարավոր է, որ մարդու քնելն անգամ պաշտամունք համարվի: Ասում են, եթե մարդ սեփական կյանքն այնպես դասավորի, որ յուրաքանչյուր աշխատանք ու գործ ունենա որոշակի տեղ ու ժամանակ, իսկ ինքն իր սեփական «եսը» դաստիարակի այնպես, որ ցանկացած արարք կատարի Աստծո համար, ապա նա մշտնջենական պաշտամունքի մեջ կլինի. նրա քունը, արթնությունը, ուտելը, քայլելը, հագնվելը, բոլոր նրա կատարած գործերը՝ պաշտամունք են, քանի որ նա այդ բոլորը կատարում է լոկ Աստծո կամոք ու նրա սիրուն: Այս խոսքերը ճշմարիտ են: Սա այն տարբերակն է, երբ ասում ենք, թե մարդն անընդմեջ պետք է պաշտամունքի ու Աստծո հետ լինի: Սակայն չպետք է հանկարծ այս պաշտամունքը շփոթել իսկական պաշտամունքի՝ աղոթքի ու ապաշխարության հետ, մտածելով, «եթե ես ամեն ինչ կատարում եմ լոկ երկնային Տիրոջ գոհունակության համար (օրինակ այս պահին իմ կարիներտում նստած, հիվանդներ են ընդունում), ու քանի որ դա Աստծո

սիրուն է նվիրված, ուստի այլևս աղոթքի ու նամազի կարիքը չկա: Իրականում, սրանցից յուրաքանչյուրն իր տեղն ունի, և մեր արարքներն, անշուշտ սերում են մեր պաշտամունքի զգացումից: Այն զգացումից, որից ելնելով, մենք ցանկացած գործ կատարում ենք բարի ու ազնիվ նպատակով՝ միայն Աստծո սիրուն արժանանալու համար»:

Իսլամի մեջ ունենք երկու տեսակ աշխատանք: Դրանցից մեկը կոչվում է բացարձակ պաշտամունք: Սրանք այն ջանքերն են, որոնց շահն ու օգուտը միայն Բարձրյալի պաշտամունքն է, ինչպես օրինակ՝ նամազը: Կան մի շարք այլ գործեր, որտեղ մեր նպատակն առօրյա ապրուստի համար միջոցներ վաստակելն է: Այս ջանքերը ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ է պաշտամունքի վերածել: Ուստի, երբ մեր ընկերը նշում է, թե մենք գործում ու աշխատում ենք Տիրոջ սիրուն և հաճության համար, շատ ճիշտ է արտահայտվում, սակայն պայմանով, որ չկարծենք թե այդ դեպքում կարելի է աչքաթող անել հիմնական պաշտամունքն՝ աղոթքն ու նամազը: Սարդ երբևէ չի կարող նրանից անկարոտ մնալ: Սոհամադ մարգարեի, Իմամ Ալիի և այլոց պես, որոնք և՛ աշխատում էին Աստծո սիրուն և գոհունակության համար, և՛ միևնույն ժամանակ իրենց աղոթքի ու պաշտամունքի հարցում չէին զլանում՝ դարձյալ հանուն Նրա:

**Չարք.**

«Արդյո՞ք մարդ ցանկացած գործողություն կատարելիս չի առաջնորդվում որևէ ներքին ցանկությամբ: Երբ նա մի ինչ-որ բան է կատարում, դա կամ իր պատվի համար է, կամ իր բարօրության, կամ կրոնի հրաման, քանի որ եթե այն չկատարի ինքն իրեն պիտի մեղավոր զգա: Ուստի, կարելի է ենթադրել, որ նա ընդմիշտ շարժվում է իր ցանկությունների ու ներքին ձայնի դրդմամբ, և նրա ,կամքը, որպես անկախ երևույթ, գոյություն չունի»:

**Պատասխան.**

Մեր այս ընկերոջ հարցը կամքի մասին է: Մենք կամքի մասին խոսելիս, այն ուսումնասիրեցինք միայն դաստիարակչական դիտանկյունից, և նկատեցինք որ կամքը մարդու հոգում առկա այն ուժերից ու ունակություններից մեկն է, որն անհրաժեշտ է դաստիարակել, մշակել ու ուղղորդել: Սակայն եթե դաստիարակության ոլորտից դուրս, ցանկանանք խոսել կամքի մասին, ապա այն պետք է զննել նաև այլ տեսանկյուններից ու հանգամանքներից: Ձեր առաջադրած թեման, վերաբերում է «Բռնության ու կմաքի» թեմային, որին հնարավոր չէ այս քննարկման սահմաններում անդրադառնալ, քանի որ նախ անհրաժեշտ է պարզել թե ի՞նչ է նշանակում «կամք» կոչվածը: Մենք այս հարցին անդրադարձել ենք փիլիսոփայության ուսմունքների վերաբերյալ երկրորդ քննարկման ընթացքում, որտեղ արծարծեցինք այնպիսի նորագույն խնդիրներ, որոնց չէին անդրադարձել ոչ նախորդները, ոչ էլ ժամանակակիցները: Պարզեցինք մարդու որոշակի «պարտականության» չափանիշները, և այն, թե ինչպիսի մարդն է կարող պատասխանատու անձ դառնալ, ինչպիսի մարդը՝ ոչ: Այնուհետև անդրադարձանք կամքի կապակցվածության թեմային, թե արդյոք երբ մարդն օժտվում է ուժեղ կամքի ուժով, դարձյալ նրան ձգում են ներքին ցանկությունները, թե՞ կամքի դերն այստեղ այն է, որ զանազան

ու հակասական ցանկությունների միջից ընտրի միայն մեկն ու անգամ եթե գոյություն չունենա և ոչ մի ներքին ցանկություն, դարձյալ մի խելացի ճանապարհ ընտրի: Այսինքն, միևնույն է՝ կամքը դադարում է գոյություն ունենալուց և իշխում է միայն խելքն ու մարդու բանականությունը: Սա չի նշանակում թե մարդու կամքը բանականության գործոն մասնիկներից, այլ նրան կապակցված մասնիկներից մեկն է, հենց այնպես, ինչպես որ մարդկային ցանկությունները բնությանն են կապակցված: Այլ կերպ ասած՝ ցանկությունները բնության իարկադիր կատարողներն են, իսկ կամքը՝ բանականության, այլ ոչ թե՝ կամքը հենց նույն՝ բանականությունն է: Կամքը մարդկային մեկ այլ գործոն ուժերից է: Սակավ չեն խելացի ու իմաստուն մարդիկ, որոնց մոտ բացակայում է կամքի առկայությունը, և ընդհակառակը՝ կան հզոր կամքի ուժի տեր մարդիկ, որոնք զուրկ են հզոր ու իմաստուն բանականությունից: Այս երկուսը՝ մարդկային խելքն ու կամքը, երկու լիովին տարբեր ուժեր են, սակայն ըստ էության կամքն աշխատում է խելքի ու բանականության թելադրանքով: Երբեմն մարդու խելքը նրան թելադրում է կատարել այն, ինչը տվյալ պահին բնավ էլ նրա ցանկությանը չի համընկնում, (նրա ցանկությունները մի բան են ասում, իսկ նրա խելքը՝ մի այլ բան): Եվ առհասարակ, կարելի է ասել, որ ցանկությունները զուրկ են հեռատեսության հատկությունից, այն փոքրիկ մանկան պես, որը երբ նրան զգուշացնում են թե այսինչ ուտելիքը այժմ չպետք է ուտել, առողջությունը վերականգնելու համար և հետո կարելի է ուզածի չափ ուտել, երեխան համառում է, հակառակում, ստիպում, ասելով՝ թե նա հենց այս վայրկյանին է ցանկանում տվյալ ուտեստը ճաշակել:

Ցանկություններն առհասարակ ներկային են պատկանում: Բնակարար, այժմ, ներկա պահին, մենք չունենք քառասուն տարի անց ուտելու ախորժակը: Այժմ մենք միայն կարող ենք ունենալ ներկայիս՝ տվյալ պահին մի բան ուտելու ցանկություն և ախորժակ:

Մարդու խելքն ասում է. «Այսօր մի բան ուտելը, քեզ կարող է զրկել ապագայում հարյուր անգամ ուտելուց»: Սակայն անսալով խելքին և երբեմն, նույնիսկ առանց ուտելու ցանկության, մարդ մտածում է, նախընտրում, և որոշում կայացնում:

Հաջորդ խնդիրը, դա կամքի դոսևորման և միջավայրի փոխկապակցվածության թեման է: Հիմնականում «Կամք ու բնոնություն» կոչվածը, որ կարևոր խնդիր է կայանում է նրանում, որ կամքն ինքնին կապված է ինչոր տեղի հետ, թե՛ ոչ...<sup>48</sup>

48- Նյութի շարունակությունը ծայնագրված չէ տվյալ ծայներիցի վրա:

## **ՄԱՍ IV**

*Դաստիարակության Գործոններ*

**2**

*Սեր, Հշմարտության ձգտման զարգացում,  
Զգուշավորություն – Ինքնագնահատում*

## Հանուն Ողորմաշ Է- Բարեգութ Լուսաշ»

Իսլամական դաստիարակության ոլորտում արծարծված կարևորագույն խնդիրներից մեկը, դա սերնե է, իսկ նրա հակառակ բևեռում՝ կոպտությունը: Չնայած, սիրո դիմաց որպես հատկանիշ, հաճախ կիրառվում է ,ատելությունե եզրույթը: Սակայն, «սիրո» ազդեցությունը բարությունն է ու քնքշանքը, իսկ «ատելությանը»՝ կոպտությունն ու տաժանությունը: Գիտենք սակայն, որ ոմանք խիստ քննադատական հայացքով են անդրադարձել իսլամական դաստիարակությանը, ասելով, թե իսլամը սիրուն և նրանից սերող այլ զգացմունքներից հավուր պատշաճի ուշադրություն չի դարձրել և այն կրոնի հիմնահարցերի մեջ չի մտցվել: Եթե անգամ իսլամն անդրադարձել է սիրո, քնքշանքի ու բարության թեմաներին, ապա դրանց կողքին միանշանակ առկա են եղել նաև թշնամության, կոպտության, մի խոսքով՝ չարության թեմաները ևս: Գիտենք նաև, որ առավելապես քրիստոնյաներն են շեշտում «սիրո» թեման, և նրանց հոգևոր հայրերը հաճախ են կրկնում, թե Զիսուս Քրիստոսը մարդկանց միայն «սեր» էր քարուզում: Սեր, որն անշահախնդիր է ու պարզ, առանց փոխադարձ որևէ ակնկալիքի, առանց խտրականության: Նա քարոզում էր սիրել միմյանց, անկախ այն բանից աստվածապա՞շտ են, թե՞ հեթանոս, Քրիստոսի հետևորդների՞ց են, թե՞ ոչ: Նա ուսուցանում էր միայն՝ սիրել, սիրել բոլորին:

Կրոնների պատմության մասին հրատարակված մի գրքում, կամ գուցե թարգմանված մի հոդվածում կարդացի, որ գոյություն ունի մի համայնատարած նախադասություն, որն առկա է աշխարհի համարյա բոլոր կրոն-

ների ուսմունքների մեջ, և քրիստոնեության և հրեաների, և զրադաշտների, և բուդդայականների: Այն հետևյալն է՝ Այն ինչ սիրում ու ցանկանում ես քեզ համար, սիրի՛ր նաև այլոց համար, իսկ ինչ չես սիրում և նրանից խուսափում ես, մի սիրի՛ր նաև ուրիշների համար: Ավելացնեն, որ այս կապակցությամբ մեր կրոնական ուսմունքի մեջ առկա են բազմաթիվ օրինակներ, որոնցից է. «Մարդկանց համար սիրի՛ր այն, ինչը սիրում ես նաև սեփական անձիդ համար, և նրանցից վանի՛ր այն, ինչը կվանեիր քեզանից»<sup>49</sup>:

Այս՝ իսլամի մեջ նմանապես արտացոլված գաղափարը, համարվում է մեր կրոնական ուսմունքի բացարձակ ու միանշանակ պատվիրաններից մեկը: Սակայն, տեսնենք, արդյո՞ք իսլամական այս վերը նշված խորհրդի մեջ կան նաև բացառություններ: Քրիստոնեության մեջ չկան բացառություններ, իսկ ի՞նչպես է իսլամում: Եթե իսլամը նույնպես հորդորում է այլոց համար սիրել այն, ինչ սիրում ենք մեզ համար, միթե՞ դա միայն որոշ մարդկանց է վերաբերում: Կամ, միթե՞ «այլոց համար սիրի՛ր այն, ինչ սիրում ես քեզ համար»: Այս շեշտադրությամբ արդյո՞ք իսլամի մեջ բացառություններ կան, թե՞ ոչ: Արդյո՞ք այս կապակցությամբ իսլամի և քրիստոնեության մեջ հակասություններ կան: Եթե անգամ առկա են որոշակի հակասություններ, ապա միայն՝ սիրո բուն երևույթի մեկնաբանության, այլ ոչ՝ թե հարցադրման մեջ:

### Սիրո երկու տարրատեսակ

Լուսաբանենք հենց այս համընդհանուր՝ բոլոր կրոններին առնչվող գաղափարը: Արդյո՞ք որևէ բան ընդմիշտ սիրելը տրամաբանական երևույթ է: Հնարավոր է ոմանք առհասարակ հակառակ են ու քննադատեն՝ ասելով, թե բնավ էլ ճիշտ չէ այլոց համար սիրել այն ամենն, ինչ սիրում ենք մեզ համար: Հնարավոր է, մարդ իր համար սիրի այն, ինչն առհասարակ չպետք է սիրել, այսինքն տվյալ երևույթի սիրելի և հաճելի լինելն այլ հարց է, իսկ նրա շահավետ կամ նպատակահարմար լինելն՝ այլ: Օրինակ, մեկը տառապում է շաքարախտով և մեղրի օգտագործումն արգելված է նրան, իսկ մեկ ուրիշը, որ չափազանց շատ է սիրում մեղր պարտավորվի սիրել նաև այն մարդկանց համար որոնց այն վնասակար է: Արդյո՞ք այս տեսակ սերն է մեր նշած սերը, թե՞ մեր ասվածը մտածված, տրամաբանված ու շահավետ սերն է: Մեր նպատակն իրոք՝ բարի և երջանիկ սիրո իրականացումն է: Հենց այնպես, ինչպես ցանկանում ես անձնական սեր ու երջանկություն, նույնն էլ պետք է ցանկանաս համայնքի բարին ու երջանկությունը: Այս այն տարբերությունն է, որն առկա է մեր և քրիստոնյաների դրսևորած մակերեսային սիրո միջև:

Օրինակ, քանի որ հայրն ու մայրը սիրում են իրենց մանկանը, բնականաբար, ցանկանում են նպաստել նրա բարօրությանն ու երջանկությանը: Նշենք սակայն, որ այդ բարօրությունն ու երջանկությունը երկու տարբեր ձևերով կարող են դրսևորվել: Տգետ ծնողների կարծիքով, մանկան երջանկությունն ու բարօրությունն այն է, որ նրա յուրաքանչյուր

49- Նահիջ-օլ-Քալադե, 3-րդ նամակ:



ցանկությանը դրական արձագանքեն: Այսինքն, այն, ինչ նա ցանկանում, սիրում, կամ պահանջում է՝ անհապաղ պատրաստեն ու մատուցեն, իսկ այն ինչ նա չի սիրում կամ հրաժարվում է, չտան նրան: Սակայն, եթե հանկարծ երեխան հիվանդանա և նրա բուժման համար դեղեր կամ ներարկումներ անհրաժեշտ լինեն, բնականաբար, երեխան պիտի հրաժարվի ու փախչի դրանցից ևս: Բայց արդյո՞ք նրա ծնողները այս պարագայում նույնպես պիտի ենթարկվեն իրենց մանկան քմահաճույքին:

Վերոհիշյալը մի տեսակ սեր է, իսկ սիրո մի այլ տեսակը, տրամաբանված ու մտածված սերն է, այն սերը, որը շահավետ է, որն առնչվում է և՛ ներկայի և՛ ապագայի հետ: Ճշմարիտ սերն անկասկած բարության ու երջանկության ակունք պիտի հանդիսանա, անկախ այն բանից, թե երեխայի սրտովն է, թե՛ ոչ:

Եթե ցանկանանք վերոհիշյալ հայտնի միտքը այն կտրվածքով քննել, որ իրոք բոլոր կրոնների նպատակը սերն է և մարդկանց հետ պետք է վարվել այնպես, ինչպես կուզեիք, որ ձեզ հետ վերաբերվեն, ապա դա ճիշտ չի լինի: Սարդկանց և հատկապես հասարակության նկատմամբ սիրո զգացումն ու նրանց բարօրության ու երջանկության չափանիշները տարբեր են և նրանցից յուրաքանչյուրի համար հաճելին ու դուրեկանը՝ այլ:

Բազմիցս կրկնել ենք հետևյալ միտքը, որի համաձայն ռադիոյի<sup>50</sup> տնօրինությունն իր այս պարտականությունը բարեխիղճ կատարելու նպատակով, հարցում է անում ժողովրդին և ըստ նրանց ցանկության և նախասիրության՝ ընդունում պատվերներ և սփռում նրանց ցանկացած երաժշտությունը: Սակայն գուցե ժողովրդի մեծամասնությունը սիրում ու նախընտրում է այնպիսի երաժշտություն, որը հասարակությանն ու մարդկանց ավելի ու ավելի է մղում դեպի դժբախտություն և անբարոյականություն: Ուստի, եթե ռադիոյի աշխատակիցները ցանկանում են, որ իրենց տածած սերը լինի ճշմարիտ ու հոգատար, չպետք է կուրորեն առաջնորդվեն մեծամասնության սիրով ու ճաշակով, որոնք հաճախ՝ երեխաներ, երիտասարդ տղաներ ու աղջիկներ են:

Հակասելով սիրո մասին արտահայտած մտքերին, պետք է նշենք սակայն, որ մարդկանց հաճոյանալն ու նրանց կամքի համաձայն գործելը, շատ անգամ համարվում է անխոհեմ ու անօգուտ արարք: Ծնողների տածած ճշմարիտ ու խելամիտ սերն իրենց զավակների նկատմամբ, չպետք է մանուկների ցանկությունների նրանց կամքի, և առհասարակ՝ ներկա ժամանակի կադապարներում սահմանափակված լինի: Անհրաժեշտ է խելամտորեն մտածել վաղվա օրվա՝ նրանց գալիքի և ապագայի մասին:

### **Բազմության բարօրությունը գերադաս է՝ անհատի բարօրությունից**

Երբեմն խոսքը մի անհատի մասին է, իսկ մի այլ պարագայում՝ բազմության: Թեման առավել դյուրին ընկալելու համար դարձյալ անդրադառնանք այն ծնողներին, որոնք ունեն մի քանի տղա ու աղջիկ, և բնա-

50- Պետք է նկատի առնել, որ սույն քննարկումները տեղի են ունեցել նախքան Իրանի իսլամական հեղափոխությունը:

կանաբար սիրում են իրենց բոլոր զավակներին: Երեխաներից մեկը, մյուսների նկատմամբ կոպիտ է, նույնիսկ փորձում է չարաշահել նրանց իրավունքները: Պարզապես, ծնողների սերը միայն այս մի երեխային չի պատկանում, որ թույլ տան, որպեսզի նա իր ցանկացածի պես վարվի իր քույրերի ու եղբայրների հետ: Եթե անգամ սիրո չափանիշը երեխայի ցանկությունն է, անհրաժեշտ է նկատի առնել նաև մյուսների ցանկությունը, այլ ոչ միայն՝ մեկինը: Կնշանակի, եթե մեկը ցանկանում է ամենայն սիրալիրությամբ վարվել իր զավակների հետ, չպետք է այդ սիրո չափանիշը դարձնի նրանց կամքը, այլ նրանց բոլորի համար՝ ամենաբարին ու շահավետը: Այլ կերպ ասած՝ բազմության բարօրությունն ու շահը, մշտապես գերադաս է անհատի կամ մի անձնավորության շահից:

Շատ հաճախ են պատահում պարագաներ, երբ բազմության շահն ու բարիքը չի համընկնում ոմանց ցանկություններին, կամ նույնիսկ հակասում է նրանց շահերին: Այլ կերպ ասած՝ շատ հաճախ, երբ միայն նկատի է առնվում մի անձնավորության կամքն ու նրա շահը, ոտնահարվում են այն ընկերության, կազմակերպության կամ հասարակության շահերը, որոնց մի փոքրիկ մասնիկն է եղել ինքը՝ անձը: Հնարավոր է, որ արդյունքում վնասներ կրեն ոչ միայն բազմությանը պատկանող առանձին անձինք, այլ նաև հենց ինքը՝ անհատը: Նման դեպքերում է, երբ անձի կամ մի անհատի շահն ու բարօրությունը պետք է զոհել բազմության բարիքին ու օգտին: Նման հանգամանքներից ելնելով է, որ նշում ենք, թե «սեր» կոչվածը, որի էական նպատակը բարու և շահավետի ակնկալիքն է, պահանջում է կոշտություն, խստություն, և այն ամենն ինչ անհատի համար տհաճ ու անդուրեկան երևույթներ կարող են թվալ: Օրինակ՝ կախաղան բարձրացնելու մահապատիժը, որն անկասկած դաժան է ենթակայի, սակայն բարիք է բազմության համար:

### Փոխհատուցման փոխափայությունը

Տեսե՛ք թե փոխհատուցման առնչությամբ ինչպիսի կատարյալ մեկնաբանություններ կան Ղուրանում: Գիտենք, որ Ղուրանն իր քրեական օրենքի համաձայն կողմ է փոխհատուցմանը: Երբ մեկն առանց որևէ պատճառի՝ դիտավորյալ, սպանում է մի հարգված ու անմեղ անձնավորության, ապա իսլամն անհապաղ, առանց այլևայլության թույլատրում է կախաղան բարձրացնել ոճրագործին:

Այստեղ առկա է հետևյալ հարցը: Ասենք հանցագործն սպանել է մի անմեղ մարդու, իսկ այժմ մենք ցանկանում ենք նրա արարքը փոխհատուցել, նրան մահապատժի դատապարտելով և այսպիսով սպանության դրամատիկ գործողությունը մեկով ևս կրկնապատկելով: Եթե մարդասպանությունը չար արարք է, ապա ինչո՞ւ մենք ևս փոխհատուցման նպատակով կրկնենք այն: Եթե չարագործն արդեն կատարել է չարիքը՝ մի անմեղ էակի սպանությունը, միթե՞ անհրաժեշտ է, որ մենք էլ նրան սպանենք՝ նրա կատարած չարագործությունը փոխհատուցելու համար: Այս կապակցությամբ Ղուրանն ասում է. «Եվ ձեզ համար փոխվրժում կյանք

ու մահ է, ով խելքի տեր մարդիկ»<sup>51</sup>: Նման սպանությունը, չպետք է երբևէ մարդասպանություն, չարագործություն կամ ոճիր համարել, քանի որ սա կենաց ու մահու հարց է, իհարկե ոչ թե սպանվող անձի, կամ մի անհատի, այլ՝ բազմության համար: Ասել է, թե՛ մի ոճրագործի ոչնչացմամբ, ապահովում ու երաշխավորվում է հասարակության մեջ բնակվող այլ մարդկանց կյանքը, քանի որ եթե չվերացնեք չարագործին, շատ հնարավոր է, որ վաղը նրա ձեռքով սպանվեն այլ անմեղ մարդիկ: Գուցե նաև ոմանք փորձեն վրեժ լուծելու նպատակով նրան սպանել, և այսպես շարունակ, շղթայաբար՝ մեկը մյուսին հաջորդեն քրեական ոճրագործությունների մի անբողջ շարան: Հետևաբար, մեղավոր մարդասպանին մահապատժի դատապարտելը ոչ թե ժողովրդի համար չարիք՝ այլև նրա ապահով կյանքի միակ երաշխիքը պետք է համարել: Ուստի, դժվար չէ կռահել, որ փոխհատուցումն ըստ էության բխում է ժողովրդի նկատմամբ տածած ոչ թե ատելությունից, այլ՝ մեծ սիրուց:

### Մարդասիրություն (Հումանիզմ)

Ահա հիշատակման արժանի մի այլ թեմա ևս, որին կցանկանայի անդրադառնալ մեր քննարկումների ընթացքում: Դա «մարդասիրության» խնդիրն է: Սա իրոք գեղեցիկ ու ճշմարիտ երևույթ է, որն անհրաժեշտ է մեկնաբանել ու վերլուծել: Աստվածաբանության ջատագովների բառերով ասած՝ մարդուն, լոկ նրա մարդ լինելու պատճառով պետք է սիրել, իսկ այսօրվա «մարդուն իր մարդկային արժեքներով» պետք է գնահատել: Երբ մարդուն բնութագրելիս ասում ենք՝ մի գլխանի, երկու աչքանի ու երկականջանի, քայլող ու խոսող մի էակ, ապա միայն այդ չէ «մարդ» կոչվելու չափանիշը: Այդ կտրվածքով Չոմբեն նույնքան մարդ է, որքան և Լուծումբան, Հիսուս Քրիստոսը: Մարդ են, նաև նրան խաչել ցանկացող հրեաները, քանի որ նրանք էլ Քրիստոսի պես շնչում, քայլում ու խոսում էին, ուստի նրանց միջև չկան տարբերություններ:

Եթե մարդ կոչվելու և նրան սիրելու միակ նպատակն ու չափանիշը նրա ֆիզիկական կերպարանքն է՝ մարդակերպ արտաքինը, կնշանակի, որ մենք ցանկանում ենք սիրել այն բոլոր արարածներին, որոնք սերում են Ադամից ու ադամորդիներ են կոչվում: Այլ կերպ ասած՝ սիրել կենսաբանորեն մարդ համարվող բոլոր էակներին: Բայց արդյո՞ք մարդասիրությունն այս է քարոզում, թե՞ այն քարոզում է սեր մարդու հանդեպ՝ իր մարդկային արժեքների ու իր մարդասիրության համար: Այստեղ է ահա, որ երբ կողք-կողքի ենք դնում Չոմբեին ու Լուծումբային տեսնում ենք այս երկու հակապատկեր՝ մեկը մյուսին հակասող, երկու տարբեր տեսակի մարդիկ՝ մեկը մարդկային գերագույն արժանիքներով օժտված, իսկ մյուսը՝ Դուրանի բառերով ասած, ամենաստոր կենդանուց էլ ավելի ստոր ու անարժան: Մարդուն պետք է սիրել նրա մարդկայնության, այլ ոչ նրա արտաքին տեսքի համար, այլ կերպ ասած՝ պետք է սիրել ոչ թե մարդուն, այլ՝ նրա մեջ «մարդկությունը»:

Սակայն, եթե մեկից ոչ մարդկային ու հակամարդկային արարք նկատենք, և համոզվենք որ նա խոչընդոտում ու բարդացնում է այլոց ուղին

51- Դուրան, 2: 179:

ու նրանց կյանքի բնականոն ընթացքը, արդյո՞ք դարձյալ պետք է սիրենք նրան, որովհետև նրա անունը մարդ է, սակայն նա իրականում մարդ չէ: Իմամ Ալիի բառերով ասած՝ «արտաքինից մարդու տեսք ունի, իսկ ներքուստ՝ կենդանու ներաշխարհ»<sup>52</sup>: Սիբե՞ հնարավոր է նման մարդկանց սիրելով, դավաճանել ողջ մարդկությանն ու իրավամբ մարդ կոչվող անձանց և թշնամանք հարուցել իրական մարդկության դեմ:

Ուրեմն, տեսնում ենք, որ սերը ոչ միայն ցանկությունների դրսևորում, այլև սիրած անձանց նկատմամբ բարու և շահավետի պահպանման զգացումն է, բացի դրանից, ոչ միայն մեկ անձնավորության, այլ ընդհանուրի՝ բազմության շահի ու բարօրության համար: Այս բոլորը նկատի առնելով, պետք է ասել, որ մարդասիրության խնդիրը ոչ միայն մարդ արարածի, այլև մարդկության ու մարդկային վեհ արժանիքների ու արժեքների խնդիրն է: Այլապես, եթե ցանկացած կենդանի էակի մարդ անվանելու նպատակը լոկ նրա արտաքին տեսքի մեջ տեղավորվող մարդն է, ապա կենսաբանական տեսակետից մարդու և կենդանու միջև չկան էական տարբերություններ: Հետևաբար հարց է ծագում, ինչո՞ւ մարդկանց փոխարեն չսիրել ոչխարներին, ինչո՞ւ մարդկանց հետ հավասարապես չսիրել ձիերին ու ավանակներին, այն դեպքում, երբ նրանք էլ շնչավոր և կենդանի էակներ են: Եթե մարդուն սիրելուց մեր չափանիշները միայն ու միայն նրա կենդանի լինելն է՝ ցավի ու հաճույքի զգացումը, ապա «Մի տանջիր բեռնակիր մրջյունին»<sup>52</sup> բանաստեղծական տողը, նույնչափ համընկնում է մարդկանց, որքան և ձիու ու ավանակի:

Ուրեմն դժվար չէ նկատել, որ հարցը միանգամայն վերաբերում է մարդկության սիրուն: Երբ խոսում ենք մարդասիրության մասին, նպատակը մարդկայնասիրությունն է: Սիրուց էլ, ինչպես բազմիցս նշեցինք, ծագում է ընդհանուրի բարօրության ապահովումը: Բնականաբար, բոլոր մարդկանց կուրորեն ու առանց պատճառաբանվածության սիրելու պատվիրանը՝ ելնելով միայն սրան ու նրան հաճոյանալու զգացումից միանշանակ սխալ ու բացարձակ անօրեն երևույթ է: Իրական ու տրամաբանական սերն անհրաժեշտաբար պետք է երբեմն շաղախվի խստությամբ, երբեմն առաջնորդվի պատերազմներով ու պայքարներով, նույնիսկ սպանություններով, քանի որ անհրաժեշտ է ոչնչացնել այն բոլոր մակաբույծներին, որոնք փորձում են խաթարել ու խոչընդոտել այլոց կյանքը:

### Բարություն՝ անհավատների նկատմամբ

Ղուրանը ընդմիշտ պատվիրել է մեզ սիրել ու բարիք գործել բոլորի՝ անգամ անհավատների նկատմամբ: Սակայն այն սահմաններում, որում մեր բարությունն ու սերը նույնպես բարիք են վերադարձնում: Այնպես որ, երբ մեր կատարած բարության արդյունքն ու ազդեցությունը՝ չարություն լինի, մեր կատարածը նույնպես պետք է չարիք համարել, այլ ոչ երբեք՝ բարիք: Օրինակ, «Սոմթահենե» սուրայի մեջ նշվում է. «Աստված ձեզ չի արգելում բարեգործության և արդարության պահպանում այն անձանց

52- խոսքը Պարսիկ մեծանուն բանաստեղծ Ֆիրդուսու, և նրա հունամիստական հայտնի բանաստեղծության մասին է (թ):

նկատմամբ, ովքեր հավատքի գործում չեն մարտնչել ձեզ հետ միասին և ձեր տուն ու տեղից ձեզ չեն վռնդել, քանզի Աստված սիրում է արդարության ջատագովներին: Աստված միայն ձեզ արգելում է ընկերությունն ու հարաբերումը այն մարդկանց հետ, ովքեր կրոնի գործում վիճել ու կռվել են ձեզ հետ և ձեզ տուն ու տեղից վռնդել են»<sup>53</sup>:

Այստեղ, անշուշտ, խոսքը Կուրեյշ ցեղի մասին է, որոնք կրոնի պատճառով և՛ կռվեցին մահմեդականների հետ, և՛ նրանց իրենց տներից վռնդեցին: Ուրեմն, եթե մենք ասում ենք պետք չէ անհավատներին բարություն անել, մեր խոսքերը վերոհիշյալ մարդկանց են վերաբերում, քանի որ նրանց լավություն ու բարիք անելը, նույնն է թե ինքներդ ձեր նկատմամբ չարիք գործեք, քանզի գորացնում եք այն թշնամուն, որն անկասկած վաղը ձեր դեմ է դուրս գալու:

Այնուհետև Ղուրանը նշում է. «Աստված սիրում է արդարության ջատագովներին»: Ապա ավելացնում՝ «Աստված միայն ձեզ արգելում է ընկերությունն ու հարաբերումը այն մարդկանց հետ, ովքեր կրոնի գործում վիճել ու կռվել են ձեզ հետ և ձեզ տուն ու տեղից վռնդել են»:

### Արդար վերաբերմունք անհավատների նկատմամբ

Բացի վերոհիշյալ խնդրից, կլուսաբանենք նաև արդարության ու արդարադատության, ինչպես նաև ուրիշի իրավունքների սահմանները չխախտելու և ցանկացած մարդուն ըստ արժանվույն փոխհատուցելու խնդիրը: Նույնիսկ Կուրեյշի ցեղի անհավատների (սրանք կռվեցին մահմեդականների դեմ ու նրանց վռնդեցին իրենց տներից) դեպքում, Ղուրանը պատվիրում է լինել արդար ու անկողմնակալ, և չխախտել օրինականության սահմանները:

Եթե փորձենք զանազանել բարության ու արդարության զգացումները, պետք է նշենք, որ բարության հարցն այլ էր, քանի որ այս պարագայում Ղուրանը պատվիրեց՝ նրանց բարիք չանել, իսկ արդարության հարցը՝ լրիվ այլ է: «-Ալ- Սաեդե» սուրայի մեջ Ղուրանն ասում է. «**Թող թշնամությունը ձեզ չմղի մեղքի և անարդարության: Արդարադատ եղեք, քանզի դա առավել մոտ է բարեպաշտներին**»<sup>54</sup> : Ինչպես նկատում ենք, Ղուրանը հատկապես կարևորում է արդարադատության հարցը, և անգամ նշում է. «**արդարադատ եղեք, քանզի դա առավել մոտ է բարեպաշտներին**»:

Այս կապակցությամբ Ղուրանի այլ այբաբներում էլ առկա են բազմաթիվ տողեր, որտեղ նշվում են, թե անհավատների հետ հարկավոր է կռվել: Սակայն այն ունի որոշակի չափ ու սահման: Կան պահեր, որ սահմանազանց լինելը, իր իսկ, Ղուրանի խոսքերով ասած՝ մեղք է համարվում ու չարիք, քանի որ Աստված դա չի սիրում. «**Եվ հանուն Աստծո, նրանց դեմ, ովքեր ձեզ հետ կռվում են՝ մարտնչեք և չափը մի անցեք, քանզի Աստված բռնարարներին չի սիրում**»<sup>55</sup> : Այսինքն, երբ թշնամին իր զենքը՝ ձեռքի սուրը կամ հրացանը վայր դրեց ու հանձնվեց, այլևս հարկավոր չէ նրան սպանել, այլևս հարկավոր չէ նրա երեխաներին, կանանց, կամ տա-

53- Ղուրան, 60: 8,9:

54- Ղուրան, 5: 8:

55- Ղուրան, 2: 190:

րեցներին բռնանալ, հարկավոր չէ տիրանալ նրանց ունեցվածքին, գետերին ու ծառերին: Սրանք հենց նույն հրամաններն ու պատվիրաններն են, որ հորդորում էր Սոհամադ մարգարեն, երբ յուրաքանչյուր անգամ մահմեդականները պատրաստվում էին պատերազմի դաշտ դուրս գալ:

Երբ խոսքն արդարությանն ու նրա հակառակ բևեռում՝ բռնակալությանն է վերաբերում, իսլամը հրամայում է անհավատների դեպքում էլ սահմանները չանցնել, նրանց չբռնանալ և նրանց արդարադատորեն վերաբերվել:

Ուրեմն, ամեն դեպքում անհրաժեշտ է պահպանել արդարությունը: Այլ կերպ ասած՝ անհավատի ու թշնամու նկատմամբ հարկավոր է այնքան բարիք գործել, որքանով, որ այն դրական և փոխադարձ բարի նպատակների է ծառայելու, իսկ երբ կատարած բարիքը բացասական կամ ոչ բարի արդյունքների է հանգեցնում, ապա հարկավոր է խուսափել դրանից: Օրինակ պատվիրվում է անհավատին՝ թշնամուն գենք չվաճառել<sup>56</sup>:

Սա այն պարագան է, երբ հանդված եք, թե ձեր վաճառած գենքը, վաղը ձեր իսկ կյանքի թշնամին է դառնալու: Ուրեմն, դուք ոչ թե թշնամուն եք ապրանք վաճառել, այլև անուղղակիորեն նրան զորացրել եք՝ հենց ձեր դեմ: Ուստի անհրաժեշտ է խուսափել դրանից: Օրենքը չի բացառում թշնամու հետ առք ու վաճառքը, հատկապես նրանց այնպիսի ապրանքների վաճառելը, որոնք ձեզ չարիք ու վնաս չեն պատճառելու:

### Իմամ Սադեդն ու անհավատ մարդը

Մի անգամ Իմամ Սադեդն իր ընկերներից մեկի հետ քայլելիս, ճանապարհի եզրին, ծառերի շվաքի ներքո, հանդիպում է անկարող ու հիվանդ մի մարդու: Իր ուղեկիցներին հրամայում է մոտենալ և օգնել անկարողին, որն ուժասպառ ու ուշաթափ ընկած, չէր կարողանում անգամ օգնություն կանչել: Երբ մոտենում են անծանոթին, նրա հագուստից (նրանք այնպիսի հագուստ էին կրում, որից պարզ էր դառնում նրանց ոչ մուսուլման լինելը) արդեն իսկ կռահում են, նրա ոչ մուսուլման լինելը, սակայն, քանի որ նրան այդ անապատում գտնում են տանջված, քաղցած ու ծարավ, Իմամի հրամանով իսկույն ևեթ կերակրում ու փրկում են: Իմամի ուղեկիցն այդ բոլորը կատարելուց հետո նկատում է. «Չէ՞ որ այս անծանոթն անհավատ է, մեր թշնամին, միթե՞ կարելի է սիրել և օգնել նրան»: Իմամը պատասխանում է. «Այո, այս խեղճ օտարականին օգնելով, մենք ոչ մեկին վնաս չենք հասցնում: Արդյո՞ք նրան բարիք անելով, վնասում ենք որևէ մուսուլմանի: Իհարկե՞ ոչ, ուրեմն, նման պարագայում, կարելի է սիրել ու բարիք գործել անգամ անհավատի նկատմամբ»:

### Չարության դեմ՝ բարություն

Այս թեմայի հետ կապված սուրբ Դուրանից երկու այաթ հիշեցի: Նրանցից մեկի մեջ պատվիրվում է բարի հետևանքների հանգող սերն ու բարությունը: Այն ասում է. «Երբեք բարին ու չարը համազոր չեն»<sup>57</sup>, ասել է,

56- Իհարկե ոչ միայն զենք, այն ամենն ինչ կարող է արմատապես զորացնել նրանց:

57- Դուրան, 41: 34:

թե նրանց հետևանքները նույնը չեն: Ապա շարունակում է. «Չարիքը բարությանը վանիր»<sup>58</sup>, այնուհետև եզրակացնում՝ «Հանկարծ կտեսնես, որ նա ով թշնամին էր, ասես մտերիմ ու ջերմ ընկեր է դարձել»<sup>59</sup>:

Սաադին ասում է. (որոնք ի դեպ վերոհիշյալ այսօրի միտքն են պարունակում)

**Ների՛ր տղաս, քանզի մարդուն հնարավոր է որսալ,  
Բարությանը, կամ՝ պարանով վայրի:**

Չնայած պարզից էլ պարզ է, որ հնարավոր չէ քաղաքավարության, կամ այլ կերպ ասած՝ բարոյագիտության պատվիրաններն ընդհանրացնել, քանի որ ցանկացած վարք ու բարք ունի իր տեղն ու առանձնահատկությունը: Սի դեպքում հրամայվում է բարիք գործել, որպեսզի կարողանաս թշնամուդ սիրտն էլ ջերմացնես ու նրա սրտում փոխադարձ սիրո զգացում սերմանես: Այսինքն, երբ գիտենք, որ մեր կատարած բարիքը վերացնելու է չարիքն ու թշնամանքը, և նրա տեղ ծնվելու է մտերմություն ու ջերմություն, ապա պետք է անպատճառ բարի լինենք, սեր տածենք ու բարիք գործենք:

Այս դեպքում դիմացինը՝ մարգարեն է, նրա թշնամին, պարզապես կրոնի թշնամին է:

Ի՞նչ է նշանակում «իրենց սրտերից բխած» խնդիրն իսլամում: Ջաքաթի կիրառություններից մեկը՝ իրենց սրտերից բխած լինելու հարցն է: Սա մատնանշում է այն անօրեն, արտաքին տեսքից ուղղափառ մահմեդականներին, որոնց հարկավոր է սիրով, և նույնիսկ նյութական բարերարությամբ պահել մահմեդականների շարքերում:

Սա մի այսօր է, որի նմանն ու համագործ մենք շատ ունենք մեր բնագրերում, և հատկապես Իմամ Ալիի խոսքերում:

### **Համբերատարություն՝ հեթանոսների չարության դեմ**

Իսկ հաջորդ այսօրը հետևյալն է. «Եվ նրանց, ում ձեզանից առաջ, երկնային գիրքը տրվել է, հրեաներ, և նաև հեթանոսներից՝ անհաճո շատ խոսքեր կլսեք: Եվ եթե դիմադրեք և երկյուղածությամբ առաջնորդվեք՝ ավելի պատշաճ է, քանզի դա կրևոր և վստահելի գործերից է»<sup>60</sup>: Այստեղ արդեն խոսքը ոչ միայն բարության, այլև համբերության ու երկյուղածության մասին է, հապճեպ ու չմտածված հակազդեցության, որն իրոք համարվում է անտրամաբանական ու անխոհեմ արարք: «Եվ եթե դիմադրեք և երկյուղածությամբ առաջնորդվեք՝ ավելի պատշաճ է, քանզի դա կարևոր և վստահելի գործերից է»: Այսինքն, եթե ինքնատիրապետում ունենաք, և ձեր հոգեկան պոռթկումների ու ալեկոծումների դեմ դիմադրող ու համբերատար լինեք, -նման դեպքերում այս է Դուրանի մեկնաբանությունը- «դա կարևոր և վստահելի գործերից է», այսինքն այն արարքներից է, որոնք հիմնված են առողջ մտքի, բանականության ու տրամաբա-

58- Նույն տեղում:

59- Նույն տեղում:

60- Դուրան, 3: 186:

նության, այլ ոչ թե զգացմունքների ու ներքին անտրամաբանական ցանկությունների անմիջական դրսևորման վրա:

**«Սիրո» ճշգրիտ մեկնությունը**

Միևնույն ժամանակ, եթե խոսքը ոչ թե. «Վանհիր չարիքը լավագույն վարք ու բարքով»<sup>61</sup> մտքի, այլ այն խնդրի մասին է, երբ մեր լավագույն վարքագիծը ոչ թե վանում ու ոչնչացնում են չարիքն ու նրան բարության վերածում, այլև մի չարիք ևս ավելացնում ողջ մարդկության ու հասարակության համար, ապա իսլամը հրամայում ու թույլատրում է ցանկացած տեսակի կոպտություն ու խստասրտություն, որոնցից ամենադաժանը հավաքական զանգվածի համար՝ «ջիհադնե է» սրբազան պատերազմը, իսկ անհատ-մեղսագործների դեպքում՝ փոխհատուցումն ու մահապատիժը: Սակայն պետք է միշտ ի նկատի ունենալ, որ նշված բոլոր խստություններն ու դաժան հակազդեցությունները բխում են միայն ժողովրդի բարօրության ու երջանկության ապահովման ու պահպանման շահերից: Սրանք, բոլոր կրոնների կողմից քարոզած ընդհանուր պատվիրաններն են: **«Այն ինչ սիրում ու ցանկանում ես քեզ համար, սիրի՛ր նաև այլոց համար, իսկ ինչ չես սիրում, և նրանից խուսափում ես, մի սիրի՛ր նաև նրանց համար»:** Սա ոչ թե բացառում, այլ ասվածի ինքնատիպ մեկնաբանությունն է համարվում: Ոմանք մանկամտորեն են մեկնաբանում «սեր» կոչվածը: Ըստ նրանց. «երբ տեսնում ենք մի անհավատ զբաղվում է կռապաշտությամբ, մեր հոգը չէ: Մենք միայն պետք է նրան սիրենք ու բարությանը վերաբերենք, չխանգարենք, ցավ չպատճառենք ու թողնենք, որ նա մնա իր տգիտության ու անհավատության խորխորատներում, որովհետև եթե նրան հանդիմանենք ու արգելենք շարունակել իր կռապաշտությունը, դա նրան անընդունելի ու անհաճ կթվա»:

Իսկ մենք կասենք, որ սա ոչ թե սեր, այլ թշնամանք է, որը նման է այն տիպի հիվանդներին, որոնք խուսափում են բժշկից ու դեղերից: Անկասկած դա տգիտության ու խավարամտության արտահայտություն է: Ինչպես անցյալում, երբ դեռ գյուղերում այգիներն ու դաշտերը դեղերով չէին սրսկում, և գյուղացիներն էլ պետության ներկայացուցիչներին չվստահելով, անհավատորեն ու թշնաբար էին ընդունում նրանց, և հաճախ ընդդիմադիր դիրքերից էին վերաբերում գյուղատնտեսական նախարարության ներկայացուցիչներին, որոնք միայն բարի նպատակներով էին ժամանում երկրի տարբեր անկյուններում գտնվող գյուղամասերն ու փորձում էին օգնել նրանց: Գյուղացիներն անգամ կաշառում էին նրանց, որպեսզի նրանք հեռանան, այնուհետև թաքցնում և ոչնչացնում էին նրանցից ստացած ողջ դեղորայքը:

Եթե հասարակության մեջ ևս առկա են նմանատիպ դեպքեր, միթե՞ հնարավոր է դիմանալ, ասելով. «պետք չէ անհանգստացնել ու ցավ պատճառել նրանց, ավելի լավ է հեռանալ ու նրանց հանգիստ թողնել»:

Մենք կասենք՝ ո՛չ, խնդիրը ոչ թե նրանց հանգիստ կամ անհանգիստ թողնելու, այլ նրանց երջանկության ու բարօրության մեջ է: Այնպես որ,

61- Դուրան, 23: 96:



եթե անգամ անհրաժեշտ լինի, հարկավոր է մտրակի հարվածներով նրանց ազատել խավարից, լուսավորել նրանց միտքն ու հոգին ու փրկել նրանց տգիտության ճիրաններից: Անկասկած կգա ժամանակ, և նրանք կհամոզվեն դրանում:

Ինչպես նկատեցիք, «սիրո» թեման ոչ միայն իսլամի, այլև բոլոր կրոնների դաստիարակության հիմունքային հարցերից մեկն է, որոնց միակ տարբերությունը նրանցից յուրաքանչյուրի տված մեկնաբանության մեջ է: Պարզապես հարկավոր է զգուշանալ ու խուսափել մակերեսային ու անլուրջ մեկնաբանություններից, որոնք խեղաթյուրում են սիրո իսկական իմաստը:

### **Ճշմարտության ձգտման զարգացում**

Իսլամական դաստիարակության մյուս հիմունքային ու կարևոր խնդիրներից մեկը ճշմարտատենչության զգացման զարգացումն է: Այն բնագոյաբար առկա է բոլոր մարդկանց հոգում և նրանց բնագոյային հետաքրքրասիրության ու դեգերող նախասիրությունների հիմնական պատճառն է: Այս զգացումն անկասկած մղում է նրանց սերտել գիտություններ ու յուրացնել զանազան ցիտելիքներ: Սակայն, սա ևս մարդու հոգում առկա այն զգացումներից ու՝ ընդունակություններից է, որոնք կարոտ են ստույգ ուղղորդման ու ճշգրիտ զարգացման:

Սա այն պարզ ու ստույգ թեմաներից է, որի կապակցությամբ երկար ու ծիգ քննարկումների անհրաժեշտություն չենք զգում, քանի որ իսլամի մոտեցումն ու նրա ջերմ քաջալերանքը գիտելիքների յուրացման և գիտությունների ուսումնասիրության ուղղությամբ բազմիցս շեշտել ենք, և որի մասին, իսլամի պատմությունն ինքն է ակնարկում: Դա հավաստում են բոլոր անկողմնակալ մարդիկ, որ գիտեն իսլամի ձևավորումն ու ընդլայնումը՝ լուսնային առաջին դարերից սկսած: Ավելին՝ Մուհամադ Մարգարեի օրոք սկսվեց գրագետ դառնալու, օտար լեզուներ և կրոնական գիտություններ սերտելու ձգտումը, որն ընդլայնվեց՝ ընդհուպ մինչև բնական գիտություններ, փիլիսոփայություն, բժշկություն և այլն: Այս բոլորի արմատն ու հիմքը փաստորեն կայանում է իսլամի ջերմ քաջալերանքը, երբ գիտելիքներ ձեռք բերելն իրոք մահմեդականների համար սրբագործություն էր համարվում:

### **Նախապաշարմունքը, որպես գիտության զարգացման խոչընդոտ**

Այն, ինչն արգելում ու խոչընդոտում է գիտությունների զարգացումն ու առաջադիմությունը, դա պարզապես նախապաշարմունքն է իր զանազան տեսակներով, որոնք դեմ են գիտությանն ու մտավոր զարգացմանը: Չատկանիշ, որի դեմ կրած իսլամի պայքարն ակնհայտ է մեզ համար: Նահջ -օլ-Բալադեում առկա Իմամ Ալիի երկարաշունչ ճառը՝ «Ղասեն» է, որի ելակետային թեման նախապաշարմունքի ու մեծամտության քննությունն էր, քանի որ, ինչպես գիտենք, արաբներն հենց այդպիսին էին: Սույն հանգամանքից ելնելով էլ Իմամ Ալին բազմիցս հանդիմանել ու

խիստ պայքար է մղել արաբների յուրահատկություն դարձած այս երկու հատկանիշների՝ նախապաշարման ու մեծամտության դեմ, նրանց համար բացահայտելով դրանցից յուրաքանչյուրից ծնված հետևանքներն ու աղետները: Նա նշում է. «Եթե պետք է ինչ-որ բանի նկատմամբ նախապաշարմունքներով առաջնորդվել, ապա միայն բարիքների, առաքինության ու իմաստության, այլ ոչ թե հասարակ ու հիմար խնդիրների, ինչպիսիք են.» «Ինչո՞ւ աշակերտեմ նրան, ով այսինչի որդին է, իսկ ես՝ այնինչի, իսկ նրա հայրն իմ հոր տան ծառան է եղել»: Նման անարժեք ու անմակարդակ խնդիրների նկատմամբ նախապաշարմունքով լցվելն ու դրանով ուղղորդվելը կատարյալ անմտություն է: Մոլավիի բառերով ասած՝ «անմտությունից ծնված բժախնդրություն»:

**Այս աշխարհն ասես մի ծառ է, ո՞վ մեծահոգիդ,  
Մենք նրա վրա՝ կիսախակ պտուղներ:**

Նա անգամ նկատում է.

**Խստությունն ու նախապաշարմունքը՝ անխելահասություն են,  
Անչափչահասին աշխատեցնելը՝ հանցանք:**

### **Պաստիարակության գործոնները**

Այժմ, երբ արդեն որոշակիորեն պարզեցինք, թե ինչպիսին պետք է լինի իսլամի կողմից նկարագրված մարդը իր մտավոր զարգացման, կամքի, պաշտամունքի, մարմնի առողջապահության, սիրո և այլ ոլորտներում, և որոշակի պատկերացում կազմեցինք իսլամին ցանկալի մուսուլման մարդու մասին, հարկ ենք համարում անդրադառնալ նաև բոլոր այն հնարքներին, որոնք մշակում ու կերտում են մարդուն որպես այսպիսին, և այն միջոցներին, որոնք խանգարում և հակառակ ուղղությամբ են մղում նրա զարգացման ընթացքը:

Մենք հաճախ հիմնվում ենք այն գաղափարների վրա, որոնք շեշտվել ու բազմիցս կրկնվել են հենց իսլամական ուսմունքի մեջ: Արդեն նշել ենք, որ պաշտամունքն ինքնին, իսլամի տեսակետից դաստիարակության մի լավագույն միջոց է: Ավելին՝ համաձայն իսլամի, պաշտամունքն ինքնին դաստիարակչական մի դպրոց է:

### **Զգուշություն և ինքնագնահատում**

Հաջորդ խնդիրը, որին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ, դա «Զգուշության և ինքնագնահատման» թեման է: Խնդիր, որն արծարծվում է կրոնական և հոգևոր դաստիարակության մեջ: Այս խնդրին հույժ կարևորություն և հիմնական ուշադրություն են ցուցաբերել և բարոյագիտության մասնագետները և հոգևոր մտավորականները: Բնականաբար, դաստիարակչական այլ ուսմունքների համար խորթ ու անհիմաստ տերմիններ, սակայն հոգևոր ուսմունքի համար կարևոր դեր ու նշանակու-

թյուն ունեցող խնդիրներ:

Սուրբ Դուրանում կա մի այսօր, որին ես շատ հաճախ եմ անդրադարձնում, թերևս այն պարզ պատճառով, որ ուսանողական տարիներին Դոմ քաղաքում սովորելու ժամանակ նշանավոր մտավորական Իմամ Խոմենյունուց, ով մեզ «Բարոյագիտություն» էր դասավանդում, հաճախ էինք լսում այս այսօրը: Դրանք ասես մեր հոգում միս ու արյուն դարձած տողեր են: Դա 59-րդ սուրայի վերջին այսբներից է.

**«Ով հավատացյալներ, խուսափեք ընդդիմանալ Աստծուն: Եվ ամեն ոք պետք է գիտակցի, թե կանխավ ինչ է պատրաստում իր վաղվա համար: Եվ վախեցեք Աստծուց, քանզի նա տեղյակ է այն ամենին, ինչ կատարում եք: Եվ մի եղեք նրանց նման, ովքեր մոռացել են Աստծուն և Աստված էլ նրանց հոգիներն է ինքնամոռացության մատնում: Նրանք անբարոյականներ են»<sup>62</sup>:**

**«Եվ ամեն ոք պետք է գիտակցի, թե կանխավ ինչ է պատրաստում իր վաղվա օրվա համար»:** Ահա թե ինչ են նշանակում «Յետևողականություն և հաշվարկը»: Եվ այս կապակցությամբ Դուրանում առկա այսբները մեկ-երկուսը չեն, այլ բազմաթիվ ու բազմազան, ինչպես օրինակ. «Եվ ինչ բարի գործ վաղօրոք ուղարկում եք ձեզ համար՝ այն Աստծո մոտ, այլ աշխարհում կգտնեք»<sup>63</sup>: Ասադին էլ իր նշանավոր տողերի խոսքերն այստեղից է վերցրել.

**Հաճույքի մի թերթիկ քո գերեզման ուղարկիր.**

**Քեզնից հետո ոչ ոք չի բերի, դու նախօրոք ուղարկիր:**

Սա «նախօրոք ուղարկելու» Դուրանյան գաղափարն է: Կնշանակի, թե մարդկանց արարքները նախօրոք գրանցվում են այնտեղ, որտեղ նա մի օր ինքը պիտի հայտնվի: Այլ կերպ ասած՝ նրանք նախքան այն աշխարհ գնալը մի շարք իրեր ու ապրանքներ են ուղարկում, ապա՝ իրենք միանում դրանց: Այժմ կոչ եմ անում ձեզ, ճիշտ այնպես, ինչպես բեռ փոխադրելիս կամ ուղարկելիս ուշադրությամբ զննում ու ուսումնասիրում եք այն, նույն կերպ էլ հանդերձյալ աշխարհ ուղարկվելիք ձեր ճամպուրկի մասին հոգացեք ու զգուշացեք:

Մի անգամ ես կրկնվում է. **«Վախեցեք Աստծուց, քանզի նա տեղյակ է այն ամենին, ինչ կատարում եք»:** Այսինքն, նախապես զգուշացեք, և մի մոռացեք, որ ձեր Տերը տեղյակ է ամեն բանից, քանի որ եթե անգամ դուք ուշադիր չլինեք ձեր գործերի նկատմամբ, կա մի անվրեպ աչք, որն ընդմիջտ հետևում է ձեր արարքներին: Ոմանք կատարում են իրենց սրտի ցանկացածն ու այն աշխարհ ուղարկում չմտածված ու ոչ պիտանի բեռներ: Յետո իրենք իրենց արդարացնում են, թե ոչ ոք չի տեսնի ու իրավասու չի լինի դրանց: Մի խաբվեք, քանզի Աստված տեսնում է ամեն ինչ, ու տեղյակ է ամեն ինչին:

Լուսահոգի Պարոն Բորուջերդիի մահվանից մի քանի օր առաջ էր, երբ իր մոտ գտնվող մարդկանցից ոմանք ասացին, թե զարմանքով լսել են, որ նա մահամերձ վիճակում ասել է. «Մեր կյանքն էլ անցավ ու մենք էլ

62- Դուրան, 59: 18,19:

63- Դուրան, 2: 110:

## Հանուն Ողորմած և Բարեգույն Աստուծո

Մենք խոսեցինք այն բոլոր միջոցների ու հնարքների մասին, որոնց հույժ կարևորություն և մեծ ուշադրություն են հատկացվել իսլամական ուսմունքի ու մարդկային հոգու իսլամական դաստիարակության մեթոդների մեջ: Պարզեցինք նաև այն, որ իսլամական, և առհասարակ կրոնական դաստիարակության մեթոդի մեջ առկա են մարդու ներաշխարհ քափանցող հիմնահարցեր, որոնք, սակայն, բացակայում են այլ դաստիարակչական դպրոցների ուսմունքներում, քանի որ այստեղ, խոսքն իրոք հավատից բխող դաստիարակության մասին է:

Անցյալ քննարկման ընթացքում խոսեցինք «ինքնագնահատման» մասին, որին իսլամական աղբյուրների մեջ շատ հաճախ են անդրադարձել: Նկատեցինք նաև, որ սկսած Ղուրանից մինչև Սոհամադ մարգարե, ինչպես նաև Իմամ Ալիից մինչև այլ իմամների խոսքերում բազմիցս շոշափվել է «ինքնահաշվետվության» թեման: Այնպես որ դժվար չէ եզրակացնել, որ և՛ իսլամական ամենահին մատյանների ու բնագրերի, և՛ համարյա բոլոր նորագույն ուսումնասիրությունների ու մեկնաբանությունների մեջ հույժ կարևոր տեղ է հատկացվել մարդու՝ ինքն իր արարքների նկատմամբ զգուշավորության ու ինքնագնահատման խնդրին:

Իսլամական բնագրերում բազմիցս կրկնված, և մարդու դաստիարակության հարցում հիմունքային տեղ զբաղեցնող խնդիրներից է նաև՝ խորհրդածությունը: Ավելին՝ շատ հաճախ մտորելը նույնիսկ պաշտամունքն է համարվել: «Մի ժամվա խորհրդածությունն ավելին արժե, քան մեկ, կամ վաթսուն, կամ յոթանասուն տարվա պաշտամունքը»:

## Երեք տեսակ պաշտամունք

Պարզեցինք, որ խորհելն ինքնին պաշտամունք է: Ուստի, կարելի է ենթադրել նաև, որ պաշտամունքը կարող է լինել երեք տեսակ: 1. Ֆիզիկական, որը կատարվում է նամազ կարդալու և ծոմապահության ժամանակ, երկրորդ՝ պաշտամունքի մաս կազմող «զաքաթը»<sup>67</sup>, «խոմսը»<sup>68</sup>, և առհասարակ բոլոր՝ «էնֆադաթը»<sup>69</sup>: Իսկ երրորդ պաշտամունքը՝ դամտավոր պաշտամունքն է: Կնշանակի, որ մի ժամվա մտորումն ու մտավոր պաշտամունքը կարող է հավասարվել, կամ նույնիսկ գերակշռել վաթսուն տարվա ֆիզիկական՝ մտորումներից զուրկ պաշտամունքին: Հարկավոր է սակայն, զգուշանալ թյուրիմացության մեջ ընկնելուց, քանի որ այստեղ նպատակը մի պաշտամունքը մյուսով փոխարինելը չէ, որ հնարավոր լինի մեկից միանշանակ հրաժարվենք, ու մեր ուշադրությունը միայն կենտրոնացնենք մյուսի վրա: Նպատակը միայն տվյալ պաշտամունքի կարևորության բացահայտումն է:

Հարց է ծագում, մտորում, բայց ինչի՞ մասին: Անկասկած մենք չենք սահմանափակում մարդկային մտորումները, ավելին՝ իսլամական ուսմունքի համաձայն, առկա են տարբեր տեսակի մտորումներ, որոնց առանձնահատկություններին ու բուն էությանը իսլամական մատենագրության մեջ բազմիցս անդրադարձել են:

## Մտորումներ՝ աշխարհի արարման մասին

Կարևորագույն մտորումներից է համարվում արարչագործության ու տիեզերքի մասին մտորումը: Նպատակասլաց մի մտորում, որի հիմնական նպատակը ստեղծագործական աշխարհի և բովանդակ տիեզերքի, և դրանց միջոցով Բացարձակ Տիրակալի ճանաչումն է: Այլ կերպ ասած՝ տիեզերքի ճանաչման միջոցով գծել Աստծո ճանաչմանը հասնելու ուղին: Այս կապակցությամբ Ղուրանն ասում է. «Անշուշտ, երկինքների ու երկրի արարման և գիշեր ու ցերեկի երթ ու դարձում, պարզորոշ նշաններ կան խելամիտների համար: Հենց նրանք, ովքեր կանգնած և նստած վիճակում և երբ պառկած են կողքի՝ հիշում են Աստծուն և խորհում են երկինքների և երկրի արարման առեղծվածի շուրջ»<sup>70</sup>:

Անկասկած, խորհելով տիեզերքի արարման, նրա կանոնակարգման ու դասավորման, ինչպես նաև մտորելով արարված աշխարհի առեղծվածի մասին, մարդն սկսում է խորհել նաև այդ բոլորն ստեղծողի ու արարողի՝ Աստծու մասին: Ահա թե ինչու ենք ասում, որ տիեզերքի արարման մասին խորհելն ինքնին՝ պաշտամունք է: Ավելին, այն ոչ միայն գիտական մտորում է այլև զուտ պաշտամունք:

66- Ինքնախարազանում (թ):

67- Պատերազմի ավարի գ-ը, որը պատկանում է Մարգարեին (թ):

68- Նշված ավարի 1/5-ը (թ):

69- Բոլոր տեսակի նվիրատվություններ (թ):

70- Ղուրան, 3: 190,191:

## Մտորումներ՝ պատմության մեջ

Սուրբ Ղուրանում արտացոլված մտորումներից մեկն էլ պատմության էջերում դեգերելն ու նախնիների, տարբեր ցեղերի ու ազգերի կյանքի, նրանց ճակատագրի ու վախճանի մասին խորհելն է:

Ղուրանի մեջ նույնիսկ արտացոլված են տողեր այն ամենի մասին, ինչը մենք անվանում ենք «պատմվածքներ» ու «հեքիաթներ», կամ այլ կերպ ասած՝ այն բոլորը, ինչ մենք կոչում ենք «պատմություն»: Ղուրանում, հատկապես արժարժվում են թեմաներ, որոնք ուսուցանող ու դաստիարակչական առանձնահատկությամբ են օժտված: Այս կապակցությամբ նշվում է սակայն, որ պատմվածքներն ու հեքիաթները հենց այնպես, միայն ժամանցի ու զվարճության համար չեն պատմվում, այլ, ինչպես ասվում է Ղուրանում. «Այս պատմությունները, նրանց համար մեկնաբանիր, թերևս խորհեն և արթնանան»<sup>71</sup>:

Ինչպես նկատեցիք, պատմության ուլորտներում ու նրա էջերում դեգերելն ու խորհելը նույնպես մտորման տեսակներից մեկն է համարվում, որն ըստ իսլամի նաև պաշտամունք է:

## Մարդու մտորումներն իր մասին

Պաշտամունք համարվող մտորումներից, որն ըստ էության մեր քննարկման կարևորագույն խնդիրն է, առաջինը մարդու մտորումն է հենց իր անձի մասին: Այսինքն, երբ մարդը որոշակիորեն կանգնած է իր իսկ մտորումների կենտրոնում, որպես հիմնահարց: Այս երևույթը կարող է լինել երկու տեսակի՝ կամ մարդն ուսումնասիրվում է լոկ որպես քնության ու հետևաբար գիտության մեջ զետեղված մի տարր, կամ՝ նա խորանում ու խորհում է իր իսկ կատարած արարքների ու գործերի մասին: Այն մասին, թե ինչպիսի որոշումներ պետք է կայացնի, ինչպես պետք է դրանք իրականացնի, և այլն: Բնականաբար, մարդ չի կարող ապրել հենց այնպես՝ առանց ինքն իր մասին խորհելու և իր ճիշտ կյանքի ուղին գտնելու: Սիւս թե ինչպիսի մտորումների մասին է մեր խոսքը:

## Արդյո՞ք հասարակության կողմից բռնությունն իշխում է մարդուն

Երբեմն մարդը քանու գիրկն ընկած տերևի է նմանվում, որը ցանկացած հոսանքի հետ, նրա ուղով է սլանում: Անկասկած հասարակությունն այն ուժգին հոսանքն է, որն իր մեջ ապրող մարդկանց քշում ու տանում է ցանկացած ուղղությամբ: Սակայն դա միշտ չէ որ այդպես է, քանի որ հիշյալ երևույթը, բացարձակ միակողմանի լինել չի կարող: Անշուշտ, միջավայրը, կենցաղային ու հասարակական իրավիճակը, որպես բացարձակ ուժ չեն բռնանում մարդու կամքին: Անտարակույս հասարակության մեջ ապրող մարդը ոչ միայն ի գորու է ինքն իր համար որոշումներ կայացնել ու տնօրինել իր ճակատագիրը (ըստ իր կամքի ու հայեցողության, ի վիճակի է ջրի հոսանքին հակառակ լողալու՝ չհնազանդվել հա-

71- Ղուրան, 7: 176:

սարակության թելադրանքին ու ուղղությանը), այլև կարող է նույնիսկ ինքն ազդել նրանց վրա՝ հասարակությանն ու մարդկանց վրա ճնշող հոսանքը շեղել ու դեպի նոր ուղի ու ապագա առաջնորդել:

Մեզ քաջ հայտնի է, որ սա ըստ էության իսլամական ուսմունքի ու դաստիարակության դերն ու պարտավորությունն է: Հակառակ դեպքում կրոնական պարտականությունները, թելադրանքը, դեպի լավն առաջնորդելն ու չարից հեռացնելը, սրբազան պատերազմը և այլն ոչ միայն չարաչար կարծեգրվեին, այլև առհասարակ անհիմաստ ու անմիտ կղարծենին «վերջին դատաստան» ու «փոխհատուցում» արտահայտությունները: Ուստի, եթե ընդհանուր բռնությունն իշխի մարդկային կամքին, այլևս մարդը կղադարի որպես լիարժեք էակ գոյություն ունենալուց և կղառնա բացարձակ անկարող ու կամազուրկ մի կենդանի, որի համար անհիմաստ կլինեն լավն ու վատը, չարն ու բարին, փոխհատուցումն ու գնահատումը, և երկրի վրա և երկնքում:

### **Մտորումներ սեփական ճակատագրի և հասարակությանը տնօրինելու հիմնախնդրի շուրջ**

Եթե մարդ արարածն իրոք ցանկանում է ինքնուրույն տնօրինել իր և հասարակության ճակատագիրը, և հլու ու հնազանդ չենթարկվել հասարակության կողմից թելադրված ցանկացած ուղղությանն ու հոսանքին, ապա դրա թերևս միակ ու հիմնական պայմանը սեփական բանականության ու խելքի զարգացումն ու կիրառումն է: Սա բարոյական խորհրդածություն է, որը կարող է համընկնել նաև ինքնագնահատումն արտահայտությանը: Նշանակում է, մարդն օրվա ընթացքում, որոշակի ժամանակ պետք է հատկացնի՝ ինքն իր, իր ներաշխարհի մեջ խորանալու, այն ուսումնասիրելու և դրա մասին մանրակրկիտ մտորելու համար: Խորհի՝ արդեն իսկ կատարած, կամ ապագայում կատարելիք գործերի, կայացրած կամ կայացվելիք որոշումների, կարդացած գրքերի, հաղորդակցված ընկերների, մի խոսքով՝ իր և իր ներաշխարհի ամբողջական պատկերը գծի իր երևակայության մեջ: Օրինակ՝ անհրաժեշտ է մտորել ու խորհել վերջին ընթերցած գրքի մասին: Արդյո՞ք ինչ-որ բան ստացել է դրանից, արդյո՞ք կրել է մի ինչ-որ ազդեցություն և առհասարակ՝ դրա ընթերցումը դրական է եղել, թե՞ բացասական: Ապա, առավել մանրակրկիտ խորհի ընտրվելիք հաջորդ գրքի մասին: Բնականաբար, նա չունի այնքան ժամանակ, որպեսզի կարողանա ընթերցել աշխարհի բոլոր գրքերն ու հրատարակված աշխատությունները, ուստի, անհրաժեշտ է կողմնորոշվել ու ստույգ որոշումներ կայացնել:

Մի գեղեցիկ նախադասություն են օրինակ բերում Իմամ Ալիից, որը սակայն գոյություն չունի «Նահջ -օլ-Բալադե» գրքում, սակայն առկա է հադիսներում: Իմամ Ալին ասում է. «Կյանքը՝ շատ կարճ է, գիտությունները՝ անսահման: Ուստի ցանկացած գիտությունից ընտրի՛ր լավագույնը, և թո՛ղ ավելորդները»<sup>72</sup>:

Ուրեմն, ակնհայտ է, որ անգամ գրքեր ընտրելու հարցում անհրաժեշտ

72- Բահար-օլ-Անվար, 219/1, չնչին փոփոխությամբ:

է մտածել ու ընտրել: Էլ չենք խոսում ընկերների ու մարդկանց հետ հաղորդակցվելու մասին, որոնց դեպքում անշուշտ հարկավոր է խելացի մտածել ու տեսնել թե արդյոք շահավետ ու օգտակար է նրանց հետ հարաբերվելը, թե՞ ոչ. կամ արդյո՞ք նրանցից երբևէ ստացվել է դրական ազդեցություն, թե՞ ոչ: Էականն այն է, որ մարդ ցանկացած աշխատանք կատարելուց առաջ խորհի այն մասին, թե ինչպիսի հետևանքներ են հաջորդելու դրան: Չնայած շատ հաճախ, մեր գործունեության հիմքում բացակայում են առողջ ու խելամիտ որոշումներն ու բանականության միջամտությունը: Հնարավոր է, եթե նախօրոք առավել զգույշ ու շրջահայաց լինենք, բազմակողմանիորեն խորհենք, ապա անխոհեմ ու անմիտ որոշումներ չկայացնենք: Ուստի, կրկնում ենք, անհրաժեշտ է նախապես մտածել կատարելիք գործի, նրան հաջորդող հետևանքների, մեզ իր հետևից տանող ճամփաների, նրանից բխող արդյունքների ու այդ ամենի փոխազդեցությունների մասին: Սոհամադ մարգարեի բառերով ասած՝ իմանալ. «ո՞րն է նրա վախճանն ու հետևանքը»:

### Շրջահայացություն

Մի մարդ մոտենալով Սոհամադ մարգարեին ասաց. «Տեր, ինձ մի խրատ տվեք»: Մարգարեն երեք անգամ կրկնեց հետևյալ բառերը. «Եթե ասեմ, ապա դա կկատարե՞ս»: Պատասխանը եղավ. «Այո, Տեր իմ»: (Իհարկե այս կրկնությունն անշուշտ նրա համար էր, որ իր հաղորդած խոսքն ավելի խորը թափանցի նրա հոգում, և նա հասկանա, թե ինչպիսի արժեքավոր խրատ է դա, և որը չպետք է երբևէ մոռանալ): Այնուհետև մարգարեն ասաց. «Երբ ցանկանում ես ինչ-որ բան կատարել, նախապես շրջահայացորեն մտածիր նրա հետևանքների մասին, ապա նոր՝ որոշում կայացրու»<sup>73</sup> :

«Թաղարթոր»<sup>74</sup> բառի ստուգաբանությունը գալիս է «դաբառա»<sup>75</sup> բառարմատից, որ նշանակում է նաև հեռատեսություն, շրջահայացություն: Շրջահայաց լինել նշանակում է լինել հեռատես, խորհել գործի խորքերի ու նրա հետևանքների մասին, ոչ թե դիտել ու ընկալել նրա արտաքինն ու մակերեսը միայն: Բնականաբար, յուրաքանչյուր արարք ունենում է և՛ արտաքին տեսք և՛ որոշակի խորք ու իմաստ: Մարդ հաճախ տեսնում ու ընկալում է գործերի ու երևույթների միայն մի շերտը, և անկարող է լինում թափանցել խորքերն ու վեր հանել խնդրի ներքին շերտերը: Չնայած շատ հաճախ արտաքին հայացքից տվյալ երևույթը կարող է երևալ մի կերպ, իսկ խորքային ուսումնասիրության ժամանակ՝ այլ: Նշվածներից դժվար չէ կռահել, որ շրջահայացություն նշանակում է յուրաքանչյուր աշխատանք կատարելուց առաջ բազմակողմանիորեն ուսումնասիրել երևույթն իր բոլոր նիստերով:

Նահիջ-օլ-Բալադեի մեջ Իմամ Ալին խոսելով սաղրանքի ու խռովության մասին, նշում է, թե նրանք «արտաքին տեսքից գեղեցիկ են ու անճանա-

73- Բահար-օլ-Անվար, 339/71

74- Խորհրդածություն (թ):

75- Խորհել, մտածել (թ):



**չելի, իսկ խորքում ավերիչ են ու կործանիչ»<sup>76</sup>**: Ցավոք, նախադասությունն անբողջությամբ դժվարանում են մտաբերել, սակայն նրա մոտավոր իմաստն հետևյալն է. «Երբ մի տեղ հայտնվում են սադրանքն ու խռովարարությունը, նրանք ասես փոշու պես լցնում են մթնոլորտը, կամ մթությանը ու անտեսանելիությամբ պատում շրջապատը: Դրանց անմիջապես հետևում են ստերն ու բամբասանքը, զգացմունքների բուռն պոռթկումները, ապա հանդես են գալիս դեմ ու կողմ անձինք: Հետևաբար մարդն անկարող է լինում իրատեսորեն դատել ու կողմնորոշվել: Սի խոսքով մարդն անկախ իր կամքից կարծես դավադրության ծուղակն է ընկնում: Սակայն հենց անհետանում են սադրանքն ու խռովարարությունը, մի ակնթարթում անհետանում են նաև փոշին ու խավարը: Սփռվում է լուսավորություն և իմաստավորվում է ամեն ինչ: Այնուհետև մարդ կարողանում է տեսնել ու ընկալել այն ամենն, ինչ ընդունակ չէր ընկալել խավարում ընկղմված ժամանակ: **«Արտաքին տեսքից գեղեցիկ են ու անճանաչելի, իսկ խորքում ավերիչ են ու կործանիչ»:**

### Խորհելու սովորություն

Ուրեմն իմացանք, որ իսլամական կրթադաստիարակության մեջ մտորելու սովորությունը հոգեկան բարոյական դաստիարակության էական միջոցներից մեկն է: Մտորելն ու խորհելն ահրաժեշտաբար պետք է մարդկանց համար սովորություն դառնա: Սա նշանակում է այն, որ մարդ սովորի, որ ցանկացած գործ կատարելուց առաջ անհրաժեշտ է բազմակողմանիորեն մտածել ու քննել արարքների ու նրանց հետևանքների մասին: Այս երևույթը բարոյագիտության մեջ համապատասխանում է հենց մեր վերը նշած՝ «ինքնագնահատմանը»: Սրանից բացի, ասում են, թե մարդն օրվա ընթացքում, գոնե մի անգամ, թեկուզ մի քանի րոպե պետք է հատկացնի ինքն իրեն, իր սեփական շեսի մասին խորհելուն, արդեն իսկ կատարած գործերի ու արարքների մասին մտորելուն, ինչպես նաև ապագայում կատարվելիք գործողություններին: Նույնիսկ պետք է, որ իրագործելիք որոշումների վերաբերյալ կողմնորոշվի:

Մտորումը ևս այն թեմաներից է, որի մասին նույնպես անհամար են ասացվածքներն ու մանրապատումները: Կա մի հադիս Աբուլզարի մասին, որտեղ ասվում է. **«Աբուլզարի առավելագույն նվիրումը, նրա մտորումներն էին»:** Անկասկած մտածելը մարդու մտքին տալիս է լուսավորություն: Այսպիսով՝ չմտածված պաշտամունքը կարող է գուր ու դատարկ աշխատանք համարվել:

### Հաղորդակցվել արդարների հետ

Իսլամական դաստիարակության կարևորագույն միջոցներից է նաև արդարամիտ ու ազնիվ մարդկանց հետ շփվելն ու հարաբերվելը:

Այս կապակցությամբ իսլամական ուսմունքում օգտագործվում են «հաղորդակցություն», «հաղորդակցության փոխազդեցություն», «դրա-

76- Նահե-օլ-Բալադե, 92, թղ ճառ:

կան և բացասական հաղորդակցություն» բառակապակցությունները: Բնականաբար, արդարների հետ հաղորդակցվելն ունի չափազանց բարի, իսկ չարագործների ու անազնիվ մարդկանց հետ հաղորդացությունը՝ չափազանց բացասական ու չար հետևանքներ, որից խորհուրդ է տրվում՝ հնարավորինս հեռու մնալ: Հակառակ դեպքում, զուր ջանքեր են պահանջվելու, որպեսզի մարդը չփվի ու հարաբերվի նրանց հետ, սակայն խուսափի արդյունքում ծնված անբարենպաստ հետևանքներից ու արդյունքներից, քանի որ միևնույն է, Մոհամադ մարգարեի բառերով ասած. «Յու-րաքանչյուր ոք՝ իր ընկերոջ կրոնակիցն է»<sup>77</sup>: Այսինքն, երբ ընկերանում ու մտերմանում եք մեկի հետ, ընդունում եք նաև նրա կրոնը:

Նահջ-օլ-Բալադեի մեջ կա մի այսպիսի արտահայտություն. «Անհավատի ու անօրենի, (առհասարակ ցանկասեր մարդու) հետ հաղորդակցվելը, դա ինքնին հավատի ուրացում է»<sup>78</sup>:

Անգամ Դուրանի, «Թա-Հե» սուրայում. (ըստ երևույթին Մովսես մարգարեին) ասվում է. «Ուրեմն թող նա, ով հավատ չունի նրա նկատմամբ և հետևում է իր ցանկասիրություններին՝ հանկարծ քեզ հետ չպահի նրանցից, այլապես կկործանվես»<sup>79</sup>: Իսկ Աստված Մովսեսին, մարգարեություն տալուց հետո, ասում է. «Թող որ անհավատ մարդիկ չարգելեն քո երթը»: Այս արգելքն ու խոչընդոտ հանդիսանալը բռնության իմաստով չի ասվում, ինչպիսիք էին Փարավոնների ժամանակները: Ահա թե ինչպիսի տողերով է ավարտվում այաթը. «Այլապես կկործանվես»:

Այս այաթից երևում է, որ Աստված կարծես նախազգուշացնում է Մովսես մարգարեին անարդար ու չար ցեղակիցներից կրած ազդեցությունից ու դրանց հետևանքներից: Իհարկե սա չի նշանակում, որ նա միանշանակ զերծ մնա չարագործներից (այլապես ում պետք է առաջնորդեր): Սա միայն շրջահայացության կոչ է, և նախազգուշացում չար մարդկանց ընկերակցության անբարենպաստ հետևանքների մասին:

Ուստի, մարդ պետք է խելամտորեն ընտրի իր շրջապատն ու ընկերներին: Սա իհարկե չի վերաբերում ուսուցիչ-աշակերտ, կամ դաստիարակուսանող բարոյագիտական փոխհարաբերություններին: Այստեղ խոսքը միայն մարդու համար սիրելի ու հարազատ էակների, հատկապես ընկերների մասին է, առանց որոնց կյանքն անիմաստ կդառնա, և որոնց մարդ համակրում ու որոշակի զգացմունքային կապերով է կապվում: Սակայն մարդ, ինքն իր սեփական անձի դաստիարակության համար պարտավոր է խելամտորեն ու խոհեմությամբ ընտրել ընկերներին՝ իր շրջապատն ստեղծող մարդկանց:

### Մի ավանդապատում Հիսուս Քրիստոսից

Մեր հաղիսների մեջ նշված է, թե մի խումբ (երևի Քրիստոսի աշակերտներից), նրան հարց են տալիս. «Տեր, ո՞ւմ հետ ընկերություն անենք»: Քրիստոսը պատասխանում է. «Նրա հետ, որին հանդիպելիս ձեր երկնա-

77- Օսուլե Բաֆի, 375/2

78- Նահջ-օլ-Բալադե, 65-րդ ճառ:

79- Դուրան 49: 16:

յին Տիրոջը կհիշեք: Կան մարդիկ, որոնց հանդիպելիս մոռանում ենք Աստծո մասին, իսկ կա մի այլ խումբ, որոնց արարքները, վարքն ու բարքը, արտաքին պահվածքը, մի խոսքով՝ նրանք ամբողջությամբ մեզ արթնացնում են հավիտյան քնից ու մղում դեպի սեր առ Աստված»<sup>80</sup>: Շփվեք ու հաղորդակցվեք նրանց հետ, ովքեր ձեզ կհիշեցնեն Բարձրյալի մասին, նրանց հետ, որոնց խոսքը ձեր իմաստությանը կավելացնի ու յուրաքանչյուր անգամ նրան հանդիպելիս մի ինչ-որ նոր բան կսերտեք նրանից: Կան մարդիկ, որոնց հանդիպելիս ու որոնց հետ խոսելիս, զգում ենք որոշակի մտավոր զարգացում ու իմաստություն, «**նրանք ամբողջությամբ մեզ արթնացնում են հավիտյան քնից ու մղում դեպի սեր առ Աստված**», կնշանակի, թե կան նույնիսկ այնպիսի մարդիկ, որոնց հետ հաղորդակցումն ու շփումը ուղղակիորեն ազդում է անգամ մեր վարք ու բարքի ու բարոյական առանձնահատկությունների վրա:

Արդեն նշեցինք, որ հաղորդակցությունն ունի անխուսափելի ազդեցություն: Այժմ ավելացնենք նաև այն, որ առկա է որոշակի տարբերություն ուսուցիչ-աշակերտ, կամ այլ տեսակի հարաբերությունների միջև: Եվ առհասարակ կարելի է ընդհանրացնել, որ գոյություն ունեն երկու տեսակի հարաբերություններ: Առաջինի դեպքում կողմերն այսպես ասած՝ ինքնակամ փակում են իրենց հոգու ու սրտի դռները միմյանց դեմ և թաքնվում որոշակի դիմակի ներքո: Այն դեպքում նրանք մեկ մեկու չեն ներկայանում որպես այնպիսին, ինչպիսին նրանք կան իրականում՝ այլ ներկայանում են, որպես ինքնամփոփ ու պաշտոնական մարդիկ: Իսկ մյուս՝ մտերմիկ հարաբերության դեպքում, հնարավոր է, որ կողմերը առաջին հանդիպման ժամանակ, միմյանց դիմավորեն կեղծ ժպիտով ու դեմքի արտասովոր արտահայտությամբ, նույնիսկ մեկը մյուսին թվախորթ ու անհաղորդ, սակայն երբ անցնի որոշ ժամանակ ու նրանք ընկերանան այնպես, որ նրանց միջև ստեղծվի որոշակի մտերմություն, սկսեն մտերմորեն խոսել, ու միմյանց առջև բաց անել սրտի թաքուն գաղտնիքները: Ահա թե ինչպիսի հարաբերության մասին է մեր քննարկման հիմնական թեման: Նշված հարաբերությունների դեպքում էլ մարդիկ իրենց կամքից անկախ, մեկը մյուսից ազդեցություն են կրում, կամ մեկը մյուսի վրա խորապես ազդում: Այս կապակցությամբ եզակի գեղեցկությամբ են աչքի ընկնում Մուլավիի հետևյալ տողերը.

**Սրտից սիրտ են փոխանցվում**

**Գաղտնի ճանապարհով՝ և՛ բարությունը և՛ քեներ:**

**Բարու հետ հաղորդակից լինելը, քեզ բարի կդարձի,**

**Չարի հետ շփվելը՝ չար:**

Անկասկած լավերի հետ հաղորդակցվելիս մարդն ինքն էլ չի զգում, թե ինչպես զարգացավ, իսկ չարերի հետ ընկերանալիս, նույնպես չի կռահում, թե երբ ինքն էլ չարությամբ լցվեց:

80- Օսուլե Բաֆի, 39/1. Եվ ի վերջո նրանց արարքի մեջ...»:

## Նվիրվածություն

Մարդկային հարաբերությունների հետևանքով ծնված գերագույն զգացումը, դա նվիրվածությունն է: Որևէ անձնավորության նկատմամբ տածած սերն ու համակրանքը, մարդու փոխվելուն ու զարգացմանը նպաստող եզակի ու ամենակարող միջոցն է: Նշենք սակայն, որ եթե այդ տերմինը ճիշտ տեղ է ընկնում, ապա ծաղկեցնում է ամեն բան, իսկ հակառակ դեպքում, այնպիսի հրդեհ է բռնկվում, որի մեջ առաջինը հենց ինքը՝ մարդն է այրվում:

Նվիրվածության զգացումն անկասկած սերում է սիրո և համակրանքի ակունքներից: Եթե մարդ ճանաչելով ինչ-որ մեկի գերագույն ու եզակի առանձնահատկությունները, իդեալականացնում է նրան ու հրապուրվում նրա բարոյական ու հոգևոր արժանիքներով, ապա նրանից մեծապես ազդեցություն է կրում, և սկսում է կուրորեն հետևել նրան: Թերևս այս է հիմնական պատճառը, որ միստիկները (սուֆի), հույժ կարևորություն են դարձնում ճշմարիտ շեյխի ու մորշեդի ընտրմանը: Ի հարկե այժմ չենք ցանկանում անդրադառնալ նրանց հայեցողությանը:

Հիմնականում, երբ իսլամի մեջ պատահում ենք հոգևոր առաջնորդների ու առաքյալների նկատմամբ սիրո և նվիրվածության պատվիրանին, հնարավոր է, դա ինքնին հեթանոսություն կամ անհավատություն համարել: Հնարավոր է, սակայն այն դեպքում, երբ այն հակասի մեր հետևյալ խոսքերին:

Մենք Իմամ Ալիին համարում ենք մարդկության պատմության մեջ ծնված լավագույն էակներից մեկը, սակայն մենք պարտավոր ենք պաշտել միայն մեր Տեր Աստծուն: Գիտենք նաև, որ բոլոր մարգարեները լոկ միջոցներ են եղել՝ մեզ մեր Տիրոջը մերձեցնելու համար: Ապա այդ դեպքում ինչո՞ւ ենք սիրով ու նվիրվածությամբ տոգորվում մեր Իմամ Ալիի նկատմամբ: Հարկ ենք համարում նշել, սակայն, որ սերն ու համակրանքը մեր մարգարեի, Իմամ Ալիի, և ցանկացած այլ կատարյալ մարդու նկատմամբ կարող է մարդու դաստիարակության ու նրա հոգու ուղղորդման գերագույն միջոցը հանդիսանալ: Այս է ահա հոգու առաջնորդներին ու առաքյալներին մեծարելու և նրանց նվիրվելու փիլիսոփայությունը:

## Մարգարեների սերն ու ակնածանքը՝ «Ամին Օլլայի» աղոթքի նկատմամբ

Անկասկած ընթերցած կլինեք «Ամին Օլլայի» աղոթքը: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ տվյալ աղոթքը մարգարեներին ուղղված աղոթքներից, թերևս ամենաընդունվածն ու տարածվածն է, (նրա առկայության փաստն ստույգ է ու հանդիսալի), որի իմաստն ու բովանդակությունը նույնպես հրաշալի է ու լիարժեք: Այն բավականին կարճ աղոթք է: «Մաֆաթի» և մի քանի այլ գրքերում այն գետեղվել է Իմամ Ալիին վերագրված աղոթքների շարքում: Այն բացարձակ աղոթք է, այլ ոչ թե հատուկ: Այսինքն, չի պատկանում որոշակի օրվա կամ տոնի, որի ժամանակ կարելի է աղոթել Իմամ Ալիին: Սակայն, միևնույն ժամանակ միանշանակ կարելի է ասել, որ Իմամ Ալիին պատկանող աղոթք էլ չէ, քանի որ հնա-

րավոր է ցանկացած Իմամի դիմել այս աղոթքով, միայն այն տարբերությամբ, որ յուրաքանչյուր Իմամին դիմելու համար, անհրաժեշտ է արտասանել որոշակի դիմելաձևն ու նրան հատուկ արտահայտությունը:

Աղոթքն սկսվում է տվյալ մարզարեին կամ սրբին ուղղված ողջույնի, ակնածանքի ու մեծարման խոսքերով, որոնց հաջորդում են նրա փառաբանմանը նվիրված խոսքերը, որտեղ նշվում է, որ բոլորը ականատես են եղել, թե նա ինչպիսի արժանապատվությամբ է մասնակցել Աստծո սրբազան պատերազմին, նահատակվել նրա համար, և լիովին կատարել իր սուրբ առաքելությունն ու երկնային հանձնարարությունները: Այս առաջաբանին հաջորդում է տասներեք տողերից բաղկացած աղոթքը, ասել է թե՛ սրբին ողջունելուց ու նրան հարգանքի տուրք մատուցելուց հետո, նրանից ցանկանում ենք հետևյալը. «Տեր, իմ հոգուն ու մարմնին պարզևի՛ր ապահովություն, խաղաղություն ու առույգություն, թող լինեմ հնազանդ քո կանջին, անհազ՝ քեզ աղոթելուն ու քո մտքին, սիրահար՝ քո ընտրյալներին ու մարզարեներին, ինչպես նաև լինեմ սիրված ու սիրելի՝ երկրիդ ու երկնքիդ վրա: Ինձ շնորհի՛ր համբերություն փորձանքների, չարիքների ու պատահած արկածների պահին, դարձրո՛ւ շնորհակալ՝ մեզ պարզևած բոլոր բարիքներիդ դիմաց, ինչպես նաև մեզ շնորհած արտաքին ու ներքին արժանիքների՝ համար: Մեզ դարձրո՛ւ քո տեսությունը տենչացող, դատաստանիդ օրվա համար պաշար պատրաստող, սիրեցյալներիդ բարի արարքին հետևող ու քո կողմից ատելիների վարքից խուսափող, և երկրի վրա քեզ փառաբանող»:

Նշված տասներեք տողերից բացի, այնտեղ առկա է նաև երկու տող, որոտեղ խոսվում է «սիրո» մասին. «**լինել սիրված ու սիրելի՝ երկրիդ ու երկնքիդ վրա**»: Այսինքն, ցանկանում եմ սիրել ու լինել սիրված. սակայն ո՞ւմ սիրել: «**Սիրեցյալներիդ բարի արարքին հետևող**», խոսքն արդեն հուշում է, թե ում է հարկավոր սիրել՝ Աստծո ընտրյալ ու սիրելի մարդկանց, որոնց բարի ոգին ու անարատ արարքը՝ մազնիսի պես ձգում ու գրավում են ցանկացած մարդուն: Այս թեման, սակայն, առանձնանում է «մտորման» ու «ինքնագնահատման» խնդիրներից, քանի որ սրանք մարդու մտավոր կարողությունների ծնունդ են, (սակայն համեմատաբար շատ ավելի խորն ու թափանցող է մարզարեների թողած սիրո ազդեցությունը):

«Իմամ Ալիի ձգողական ու վանող հատկանիշների» խնդրին, ես բազմիցս անդրադարձել եմ գրքերիս մեջ, որտեղ արտահայտել եմ այն միտքը, թե այս երկու հակասական կողմերն ապացուցելու և առավել հանգամանալից լուսաբանելու համար, անհրաժեշտ է նրանց նմանեցնել երկաթի փշրանքներին, որոնց խառնել ենք հողի հետ, իսկ այժմ ցանկանում ենք առանձնացնել: Բնականաբար, երկու հիմնական միջոց կա. կամ ձեռքով, երկարատև գործընթացի արդյունքում տարրանջատել երկաթը հողից, կամ՝ մազնիսի օգնությամբ՝ արագությամբ ու մեկ ակնթարթում:

Եթե մարդ ցանկանա միայն հենվելով իր մտորումների, ինքնագնահատման, ինքնազարգացման, ինքնապախարակման, զգուշավորության, և հնարավոր այլ գործոնների վրա հասնել ինքնամաքրման ու ձերբազատվել մեղքերից, անշուշտ դա հնարավոր կլինի: Բայց նա կնմանվի

այն մարդուն, որը ցանկանում է երկաթի փոշին ձեռքով ու մանրակրկիտ աշխատանքի միջոցով անջատել հողից: Սակայն, եթե մարդուն բախտ վիճակվի և նա մի պահ հանդիպի այն լիարժեք գերմարդուն, որը կոյուքի ու իր մեջ կհավերժացնի նրան, ապա նա նույնպես ճեղքելով տհասության իր կեղևը, կվերաճի ու կգարգանա: Հետևաբար, իր դիրքից բարձրանալով՝ լիակատար մարդ կդառնա, ու այնպիսի ունակություններ ձեռք կբերի, որոնք բնական պրոցեսն անցնելու դեպքում անկասկած երկար ու ձիգ տարիներ էին տևելու: Սա նման է այն մագնիսին, որը վայրկենապես առանձնացնում է երկաթի փոշին՝ հողից:

Այսպիսով՝ «լինեմ սիրեցյալներիդ բարի արարքին հետևող»-ը, ինչպես նաև, «լինեմ սիրված ու սիրելի՝ երկրիդ ու երջնքիդ վրա», կնշանակի՝ և՛ սիրեմ քո սիրեցյալներին ու ընտրյալներին, և՛ ինքս լինեմ սիրված ու սիրելի. թե այս կյանքում՝ մարդկանց կողմից, թե՝ երկնքում:

### Մալամաթիների կիրառած մեթոդը

Լինես այնպիսին, որ մարդիկ ատեն ու քեզ հետ թշնամաբար վերաբերվեն, դա չի նշանակում, բարեպաշտություն: Սա սուֆիական մ-օլ-լամաթի կոչված ուղղությունն էր: Նրանք սուֆիական մի խումբ էին, որոնք հայտնի էին, որպես «Մալլամյե», կամ «Սալլամաթի»: Ինքնամաքման և սեփական անձի դեմ պայքար մղելու նրանց ընտրած մեթոդը կայանում էր նրանում, որ ապրում ու գործում էին այնպես, որ բոլորն ատեն ու կասկածանքով վերաբերեն նրանց: Նրանցից մեկն, օրինակ, համայնքի մոտ ներկայանում էր որպես գինեմուլ: Նա ամենուր կրում էր գինու շիշը, և ձևացնում, թե իբր գինեմուլ է: Գինու շիշը պահում էր տանը, սակայն իրականում նա երբեք նրանից չէր էլ օգտվում: Ապրում էր այնպես, որ մարդիկ թամբասեն ու նրան գինեմուլ համարեն: Կամ, օրինակ՝ աղոթում և նամազ էր կարդում, սակայն մշտապես դա կատարում էր աչքերից թաքուն, որպեսզի նրան անհավատ համարեն:

### Ադիբե Նեյշաբուրիի պատմությունը

Մաշհադում Ադիբ Նեյշաբուրի անվամբ մի մարդ է բնակվել: Նրան հաջորդել է Ադիբ երկրորդը, որը ներկայումս էլ ապրում է նույն տեղում: Ես մոտիկից ճանաչում եմ այս երկրորդին, և կարող եմ հավաստել, որ նա իրոք հավատացյալ ու չափազանց բարի մի մարդ է: Սակայն այս Ադիբներից երկուսն էլ, փորձում էին իրենց երեսապաշտ ու կեղծավոր ներկայացնել: Ցուցամուլ, երեսապաշտ մարդիկ, որոնք կեղծավորությամբ աղոթում են ու բարեպաշտ ձևանում, սակայն ոչ աղոթում են, ոչ էլ երբևէ հավատում: Իսկ սրանք՝ հակառակն էին անում, կեղծում՝ թե իբր չեն աղոթում, սակայն գաղտագողի ու թաքուն աղոթում էին, ու փորձում բոլորին համոզել որ երբեք Իմամ Ռեզայի դամբարանին այցելութան չեն գնում: Սակայն, հայտնի է, որ նրանց տեսել էին այնտեղ: Իհարկե, նշենք, որ սա կեղծավոր մարդկանց բնորոշ հատկանիշերից է: Հաֆեզի պես բանաստեղծներն էլ, որոնք փորձել են իրենց ազատ ու անկաշկանդ

դրսևորել, նույնպես ցանկացել են երեսապաշտ ու կեղծավոր մարդկանց օրինակին հետևել, որը դարձյալ կեղծավորություն է համարվում:

Լուսահոգի Ադիբ առաջինի աշակերտներից մեկը, (որը նույնպես գրագետ մի մարդ էր, և հետագայում Լուսավորության նախարարության լավագույն ուսուցիչներից մեկը դարձավ), մեզ պատմում էր Ադիբին աշակերտած տարիներին իր ուսուցչին մատուցած ծառայությունների մասին: Նա ասում էր, որ շատ հաճախ էր լինում Ադիբի մոտ, անգամ կատարում նրա անձնական հանձնարարություններն ու առաջադրանքները: Նրա համար թեյ կամ գլանակ էր պատրաստում, և նման այլ գործեր կատարում:

Այնուհետև պատմում է. «մի անգամ վաղ առավոտյան՝ լուսադեմին, երբ բակն էի ավլում, նկատեցի, թե ինչպես մեկը՝ կապայի մեջ փաթաթված՝ աննկատ ու անճանաչելի՝ տնից դուրս եկավ: Նրա շարժումներից ու մարմնի կերպարանքից կռահեցի, որ դա հենց իմ ուսուցիչն է: Սակայն շատ զարմացա, երբ նրան տեսա այս անպատեհ ժամին, ամբողջովին ծածկված, տնից դուրս շտապելիս: Հանկարծ նկատեցի, թե ինչպես նա փռվեց գետինն ու սկսեց երկրպագել ու նամազ կարդալ: Այա դարձյալ, հապճեպ ոտքի կանգնեց, կապան նետեց գլխին, ու կրկին անճանաչելի կերպարափոխված՝ շտապ իր սենյակը վերադարձավ:

Ահա թե ինչպիսի մարդիկ կան:

### **Մարդու արժանապատվությունը պետք է հարգել**

Սա չի համընկնում իսլամական ուսմունքին: Ինչո՞ւ մարդն այդպես լինի: Կա մի հարդիս, համաձայն որի, մարդն ամեն ինչին կարող է իրավասու լինել, բացի իր պատվից: Հնարավոր չէ, որ մարդն ինքն իրեն բոլորի ներկայությամբ անպատվի ու խայտառակի, ապա ասի թե. «Ում ինչ գործն է, ես ցանկանում եմ ինքս ինձ պատվազուրկ անել»: Հատկապես, եթե խոսքը կրոնական պատվի ու բարոյականության մասին է, քանի որ յուրաքանչյուր մահմեդական իսլամի համար, ինքնին մի կապիտալ է համարվում:

Եթե Պարոն Ձեյդն իրոք մահմեդական է, թող այդ մասին բոլորն իմանան: Իհարկե, անշուշտ միայն հանուն Աստծո հաճության, այլ ոչ՝ խաբեության: Թող Աստծո սիրո համար նա կատարի այն, ինչին սրտանց հավատում է: Եթե անգամ նա ցուցամուլաբար է դրսևորում իր արարքը, միևնույն է, թող մարդիկ տեսնեն և ճանաչեն, թե հասարակությունն ինչպիսի զավակներ ունի: Անիմաստ կլինի եթե մահմեդական մարդուն մահմեդական հասարակությունը չճանաչի: Այսինքն՝ մեկը մահմեդական լինի, սակայն մարդիկ չիմանան նրա մասին, ու ինչպես հարկն է նվիրվածությամբ չհարգեն ու չհամակրեն նրան: Սակայն, երբեմն երեխաները՝ դատելով նրանց արտաքին տեսքից եզրակացնում են, թե ասված խոսքերն ամբողջությամբ ստեր են, և առհասարակ ճշմարիտ մահմեդականներ գոյություն չունեն : Ոչ, «Արա այնպես, որ երկրի վրա (այսինքն մարդկանց մոտ), և երկնքում սիրելի լինես»: Ինչպես տեսնում ենք, հատկապես նշվում է. «Երկու տեղում էլ՝ երկրի վրա և երկնքում», եթե մարդն այս

կյանքում սիրված լինի, իսկ երկնքում՝ նզովված, ապա դա խայտառակություն է, քանի որ այդ դեպքում նա ցուցամուլի ու կեղծավորի մեկն է: Իրավացի ու անկեղծ լինեմ, որպեսզի ինձ սիրես, և մարդիկ էլ հասկանան իմ անկեղծության ու իրավացիության մասին, որպեսզի նրանք նույնպես ինձ սիրեն:

Դաստիարակության ու ուղղորդման այլ միջոցներից է նաև սրբազան պատերազմը, և առհասարակ՝ տանջանքն ու խստությունը՝ անկախ նրանից թե դրանք մարդուն տրվում են կամովին, թե անկախ նրա կամքից: Սակայն փաստը մնում է փաստ, որ բոլոր դեպքերում էլ կարևորը մարդու ցուցաբերած ու դրսևորած հակազդեցությունն է՝ պատահած չարիքի կամ դժվարության հանդեպ: Գերագույն խստությունն ու ճգնափեցությունն այն դեպքում է բարիք, երբ մարդն ընդառաջ է գնում նրան և այն ընտրում՝ իր սեփական կամքով:

Մարդն իրոք շատ հետաքրքիր մի արարած է: Թերևս չարաչար սխալ կլիներ ենթադրել, թե աշխարհում մարդուն ուղղորդելու և նրան դաստիարակելու միայն մեկական միջոց գոյություն ունի: Ինչպես պարզ է բոլորիս, մարդն ըստ էության բազմակողմանի արարած է, հետևաբար նրա էության յուրաքանչյուր մասնիկ պահանջում է ուրույն դաստիարակման միջոց ու մեթոդ: Օրինակ՝ Աստծո առաջնորդների մոտ սիրո թեման բավականին հետաքրքիր երևույթ է, սակայն միթե՞ դա կարող է փոխարինել առկա այլ միջոցներին: Կամ օրինակ՝ այն, որ մարդու էության մեջ կա ոչ լիարժեքություն, կամ՝ կոկոններ, որոնք ծաղկելու և բարգավաճելու համար կարոտ են համապատասխան ու հարմար միջավայրի, ներդաշնակ մթնոլորտի ու դաստիարակության:

### Ամուսնության դաստիարակիչ դերը

Ի՞նչու է իսլամն ամուսնությունը համարում սրբազան խորհուրդ, անգամ պաշտամունք, այն դեպքում, երբ համոզված ենք, թե այն հաճույքից ու կրքից ծնված մի երևույթ է: Դրա հիմնական պատճառներից առաջինը կարելի է համարել այն, որ ամուսնությունն անկասկած մարդուն ինքնահավանությունից ու եսամոլությունից ձերբազատող, և նրան մի այլ էակի նկատմամբ սիրո և հոգատարության մղող միակ խթանն ու հանգամանքն է: Նախքան ամուսնությունը, պարզապես կա ընդամենը մի «ես», որի համար է աշխարհում ստեղծված ամեն բան: Սակայն ամուսնությունից անմիջապես հետո, այդ միայնակ ու ինքնապաշտ «ես»ի կողքին կանգնում է մի այլ «ես» ևս, որը դառնում է նրա էության ու կյանքի նոր իմաստը: Այժմ, նա արդեն աշխատում, տքնում ու ծառայում է ոչ միայն իր, այլև՝ «նրա» համար, և նույնիսկ ապրում հանուն «նրա»<sup>81</sup>: Ավելի ուշ, երբ ծնվում են նրանց ամուսնական՝ համատեղ կյանքի պտուղները՝ նրանց զավակները, բնականաբար, «ես»ի համար ստեղծված «նա»ն փոխվում է «նրանց», և գալիս է ժամանակ, երբ անգամ լիովին մոռացության է մատնվում իր սեփական «ես»ը, և ամբողջ կյանքն ու էությունը լցվում է «նրանցով»: Փաստորեն սրանք առաջին քայլերն են, որոնք մարդուն հե-

81- Իհարկե խոսքն անկասկած սիրո հիմքերի վրա կառուցված ամուսնության մասին է:



ռացնում են իր եսակենտրոնությունից, և նրա ուշադրությունն ու հայացքը բևեռում այլոց վրա:

Փորձն ապացուցում է<sup>82</sup>, որ կուսակրոնները, որոնք հիմնականում ինքնամաքրման ու մարմնական կրքերի ու ցանկությունների դեմ պայքարելու նպատակով չեն ամուսնացել, և իրենց ողջ կյանքի ընթացքում պայքարել են սեփական մարմնի պահանջների ու աշխարհիկ կրքերի դեմ, հետագայում հաճախ փոշմանել են, և ուրիշներին խորհուրդ են տվել չհետևել իրենց օրինակին: Չնայած, նրանք իրավամբ մուլաներ են եղել, խորասուզված իսլամական աստվածաբանական ու իրավաբանական ուսմունքների մեջ, ճշմարիտ մտավորականներ, հեքիմներ, փիլիսոփաներ ու միստիկներ, սակայն մինչև իրենց կյանքի վախճանը, կամ մինչև խորին ծերություն նրանց վարք ու բարքի մեջ նկատելի են եղել մանկամտության ու տհաս երեխաներին բնորոշ հատկություններ: Հատկապես դժվար չէ նկատել տհաս երիտասարդին բնորոշ շարժ ու ձև տարեց, կուսակրոն մտավորականների մոտ: Այս բոլորը խոսում է այն թրծվածության ու հասունության մասին, որն անկասկած ամուսնական կյանքի ծնունդ է, և որը հնարավոր չէ նվաճել՝ ոչ դասի ու դպրոցի, ոչ ներքին ցանկությունների դեմ պայքար մղելու, ոչ անքուն գիշերների նամագների ու պաշտամունքի, և ոչ էլ արդարամիտ մարդկանց հետ շփվելու միջոցով: Այս հանգամանքից ելնելով, միանշանակ կարելի է եզրակացնել, որ ոչ մի քրիստոնյա կուսակրոն հոգևորական կամ կարդինալ, երբևէ չի կարող լիարժեք մարդ համարվել, եթե իհարկե, նա ազնիվ ու անարատ է եղել իր ծառայության մեջ:

Ես համոզված չեմ, բայց խորհում եմ, որ թերևս այն երկու մարգարեները, որոնք համաձայն Ղուրանից մեզ հասած տվյալների այդպես էլ ամուրիներ մնացին, անկասկած կամ ֆիզիկական՝ (սեռական կամ գուցե այլ օրգանների) հետ կապված որոշակի խնդիրներ են ունեցել, կամ այլ տեսակի արատներով են տառապել: Ոմանք հստակորեն արտահայտում են այն միտքը, թե Քրիստոսը շատ մարգարեների է գերազանցել, սակայն, ըստ մեզ, նշվածը նրա ակներև թերությունն ու արատն է, (նույնպես՝ Յահյայի օրինակը): Կնշանակի, թե Քրիստոսն իր այս թերությամբ զիջում է այն մարգարեին, որն օժտված է եղել վերոհիշյալ առավելությամբ: Պարզապես այս մարգարեն առավել լիակատար է, քան՝ Քրիստոսը:

Ընտանիք կազմելու հիմնական տարրը, որը նույնպես բարոյական մի երևույթ է, և որը պարզապես իսլամի մեջ սրբազան խորհուրդ համարելու հիմնական պատճառներից մեկն է, այն երևույթն է, որին ոչինչ փոխարինել չի կարող:

### **Ջիհադը<sup>83</sup> ուղղորդման և դաստիարակման գործոն**

Սա ևս դաստիարակության ոլորտում անփոխարինելի ու եզակի միջոցներից մեկն է: Հնարավոր չէ ուղղափառ հավատացյալ մի մահմեդականի, որը մասնակցել է սրբազան պատերազմին, հոգեբանությամբ ու

82- Այս խնդրում մենք ավելի փորձառու ենք, քան ամուրիները, որոնք հատկապես հանդիպում ենք հոգևորականների շարքերում:

83- Սրբազան պատերազմ (թ):

բարոյապես համեմատել մի այլ ուղղափառ հավատացյալ մահմեդականի հետ, որը երբևէ չի մասնակցել և ոչ մի սրբազան պատերազմի: Երբ մարդ հայտնվում է նման իրավիճակում, (մենք սակայն, նման իրավիճակի մեջ չենք հայտնվել, որ զգանք, թե դա ինչպիսի զգացողություն է), երբ իր նման մեկն իր դեմ զենք է բարձրացնում, և նա արագորեն պետք է կողմնորոշվի, ապա այնքան հզոր ու անեղծ հավատով ու կամքի ուժով պետք է օժտված լինի, որ կենաց ու մահու խնդրի առջև կանգնած՝ կրոնի ու հավատի համար մահվան գիրկը նետվի: Ահա թե ինչու ենք նշում, որ սա համեմատած այլ դաստիարակչական միջոցների ու հանգամանքների հետ ամենախորաթափանց ու ամենազդեցիկ միջոցն է:

Այս կապակցությամբ Մոհամադ մարգարեից մեզ հասած մի հադիս կա, որտեղ նշված է. «Այն մուսուլմանը, ով չի մասնակցել սրբազան պատերազմին (ջիհադին), կամ զոհն իր հոգում ջիհադի ոգին չի պահպանել, երբ մահանա կմիանա երկպառակների ու խռովարարների խմբին»<sup>84</sup>:

### Բարեպաշտ մարդու պատմությունն ու ջիհադը

Մուլավին իր «Մասնավիի» մեջ բերում է մի հիանալի և գեղեցիկ պատմություն<sup>85</sup>: «Կար մի հավատացյալ մարդ, որը ճշտապահորեն կատարում էր իր կրոնական և՛ ստիպողական և՛ աստվածահաճո բոլոր պատվիրաններն ու պարտավորությունները: Մի օր էլ գլխի է ընկնում, որ իր կյանքում կատարել է բոլոր տեսակի պաշտամունքներն ու պարտականությունները, բացի՝ սրբազան պատերազմին մասնակցելուց: Ուստի, որոշում է հաջորդ օրը ևեթ գնալ մասնակցելու սրբազան պատերազմին, որպեսզի դրա համար ևս Տիրոջ կողմից վարձահատույց լինի: Որոշում է ու գնում երիտասարդ մի զինվորականի մոտ՝ խնդրելով, որպեսզի պատերազմ լինելու դեպքում իրեն ևս կանչեն, որպեսզի ինքն էլ մասնակցի սրբազան պատերազմին ու նրա փոխհատուցումից անմասն չմնա: Երիտասարդը խոստանում է առաջին իսկ պատահած պատերազմի պահին տեղեկացնել ու կանչել ծերունուն: Անցնում են օրեր ու հանկարծ հայտնվում է զինվորն ու ասում, թե, այսինչ օրը պատերազմի դաշտ են դուրս գալու, քանի որ տեղեկացել են, թե անհավատների մի խումբ հարձակվել ու զրավել է մահմեդականների հողերը, գերեվարել նրանց կանանց ու երեխաներին ու սպանել տղամարդկանց: Ուստի, հարկավոր է շտապել: Բարեպաշտ մարդն էլ հազնում է զրահները, կապում թուրը, թամբում ձին ու ճամփա ընկնում զորքի ետևից:

Մի օր էլ, երբ բանակը կանգնել և իջևանել էր, հանկարծ լսվում են ձայներ, թե. «Թշնամին հասավ, ելե՛ք, շտապե՛ք»: Փորձառու մարտիկները վայրկենական արագությամբ զինվում են, թռչում ձիերի վրա ու առաջ սլանում: Իսկ բարեպաշտ ծերունին, որի վոզուն (աղոթքից առաջ լվացվելը) տևում էր կես ժամ, իսկ նամազը՝ մի ամբողջ ժամ, մինչ կհագներ զրահները, կկապեր սուրը, կթամբեր ձին ու կհասներ նրանց ետևից, հերոսներն ավարտում են պատերազմը, սպանում են ու սպանվում և գերիներ առած վերադառնում: Խեղճ ծերունին տխրում է, որ դարձյալ ուշա-

84- Քանգ-օլ-ամալ, 293-4

85- Մուլավին լինելով ճգնակյաց մի դերվիշ, գարմանալիորեն նկատում է բոլոր մանրուքները:

ցել է ու չի կարողացել մասնակցել իր համար երազանք դարձած սրբազան պատերազմին: Տանջվելով՝ խորհում է այն մասին, որ այս անգամ ևս չարժանացավ իր համար այնքան ցանկալի սրբազան գործողության վարձքին:

Այդ պահին նրան մատնացույց են անում գերիների շարքերում կապված հսկա մի զինվորի, ասելով. «Այս մարդը կատարյալ ոճրագործ է, նա սպանել ու տանջել է բազմաթիվ անմեղ մահմեդականների: Այժմ նրան գերել ենք ու նրա միակ փոխհատուցումն ու պատիժը մահը կարող է լինել: Քանի որ այդքան ցանկանում ես մի կերպ մասնակից լինել սրբազան պատերազմին, տար նրան մի խուլ անկյուն ու սպանիր: Այդպիսով, դու նույնպես մասնակցած կլինես սուրբ առաքելությանն ու կհասնես քո նպատակին»:

Հանցագործին հանձնում են բարեպաշտ ծերունու ձեռքն ու մի սուր էլ տալիս նրան, որպեսզի գնա ու գլխատի դատապարտյալին: Անցնում է մի առ ժամանակ, սակայն բարեպաշտ մարդուց ոչ մի լուր չկա: Մտածում են, թե ընդամենը մի մարդու գլխատելը չէր կարող այդքան երկար տևել, ուստի որոշում են գնալ ու գտնել ծերունուն:

Սկսում են փնտրել նրանց: Ջարմանքով գտնում են ծերունուն՝ ուշագնաց, իսկ հանցագործ անհավատին՝ կապկապված ձեռքերով նրա վրա ընկած, վզի երակը կրծելիս: Շտապ հարձակվում են մարդասպանի վրա, նրան սպանում ու ծերունուն բանակ վերադարձնելով ուշկի բերում: Ապա հարց են տալիս, թե ի՞նչպես պատահեց այդ բոլորը: Շփոթված ծերունին պատասխանում է. «Աստված է վկա, որ ես բան չհասկացա, հենց նրան ասացի. «զզվելի նզովյալ, ինչո՞ւ ես այդքան անմեղ մահմեդականների սպանել», մեկ էլ հանկարծ նա գոռաց, ու ես այլևս ոչ մի բան չհասկացա»:

Այս պատմությունն անկասկած ապացուցում է այն, որ նա, ով իր կյանքում ոչ բանակ է տեսել, ոչ պատերազմ, եթե անգամ կյանքում ճշտապահորեն յուրացրել է բոլոր կրոնական պարտավորություններն ու պաշտամունքը, պատերազմի պահին մի չնչին պատճառով՝ գետնին կտապալվի ու ուշաթափ կլինի:

**Սա է ահա, այս գեղեցիկ նախադասության իմաստն ու հիմքը՝ «Նա, ով սրբազան պատերազմին չի մասնակցել, կամ իր անձը՝ չի վտանգել այդ ճանապարհին, նա նույնպես փարիսեցի է համարվում»:**

Մեր մարզարեն սրբազան պատերազմը հոգու դաստիարակման և հոգու բարոյականության ու նրա ուղղորդման միջոց է համարել, հակառակ դեպքում կարելի է համարել, որ մարդու հոգում երկունություն է տիրում:

## **Հարց ու պատասխան**

### **Հարց.**

Արդյո՞ք հանցանքի մասին խորհելն իսկ հանցագործություն է: Որքան զիտեմ, այդ ուղղությամբ խորհելը, սակայն այն չիրագործելը, հանցանք չի համարվում: Իսլամական մտավորականներից մեկին հարցրեցինք կինոյի ստեղծման նախագծի մասին: Արդյո՞ք եթե ուղղափառ հավատաց-

## Հանուն Ողորմած և Բարեգութ Լազոյ

Մենք խոսում էինք դաստիարակության միջոցների ու հնարքների մասին և նախորդ քննարկումների ընթացքում ակնարկեցինք դրանցից մի քանիսը: Այժմ շարունակենք մեր քննարկման թեման:

Դաստիարակության գործընթացում «աշխատանքը» թերևս ամենապարզ ու հստակ, բայց միևնույն ժամանակ ամենաեական խնդիրներից մեկն է, որը սակավ է ուշադրության արժանացել, և որի դերը մարդու հոգու և ներաշխարհի կառուցման մեջ եթե ոչ ամենակարևոր, ապա՝ ոչ ավել և ոչ պակաս կարևորներից մեկն է: Մարդ հաճախ ենթադրում է, թե աշխատանքն իրոք իր ծեռքի ստեղծած ու կառուցած երևույթներից է, ուստի և ինքը՝ գերադաս է աշխատանքին, այսինքն, մարդու ինչպիսությունը գերադաս է աշխատանքի ինչպիսությանը, և աշխատանքի ինչպիսությունը կախված է մարդու ինչպիսությունից: Ուստի դաստիարակությունն անկասկած գերադասելի է աշխատանքից:

Սակայն նման մեկնաբանությունը անընդունելի ու սխալ է, ավելին, մենք կասենք՝ և՛ դաստիարակությունն է գերադաս աշխատանքից, և՛ աշխատանքը՝ դաստիարակությունից: Կնշանակի, թե հիշյալ գործո՞ւններից երկուսն էլ միաժամանակ և՛ ստեղծում , և՛ լրացնում են միմյանց, այլ կերպ ասած՝ «և՛ մարդն է իր սեփական աշխատանքի ստեղծողն ու արարիչը, և՛ աշխատանքը, նկատի առնելով աշխատանքի այն տեսակը, որը ստեղծում, ձևակերպում և վերամշակում է մարդու հոգին ու նրա ներաշխարհը:

**Աշխատանքն իսլամի տեսակետից**

Իսլամական ուսմունքի մեջ, անբանությունն ու անգործությունը չարաչար արհամարհված են ու մերժված: Ավելին՝ ազնիվ աշխատանքը սրբազան երևույթ է համարվում: Հաճախ, երբ ցանկանում են կրոնի լեզվով մեծարել և սրբացնել մի ինչ-որ երևույթ, ասում են. «Աստօ՛ղ կողմից սիրելի է», ինչպես հադիսի մեջ է նշված. «Աստված սիրում է այն հավատացյալներին, որոնք զբաղվում են որևէ աշխատանքով»<sup>91</sup>. Կամ մի այլ տեղ. «Նա, ով իր ապրուստը վաստակելու համար նեղության ու տառապանքի միջով է անցնում, նմանվում է նրան, ով մասնակցում է ջիհադին՝ սրբազան պատերազմին»<sup>92</sup>: Կամ, Մարգարեի մեզ քաջ հայտնի հադիսը, որտեղ նշում է. «Նա, ով անբան քայլում է, ու բեռ է դառնում այլոց գլխին, նա նզովված է ու Աստօ՛ղ կողմից անիծված»<sup>93</sup>: Այս հադիսն ի դեպ նշված է և «Վասայելում», և մի շարք այլ գրքերում: Կա մի այլ հադիս, որը նշված է «Բահարում» և մի քանի այլ գրքերում, որոնց համաձայն, երբ Սոհամադ մարգարեի ներկայությամբ խոսում կամ արտահայտվում էին մեկի մա-սին, նախ հարց էր տալիս. «Աշխատանքն ի՞նչ է», իսկ եթե պատասխանում էին, որ ոչ մի բանով չեն զբաղվում, կամ գործազուրկ են, ապա Մարգարեն ասում էր. «Նա այլևս իմ աչքում անարժան դարձավ»:

Այս կապակցությամբ իսլամական բնագրերում բազմաթիվ հադիսներ ու էջեր կան: Օրինակ՝ մեր գրչին պատկանող «Դասթանե Ռասթան»<sup>94</sup> փոքրիկ գրքույկը, և նրա մեջ ամփոփված մեջբերումները, որոնք վերաբերում են Մարգարեին, Իմամ Ալիին ու այլ Իմամներին: Դրանք պարզորոշ կերպով ընդգրկում են, թե ինչպիսի կարևորության ու ուշադրության են արժանացել աշխատանքն ու մադու գործը, և այն, ինչ սուրբ է համարվել իսլամական առաջնորդների կողմից: Սակայն, միևնույն ժամանակ, դժվար չէ նկատել նաև այն, որ ոմանք վերոհիշյալ խնդրի հակառակ կողմն են պատկերացրել, և մի շարք միստիկներ ու մտավորականներ, և հոգևորական ձևացող մարդիկ, նույնիսկ երբեմն մենք՝ ինքներս, այն տեսակետն ենք դրսևորում, թե աշխատանքն անհրաժեշտ է միայն դժբախտության ու ճարահատության դեպքում, ու երբ մեկն աշխատում է, խղճահարությամբ ու մասամբ կարեկցանքով ենք նայում նրա վրա և ասում. «այս խեղճ կարոտյալն ստիպված է աշխատել»: Այդպիսով, կարեկցում ու ցավակցում ենք աշխատավոր զանգվածին, և մեծարում ու զնահատում ենք նրանց, ովքեր չեն աշխատում, ասելով. «Երնեկ սրանց, որ նյութապես ապահովված են ու աշխատելու անհրաժեշտությունն անգամ չեն զգում»: Իսկ ի՞նչ կարելի է անել նրանց համար, ովքեր իրոք կարոտյալ են ու անելանելի վիճակում են գտնվում, և ապրում են անբարեկեցիկ պայմաններում»:

Սակայն այստեղ խոսքն առհասարակ կարոտյալի ու անկարիքի մասին չէ, այլ աշխատանքը, որպես հասարակական պարտք և պարտականություն դիտելու խնդիր: Իսկ մենք այժմ չենք ցանկանում մանրամասն

91- Վասայել, 13/12 չնչին փոփոխությամբ:

92- Օսուլե Բաֆի, 88/5:

93- Օսուլե Բաֆի, 72/5:

94- Ճշմարիտների պատմությունը (թ):

քննարկել այն հարցը, որ աշխատանքն իրոք հասարակական պարտավորություն է, և բնականաբար, մարդն ապրելով հասարակության մեջ, յուրացնում և սպառում է այն, ինչ հասարակությունն ու նրա մեջ ապրող մարդիկ են ստեղծում ու մատուցում նրան: Այս ուղղությամբ, եթե ընդունելու լինենք մարքսիզմի գաղափարախոսությունը, ապա պետք է հաստատենք նաև այն գաղափարը, ըստ որի. «հարստությունն ու ցանկացած արժեքավոր երևույթի գին կայանում է նրանում, թե տվյալ երևույթի ստեղծման ու արարման ճամփին, այն ինչերի միջով է անցել, ավելի որոշակի ասած՝ ո՞րն է ինքնարժեքը»: Այսինքն, ապրանքի արժեքը իրականում նրա ստեղծման շրջափուլերում կատարված աշխատանքի հիմնական արդյունք է: Նույնիսկ եթե տվյալ տեսակետը միանշանակ համոզիչ չլինի<sup>95</sup>, դարձյալ այն բոլոր առարկաների գինը, որոնք կիրառվում են մարդու կողմից, գնահատվում են տվյալ առարկաների վրա կատարված աշխատանքի համեմատությամբ: Այն բոլոր կոշիկները, հագուստները որ հագնում ենք, այն ամենն ինչ ուտում ենք, տունը որտեղ ապրում ենք, մարդկային աշխատանքի արդյունք են: Երբ մի գիրք ենք ընթերցում նույնն է տեղի ունենում, սկսած՝ գրքի հեղինակից, մինչև նրա թղթի պատրաստողն ու հրատարակողն ու այն կազմողը: Մարդն ապրում է մի հասարակության մեջ, որն ամբողջությամբ այլոց աշխատանքի ու նրանց ստեղծած արտադրանքով է ողողված, և եթե նա փորձի ցանկացած պատրվակով, մի կերպ փախչել աշխատանքից, տեղի կունենա հենց մեր Մարգարեի տարբերակը, երբ հասարակության ուսերին բեռ են դառնում, առանց այլոց ուսերին եղած բեռը թեթևացնելու:

Անկասկած աշխատանքը մարդու հասարակական պարտքն է, սակայն այժմ մեր քննարկման բուն թեման աշխատանքի դաստիարակչական բնույթի ու առանձնահատկության մասին է: Միթե՞ մարդն աշխատում է միայն հասարակական պարտքից ազատվելու նպատակով, և եթե չլինեին այս և այլ տարբեր տեսակի պարտավորությունները մարդն առհասարակ կմնա՞ր անգործ ու անբան: Կամ միթե՞ աշխատանքը մարդու ինքնության վերակառուցման ու վերափոխման, նրա զարգացման ու լուսավորության հարցում ոչ մի դեր չի ստանձնում: Մարդն իր էությամբ բազմակողմանի էակ է: Նրա էությունը կազմված է մարմնից, հոգուց, մտավոր ու ինտելեկտուալ կարողություններից, սրտից և այլ մասերից: Անշուշտ, աշխատանքն անհրաժեշտ է նրանցից յուրաքանչյուրին և՛ մարմնի ու նյութական կողմի, և՛ նրա երևակայության և՛ խելքի, և՛ բանականության ու սրտի համար: Նշվածներից ամենաակնհայտը մարմնին մատուցած ծառայությունն է, որի մասին համառոտակի նշենք միայն այսքանը. եթե մարդ չաշխատի, ապա նրա մարմինն անկասկած կկորցնի իր առողջությունն ու թարմությունը: Աշխատանքն ապահովում է մարդու ֆիզիկական առողջությունը:

95- Նշենք, որ Նահատակ ուսուցիչն իր տնտեսական աշխատությունների մեջ ապացուցել է, որ հիշյալ տեսակետն անհիմն է ու մեթոդի, և աշխատանքը մարդկային արժանիքներից միայն մեկն է:

## Աշխատանք և մտավոր կենտրոնացում

Մարդկային առանձնահատկություններից է նաև այն, որ նրա գիտակցությունն ու երևակայությունն անդադար աշխատում են: Երբ մարդ կազմակերպված և հետևողական խորհում է ընդհանուր երևույթների մասին, որոնք մի ամբողջության մաս են կազմում, դա մենք համարում ենք խորհրդածություն և մտածողություն: Իսկ երբ մարդու խելքն անկանոն ու անկազմակերպ, առանց տրամաբանական եզրակացությունների, առանց իրերի ու երևույթների մեջ տրամաբանական որևէ շփման եզրեր ու սահմաններ գտնելու, հենց այնպես՝ իզուր ու ապարդյուն, անկառավարելի ընթանում է, սա անկասկած մարդուն կործանող ու նրա ներաշխարհն ու հոգին խաթարող երևույթ է: Մարդն անհրաժեշտաբար պետք է կարողանա սահմանել ու չափավորել իր երևակայությունն ու մտքերը, հակառակ դեպքում այն կարող է մարդու բարոյական արժեքների խախտման ակունք հանդիսանալ: Իմամ Ալին այս կապակցությամբ ասում է. «Եթե դու չսամձես ու չաշխատեցնես մտքերդ, նրանք քեզ կիշխեն ու կսամձեն»: Կան երևույթներ, որոնց նկատմամբ հարուցած մեր չեզոք դիրքն ու դերը նույնպես չեզոք ու անշարժ են մնում, ինչպես, օրինակ՝ իմ ձեռքի այս մատանին: Եթե այն հայտնվի սեղանի կամ զարդատուփի մեջ, ոչ մի արտառոց բան չի պատահի: Սակայն, այլ է մարդու հոգին: Այն մշտապես հարկավոր է զբաղեցնել ու մի ինչ-որ հարցի շուրջ կենտրոնացնել, հակառակ դեպքում այն ինքը կզբաղեցնի ու իր ցանկությամբ կառաջնորդի ձեզ: Այդ ժամանակ կսկսեք անկախ ձեր կամքից, անվերջ ու անդադար մտածել ու երազել՝ քնած թե արթուն, անկողնում թե շուկայում, երազել ու երազել: Հենց այս անհիմն ու դատարկ երազելը կարող է ձեզ ստիպել հազար ու մի հանցանքներ գործել: Իսկ երբ մարդն զբաղված է իր առօրյա և մշտական աշխատանքով, այն ընդմիշտ զբաղեցնում ու ձգում է մարդուն, և գերծ է պահում նրան զանազան տեսակի անհիմն ու դատարկ մտքերից:

## Աշխատանք և խուսափում մեղքերից

Բարոյագիտության ոլորտում հրատարակված լավագույն գրքերից է Սամուել Սմայլզի «Վարք ու բարքի» վերաբերյալ գիրքը: Կա նաև մի այլ գիրք, որը կոչվում է «Երջանկության գրկում»: Սա նույնպես հիանալի գիրք է: Այս պահին դժվարանում եմ մտաբերել, սակայն այդ երկու գրքերից մեկի մեջ կարդացի հետևյալ տողերը. «Հանցանքը հաճախ մի պայթյուն է, շոգեխաշ անող մի կաթսայի պես, որը չունի անցք ու ծակոտիք և որն ի վերջո պայթելու է»: Նշված է, թե հանցանքը՝ պայթյուն է, իսկ պայթում է հենց ինքը՝ մարդը, կնշանակի, թե մարդ բնության համակարգում ապրող մի տարր է, որն անընդմեջ բնության այլ գործոնների հետ փոխկապակցման գործընթացի մեջ է: Ինժեներ Բազարգանը նույնպես իր գրքերի ու աշխատությունների մեջ հաճախ է անդրադարձել սույն թեմային, նշելով, թե՝ մարդն ու բնությունը մշտապես միմյանց հետ փոխկապակցման մեջ են: Այդ շղթայի մասին խոսելիս, անշուշտ էներգիայի ու տարրեր

տեսակի լիցքերի ու ուժերի մասին պետք է հիշել, որոնք մի կողմից մարդու կողմից կլանվում, իսկ մյուս կողմից՝ սպառվում են: Երբ մարդ կամաքե ակամա կլանում է բնության նյութական կամ նույնիսկ հոգևոր լիցքերը, ստիպված պետք է նրանք սպառի: Նույնն է տեղի ունենում մտավոր համակարգի դեպքում, երբ մարդու մարմինը լիցքավորվում է տարբեր տեսակի էներգիաներով, որոնց անհրաժեշտ է օգտագործել: Լեզուն պետք է խոսի, աչքերը պետք է տեսնեն, ականջները՝ լսեն, ձեռքերն ու ոտքերը՝ շարժվեն: Այլ կերպ ասած՝ հնարավոր չէ, որ մարդն անդադար լիցքեր ստանա բնությունից, սակայն որևէ կերպ չսպառի ու չօգտագործի դրանք: Այլապես էներգիաների կուտակումն ու չօգտագործումը, նշված շոգեխաշ անող կաթսայի պես, որի ջերմաստիճանն անընդհատ բարձրանում ու բարձրանում է, հանկարծ կպայթի: Երբ մարդիկ, ելնելով մի շարք նախապաշարմունքներից, որոշակի աշխատանքի կատարումն իրենց համար անվայել են համարում, որևէ այլ պատրվակով<sup>96</sup> զրկվում են աշխատանքից, կամ սկսում են ձգտել անբանության, նրանց ողջ էության մեջ դատարկությունն ու անիմաստությունն է տիրում: Նրանք իրենք էլ չեն գիտակցում, թե ո՞նց են նրանց մարմնում ու հոգում կուտակված էներգիան ու բոլոր լիցքերը ցանկանում դուրս հորդել: Սակայն, քանի որ չաշխատելու հետևանքով, բռնի կերպով փակվել են արտահոսքի բնական ու բարոյական ուղիները, ուստի նրանք դուրս են նետվում՝ ապօրինի ու ոչ այնքան բարի ճանապարհներով:

Շատ հաճախ ականատեսն ենք լինում, տիրակալների ու թագավորների հանցագործությանը: Դրա խոշորագույն պատճառը հենց նրանց անբանությունն ու չաշխատելն է, քանի որ նրանք ելնելով իրենց դիրքից ու պաշտոնից, հրաժարվում են անզամ անձնական գործերն ու պարտականությունները կատարելուց: Օրինակ՝ եթե նրանք ցանկանում են ծխել, բավական է մի փոքրիկ ակնարկ, և ահա՝ ծառաներից մեկը ծխախոտը կմոտեցնի, մյուսը՝ լուցկին կվառի, այնպես որ նա անզամ չի բարեհաճում իր լուցկուն մատներով դիպչել: Երբ արքան ցանկանում է կոշիկները հագնել, նույնն է տեղի ունենում, ծառաները հասնում են, շտապ հագցնում ոտնամանները, հագուստը՝ նույնպես: Եվ այսպես մինչև վերջ: Այսպիսով՝ նրանք ժամանակի ընթացքում սովորում են այս ապրելաձևին, երբ ամենահասարակ ու անձնական գործերն անզամ կատարվում են իրենց ծառաների ձեռքով: Բանը հասնում է այնտեղ, որ նման հասարակ ու չնչին գործեր կատարելուց, նրանք ոչ թե ծուլանում, այլ դրանք համարում են ամոթ ու իրենց դիրքին ու կարգավիճակին անվայել:

Խորասանի հին էմիրներից մեկի մասին պատմում են, որ մի անզամ նա թանկարժեք մորթե մուշտակը հագին նստած է լինում, երբ ծառաները նրան նարգիլ են հրամցնում: Հանկարծ նարգիլեն շարժվում է ու ածուխի մի փոքրիկ կտոր ընկնում է նրա մուշտակի վրա: Էմիրն անվայել համարելով ինքնուրույն թափահարել հագուստն ու հեռացնել կրակի կտորը, կանչում է. «Երեխաներ», այսինքն՝ «եկե՛ք, հասե՛ք»: Մինչ «երեխաները» գալիս են ու հասնում, նրա թանկագին մուշտակն ու մարմնի մի մա-

96-Իհարկե անթիվ ու անհամար պատճառներ կարող են լինել, սակայն տղամարդկանց մոտ հաճախ՝ արժանապատվության զգացումն է գերակշռող, իսկ կանանց մոտ՝ զանազան այլ տեսակի պատրվակներ:



սը այրվում են: Իր վարքում ծայրահեղության հասած այս էմիրը, իր դիրքին ու պաշտոնին անվայել ու անպատվաբեր էր համարում մուշտակը շարժել, կամ անգամ սրբել սեփական քիթը:

Երբ տեսնում ենք, որ նման մարդիկ հանցագործներ ու ոճրագործներ են դառնում, ապա դա գալիս է նրանից, որ քաղաքակրթության ու կենցաղային վարք ու բարքին կուլ գնալով, նրանք հրաժարվում են սեփական «ես-ի» մեջ կուտակված էներգիան օգտագործել ու սպառել ճիշտ ու դրական միջոցներով:

### Կինն ու բամբասանքը

Անցյալում կանայք հայտնի էին բամբասկոտությամբ, որի պատճառով էլ բամբասանքը ներկայացվում էր որպես «կանացի» առանձնահատկություն և համարվում, որ կինն իր էությամբ ու բնությով բամբասկոտ է: Սակայն դա այդպես չէ: Տղամարդ, թե կին, միևնույնն է: Պատճառն այն է, որ կանայք, մասնավորապես՝ հասարակության բարձր խավին պատկանող զանգվածը, որոնց տներում հաճախ ծառաներ ու աղախիներն էին աշխատում, և տան բոլոր աշխատանքն ու բեռը նրանց ուսերին էր դրված, պարապ ու անբան, առավոտից իրիկուն նստած ծանծրանում էին: Մեծամասնությամբ էլ ընթերցասեր չէին, գրքին ու գիտությանն էլ խորթ ու բավական հեռու: Ուստի, ստիպված, ծանծրայթից փախչելու համար, իրենց նման կանանց հաղորդակցությունն էին փնտրում: Իսկ իրար հանդիպելիս ի՞նչով պետք է զբաղվեին: Պարզ է՝ դատարկ ու անմակարդակ գրույցներով, որոնց հիմքում հաճախ ընկած էր այլոց կյանքի թեման: Այսպիսով, մարդկանց մասին խոսելն ու նրանց չարախոսելը դառնում էր նրանց ազատ ժամերը լրացնելու գերագույն հաճույքը, առանց որի նրանց կյանքն անհետաքրքիր ու դատարկ էր թվում:

Մի անգամ, ամենամյա նիստերից մեկի ժամանակ, թերթից ընթերցած մի պատմությունն մեջ բերեցի, որտեղ նշվում էր, թե Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքներից, կամ գուցե նահանգներից մեկում, համարյա բոլոր ընտանիքների կանանց մոտ ընդհանուր մոլուցքի էր վերածվել խաղամոլությունը: Բոլորը բողոքում ու դժգոհում էին իրենց կանանցից, թե նրանք ասես իրենց խաղից բացի, ուրիշ ոչ մի բանով չեն զբաղվում, ուստի քաղաքի քահանային խնդրեցին, որ բարի խրատներով ու քարոզներով նրանցից վանի այս արատավոր սովորությունն ու մոլուցքը: Սակայն, նախ անհրաժեշտ է ախտորոշել հիվանդությունը, այնուհետև վերացնել այն ծնող ակունքները: Քահանաները շարունակ քարոզում էին արատավոր ու հակաբարոյական մոլուցքի, նրա վնասաբեր հետեվանքների ու հանդերձյալ կյանքում այն փոխհատուցող պատիժների մասին, սակայն՝ ապարդյուն ու զուր: Իսկ մի օր էլ հայտնվեց մի քաղաքապետ, որն ըստ էության ախտորոշեց հիվանդությունն ու կարողացավ բուժել այն: Նա կանանց մեջ ցրեց ձեռագործներ ու բազմաթիվ հետաքրքրական ձեռքի աշխատանքներ, ապա կազմակերպեց հետաքրքիր ու հաճելի մրցույթներ, գեղեցիկ ու ոգևորող պարզևներով: Կարճ ժամանակ անց, կանայք թողեցին իրենց արատավոր սովորությունն ու սկսեցին զբաղվել

զանազան ձեռքի աշխատանքներով:

Քաղաքապետը փաստորեն իրապես ընկալեց ու կռահեց կանանց խաղամուլության հիմնական պատճառը, որն ինչպես պարզ դարձավ՝ նրանց պարապույթունն ու անբանությունն էր: Նա ավելի հետաքրքիր ու միևնույն ժամանակ դրական զբաղմունքով փորձեց լցնել նրանց դատարկ ժամերը: Նրանց հոգում առաջացած դատարկությունը, անպատճառ հարկավոր էր լցնել մի ուրիշ՝ հետաքրքիր ու արդյունավետ աշխատանքով:

Ահա թե ինչու ենք ասում, թե «աշխատանքն» իրոք մեղքերի ու հանցանքների դեմ պայքար մղելու լավագույն միջոցներից մեկն է: Ի հարկե չենք կարող ասել, թե դա միշտ այդպես է, սակայն հանցանքները հաճախ սերում են անբանությունից:

Նախորդ քննարկման ընթացքում, խոսեցինք մտովի գործած հանցանքների մասին, և նշեցինք, որ հանցանքի մասին խոսելն ու մտովի այն գործելը նույնպես մեղք է համարվում: Չնայած միայն նրա մասին խորհելն ու այն չիրագործելը, դեռ մեղք չի համարվում, ի հակադրություն բարի մտորումներին, որոնք հնարավոր են նույնիսկ ինչ-ինչ խոչընդոտների պատճառով չիրականանան, սակայն նրանց մասին խորհելն անզամ Աստծո մոտ որպես բարի գործ է գնահատվում:

### **Ընդունակությունների բացահայտումը աշխատանքի ընտրության մեջ**

Աշխատանքը ոչ միայն կանխարգելում ու արգելակում է մարդկային բնազդների ու կուտակված էներգիաների աննպաստ պոռթկումն ու պայթյունը, այլև պայքարում է չար ու սատանայական գայթակղիչ մտքերի դեմ: Ահա թե ինչու են շեշտում, որ յուրաքայուր մարդ պետք է ընտրի իր հնարավորություններին ու սեփական ունակություններին հարիր ու հարմար մի աշխատանք: Աշխատանք, որն իր վրա կսևեռի ու կծօի մարդու ողջ սերն ու համակրանքը: Իսկ եթե աշխատանքն ընտրվի լույ աշխատավարձի ու շահույթի նպատակով, անտեսելով մարդու սերն ու ընդունակությունները, ապա այդ դեպքում աշխատանքը ոչ միայն կզրկվի իր դաստիարակչական հատկությունից, այլև կարող է անզամ թունավորել ու արատավորել մարդու հոգին ու նրա ներաշխարհը:

Աշխատանքն ընտրելիս հույժ կարևորություն պետք է դարձնել սեփական ունակություններին ու հատկապես նախասիրություններին: Ակասկած չկան միանշանակ տաղանդագուրկ մարդիկ, սակայն հաճախ, մարդիկ անտեղյակ են իրենց ընդունակություններին, ուստի ընտրում են այնպիսի անհարմար ու անհամապատասխան աշխատանք, որի պատճառով միշտ անհանգիստ են ու անտրամադիր: Մեր երիտասարդ սերնդի ու ուսանողների իրավիճակն օրինակ, պետական համալսարաններում մրցույթների բերումով, բավական անախորժ է ու աննախանձելի: Ուսանողները ցանկացած գնով ցանկանում են ազատվել բանակից, մյուս կողմից շտապում են մուտք գործել համալսարան, ուստի դիմում են բոլոր այն աշխատավայրերը, որտեղ իրենց ունեցած դիպլոմի համաձայն, հնարավոր է, որևէ աշխատանք գտնել: Ընտրում են պատահած

առաջին շահավետ ու նպաստավոր աշխատանքը, անկախ այն հանգամանքից, թե տվյալ աշխատանքը ընդհանրապես համապատասխանում է իրենց հո-գեբանությանն ու խառնվածքին, ինչպես նաև իրենց մտային ու ֆիզիկա-կան հնարավորություններին, թե՞ ոչ: Այսպիսով, սխալ մի որոշման հետևանքով, կյանքն ու ճակատագիրն առհավետ կապում են չմտածված ու արկածախնդիր մի որոշման հետ, որի հետևանքով, ողջ կյանքում չեն կարողանալու իրենց երջանիկ զգալ: Կան մարդիկ, որոնք իրենց դպրոցական դիպլոմը ստացել են մաթեմաթիկայի բնագավառում, և բավական հեռու են գեղարվեստից ու առավել ևս՝ գրականությունից, սակայն միայն մի ինչ-որ բուհ ընդունվելու, կամ ինքնուրույն բախտը փորձելու նպատակով գրանցվում են «Գրականության», կամ ասենք «Աստվածաբանության» ֆակուլտետների ցուցակում: Շատ հնարավոր է, որ նրանք չկարողանան մուտք գործել տվյալ ֆակուլտետներ, ուստի զալիս են այստեղ, ընտրում մի այնպիսի աշխատանք, որի հետևանքով ամբողջ կյանքի ընթացքում ստիպված են լինելու զբաղվել այնպիսի մի աշխատանքով, որի նկատմամբ իրենց սրտում ոչ մի կաթիլ սեր կա, ոչ էլ իրենց հոգում՝ մի չնչին տաղանդ: Այս թվին են պատկանում, հաճախ, գրասենյակային աշխատանքները: Հնարավոր է գրասենյակային աշխատանքների նկատմամբ գոյություն ունենա ինչ-որ չափով սեր ու համակրանք, բայց ըստ ամենայնի, այն զուրկ է որևէ նորարարությունից: Այդ պատճառով էլ անընդհատ նույն ուղղությամբ պտտվում են կրկնվող գործընթացների ձանձրացուցիչ օղակում, և աշխատողները շատ հաճախ չբացակայելու, իրենց աշխատանքը չկորցնելու, կամ աշխատավարձի մեջ չտուգանվելու ահից, ստիպողական կարգով, առանց հետաքրքրությունների, ավելին՝ տհաճությամբ, բավական՝ երկար ու ձիգ ժամեր դիմանում են իրենց գրասեղանների ետևում: Անշուշտ, սա նույնպես հարված կարող է հասցնել նրանց հոգեկան վիճակին, սակայն կրկնում ենք մի անգամ ևս, որ մարդ պետք է ընտրի այնպիսի աշխատանք, որը լինի հոգեհարազատ ու համահունչ իր հոգուն, խառնվածքին ու ընդունակություններին: Անհրաժեշտ է նաև խուսափել անհամապատասխան ու հոգուն ու զգացումներին անհարիր աշխատանքներից, նույնիսկ եթե դրանք շահութաբեր են աշխատավարձի տեսանկյունից:

Ուստի, հույժ կարևոր է մտապահել ու իրագործել վերոհիշյալ հանգամանքը, որի հետևանքով մարդու ներաշխարհ է թափանցում աշխատանքի նկատմամբ սերն ու համակրանքը, հետևաբար ծնվում են նորարարություններ ու բացահայտվում դեռևս անհայտ մնացած նրա ունակությունները:

### **Աշխատանք և ինքնափորձություն**

Հենց այստեղ էլ բացահայտվում է աշխատանքի մի այլ կարևոր հատկանիշ, այսպես կոչված՝ «ինքնագնահատումը»: Ցանկացած գործընթաց կամ աշխատանք սկսելուց առաջ, մարդ պարտավոր է փորձել, չափել ու գնահատել սեփական ուժերն ու կարողությունները, քանի որ առանց դրանց գնահատման, մարդն առհասարակ անտեղյակ է սեփական տա-

ղանդներին ու ընդունակություններին: Սակայն մինչև մարդ չաշխատի կամ որոշակի բնագավառում չփորձի ինքն իրեն, նա չի կարողանա պատկերացում կազմել, թե տվյալ ոլորտում տաղանդավոր է արդյոք, թե՞ անտաղանդ: Մարդ արարածն աշխատանքի շնորհիվ հասնում է ինքնաճանաչման: Սեփական ես-ի վերագտնումն ու ճանաչումը, կամ այսպես կոչված՝ սեփական «ես-ի» բացահայտումը մարդկության պատմության ամենաանգնահատելի գյուտերից մեկն է:

Երբ նա ձեռնամուխ է լինում ինչ-որ աշխատանքի, և այն անհարիր է գտնում իր հոգեբանությանն ու խառնվածքին, անհրաժեշտաբար ստիպված է թողնել ու փոխարենը գտնել առավել հարմար ու համապատասխան աշխատանք: Եվ այսպես այնքան ժամանակ, մինչև գտնի իր ունակություններին, հոգուն ու բնավորությանը գերազանցապես համընկնող աշխատանք: Իսկ երբ այն գտավ, աննկարագրելի հաճությամբ ու սիրով կսկսի աշխատել, և այնպիսի հոգեկան բավականություն կզգա, որ նրան չի էլ մտահոգի նույնիսկ սակավ աշխատավարձը: Այնուհետև, մեկը մյուսի ետևից երևան կգան գլուխգործոցներ, կբացահայտվեն աննկարագրելի շնորհալի նորարարություններ, որոնք աշխատանքի ու սեփական անձի նկատմամբ ստեղծված սիրո արգասիք են, այլ ոչ թե? Նյութական, կամ աշխատանքի պարգևած դրամական շահույթի արդյունք: Անշուշտ հնարավոր է դրամով ախատանք ստեղծել, սակայն գլուխգործոցներ՝ երբեք: Ահա թե ինչու ենք շեշտում, թե մարդ պետք է սիրի իր աշխատանքը:

Ապացուցեցինք նաև այն, որ աշխատանքի առանձնահատկություններից մեկը՝ սեփական «ես-ի» ճանաչումն ու գնահատումն է:

### **Աշխատանք և տրամաբանական միտք**

Նախորդ քննարկման ընթացքում նշեցինք, որ տրամաբանված մտածել կնշանակի, թե մարդ ձգտի ցանկալի արդյունքն ու շահը միայն բնության ակունքներից ստանալ, որի դեպքում նրա միտքը կհամարվի տրամաբանական: Սակայն, եթե նա ցանկանա իր ապրուստն ու կյանքը ապահովել դեպքերի, պատահական արկածների ու բախտի վրա հիմնվելով, ապա դա միանշանակ բացասական ու անտրամաբանական կլինի: Օրինակ՝ շատ հնարավոր է մեկը զանձ գտնի հարստանա, ասենք՝ անապատում քայլելիս կամ մի հողամասում շենք կառուցելիս մեկը փորի գետինն ու այնտեղ թաքնված հարստություն գտնի, կամ, օրինակ՝ լոտոյով խոշոր գումար շահի: Իսկ եթե մարդն անվերջ ձգտի նման անտրամաբանական ու անազնիվ միջոցների, պարզ է, որ նրա բանականությունն ու մտածելակերպը նույնպես անտրամաբանական ու անազնիվ կդառնան: Սակայն, երբ նա ձգտում է ազնիվ ու խելացի միջոցների դիմելով ապահովել իր կյանքը, այդ դեպքում նրա միտքն ու բանականությունն առողջ է ու ազնիվ: Եթե անգամ նա ցանկանա հասարակ բանվորությամբ զբաղվել ու կյանքն ապահովել, անկախ այն բանից, որ ստիպված կլինի սակավ աշխատավարձով գոհանալ, միևնույն է, դա ազնիվ ու տրամաբանական ճանապարհ է, քանի որ առավոտից, բահն ուսին

առած աշխատանքի է դուրս գալու, և մինչև իրիկուն՝ աշխատելու: Նա հանդգնված է, որ իր միօրյա ազնիվ ու քրտնաջան աշխատանքի դիմաց պետք է ստանա, ասենք տասնհինգ թուման:

Երբ մարդն աշխատում է, կամա թե ակամա միաժամանակ աշխատում ու զարգանում են նաև նրա միտքն ու տրամաբանությունը, քանի որ աշխատանքի ընթացքում նա շոշափում է պատճառների ու հանգամանքների, գործոնների ու նրանց վրա ազդող ու նրանցից բխող բոլոր տարրերի համայնապարփակ համակարգը, որոնց շնորհիվ էլ նրա միտքն ու տրամաբանությունը միահյուսվում ու համընթաց են դառնում արարման օրինաչափությանը: Նրանից հեռանում են սատանայական ու անհիմն, երևակայական ու ցնորաբեր մտորումները, ապա՝ դրանք իրենց տեղը գիջում են տրամաբանական ու օրինաչափության մեջ սահմանագծված խելացի մտքերին:

Ուրեմն, աշխատանքն ուղղակիորեն ազդում է մարդու մտքի ու բանականության վրա: Բացի դրանից մարդն աշխատանքի շնորհիվ փորձ ու գիտելիք է ձեռք է բերում, ավելին՝ աշխատանքն է գիտությունների մայրը, կնշանակի, թե մարդն իր գիտելիքները ստանում ու դրանք յուրացնում է աշխատանքի ու նրանից ծնված փորձառության շնորհիվ: Այլ կերպ ասած՝ աշխատանքը ոչ միայն հանդիսանում է գիտության ու բանականության ակունք ու սկիզբ, այլև դաստիարակում, չափավորում ու կազմակերպում է մարդու խելքն ու տրամաբանությունը:

### **Աշխատանքի ազդեցությունը մարդկային զգացմունքների վրա**

Աշխատանքն անշուշտ ազդում է նաև մարդու զգացմունքների ու նրա ողջ բարոյական խառնվածքի վրա: Դուրանում բազմիցս կրկնված «սիրտ» բառն ու այն բոլոր զգացողական բնորոշումները, որոնք կապված են դրա հետ, Կարեկցանք, խոնարհություն, անխղճություն, լուսավորություն ու խավար, բոլորը վերագրում ենք սրտին: Երբ օրինակ նշում ենք թե՛ այսինչը բարեսիրտ է, կամ դաժան է, կամ երբ ասում ենք «սիրտս խավարեց», կամ «սիրտս լուսավորվեց» և նման այլ արտահայտություններ, խոսքն անկասկած մարդու ներքին արժանիքների ու առանձնահատկությունների մասին է:

Աշխատանքը, ինչպես ասում են՝ զեղեցկացնում է մարդուն, պարզելով նրան խոնարհություն ու համեստություն, հեռացնելով նրանից դաժանության ու բռնության հոռի երևույթները: Իսկ անգործությունն ու պարապությունը մարդու սիրտը դաժանությամբ են լցնում, ուստի չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ աշխատանքի նվազագույն առավելությունն այն է, որ մարդու սրտից վանում է բռնությունն ու դաժանությունը:

Եվ առհասարակ, աշխատանքը լինելով մարդկային մտքի ու սրտի արգասիք, հանդիսանում է նաև, նրա երևակայության կառուցողը, մտքի ու բանականության վերամշակողը և սրտի վերակենդանացնողը, այլ կերպ ասած՝ մարդու վերակերտման ու դաստիարակման լավագույն գործոնը:

## Աշխատանք և արժանապատվության զգացում

Աշխատանքի բարենպաստ հատկանիշներից մյուսը, դա մարդու արժանապատվության, նրա հեղինակության, ինչպես նաև ինքնուրույնության ստեղծումն ու պահպանումն է: Եթե հանկարծ վիրավորեն ցանկացած մարդու արժանապատվությունը, ստորացնեն կամ նվաստացնեն նրան, անկասկած նա իրեն արհամարհված կզգա: Իսկ մարդն աշխատանքի հետևանքով, հատկապես, երբ նրանում առկա է նորարարության և գյուտի ոգին, որը երաշխավորվում է սեփական կարիքները հոգալու պահանջը, այլոց մոտ ձեռք է բերում հեղինակություն ու արժանապատվություն:

Իմամ Ալիին վերագրված Դիվանի մեջ կան երկու քառյակներ, որոնցից մեկում ասվում է.

**«Ինձ համար սարերի գագաթներից քարեր կրելը բյուր անգամ ավելի հեշտ ու ցանկալի է,**

**Քան ուրիշների երախտիքի ու պարտքի բեռան տակ կքելը:**

**Ինձ ասում են աշխատանքը նվաստացնում է մարդուն<sup>97</sup>:**

**Իսկ ես ասում եմ. «Նվաստությունն այն է, երբ չունես և ուրիշից ես խնդրում»:**

Իսկ հաջորդ քառյակի մեջ նշվում է.

**«Եթե ցանկանում ես ազատ ապրել, ապա ճորտի պես աշխատիր,**

**Հույսդ կտրիր ուրիշների գրպանից ու ունեցվածքից,**

**Մի ասա, թե այս աշխատանքն ինձ ստորացնում է, քանզի մարդկանցից մուրալը՝ առավել նվաստացուցիչ է,**

**Երբ ուրիշի կարիքը չունես, ցանկացած աշխատանքի դեպքում էլ վեհ ու բարձր ես:**

## Ավիցեննան ու աղբահավաքը

Հաստատ լսած կլինեք, որ Ավիցեննան իր կյանքի մեծ մասն անց է կացրել քաղաքականության մեջ, լինելով մի քանի թագավորների վեզիրի պաշտոնում: Հանգամանք, որն ի դեպ իրեն հաջորդող մտավորականների նախատիճակն ու հանդիմանությանն է արժանացել, քանի որ նրանք նկատել են, որ եթե Ավիցեննան իր ժամանակն ու էներգիան զուր ու անտեղի չվատներ նմանատիպ աշխատանքների վրա, իր աննկարագրելի ու անզուգական խելքի ու տաղանդի շնորհիվ կկարողանար առավել օգտակար լինել:

97-Մեզ քաջ հայտնի է, որ Իմամ Ալին կատարում էր այնպիսի գործեր, որոնք մեր օրերում բանվորություն են համարվում: Նա հորեր էր փորում, ծառեր էր տնկում, պարտեզներ ու այգիներ մշակում, անգամ ոչ մուսուլմանի համար աշխատում էր աշխատավարձով: Երբեմն մշակում էր Սադիմե քաղաքի այգիները, որոնք պատկանում էին Բանի Ղարիբեին ու Բանի Ալ-Նագիրին՝ օրվա ապրուստը վաստակելու համար: Իսկ նման մարդուն պարսավում ու հանդիմանում էին, թե. «Արդ՞ոք նման աշխատանքներ կատարելով իրեն նվաստացած չի զգում»:

Մի անգամ, Ավիցեննան պարծանքով ու վեհապանձ, շրջապատված նախարարական ծառաների շքախմբով անցնում էր մի ճանապարհով, ուր հանդիպեց մի աղքատավաքի, որը լվանում ու մաքրում էր ճանապարհի վրա գտնվող արտաքնոցը: Մեզ քաջ հայտնի է Ավիցեննայի չափազանց ուժեղ ու աննկարագրելի լսողությունը, որի մասին մարդիկ անգամ առասպելներ են հյուսել: Հանկարծ նա լսում է, թե ինչպես աղքատարն աշխատելիս ինքն իրեն մրմնջում է.

**Քեզ այնպես մեծարեցի ու պատվեցի՝ հոգի իմ,  
Որ կյանքդ դյուրին ու սրտովդ անց կենա:**

Ավիցեննան շատ է զարմանում, անգամ՝ արհամարհանքով ծիծաղում, երբ տեսնում է, թե ինչպես աղքատավաքը այդ աշխատանքը կատարելով հանդերձ, մեծարում ու պատվում է սեփական հոգին, որպեսզի իրեն լավ զգա ու կյանքը՝ սրտովը լինի: Նա միանգամից քաշում է ձիու սանձերն ու մոտենում նրան, արհամարանքով ասելով. «Իրոք որ չափազանց մեծարում ու հարգում ես քեզ: Սա թերևս լավագույն միջոցն է, դրա համար էլ նման պատվաբեր ու փառավոր աշխատանք ես գտել»: Աղքատարը հեզմանքով նայում է Ավիցեննային, որի արտաքինից արդեն նրա մեծապատիվ պաշտոնյա լինելը դժվար չէր կռահել, ապա համեստորեն պատասխանում է. «Արդար աշխատանքից վաստակած չոր հացն արժե տիրոջ երախտիքի ու պարտքի տակ կքելունե: Ապա ավելացնում. Իմ այս նվաստացուցիչ աշխատանքն անգամ ավելին արժե քան քո ծառայությունը»: Ավիցեննան ամոթահար՝ հեռանում է<sup>98</sup>:

Այս երևույթն ինքնին մարդկային պահաջներից է ելնում, ապրել ազատ ու չլինել ոչ ոքի պարտքի տակ: Եթե մեկն իրոք ընկալի մարդկայնության ու արժանապատվության իմաստը, ապա լավագույնս կճանաչի ու կգնահատի այն: Նշենք, սակայն, որ այն միայն կարելի է նվաճել սեփական կարողությունների և ինքնուրույն աշխատանքի վրա հենվելով:

### Մոհամադ մարգարեի պատվիրանը

«Օսուլե Քաֆի» գրքում կա մի պատմություն, որին ես նույնպես իմ «Շշմարիտների պատմության» մեջ անդրադարձել եմ:

Մոհամադ մարգարեի աշակերտներից մեկը չափազանց աղքատացել էր: Այն աստիճան, որ անգամ օրվա հացին էր կարոտ: Կինը նրան խորհուրդ տվեց, որ գնա ու մարգարեից օգնություն խնդրի: Մարդը լսելով կնոջ խորհուրդը, գնում է մարգարեի մոտ, նստում նրանց մեջ ու սպասում, թե երբ պիտի նրան շրջապատած մարդիկ հեռանան, որպեսզի պատեհ առիթ տեսնի ու նա իր խոսքն ասի: Սակայն, դեռ ոչ ոք չէր հեռացել, երբ Մարգարեն արտասանում է հետևյալ տողերը. **«Եթե մեկը մեզանից որևէ բան պահանջի, նրան չենք մերժի, սակայն ով իրեն մեզանից անկարոտ պահի, Աստված նրան իրոք անկարոտ կպահի»:** Լսելով այս արտահայտությունը, մարդն առանց որևէ բառ արտասանելու տուն է վե-

98-Այս պանրապատումը նշված է «Գիտնականների նամակում»:

րադառնում: Անցնում են օրեր, սակայն նրանք տանջվում են իրենց աղքատության մեջ: Մի քանի օր անց, կնոջ դրդմամբ, մի անգամ ևս փորձում է ներկայանալ Մարգարեի հավաքին, սակայն այս անգամ ևս, Մարգարեն կրկնում է միևնույն արտահայտությունը: Մարդը մտածում է, ու ինքն իրեն ասում. «Ես երեք անգամ շարունակ եկա մարգարեի հավաքներին, ու ամեն անգամ նույն խոսքը լսեցի: Մտածեցի, սա պատահական չէ, որ նա ամեն անգամ ինձ տեսնելիս միևնույն խոսքերն է կրկնում: Անկասկած, նա ցանկանում է ինձ զգուշացնել, որ հարկավոր է մի այլ ճանապարհ գտնել: Այս վերջին՝ երրորդ անգամն ասես իր մեջ ինչ-որ ուժ է գտնում, մտածում՝ երևի կյանքն իրեն այլ ճանապարհ է առաջադրում և անհրաժեշտ է մի այլ տեղից սկսել: Ապա ինքն իրեն ասում է. «Ես ոչ մի բան չունեմ, բայց միթե՞ չեմ կարող բեռնակրություն անել: Իհարկե՞ կարող եմ, սակայն այդ աշխատանքի համար հարկավոր է մի ավանակ, կրած մի ուղտ, պարան և մի ուրագ»: Նա արդեն կայացնում է իր որոշումը, հարկ եղած պիտույքը դրացիներից պարտքով վերցնում, ավանակի վրա բեռներ բարձրում ու տանում վաճառում է: Հետո ստացած գումարը տրամ է բերում ու ծախսում: Նա առաջին անգամ զգում է աշխատանքի հաճույքն ու քաղցրությունը: Ուստի, մյուս օրը կրկնում է միևնույն աշխատանքը: Այս անգամ ստացած գումարի մի մասը ծախսում է, ու մի մասը՝ պահում: Կամաց-կամաց այնքան փող է հավաքում, որ կարողանում է ուրագը, պարանն ու ավանակը սեփական կարողությամբ գնել, և այսպես շարունակ: Շուտով սկսում է ապահովել իր և ընտանիքի կյանքը: Այնուհետև մի օր ներկայանում է Մարգարեին: Մուհամմեդը նրան ասում է. «Քեզ չասացի՞: Եթե ես այն օրը քեզ օգնեի, դու հավիտյան աղքատ կմնայիր, իսկ երբ Աստծո օգնությանը ապավինելով, աշխատեցիր, նստված էլ քեզ օգնեց ու այլոց օգնությունից անկարոտ մնացիր»:

### Աշխատանքը Նասեր Խոսրովի տեսակետից

Մի բանաստեղծություն կա Նասեր Խոսրովի մոտ, որտեղ պոետն ասում է.

(Չկարծեք սակայն, որ գրականագետներն ու բանաստեղծները չեն ինտաքրքրվել վերոհիշյալ բեմաներով, և նշված աֆորիզմ դարձած բառերը խոսքերն այլոք են ասել):

**Եթե մարդն աշխատասեր լինի ու բախտը՝ բարի,  
Սև հողից կստեղծի արդար ոսկի:  
Երկինքը մեծահոգությամբ կնայի նրան, ով  
Չտրտնջա սակավ աշխատավարձից:  
Եղիր առատածեռն, ու մի սրտնեղիր սակավ աշխատավարձից,  
Քանզի կյանքն ամեն տարի փշից ծաղիկ է ստեղծում:**

Տևում է անբողջ մի տարի, մինչև մի փոքրիկ փուշը ծաղկի ու ծաղիկի դառնա: Ահա թե ինչ է բանաստեղծության պատգամը:



**Հարստությունը մեծ առավելություն համարիր և ամուր պահիր,  
Դրա շնորհիվ ավելին կստանաս:  
Ինչ որ կատարես, այն ակներև կդառնա,  
Ճիշտ այնպես, ինչպես դեմքդ հայելու մեջ:**

Բանաստեղծը ցանկանում է արտահայտել այն միտքը, որ յուրաքանչ-յուր մարդու արվեստը ակներև է նրա դեմքի վրա: Ապա խոսում է անբանության կործանարար ու աղետաբեր հետևանքների մասին:

**Գինի ու քուն ու խորոված, կանաչի ու հաց,  
Հագարավոր ապարանքներ հողին հավասարեց:**

**Աշխատանքը ականավոր մարդկանց տեսակետից**

«Հոգեկան առողջապահություն» ամսագրի մեջ կարդացի, որ անվանի գիտնական Պաստորն ասել է.

**«Մարդու հոգու առողջությունը լաբորատորիայում ու գրադարանում է»:**

Փաստորեն գիտնականը ցանկանում է նշել, որ մարդու հոգու առողջությունը կախված է աշխատանքից, և անգործ մարդն առանց պատճառների ու հանգամանքների կհիվանդանա: Ես այստեղ նշում եմ սակայն, որ այն չի կարելի սահմանափակել միայն լաբորատորիաներով ու գրադարաններով, այլ թեման ընդհանրացնելով՝ կարելի է ասել. «ցանկացած աշխատանք, որը խորապես կլանում է մարդուն և ձևավորում նրա միտքն ու բանականությունը, անկասկած, օգտակար է ու դրական»:  
Նույն ամսագրի մեջ Վոլտերից մեջ էին բերել հետևյալ տողերը.

**«Երբ զգում եմ, որ վիշտն ու ցավը փորձում են ինձ կործանել, աշխատանքին եմ ապավինում: Այն իմ ներքին ցավերի ու դարդերի ամենարուժիչ բալասանն է»:**

Հենց Սամուել Սմայլզի «Բարոյագիտության» գրքում էլ գրված է.

**«Հոգևոր ու կրոնական դպրոցից հետո, մարդու դաստիարակության համար աշխատանքից ավելի լավ դպրոց դեռևս չի ստեղծվել»:**

Իսկ հաղորդած հետևյալ բառերը պատկանում են Բենջամին Ֆրանկլինին.

**«Կենաց հարսը, դա աշխատանքն է: Եթե ցանկանում եք նրա փեսացուն լինել, ապա ձեր ամուսնության պտուղը՝ ,երջանկությունն կկոչվի»:**

Պասկալն ասում է.

**«Բոլոր բարոյական ու մտավոր չարիքների ու արատների ակունքը, դա՛ անգործությունն է: Ցանկացած պետություն, որ ցանկանում է վերացնել հասարակական այս չարագույն աղետը, ստիպված է մարդկանց մղել աշխատանքի, որպեսզի բոլորը հասնեն այն հոգեկան անդորրին, որն անհասանելի ու խորթ է շատերին»:**

Իսկ այս կապակցությամբ Սոկրատեսը շեշտում է.

**«Աշխատանքը երջանկության ու բախտավորության կապիտալն է»:**

<b>Նախաբան</b>	<b>3</b>
Օսթադ Շահիդ Մորթեզա Մոթահարիի ստեղծագործությունների հրատարակման վերահսկողության կոմիտե	8
<b>Նախաբան</b>	<b>9</b>
<b>ԳԼՈՒԽ Ա</b>	
<b>ՄԱՍ I</b>	
Մտավոր զարգացում	11
Գիտելիքի երկու տարատեսակները	13
Կրթության հնագույն մեթոդ և մտավոր զարգացում	13
Գուշակը և թագավորը	13
Ուղեղի և ստամոքսի նմանությունը	14
Շատ սովորելը չափանիշ չէ	15
Ջանք հասկացությունը	16
Ուսումնառության և կրթվելու իսլամի կոչը	17
Ո՞ր գիտելիքը	18
<b>ՄԱՍ II</b>	
Մարդու գիտակցական դաստիարակումը	21
Գիտակցությունը պետք է մաքրող (գտող) լինի	22
Խալկեդոնի քննադատությունը	23
Խոսքի քննադատում	25
Չեռատեսություն	26
Գիտելիքի և գիտակցության զուգակցման անհրաժեշտությունը	26
Խելքի ազատումը հասարակական սովորույթներից	26
Իմամ Սադեդն ու ավանդապաշտ մարդը	27
Մեծամասնությամբ չառաջնորդվելը	28
Այլոց կարծիքների անտեսումը	28
Հոգևորական ուսուցիչն ու աշակերտները	29
Գիտական հոգի	30
<b>ՄԱՍ III</b>	
Ընդունակությունների զարգացում	32
Հոգեվիճակի պահպանում	34
Ռասելի մեկնաբանությունը	35
Վախը, որպես ըմբոստության կանխարգելման գործոն	35
Մանուկները պետք է իմանան, թե ինչի համար են խրախուսվում կամ պատժվում	36
Հոգու բարգավաճման շրջան	37
Մարմնի զարգացումն ըստ իսլամի	37
Մարդու հոգևոր ընդունակությունները	39
Իսլամն ու արվեստը	40

Երաժշտություն	41
Առաջնորդն ու երգիչ ծառան	41

**ՄԱՍ IV**

Սովորության խնդիրը	43
Դաստիարակությունն ավանդական կրոնագետների տեսանկյունից	45
Մուլավիի ավանդապատումը	46
Արևմտյան գիտնականների տեսանկյունը	46
Այս տեսության քննադատությունը	48
Կախվածությունն առաջանում է հակազդեցության սովորությունից	51

**ՄԱՍ V**

Բարոյական գործողություններ Ա	54
Դաստիարակության եվ բարոյականության տարբերությունը	55
Տեսակետներ բարոյական գործողությունների վերաբերյալ	
ա) Այլասիրություն կամ ուրիշներին սիրել	57
Անձնագոհություն	57
բ) Գործողությունների բնական զեղեցկությունն ու անվայելչությունը	58
գ) Խղճի ներշնչանք (խայթ)	58
դ) Չեռքբերովի այլասիրություն	59
ե) Հանուն Աստծո	59
Կանտի տեսության վերլուծությունը	59

**ՄԱՍ VI**

Բարոյական գործողություններ Բ	62
Մարդասիրություն (հումանիզմ)	64
Դարվինիզմ	65
Բարոյական խիղճ	65
«Կամա և ակամայի» վեճը	66
Հեռատես մտքի տեսությունը	67
Վերոհիշյալ տեսության քննադատությունը	68
Մտավոր զեղեցկություն	69
Կրոնը՝ որպես բարոյականության իրագործման միակ երաշխիք	70

**ՄԱՍ VII**

Բարոյական գործողություններ Գ	72
Գեղեցիկ հոգի	74
Բարձրագույն նպատակի սկզբունքը՝ որպես բարոյական միջին նորմերի սահմանման հիմք	75
Հոգու և գիտակցության գերիշխում	76
Տարբեր ուղղությունների դաստիարակության մեթոդները	78
Կրոնական բարոյականություն	79
Կրոնը՝ որպես բարոյականության երաշխիք	80
Բարոյական գործողության նկարագիրը	81

**ՄԱՍ ԻՒՃ**

Բարոյականության հարաբերականության խնդրի քննարկում	82
Հավանություն	84
ժամանակի ոգին	85
Սարտրի կարծիքը	87
Մարդասիրության գաղափար	88
Վարվելակերպը հարաբերական է	89
Առաջնային եվ երկրորդական անվանումներ	90
Պարկեշտության և բարեպաշտության օրինակ	91
Ճշտապահության օրինակ	92

**ՄԱՍ ԻՅ**

Սուրբ Ալիի ավանդապատումն ու բարոյականության հարաբերականության տեսությունը	95
Մեկ սխալի քննարկում	97
Պատասխան	97
Մարգարեի պատգամը հատուկ պատվիրված Օմրեի վերաբերյալ	99
Վախկոտության խնդիրն այս ավանդապատման մեջ	100
Աբդ-օլ-Մութալեբի դուստր Սաֆիեի պատմությունը	101
Կինը որպես մարդկային ավանդի կրող	102
ժլատության խնդիրն այս ավանդապատման մեջ	103
Համարձակություն և ճշմարտության պաշտպանում	104
Համարձակություն հասարակական իրավունքների պաշտպանության գործում	105
Սուրբ Ջահրայի համարձակությունը	106
Սուրբ Ջեյնաբի համարձակությունը	107

**ՄԱՍ Կ**

Երկրպագության և դաստիարակչական ծրագրերի կապը	109
Երկրպագության ոգին (էությունը)	111
Աղոթքի ձևերն ու դաստիարակչական ծրագրերը	111
Աղոթքը և հասարակական իրավունքները	112
Նամազն ու դեմքով դեպի դերլե կանգնելը	112
Կրքերի զսպման վարժանք	114
Ճշտապահության վարժանք	114
Խաղաղասիրության ձգտում	115
Նպատակ (ցանկություն)	115
Ցանկության կամ նպատակի հիմնասյուները	116
Ցանկության կարևորությունը	117
Սովորություն	117
Նիցչեի տեսությունը	118
Իսլամական հասարակության բարոյականության երեք տեսակները	119
Սուֆիական կամ միստիկական բարոյականության թույլ կողմը	121

**ՄԱՍ XI**

Անհատի վեհանձնության խնդիրը Ղուրանում	
Եվ ավանդապատումներում	124
Անձի արժանապատվություն	125
Անձի վեհությունը	128
Նախանձախնդրություն	129
Արդյոք հակադրություն գոյություն ունի՞	129

**ՄԱՍ XII**

Բարոյական ներշնչման աղբյուրներ	133
Հոգևոր և նյութական հաճույք	136
Արժեքի աղբյուրը	138
Բարոյական ներշնչման աղբյուրների ինքնաճանաչում	140
Խղճի խայթ և գոհունակություն	140
Արժեքների տատանում արևմտյան աշխարհում	141

**ՄԱՍ XIII**

Սեփական «ես»-ի զարգացումը	143
Մարդը հոգեբանական վիճակներով օժտված էակ է	145
Ամուսնությունը որպես եսասիրությունից խուսափելու առաջին աստիճան	146
Մի ավանդապատում մեծ Մարգարեից	147
Բարեպաշտ մարդն ու ջիհադն՝ Աստծո ճանապարհին	147
Տոհմային «ես»	149
Ազգային «ես»	149
Մարդասիրություն	150
Կրոնական «ես»	151
Բարեգործություն անհավատի հանդեպ	152
Հասարակական խիղճ	153

**Գլուխ Բ**

***Բժիշկների Իսլամական Միության Քննարկումները***

**Մաս I**

Մարմնի Խնամք եվ Մտավոր Ունակությունների Ջարգացում	155
Մարդկային դաստիարակության դարոցը	157
Մարմնի խնամքը ըստ իսլամի	158
Մարմնի խնամք և մարմնապաշտություն	160
Մտավոր ունակությունների զարգացում	161
Բանականության թեման Ղուրանում	162
Բանականության թեման՝ Սուրենայում	163
Բանականությունն ու տգիտությունը	
իսլամական ավանդապատումներում	165
Գիտություններ սերտելու մահմեդականների ծագումը	166
Մի ավանդապատում Իմամ Մուսա Քազեմից	167
Ավիցեննայի խոսքերը	168

Գիտության և բանականության զուգակցման անհրաժեշտությունը	168
Բեկոնի խոսքը	169
Ընդօրինակման խնդիրը	170
Մեծամասնությանը հետևելու հարցը	171
Անտարբերություն մարդկանց դատողության նկատմամբ	172

**Մաս II**

Բանականության Պատմությունը՝ Մահմեդականների դիտանկյունից	173
Մարդու բանականության նսեմացումը ժողովրդական ասույթներում և գրականության մեջ	175
Կարեկցանքը փառաբանելի՞ է, թե՞ պարսավելի	178
Բանականության և գիտության նսեմացումը և հացի խնդիրը	179
Բանականությունը՝ մոթագելիների և էլաներների դիտանկյունից	181
Գիտակցված փառաբանումն ու պարսավանքը	181
Բանականության և կույր հնազանդության պայքարը	182
«Սունիե բառ»	183
Ջոնուդ էբն Թայմիեն և վահաբիստական կուսակցությունը	164
Էխբարիզյարի	185
Ջանքի հաղթանակը՝ Ախբարիզյարիների նկատմամբ	187
Ախբարիզյարիի արմատները Այաթոլլա Բորուջերդիի դիտանկյունից	188
Մոթագելիների ծայրահեղական փոխազդեցությունը	190
Բանականությունն՝ իսլամական իրավագետների դիտանկյունից	190

**Մաս III**

Դաստիարակության Գործոններ	
1-Կամքի կոփում – Պաշտամունք	194
Ինքնատիրապետում	196
Հավատքը, որպես կամքի դրսևորման երաշխիք	197
Աղոթք և պաշտամունք	198
Աբու Ռեյհանն ու իսլամական իրավագետը	199
Ի պատասխան մի նկատողության	200
Մոհամադ մարգարեն ու պաշտամունքը	201
Իմամ Ալին և աղոթքի ոգին	204
Մահմեդական, կա՞մ՝ բազմակողմանի մարդ	205
Պաշտամունքի սուբորդինացված շերտերը	206
Պաշտամունքի դերը դաստիարակության մեջ	208
Չափավորության ուղին	209
Հարց ու պատասխան	211

**Մաս IV**

Դաստիարակության Գործոններ	
2-Սեր, ճշմարտության ծգտման զարգացում, Զգուշավորություն և Ինքնագնահատում	215

Սիրո երկու տարատեսակ	217
Բազմության բարօրությունը գերադաս է՝ անհատի բարօրությունից	218
Փոխհատուցման փոխհարաբերությունը	219
Մարդասիրություն (Հունանիզմ)	220
Բարություն՝ անհավատների նկատմամբ	221
Արդար վերաբերմունք անհավատների նկատմամբ	222
Իմամ Սադեդն ու անհավատ մարդը	223
Չարության դեմ՝ բարություն	223
Համբերատարություն՝ հեթանոսների չարության դեմ	224
«Սիրո» ճշգրիտ մեկնությունը	225
Ճշմարտության ծգտման զարգացում	226
Նախապաշարմունքը, որպես գիտության զարգացման խոչընդոտ	226
Դաստիարակության գործոնները	227
Զգուշություն և ինքնազնահատում	227
Պայմանավորվածություն, ինքնազնահատում, ինքնախարագանում	230

**Մաս V**

Դաստիարակության Գործոններ	
3-Սրբակյաց այրերի սիրո գաղափար, Ամուսնություն, Զիհադ	232
Երեք տեսակ պաշտամունք	234
Ստորումներ՝ աշխարհի արարման մասին	234
Ստորումներ՝ պատմության մեջ	235
Մարդու մտորումներն իր մասին	235
Արդյո՞ք հասարակության կողմից բռնությունն իշխում է մարդուն	235
Ստորումներ սեփական ճակատագրի և հասարակությանը տնօրինելու հիմնախնդրի շուրջ	236
Շրջահայացություն	237
Խորհելու սովորություն	238
Հաղորդակցվել արդարների հետ	238
Մի ավանդապատում Հիսուս Քրիստոսից	239
Նվիրվածություն	241
Մարգարեների սերն ու ակնածանքը՝ «Ամին Օլլայի» աղոթքի նկատմամբ	241
Մալամաթիների կիրառած մեթոդը	243
Աղիբե Նեյշաբուրիի պատմությունը	243
Մարդու արժանապատվությունը պետք է հարգել	244
Ամուսնության դաստիարակիչ դերը	245
Զիհադը՝ ուղղորդման և դաստիարակման գործոն	246
Բարեպաշտ մարդու պատմությունն ու քիհադը	247
Հարց Ու Պատասխան	248

**Մաս VI**

Դաստիարակության Գործոններ	
4-Աշխատանք	252



Աշխատանքն իսլամի տեսակետից	254
Աշխատանք և մտավոր կենտրոնացում	256
Աշխատանք և խուսափում մեղքերից	256
Կինն ու բամբասանքը	258
Ընդունակությունների բացահայտումը	
աշխատանքի ընտրության մեջ	259
Աշխատանք և ինքնափորձություն	260
Աշխատանք և տրամաբանական միտք	261
Աշխատանքի ազդեցությունը մարդկային զգացմունքների վրա	262
Աշխատանք և արժանապատվության զգացում	263
Ավիցեննան ու աղբահավաքը	263
Մոհամադ մարգարեի պատվիրանը	264
Աշխատանքը Նասեր խոսրովի տեսակետից	265
Աշխատանքը ականավոր մարդկանց տեսակետից	266

۲۳۴	تفکر در عالم خلقت
۲۳۵	تفکر در تاریخ
۲۳۵	تفکر انسان درباره خود
۲۳۶	آیا جبر اجتماع بر انسان حاکم است؟
۲۳۷	تفکر شرط اساسی تسلط بر سرنوشت خود و بر جامعه
۲۳۸	عاقبت بینی
۲۳۸	عادت به تفکر
۲۳۹	معاشرت با صالحان
۲۴۱	حدیثی از عیسی علیه السلام
۲۴۱	ارادت
۲۴۳	محبت اولیاء در زیارت امین الله
۲۴۳	روش ملامتیان
۲۴۴	داستان ادیب نیشابوری
۲۴۵	آبروی انسان محترم است
۲۴۶	نقش تربیتی ازدواج
۲۴۷	جهاد، عامل اصلاح و تربیت
۲۴۸	داستان مرد زاهد و جهاد
۲۵۲	پرسش و پاسخ
۲۵۴	جمله ششم: عوامل تربیت ۴: کار
۲۵۶	کار از نظر اسلام
۲۵۶	کار و تمرکز قوه خیال
۲۵۸	کار و جلوگیری از گناه
۲۵۹	زن و غیبت
۲۶۰	استعدادیابی در انتخاب کار
۲۶۱	کار و آزمودن خود
۲۶۲	کار و فکر منطقی
۲۶۳	تأثیر کار بر احساس انسان
۲۶۳	کار و احساس شخصیت
۲۶۴	بوعلی سینا و مرد کناس
۲۶۵	توصیه رسول اکرم
۲۶۶	کار از نظر ناصر خسرو
	کار از دیدگاه بزرگان

۱۷۱	پیروی از اکثریت
۱۷۲	بی اعتنایی به تشخیص مردم
۱۷۳	جلسه دوم: تاریخچه «تعقل از نظر مسلمین»
۱۷۵	تحقیر عقل در امثال سنن میان مردم و در ادبیات
۱۷۸	آیا درمندی ممدوح است یا مذموم؟
۱۷۹	تحقیر عقل و علم و مسئله معاش
۱۸۱	تعقل از نظر معتزله و اشاعره
۱۸۱	حسن و قبح عقلی
۱۸۲	جنگ تعقل و تعبد
۱۸۳	کلمه سنی
۱۸۴	جمود ابن تیمیه و نهضت و هابیه‌گری
۱۸۵	اخباری‌گری
۱۸۷	پیروزی اجتهاد بر اخباری‌گری
۱۸۸	ریشه اخباری‌گری از نظر آیت ا... بروجردی
۱۹۰	عکس العمل افراط معتزله
۱۹۰	عقل از نظر فقهاء
۱۹۴	جلسه سوم: عوامل تربیت ۱: تقویت اراده - عبادت
۱۹۶	تسلط بر نفس
۱۹۷	ایمان، ضامن حکومت اراده
۱۹۸	نیایش و پرستش
۱۹۹	ابوریحان و فقیه
۲۰۰	پاسخ به یک ایراد
۲۰۱	رسول اکرم و عبادت
۲۰۴	علی (ع) و روح نیایش
۲۰۵	انسان اسلام یا انسان جامع
۲۰۶	مراتب پایین عبادت
۲۰۸	نقش عبادت در تربیت
۲۰۹	راه اعتدال
۲۱۱	پرستش و پاسخ
۲۱۵	جلسه چهارم: عوامل تربیت ۲: محبت - تقویت حس حقیقت جویی - مراقبه و محاسبه
۲۱۷	دو نوع محبت
۲۱۸	مصلحت جمع مقدم بر مصلحت فرد است
۲۱۹	فلسفه قصاص
۲۲۰	انساندوستی
۲۲۱	نیکی به کافر
۲۲۲	رفتار عادلانه با کافر
۲۲۳	امام صادق و مرد کافر
۲۲۳	نیکی در مقابل بدی
۲۲۴	صبر در مقابل بدیهای مشرکان
۲۲۵	تفسیر صحیح محبت
۲۲۶	تقویت حس حقیقت جویی
۲۲۶	تعصب، سد راه علم
۲۲۷	مراقبه و محاسبه
۲۳۰	مشارطه، معاتبه، معافه
۲۳۲	جلسه پنجم: عوامل تربیت ۳: تفکر - محبت اولیاء - ازدواج - جهاد
۲۳۴	سه نوع عبادت

۱۱۴	تمرین وقت شناسی
۱۱۵	مسالمت طلبی
۱۱۵	نیت
۱۱۶	ارکان نیت
۱۱۷	اهمیت نیت
۱۱۷	خاصیت عادت
۱۱۸	نظریه نیچه
۱۱۹	سه نوع اخلاق در جوامع اسلامی
۱۲۱	نقطه ضعف اخلاق صوفیانه
۱۲۴	جلسه یازدهم: کرامت نفس در قرآن و حدیث
۱۲۵	عزت نفس
۱۲۸	نفاست نفس
۱۲۹	غیبت
۱۲۹	آیا تناقض است؟
۱۳۳	جلسه دوازدهم: ریشه الهامات اخلاقی
۱۳۶	لذات مادی و لذات معنوی
۱۳۸	ریشه ارزش
۱۴۰	خودشناسی ریشه الهامات اخلاقی
۱۴۰	عذاب و رضایت وجدان
۱۴۱	تزلزل ارزشها در دنیای غرب
۱۴۳	جلسه سیزدهم: توسعه «خودی»
۱۴۵	انسان موجودی ذومراتب است
۱۴۶	ازدواج اولین مرحله خروج از خود فردی
۱۴۷	حدیثی از رسول اکرم
۱۴۷	مرد زاهد و جهاد در راه خدا
۱۴۹	من قبيله ای
۱۴۹	من قومی
۱۵۰	انسان دوستی
۱۵۱	خود مذهبی
۱۵۲	احسان به کافر
۱۵۳	وجدان عمومی
	بخش دوم:
	بحثهای انجمن اسلامی پزشکان
۱۵۵	جلسه اول: پرورش جسم و پرورش استعداد عقلانی
۱۵۷	مکتب تربیتی انسانی
۱۵۸	پرورش جسم از نظر اسلام
۱۶۰	پرورش جسم و تن پروری
۱۶۱	پرورش استعداد عقلانی
۱۶۲	تعقل در قرآن
۱۶۳	تعقل در سنت
۱۶۵	عقل و جهاد در روایات اسلامی
۱۶۶	اهتمام مسلمین به طلب علم
۱۶۷	حدیثی از امام موسی کاظم (ع)
۱۶۸	سخن بوعلی سینا
۱۶۸	لزوم توأم بودن عقل و علم
۱۶۹	سخن بیکن
۱۷۰	مسئله تقلید

۵۹	د: دگردوستی اکتسابی
۵۹	ه: رضای خدا
۵۹	بررسی نظریه کانت
۶۲	جلسه ششم: فعل اخلاقی ۲
۶۴	نوعدوستی
۶۵	داروینیزم
۶۵	وجدان اخلاقی
۶۶	جدال خود و ناخود
۶۷	نظریه عقل دوراندیش
۶۸	نقد این نظریه
۶۹	زیبایی عقلی
۷۰	دین، تنها ضامن اجرای اخلاق
۷۲	جلسه هفتم: فعل اخلاقی ۳
۷۴	روح زیبا
۷۵	اصل غایت مبنای تعیین حد وسط در اخلاق
۷۶	حاکمیت روح و عقل
۷۸	روش تربیت در مکاتب مختلف
۷۹	اخلاق مذهبی
۸۰	مذهب پشتوانه اخلاق
۸۱	تعریف فعل اخلاقی
۸۲	جلسه هشتم: بررسی نظریه نسبیت اخلاق
۸۴	پسند
۸۵	روح زمان
۸۷	سخن سازتر
۸۸	مفهوم انساندوستی
۸۹	رفتار، نسبی است
۹۰	عناوین اولیه و عناوین ثانویه
۹۱	مثال به عفاف و عفت
۹۲	مثال به راستی
۹۵	جلسه نهم: حدیث علی علیه السلام و نظریه نسبیت اخلاق
۹۷	طرح یک اشکال
۹۷	پاسخ
۹۹	دستور پیغمبر در عمره القضاء
۱۰۰	مفهوم جبن در این حدیث
۱۰۱	داستان صفیه دختر عبدالمطلب
۱۰۲	زن، حامل یک امانت انسانی
۱۰۳	مفهوم «بخل» در این حدیث
۱۰۴	شجاعت و دفاع از حقیقت
۱۰۵	شجاعت و دفاع از حقوق اجتماعی
۱۰۶	شجاعت حضرت زهرا (س)
۱۰۷	شجاعت حضرت زینب (س)
۱۰۹	جلسه دهم: پیوند عبادت با برنامه های تربیتی
۱۱۱	روح عبادت
۱۱۱	شکل عبادت و برنامه های تربیتی
۱۱۲	عبادت و حقوق اجتماعی
۱۱۲	نماز و رو به قبله ایستادن
۱۱۴	تمرین ضبط نفس


	بخش اول
۱۱	بحث های ایراد شده در جمع دبیران تعلیمات دینی
۱۳	جلسه اول: پرورش عقل
۱۳	دو نوع علم
۱۳	سیستم آموزشی قدیم و پرورش عقل
۱۴	غیبگو و پادشاه
۱۵	شباهت مغز و معده
۱۶	ملاک، زیاد استاد دیدن نیست
۱۷	مفهوم اجتهاد
۱۸	دعوت اسلام به تعلیم و تعلم
۲۱	کدام علم؟
۲۲	جمله دوم: تربیت عقلانی انسان
۲۳	عقل باید غربال کننده باشد
۲۵	انتقاد ابن خلدون
۲۶	نقد سخن
۲۶	آخربینی
۲۶	لزوم توأم بودن عقل و علم
۲۷	آزاد کردن عقل از عادات اجتماعی
۲۸	امام صادق و مرد سننگرا
۲۸	پیروی نکردن از اکثریت
۲۹	تأثیر ناپذیری از قضاوت دیگران
۳۰	آخوند مکتبی و شاگردان
۳۲	روح علمی
۳۴	جلسه سوم: پرورش استعدادها
۳۵	رعایت حالت روح
۳۵	تعبیر راسل
۳۶	ترس، عامل جلوگیری از طغیان
۳۷	لزوم آگاهی کودک از علت تشویق یا تهدید
۳۷	دوره شکوفایی روح
۳۹	پرورش جسم از نظر اسلام
۴۰	استعدادهای روح انسان
۴۱	اسلام و هنر
۴۱	موسیقی
۴۳	خلیفه و کنیز خواننده
۴۵	جلسه چهارم: مسئله عادت
۴۶	تربیت از نظر علمای قدیم
۴۶	تمثیل مولوی
۴۸	نظریه علمای غرب
۵۱	نقد این نظریه
	ایجاد انس در عادات انفعالی است
۵۵	جلسه پنجم: فعل اخلاقی ۱
	فرق تربیت و اخلاق
۵۷	نظریات در باب معیار فعل اخلاقی:
۵۷	الف: دگردوستی
۵۸	ایثار
۵۸	ب: حسن و قبح ذاتی افعال
	ج: الهام وجدان

# تعلیم و تربیت در اسلام



متنگر شهید

استاد مرتضی مطهری



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԳԱԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԳԱԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ